Ս. Վ. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԸ

XI - XIII ԴԴ.

ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

ИЗДАТЕЛСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

С. В. БОРНАЗЯН

АРМЕНИЯ И СЕЛЬДЖУКИ
XI—XII ВВ.

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1980

9(47-925)
Б-96

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Վ. ԲՈՌՆԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԸ
XI—XII ԴԴ.

895

ՀՍՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т искусствозн. АН Арм. ССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1980

9 (C 43) 1 ինդեքս ԳՄԴ 63.3 (2Հ)1
Բ 969

Պատասխանատու խմբագիր,
պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ,
պատմ. գիտ. դոկտորներ Լ. Ն. ԲԱԲԱՅԱՆԸ և Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆԸ

Բոռնազյան, Ս. Վ.
Բ 969 *Հայաստանը և սելջուկները XI—XII դդ.— Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979. 300 էջ.*

Հայ և օտար մատենագրական, վավերագրական, վիմագրական աղբյուրների հիման վրա հանգամանորեն շարադրված է Առաջավոր Ասիայի և Հայաստանի տարածքի նվաճումը սելջուկ թուրքական ցեղերի կողմից XI դ. երկրորդ քառորդից սկսած։ Այնուհետև ցույց են տրված այն խորը բացասական հետևանքները, որ նրանք թողեցին Հայաստանի և հայ ժողովրդի ոչ միայն քաղաքական, այլև սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի հետագա զարգացման վրա։ Սովետահայ պատմագրության մեջ առաջին անգամ վեր է հանվում հարավարևմտյան և արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրությունը XI—XII դդ.։

Գիրքը հասցեագրված է Հայաստանի և Առաջավոր Ասիայի միջնադարյան պատմությամբ հետաքրքրվողներին։

Բ $\frac{050\ 50\ 40000}{703\ (02)-80}$ 25—75

9 (C 43) 1
ԳՄԴ 63.3 (2 Հ) 1

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԻ ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ա. Հարցի կարևորությունն ու նրա ուսումնասիրումը պատմագրության մեջ

Հայաստանի և հայ ժողովրդի պատմության XI—XII դդ.՝ հատկապես սելջուկյան աշխարհակալության տիրապետության ժամանակաշրջանը (1050—1150), հայ պատմագրության մեջ ավելի քիչ ուսումնասիրված շրջաններից մեկն է։ Սելջուկ Թուրքերը շատ կարճ ժամանակաշրջանում (XI դ. 40—70-ական թվականներին) ստեղծեցին Խորասանից մինչև Միջերկրականի ափերը և Սև ծովի ափերից մինչև Կարմիր ծովի ափերը ձգվող հսկայական մի աշխարհակալություն և փոխեցին Առաջավոր Ասիայի և Մերձավոր Արևելքի քարտեզը։ Նրանք նվաճեցին և հպատակեցրին մի ամբողջ շարք զարգացած ժողովուրդների երկրները, այդ թվում և Հայաստանը։ Սելջուկյան նվաճումներին ուղեկցեցին էական փոփոխություններ Միջին և Մերձավոր Արևելքի երկրների ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ու կուլտուրական զարգացման մեջ[1]։

Սելջուկյան տիրապետությունը Հայաստանում՝ հատկապես Հայաստանի հարավարևմտյան և արևմտյան մասերում խիստ բացասական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքում և մի ամբողջ դարաշրջան ընդհատեց ու կանգնեցրեց ֆեոդալիզմի զարգացած ժամանակաշրջանի առաջընթացը, որը սկսել էր դեռևս նախորդ՝ Բագրատունյաց ժամանակաշրջանում։

Ներկա ուսումնասիրության մեջ մեր հիմնական նպատակն է առկա նյութերի հիման վրա շարադրել Հայաստանի՝ XI դարում սելջուկ-

---

1 *Տե՛ս К. Маркс* и *Ф. Энгельс*, Архив К. Маркса и Ф. Энгельса, т. V, М., 1938, стр. 109.

ների կողմից նվաճման, նրանց տիրապետության հաստատման և ապա XII դ. սելջուկյան ու մահմեդական այլ ամիրայությունների ստեղծման, այնուհետև սելջուկյան տիրապետության վերացման գործում հայ և վրաց ժողովուրդների համատեղ ջանքերի հաջողման և Հայաստանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների պատմությունը։

Պետք է նշել, որ աշխատության մեջ շարադրված են ոչ միայն հայ ժողովրդի, այլև Մերձավոր Արևելքի մյուս ժողովուրդների և սելջուկների, հատկապես սելջուկ-բյուզանդական առնչությունները, որքանով որ դրանք լույս են սփռում ու կապվում՝ մեր առջև դրած խնդիրների լուսաբանմանը։

Վերոհիշյալ հարցերի ուսումնասիրմանը նվիրված աշխատությունը բաղկացած է լինելու 2 մասից։ Առաջին մասը կազմող սույն հատորում շարադրված է Հայաստանի XI—XII դդ. քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությունը՝ կապված միայն, այսպես կոչված, մեծ սելջուկյան աշխարհակալության ստեղծման, զարգացման ու անկման պատմության հետ։

Աշխատության երկրորդ մասը՝ բացառապես նվիրվելու է XII դարում Հայաստանում ստեղծված սելջուկ-թուրքական և մահմեդական այլ ամիրայությունների պատմությանը[2]։

Սկզբից ևեթ պետք է նշել, որ աշխատությունը շարադրելիս հնարավորության սահմաններում յուրաքանչյուր գլխի սկզբում պատմագրական և աղբյուրագիտական տեղեկություններ ենք հաղորդել տվյալ գլխում լուսաբանված հարցերի շուրջ։ Ուստի, ներածական բաժնում մանրամասն կանգ չենք առնելու պատմագիտական ու աղբյուրագիտական երկերի վրա, այլ բավարարվելու ենք տեղեկություններ հաղորդելով՝ հատկապես այն սկզբնաղբյուրների մասին, որոնք քիչ են հայտնի սովետահայ պատմագրությանը։

Աշխատությանը անմիջականորեն առնչվող գլխավոր հարցերի լուսաբանմանը նվիրված ուսումնասիրությունները սակավաթիվ են և ոչ ամբողջական։

Նշված դարերի քաղաքական պատմությունը շարադրելու առաջին փորձը կատարել է XVIII դ. նշանավոր պատմաբան Միքայել Չամչյանը

2 Աշխատության երկրորդ մասը հեղինակը չի գրել վերահաս մահվան պատճառով (խմբ.)։

իր «Պատմութիւն հայոց» մեծածավալ աշխատության 2-րդ և 3-րդ հատորներում[2a]։ Մ. Չամչյանը օգտագործելով հայ և օտար, հատկապես բյուզանդական պատմիչներին տվել է այդ դարերի քաղաքական անցքերի, իշխանական տների և եկեղեցու պատմությունը։

Այնուհետև Լեոն իր «Հայոց պատմության» Բ հատորում, հենվելով առավելապես հայ և բյուզանդական պատմիչների ու ժամանակագիրների վկայությունների վրա, Հայաստանի XI դ. քաղաքական պատմությունը շարադրել է մինչև 1054 թ. դեպքերը, հիմնականում նշելով 1048—1049 և 1053—1054 թթ. Հայաստան կատարած սելջուկյան արշավանքները[3]։

Հայաստանի պատմության XI—XII դդ. սելջուկ-թուրքական արշավանքների ու տիրապետության ժամանակաշրջանը առաջին անգամ գիտական մշակման է ենթարկել Հ. Մանանդյանը[4]։ Անշուշտ, Հ. Մանանդյանը իր առջև խնդիր չի դրել մանրամասն ուսումնասիրության ենթարկելու այդ դարերի քաղաքական պատմությունը (որի հիմնական պատճառը եղել է այն, որ նա իր ձեռքի տակ չի ունեցել օտարազգի բազմաթիվ սկզբնաղբյուրներ)[5] և հատկապես հրաժարվել է ուսումնասիրության ենթարկել սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական պատմությունը, այն վերագրելով նյութերի և աղբյուրների սակավությանը[6]։ Սակայն անգնահատելի է նրա պատմագիտական վաստակը այդ դարաշրջանի, քաղաքական տնտեսական (առևտրական) առանձնահատկությունների և հիմնական գծերի ու Բյուզանդական կայսրության հայ ժողովրդի նկատմամբ վարած նվաճողական քաղաքականության հետևանքների գնահատման հարցում[7]։

Այնուհետև տվյալ ժամանակաշրջանի քաղաքական անցուդարձերի ու սոցիալ-տնտեսական որոշ երևույթների մասնակի լուսաբանման ու

2a Միքայել Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Բ, Վենետիկ, 1784, և հ. Գ, Վենետիկ, 1786 (այնուհետև՝ Մ. Չամչյան, հ. Բ, և հ. Գ.)։

3 Լեո, Հայոց պատմություն, երկրորդ հատոր, Երևան, 1967, էջ 691—711։

4 Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 30—88 (այնուհետև՝ Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Գ)։

5 Նույն տեղում, էջ 9—10։

6 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Գ, էջ 161—162։

7 Նույն տեղում, էջ 7—8, 162—163։ А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, стр. 260—268. Տե՛ս նաև Լ. Բարայան, Վ. Հակոբյան, Հ. Մանանդյան, Երևան, 1974, էջ 94—99։

գնահատման հարցում իրենց ավանդն են մուծել սովետահայ պատմաբաններ Ս. Երեմյանը[8], Ս. Հակոբյանը[9], Ս. Պողոսյանը[10], Բ. Առաքելյանը[11], Լ. Բաբայանը[12], Ա. Գ. Հովհաննիսյանը[13], Կ. Յուզբաշյանը[14], Հ. Բարթիկյանը[15], Վ. Վարդանյանը[16], Ա. Տեր-Ղևոնդյանը[17], Գ. Միքայելյանը[18], սփյուռքահայ պատմաբան Մերուն-Երուանդ Հ. Քասունին[19], Ղ. Մովսիսյանը[20] և ուրիշներ։

Ինչպես տեսնում ենք, նշված դարերի պատմության ուսումնասիրության վիճակը հայ պատմագրության մեջ բավական հեռու է բավարար լինելուց։

---

8 Ս. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, «Աշխատություններ» (Երևանի պետհամալսարանի Ն. Մառի անվան կաբինետի, 1947, № 2)։ *С. Еремян*, История Армении IX—XV вв. «Очерки истории СССР, ч. 1—2, М., 1953). Его же «Опыт периодизации истории Армении эпохи феодализма, «Вопросы истории», 1951, № 7.

9 Ս. Հակոբյան, Հայ ժողովրդի ֆեոդալական շրջանի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 8)։ Նույնի, Հայ գյուղացիության պատմություն, հ. 2, Երևան, 1964, էջ 39—42)։

10 Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում, 9—13-րդ դդ., Երևան, 1956, էջ 245—270. Նույնի, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2 (9—13-րդ դդ.), Երևան, 1965, էջ 87—93։

11 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., հ. 1, Երևան, 1958, հ. 2, Երևան, 1964։

12 Լ. Բաբայան, Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, Երևան, 1970։

13 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957։

14 Կ. Յուզբաշյան, Դելմիկները Արիստակես Լաստիվերտցու պատմության մեջ («Բանբեր Մատենադարանի», Երևան, 1960, № 5, էջ 307—311)։ *К. Н. Юзбашян*, «Варяги» и «Прония» в сочинении Аристакеса Ластиверци, Виз. Вр., т. 16, 1959.

15 Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունը Հ. Բարթիկյանի, Երևան, 1973։

16 Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը (908—1021 թթ.), Երևան, 1969, էջ 201—208։

17 Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965։

18 *Г. Микаелян*, История Киликийского Армянского государства; Ереван, 1952.

19 Ս. Ե. Հ. Քասունի, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մէջ (1080—1187). Պէյրութ, 1974։

20 Ղ. Մովսեսյան, Լոռի կիլիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923, Ս. Պալասանեան, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1902։

Հայաստանի ու դրացի երկրների XI—XII դդ. և ընդհանրապես սելջուկյան պետության պատմության հարցերի ուսումնասիրությանը անդրադարձել են նաև ռուս, սովետական և եվրոպական նշանավոր արևելագետներից շատերը։ Այդ հեղինակներից մենք նկատի ունենք հիմնականում արևելագետներ Վ. Բարտոլդի, Ա. Յակուբովսկու, Բ. Զախոդերի, Ի. Զավախիշվիլու, Ա. Նովոսելցևի, Ն. Մառի, առանձնապես Վ. Գորդլևսկու, Ի. Պետրուշևսկու, Ռ. Հուսեյնովի, Ն. Շենգելիայի, Ս. Աղաջանովի, Դ. Երեմեևի և այլոց աշխատությունները[21]։

Նշված առանձին հարցերի, այդ թվում և սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ զբաղվել են XIX—XX դդ. եվրոպական արևելագետներն ու սելջուկագետները։ Նրանցից կարելի է հիշատակել Վ. Բրոսսեի, Է. Դյուլորիեի, Լը Բոի, Հ. Գելցերի, Լ. Կահունի, Ժ. Մորգանի, Ֆ. Տուրներիզի, Ս. Լեն-Պուլի, Մ. Սեն-Մարտենի, Յ. Մարկվարդի, Թ. Ռայսի, հատկապես Գ. Շլումբերժերի, Ժ. Լորանի, Ռ. Գրուսսեի, Կլ. Կահենի, Կ. Բոսվորդի, Ս. Թումանովի, Մ. Կանարի և այլոց աշխատությունները[22]։

Ուսումնասիրվող որոշ հարցերի նկատմամբ առավելապես հետաքրքրություն են ցուցաբերում արդի թուրք պատմաբանները, որոնցից հատկապես պետք է հիշատակել Ֆ. Քյոպրյուլյուին, Շ. Գյունալտային, Ի. Ուզունչարշըլին, Մ. Յընանջին, Ֆ. Կրզի-Օղլուին, Ի. Քաֆեսոզլուին, Ա. Սեվիմին, Մ. Քյոյմենին, Օ. Թուրանին[23] և Ֆ. Սումերին[24]։

---

21 Նշված հեղինակների աշխատությունները տրված են գրականության ցանկում։

22 Վերոհիշյալ հեղինակների աշխատությունները տրված են գրականության ցանկում, Այս հեղինակների երկերի գնահատականը տրված է սույն աշխատության մի շարք գլուխների սկզբում։

23 Նշված հեղինակների աշխատությունները տրված են գրականության ցանկում։

24 Քանի որ վերոհիշյալ թուրք պատմաբանների հայացքների և նրանց կողմից սելջուկագիտության նկատմամբ ցուցաբերած հատուկ ուշադրության, քաղաքական դրդապատճառների քննադատությունը կատարվել է սովետական պատմագիտության ներկայացուցիչների կողմից, ուստի մենք ավելորդ ենք գտնում առանձին ուսումնասիրության առարկա դարձնել այն։ *В. А. Гордлевский*, Государство Сельджуков Малой Азии, М.—Л., 1941, стр. 18—20, *Н. Н. Шенгелия*, Сельджуки и Грузия в XI в., Тбилиси 1968, (на грузинском яз.), резюме, стр. 340—369. *М. Зулалян*, Вопросы древней и средневековой истории Армении в освещении современно-турецкой историографии, Ереван, 1970, стр. 39—67. *Д. Еремеев*, Этногенез турок М., 1971.

Ինչպես նկատելի է, վերոհիշյալ հայ և օտար պատմաբանները ամբողջությամբ չեն ուսումնասիրել Հայաստանի XI—XII դդ. պատմությունը՝ կապված սելջուկյան տիրապետության հետ։ Այնուհետև նրանք իրենց ուսումնասիրություններում չեն օգտագործել հայ և օտար բոլոր տեսակի սկզբնաղբյուրները միասին վերցրած։ Հետևաբար, այդ ուսումնասիրությունների եզրահանգումները, ինչպես պետք է սպասել, թերի են և ոչ անկողմնակալ։

բ. Աղբյուրների համառոտ տեսություն

Մեր ուսումնասիրության համար սկզբնաղբյուրներ են առաջին հերթին մեզ հասած հայ և օտար մատենագրական երկերը։ Այդ աղբյուրները իրենց ձևով ու բնույթով տարբեր են ու բազմապիսի։ Առաջին հերթին պետք է հիշատակել հայ և օտար պատմագիրների, ժամանակագիրների և աշխարհագիրների երկերը, սելջուկյան սուլթանների հրովարտակները, իկթադարական մենշուրներն ու շնորհագրերը և վիմական արձանագրությունները։

Մատենագրական նյութերի մեջ իր կարևորությամբ բնականաբար առաջին տեղը գրավում է հայկական՝ հատկապես XI—XII դդ. պատմագրությունը, հատկապես հայկական սկզբնաղբյուրների կարևոր ու յուրահատուկ նշանակությունը այդ ժամանակաշրջանի ոչ միայն Հայաստանի և հայ ժողովրդի, այլև Անդրկովկասի ու Մերձավոր Արևելքի երկրների մյուս ժողովուրդների կյանքում տեղի ունեցած քաղաքական դեպքերն ու երևույթները պարզաբանելու հարցում։

Այդ աղբյուրներն են Արիստակես Լաստիվերտցու, Մատթեոս Ուռհայեցու և նրան շարունակող Գրիգոր Երեցի, Սամուել Անեցու և նրան շարունակողի, Վարդան Արևելցու կամ Բարձրբերդցու, Սմբատ Սպարապետի, Մխիթար Այրիվանեցու, Ստեփանոս Օրբելյանի և այլոց պատմությունները, տարեգրքերն ու ժամանակագրությունները[25]։

Քանի որ այդ աղբյուրները քիչ թե շատ հայտնի են, դրանցից մեծ մասն ունեցել է գիտական և աշխարհաբար հրատարակություններ և օգտագործվել այդ շրջանի պատմության ուսումնասիրությանը նվիրված

25 Տե՛ս սկզբնաղբյուրների ցանկը։

պատմական երկերում[26], ուստի հարկ չենք համարում շարադրել դրանց բովանդակությունը։

Մեր ուսումնասիրության համար աղբյուր են ծառայել ձեռագրերի հիշատակարանները[27], մաղ ժամանակագրությունները[28], հայ և օտար վիմական արձանագրությունները[29] և սելջուկյան սուլթաններից մեզ հասած դրամները[30], հայկական առակները[31], կաթողիկոսական թղթերն ու կոնդակները[32]։

Այս շրջանի պատմության ուսումնասիրության համար պակաս կարևոր չեն օտար՝ բյուզանդական, ասորական, վրացական, արաբական, պարսկական ու թուրքական, դեպքերի ժամանակակից և ավելի ուշ շրջանում գրված մատենագրական աղբյուրները[33]։

Քանի որ վերոհիշյալ օտարալեզու աղբյուրների, հատկապես բյուզանդական, վրացական ու ասորական աղբյուրների մեծ մասը հայտնի է մեր պատմագրության մեջ[34], ուստի հարկ չենք համարում շարադրել այդ երկերի բովանդակությունը։

Մահմեդական[35] աղբյուրները, որոնց ձեռագրերը գտնվում են Մերձավոր Արևելքի և Եվրոպայի տարբեր մատենադարաններում ու թանգարաններում, նույնպես կարևոր ու արժեքավոր են ուսումնասիրության

26 Գ. Հովսեփյանց, Ցիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլաս, 1951, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1950։

27 Հայկական սկզբնաղբյուրների մասին պատմագիտական հարուստ տեղեկություններ է հաղորդում Հ. Մանանդյանը, տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն, էջ 362—373, տե՛ս նաև Ա. Լաստիվերտցու ուս. թարգմ. Կ. Յուզբաշյանի կողմից, տե՛ս Повествование Вардапета Аристакеса Ластиверци пер. с древнеармянского К. Н. Юзбашян, М., 1965, стр. 13—51, տե՛ս նաև Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխարհ. թարգմ. Հ. Բարթիկյանի, էջ III—XVIII։

28 Վ. Հակոբյան, Մաղ ժամանակագրություններ, 13—18-րդ դդ., հ. 1, Երևան, 1951։

29 Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ 2, Երևան, 1960։

30 M. Koymen, Büyuk Selçuklu imperatorlugu tarihi, II, ikinci imperatorluk devri, Ankara, 1954.

31 Н. Марр, Сборники притч Вардана, ч. 1, СПб., 1898.

32 Ն. Շնորհալի, Նամականի, Վենետիկ, 1838, նույնի Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865։

33 Տե՛ս սկզբնաղբյուրների ցուցակը։

34 Տե՛ս գրականության ցանկը։ Վերոհիշյալ սկզբնաղբյուրների մասին տե՛ս Հ. Մանանդյան, Քննական պատմություն, էջ 378—385։

35 Այսուհետև մահմեդական աղբյուրներ ասելով, նկատի ունենք պարսկալեզու, արաբալեզու և թուրքալեզու աղբյուրները։

համար։ Քանի որ այդ աղբյուրները բնագիր վիճակում անմատչելի են մեզ, մենք օգտագործել ենք եվրոպական և թուրքական ուսումնասիրողների իրենց աշխատանքներում մեջ բերված հատվածները։ Սկսած 30-ական թվականներից արաբալեզու և պարսկալեզու մեծ քանակությամբ սկզբնաղբյուրներ Թուրքական պատմագիտական ընկերության կողմից թարգմանվում են արդի թուրքերենի։ Հետևաբար, այդ աղբյուրների մեծ մասը օգտագործված են մեր ուսումնասիրության մեջ թուրքերեն թարգմանության միջոցով[36]։ Քանի որ այդ աղբյուրներից շատերը ցարդ չեն օգտագործված սովետահայ պատմագրության կողմից և մեծավ մասամբ հայտնի չեն սովետահայ պատմագրությանը, ուստի ցանկանում ենք որոշ պատմագրական տեղեկություններ տալ դրանցից առավել կարևորների մասին։

Այդ սկզբնաղբյուրների գրեթե զգալի մասը պարունակում է արժեքավոր նյութեր, որոնք վերաբերում են սելջուկյան աշխարհակալության ու նրա հարաբերություններին հարևան պետությունների և ժողովուրդների, այդ թվում նաև Հայաստանի հետ։ Մի շարք սկզբնաղբյուրներում՝ «սելջուկնամեներում» մատենագրական ձևով տրվում է մեծ սելջուկների պատմությունը։ Պետք է նշել, որ սելջուկյան աշխարհակալությունը իր կազմավորման սկզբից առնչվել է ոչ միայն Հայաստանի, այլև անդրկովկասյան մյուս ժողովուրդների թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական պատմության հետ։ Այսպիսով, այդ սկզբնաղբյուրները ծառայում են ինչպես սելջուկների պատմության, այնպես էլ Հայաստանի XI—XII դդ. պատմության ուսումնասիրությանը։

XI դ. օղուզների և թուրքմենների մասին գրված ընդհանուր երկերի մեջ ստեղծվում են առաջին պատմական աշխատությունները՝ նվիրված Սելջուկյան հարստությանը։ Դրանցից է «Մելիքնամեն», որը կազմել է XI դ. անհայտ մի հեղինակ։ Առաջին սելջուկների պատմությունը շարադրել է նշանավոր ամիրա Ինանջ-Բայղուլը։ Վերջինս ազգական ու ժամանակակից էր Տուղրիլ բեգին (1038—1063)։ Մելիքնամեի արաբական բնագիրը պահպանված չէ, սակայն նրանից քաղվածքներ են բերվում Իբն ալ-Ասիրի (XIII դ.), Աբու-լ-Ֆարաջի (XIII դ.) Միրխոնդի

36 Այդպես են վարվել նաև վրաց պատմաբան Ն. Շենգելիան և Ադրբեջանի պատմաբան Ռ. Հուսեյնովը, տե՛ս Н. Шенгелия, Сельджуки и Грузия в XI в., Тбилиси, 1968, (резюме, стр. 363—368). Р. Гусейнов, Сельджукская военная организация, Пал., 1967, вып. 17 (80).

(XVI դ.) և այլ հեղինակների երկերում[37]։ Մելիքնամեում հետաքրքիր տեղեկություններ են հաղորդված սելջուկների X—XI դդ. գործունեության մասին։ Սակայն այս աշխատության մեջ զգացվում է սելջուկներին մեծարելու միտում՝ նրանց վերագրելով թագավորական և ազնվականական ծագում[38]։

Սելջուկյան առաջին նվաճումների պատմության ուսումնասիրության և նրանց կենցաղի ու հասարակական կառուցվածքի համար կարևոր նշանակություն ունի Աբու՛լ-Ֆազլ Մուհամմադ իբն Հուսայն Բայհաքիի Ղազնեյան սուլթան Մասուդի (1030—1041) մասին գրված պատմությունը[39]։ Հեղինակը լինելով սուլթան Մասուդի դիվանի աշխատակից իր աշխատությունը կազմել է հիմնականում այն փաստաթղթերի հիման վրա, որոնց մեծ մասը կազմել է ինքը։

Հայաստանի, ինչպես նաև Անդրկովկասի XI—XII դդ. պատմության ուսումնասիրության համար առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Զուբդաթ ալ-Նուսրա վա Նուխբաթ ալ-Ուսրան» աշխատությունը, որը կազմվել է երեք տարբեր հեղինակների կողմից։ Առաջին հեղինակը Շարաֆ ադ-Դին Աբու-Նասր Անուշիրվան Իբն-Խալիդ Քաշանին է (մահացած 1135 թ.)։ Նա սելջուկ վեզիրներից է և գրի է առել իր հիշողությունները պարսկերեն լեզվով։ Այս երկը հետագայում թարգմանվել է արաբերենի Իմադ ադ-Դին Իսֆահանիի կողմից (մահացած 1200 թ.) և հասցվել մինչև 1174—75 թթ.։ Այնուհետև հետագայում խմբագրվել և կրճատվել է Ֆաթհ ալ-Բոնդարիի կողմից արաբերեն լեզվով[40] (մենք օգտագործել ենք թուրքերեն թարգմանությունը)։

37 Տե՛ս Cl. Cahen, La Malik-nameh et l'histoire des origines Seljukides Oriens, v. 2, Paris, 1949, p. 31—65.

38 Նույն տեղում։ Տե՛ս նաև С. Агаджанов, Очерки истории огузов и туркмен Средней Азии IX—XIII в., Ашхабад, 1969, стр. 18 (այսուհետև՝ С. Г. Агаджанов, Очерки).

39 Абу-л-Фазл Бейхаки, История Масуда 1030—1041, Ташкент, 1962, МИТТ, I, стр. 234—308.

40 Մեզ հասել է ալ-Բոնդարիի կազմած երկը։ Տե՛ս Irak ve Horasan Selcuklular Tarihi. Imad ad-Din al-Katib al-Isfahaninin al-Bundari tarafindan ihtisar edilen Zubdat al-Nusra va Nuhbat al-Usra adli kitabinin tercümesi, Istanbul, 1943, M. Th. Houtsma Recueil des textes relatifs a l'histoire des Seljoucides, Leiden 1889, В. Розен, Арабские сказания о пораженции Романа Диогена Алп-Арсланом. Т. П. Имад ад-Дин Исфаганский, Записки Восточного отд. имп. русского археологического общества, вып. 3, СПб., 1887, стр. 192.

Հետաքրքիր է նաև Սադր ուդ-Դին Աբու-լ-Հասան Ալի-Իբն Նասր Իբն Ալի ալ-Հուսեյնիի «Ախբար ադ-Դաուլաթ աս-Սելջուկիա» (սելջուկների պետության պատմություն) խորագիրը կրող աշխատությունը, որը կարևոր տեղեկություններ է հաղորդում մեծ սելջուկների մասին, այդ թվում և Իրաքի սելջուկների հարաբերությունները՝ Հայաստանի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների հետ (1033—1192-ի միջև)[41]։

Այստեղ մանրամասն տեղեկություններ կան Անիի, Կարսի, Դվինի, Ամբերդի, Բջնիի, Ախալքալաքի և Հայաստանի բնակավայրերի, Ալփասլանի կողմից Անիի գրավման, Մանազկերտի ճակատամարտի, XII դ. սելջուկ-վրացական պատերազմների, իկթայական հողատիրության և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ։

Վերոհիշյալ հարցերի շուրջ արժեքավոր տվյալներ է հաղորդվում Անեցի Բուրհան ադ-Դին Աբու-Նասրի «Անիս ալ-Կուլուբ»[42] վերնագիրը կրող պարսկալեզու ժամանակագրության մեջ։ Հեղինակը ծնվել է Անիում 1143 թ.։ Նա ականատես է եղել 1161 թ. վրաց Գեորգի Գ թագավորի կողմից Անիի գրավման դեպքերին։ Այդ ժամանակ (18 տարեկան) գերի ընկնելով, տարվում է Տփղիս, և ներկայանում Գեորգի Գ-ին։ Վրաց թագավորը իմանալով Բուրհան ադ-Դինի մի շարք լեզուների, այդ թվում հայերենի, վրացերենի և Աստվածաշնչին քաջատեղյակ լինելը, նրան ազատում է գերությունից։ Բուրհան ադ-Դինը գնում է Իկոնիայի սուլթան Իզզ ադ-Դին Քեյքաուս Ա-ի (1210—1219) մոտ, դառնում է Իկոնիայի գլխավոր դատավոր (դադի)։ Վերջինիս պատվերով գրում է վերոհիշյալ ժամանակագրությունը։ Հետաքրքրություն է ներկայացնում նրա հաղորդումները ոչ միայն Անիում վրաց և սելջուկների միջև տեղի ունեցած ռազմական ընդհարումների, այլև XI դարում Անիում և Կարսում տեղի ունեցած դեպքերի մասին[43]։

Մեր թեմայի ուսումնասիրության համար անկասկած մեծ արժեք են ներկայացնում Իբն ալ-Ասիրի, Ռաշիդ ադ-Դինի, Աբու-լ-Ֆիդայի, Զահիր ադ-Դին Նիշաբուրիի, Ռավենդիի, Համդալլահ Ղազվինու և այլոց աշխատությունները, որոնք հայտնի են մեզ արևելագիտական գրականությունից[44]։

Անշուշտ, Հայաստանի սոցիալ-տնտեսական գրության ուսումնասիրության համար խիստ կարևոր են նաև Նիզամ ալ-Մուլքի «Սիասեթ-նամե» երկը և վերջին 30-ամյակում Թուրքական պատմագրության ընկերության կողմից հրատարակված սելջուկյան ժամանակաշրջանի՝ հողատիրության, պետական կառուցվածքի, գյուղացիության վիճակի մասին հաղորդող եզակի և հազվագյուտ արխիվային նյութերը, որոնց մասին ավելի մանրամասն կխոսվի սույն աշխատության սոցիալ տնտեսական իրավիճակի մասին գրված հատվածում։

* * *

Հայաստանի սելջուկ-Թուրքական տիրապետության ժամանակաշրջանը սովետահայ պատմագրության կողմից ընդունված է մտցնել Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի շրջանի մեջ և այն համարել այդ շրջանի 3-րդ և 4-րդ փուլերը (IX—XIII դդ.), 3-րդ փուլը (1050—1150 թթ.) բնութագրվում է որպես հայկական ֆեոդալիզմի ճգնաժամը (սելջուկ-Թուրքերի տիրապետությունը», իսկ 4-րդ փուլը (1150—1235 թթ.) հայկական ֆեոդալիզմի վերածնունդն ու հետագա զարգացումը[45]։

Հայաստանի և Ադրբեջանի ֆեոդալական հասարակության պատմության պարբերացման իր սխեմայով հանդես է եկել նաև Ի. Պետրու-

---

41 *Sadruddin* Ebul-Hasan Ali Ibn Nasir Ibn el Hüseyni, Ahbar ud-devlet is-Selcukiyye, Ankara, 1943. *Այս գործի նշանակությունը առաջին անգամ ընդգծել է Հուբսման իր աշխատության առաջաբանում 1886 թ.։ Մի տարի հետո 1887 թ. որոշ հատվածներ ռուսերեն թարգմանությամբ հրատարակել է Վ. Ռոզենը։ Տե՛ս* В. Розен, Арабские сказания о пораженции романа Диогена Алп-Арсланом, Садр Эд-Дин ал-Хусейни, т. I, вып. 4, СПб., 1887, стр. 243—253.

42 *Երկը հրատարակել է Ֆ. Քյոպրուլուն։ Տե՛ս* F. Köprulu, Anadolu Selçuklulari tarihinin yerli kaynaklari, Belleten, 1943, VII, p. 459—521.

43 *F. Köprülü* Anadolu Selçuklulari tarihinin yerli kaynaklari, 459—521.

44 *Տե՛ս աղբյուրների և գրականության ցանկը։*

45 *Հայաստանի ֆեոդալական հասարակության զարգացման պարբերացման հարցերով զբաղվել են սովետահայ պատմաբանները։ Տե՛ս* С. Т. Еремян, Опыт периодизации истории Армении эпохи феодализма («Вопросы истории», 1951, № 7. Ս. Հակոբյան, *Հայ ժողովրդի ֆեոդալական շրջանի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 8)։* Ս. Պողոսյան, *Գյուղացիների հորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1956, էջ 5։* Լ. Բաբայան, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13—14-րդ դդ., Երևան, 1964, էջ 84—86։ Նույնի, Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, Երևան, 1970, էջ 135—143։ Լ. Բաբայանը հիմնականում ճիշտ համարելով զարգացած ֆեոդալիզմի շրջանի էտապները, որոնք տրվել են Ս. Երեմյանի վերոհիշյալ հոդվածում նկատում է, որ «2-րդ շրջանի 3-րդ էտապը» ավելի ճիշտ կլիներ ասել, ոչ թե ճգնաժամ, այլ ֆեոդալական հարաբերությունների զարգացման պրոցեսի ժամանակավոր ընդհատում։ Նույն տեղում, էջ 138։*

շևսկին[46]։ Ուսումնասիրվող ենթաշրջանը նա բնութագրել է հետևյալ ձևով. «10—11-րդ դդ. շրջան, արտադրության ֆեոդալական եղանակի ամրապնդումը երկու երկրներում ստրկատիրական և նահապետական ֆորմացիաների պահպանմամբ (վերջինս քոչվորների մոտ և բարձր լեռնային շրջաններում»)[47]։

Պետք է նշել, որ Հայաստանի սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակի՝ ֆեոդալական հարաբերությունների ուսումնասիրությունն ընդհանրապես, և ֆեոդալական հողատիրության և ագրարային հարաբերությունների ու շահագործվող դասակարգերի սոցիալ-տնտեսական և իրավական վիճակի ուսումնասիրությունը մասնավորապես ներկայացնում են մի շարք դժվարություններ։

Այդ դժվարությունները նրանում են, որ մեզ հասած ոչ միայն հայկական, այլև օտար պատմական և մատենագրական և այլ աղբյուրները շատ սուղ և ժլատ տեղեկություններ են հաղորդում Հայաստանի՝ սելջուկյան տիրապետության ներքո գտնվող նահանգների սոցիալ-տնտեսական վիճակի մասին։ Տեղեկությունները ժլատ են հատկապես հայկական սկզբնաղբյուրներում։ Ուստի, ուսումնասիրողը պետք է աշխատի պատմահամեմատական մեթոդով, հատկապես օտար՝ պարսկական, արաբական, թուրքական, ասորական, բյուզանդական և վրացական մատենագրական և իրավական սկզբնաղբյուրների հիման վրա վերականգնել այդ շրջանի սոցիալ-տնտեսական վիճակի պատմությունը։

Պարսկալեզու, արաբալեզու և ավելի ուշ շրջանում թուրքալեզու՝ սելջուկնամեների, մելիքնամեների, ժամանակագրությունների և պատմությունների մեջ (որոնց մասին սույն հատորի ներածականում խոսվեց) նույնպես քիչ տեղեկություններ կան ոչ միայն Հայաստանի, այլև սելջուկյան աշխարհակալության մեջ մտնող մոտավորապես տասներկու կուսակալությունների՝ քաղաքական ու տնտեսական խոշոր միավորումների, այդ թվում երեք սուլթանությունների, մելիքությունների և մի շարք ամիրայությունների սոցիալ-տնտեսական վիճակի մասին։

Այդ ժլատ տեղեկությունների մեջ հատկապես սակավ են վկայությունները շահագործվող դասակարգերի սոցիալ-տնտեսական և իրավական վիճակի մասին։ Այդ տեղեկությունները առավելապես վերաբերում են մեծ սելջուկների պետական կառուցվածքի, ռազմական կազմակերպման, վարչական սիստեմի, հողատիրության ձևերի և հասարակական կյանքի վիճակի մասին։

Վերոհիշյալ հարցերի ուսումնասիրությունը անհնարին է առանց Նիզամ ալ-Մուլքի «Սիասեթնամե» աշխատության։

Նիզամ ալ-Մուլքը, որպես պետական մեծ գործիչ և իրականում պետության փաստական ղեկավար հիանալիորեն ծանոթ էր սելջուկյան աշխարհակալության ներքին և արտաքին իրավիճակին։ Հետևաբար նրա կողմից հաղորդված տեղեկությունները արժանի են հատուկ վստահության և հավաստիացման։

Փոքր Ասիայի սելջուկյան սուլթանության մեջ տիրող հողատիրության ձևերի և պետական կառավարման համակարգի վարչական կառուցվածքի ուսումնասիրության համար կարևոր է թուրքական պատմական ընկերության պարբերաբար հրատարակած արաբական և պարսկական սկզբնաղբյուրների թուրքերեն թարգմանությունները։ Դրանցից հատկապես ուշագրավ է արդի թուրք պատմաբան Օսման Թուրանի փաստաթղթերի ժողովածուն[48], որը խիստ արժեքավոր է, եթե նկատի ունենանք, որ առկա արխիվային նյութերը վերաբերում են մեծավ մասամբ XIV դարից հետո ընկած ժամանակաշրջանին։

Վերոհիշյալ ժողովածուի գերակշռող մասը «մենշուրներ» և «ֆերմաններ»՝ հրովարտակներ են, տրված սուլթանների կողմից վարչական գերագույն ապարատի՝ վեզիրների, կադիների (դատավորների) նշանակման առիթով։ Այդ հրովարտակների մի մասը հողային՝ եկեղեցական նվիրատվություններ և թեմլիքնամեներ են։

Այս փաստաթղթերում հետաքրքիր տեղեկություններ կան ոչ միայն պետական ստորին ապարատի, այլև աղբյուրներում չհանդիպող պաշտոնյաների հորջորջումների, ինչպես նաև հետաքրքիր մանրամասնություններ կան, օրինակ՝ շահնե, քութուվալ և այլ պաշտոնյաների, քաղաքային մահմեդական և քրիստոնյա բնակիչների փոխհարաբերությունների, ստրուկների ազատման և այլ հարցերի մասին։

Անկասկած, լրացուցիչ վկայություններ կարելի է գտնել «Թուրքական պատմական ընկերության» հրատարակած պատմագիտական

---

46 *Н. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI начале XIX в., Л., 1949, стр. 87—88.

47 Նույն տեղում, էջ 88։ Ի. Պետրուշևսկու առաջադրած պարբերացման սխեմայի քննադատությամբ հանդես է եկել Լ. Բաբայանը, ուստի ավելորդ ենք համարում քննարկման ենթարկել այն։ Լ. Բաբայան, Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, էջ 148—158։

48 *O. Turan*, Türkiye Selçukluları hakkında resmi vesikalar, Ankara, 1958.

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

կոնգրեսներում կարդացված գիտական զեկուցումների ժողովածուներում[49] և «Բելլեթեն»[50] ամսաթերթում լույս տեսած հոդվածներում։

Ինչպես նշվեց, այդ տեղեկությունները թեև անմիջականորեն չեն վերաբերում Հայաստանի հարավարևմտյան և արևմտյան նահանգներին, սակայն դրանք կարելի է վերագրել նաև Հայաստանի վերոհիշյալ նահանգներին, քանի որ դրանց մեծ մասը մինչև XIII դ. կեսերը գտնվում էին Փոքր Ասիայի սելջուկների տիրապետության ներքո։

Դժվարություններից պետք է համարել նաև այն, որ Հայաստանը ամբողջությամբ չէր ենթարկվում սելջուկներին։ Սելջուկյան տիրապետության ժամանակ սոցիալ-տնտեսական փոփոխությունները կատարվեցին գերազանցապես Հայաստանի այն շրջաններում, որոնք սելջուկյան միացյալ պետության ժամանակ գտնվում էին անմիջապես սելջուկ ֆեոդալների ձեռքին, իսկ կենտրոնական իշխանության քայքայումից հետո (1118—1307)՝ անցան ամիրայությունների տնօրինության տակ։ Այսինքն՝ այդ փոփոխությունները տեղի են ունենում սելջուկյան ամիրայություններին ենթակա հայկական հողամասերում՝ Արարատյան դաշտում, Բագրևանդում, Վասպուրականում, Տարոնում ու Կարսի գավառներում և Տավրոսի լեռնաշղթայից դեպի հարավ ընկած վայրերում։ Ինչ վերաբերում է Հայաստանի հյուսիսային մասերին՝ Տաշիր Զորագետին (Լոռի) և մասամբ էլ Սյունիքին (ու Արցախին), ապա այդ նահանգներում՝ սելջուկյան տիրապետության ժամանակ դժվար թե սոցիալ-դասակարգային հարաբերություններում այնպիսի փոփոխություններ տեղի ունենային, որպիսիք մենք նկատում ենք սելջուկյան անմիջական տիրապետության ներքո գտնվող Հայաստանի տարածքում։ Այդպիսի տարբերությունը բացատրվում է այդ երկու նահանգներում հայկական թագավորությունների պահպանմամբ, որը համարյա թե բացառում էր, նախ սելջուկ կալվածատերերի առաջացումը այդ նահանգներում և, երկրորդ, սելջուկյան իշխանությունների անմիջական միջամտությունը հայկական այդ ինքնավար թագավորությունների ներքին գործերին և այնտեղ գոյություն ունեցած հարաբերությունների մեջ որոշ փոփոխություններ մտցնելուն[51]։

---

[49] II Türk tarih kongresi, Istanbul, 1943. III Türk tarih kongresi, Ankara, 1948. IV Türk tarih kongresi, Ankara, 1952. V Türk tarih kongresi, Ankara, 1960.

[50] Türk tarih kurumi „Belleten", *մի շարք համարներ։*

[51] Ս. Պողոսյան, *Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում, էջ 254։*

Ուստի, մեր ուսումնասիրման ենթակա՝ Հայաստանի հարավային և արևմտյան շրջանները գրեթե ամբողջությամբ ենթակա էին նոր հաստատված սելջուկյան ֆեոդալ կառավարողներին՝ ամիրաներին։

Եթե Հայաստանի և հյուսիսարևելյան նահանգների՝ սոցիալ-տնտեսական վիճակի XII—XIII դդ. պատմությունը քիչ թե շատ ուսումնասիրված են հայ պատմաբաններ Հ. Մանանդյանի[52], Ա. Հովհաննիսյանի[53], Ս. Պողոսյանի[54], Ս. Հակոբյանի[55], Լ. Բաբայանի[56] և ուրիշների աշխատություններում[57], ապա Հայաստանի հարավ և հարավ-արևմտյան տարածքի՝ սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությունը ամբողջական վիճակով չի ուսումնասիրված։ Անշուշտ, վերոհիշյալ պատմաբաններից որոշ հեղինակներ խիստ մասնակիորեն իրենց աշխատություններում անդրադարձել են այդ շրջանին վերաբերող որոշ հարցերին։ Այսպես, Ս. Պողոսյանը իր «Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում»[58] աշխատությունում փորձել է տալ գյուղացիների սոցիալ-իրավական վիճակը և հիմնվելով միայն «Սիասեթնամե»-ի վրա, մասնակիորեն վեր է հանել հողատիրության իկթայական ինստիտուտի էությունը։

Ս. Հակոբյանն իր «Հայ գյուղացիության պատմության» գրքի 2-րդ հատորում՝ ընդամենը մի քանի էջ է նվիրել[59] սելջուկյան հողատիրության առաջացմանը։ Հայաստանի այդ շրջանի քաղաքների և արհեստների պատմությանն է նվիրված Բ. Առաքելյանի «Քաղաքները և արհեստները

---

52 Հ. Մանանդյան, *Քննական տեսություն, հ. Գ, Երևան, 1952, էջ 161—177։*

53 Ա. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 95—262։*

54 Ս. Պողոսյան, *Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում, 9—13-րդ դարերում։*

55 Ս. Հակոբյան, *Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, Երևան, 1957, հ. 2, 1964։*

56 Լ. Բաբայան, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13—14-րդ դարերում, էջ 64—98։*

57 *Б. Арутюнян.* Социально-экономическое положение крестьян в Армении XII в. по Судебнику Мхитара Гоша («Вопросы истории», 1952, № 8). Գ. Գրիգորյան, *Վանական կալվածատիրությունը Սյունիքում XI—XIII դդ., Երևան, 1973։*

58 Ս. Պողոսյան, *նշվ. աշխ., էջ 260—271։*

59 Ս. Հակոբյան, *Հայ գյուղացիության պատմություն, հ. 2, էջ 39—42։*

հեստները Հայաստանում 9—13-րդ դդ.» երկհատոր աշխատությունը[60]։

Թեև հայ պատմաբանները ամբողջական մենագրություններ չեն նվիրել Հայաստանի սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակին, սակայն տվել են այդ ժամանակաշրջանի ճիշտ գնահատականը՝ Հայաստանում ֆեոդալիզմի հետագա զարգացման վրա այդ ժամանակաշրջանի թողած ազդեցության հարցը քննարկելիս։ Ինչպես նշվեց, այդ շրջանը բնութագրվել է որպես հայկական ֆեոդալիզմի ճգնաժամը (Թուրք-սելջուկների տիրապետությունը)[61]։

Եթե Հ. Մանանդյանը նյութերի սակավության պատճառով հրաժարվել է ուսումնասիրության ենթարկել այդ շրջանի սոցիալ-տնտեսական վիճակը, սակայն նա այդ շրջանը գնահատելիս ճշտորեն վերլուծության է ենթարկել սելջուկների հաջողություններն ու նրանց նվաճումների և տիրապետության հաստատման և ապա հետևանքների նկարագրությունը։ «Անդրկասպյան երկրից ու Միջին Ասիայից եկած քոչվոր ու խաշնարած նոր այս ժողովուրդների տիրապետությունը,— եզրակացնում է Հ. Մանանդյանը,— որը խիստ ծանր ու անբուժելի հարված հասցրեց պարսկա-արաբական քաղաքակրթությանն ու կուլտուրային՝ ավելի ևս դաժան ու կործանարար եղավ հայության ու Մերձավոր Արևելքի ազգաբնակչության համար»[62]։

Հայ պատմագրության մեջ խիստ քննադատության է ենթարկված Ն. Մառի այն կարծիքը, թե Բագրատունիների շրջանում հին կարգերը քայքայվել էին և նոր բուրժուական կարգերի հաղթանակի համար մանկաբարձուհի էր անհրաժեշտ և այդ դերը նա վերագրում էր սելջուկներին[63]։ Մառի այս հակապատմական տեսակետը ժամանակին քննադատության են ենթարկել Աշ. Հովհաննիսյանը, Բ. Առաքելյանը, Լ. Խաչիկյանը և ուրիշներ։ Աշ. Հովհաննիսյանը ամփոփելով իր միտքը Ն. Մառի եզրակացության առթիվ, նկատում է. «Փաստերի ուսումնասիրությունը մեզ բերում է այլ համոզման։ Եթե ճիշտ է, որ XI—XII դարերի

60 Բ. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հ. 1, Երևան, 1958, հ. 2, Երևան, 1964։*

61 *С. Еремян,* Опыт периодизации истории Армении эпохи феодализма («Вопросы истории», т. 7, 1951).

62 *Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., էջ 7։*

63 Լ. Բարայան, *Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, էջ 162։ Տե՛ս նաև Н. Марр,* Ани, Ереван, 1939, стр. 48.

ընթացքում Հայաստանի սոցիալական ու կուլտուրական կյանքը չընթացավ բացարձակ լճացման կամ հետաշարժության հունով, այդ ոչ թե հույն կամ սելջուկ նվաճողների շնորհիվ, այլ չնայած այդ նվաճողներին»[64]։

Սովետական պատմաբաններից հատկապես արժանի է հիշատակել Վ. Գորդլևսկու «Փոքր Ասիայի սելջուկյան պետությունը» աշխատությունը[65]։ Նա փորձել է տալ Փոքր Ասիայի սելջուկների պետական և հասարակական կառուցվածքը, հիմք ունենալով իր ձեռքի տակ եղած սակավաթիվ նյութերը։

Ժամանակագրական կարգով մեզ հետաքրքրող որոշ հարցերի ուսումնասիրությանն է նվիրված Ի. Պետրուշևսկու աշխատությունները[66]։

Սելջուկյան աշխարհակալության ռազմական կազմակերպության[67] և Աթաբեգության ինստիտուտին[68] են նվիրված Ռ. Հուսեյնովի հոդվածները։

Միջին Ասիայի օղուզների և թուրքմենների IX—XIII դդ. հասարակական կառուցվածքի, զբաղմունքի և իկթայական հողատիրության որոշ հարցեր շոշափված են Ս. Աղաջանովի աշխատությունում[69]։

Մեր առջև դրված հարցերի, հատկապես սելջուկյան սուլթանության պետական կառուցվածքի լուսաբանմանը օգնել են Բ. Ն. Զախոդերի «Սիասեթնամե»-ի ռուսերեն թարգմանությունում կատարված ծանոթագրությունները[70]։

Սելջուկյան աշխարհակալության պետական կառուցվածքի, վարչական ապարատի, հողատիրության ձևերի, հատկապես Փոքր Ասիայի սելջուկյան պետության հասարակական կառուցվածքի, տնտեսական,

64 Ա. Հովհաննիսյան, *Գրվագներ, գիրք Ա, էջ 200։*

65 *В. Гордлевский.* Государство сельджукидов Малой Азии, М.—Л., 1941.

66 *И. Петрушевский,* К вопросу о прикреплении крестьян к земле в Иране в эпоху монгольского владычества, «Вопросы истории», 1947, № 4. *նույնի,* Земледелие и аграрные отношения в Иране 13—14 веков. Л., 1960. *նույնի,* О формах феодальной зависимости крестьян в Иране в 13—14 вв. «Советское востоковедение», 1955, № 5.

67 *Р. Гусейнов,* Сельджукская военная организация. П. С. выпуск 17(80), 1967.

68 *Р. Гусейнов.* Институт атабеков, ПС выпуск 15(78) 1966.

69 *С. Агаджанов,* Очерки истории огузов и туркмен средней Азии IX—XIII вв., Ашхабад, 1969.

70 *Сиасет-намэ.* Книга о правлении вазира XI столетия Низам ал-Мулька, пер. и прим. Б. Н. Заходера, М.—Л., 1949.

առևտրի և արհեստների խիստ սխեմատիկ բնույթի աշխատություններով ու հոդվածներով հանդես են եկել արդի թուրք պատմաբանները[71]։

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրությունը հեռու է բավարար լինելուց։ Ուստի կատարում ենք առաջին փորձը՝ առկա նյութերի հիման վրա շարադրելու այս աշխատանքը։

Հայաստանի նախասելջուկյան ժամանակաշրջանի՝ XI դ. առաջին կեսի քաղաքական և սոցիալ-տնտեսական և Հայաստանի Բյուզանդական կայսրության կողմից նվաճման պատմությունը բավականին ընդարձակ ուսումնասիրության է ենթարկվել Լեոյի, Հ. Մանանդյանի, Ռ. Գրուսեի, Ս. Պողոսյանի, Ս. Հակոբյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի և այլ հայ և օտար պատմաբանների կողմից[72]։ Հետևաբար, ավելորդ ենք համարում սույն աշխատության մեջ հատուկ բաժին առանձնացնել վերոհիշյալ հարցերի ուսումնասիրմանը։ Այդ հարցերին կանդրադառնանք այնքանով, որքանով որ դրանք կառնչվեն մեր առաջ դրված խնդիրները լուսաբանելիս։

---

[71] *J. Uzuncarsili*, Osmanli devleti teşkilatina medhal, Istanbul, 1941. *M. Yinanc*, Türkiye tarihi, Selçuklular devri Istanbul, 1944. *I. Kafesoğlu*, Meliksah devrinde Büyuk Selçuklu imparatorlugu, Istanbul, 1953. *M. Koymen*, Büyük Selçuklu imparatorlugu tarihi (Sancar devri), Ankara, 1954. *O. Turan*, Selçuklular Tarihi ve Türk-islâm medeniyeti, Ankara, 1965. *Նույնի* Türkiye Selçuklularinda toprak hukuku, Belleten, S. XLII.

[72] Լեո, *Հայոց պատմություն, երկրորդ հատոր։ Միջին դարեր, Գիրք առաջին, Երևան, 1967, էջ 577, 691։* Հ. Մանանդյան, *Քննական տեսություն..., էջ 46—245։* Ս. Հակոբյան, *Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1964։* Ա. Տեր-Ղևոնդյան, *Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965։ R. Grousset*, Histoire ed l'Arménie des origines a 1071, Paris, 1947, *և ուրիշներ։*

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ XI—XIII ԴԴ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ

Սելջուկյան պետության ստեղծումը։ Սելջուկյան աշխարհակալության պատմության պարբերացումը։ Սելջուկյան արշավանքների բնույթն ու պարբերացումը

Հայ ժողովրդի պատմությունը XI դ. սկզբից թևակոխում է մի այնպիսի ժամանակաշրջան, երբ քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի հետագա զարգացման վրա զգալի ազդեցություն են ունենում Միջին կամ Կենտրոնական Ասիայում՝ Թուրքիստանում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրադարձությունները։ Կենտրոնական կամ Միջին Ասիա ընդունված է պայմանականորեն կոչել այն հսկայական տարածքը, որն ընկած է Կասպից ծովի և Չինաստանի արևմտյան սահմանների միջև։ Միջին Ասիան մեծ մասամբ անապատային տափաստան է։ Այստեղ շատ են նաև ծաղկած օազիսներ։ Թեև վերջիններում ապրել են նստակյաց երկրագործ ցեղեր, սակայն երկրամասի բնական պայմանները, նրա բնակիչներին գերազանցապես դարձրել են քոչվոր անասնապահներ։ Վերջիններիս հարստությունը չափվում էր ոչխարների հոտերի, կովերի նախրի, ուղտերի ու ձիերի երամակների քանակի մեծությամբ։ Քանի որ անասունների հոտն ամեն ինչ էր դրանով ապրող մարդու համար, ուստի անասնակերի հայթայթումը գլխավոր հոգսն էր քոչվոր անասնապահի, որն ի բնե զինվոր էր, այն կռվում, որը նա մղում էր շրջապատում գտնվող իր նմանների դեմ, իր հոտը պահպանելու համար։ Հետևաբար նրա՝ զենքի դիմելը շատ բնական էր։ Նստակյաց քաղաքակրթության մշակած նյութական ու հոգևոր արժեքները նրա համար մեծ նշանակություն չունեին։ Այն, ինչ նա հարստություն էր համարում իր ըմբռնողությամբ կամ զգացողությամբ, վերցնում էր կողոպուտով, իսկ մնացածը ոչնչացնում էր։

Այս անասնապահ ցեղերը, ելնելով իրենց քոչվորական տնտեսության պահանջներից, անընդհատ շարժման մեջ էին գտնվում նոր արոտավայրեր ճարելու համար, որն իր հերթին շարժառիթներ էր ստեղծում միմյանց միանալու, միմյանցից արոտներ խլելու, հետևաբար՝ անընդհատ ընդհարվելու։ Ցեղերը իրար հրելով ու նեղելով ստիպված էին ընդարձակել իրենց տարածիք թափառումների ոլորտը, որով և դուրս էին գալիս իրենց հայրենիքի սահմաններից և սփռվում օտար երկրներում։

Թուրքական ցեղերը Փոքր Ասիա և Բալկանյան թերակղզու հյուսիս-արևելյան շրջաններն սկսեցին թափանցել սկսած IV դարից։ IV—V դարերի բյուզանդական ժամանակագիրները խոսում են հոների Թրակիայում ու Փոքր Ասիայում երևալու մասին[1], իսկ VI դ. կեսերից՝ ավարների ու խազարների մասին և այլն[2]։

Ինչպես հայտնի է, թուրք տարրը Արևմտյան Ասիայում հայտնվել է դեռևս VIII—IX դարերում, իսլամի հաղթարշավի ժամանակ, երբ թուրք ստրուկները՝ ղուլամները հավաքագրվում էին Արաբական խալիֆայի զինվորական հրամանատարների կողմից և որպես ղազիներ՝ մահմեդական հավատի կամավոր մարտիկներ, ծառայեցվում էին բյուզանդական սահմանում ստեղծված, այսպես կոչված՝ սուղուրներում տեղավորված արաբական կայազորների մեջ։

Հետագայում, երբ թուլացած Արաբական խալիֆայությունը զորթիք էր դարձել Միջին Ասիայից եկած թուրքական զինվորականության ձեռքին, ապա վերջիններին խալիֆայությունը Իկթայի (ավատի) իրավունքով շնորհեց որոշ հողակտորներ Տարսոնի, Ադանայի, Մարաշի, Մելիտինեի, Խլաթի, Մանազկերտի և Կարինի շրջաններում[3]։ Նրանք իրենց ընտանիքներով տեղափոխված վարձկան զինվորներ էին։ Հետևաբար այս վայրերում երբևիցե զանգվածային թուրքական տարր չի բնակեցվել։

Շուտով նրանք ձուլվեցին տեղական մահմեդական բնակչության հետ կամ զոհվեցին «անհավատների» (քրիստոնյաների) դեմ կատարվող արշավանքների ժամանակ։ Մյուս կողմից նրանց քանակն այնքան աննշան էր, որ նրանք չէին կարող նշանակալից որևէ փոփոխություն մտցնել Միջին և Մերձավոր Արևելքի էթնիկական, քաղաքական և տնտեսական դրության մեջ։

---

[1] Տե՛ս Gy. Moravcsik, Byzantino turcica, p. 36.

[2] Տե՛ս Նույն տեղում, էջ 44, 105։

[3] Leon Cahun, p. 152.

Թուրքերի նախապատմության հարցերով զբաղված ֆրանսիացի խոշոր արևելագետ Լեոն Կահունի մոտ ոչ մի խոսք չկա, թե մինչև սելջուկները Փոքր Ասիայում ինչ-որ թուրքացում է տեղի ունեցել[4]։ Խոսելով Բաղդադի խալիֆայության զինվորական կյանքում թուրք տարրի աճող դերի մասին, նա միայն նշում է, թե նման վիճակը հող էր նախապատրաստում սելջուկների արշավանքին։ Այդքան միայն և ոչ ավելին[5]։

Թուրքերը Կենտրոնական Ասիայից ու Հարավային Սիբիրից էին։ Այն ավանդությունը, թե թուրքերը նոյից են սերում, մի շինծու առասպել է,— ասում է Լ. Կահունը,— որ խմբագրվել է ոչ հեռու անցյալում։ «Այդ հորինված առասպելը նպատակ է ունեցել ցույց տալու թուրքերի աղգակցությունը Մերձավոր Արևելքի երկրների ժողովուրդների հետ»[6]։

---

[4] Ափսոսանքով պետք է նշել, որ սովետական խոշոր արևելագետ-թուրքագետ, ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին առանց խորամուխ լինելու փաստերի մեջ և մյուս կողմից չբերելով ոչ մի ապացույց շտապում է եզրակացնել, որ «Օղուզներից» (իմա՛ թուրքական ցեղերից—Ս. Բ.) դեռևս շատ առաջ (այսինքն՝ XI դարից առաջ, VIII—X դդ.) բյուզանդական սահմանային բանակների դեմ կռվող արաբական սահմանային (Ղազի կամ ուչ) բանակներում ծառայող թուրք ստրուկների և վարձկանների երևալու ժամանակաշրջանում սկսվեց Փոքր Ասիայի թուրքացման պրոցեսը։ Տե՛ս В. А. Гордлевский, Государство сельджуков, М.—Л., 1941. Մինչդեռ Վ. Ա. Գորդլևսկու վերոհիշյալ խիստ արժեքավոր երկից հետո արդի թուրք պատմաբանների լույս ընծայած մի շարք աշխատություններում (1940—1965 թթ.) Փոքր Ասիայի թուրքացման պրոցեսի սկիզբը դնում են սելջուկյան արշավանքներից հետո XI դ. վերջին։ (Տե՛ս Yinanc M. H., Türkiye tarihi, Selcuklular devri, Istanbul, 1944 (այսուհետև M. Yinanc). Kafesoglu I. Sultan Melikšah devrinde Büyuk Selçuklu Imperatorlugu, Istanbul, 1953, p. 89. O. Turan, Selcuklular Tarihi ve Türk-islam medeniyeti, Ankara, 1965, p. 71—73, 180—190, 214—217 (Այսուհետև O. Turan, Selçuklular Tarihi). Պետք է նշել, որ վերոհիշյալ թուրք պատմաբաններից Օ. Թուրանը թուրքացման պրոցեսի այդ դրությունը բացարձակորեն չի տարածում «Արևելյան Անգոլուխ», այսինքն՝ Հայաստանի նկատմամբ։ Վ. Ա. Գորդլևսկու վերոհիշյալ միտքը վերապահությամբ է նշում Դ. Ե. Երեմեևը։ Տե՛ս Д. Е. Еремеев, Этногенез турок. М., 1971, p. 63. Փոքր Ասիայի բնակչության կազմի թուրքական ցեղերի բնակեցմանը Փոքր Ասիայի տարածքում և թուրքացման պրոցեսի թուրք պատմաբանների տեսակետների քննադատության մասին տե՛ս նույնը, էջ 46—105։ Տե՛ս նաև Հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության հարցերը (այդ թվում Հայաստանի «թուրքացման» պրոցեսի) արդի թուրք պատմագրության մեջ «լուսաբանելու» մասին տե՛ս. Зулалян М. К., Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970, стр. 39—67.

[5] Léon Cahun, Introduction á l'histoire de l'Asie, p. 155.

[6] Նույն տեղում, էջ 83։

Հնագույն ժամանակներից թուրքերի նախնիները ապրել են Չինաստանից հյուսիս ընկած շրջաններում։ Չինացիները նրանց անվանել են «Հիոն-նու» («ըմբոստ ստրուկներ»)։ Որպես ռազմատենչ ցեղեր, նրանք հաճախակի են հարձակվել Չինաստանի վրա։ Չինաստանը ստիպված է եղել տարեկան որոշ տուրք վճարել հյուսիսի ռազմատենչ հարևաններին։ Սակայն II դարի 30-ական թվականներից, չինական դիվանագիտությանը կաշառքի միջոցով հաջողվել է ճեղք առաջացնել «Հիոն նու» ցեղային միավորման մեջ և հերթականությամբ ջարդել նրանց[7]։ Այսպես է, որ առաջացել են ույղուրները, որ նշանակելիս է եղել «հպատակ», ի հակադրություն մյուս ցեղերի, կիրգիզների, զազախների և այլոց, որոնք արևմուտք փախչելով «չհպատակված ավազակներ» անուն են ստացել։

V դ. սկզբից տեղի է ունենում Արևմուտք շպրտված թուրքական ցեղերի մի նոր միավորում, որը պատմության մեջ հայտնի է հոներ անունով։ Սակայն հոների միավորման մեջ մտնող ոչ բոլոր ցեղերն էին ծագումով թուրք։ Ինչպես ընդգծում է Լ. Կահունը, նրանց մեջ կային էթնիկական այլ տարրեր, ինչպիսիք են ուգրոֆիններ, մեչերները (մաջարհունդարացիները) և այլն[8]։

Համաձայն Լ. Կահունի, իսկական թուրքեր էին հեփթաղները, չինացիների անվանած Թի-լեն[9]։

VI դ. վերջում, թուրքական ցեղերը տարածվել են Հյուսիսային Ասիայում, չինական մեծ պարսպից մինչև Դանուբ (Եվրոպա)։ Իսկ հարավում հեփթաղներին երբեք էլ չհաջողվեց փշրել սասանյանների համառ դիմադրությունը, չնայած նրանց ունեցած ժամանակավոր հաջողություններին։ Միայն արաբական արշավանքները և մահմեդական արաբ քարոզիչների՝ շուրջ երկու հարյուր տարվա եռանդուն գործունեությունը թուրքերի առջև բաց արեցին նախ իրանալեզու բնակչություն ունեցող Մավերաննահրի և ապա մահմեդական մյուս երկրների դռները։ Խալիֆայության զինվորական ծառայության մեջ մտած միջին ասիացի թուրքերը նախընտրեցին իսլամի ուղղափառ ուսմունքը՝ սյուննիզմը, լոկ այն բանի համար, որ նա ուղղված էր շիա Իրանի դեմ[10]։

IX—X դարերում Մավերաննահրի իրանական նահանգները ներխուժած թրքախոս ցեղերը ընկան արաբական մշակույթի ազդեցության

---

7 *Léon Cahun*, Նշվ. աշխ., էջ 87։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, էջ 99։

10 Տե՛ս Նույն տեղում, էջ 166։

տակ և մահմեդականացան, իսկ միջին Ասիայից դեպի Արևելք ընկած շրջաններում թուրքերը շարունակեցին իրենց վրա կրել չինական մշակույթի ազդեցությունը և որոշ առումով խորթացան Միջին Ասիայի իրենց արյունակից ցեղերին։

Մինչ այդ նրանք, Լ. Կահունի խոսքերով ասած, «...չստեղծեցին ոչ փիլիսոփայական մի վարդապետություն և ոչ էլ թողեցին արվեստի ու գրականության որևէ աշքի ընկնող մի կոթող»[11]։ Այսօր էլ նրանց պատմությունը գրվում է չինական, պարսկական, հայկական ու բյուզանդական աղբյուրների հիման վրա։ «Նրանք պատերազմից էին ծնվել ու նվաճումների համար էին կազմակերպված միայն»,— ասում է Լ. Կահունը[12]։

Թուրք վաչկատուն ցեղերի տեղաշարժերից առավել նշանակալից դարձան X—XI դդ. սկսվող երկու խոշոր տեղափոխումները, որոնցից մեկի ժամանակ թուրքական մի ցեղ դուրս գալով Արևմտյան Թուրքեստանից՝ հիմնել էր Ղազնևյան սուլթանությունը Խորասանում։ Սակայն այս թուրքերը գրեթե իրանացված էին։ Ղազնևյան տիրակալներից ամենահայտնին Մահմուդն էր (998—1030), որը XI դ. սկզբում իր իշխանությանն էր ենթարկել Իրանի պարսկա-արաբական պետությունների մեծագույն մասը և Հնդկաստանի հյուսիսարևմտյան երկրները։

Միջնադարյան արևելյան, այդ թվում և հայկական աղբյուրները, թեև շատ աղքատ և կցկտուր տեղեկություններ են պահպանել սելջուկների ծագման մասին, սակայն նրանց մեծ մասը վկայում է, որ նրանք օղուզական քրնրք ցեղի առաջնորդներն են եղել[13]։

Սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ IX դ. երկրորդ կեսից սելջուկների հիշատակվող նախնիները՝ Քեբեկուշի խոջան և նրա որդի Թուքշիրմիշը, ծառայել են թուրք խաքանի՝ թագավորի պալատում, որպես սայլագործներ։ Նրանց հաջորդող Տուկակը՝ Սելջուկի հայրը, ծառայել է թուրք խաքանի կամ Բայղուի պալատում որպես միրիշկար՝ զինվորական խոշոր ջոկատի հրամանատար[14]։

---

11 Նույն տեղում, էջ 6։

12 Նույն տեղում։

13 *Sadruddin* Ebul-Hasan Ali ibn Nasir ibn Ali el-Hüseyni Ahbar üd-devlet is-selçukiyye, Ankara, 1943, p. 11, 12: (*Այսուհետև* Sadruddin el-Huseyni). *С. Г. Агаджанов*, Очерки истории огузов и туркмен средней Азии IX—XIII вв., Ашхабад, 1969, стр. 164—166.

14 *Cahen Cl.*, Le Malik-nameh et l'histoire des origines Seljucides, Oriens, vol. XVIII, 1948, p. 43.

Տուկակի մահից հետո մնում է նրա փոքրահասակ որդին՝ Սելջուկը։ Տիրակալը, որի մոտ ծառայում էր վերջինի հայրը, վերցնում է նրան պալատ դաստիարակելու համար։ Իր ճարպկության շնորհիվ Սելջուկը ստանում է սուբաշիի՝ զինվորական խոշոր հրամանատարի տիտղոսը։ Շուտով նա իր շուրջն է համախմբում և իրեն ենթարկում օղուզական ցեղախմբերին։

Սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ սելջուկյան ցեղերի հայրենիքը եղել է Սիր-Դարիայի միջին հոսանքը՝ Կարադաուի նախալեռնային շրջանում և Սրդնախի մարզում։ Սելջուկյան անասնապահ ցեղախմբերը աճում էին Սիր-Դարիայի ստորին հոսանքում ապրող օղուզների հաշվին։ Շուտով սրվում են հարաբերությունները սելջուկյան ցեղային առաջնորդների և Թուրքեստանի խաքանի միջև՝ նոր արոտավայրեր և հողեր ձեռք բերելու համար։ Հարստացող սելջուկյան ցեղախմբերի՝ օղուզների վերնախավը, ունենալով անասունների խոշոր հոտեր և արոտավայրերի պակաս զգալով, սուլ. պայքար սկսեց Թուրք խաքանի շուրջը համախմբված՝ երկիրը կառավարող հին օղուզների ազնվականության դեմ։ Մրցակցությունը, այս երկու խմբավորումների միջև, հատկապես ուժեղացավ, երբ Սելջուկին շնորհվեց սուբաշիի պաշտոնը։ Պալատական դավերի հետևանքով Սելջուկը հեղինակազրկվեց պալատում։ Վախեցած անխուսափելի հաշվեհարդարից, սելջուկյան առաջնորդները ստիպված թողնում են իրենց բնակավայրերը և X դ. վաթսունական թվականներին հաստատվում իրանալեզու բնակչություն ունեցող Սամարղանդի, Բուխարայի և Նուրայի շրջաններում[15]։ Այդ ժամանակ էլ սելջուկները ընդունում են մահմեդականությունը[16]։

Մահմեդականության ընդունումը թելադրված էր քաղաքական և տնտեսական պատճառներով։ Ճենտի գրավումից հետո սելջուկ առաջնորդներին պարզ դարձավ, որ իրենք փոքրամասնություն են կազմում շրջապատի մահմեդական (իրանական) ժողովուրդների մեջ։ Վերջիններիս հպատակեցնելու և նրանցից ռազմական օժանդակություն ստանալու համար նրանք պետք է ընդունեին իսլամը[17]։ Մյուս կողմից դա անհրաժեշտ էր տնտեսական արտոնություններ, հողային տիրույթներ և

[15] *Imad ad-din El-Bundâri*, Irak ve Horasan Selçuklular Tarihi, Istanbul, 1943: (*Թուրք. թարգմ.* K. Burslan-ի), p. 2, (*Այսուհետև* El-Bundari).

[16] *W. Barthold*, Turkestan, down to the Mongol invasion, London, 1928, p. 255.

[17] *С. Г. Агаджанов*, Очерки, стр. 177—178.

մարգագետիններ ձեռք բերելու համար[18]։ Հասկանալի է, որ մահմեդականությունը մի զենք էր իշխող վերնախավի ձեռքին, իրենց հպատակներին շահագործելու և ճնշելու համար։

Պայքարը Թուրքեստանի խաքանի դեմ վերջացավ Ճենտի գրավումով, որը բարձրացրեց սելջուկյան առաջնորդների հեղինակությունը հարևան մահմեդական տիրակալների աչքին[19]։

Սելջուկի որդիներ Արսլանը, Իսրայելը և մյուսները XI դ. առաջին քառորդում պայքարում են ընդդեմ Մավերաննահրի Կարախանյան Թուրքական պետության և պարտություն մատնելով վերջինիս, հաստատվում են Մավերաննահրում[20]։

Թեև 1025 թ. Սելջուկ որդիներից Արսլանը, որը գլխավորում էր Բուխարայի սելջուկյան խմբավորումը, պարտվում է Ղազնևյան Մահմուդի զորքերից, սակայն Սելջուկի որդի Միքայելի որդիներ՝ Տուղրիլ և Չակիր բեգերը, շարունակելով պայքարը Ղազնևյանների դեմ, 1040 թ. մայիսի 23-ին, Դանդանականի[21] ճակատամարտում պարտության մատնեցին Ղազնևյան Մասուդի զորքերը, գրավեցին Խորասանը և ստիպեցին Ղազնևյաններին ամփոփվել իրենց մեծ պետության հնդկական մասում[22]։

* * *

1040 թ. մայիսի 23-ին Դանդանականի ճակատամարտում տարած հաղթանակի օրը, ռազմի դաշտում Տուղրիլ և Չակիր բեգերը հանդիսավոր կերպով հռչակեցին սելջուկյան պետության հիմնադրումը, այնուհետև Միջին Ասիայի, Մերձավոր և Միջին Արևելքի, Փոքր Ասիայի, այդ թվում և Հայաստանի XI—XIII դդ. պատմությունը սերտորեն կապվում է սելջուկյան աշխարհակալության պատմության հետ։ Այդ աշխարհակալության պատմությունը սովորաբար ընդունված է բաժանել չորս ժամանակաշրջանների։

1. Սելջուկյան պետության ստեղծման ժամանակաշրջանը (935—1040 թ.)։

[18] История стран зарубежной Азии в средние века, М., 1970, стр. 336.

[19] *С. Г. Агаджанов*. Очерки, стр. 177—178.

[20] *O. Turan*, Selçuklular tarihi ve Türk-islâm medeniyeti. p. 41—44. *С. Г Агаджанов*, Очерки, p. 179—180.

[21] Քաղաք միջնադարյան Խորասանում, որի ավերակները գտնվում են այժմյան Տաջիկական ՍՍՀ-ի տարածքում։

[22] *Б. Н. Заходер Данданакан*, Исторический журнал, 1943, № 3—4.

2. Առաջին սուլթանության[23] ժամանակաշրջանը (1040—1092 թթ.)։ Այս ժամանակաշրջանում հիմնականում ավարտվում է Մերձավոր և Միջին Արևելքի՝ Իրանի, Իրաքի, Ասորիքի, Ատրպատականի, Հայաստանի, Փոքր Ասիայի, Կենտրոնական և Հարավային շրջանների նվաճումը։

3. Սելջուկ աշխարհակալության թուլացման և լճացման ժամանակաշրջանը (1092—1118 թթ.)։ Վերջինս բնորոշվում է կենտրոնական իշխանությանը տիրանալու համար մղվող գահակալական կռիվներով ու ֆեոդալական երկպառակություններով, աշխարհակալության՝ այդ թվում և Հայաստանի տարածքի վրա ամիրայությունների առաջացմամբ։

4. Աշխարհակալության տրոհման և անկման ժամանակաշրջանը (որոշ հեղինակներ այդ շրջանը կոչում են 2-րդ կայսրության ժամանակաշրջան[24] 1118—1194 թթ.)։

Սելջուկյան մեծ սուլթանությունը տրոհվում է երկու ինքնուրույն սուլթանությունների՝ Խորասանի մեծ սուլթանության (1118—1157) և պարսկական Իրաքի սուլթանության՝ (1118—1197 թթ.)։ Վերջինս ձևականորեն վասալական կախման մեջ էր Խորասանի սուլթանությունից։ Այդ շրջանում հզորանում և ինքնուրույն է դառնում Փոքր Ասիայի սելջուկյան պետությունը (1084—1307)։ Միաժամանակ հզորանում և փաստորեն ինքնուրույնություն են ձեռք բերում նախկինում մեծ սուլթանության վասալ մելիքությունները ու ամիրայությունները։ Այս շրջանին բնորոշ են նաև Վրաստանի հզորացումը և վերջինիս օգնությամբ Հայաստանի ազատագրումը սելջուկյան տիրապետությունից, իսկ Մերձավոր Արևելքում հանդես են գալիս խաչակիրները։

Քանի որ մեր նպատակն է մասնավորապես շարադրել Հայաստանի XI—XII դդ. պատմությունը, ուստի սելջուկյան կայսրության պատմության վերոհիշյալ ժամանակաշրջանները կբնութագրվեն այնքանով, որքանով որ նրանք կառնչվեն մեր բուն նյութի հետ։

Ինչպես հայտնի է, Հայաստանի XI—XII դդ. քաղաքական և տնտեսական պատմությունը մտնում է Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի շրջանի պատմության մեջ։ Արդեն ասվեց, որ այն ընդգրկում է զարգացած ավատատիրության երրորդ և չորրորդ փուլերը՝ երրորդ փուլը (1050—1150 թթ.) հայկական ֆեոդալիզմի ճգնաժամը (սելջուկ-թուրքերի տիրապետությունը[25] և չորրորդ փուլը՝ (1150—1235 թթ.) հայկական ֆեոդալիզմի վերածնունդը և հետագա զարգացումը[26]։

* * *

1040 թ. պետության հռչակումից հետո սելջուկյան առաջնորդները, վարելով նվաճողական քաղաքականություն, սկսեցին արշավանքներ կազմակերպել Իրան, Իրաք, Անդրկովկաս և Փոքր Ասիա, այդ թվում և Հայաստան։ Սակայն մինչ սելջուկյան արշավանքներն ու նվաճումները Անդրկովկասում՝ սելջուկյան պետության ստեղծման ժամանակաշրջանի վերոհիշյալ դեպքերին զուգահեռ տեղի էր ունենում թուրքական ցեղերի՝ Հայաստանի հարևան մահմեդական պետությունների բանակներում ծառայող վարձկան զորքերի ասպատակություններն ու ավարառական ներխուժումները Հայաստանի հարավարևելյան և հարավային շրջաններում։

Սելջուկյան թուրքերի արշավանքները XI դարում՝ իրենց ղեկավարման բնույթով, դրդապատճառներով ու հետապնդած նպատակներով բաժանվում են 4 խմբի.

ա) Արշավանքներ, որոնք ղեկավարվում ու կատարվում էին սուլթանի կողմից։

բ) Սուլթանի գլխավոր հրամանատարների առաջնորդությամբ կատարված արշավանքները երբեմն նույնիսկ, հակառակ՝ կենտրոնական իշխանության վարած քաղաքականությանը։

գ) Արշավանքներ՝ կատարված սուլթանի ընտանիքի անդամների առաջնորդությամբ, մի կողմից իրագործելով կենտրոնական իշխանության քաղաքական և տնտեսական նպատակները, մյուս կողմից գոհա-

---

23 Սելջուկյան պետությունը արաբական խալիֆայության կողմից պաշտոնապես սուլթանություն հռչակվեց 1058 թ., Տուղրիլ բեգի կողմից 1055 թ., խալիֆայության մայրաքաղաք՝ Բաղդադը գրավելուց հետո։

24 M. A. Köymen, Büyuk Selçuklu imperatorlugu tarihi, II, Ankara, 1954, p. 1—5.

25 Լ. Բարայանը երրորդ փուլը (էտապը) առաջարկում է կոչել ոչ թե ճգնաժամ, այլ «ճիշտ կլիներ ասել ֆեոդալական հարաբերությունների զարգացման պրոցեսի ժամանակավոր ընդհատում»։ Տե՛ս Լ. Բարայան, Հայաստանի սոցիալ տնտեսական և քաղաքական պատմությունը 13—14-րդ դարերում, էջ 86։

26 Еремян С. Т., Опыт периодизации истории Армении эпохи феодализма («Вопросы истории», 1951, № 7), Տե՛ս նաև Ս. Հակոբյան. Հայ ժողովրդի ֆեոդալական շրջանի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 8)։

ցում տալով Թուրքմեն[27] անասնապահների անասնակերի պահանջին, որոնելով նոր արոտավայրեր, միաժամանակ հագուրդ տալով Թուրքմեն հրոսակախմբերի ավարառական ախորժակին։

դ) Թուրքմեն ցեղապետների նախաձեռնությամբ կատարված արշավանքները հակառակ կենտրոնական իշխանության ցուցմունքների և նույնիսկ ապստամբելով նրա դեմ։

Անդրկովկասի և Փոքր Ասիայի մեծագույն մասի, այդ թվում համարյա ամբողջ Հայաստանի նվաճումը սելջուկների կողմից տևեց ավելի քան 75 տարի։ Այս տարիներին Թուրքերի և հատկապես սելջուկյան Թուրքերի կողմից կատարված արշավանքները իրենց բնույթով կարելի է բաժանել երկու խոշոր փուլի։

Առաջին փուլին (1016—1063) բնորոշ է ավարառությունն ու կողոպուտը, գերեվարությունն ու երկրի բարգավաճ քաղաքների ամայացումը։

Երկրորդ փուլում (1064—1092) թեև պահպանվում է Թուրք ցեղին բնորոշ ավարառությունը, սակայն, այս ժամանակաշրջանին հատկանշական է՝ արշավանքի ենթարկվող երկրների վերջնական նվաճումն ու բնակեցումը Թուրքմեն ցեղերի կողմից։

Նկատի ունենալով վերոհիշյալ չորս առանձնահատկությունները, առաջին փուլում տեղի ունեցող արշավանքները իրենց հերթին կարելի է բաժանել չորս շրջանի։

1. Արշավանքներ, որոնք կատարվել են XI դ. առաջին քառորդում՝ 1016 և 1021 թվականներին, ոչ սելջուկյան Թուրք հրոսակների կողմից։

2. Այն արշավանքները, որոնք կատարվել են սելջուկ իշխանության դեմ ապստամբած օղուզների Թուրքմենների կողմից 1028—1045 թթ.։

3. Արշավանքներ, որոնք կատարվել են սելջուկյան սուլթանի ընտանիքի անդամների և նրա հրամանատարների կողմից 1047—1058 թթ.։

4. Սուլթանի կողմից կատարված արշավանքներ 1054—1063 թթ.։

Առաջին փուլում կատարված ասպատակություններն ու ավարառական արշավանքները թուլացնում և հյուծում էին արշավանքի ենթարկված շրջանների տնտեսությունն ու ռազմական ուժերը և դրանով նախադրյալներ ստեղծում այդ երկրների վերջնական նվաճմանը։ Հետևաբար, երկրորդ փուլում, արշավանքները պահպանելով հանդերձ իրենց ավարառական բնույթը, հիմնականում վերջանում էին տվյալ երկրի ու տարածքի նվաճմամբ, և մեծավ մասամբ կատարվում էին սելջուկյան պետական կանոնավոր բանակների միջոցով սուլթանի և կամ նրա տեղակալների՝ առաջնորդությամբ։

Հատկանշական է այն, որ քոչվոր Թուրքմեները հաճախ ավելի շուտ էր դառնում իր ասպատակած տարածքի տերը, քան նվաճման գաղափարի ծագումն ու նախագծումն իր ուղեղում։ Սակայն պետք է նշել նաև, որ նույն քոչվոր Թուրքմեն ցեղախմբերի առաջնորդները, հիմնելով պետություններ իրենց գրաված երկրներում, սկսում են իրագործել հետևողական նվաճողական քաղաքականություն իրենց շրջապատող տարածքի նկատմամբ։

Պատմական գրականության մեջ գոյություն ունի այն կարծիքը, որ XI դ. սելջուկյան Թուրքմեն ցեղերի գաղթն ու բնակեցումը նոր վայրերում, հետևանք է նրանց կառավարող վերնախավի, անհանգիստ և խռովարար ցեղակիցներից ազատվելու և նրանց հաշվեհարդարի ենթարկելու քաղաքականությանը։ Սակայն, չպետք է աչքաթող անել այն, որ նոր երկրների նվաճումով շահագրգռված էր նաև սելջուկյան կառավարող վերնախավը։ Հեռավոր արշավանքները նրան հրապուրում էին ոչ միայն հարուստ ավար ու գերիներ ձեռք բերելու հեռանկարով, այլև հնարավորություն էին ստեղծում շահագործելու նվաճված երկրի բնակչությունը և բնական հարստությունները։ Անշուշտ, բնական էր և աներկբայելի, որ արշավանքների ընթացքում օղուզների՝ քոչվոր Թուրքմենների, ունեվոր խավը որոնում էր հարուստ արոտավայրեր՝ իր ցեղակիցների բազմաքանակ անասնահոտերի համար[28]։ «Ունենալով հարուստ անասնահոտեր, գրում է բյուզանդական պատմիչ Նիկիտա Խոնիատը, (սելջուկները) կարիք ունենալով մարգագետինների և արոտավայրերի (այդ պատճառով) լքում են իրենց բնակավայրերը և ամբողջ ընտանիքներով գալիս են Հոռոմների (Բյուզանդիայի) սահմանները»[29]։

---

27 Մահմեդականությունն ընդունած Թուրքական ցեղերն ու օղուզները Թուրքմեն անունը սկսեցին կրել և այս անունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրները նվաճող և գաղթող օղուզներին էր տրվում։ Տե՛ս I. Kafesoglu, A. propos du nom Türkmen, Oriens, vol. XI, 1958. Նույնը, Türkmen adi manasi ve mehiyeti. Jean Deny armagani, Ankara, 1959.

28 Տե՛ս El.-Bundâri, p. 2.

29 Никита Хониат, История, начинающаяся с царствования Иоанна Комнина. Пер. под. ред. В. И. Долоцкого, СПб., 1860, стр. 158.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԹՈՒՐՔԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՎԵՐՈՒՄԸ (1016—1063 ԹԹ.)

ա. Նախասելջուկյան թուրք հրոսակների ասպատակությունները Հայաստանի՝ Իրանին սահմանամերձ նահանգներում (1016—1021 թթ.): Սելջուկների ենթակա թուրքմենների և օղուզների ասպատակությունները Իրանում, Միջագետքում և Հայաստանի հարավարևմտյան շրջաններում (1028—1045 թթ.):

Ինչպես ասվեց վերևում, ավարառական արշավանքների առաջին շրջանում (1016—1021 թթ.) այդ ասպատակությունները կատարվում էին Հայաստանի հարևան մահմեդական երկրների բանակներում, որպես վարձկան զորքեր ծառայող թուրքերի կողմից։ Հարևան Իրանում և Ատրպատականում, X դ. վերջում և XI դ. սկզբին արաբական խալիֆայության թուլացման շրջանում կազմվել էին իրանական անկախ պետություններ (սամանիներ, բուիներ և այլն), որոնք թեև մշակութապես առաջադիմում և բարգավաճում էին, սակայն քաղաքականապես թույլ էին, որովհետև ուժասպառ էին լինում անվերջ կռիվների և ներքին երկպառակությունների պատճառով։ Այս կռիվների ընթացքում թուրքերը որպես վարձկան զորքեր մեծ դեր էին խաղում և որոշ ազդեցություն էին ձեռք բերել այդ երկրների բանակներում։

Ինչպես հայտնի է, բարենպաստ էր նաև Հայաստանի քաղաքական թույլ վիճակը թուրք ասպատակողների համար XI դ. առաջին կեսին։ Դարասկզբում Բյուզանդիան, իրագործելով իր զարավոր նվաճողական քաղաքականության մի մասը Հայաստանի նկատմամբ, գրավելով իրեն էր միացրել Բարձր Հայքի մեծ մասը, Տարոնի Արևմտյան և Հյուսիսային շրջանները, Տայքն ու Մանազկերտը՝ Տուրուբերանում։ Դեռևս շարունակում էին իրենց գոյությունը պահպանել Անիի Բագրատունիների կենտրոնական թագավորությունը, ինչպես նաև Վասպուրականի, Վանանդի, Կարսի, Տաշիր-Զորագետի ու Սյունիքի հայկական թագավորությունները և Արցախի իշխանությունը։ Սակայն, ինչպես կտեսնենք, օղուզ-թուրքմենական և սելջուկ-թուրքական արշավանքների առաջին փուլում, թուրքական վտանգի աճի և Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության իրագործման պայմաններում վերացվեցին և Բյուզանդիային միացվեցին Վասպուրականի Արծրունի տիրույթները (1021) և Բագրատունիների (1045 թ.) կենտրոնական թագավորությունը։ Համաձայն հայ և բյուզանդական պատմիչների[1], Իրանի և Ատրպատականի ամիրայությունների բանակներում ծառայող թուրք հրոսակները, դեռևս 1016 թ. ներխուժել էին Վասպուրականի Արծրունյաց թագավորության տարածքը։ Որ արշավողները եղել են Միջին Ասիայի տափաստանների հարազատ զավակները, այդ երևում է այն խորը տպավորությունից, որ թողել էին նրանք հայերի վրա իրենց արտաքին տեսքով և պատերազմելու արտասովոր եղանակով։ «Իսկ մինչև յայնմ ժամանակին չէին բնաւ տեսեալ թուրք զօրք հեծելոց, և ի հանդիպելն նոցա՝ տեսին այլակերպ զնոսա աղեղնաւորս և հիրարձակս իբրև զկանայս, և յայնժամ զօրքն հայոց չէին սովոր պատրաստ լինիլ ընդդէմ նետիցն»[2]։ «և նոքա (իմա՛ թուրքերը),— գրում է Արծրունի պատմիչը,— ունելով զընութիւն արիւնարբու գազանի, զի են ազգք ահաւոր տեսլեամբ, զի տեսիլ դիմաց նոցա զարհուրեցուցանէ զտեսողսն և ահարեկ առնէ. և բնակութիւն նոցա ի լերինս և ի դաշտս և յանապատս, որպէս զվայրենի գազանաց, և են շաղղակերք որպէս զգազանս, ոչ պատուեն զմեծամեծս, ոչ խնայեն յալիս և ի հարկիսս ծերոցն, ոչ ողորմին երիտասարդին և տղայոյն, ոչ խնայեն ի մանկութիւն ումեք»[3]։

Բարեբախտաբար, անպաշտպան չէր Վասպուրականն այս սարսափելի օրերին։ Ընդ որում, Վասպուրականի հայոց զորքը շարժվեց նրանց դեմ Սենեքերիմ արքայի որդու՝ Դավթի առաջնորդությամբ։ Թեև վերջինս մեծ կորուստ տալով նահանջեց, սակայն ստիպեց թուրքերին բավարարվել ավարով և վերադառնալ Իրան։ Հայ և օտար սկզբնաղբյուր-

---

1 Թովմա Արծրունի. *Պատմութիւն տանն Արծրունեաց. Թիֆլիս, 1917, էջ 496—497։* Մատթեոս Ուռհայեցի. *Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 46—48։* Սմբատ Սպարապետի *Տարեգիրք, ի Վենետիկ, 1956, էջ 23—24,* Սկիլիցես, *տե՛ս* C. T. Агаджанов и К. Н. Юзбашян. К истории тюркских набегов на Армению в XI в., П. С вып. 13(76) 1965. стр. 148, *(Այսուհետև* С. Агаджанов и К. Юзбашян, К истории).

2 Մ. Ուռհայեցի. *էջ 47, տե՛ս նաև El. Bundari-ի նշվ. աշխ., էջ 2—3։*

3 Թովմա Արծրունի. *էջ 497։*

ների համաձայն, Սենեքերիմ թագավորը ահարեկված թուրք հրոսակներից և հույս չունենալով իր նվազ ուժերով պաշտպանել Վասպուրականի սահմանները, շուտով բանակցությունների մեջ է մտնում բյուզանդական կայսր Վասիլ Բ-ի հետ, որը հետևողականորեն իրագործելով բյուզանդական նվաճողական քաղաքականությունը համաձայնվում է՝ 1021 թ. Վասպուրականը միացնել Բյուզանդիային և փոխարենը Սենեքերիմին տալ Սեբաստիան և Լարիսան[4]։

Նույն 1021 թ. Նախճավանի և Դվինի վրայով մինչև Նիգ գավառը ընկած հայկական տարածքը, հարձակման ենթարկվեց օղուզների հրոսակների կողմից, որոնք ծառայում էին Դայլամցիների (Դելմիկների) բանակում[5]։

Վարդան վարդապետը, որն այս արշավանքը սխալմամբ վերագրում է սելջուկ Տուղրիլ բեգին[6], վկայում է, որ առաջին դիմադրությունը ցուցաբերեց Նախճավանում Լիպարիտը իր 5000 հեծելազորով, որը, սակայն, փախավ, որովհետև թշնամու բազմությունն ահագին էր։ Հարձակվող զորքը այս դիմադրությունը հաղթահարելուց հետո եկավ Դվին, գրավեց քաղաքը և այստեղից շարժվեց դեպի հյուսիս։ Դվինից եկող ասպատակներին ուժեղ դիմադրություն ցույց տվեց Բջնիում նստող Վասակ Պահլավունին, որը թեև պատահաբար սպանվեց Սերկևիլում, (որովհետև երբ նա այստեղ քնել էր, մի մարդ անգիտությամբ քարով խփել

4 Ա. Լաստիվերտցի, Պատմութիւն, Երևան, 1963, էջ 34։ Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 23։ «Սմբատ Սպարապետի Տարեգիրք» էջ 24։ Տե՛ս նաև Մ. Չամչյան, հ. Բ, էջ 902։ «Յիշատակարանք հայերէն ձեռագրաց», Գ. Հովսեփյան, Անթիլաս, 1951, էջ 205—206, 213—214։ Վ. Մ. Վարդանյանը իր «Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը» աշխատության մեջ ոչ քննադատաբար վերաբերվելով Մատթեոս Ուռհայեցու, Վարդան Մեծի և Սամուել Անեցու կողմից 1002, 1016, 1018, 1021 թթ. Հայաստանի հարևան մահմեդական երկրների կողմից Վասպուրականի և մյուս սահմանամերձ նահանգների վրա կատարված արշավանքների մասին հաղորդված խառնաշփոթ տեղեկություններին այդ արշավանքները վերագրում է սելջուկ թուրքերին։ Տե՛ս Վ. Մ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը (908—1021 թթ.), Երևան, 1969, էջ 201—208։

5 Տե՛ս С. Агаджанов и К. Юзбашян, К истории... стр. 150—155.

6 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Գ, էջ 38, Մ. Չամչյան, հ. Բ, էջ 901։ Անհիմն պետք է համարել վերջին տարիներում որոշ սելջուկագետ թուրք պատմաբանների կողմից տարածված այն միտքը, որոնք հիմնվելով միջնադարյան ուշ շրջանի ոչ հավաստի մահմեդական աղբյուրների և Ուռհայեցու և Վարդան վարդապետի՝ խառնաշփոթ տեղեկությունների վրա, միաբերան պնդում են, իբրև 1021 թ. Տուղրիլ բեգի եղբայր Չակիր բեգը 3000 հեծելազորով հետախուզական նպատակներով Խորաբեգի գլխին)[7], այնուամենայնիվ նրա զորքը կարողացավ ետ շպրտել հրոսակներին։ Մ. Ուռհայեցին, որը մանրամասն և վիպական ձևով է նկարագրում Բջնիի ճակատամարտը, վկայում է, որ կորուստները խիստ շատ էին[8]։

* * *

Երբ Սելջուկի որդի Արսլանի (Իսրայելի) գլխավորած Բուխարայի սելջուկյան թուրքմենական խմբավորման ապստամբությունը Ղազնեյան պետության դեմ 1025 թ. վերջացավ անհաջողությամբ, Սելջուկի թոռներ՝ Չակիր և Տուղրիլ բեգերը փորձեցին իրենց ենթարկել այդ խմբավորման մնացորդներին, սակայն վերջիններս վախեցած բեգերի դաժանությունից, հարկադրվեցին ընդունել Ղազնեյան Մահմուդ սուլթանի հպատակությունը, որը 4000 թուրքմեն ընտանիքներ, Մավերաննահրից գաղթեցրեց Խորասան, տալով նրանց արոտավայրեր։ Սակայն թուրքմենները, ժժգոհ սուլթանի հարկային քաղաքականությունից, 1027 թ. ապստամբեցին նրա դեմ։ Իսկ 1028 թ. նրանց միացան Թուրքեստանից նոր բռնած ցեղակիցները։ Օղուզ և թուրքմենական միացյալ ուժերը պարտության մատնվելով Մահմուդի զորքերի կողմից հարկադրվեցան ճողոպրել Իրան և Ատրպատական։ Այս վայրերում անցկացնելով իսկական թափառական վաշկատուն կյանք, սկսած 1029 թվականից նրանք պարբերաբար ասպատակություններ կատարեցին դեպի Հարավային և Հարավարևելյան Հայաստան և Միջագետք։

Վերջիններս, թեև որոշ ժամանակ մնացին Ատրպատականի Վահսուդան իբն Մամլան ամիրայի հրամանատարության ներքո, սակայն, շուտով նրանք դավաճանեցին, ուստի ի դերև ելան Վահսուդանի հույսերը, նրանց օգտագործելու Բյուզանդիայի դեմ։ Այնուհետև թուրքմենները, որոնց թիվը հասնում էր 30000—40000-ի, լքելով Ատրպատականը, բաժանվեցին երկու մասի։ Մի խմբավորումը ասպատակեց Համադանը, մյուսը՝ Ռեյը։ Տարածելով իրենց ասպատակությունները, Ուրմիայում թափառող թուրքմենները, 1029 թ. ներխուժեցին «Հայոց երկիր»։

սանի, Ռեյի և Ատրպատականի վրայով արշավել է Հայաստանի հարավային մասը՝ Վասպուրական։ Տե՛ս M. H. Yinanc, p. 35—36. Togan Z. Velidi, Umumi türk tarihine giriş, Istanbul, 1946. Kafesoglu, Meliksah devrinde Büyük Selcuklu imperatorlugu, Istanbul, 1953, p. 2—3. O. Turan, Selçuklular tarihi ve türk-islam medeniyeti, Ankara, 1965, p. 48—74. Տե՛ս նաև С. Агаджанов и Юзбашян, К истории..., стр. 144—148.

7 Վարդան Վարդապետ, էջ 98։ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, 1956, էջ 23—24։

8 Մ. Ուռհայեցի, էջ 14։ Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 208։

կիրը» Հարավային Հայաստանում և շատ մարդ սպանեցին, մեծ ավար և բազմաթիվ գերիներ վերցրեցին և ապա նորից վերադարձան Ուրմիա և Համադան[9]։

Թեև 1029—1030 թթ. թուրքմենական մի խմբավորում Թավրիզի մոտ պարտություն էր կրել Վահսուդան իբն Մամլանից[10], սակայն վերջինիս հաջողվել էր օգտագործել օղուզների աշխարհազորը իր տիրույթները ընդարձակելու համար։ Այսպես Վահսուդանի հրամանատարներից Աբդ ուլ-Յուսուֆի առաջնորդությամբ օղուզները ներխուժեցին Առան՝ Գանձակի Շաղդադյանների երկիրը և մեծ ավերածություններ կատարեցին[11]։ Այնուհետև, 1033—1034 թթ. Ատրպատականի Վահսուդան իբն Մամլանի քրոջ որդին Ուրմիայի տիրակալ Աբու-լ-Հայջա իբն Ռաքիբ ալ-Դաուլան, որը, միաժամանակ իշխում էր Բերկրիում[12], թուրքմենական մի հեծելաջոկատ օգտագործեց բյուզանդական զորքերի դեմ, որոնք հայ իշխան Գանձիի հրամանատարությամբ պաշարել էին Բերկրին։ Թեև մահմեդական դաշնակից զորքերը անհաջողության մատնվեցին, սակայն թուրքմեն զորքերը վերադարձի ճանապարհին կողոպտելով անպաշտպան հայկական բնակավայրերը, վերադարձան Ուրմիա[13]։

1037 թ., երբ սելջուկյան թուրքմենների մի մասը զբաղված էր Ատրպատականի Մարաղա քաղաքի կողոպուտով, մի այլ հրոսակախումբ նորից է մտնում Հայաստան, կոտորում շատերին և մեծ ավարով վերադառնում Ուրմիա[14]։

Պետք է նշել, որ դեռևս 1031 թ. օղուզների մի այլ խմբավորում Բուգա, Գյոկ-տաշ, Յաղմուր և Կրզլ ցեղային առաջնորդների գլխավորությամբ ասպատակում են Ղազնևյան Մասուդ (1030—1042) սուլթանի երկիրը[15], նոր արոտավայրեր ձեռք բերելու նպատակով քոչում են Իրան և 1036 թ. միանալով պարսկական Իրաքում և Ատրպատականում թափառող թուրքմենների հետ, հատկապես Ատրպատականում հիմնում են յայլակներ և կշլակներ։

---

9 *Ибн ал-Асир*, Тарих ал-Камиль, Баку, 1940, стр. 111—112.

10 *Նույն տեղում, էջ 112։*

11 *Տե՛ս С. Агаджанов и К. Юзбашян*, К истории..., стр. 156.

12 Ա. Տեր-Վանդյան, *Արաբական ամիրայությունները, էջ 201։* Մ. Ուռհայեցի, *էջ 74—75։* Ս. Սպարապետ, *էջ 3։ Բերկրիի դեպքերի մասին տե՛ս նաև* Ա. Լաստիվերտցի, *գլ. 9-րդ*, Մ. Չամչյան, *հ. Բ, էջ 917։*

13 *Տե՛ս С. Агаджанов и К. Юзбашян*, К истории.., стр. 156.

14 *Տե՛ս նույն տեղում։*

15 *С. Агаджанов*, Очерки..., стр. 195, „The *Tarikh-i Bayhaki*", Calcutta, 1861—1862, p. 71, 72, 75, 322—332.

Սելջուկների կողոպտչական ռազմական գործողությունները Ատրպատականում և Առանում ստիպեց տեղական տիրակալներին ռազմական դաշինք ստեղծել նրանց դեմ։ Վահսուդան իբն Մամլանը դաշինք կնքելով բուրդ Հեղբանիների հետ 1038 թ. ձմռանը մի քանի մարտեր մղելուց հետո սելջուկների դեմ, ստիպեց վերջիններին հեռանալ Ատրպատականից և քոչել Ռեյի և Սպահանի կողմերը։ Սակայն շատ ավելի երկար մնացին Ուրմիա լճի շուրջը թափառող թուրքմենները, որոնք Դանա թուրքմեն առաջնորդի գլխավորությամբ շարունակում էին իրենց պարբերական ներխուժումները հայկական հողերը։

Սելջուկյան թուրքմենների դաժանությունը հայերի նկատմամբ մեծ արձագանք է գտնում քրդերի, վրացիների և աբխազների մոտ։ Վիրաբխազական տիրակալը լսելով օղուզների վայրագությունը հայերի նկատմամբ, դադարեցրեց Տփղիսի պաշարումը և գնալով իր երկիրը, միջոցներ ձեռնարկեց ապահովելու իր երկրի պաշտպանությունը օղուզների հնարավոր հարձակումից[16]։

1042 թ. թուրքմենները, մոտ 15000 հոգի, Ուրմիայից մտան Վասպուրական և սկսեցին իրենց հերթական կողոպուտը։ Արյունարբու թշնամու դեմ դուրս եկավ Թոռնավանի խաչիկ խուլ մականվանված Արծրունի իշխանը, որը չնայած իր ծերության, անհավասար մարտի բռնվեց ոսոխի դեմ։ Սակայն թշնամու թվական առավելության պատճառով հայերը պարտվեցին, և թուրքմենները մեծ ավարով վերադարձան Ուրմիա[17]։

Թուրքմենները թափառելով պարսկական Իրաքում 1042—1043 թթ. մտան Դիարբեքիրի, Ջազիրայի և Մուսուլի շրջանները։ 1043 թ. Մուսուլ ներխուժող թուրքմենները, որոնք այստեղ պարտության մատնվելուց հետո մնացել էին 5000 հոգի, Իրաքից դեպի Ուրմիա նահանջի ճանապարհին հետապնդվելով արաբներից մտնում են Դիարբեքիր և այդտեղից հարձակվում հայերի և հույների վրա[18]։ Նրանց միացան նաև Դիարբեքիրի շրջանը ասպատակող թուրքմենները։ Հետաքրքիր է նշել, որ այդ ավարառությունների դեմ Դիարբեքիրի Մրվանյան ամիրա Նասր ալ-Դաուլայի Տուղրիլ բեգին հասցեագրված բողոքին, վերջինս պատասխանում է. «Հպատակներիս քո երկիրը գալը իմացա. դու մի սահմանային զոտու ամիրա ես, դրանց պետք է ապրանք տաս և նրանց

---

16 *Ибн ал-Асир*, стр. 115.

17 Մ. Ուռհայեցի, *էջ 90—92։*

18 *Ибн ал-Асир*, стр. 115, Bundari, p. 4.

օգտագործես անհավատների դեմ, որովհետև նրանց հիմնական նպատակը՝ «հայկական երկրները գրավելն է»[19]։

Ըստ իրենց սովորության, Ատրպատական և Ուրմիա վերադարձող վերևում հիշատակված թուրքմենները ասպատակեցին Վանա լճի հյուսիսում գտնվող հայկական քաղաքներն ու գյուղերը։ Արճեշի առջև նրանք պարտության մատնեցին բյուզանդական կատապան Ստեփանոս Լիխուդեսին և գերի վերցրին նրան[20]։

1042—1043 թթ. Իրաքից վերադարձող օղուզների մյուս մասը, հավանական է Դվինի Շադդադյան Աբու-լ-Ասվարի գրդմամբ, ասպատակում է Արարատյան նահանգի Բշնիի գավառը։ Հրազդան գետի ափին Բշնիի մոտ նրանց դեմ դուրս են գալիս Հայոց Գագիկ Բ Բագրատունի թագավորը և Վասակ Պահլավունու որդի Գրիգոր Պահլավունին (Մագիստրոսը), որոնք պարտության մատնելով թշնամու զորքերին, ստիպում են նրանց վերադառնալ Ատրպատական[21]։

Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը շարադրելով 1043—1044 թվականների դեպքերը, ասում է, որ օղուզ-թուրքմենները հաճախակի ճանապարհվում էին հայերի երկիրը, կողոպտում այն և վերցնում գերիներ այնքան շատ, որ «մի գեղեցիկ հայուհի (ստրկուհի) արժեր հազիվ 5 դինար, իսկ տղամարդկանց և տղաներին ոչ ոք չէր ցանկանում վերցնել, նույնիսկ ձրի»[22]։

---

19 *O. Turan*, Selçuklular Tarihi, p. 68.

20 Դ. Շլումբերժեն, Ռ. Դրուսեն, հենվելով գլխավորապես բյուզանդական աղբյուրների վրա, Վասպուրական արշավող թուրքմենների առաջնորդը համարում են Գթլմուշին՝ Տուղրիլ բեգի հորեղբորորդուն և այդ դեպքերը դնում են 1045—1046 և 1047 թվականների ներքո։ *G. Schlumberger*, l'Epopée byzantine, à la fin du xe siècle...., Paris, 1896—1905, v. 3, p. 545. *R. Grousset*, Histoire de l'Arménie des origines à 1701, Paris, 1947, pp. 585—590. Մինչդեռ Մ. Ուռհայեցին (էջ 98—99) այս արշավանքը վերագրում է Տուղրիլ սուլթանի արքունիքից եկող թուրքմեն երեք առաջնորդներին՝ Պողիին, Պուկիին ու Անաղուլլինին և այս դեպքերը դնում է 1044—1045 թթ.-ի ներքո։ Վերջինս մեզ ավելի հավանական է թվում ոչ միայն այն պատճառով, որ նույնը հաստատում են մահմեդական աղբյուրները (տե՛ս *M. Yinanc*, p. 43. *O. Turan*, Selçuklular Tarihi, p. 74—75) այլև, ինչպես կտեսնենք ներքևում, որ Գթլմուշի առաջնորդությամբ կատարված ներխուժումը եղել է Արաքս գետի վրայով և հետապնդել է Դվինի ամիրային (որը 1045 թ. Անիի անկումից հետո ենթարկվել էր բյուզանդական զորքերի հարձակմանը) օգնություն հասցնելու նպատակով։ Այդ մասին տե՛ս նաև՝ Ս. Սպարապետ, էջ 42—43։

21 Մ. Ուռհայեցի, էջ 88։

22 Տե՛ս *El-Bundari*, ներածություն, էջ XLV։

Այսպիսով, թեև 1029—1045 թթ. օղուզ-թուրքմենների կատարած արշավանքներն ու ասպատակությունները հիմնականում չհանգեցրին Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի որևէ մասի վերջնական նվաճմանը, սակայն դրանք հանդիսացան Հայաստանի Բագրատունիների կենտրոնական թագավորության՝ Բյուզանդիայի կողմից նվաճումը արագացնող հանգամանքներից մեկը և այնուհետև Բյուզանդիայի՝ Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ վարած անհեռատես նենգ քաղաքականության հետևանքով հեշտացրին ու արագացրին ամբողջ Հայաստանի գրավումը սելջուկյան թուրքերի կողմից։

բ. Սելջուկյան արշավանքները 1045—1063 թթ.։ Բյուզանդական կայսրության ոչ նեռատես քաղաքականությունը։ Սելջուկյան արշավանքների բնույթը։ Սելջուկյան առաջին երկու արշավանքները Հայաստանում։ Առձեռ քաղաքի ավերումը։ Հայերի դժգոհությունը Բյուզանդիայից։ Հալածանքը հայ եկեղեցու դեմ։ Հույների պարտությունը Կապուտռուի մոտ։ Հաշտության բանակցությունները սելջուկյան սուլթանության և Բյուզանդիայի միջև։ Կարսի ավերումը Գրիմուշի կողմից։ Տուղրիլ բեգի արշավանքը և Մանազկերտի դիմադրությունը։ Ավերածությունները Հայաստանում (1055—1063 թթ.)։ Հայկական իշխանությունների մնացորդները նարավային Հայաստանում։

Անիի Բագրատունյաց կենտրոնական թագավորության Բյուզանդիայի միացումից հետո՝ բացի Վանանդից, Գուգարքից, Սյունիքից, Արցախից, Դվինից և Նախճավանի շրջակայքից, Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր նահանգներն ու գավառները արդեն գտնվում էին Բյուզանդական կայսրության տիրապետության ներքո։ Սելջուկյան արշավանքների ծավալման շրջանում 1045—1071 թթ. կայսրության արևելյան և հարավարևելյան տիրույթները, որոնք իրենց մեջ հիմնականում ընդգրկում էին Հայկական լեռնաշխարհը, բաժանված էին Միջագետքի, Տարոնի, Վասպուրականի «Անիի և Իբերիայի»[23] կատապանություններ։

Բյուզանդիան դառնալով Հայկական լեռնաշխարհի բացարձակ տերը, ինքը պետք է պաշտպաներ իր նոր սահմանները։ Մինչդեռ առաջ Հայաստանի ռազմունակ ու հայրենասեր քաջամարտիկ հայ բնակչությունը ինքն էր մեծ տոկունությամբ ու անձնվիրությամբ պաշտպանում հայրենիքը, իսկ այժմ նվաճված ու լքված հայ ժողովուրդը, որի ռազմական ուժը մեծ մասամբ տեղահանված էր հայրենի երկրից, չուներ իր նախկին զորությունն ու կազմակերպվածությունը։

---

23 Այս կատապանությունը կոչվել է նաև «Հայաստանի և Իբերիայի», որը իր մեջ ընդգրկում էր Տայքը և Շիրակը։

Կայսրությունը պետք էր ապավիներ այժմ իր սեփական ուժերին ու միջոցներին, այն է՝ զանազան կողմերից Հայաստան բերված օտար վարձկան զորքերին, որոնց համար այդ երկիրը ոչ հայրենի տուն էր, ոչ էլ հարազատ բնակավայր[24]։

Ստեղծված դրությունը այսպես էին գնահատում սելջուկյան արշավանքների ժամանակակիցները. «Զի զարս քաջս և զհզօրս քակեալ հանին յարևելից Հոռոմք և կուրտ զօրապետօք ջանային պահել զաշխարհն հայոց և զամենայն տունն արևելից»[25]։

Բյուզանդական ժամանակագիրները, պատմելով 1044 թ. դեպքերի մասին վկայում են, որ Մոնոմախ կայսրը (1042—1055) զրամական հարկ դրեց արևելյան սահմանագծի երկարությամբ ապրող հարկերից ազատ իշխանների վրա, փոխարենը Անի-Իբերիա բանակաթեմը[26] (վրացիներին ու հայերին) ազատեց 50000 զորք կայսրության պաշտպանության համար տրամադրելու պարտավորությունից։ Ժամանակագիրները մեղադրում են կայսրին այն բանի համար, որ հարկից ստացված փողը մեղադրում են կայսրին այն բանի համար, որ հարկից ստացված փողը նա նվիրեց ս. Սոֆիա տաճարի և այլ եկեղեցիների լուսավորությանը[27], այն ժամանակ, երբ թուրքերը սկսել էին ուժեղ թակել Բյուզանդիայի արևելյան դարբասները և ամայացնել նրա արևելյան և հարավային սահմանակից տարածքը։

Բյուզանդական աղբյուրները նշում են, որ Անի-Իբերիա Բանակաթեմի բնակիչները այնքան էին ծանրաբեռնված հարկերով, որ նրանք նախընտրում էին զանգվածաբար գաղթել սելջուկյան սուլթանի մոտ։ Բյուզանդական կուսակալները այնքան հաջող էին կատարում իրենց վրա դրված հարկահավաքի պարտականությունները, որ «դժբախտ վրացիները բյուզանդացիներից վրեժ լուծելու համար հրահրում էին սուլթանին, (նրա բոլոր ուժերով) Ռումի կայսրության դեմ, և որ այս բանը դարձավ անթիվ աղետների աղբյուր»[28]։

Անշուշտ, 50000 զորքերի վերացումը, որոնք այնքան հայրենասիրական խանդավառությամբ պաշտպանում էին իրենց դժբախտ հայրենիքի սահմանները, սելջուկյան արշավանքների և նրանց հաջորդող նվաճումների հաջողության գրավականներից մեկն էր։

24 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. 3, էջ 29։

25 Մ. Ուռհայեցի, էջ 102։

26 Անիի թագավորության տարածքը մտնում էր Անիի և Իբերիայի կատապանության մեջ, որի կենտրոնը Անին էր։

27 Schlumberger, L'Epopée. v. 3, p. 553.

28 Schlumberger, L'Épopée, v. 3, p. 554.

Սկսած 1047 թ. մինչև 1063 թ. սելջուկյան արշավանքները մեծ մասամբ խաղաղ չափեր ընդունեցին։ Սելջուկյան հրոսակները ներթափանցում էին Հայկական լեռնաշխարհի խորքերը, ասպատակում, ավարի մատնում ու ամայացնում էին գրեթե բոլոր մեծ քաղաքներն ու բնակավայրերը։ Միաժամանակ այդ արշավանքները կատարում էին սելջուկյան սուլթան Տուղրիլ բեգի հրամանով, նրա անմիջական տեղակալների կամ թե հենց իր սուլթանի ղեկավարությամբ։ Բացի քոչվոր թուրքմեն հրոսակներից, այդ արշավանքներին մասնակցում էին նաև սելջուկյան կայսրության պետական կանոնավոր բանակները։

1040 թ. Դանդանականի ճակատամարտում՝ Ղազնևյանների դեմ տարած վճռական հաղթանակից հետո սելջուկյան նորահռչակ սուլթանի[29] ընտանիքի անդամների միջև տեղի ունեցավ գրավված տարածքի և հետագա նվաճումների գործում յուրաքանչյուրի կատարելիք դերի բաժանում[30]։ Չակիր բեգը պետք է կառավարեր և պաշտպաներ պետության կենտրոնը՝ Խորասանը։ Իսկ Տուղրիլ բեգը՝ պետության արևմտյան մասը՝ միայն Պարսկական Իրաքը։ Թեև նա իր նվաճումները կատարում էր սելջուկյան ընտանիքի մյուս անդամների աջակցությամբ[31], սակայն նրա հիմնական ուժերը թուրքմեն քոչվոր ցեղերն էին, որոնք ենթարկվում էին նրա ղեկավարությանը միայն այն ժամանակ, երբ նրա արշավանքները կապված էին հարուստ ավարի հետ, որից թուրքմենները պետք է վերցնեին իրենց առյուծի բաժինը։

Անշուշտ, Տուղրիլ բեգը պետության հիմնադրումից հետո, միայն թուրքմենների առաջնորդը չէր, այլև՝ պետության ղեկավարը՝ սուլթանը։

Քոչվոր ցեղախմբերի առելությունը նստակյաց վարչական ապարատի, նույնիսկ վարձկան և մամլուք զինվորների նկատմամբ, ստեղծում էր դժվարություններ և սրում հաճախ նրանց հարաբերությունները սուլթանի հետ։ Սակայն իր հետագա արշավանքների և նվաճումների հաջողության համար Տուղրիլ բեգը չէր կարող զանց առնել թուրքմենների ուժը, որը նա օգտագործել էր Ղազնևիների պետությունը նվաճելիս։ Թուրքմենական ուժը անհրաժեշտ էր թեկուզ իր հետագա արշավանքների և նվաճումների ճանապարհները հարթելու և նախապատրաստելու ուղղությամբ։ Մյուս կողմից Տուղրիլ բեգը Իրանը գրավելուց հե-

29 1055 թ. Բաղդադի խալիֆան Տուղրիլ բեգին հռչակեց սուլթան և այդ օրվանից բոլոր սելջուկ տիրակալները այդ տիտղոսը կրեցին։

30 С. Г. Агаджанов, Очерки.., стр. 212—213. Захир-ад-Дин Нишапури, Сельджук-намэ, Тегеран, 1332, стр. 18.

31 Նույն տեղում, էջ 213։

տո կամա-ակամա ներգրավվում էր դավանաբանական հակադիր կողմերի՝ Սյուննիների (ուղղափառ մահմեդականների) և Շիիների վեճի մեջ, որը ծվատում էր Իրանը մահմեդականության ընդունման օրից։ Սելջուկյան սուլթանը սկզբից ևեթ օժանդակում էր այն կողմին, որը պայքարում էր հերետիկոսության դեմ։ Տուղրիլ սուլթանը, եթե նույնիսկ ստույգ գաղափար չէր կարող ունենալ իր ապագա սուլթանության աշխարհակալական հաջողությունների մասին, այնուամենայնիվ, արաբական խալիֆայության նկատմամբ, նա վարում էր հեռատես և խորամանկ քաղաքականություն, ցուցաբերելով հարգանք և բարյացակամություն, քանի որ նա Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդներին նվաճելիս գործ էր ունենալու հատկապես մահմեդական բնակչության հետ։ Պետք է ընդգծել, որ պետական քաղաքականության այս վարքագիծը օտար էր թուրքմենների ոգուն, որոնք ավելի շատ մտածում էին կողոպուտի, քան կրոնաղավանաբանական վեճերի նկատմամբ Տուղրիլ սուլթանի վարած քաղաքականության մասին։ Անշուշտ, իրականության մեջ ակամա նրանք շփվում էին շիիզմի հետ, այնքան, ինչքան Աբբասյանների ուղղափառության հետ։ Սակայն խալիֆայի հետ կնքվելիք դաշնակցությունը բերելու էր իր հետ հարստանալու մի նոր աղբյուր։ Այն է՝ պատերազմ անհավատների դեմ, որը եվրոպական գրականության մեջ հայտնի է ռազզիա տերմինով[32]։ Անհավատների դեմ մղվող դաշի մահմեդականների պատերազմի (ջեհադի) և թուրքմենների արշավանքի ռազզիայի ավարառական նպատակների համընկնումը, միասնական ճակատ էր ստեղծում «անհավատների»՝ այդ թվում հայերի դեմ և մյուս կողմից այդ միջոցով հնարավոր էր դառնում շեղել թուրքմենական հուզմունքների և ապստամբությունների ուղղությունն ու նպատակները։

Պետք է ընդգծել նաև, որ 1040-ական թվականներից սկսած սելջուկ թուրքմենական արշավանքները սոսկ զինվորական չէին, այլև օղուզ-թուրքմենական ցեղախմբերի շարժում ու տեղափոխություն՝ բնակության վայր և արոտավայրեր որոնելու համար[33]։

---

32 *Cl. Cahen*, La première pénétration turque en Asie Mineure „Byzantion", XVIII, p. 12, „razziq" (*Այսուհետև Cl. Cahen*, La première pénétration). (*Ռազզիա*) *արաբական* rhaziat *«արշավանք անասուններ ձեռք բերելու համար» իմաստ ունեցող տերմինից է ծագում, որը այդ նշանակությամբ օգտագործվում էր Հյուսիսային Աֆրիկայի քոչվոր ցեղերի մոտ։*

33 *W. Barthold*, Turkestan down to the Mongol invasion, London, 1928, t. I, p. 135.

Թուրքեստանից դեպի Իրան օղուզների գաղթեր էին տեղի ունեցել 1017, 1028, 1042 և 1047 թվականներին[34]։

1042 թ. գաղթած Օղուզ-թուրքմենների և Տուղրիլ բեգի հարաբերությունները վատացան, երբ սուլթանը գրավեց Ռեյը 1042 թ. և ապա Համադանը 1043 թ., որով փակվեց օղուզների ասպատակությունների ճանապարհը։ Ռեյը դարձավ սուլթանության մայրաքաղաք, որը գտնվում էր Հայաստան և Բաղդադ տանող ճանապարհների հատման կետում։ Այս առաջխաղացումից դժգոհ, Ռեյում գտնվող թուրքմենները հրաժարվում են ենթարկվել սուլթանին և փախչելով Իբրահիմ Յաննալի առաջից, անցնում են Ատրպատական։ Սակայն այդ երկրի ժողովրդի նկատմամբ կատարած չարագործությունների պատճառով չկարողանալով մնալ այնտեղ, ճողոպրում են քրդական Սարպ լեռնաշղթայի վրայով, ողողում են Ջզիրան և սկսում իրենց սովորական ավերումներն ու կողոպուտները՝ և ապա՝ Վասպուրականի վրայով վերադառնում են Առան՝ ճանապարհին մարդկային մեծ կորուստներ կրելով։

Քանի որ այդ ցեղախմբերը Տուղրիլ բեգի հպատակներն էին[35], դրանց ոչնչացումը դրդապատճառ դարձավ մի շարք արշավանքների, որոնք նրա հրամանով կատարվեցին 1045—1055 թթ.։ Սակայն այս շրջանում, դեպի Բաղդադ առաջխաղացման ժամանակ, այսինքն՝ կենտրոնում տեղի ունեցած ռազմական գործողություններին զուգընթաց կատարվեցին մի շարք խոշոր արշավանքներ դեպի Անդրկովկաս, այդ թվում և Հայաստան։ Այն ժամանակ, երբ Իբրահիմ Յաննալը 1043—1047 թթ. զբաղված էր շարժման կենտրոնում՝ Համադան և Սպահան նահանգների գրավմամբ, Չակիր բեգի որդին՝ Յակուտը նշանակվեց Ատրպատականը նվաճող զորքերի հրամանատար։ Ամիր և երբեմն մելիք կոչվող այս իշխաններին ուղեկցում էին սուլթանական դիվանի վեզիրներից որևէ մեկը։ Յուրաքանչյուր ամիրի տրամադրության տակ էր դրվում մի բոյ կամ ցեղախումբ և օյմաքներ։

Այս տարիներին Արսլան Յաբղուի որդի Գթլմուշը խազարաց (Կասպից) ծովի հարավային ափերը գրավելուց հետո անցնում է Արաքս գետը և մտնում Առան, այնտեղից էլ ուղևորվում Անիի (Իբերիա) կատապանությունը՝ Հայաստան և Վրաստան[36]։ Յակուտի և Գթլմուշի ռազմական գործողություններին օժանդակում էին Ուրմիա լճի ավազանում

---

34 *Նույն տեղում, էջ 135։ O. Turan*, p. 71—73.

35 *Ибн ал-Асир*, стр. 114.

36 *Schlumberger*, l'Épopée. III, p. 545—546.

մի քանի տարի առաջ հաստատված թուրքմենները։ Վերջինների ցեղային առաջնորդները ճանաչելով Տուղրիլի գերիշխանությունը, ազատ էին իրենց ավարառական գործողությունների մեջ։ Նրանց օգնում էին նաև Գանձակի Շադդադյան ու Դերբենդի Շիրվանշահերի ամիրայությունները։

Պետք է նշել, որ Խորասանից Իրանի վրայով դեպի Անդրկովկաս ներխուժող թուրքմեն հրոսակների համար աշխարհագրականորեն Ատրպատականը հիմնականում դարձել էր գլխավոր հանգրվան թեկուզ այն պատճառով, որ սկսած Խորասանից արոտավայրերի հետքերով քոչող թուրքմենի անասունները սնող լեռնային հովիտները, ժամանակավորապես ընդհատվում էին Համադանում[37]։ Մյուս կողմից, Ատրպատականը հանգրվան դառնալու պատճառներից մեկն էլ այն էր, որ այս երկրամասի հասարակական քաղաքական կառուցվածքը և նախորդ VII—X դարերում Ռումի (Բյուզանդական կայսրության) և մահմեդական երկրների միջև սահմանային գոտուն մոտիկ լինելը հնարավորություն էր տալիս սելջուկներին այստեղ կազմակերպելու զինվորական գաղութներ։ Հետևաբար Ատրպատականից՝ և նրա վրայով էր, որ հիմնականում կատարվում էին սելջուկյան արշավանքները։ 1045 թ., երբ Անիի գրավումից հետո, բյուզանդական զորքերը հարձակվեցին Դվինի վրա[38], Տուղրիլ բեգը բյուզանդական զորքերի ուշադրությունը շեղելու նպատակով սելջուկյան մի քանակ ուղարկեց նրանց դեմ, իր հորեղբոր որդու՝ Դիյմուշի հրամանատարությամբ։ Վերջինս, ինչպես տեսանք, արդեն անցել էր Արաքսը և ասպատակություններ էր կատարում Պարսկական Իրաքում թափառող թուրքմենների ուղեկցությամբ։ Սակայն, մինչև նրա գալը, բյուզանդական զորքերը պարտվել էին Դվինի պարիսպների տակ, ուստի Դիյմուշի բանակը շարունակեց ասպատակել այդ վայրերը[39]։

1047 թ. Տուղրիլի ազգական Հասան Խուլի[40] գլխավորությամբ

---

[37] *F. Summer*, The turks in Eastern Asia Minor in the Eleventh Century. Supplementary papers, 13th International congress of byzantine Studies. Oxford. 1966, p. 141—143.

[38] Ս. Սպարապետ, էջ 42—43, Մ. Չամչյան, հ. Բ, էջ 937։

[39] Տե՛ս *Sadruddin el-Huseyni*, p. 17. Մ. Ուռհայեցու մոտ այս արշավանքը դրված է 1048—49 թվականի ներքո, Մ. Ուռհայեցի, էջ 102—103։

[40] *Cl. Cahen*, La premiere pénétration, p. 15. Բյուզանդական աղբյուրներում Հասան Խուլը նշված է՝ Ազան Խուլ աղավաղված ձևով։ Լեոն կարծում է, որ սա բոլորովին

սելջուկյան 20000 անոց մի բանակ մտնում է Վասպուրական և հասնում մինչև Բասենի գավառը և Վաղարշավան դաստակերտը։ Հետևյալ ձևով է նկարագրում այս ահռելի անցքերը ժամանակակից Արիստակես Լաստիվերտցին։

«Ի սոյն ամս բացաւ դուռն բարկութեան յերկնից ի վերայ աշխարհիս մերոյ. և շարժեալ զօրք բազումք ի Թուրքաստանէ, որոց երիվարքն արագունք իբրև դարծուխս, և սմբակք նոցա իբրև զվէմ հաստատունք. աղեղունք լարեալք, և սլաքեալ նետք նոցա, զօտեորեալք քաջապէս, և անլուծանելի ունելով զխրացս կօշկաց։ Եւ եկեալ ի գաւառն Վասպուրականի, յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս անյագեալս ի կերակրոյ. և եկեալ մինչև ի գաւառն Բասեան, և մինչև ի դաստակերտն մեծ՝ որ կոչի Վաղարշաւան և քանդեալ ապականեցին զաւառս քան և շորս սրով և հրով և գերութեամբ»[41]։

Վասպուրականի կատապան Ահարոն Բուլղարի և Անիի ու Իբերիայի կառավարիչ Կատակալոն Կեկավմենոսի (Կամենաս)[42] միացյալ ուժերը, Մեծ Զավ (Զաբ) գետի ափին տեղի ունեցած ճակատամարտում թշնամուն թակարդի մեջ գցելու նպատակով դիմեցին խորամանկության։ Դիտավորյալ նահանջելով, նրանք թողեցին իրենց ունեցվածքը, իսկ սելջուկ թուրքերը՝ կարծելով, թե բյուզանդացիք պարտված նահանջում են, սկսեցին բաժանել ավարը։ Դարան մտած բյուզանդական զորքերը հարձակվեցին կողոպուտով զբաղված թուրքերի վրա և կոտորեցին նրանց. Հասանը և մի շարք այլ հրամանատարներ սպանվեցին[43]։

Թեև այս հաջողությունից ժամանակավորապես օգտվելով Բյուզանդիան կարողացավ մի շարք բերդեր գրավել Դվինի Շադդադյաններից, սակայն հենց այս ժամանակ Կ. Պոլսում ծագած Լևոն Թոռնիկոսի ապստամբությունը ստիպեց Բյուզանդիային դադարեցնել ռազմական գործողությունները Դվինի դեմ և զորքերի մի մասը տեղափոխել Կ. Պոլիս։ Դվինի համառ դիմադրությունը և Լևոն Թոռնիկիոսի ապստամբու-

---

այլ անձնավորություն է։ Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. 2, էջ 695։ Տե՛ս նաև *Schlumberger*, l'Épopée, v. 3, p. 550.

[41] Ա. Լաստիվերտցի, էջ 64—65։

[42] Հայ պատմիչները նրան անվանում են Կամենաս, Ա. Լաստիվերտցի, էջ 63, 80։ «Կամենաս՝ որ թարգմանի կրակ», էջ 103։ Տե՛ս նաև *F. Tournebize*, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, p. 29, note 1.

[43] Повествование вардапета Аристакеса Ластивердци, Перевод с древнеармянского К. Н. Юзбашяна, М., 1968, стр. 161. *O. Turan*, Selçuklular tarihi..., p. 75.

թյունը փաստորեն վերջ տվեցին կայսրության հաջողություններին։ Թեև բյուզանդական առաջխաղացման իսկական արգելքը եղան սելջուկները[44], սակայն բյուզանդական զորքերի տեղափոխումը Կ. Պոլիս թուլացրեց Բյուզանդիայի արևելյան սահմանների պաշտպանությունը՝ բաց անելով ճանապարհը սելջուկյան արշավող զորքերի առաջ։

Հասանի բանակի ամոթալի պարտության վրեժը լուծելու համար և 1047 թ. Խորասանից գաղթած թուրքմեններին կենտրոնից հեռացնելու նպատակով, Տուղրիլ բեգը Տիգրիսի արևելյան կողմերի նվաճումով զբաղված իր համամայր եղբոր Իբրահիմ Յաննալին և Գելմուշին հանձնում է մի խոշոր բանակ, որին միանում են Ատրպատականում համախմբվող վերոհիշյալ թուրքմենները, և հրամայում է նրանց արշավել Հայաստան։ Սելջուկյան բանակները Ատրպատականից՝ Խոյի և Սալմաստի վրայով ներխուժում են Հայաստան[45]։

«Քանզի յամի չորեքհարիւրերորդի ինն ներորդի եօթներորդի թուականիս մերոյ, վկայում է Ա. Լաստիվերտցին,— որ էր երկրորդ ամ գերութեանն մերոյ, շարժեալ միւսանգամ մրուր դառնութեան լի բարկութեամբ ի տանէն Պարսից՝ ահագին ծփանօք, և եկեալ հեղեալ յընդարձակ դաշտն Բասենոյ և Կարնոյ, և ցայտուկս հեղեղատին կալաւ զչորս անկիւնս երկրին, յարևմուտս մինչև ի Խաղտեաց գաւառն. իսկ ի հիւսիսի՝ մինչև ի Սպեր և մինչև յամուրսն Տայոց և Արշարունեաց. իսկ ի հարաւ՝ մինչև ի Տարօն և մինչև ի գաւառն Հաշտենից մինչև յանտառս Խորձենոյ»[46]։

Սելջուկյան հրոսակները բազմաթիվ ավաններ և գյուղեր ավերեցին, շատ մարդկանց կոտորեցին։ Սոսկալի ջարդ ու ավերածություն գործեցին մանավանդ Մանանագի գավառի Սմբատաբերդ կոչվող ամրացված լեռան վրա, ուր ապաստանել էր ժողովրդի մեծ բազմություն՝ իրենց ունեցվածքով։ Հարձակվելով սրանց վրա, թուրքերը քանդել էին ամրությունը և ներխուժելով Սմբատաբերդ ավանը՝ սրի էին անցկացրել կամ գերել բոլորին[47]։

Բյուզանդական բանակը սկզբում անգործության մատնվեց։ Փոխանակ անմիջապես դիմադրավելու ահարկու վտանգը, Վասպուրականի

44 Տե՛ս Աբամ Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 212—213։

45 Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 102։

46 Ա. Լաստիվերտցի, էջ 67, Մ. Չամչյան, հ. Բ, էջ 946։

47 Ա. Լաստիվերտցի, էջ 71—74, Մ. Ուռհայեցի, էջ 102։ Ս. Սպարապետ, էջ 44—45։

կատապան Ահարոն Բուլղարի պնդմամբ, բյուզանդական բանակը քաշվեց Վանանդ գավառի մի կողմը՝ Օրդրու (կամ Ուրդրու) ռազմականորեն ամրացված դաշտում, Վրաստանի սահմանի վրա և սպասեց կայսրի հրամանին ու նրա կողմից ուղարկվելիք ռազմական օգնությանը՝ վրաց մեծ էրիստավ Լիպարիտ Օրբելյանի գլխավորությամբ։

Իբրահիմ Յաննալի բանակները, օգտվելով բյուզանդական բանակների անգործությունից, սկսեցին հետապնդել նրանց, սակայն միաժամանակ թողնելով հետապնդումը հարձակվեցին հարուստ վաճառաշահ Արծն քաղաքի վրա, հիմնովին կործանելով այն։

Մանրամասն տեղեկություն Արծն քաղաքի ավերման մասին (որը ինչպես վկայում է Արիստակես Լաստիվերտցին[48], մատնվել էր կրակի) տալիս է Մատթեոս Ուռհայեցին։

«Եւ ահա յայսմ ամի (ՆՂԸ՝ 1049) զօրք անօրինաց հասանէին ի հոչակաւորն և ի բազմամբոխ քաղաքն Հայոց՝ որ կոչի Արծն և գտեալ անպարիսպ զքաղաքն և անթիւ բազմութեամբ լցեալ զարանց և զկանանց և անհամար չափս ոսկւոյ և արծաթոյ։ Եւ քաղաքացիքն տեսեալ զզօրս այլազգեացն միաբան ի պատերազմ ելեալ, և խմբեցաւ շուրջ զեղերօք քաղաքին սաստիկ և ահաւոր պատերազմ, և եղև զվեց ժամ աւուրն զմիմիեանս կոփէին և արեամբ լցաւ անդաստանքն, վասն զի ոչ գոյր տեղի փախստեան և ոչ օգնական, միայն զմահն ունէին յոյս, և ի բազմութենէ անօրինացն ձանձրացան զօրքն քաղաքին և ի փախուստ դարձան և այլազգիքն սրով յարձակեցան ի վերայ քաղաքին և սաստիկ կոտորածով առ հասարակ ի ներքոյ սրոյ անցուցին զամենայն քաղաքն իբրև զբիւրս հնգետասան։ Այլ զոսկւոյ և զարծաթոյ և զդիպակաց աւելորդ է ասել, վասն զի ոչ արկանի ընդ գրով»[49]։

Պետք է նշել, որ այս անհերևակայելի աղետների պատճառը Բյուզանդական կայսրության քաղաքականությունն էր, որ երկիրը թողել էր անպաշտպան և զինվորական հայրենասեր հայ տարրը փոխարինել օտար վարձկան զորքերով։ Սակայն զգալով, որ առանց հայերի և վրացիների

48 Ա. Լաստիվերտցի, էջ 79։

49 Մ. Ուռհայեցի, էջ 102—103։ Ս. Սպարապետ, էջ 45։ Արծնի ավերման մասին մանրամասն խոսում է նաև Սկիլիցան։ Տե՛ս Դ. Շլումբերժեր, էջ 500—556, Ա. Լաստիվերտցի, էջ 79 և Միքայել Ատրալիատես, իր «Պատմություն» երկում։ Արծն քաղաքը,— վերտցին, էջ 79 և Միքայել Ատրալիատես, իր «Պատմություն» երկում։ Արծն քաղաքը,— գրում է նա,— հարուստ է Պարսկաստանից, Հնդկաստանից և Ասորիքից բերված ապրանքներով։ Արծնը,— ավելացնում է նա,— պատճառ դարձավ Թեոդոսուպոլսի (Կարինի) ամայացման, այն իմաստով, որ վերջինիս բնակիչները տեղափոխվեցին նոր կառուցված այդ Արծն քաղաքը։ Տե՛ս նաև Մ. Չամչյան, հ. Բ, էջ 945։

համագործակցության Կատակալոնը և Ահարոնը չեն կարողանալու կասեցնել սելջուկյան հաղթարշավը, բյուզանդացիները օգնության կանչեցին Գրիգոր Մագիստրոսին և վրաց նշանավոր զորավար Լիպարիտ մեծ իշխանին[50]։ Ուստի, երբ վերջիններս ժամանեցին իրենց զորքերով, բյուզանդական բանակը դուրս եկավ իր խրամատներից։ Մեծ ընդհարումը սելջուկյան բանակի հետ տեղի ունեցավ 1048 թ. սեպտեմբերի 18-ին Բասենի մեծ դաշտում՝ Կապուտռու բերդի մոտ[51], որը գտնվում է Արջովիտում[52]։

Սակայն պետք է նշել, որ սելջուկյան այս արշավանքի հենց սկզբից վերոհիշյալ զորավարները անմիաբան էին և անհամերաշխ[53]։ Համաձայնեցված չէին Կատակալոնի և Ահարոնի ռազմական ծրագրերը։ Կռվի կեսին Ահարոն Բուլղարն իր զորամասերով նահանջեց և միացյալ զորքը պարտության մատնվեց։ Սելջուկները վերադարձան՝ իրենց հետ տանելով մեծ թվով բյուզանդական պատրիկներ որոնց թվում Լիպարիտ իշխանին, բազմաթիվ գերիներ և բազմաքանակ ավար[54]։

Հայ և բյուզանդական աղբյուրներում բավական հարուստ տեղեկություններ են պահպանվել Կապուտռու բերդի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ընթացքի և ելքի մասին։ Ըստ Ստեփանոս Օրբելյանի, բյուզանդական բանակներին օգնության հասնող Լիպարիտը իր հետ բերել էր 20000-անոց մի բանակ, որի կազմում կային 700 ազնվականներ (ազատներ), մինչդեռ բյուզանդական ամբողջ բանակում կար ընդամենը 15000 զինվոր[55]։ Այնուհետև վրաց աղբյուրները նշում են, որ ճակատամարտի առաջին օրը շաբաթ էր, ուստի սուրբ օր էր վրացիների համար, հետևաբար, Լիպարիտը հրաժարվում է մասնակցել այդ օրվա կռվին[56]։ Բյուզանդական պատմիչ՝ Սկիլիցան հետևյալ ձևով է պատմում Կապուտռու ճակատամարտի ընթացքը։ «Լիպարիտը վերջը տեղ հասավ և (հռոմեական բանակը), իջնելով հիշյալ ամրությունից,

50 Կենսագրությունը տե՛ս Ս. Տ. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, պետական համալսարանի Ն. Մառի անվան կաբինետի աշխատությունները, № 2, Երևան, 1947, էջ 103—149։

51 Մ. Ուռհայեցի, էջ 107—108։ Ս. Սպարապետ, էջ 45—46։

52 Մ. Ուռհայեցի, էջ 107։

53 Տե՛ս Մ. Չամչյան, հ. Բ, էջ 949—950։

54 Ибн ал-Асир.., стр. 116.

55 Տե՛ս Ս. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 374։

56 M. Brosset, Additions et éclaircissements, t. II, p. 224.

բանակեց մի դաշտում, մի լեռան ստորոտին, որտեղ գտնվում է Կապուտռու բերդը։ Թուրքերը անկազմակերպ առաջանում էին, Կեկավմենոսը դարձյալ խորհուրդ էր տալիս, քանի նրանք ցրված են, և անկազմակերպ, հարձակվել նրանց վրա։ Բայց Լիպարիտը չէր ուզում, որովհետև օրը շաբաթ էր, Ինդիկտիոնի 2-րդ տարվա սեպտեմբեր ամսի 18-ը։ Լիպարիտի համար շաբաթը շարադուշակ օր էր և նա վախենալով դրանից, խուսափում էր պատերազմելու»[57]։

Իբրահիմ Յաննալը ժամանակ շահելով կարգի բերեց իր ուժերը, անցավ հարձակման, և կայսերական բանակը ստիպված եղավ ընդունել ճակատամարտը։ Կատակալոնը հրամայում էր բանակի աջ թևին, իսկ Լիպարիտը՝ կենտրոնին։ Ճակատամարտի ցերեկվա ժամերը անցան հարձակումներով և հակահարձակումներով։ Գիշերը սկսվեց իսկական ճակատամարտը։ Իբրահիմը հրամայում էր Կատակալոնի դեմ կռվող բանակի ջոկատին։ Մի այլ թուրք հրամանատար, որին Սկիլիցան «Խորասանիտ» է անվանում[58], կռվում էր Ահարոն Բուլղարի դեմ։ Լիպարիտի դեմ էր կանգնած Իբրահիմի եղբայրը, որի հունականացված անունը Ասպան Սելիարոս էր[59]։ Մարտի թեժ պահին, երբ Կատակալոնի և Ահարոն Բուլղարի ջոկատները սկսեցին հետապնդել փախուստի դիմող թշնամուն, Լիպարիտը իմանալով իր քրոջ որդու կորիճ Զորդուանելի սպանության լուրը նետվում է թշնամու վրա, սակայն ձին վիրավորվում, ինքն ընկնում է ցած, և վրա հասնող թշնամու զինվորները նրան վերցնում են գերի. «Այնուհետև,— ասում է Սկիլիցան, հաղթողները (սելջուկ թուրքերը) սկսեցին հետապնդել իրենց առջևից փախչողներին (իմա՛ Լիպարիտի զինվորներին)։ Սելջուկ-թուրք զինվորները իջնելով ձիերից շնորհակալություն էին հայտնում Աստծուն և գոռում. «Ո՞վ է ավելի մեծ, քան մեր աստվածը»։ Բյուզանդացի հրամանատարները, որոնք կարծում էին, որ արդեն հաղթել են թշնամուն, սկսեցին անհանգստանալ Լիպարիտի ուշացումից։ Վերջապես մի վրացի զինվոր եկավ և հայտնեց Լիպարիտի գերի ընկնելու և Իբրահիմ Յաննալի և իր

57 Հովհաննես Սկիլիցես, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Բարթիկյանի, էջ 198 (ձեռագիր)։

58 Հավանական է Խորասանիտ անունը ծագել է Խորասան երկրամասի անունից, ոչ թե Ասանից, ինչպես կարծում է Բրոսեն, տե՛ս M. Brosset, Additions, p. 222.

59 M. I. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, 1818—1819, t. II, p. 206. Հեղինակը հետևելով հայկական աղբյուրներին, ենթադրում է, որ սա Գիլմուշն էր։ Մեր կարծիքով Ասպան Սելարիոսը ոչ թե անուն՝ այլ «Aspah-Salar» (գունտստարլ) զինվորական կոչում էր։

եղբոր Ասպան Սալարի (Սելարիոսի) վրացի գերիների հետ դեպի Կաստրոկոմիոն ամրոցը՝ ձիերի վրա քառատրոփ հեռանալու մասին։ Կատակալոնը և Ահարոնը ահաբեկված և սրտաբեկ Լիպարիտի գերության լուրից, ամբողջ գիշերը անքուն անցկացնելուց հետո արևածագին որոշեցին չհետապնդել թշնամուն և վերադառնալ իրենց նահանգները[60]։

Ահարոնը վերադարձավ Վան, իսկ Կատակալոնը՝ Անի։ Ինչ վերաբերում է Իբրահիմ Յաննալին, հրճվելով ճակատամարտի ելքից, հինգ օրում հասնում է Ռեյ, ներկայանում սուլթանին բազմաքանակ ռազմագերիներով և հարուստ ավարով, որոնց մեջ էր նաև վրաց իշխան Լիպարիտը։ Սկիլիցան լրացնում է իր շարադրանքը, ասելով, որ թեև սուլթանը (Իմա Տուղրիլ) ուրախացած էր երևում Լիպարիտի գերեվարությամբ, սակայն իր սրտի խորքում ատում էր իր եղբորը Յաննալին և չէր վստահում նրա հավատարմությանը։ Կատաղած Իբրահիմի հաջողություններից, գաղտնորեն ցանկանում էր նրա կործանումը[61]։ Ըստ բյուզանդական աղբյուրների, Կապուտռուի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթանակ էին տարել բյուզանդացիները, հայկական-վրացական զորքերի օգնությամբ։ Հանրագումարի բերելով և գնահատելով Կապուտռու ճակատամարտի ելքը, «պետք է ասել,— նշում է Գ. Շլումբերժերը, որ դա անորոշ մի ճակատամարտ էր երկու կողմերի համար։ Միաժամանակ այդ ճակատամարտի հետևանքով ժամանակավորապես կանգնեցվեց սելջուկյան առաջխաղացումը և նվաճումները»[62]։ Մինչդեռ «Հայկական ու արաբական աղբյուրների վստահելի և հանգամանալից նկարագրություններից երևում է,— ասում է Հ. Մանանդյանը, որ վերոհիշյալ կռվում հաղթվել էին ոչ թե սելջուկները (ինչպես պնդում են Բյուզանդական աղբյուրները և Բյուզանդիային վերաբերող երկերը[63]), այլ իրենք հույները[64]։

Ավելորդ չենք համարում մեջ բերել Արիստակես Լաստիվերտցու, Մատթեոս Ուռհայեցու և Իբն ալ-Ասիրի կարևոր վկայությունները հույների Կապուտռու ճակատամարտում կրած պարտության մասին։ Դեպքերին քաջատեղյակ Արիստակես Լաստիվերտցու հետևյալ տեղեկությունից պարզ երևում է հույների կրած պարտությունը։

«Արդ՝ եկն Լիպարիտն բազում աղաչանօք և գանձուց առատատուր պարգևօք և ոչինչ վճարեցաւ այնու. քանզի և ինքեանք իսկ չէին միաբան առ միմեանս։ Վասն որոյ ի խմբել պատերազմին, որդի Բուլղարին իւրայնովքն ի թիկունս դարձեալ՝ համարձակութիւն տայր թշնամեացն, որք մեծաձայն աղաղակաւ զմիմեանս յորդորէին, և ի մէջ փակեալ զԼիպարիտն իւրով քաջ արամբքն, զոմանս սպանանէին, և գերիվարի նորա զչիլարն հատեալ սուսերաւ՝ զինքն ձերբակալ առնէին։ Զոր տեսեալ այլ զօրացն՝ ի փախուստ դառնային, որոց զհետ մտեալ թշնամեացն, անչափ կոտորածս առնէին, զոմանքս սրով, և զբազումս՝ վասն զի գիշերացաւ ժամն, ի գահից և ի քարանձաւաց դահավէժ առնէին. և մնացեալքն մերկ կողոպուտ հետիոտիւք ուր կարէին՝ ապրեցան։ Իսկ թշնամիքն լցեալ աւարաւ առավել քան զառաւել, ուրախ լինէին, իսկ մերքս վայիւք և ողբովք լի»[65]։

Մատթեոս Ուռհայեցին, ինչպես երևում է հետևյալ վկայությունից Բյուզանդիայի պարտության պատճառը համարում է բյուզանդական հրամանատարների դավաճանությունը։

«Արդ յորժամ հասանէր զօրքն Յունաց ի յարևելք, Կամենն և Առօնն և Գրիգոր Վասակայ որդին կոչեցին զհետ իւրեանց զԼիպարիտն զՎրաց իշխանն և հասեալ նոցա ի բերդն՝ որ կոչի Կապուտռու, ի տեղին՝ որ Արջովիտ ասի, և լուեալ թուրք զորացն զտեղի առին, և բնակեցան Հոռոմ զօրքն ի յԱրջովիտ։ Եւ յայնժամ եկին զօրք այլազգեացն ի վերայ Լիպարիտին՝ առն քաջին, և նորա հանեալ զպահապանս ի գիշերի զքուրորդին իւր զՁորտուանէլն զայրն հզոր և պատերազմող, և յայնժամ սկսան զօրք այլազգեացն ի գիշերին պատերազմիլ. և հասանէր ձայն պատերազմին առ Լիպարիտն՝ եթէ «Հասիր, զի զօրք այլազգեացն պատեաց զմեզ»։ Եւ ասէր Լիպարիտն եթէ «Շաբաթ է և ոչ է օրէն վրացեացս ելանել յաւուր շաբաթու ի պատերազմ»։ Յայնժամ Զորտուանէլն որպէս զառիւծ ի գիշերին բախէր զճակատ այլազգեացն»[66]։ Նրանց փախուստի մատնելու պահին նրա բերանը մի նետ մխրճվեց և ծոծրակից դուրս եկավ։ Ահա այսպես մեռավ Զորտվանելը, մի քաջ ու հզոր մարդ։ Խսելով Զորտվանելի սպանության մասին, Լիպարիտը կատաղած գազանի նման դուրս եկավ պատերազմի և բոլոր այլազգիներին դաշտի երեսով մեկ

---

60 Տե՛ս Schlumberger, L'Épopée, p. 559. Մ. Չամչյան, էջ 950—951։

61 V. Minorsky, Studies in Caucasian history, London, 1953, p. 63 (Այսուհետև V. Minorsky, Studies).

62 Գ. Շլումբերժեր, էջ 559—560։ Նույն կարծիքին է նաև Մինորսկին, տե՛ս V. Minorsky, Studies, p. 63.

63 Համեմատի՛ր Gelzer, Abriss der byzantinischen Kaisergeschichte, p. 1005.

64 Տե՛ս Հ. Մանանդյան, էջ 44։

65 Ա. Լաստիվերտցի, գլ. ԺԳ, էջ 81։

66 Մ. Ուռհայեցի, էջ 107։

ցրիվ տվեց և սրի քաշեց։ Երբ հոռոմոց զորքը տեսավ Լիպարիտի քաջությունը, դավաճանեց նրան «և թողին զԼիպարիտն ի մէջ այլազգեաց և փախան—շարունակում է Մատթեոս Ուռհայեցին,— զի մի առցէ զանուն քաջութեան»[67]։ Այդ տեսնելով սելջուկ զորքերը ուժեղացնում են հարձակումը վրացիների վրա գերի բռնելով Լիպարիտին «և տարան զնա ի Խորասան առ Տուղրէլ սուլտանն, վասն զի յառաջագոյն լուեալ էր զանուն նորա և զամենայն քաջութիւն նորա գիտէր»[68]։

Լիպարիտը սուլթանի մոտ մնաց երկու տարի և այլևայլ վայրերում սխրանքներ գործեց։ Այլազգիները սուլթանի առաջ հանեցին մի հզոր և քաջ խափշիկի՝ Լիպարիտի հետ մենամարտելու։ Լիպարիտը հաղթեց և սպանեց այլազգի խափշիկին։ Սուլթանն ազատ արձակեց Լիպարիտին և մեծ նվերներով հոռոմոց երկիրն ուղարկեց։ Լիպարիտն եկավ Կոստանդնուպոլիս և Մոնոմախ կայսրը, տեսնելով նրան, շատ ուրախացավ ու մեծամեծ ընծաներ տալով, ճամբեց տուն՝ կնոջ և որդիների մոտ[69]։

Հույների պարտությունը էլ ավելի պարզ է երևում Իբն ալ-Ասիրի հետևյալ վկայությունից։

Սույն 440 թ. [=1048/9] Իբրահիմ Յաննալը ռազմերթի ելավ հոռոմների դեմ, պարտության մատնեց նրանց և վերցրեց ավար։ Բանն այն է, որ նրա մոտ Տրանսոքսանիայից եկել էին բազմաթիվ ուժեր, բայց նա նրանց ասաց հետևյալը. «Իմ երկիրը չի կարող ձեզ տեղավորել և բավարարել ձեր կարիքները, ուստի ես խորհուրդ եմ տալիս ձեզ արշավանքի ելնել ընդդեմ հոռոմների, պատերազմել հանուն Աստուծո և վերցնել ավար։ Ես կգամ ձեր ետևից և կօգնեմ այդ բանում»։ Նրանք այդպես էլ արին՝ արշավանքի ելան նրանից առաջ, իսկ նա գնաց նրանց ետևից։ Եվ հասան նրանք մինչև Մանազկերտ, Արծն, Կարին քաղաք, Տրապիզոն և բոլոր մյուս տեղերը։ Նրանց դեմ եկավ մեծ զորաբանակ 50000 հոգուց՝ հոռոմներ և արխազներ։ Եվ սկսվեց նրանց միջև ուժեղ պատերազմ և տեղի ունեցան մի քանի մարտեր, որոնց ընթացքում հաղթանակում էր թե մեկ և թե մյուս կողմը։ Բայց վերջ ի վերջո հաղթությունը տարան մահմեդականները, որոնք կոտորեցին շատ հոռոմներ,

67 Մ. Ուռհայեցի, էջ 108։

68 Նույն տեղում։

69 Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 109։ (Աշխարհաբար թարգմանությունները վերցրած են Մ. Ուռհայեցու «ժամանակագրության» Հրաչ Բարթիկյանի թարգմանությունից, Երևան, 1973, էջ 71—73)։

դարձրին նրանց ի փախուստ և գերի վերցրին մեծ թվով նրանց պատրիկներին։ Գերիների թվումն էր նաև արխազների թագավորը, «Կարիթը» (=Լիպարիտը), որն առաջարկեց իր համար իբրև փրկանք 300000 դինար և նվերներ 100000 դինարի, բայց Յաննալը չհամաձայնվեց։ Սա շարունակեց ավերել և կողոպտել այդ երկիրը, մինչև որ իրենց ու Կոստանդնուպոլսի միջև մնաց 15 օրվա միայն տարածություն։ Մահմեդականները այդ շրջանները գրավեցին, կողոպտեցին նրանց, առան ամեն ինչ և գերի վերցրին ավելի քան 100000 մարդ. նրանք վերցրել էին այնպիսի մեծ քանակությամբ գրաստներ, ջորիներ, ավար և գույք, որն անկարելի էր հաշվի առնել։ Ասում են, որ ավարը տարել էին տասը հազար սայլի վրա և որ ավարի այս թվի մեջ էին նաև 10000 վահաններ»[70]։

Կապուտռուի ճակատամարտից հետո տեղի ունեցած դեպքերի՝ Լիպարիտի գերությունից ազատվելու և Բյուզանդական կայսր Մոնոմախի և Տուղրիլ սուլթանի միջև տեղի ունեցած բանակցությունների ու կնքված զինադադարի մասին իրար հակասող տեղեկություններ կան հայկական, վրացական, բյուզանդական, ասորական և արաբական աղբյուրներում։

Հատկապես պետք է նշել Ստեփանոս Օրբելյանի հաղորդումը Լիպարիտի ճակատագրի մասին։ Ինչպես տեսանք վերոհիշյալ վկայություններում, թեև Մ. Ուռհայեցին գովասանքով է խոսում Լիպարիտի քաջության մասին, սակայն Արիստակես Լաստիվերտցին Կապուտռուի ճակատամարտը կատարյալ պարտություն էր համարում բյուզանդական և վրաց-հայկական զորքերի համար։ Ի հակադրություն այդ վկայությունների, Ստեփանոս Օրբելյանը գովերգելով իր նախնիների փառքն ու քաջագործությունները՝ Լիպարիտին է վերագրում ճակատամարտի բոլոր հաջողությունները։ Նրա ասելով վրացի դիդեբուլները նախանձելով Լիպարիտին կտրում են նրա ձիու սանձը և գերի ընկնելուց հետո տեղնուտեղը սպանում են Լիպարիտին[71]։ Հասկանալի է, որ Ստեփանոս Օրբելյանը կերպարանափոխելով Լիպարիտի գերությունը, նրան փառաբանում է ողբերգությամբ վերջացող մի պատմվածքով։ Լիպարիտի մասին գրել են այլ հեղինակներ նրան համեմատելով Հոմերոսի հերոսի հետ։

Վարդան Վարդապետը թեև սխալմամբ Կապուտռուի ճակատամարտում Լիպարիտի գերությունը պատմում է 1044—1045 թվականների

70 Ибн ал-Асир, стр. 116. (Թարգմանությունը Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., էջ 46)։

71 Տե՛ս Ս. Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 375։

տակ, այնուամենայնիվ, նրա պատմվածքը Լիպարիտի քաջության մասին հետաքրքիր լինելով բերում ենք ամբողջությամբ «Որ և առնու ընդ իւր (իմա Լիպարիտը—Ս. Բ.) զԱպիրատն զիշխանն Վրաց և այլ ևս երկու Մաժիստրոսս, և երթայ ընդդէմ Բրեհիմայ զօրագլխի Տուղրիլ բէգ սուլտանին, ուր ըմբռնեցաւ Լիպարիտն և ածաւ առ սուլտանն և առաքեաց առ նա դաւանել, զհաւատ նորա[72]։ Եւ պատասխանեալ եթէ իբրև տեսից զերեսս քո՝ առնեմ զոր հրամայես[73]։ Եւ իբրև ետես ասէ։ Յորժամ եղէ արժանի տեսանել զքեզ՝ ոչ արարից զկամս քո և ոչ երկեայց ի մահուանէ. և ասէ սուլտանն. Զի՞նչ կամիս, և նա ասէ. եթէ վաճառական ես ծախեա զիս, և եթե դահիճ՝ սպան իս, իսկ եթէ թագաւոր ես, պարգևօք ազատեա զիս։ Եւ ասէ սուլտանն. Ոչ գնոյ քո վաճառական և ոչ արեան քո դահիճ կամիմ լինել, այլ թագաւոր եմ, երթ ուր և կամիս, և արձակեաց զնա պարգևօք։ Եւ զի կայսրն խնդրէր զնա, շոգաւ առ նա, և առեալ ի նմանէ զօրս. եկն ի վիրս և կալեալ զթագաւորն Բագրատ յղեաց զնա առ կայսր և ինքն կալաւ զերկիրն ամենայն[74]։

Ի տարբերություն հայկական աղբյուրների, բյուզանդական, ասորական և արաբական մատենագրական աղբյուրները, Լիպարիտի գերությունից ազատման հարցը առնչում են բյուզանդա-սելջուկյան հաշտության բանակցությունների հետ։

Բյուզանդա-սելջուկյան հաշտության բանակցությունները և Հայաստանի տարածքի վրա զինադադարն ու խաղաղ ռազմական գործողությունների բացակայությունը թելադրված էր երկու կայսրություններում ստեղծված ռազմաքաղաքական դրությունից։

50-ական թվականների սկզբներին Բյուզանդիան չէր կարող ձեռնարկել ռազմական խաղաղ գործողություններ իր արևելյան սահմաններում, քանի որ նա ստիպված էր բանակների մեծ մասը տեղափոխել արևմուտք՝ Բալկանյան թերակղզի, Պաժինակների՝ (Պեչենեգների) մի-

72 Անհեթեթություն պետք է համարել թուրք պատմաբան Կրզի-օղլուի այն պնդումը, որ իբր թե Լիպարիտը ազգությամբ եղել է թուրք և այդ պատճառով էլ Տուղրիլը նրան ազատ է արձակել։ Տե՛ս M. F. Kirzioglu, Kars Tarihi, cilt I, Istanbul, 1953, p. 326.

73 Ինչպես վերևում նշեցինք, Մ. Ուռհայեցին ասում է, որ Լիպարիտը գերի ընկնելուց անմիջապես հետո ներկայանում է Տուղրիլ սուլթանին, որը հավանական չէ, քանի որ սուլթանը այդ ժամանակ գտնվում էր Խորասանի Ռեյ մայրաքաղաքում։ Նա սուլթանին ներկայացավ ավելի ուշ, ինչպես վկայում է Վարդան Վարդապետը։

74 Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան լուսաբանեալ ի Վենետիկ, Ս. Ղազար, 1862, էջ 99—100։

ջինասիական մի այլ վայրագ ցեղի դեմ՝ որը կողոպտում ու քանդում էր ամբողջ Բալկանյան թերակղզին։ Կայսրությանը հաջողվեց 1051 թ. հաղթել և հեռու քշել բարբարոս թշնամուն[75]։

Մյուս կողմից Պարսկական Իրաքում և հատկապես Հայաստանում ձեռք բերած մեծ քանակությամբ գերիները, անասուններն ու հարուստ ավարը ուռճացրին թուրքմեն առաջնորդներին, որոնք, Իբրահիմ Յաննալի և Գթլմուշի գլխավորությամբ, զոռոզանալով իրենց հաղթանակներով, դիմեցին ապստամբության ընդդեմ Տուղրիլի[76]։ Նրանք հրաժարվեցին Համադանն իր շրջակայքով հանձնել նրան և ձգտում էին ինքնուրույնություն ձեռք բերել և Յաննալին դարձնել իրենց սուլթանը։ Իհարկե, Տուղրիլին հաջողվեց ճնշել այդ ապստամբությունը 1050 թ. և այնուհետև Իբրահիմ Յաննալի հետ զբաղվել սուլթանության ամրապնդմամբ։ Անկախ այն բանից, թե ինչպես կվերջանար բյուզանդական կայսրի հետ 1049 թ. սկսված հաշտության բանակցությունները, Տուղրիլը նույնպես ստիպված էր մոտավորապես 4 տարի դադարեցնել արշավանքները կայսրության դեմ, մանավանդ, որ մի կողմից նա զբաղված էր թուրքմենների ապստամբության ճնշմամբ, մյուս կողմից սուլթանի ամենագլխավոր նպատակն էր գրավել Բաղդադը՝ բոլոր հավատացյալների խալիֆայի նստավայրը։

Արաբական աղբյուրները նշելով հանդերձ ստեղծված դրության օբյեկտիվ պայմանները, մյուս կողմից տիրող համեմատական դադարն ու խաղաղությունը՝ վերագրում են սուլթան Տուղրիլի դիվանագիտության հաջողությանը և Բյուզանդական կայսրության թուլությանը։

Հեղինակների մոտ խառնաշփոթության գլխավոր պատճառ պետք է համարել նաև այն, որ 50-ական թվականներին երկու անգամ փորձ է կատարվել հաշտություն կնքել երկու կայսրությունների միջև, որը ոչ թե պայմանավորված էր միայն վերոհիշյալ պայմաններով, այլև այն պատճառով, որ սելջուկյան սուլթանը ուզում էր գրավել Բաղդադը, զորավիգ կանգնել Աբբասյան (սյունների) խալիֆայության և այնուհետև գլխավոր հարվածը ուղղել Եգիպտոսի Ֆաթիմյան խալիֆայությանը և դրանով տեր դառնալ Մերձավոր և Միջին Արևելքի մահմեդական երկրներին։ Հետևապես բյուզանդա-սելջուկյան բանակցությունների հաջողությունը պետք է ժամանակավորապես խաղաղություն ապահովեր Սելջուկյան կայսրության բյուզանդական սահմաններում, որպեսզի սուլ-

75 Մ. Ուռհայեցի, էջ 109, ըստ Ուռհայեցու «Պաժինակ», Ս. Սպարապետ, էջ 45—47։

76 С. Г. Агаджанов, Очерки, стр. 216—217.

թանը կարողանար իր գլխավոր հարվածը ուղղել Ֆաթիմյան Եգիպտոսի դեմ։ Սրանով պետք է բացատրել հաշտության բանակցություններում ստեղծված դժվարությունները, քանի որ սուլթանը պահանջում էր, որ վերջ տրվեր, դեռևս 1027 թ. Կոստանդին կայսրի և Ֆաթիմյան խալիֆա ալ-Զահիրի միջև կնքված այն պայմանագրին, որտեղ նշված էր, որ վերջինի անունը պետք էր հիշվել այն աղոթքներում՝ խութբաներում, որոնք այնուհետև կկարդացվեին կայսրության սահմաններում գտնվող մզկիթներում։ Այս հանգամանքը, Կոստանդինի կողմից Ֆաթիմյան խալիֆայության պաշտոնական ճանաչումն էր նշանակում։ Մյուս կողմից, որպես հատուցում, խալիֆան թույլ էր տալիս վերակառուցելու Ս. Հարությունն տաճարը Երուսաղեմում, որը կործանված էր ալ-Զահիրի հոր՝ Հաքիմի կողմից 1009 թվականին։ Միաժամանակ խալիֆան թույլ էր տալիս ուժի ենթարկման տակ մահմեդական դարձող հավատացյալներին հավատափոխվել և նորից քրիստոնյա դառնալ[77]։

Հետագայում, 1054—1055 թթ. մի դաշինք է կնքվում Մոնոմախի և Ֆաթիմյան խալիֆի միջև։ Ընդ որում, այն ժամանակ, երբ սով էր տիրում Ասորիքում, Մոնոմախը հանձն առավ մեծ քանակությամբ հացահատիկ արտահանել Ասորիք, դրա փոխարեն խալիֆան կայսրին նվիրեց մի փիղ և մի ընձուղտ[78]։

Բյուզանդական կայսրության հարաբերությունները լավ էին նաև Բաղդադի խալիֆայության հետ։ Հետևաբար բյուզանդա-սելջուկյան հարաբերությունները միահյուսվում էին բյուզանդա-եգիպտական և սելջուկ-եգիպտական հարաբերությունների հետ։

Մի կողմից պածինակների (պեչենեգների) ահարկու գրոհների ենթման տակ, մյուս կողմից Լիպարիտ Օրբելյանին գերությունից ազատելու-պատրվակով, բյուզանդական կայսրը, նախկինում բյուզանդական կայսրության, այժմ սելջուկյան սուլթանության ենթակա Դիարբաքրի մրվանյան ամիրա Նասիլ ալ Դաուլայի միջնորդությամբ՝ հաշտության բանակցություններ սկսեց Տուղրիլ բեգի հետ։ Տուղրիլի համաձայնությամբ բյուզանդական պատվիրակ Գեորգ Դրոսոսը Նասիր-ալ-Դաուլայի ներկայացուցիչ՝ Շայխ ալ-Իսլամ Աբու-Աբդ-ալլահ Իբն Մրվանի ուղեկցությամբ ուղևորվեց սելջուկյան մայրաքաղաքը՝ Ռեյ։ Աղբյուր-

[77] *G. Schlumberger*, l'Épopée, p. 611—612. *Makrizi*, Histoire des sultans Mamelouks, t. I, p. 224.

[78] Նույն տեղում։

ները հաղորդում են, որ կայսրը բացի խոշոր փրկագնից սուլթանին ուղարկել էր նաև «Հին դարերում նմանը չունեցող» թանկագին նվերներ։ Հազար թոփ մետաքսյա գործվածք, հինգհարյուր տեսակ թանկարժեք հագուստ, հինգ հարյուր գլուխ ձի և ջորի, երեք հարյուր գլուխ եգիպտական գրաստ, հազար գլուխ եզ և այծ, հարյուր կտոր արծաթյա ամաններ և երկու հարյուրհազար (ոսկի) դինար[79]։

Կայսրի պատվիրակը լիազորված էր հաշտության պայմանագիր ապահովել բանակցությունների միջոցով։ Ինչպես երևում է աղբյուրների վկայությունից, թեև չի հաջողվում կնքել այդպիսի մի պայմանագիր, սակայն Տուղրիլ բեգը իբր թե ցույց տալով առատաձեռնություն և մեծահոգություն, ազատում է Լիպարիտին գերությունից և մեծ նվերներով ուղարկում՝ կայսրին, այնուհետև Լիպարիտին է հանձնում այն փրկագինը, որ կայսրը ուղարկել էր Տուղրիլին ասելու. «Այսուհետև լինենք բարեկամներ, դադարեցրու կռիվը թուրքերի դեմ»[80]։ Սա անշուշտ նշանակում էր, որ Լիպարիտը խոստացել էր այլևս զենք չվերցնել սուլթանի դեմ։

Ըստ աղբյուրների հաղորդման, սրանով չի ավարտվում հաշտության բանակցությունները։

Սկիլիցայի[81] համաձայն կայսրի պատվիրակ Գ. Դրոսոսը շարունակում է բանակցությունները Կոստանդնուպոլսի ճանապարհին իրեն ուղեկցող սուլթանի ներկայացուցիչ՝ Շերիֆ Նասր Իբն Իսմայիլի գլխավորած պատվիրակության հետ։ Վերջինս ներկայանում է կայսրին և պահանջում տարեկան հարկ վճարել սուլթանին, որը մերժվում է կայսրի կողմից, և Շերիֆը ձեռնունայն վերադառնում է սուլթանի մոտ[82]։

Սակայն, ըստ Աբուլ-Ֆարաջի, որը Կապուտոու ճակատամարտում թուրքերին վերագրում է կատարյալ հաղթանակ, կայսրը ոչ միայն 30000 դինար փրկագին և 100000-ի արժողությամբ նվեր է ուղարկում սուլթանին, այլև համաձայնվում է թանկարժեք նվերներով ապահովել Օմայանների ժամանակ Մասլամա Իբն Աբդ ալ-Մալիքի կառուցած մզկիթի և մինարեթի վերանորոգման ծախսերը և հրաժարվելով Ֆաթիմյան շիի խալիֆայության հետ 1027 թ. կնքած դաշինքից, դադարեցնում է

[79] *Gregory Abul Faraj*, Bar Hebraeus, Chronography, translated by W. Budge, London, 1932, p. 206. *(Այսուհետև Abul Faraj)*.

[80] *G. Schlumberger*, l'Épopée, p. 206—207. *M. Brosset*, Additions, p. 225.

[81] Նույն տեղում։

[82] *J. Laurent*, Byzance et les Turcs Seldjoucides jusqu'en 1081, Nancy, 1913, p. 97. Minorsky Studies, p. 63.

Ֆաթիմյանների անունով կարդացվող խութբան, և այն այնուհետև կարդացվում է Աբբասյան խալիֆայի և Տուղրիլ սուլթանի անունով[83]։

Մահմեդական աղբյուրների և Աբու-լ-Ֆարաջի տեղեկությունների համաձայն, 1049—1050 թթ. կնքվեց հաշտության պայմանագիր։ Արդի թուրք պատմաբան Օսման Թուրանը թեև կասկածանք է հայտնում այդպիսի մի պայմանագրի գոյության մասին, սակայն հենվելով միայն կայսրի 1051 թ. Բաղդադի խալիֆայությանն ուղարկած նամակի բովանդակության վրա, որտեղ կայսրը իր սիրալիր վերաբերմունքը Բաղդադի խալիֆա Աբու Ջաֆար Ղայիմին հայտնելուց հետո հաղորդում է թե ինքը խզել է հարաբերությունները Եգիպտոսի Ֆաթիմյան խալիֆայության հետ և այսուհետև ճանաչում է միայն Աբբասյանների խալիֆայությունը, եզրակացնում է, որ նրան պետք է նախորդած լիներ 1050 թ. հաշտության պայմանագիրը[84]։ Այստեղ պետք է նշել, որ Օսման Թուրանի հիշատակած վերոհիշյալ նամակը կրում է ոչ թե 1051 թվականը, այլ 1055 թ.[85] և որ այդ նամակն ու տարեկան հարկերը ուղարկված էին ոչ Մոնոմախ կայսրի՝ այլ նրան հաջորդող Թեոդորա կայսրուհու կողմից[86]։

Արդի թուրք մի այլ պատմաբան՝ Ֆարուք Սումերը 1966 թ. Օքսֆորդում կայացած բյուզանդագետների 13-րդ կոնգրեսին հղած իր հաղորդման մեջ փորձում է արդարացնել Տուղրիլ բեգի ժամանակաշրջանում տեղի ունեցած բյուզանդա-սելջուկյան հակասությունների պատճառները և հաշտության պայմանագրի ձախողումը, գրում է. «1047—1048 թթ. արշավանքներին հաջորդող շրջանում բանակցություններ վարվեցին հաշտության համար։ Այդ պայմանագիրը չկնքվեց, որովհետև թուրքական (իմա—սելջուկյան—Ս. Բ.) պատվիրակներին պատվիրված էր պնդելու, որ Բյուզանդիան պետք է տարեկան հարկ վճարեր Սուլթանին (իմա—Տուղրիլ բեգին—Ս. Բ.), թեև Կոստանդնուպոլսի մզկիթը վերանորոգվեց (բյուզանդական կայսրի հաշվին) և Խութբան կարդացվում էր սուլթանի անունով»[87]։ Այնուհետև Սումերը ասում է. որ «Մենք չենք կարող քննադատել Տուղրիլ բեգին այն բանի համար, որ չհաջողվեց կնքել

[83] *Abul Faraj*, p. 206—207. Տե՛ս նաև «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1963, էջ 215։

[84] *O. Turan*, Selçuklular tarihi, p. 78.

[85] *G. Schlumberger*, l'Épopée, p. 512.

[86] *M. Brosset*, Additions, v. 2, p. 59. Տե՛ս նաև Ա. Լաստիվերտցի, էջ 96։ *M. Yinanc*, p. 48.

[87] *F. Sumer*. նշվ. ժողովածուն, էջ 141։

հաշտության պայմանագիր, որովհետև նա չէր դիմադրել իր ժողովրդի (իմա՝ թուրքմեն օղուզների Ս. Բ.) ավարառական նվաճողական նկրտումներին։ «Այն պատճառով, որ շարունակում է Ֆ. Սումերը, օղուզ ցեղախմբերի թիվը այնքան էր շատացել բյուզանդական սահմանի երկայնքով, այնպիսի կարճ ժամանակաշրջանում, որ մի շարք սելջուկյան իշխաններ ուղարկվեցին այդ վայրերը նրանց (իմա—թուրքմեններին—Ս. Բ.) գործողություններին հսկելու և կազմակերպելու նրանց հարձակումներն ու արշավանքները»[88]։ «Իրականության մեջ,— ասում է Ֆ. Սումերը,— Իբրահիմ Յաննալի գլխավորությամբ (1050 թ.) Օղուզ ցեղերի Տուղրիլ բեգի դեմ ապստամբության գլխավոր պատճառներից մեկը՝ Տուղրիլ բեգի կողմից սկսված Միջագետքյան արշավանքներն էին»[89]։ Հետևաբար, թեև 1049—1050 թթ. տեղի ունեցող բանակցությունները վերջացան առանց պայմանագրի կնքման, սակայն, ինչպես նշվեց վերևում, երկու կողմերն էլ զբաղված լինելով իրենց երկրի ներքին և արտաքին գրության ամրապնդմամբ չկարողացան խոշոր ռազմական գործողություններ կատարել 1049—1053 թթ.։ Այս թվականներին սելջուկ թուրքերի կողմից կատարվող ռազմական գործողությունները շարունակում էին կրել ավարառական բնույթ։ Բյուզանդիան Կապուտռու ճակատամարտից հետո ձեռնարկեց փոքր չափի ռազմական գործողությունների, մի կողմից՝ պատժելու համար Դվինի և Գանձակի Շադդադյան ամիրայությանը և մյուս կողմից՝ շարունակելու իր հայատյաց քաղաքականությունը. քաղաքական ասպարեզից վերացնելով հայկական փոքր իշխանությունների մնացորդներին։

Հայտնի է, որ 1045 թ. Անին Բյուզանդական կայսրության կողմից գրավվելուց հետո Կայսրությունը անմիջականորեն հարևան դարձավ Դվինի Շադդադյան ամիրայությանը։ Թեև Անիի բյուզանդական կառավարիչ Միքայել Ասիտի, զորահրամանատար Նիկողայոս Ներքինու, Վահրամ Պահլավունու և Լիպարիտ Բաղվիվաշու հրամանատարության ներքո կատարված մեծ արշավանքը 1045 թ. ավարտվեց անհաջողությամբ, սակայն 1047 թ. Բյուզանդիային հաջողվեց գրավել բոլոր այն վայրերը՝ Սուրբ Մարին (հետագայում կոչված՝ Սուրմարի կամ Սուրմալու), Ամբերդը, Ծիծեռնակաբերդը (Երևանի մոտ) և այլ վայրեր, որոնք Շադդադյանները Գագիկ Բ-ից էին խլել։ Հենց այս ժամանակ Կ. Պոլսում ծագած Լևոն Թոռնիկիոսի (Տարոնի Բագրատունիներից)

[88] Նույն տեղում։

[89] Նույն տեղում։

ապստամբությունը ստիպեց Կոստանդին կայսրին հաշտություն կնքել այն պայմանով, որ Դվինի ամիրան կայսրության հպատակ համարվի, սակայն Դվինի հաջող դիմադրությունը փաստորեն կանգնեցրեց կայսրության առաջխաղացումը Հայաստանում, որովհետև այդ դեպքում Բյուզանդիան բնականաբար կշարունակեր իր հաղթական առաջընթացը դեպի Տաշիր-Զորագետ, Սյունիք և Խաչեն[90]։ Սակայն ինչպես տեսանք, Բյուզանդիայի հետագա առաջխաղացման իսկական արգելքը հանդիսացան սելջուկները։ Շադդադյանները դրկաբաց ընդունեցին սելջուկներին, որպես բյուզանդիական սպառնալիքից ազատվելու մի ազդու միջոց։

Կապուտտուի ճակատամարտից հետո ստեղծված դադարի պայմաններում, երբ Տուղրիլ բեգի հետ տեղի ունեցած բանակցությունները շոշափելի արդյունք չտվեցին, կայսրությանը մնում էր հոգ տանել իր արևելյան սահմանների պաշտպանությանը։ Բյուզանդիան օգտվելով սելջուկյան սուլթանության մեջ ծագած ներքին խռովություններից, որոշեց հաշվեհարդարի ենթարկել և պատժել Շադդադյան ամիրայությանը, և Նիկեփոր Ներքինու հրամանատարության ներքո ևս մի արշավանք ուղղեց Շադդադյան Աբու-լ-Ասվարի դեմ[91], պատրվակելով, որ վերջինս մոռացության էր տվել իր այն պարտավորությունները, որոնք սահմանված էին Բյուզանդիայի հետ կնքված դաշնագրությամբ։

Նիկեփոր Ներքինու հրամանատարության ներքո կատարված այս արշավանքի տարեթվի և հետապնդած նպատակի ճշգրտմամբ զբաղվել էն մի շարք հետազոտողներ։ Մեզ ավելի հավանական է թվում Վ. Մինորսկու այն ճշգրտված կարծիքը, որ արշավանքը տեղի է ունեցել 1049—1050 թթ[92]։ Է. Հոնիգմանը այս արշավանքը զետեղում է ավելի ուշ (մոտավորապես 1055—1056 թթ.), որը հավանական չէ[93]։

Արշավանքի հետապնդած նպատակի մասին պարզ ասված է Սկիլիցայի և նրանից վերարտադրող Կեդրենոսի վկայություններում։ Սկիլիցան ասում է, որ Մոնոմախը խիստ մտահոգված Թուրքական սպառնա-

90 Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 212—213։

91 Տե՛ս M. Brosset, Additions, հ. 1, p. 323. E. Honigmann, Die Ostgrenze des byzantinischen Reiches von 363 bis 1071, Bruxelles, 1935, p. 182. G. Schlumberger l'Épopée, p. 595, Լեո, Հայոց պատմություն, հ. 2, էջ 703—704։ V. Minorsky, Studies, pp. 59—64. Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 213, M. Yiranç, նշվ. աշխ., էջ 48։

92 V. Minorsky, Studies, pp. 59—64.

93 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 213։

լիքով, միաժամանակ ցանկանալով պատժել Դվինի ամիրային իր ուխտադրժության համար, այսինքն՝ այն բանի համար, որ վերջինս սատարում էր սելջուկ-թուրքական Հայաստանի և Վրաստանի տարածքում ծավալվող ասպատակություններին, վերամիավորեց արևելյան բանակի մնացած զորաբաժինները և այն դրեց Նիկեփոր Ներքինու հրամանատարության ներքո։ Վերջինս ուղղակի գրոհեց Թշնամու վրա, խորացավ Դվինի տարածքում, վերցրեց ոչ միայն Գանձակը, այլև հասավ նույնիսկ երկաթե դռներին (Դերբենդին), չհանդիպելով թուրքերին[94]։ Վերջիններս տեղավորվել էին Վասպուրականի դաշտերում՝ Գելմուշի եղբոր Աբու-Մալիքի հրամանատարության ներքո։ Թուրքերը իմանալով, որ բյուզանդական հսկա մի բանակ հարձակվելու է նրանց վրա, նահանջեցին դեպի Արևելք։ Դվինի ամիրան վախենալով բյուզանդական բանակից, ստիպված եղավ լքել իր ամիրայության տարածքը և ապաստանեց Դվինի բարձր պարիսպների հետևում։ Նա ստիպված է լինում ենթարկվել և ընդունել հին պայմանագրերի վերանորոգումը, որպես երաշխիք և պատանդ կայսրին է հանձնում իր եղբոր՝ Գանձակի Փատլուն ամիրայի որդուն՝ Արտաշիրին (Արտասիրոսին)։ Վերջինս Նիկեփոր Ներքինու հետ վերադարձավ Կ. Պոլիս[95]։ Թեև Գ. Շլումբերժերը կասկածանքի է ենթարկում Սկիլիցայի այն վկայությունը, որ Նիկեփորի արշավանքը միաժամանակ ուղղված էր թուրքերի դեմ, սակայն պետք է նշել, որ վրացական ժամանակագիրը, Նիկեփորի արշավանքը անմիջապես կապում է սելջուկ-թուրքերի հետ, ասելով,—թուրքերը, որոնք կանգնած էին Գանձակի առաջ և այն գրավելու վրա էին, երբ Կայսրը Նիկեփոր Ներքինու հրամանատարությամբ մի խոշոր բանակ ուղարկեց Արևելք և միաժամանակ ուղերձով դիմեց Բագարատ Դ-ին՝ զորքով ներկայանալու Նիկեփորին։ Բագարատ Դ-ը հույների հետ կողք-կողքի արշավեց թուրքերի դեմ։ Երբ նրանք հասան Գանձակի դարպասի առաջ, թուրքերը նահանջեցին և այսպիսով Գանձակի շրջանը ազատագրվեց թուրքերից, հույները խաղաղությամբ վերադարձան[96]։

Արաբական աղբյուրներից Վ. Մինորսկին վկայակոչում է Ջամի ալ-Դուալ երկի հեղինակ Իբն Շադդադին, Ալ-Ազիմին[97] (1090—1161)

94 „Georgius Cedrenus Ioannis Scylitzae ope", Bonnae, II, 1839, pp. 593—594.

95 G. Schlumberger, l'Épopée, p. 611—612.

96 M. Brosset, նշվ. աշխ., հ. 1, էջ 323։

97 Վ. Մինորսկին ասում է, որ Կ. Պոլսում եղած ժամանակ Մ. Յրնանցիի օգնու-

և Իբն Գուքմաքին, որոնցում, ասում է Մինորսկին, «որոշ չափով շղարշված ակնարկվում է Գանձակի վրա կախված բյուզանդական վտանգի մասին»[98]։ Կարևոր են վերջին երկու աղբյուրները, որտեղ, բացի Կապուտաուի ճակատամարտի և Լիպարիտի գերության վերաբերող հատվածից, նշվում է նաև Գթլմուշի կողմից՝ 1047 թ. ապատած Գանձակի երկարատև պաշարման և Գանձակի Շադդադյան ամիրա՝ Լաշքարիի կողմից պարտություն կրելու փաստը[99]։

Մեր կարծիքով կասկածանքով պետք է վերաբերվել այդ տարիներին Գթլմուշի կողմից Գանձակը պաշարման ենթարկելու մասին եղած վկայությունը, քանի որ աներկբայելի է հայկական և արաբական հավաստի աղբյուրների այն վկայությունները, որ սելջուկյան առաջին խոշոր արշավանքի գլխավոր հրամանատար՝ Իբրահիմ Յաննալին ուղեկցում էր նաև Գթլմուշը։ Ավելի հավանական է աղբյուրների այն վկայությունը, որ Ատրպատականում թուրքմենական ջոկատներին գլխավորող Գթլմուշի եղբայր Աբու-Ալ-Մալիքին բաժին էր ընկնում ավարառության ենթարկել հարուստ և բարգավաճ Գանձակը, սակայն վերջինս, ինչպես նշեցինք վերևում, լսելով Նիկեփորի գլխավորությամբ արշավող բյուզանդական բանակի ահարկու ուժի մասին, նահանջել էր Պարսկաստան։ Հետևաբար պետք է եզրակացնել, որ Նիկեփոր Ներքինու արշավանքը տեղի էր ունեցել բյուզանդա-սելջուկյան բանակցությունների ձախողությունից հետո, քանի որ բյուզանդական կայսրին չէր մնում այլ բան, քան՝ մտահոգվել իր արևելյան սահմանների ուժեղացմամբ ու ամրապնդմամբ։

Այն ժամանակ, երբ Կայսրության արևելյան սահմաններում տեղի էր ունենում արյունալի դեպքեր, հարաբերականորեն խաղաղ վիճակ էր հարավային սահմաններում՝ Ասորիքի և Միջագետքի կողմից, քանի որ այդ շրջանները ասպատակող արաբական ամիրայությունները թուլացել էին։ Վերջիններս հաճախ հարձակման էին ենթարկվում սելջուկների կողմից։ Այդ շրջաններում դեռևս իրենց գոյությունն էին պահպանում հայկական մանր իշխանությունները, որպես Բյուզանդիայի վասալներ։ Դրանցից էր Պաղինի հայ իշխանությունը՝ Արղնի կենտրոնով։

Բյուզանդիան ահաբեկված սելջուկյան արշավանքներից թեև որոշ չափով մեղմացրել էր իր հարկային ու վարչական քաղաքականությունը

թյամբ անձամբ ստուգել է Ալ-Ազիմիի ձեռագիր երկը։ Տե՛ս V. Minorsky, Studies, p. 62.

98 V. Minorsky, Studies, p. 62.

99 Նույն տեղում։ Տե՛ս նաև M. Yinanç, p. 46.

հայերի նկատմամբ, սակայն, դեռևս գաղտագողի շարունակում էր իր ոտնձգությունները հայ իշխանների ինքնուրույնության դեմ։ Ուստի, սելջուկյան առաջին խոշոր արշավանքներից հետո փոխանակ հենվելու հայկական ռազմական ուժի և դիմադրողականության վրա, որոշեց վերջ տալ նաև Պաղինի գավառի հայ իշխանների ինքնուրույնությանը և դրանով խոցելի դարձրեց իր հարավային սահմանները թուրքական հետագա արշավանքների առաջ։ 1051 թ. Կոստանդին Մոնոմախ կայսրը, որը հայ ժողովրդի թշնամին էր, անսալով բանսարկուներին, որ իբրև թե Պաղինի Հաբել իշխանի չորս որդիները ապստամբելու են Կայսրության դեմ, մի բանակ է ուղարկում Պետրոս Կատապանի գլխավորությամբ։ Վերջինս խարդախ միջոցներով ձերբակալելով հայ իշխաններին՝ տանում է Կ. Պոլիս և դրանով վերջ է դրվում Պաղինի հայկական իշխանությանը[100]։ Սակայն Մոնոմախին հաջորդած Թեոդորա կայսրուհին 1055 թ. աքսորից ազատեց հայ իշխաններին և ուղարկեց Պաղին, վերականգնեց նրանց որոշ իրավունքները, ցանկանալով ուղղել նախորդի սխալը։

Թեև սելջուկյան բանակները 1050—1052 թթ. խոշոր արշավանքներ չկատարեցին Անդրկովկաս և Հայաստան, սակայն այդ տարիներին ստեղծվում էին նախադրյալներ առաջիկա ներխուժումների համար։ Թուրքմենները ցեղախմբերով արոտավայրերի հետքերով գաղթում էին Իրան և ապա ողողում պարսկական Իրաքը։ Վերջինիս բնակչությունը ահաբեկված նրանցից փախչում է Բաղդադի կողմերը։ Խալիֆան բողոքում է Տուղրիլ բեգին։ Վերջինս արգելում է նրանց հոսքը դեպի Իրաք և հրամայում է Ատրպատականի վրայով շարժվել Հայաստան։ Պետք է նշել, որ թուրքմենների շարժման ուղղության փոփոխումը կապված էր նաև վրացիների կողմից 1051—1052 թթ. դեպի Տփղիս և Գանձակի ամիրայությունների դեմ կատարած արշավանքների հետ։

Այսպիսով, 1053—1054 թթ. վերջանում էր ժամանակավորապես հարաբերականորեն ստեղծված զինադադարը, և այս տարիներից սկսած ոչ միայն նկատվում է ռազմական գործողությունների աշխուժացում թուրքմենական ավարառու ջոկատների և Տուղրիլ բեգի դեմ ապստամբող սելջուկյան տան անդամ առաջնորդների՝ Յաննալի և Գթլմուշի կողմից, այլև 1054 թ. Տուղրիլ բեգի գլխավորությամբ կատարվում է խոշոր արշավանք Հայաստանի տարածքի վրա։

Թեև վերևում նշեցինք, որ այս շրջանում կատարվող արշավանքների

---

100 Մ. Ուռհայեցի, էջ 110։ Ս. Սպարապետ, էջ 48, Մ. Չամչյան, հ. Բ, էջ 951—953։

դրդապատճառը թուրքմենական խոշոր ցեղախմբերի Իրանի արոտավայրերի հետքերով գաղթն էր դեպի Ատրպատական, սակայն այդ արշավանքների հիմնական պատճառը պետք է համարել այն, որ Տուղրիլ բեգի գլխավոր նպատակն էր գրավել Բաղդադը, վերջ տալ այստեղ հզորացող Ֆաթիմյան Եգիպտոսի կողմնակից Շիիների ազդեցությանը, գրավել ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքը, հիմնել մի խոշոր աշխարհակալական պետություն։ Բնականաբար, նա հետապնդում էր ծավալապաշտական քաղաքականություն։ Հետևաբար, Տուղրիլ բեգը այդ նպատակին հասնելու համար պետք է ամրապնդեր դիրքերն ու երաշխավորեր իր թիկունքը, տարածելով իշխանությունը Բյուզանդիայի սահմանակից մահմեդական քրդական ծագում ունեցող Թավրիզի Ռավվադյանների, Դվինի և Գանձակի Շադդադյան ամիրայությունների վրա, սրանով նաև ամրապնդելով իր դիրքերը Բյուզանդիայի դեմ։ Նրան անհրաժեշտ էր նաև իր ձեռքում ամուր պահել թուրքմեն ցեղերի սանձը, որոնք դուրս էին եկել իր անձնական իշխանությունից և հսկողությունից, այն ժամանակ, երբ նա խիստ կարիք էր զգալու նրանց օժանդակությանը Իրաքը նվաճելու, իր հետապնդած ծրագրերի իրագործման համար։ Ընդ որում, Բյուզանդիայի դեմ Հայաստանում սկսվելիք ռազմական գործողություններին՝ սրբազան պատերազմի տեսք տալը թերևս հետապնդում էր դիվանագիտական նախապատրաստում խալիֆայության դեմ սկսվելիք առաջիկա իր նախաձեռնությունների հաջողության համար։ Մյուս կողմից՝ ինչպես կտեսնենք, այդ արշավանքի տարբեր փուլերում կատարվող ռազմական գործողությունների գլխավոր նպատակը ոչ թե միայն նվաճումն էր, այլև՝ ավարառություն կատարելով մեծ հարստություն ձեռք բերել և դրանով բավարարել թուրքմեն ցեղերի անհագ ախորժակը։

Հայ և օտար աղբյուրները թեև իրար լրացնող տեղեկություններ են հաղորդում անձամբ Տուղրիլ բեգի կողմից կատարվող արշավանքի մասին, սակայն աղբյուրներում պարզություն չկա այդ արշավանքի անմիջական դրդապատճառի և նրան նախորդող Գթլմուշի կատարած արշավանքի մասին, որի գլխավոր թատերաբեմը դարձել էր Վանանդի Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Կարսը։

Բյուզանդական և արաբական աղբյուրները հաղորդում են, որ Կարսի վրա կատարված արշավանքը գլխավորում էր Գթլմուշը։ Բյուզանդական աղբյուրները այն հաշվում են 1049, 1050 թթ. ներքո[101]։ Մ. Չամչյանը հենվելով վերջինների վրա, այն դնում է 1050 թ. տակ։ Հոնիգմանը սխալմամբ նշում է 1054—1055 թթ.[102]։ Արիստակես Լաստիվերտցին թեև չի հիշատակում Գթլմուշի անունը, սակայն Կարսի ավերումը վերագրում է 1053—1054 թվականներին[103]։

Ինչ վերաբերում է դրդապատճառներին՝ բյուզանդական աղբյուրները հաղորդում են, որ Իբրահիմ Յաննալը, փախչելով Տուղրիլի առջևից, ապաստանում է Գթլմուշի մոտ (որը նույնպես ապստամբել էր Տուղրիլ բեգի դեմ)։ Թեև Տուղրիլին հաջողվում է պարտության մատնել Իբրահիմին և գերի վերցնել նրան, սակայն Գթլմուշը մի քանի հազար հոգով փախչում է Իբերիայի սահմանները, մտնում Վանանդի Բագրատունյաց թագավորության տարածքը, պաշարում և ավերում է Կարսը[104]։ Գթլմուշը Իբրահիմի եղբայր Մալիքին ուղարկում է Կ. Պոլիս, կայսրի մոտ, «խնդրելով նրան իրեն ընդունել և համարել հռոմայեցիների (իմա բյուզանդացիների—Ս. Բ.) դաշնակիցն ու բարեկամը»։ Ինչպես նշվեց, ինքը՝ Գթլմուշն էլ գնաց Վանանդ գավառ և սպասելով Մոնոմախ կայսրի պատասխանին, պաշարեց Կարս քաղաքը[105]։

Թուրք պատմաբան Օսման Թուրանը, հենվելով միայն ալ-Ազիմիի այն վկայության վրա, որ հիջրի 445 թ. (1053—1054 թթ.) Տուղրիլ բեգի հաջիբ Գթլմուշը հարձակվեց Կարսի վրա, եզրակացնում է, որ իբր թե Գթլմուշի այս արշավանքը դիտում է որպես Տուղրիլ բեգի կողմից դրդված և դրանով ուզում է ցույց տալ Տուղրիլ բեգի հեղինակության բարձրացումը[106]։

Կարսի ավերման նկարագրությանն է նվիրված Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» 15-րդ գլուխը։ Ինչպես հայտնի է, Կարսի Բագրատունյաց թագավորությունը (որտեղ իշխում էր վերջին թագավոր Գագիկ Աբասյանը 1029—1065 թթ.) հայկական երեք թագավորություններից մեկն էր, որ դեռևս կանգուն էր մնում և չէր ենթարկվել սելջուկ-

[101] „Georgius Cedrenus Ionnis Scylitzae ope", Bonnae, II, 1839, p. 606.

[102] *Honigmann*, Ostgrenze, p. 188—189.

[103] *Տե՛ս* Ա. Լաստիվերտցի, *էջ 83։*

[104] *Ռ. Գրուսսեն քննադատաբար չվերաբերվելով որոշ աղբյուրների վկայությանը, Կարսի պաշարումը և ավերումը վերագրում է Իբրահիմ Յաննալին։ Տե՛ս R. Grousset'* Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1947, p. 594—595. *(Այսուհետև* R. Grousset).

[105] *Տե՛ս* „Georgius Cedrenus, Ionnis Scylitzae ope" Bonnae, II, 1839, p. 606. *Տե՛ս Նաև G. Schlumberger*, l'Épopée, p. 611—612. Լեո, հ. II, *էջ 704։* M. Yinanç, p. 49.

[106] *O. Turan*, Selçuklular tarihi, p. 83—84.

Թուրքական ավերածություններին։ Կարսն այդ տարիներին առևտրական աշխույժ կապեր ուներ Արծն և Մելիտինե վաճառաշահ քաղաքների հետ և այդ ժամանակաշրջանի ամենահարուստ քաղաքներից մեկն էր։ Ուստի, պատահական չէ, որ այն դառնում է նենգ ու ավարառու ոսոխի հարձակման թիրախ։ Ա. Լաստիվերտցին դառնությամբ է նկարագրում Կարսի կողոպուտն ու ավերումը։ «Քաղաքս (իմա՝ Կարս—Ս. Բ.) այս ի բազում ժամանակաց հետէ չէր գփորձ շարեաց առեալ. վասն որոյ յանհոգս և յանկասկածի կէին, հարստացեալք բազում ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ։ Արդ ի գալ մեծի յայտնութեան տեառն մերոյ, ի գիշերին՝ յորում ուրախական ձայնիւ դասք քահանայից հանդերձ բազմամբոխ ժողովրդովքն զպաշտօն աւուրն կատարէին, յանկարծակի ի վերայ հասին զօրք անօրինացն։ Եւ քանզի առանց գիշերադիտաց էր քաղաքն, մտեալ ի ներքս, սուր ի վերայ առն եդեալ, անողորմ կոտորեցին զամենեսին, որ յոյժ ողբոց արժանի է պատմութիւնս։ Քանզի օրէն է քաղաքաց ի տէրունական տօնսն բազում զարդարանօք վայելչանալ արանց և կանանց, ծերոց և տղայոց ըստ ուժոյ և ըստ կարողութեան, ըստ նմանութեան զարնանաբեր ծաղկանոցաց։ Որ և զսոսա այսպէս գտեալ, յանկարծակի վայիւք և ողբովք լի եղև քաղաքն։ Զքահանայսն ի պաշտամանցն լուեցուցին և զսաղմոսասացսն ի սաղմոսական երգոցն. հատաւ երգ օրհնութեան ի բերանոյ դպրաց և տղայոց։ Անդանօր էր տեսանել տեսութիւն ողորմագին որ զքարինս և զանշունչ արարածս անգամ շարժէր յողբս հառաչանաց, թո՛ղ թէ զզգայունս և զկենդանիս։ Մեծահարկի և պատուական վաճառականք շարաշար մահուամբ սպանեալք. երիտասարդք և ըմբշամարտք ի փողոցսն սրակոտորք. պատուական ալիք ծերոցն արիւնաշաղախ առ նոքօք անկեալք. և այսպիսօրէն գործովք սպառեցաւ քաղաքն յարանց. և թէ ոք ժամանեաց յամուրն ելանել որ ի վերայ քաղաքին կայ, նա միայն ապրեցաւ եւ մնացեալ զօրն ողջոյն ի տեղւոջն իսիլ արկեալ բրեցին զտունսն, և ապա հուր հարեալ այրեցին զքաղաքն, և ինքեանք առեալ զգերի և զկապուտ քաղաքին գնացին յաշխարհն իւրեանց»[107]։

Հ. Մանանդյանը հիմնականում հենվելով Ա. Լաստիվերտցու վկայության վրա, որտեղ հիշատակվում է միայն «անօրենների զորքի» հանկարծակի հարձակումը Կարս քաղաքի վրա, եզրակացնում է, որ հարձակվող այս անօրենների զորքը «ըստ երևույթին, ոչ թե սելջուկյան

107 Ա. Լաստիվերտցի, էջ 83—84։

Թուրքերի զորքերն էին, այլ հարևան երկրների հրոսախմբերը»[108]։ Մինչդեռ բյուզանդական և հատկապես մահմեդական աղբյուրների քննությունից պարզվում է, որ այդ «անօրենների զորքը» թուրքմենական հրոսախմբեր էին սելջուկ առաջնորդ Գիլմուշի գլխավորությամբ։ Մահմեդական աղբյուրներից այժմ մեզ հայտնի է «Անիս ալ-Կուլուբ» ժամանակագրությունը՝ գրված Անեցի սելջուկ իշխանազուն Աբու Նասր Բուրհան ադ-Դինի՝ Անիի Ղազիի կողմից (վերջինս Անիում դատավոր է եղել 1161 թ.)։ Այս ժամանակագրության մեջ մանրամասն նշվում է ոչ միայն Գիլմուշի կողմից Կարսի ավերման պարագաների, այլև Գիլմուշի և նրա 60000-անոց բանակի հետագա ճակատագրի մասին, որը ավելորդ չենք գտնում մեջ բերել։ Բուրհան ալ-Դինը գրում է.— «Աբու-լ-Ֆավարիս»[109] մականվամբ հիշատակված սելջուկյան Խոսրաուի—(իմա—Արսլան Եարղու) որդին՝ Գիլմուշ բեգը Խորասանը և Իրաքը նվաճելուց հետո, արշավեց քաֆիրներին (իմա՛—անհավատների, այսինքն՝ քրիստոնյաների պատկանող (Բագրատունիների դրոշակի տակ գտնվող) Հայաստանի վրա։ Կարսի և Անիի շրջանները գնալով, իսլամի հակառակորդներից՝ իսլամի վրեժը լուծեց։ Այդ շրջանների միակ գեղեցիկ քաղաք Կարսը գրավող Գիլմուշը ավերեց այն, և անապատան ժողովրդին ոչնչացրեց»։ Սելջուկ-թուրքական հրոսախմբերի կատարած վայրագություններից հրճվող, հոխորտացող և գոռոզամիտ ժամանակագիրը պարծենալով նշում է, որ «թուրքերը այնպես ոչնչացրեցին քաղաքը, որ բերնե-բերան, որպես ասք տարածվեց մահմեդական աշխարհում»։ Սակայն ժամանակագիրը նշում է, որ «Կարսը ավերելուց հետո Գիլմուշը, լսելով Տուղրիլ բեգի բանակով իրեն հետապնդելու լուրը, արագ կերպով նահանջեց և ճանապարհին մի մեծ փորձանքի պատահեց։ Գիլմուշը, Անիի մոտ Մարին (իմա՛—Սուրբ Մարի կամ Սուրմարի) կոչվող 60000 տուն հաշվվող քաղաքը ճանապարհորդի նման մտավ և բանակը տեղավորեց այնտեղ։ Վատ աչքերը նրան վնասեցին։ Այս քաղաքի քաֆիր ռեյիսը խաբելով Գիլմուշի զինվորներին, յուրաքանչյուրին հյուրասիրեց մի բնակարանում։ Ռեյիսի գաղտնի հրամանով յուրաքանչյուր տանը հյուրասիրվող մահմեդական զինվորին առատ ուտելիք և գինի տալուց հետո՝ գինովցուցին։ Ուշ գիշերը բոլորը քնելու ժամանակ, հատուկ նշանի վրա տանտերերը 60000 հյուր զինվորներին առանձին-առանձին սպանեցին։ Առավոտյան Գիլմուշը սարսափած և վշտա-

108 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Գ, էջ 47։

109 Թարգմանվում է հեծյալների հայր։

հարված տեղի ունեցածից, իր շուրջը գտնվող հրամանատարների ուղեկցությամբ, հետապնդվելով հայերի կողմից, քառասմբակ փախուստի է դիմում։ Հասնելով Խորասան, տանջամահ է լինում»[110]։

Համաձայն բյուզանդական աղբյուրների, որոնց հայտնի չէ Մարին քաղաքում տեղի ունեցած դեպքերը, նշում են, որ Գթլմուշը հետապնդվելով Տուղրիլ բեգի կողմից, շտապ նահանջում է Արարիստանի սահմանները[111]։

Ըստ մահմեդական աղբյուրների, Գթլմուշը փախչելով Տուղրիլ բեգի առջևից ապաստանում է Ուռհա[112] (Եդեսիա)։ Այնուհետև, Տուղրիլ բեգը դադարեցնելով Գթլմուշի հետապնդումը, կողոպուտի է ենթարկում Վրաստանի մի շարք շրջաններ։ Մոնոմախ կայսրը, լսելով Վրաստանում կատարվող դեպքերը, արևելք ուղարկեց Միքայել Աքոթիթեյին, որը հայտնի էր դարձել պաժինակների (պեչենեկների) դեմ մղած ռազմական գործողություններում և կայսրը անձնական պահակազորքի Սկանդինավյան պահնորդական խմբի պետն էր, հրամայելով նրան ի մի բերել իր հրամանատարության տակ՝ Իբերիայի և Խաղտիքի նահանգում սփռված ռուս և ֆրանկ[113] վարձկաններին և ինչ գնով էլ լինի կանգնեցնել Թուրք հրոսակների ավերածությունները։ Տուղրիլ բեգը, չսպասելով այս բանակի ժամանմանը, յուրայիններով նահանջեց Թավրիզ և այնուհետև շարժվեց Սպահանի վրա, ճնշեց ապստամբությունը, գրավեց այն և դարձրեց իր նոր մայրաքաղաքը[114]։

Տուղրիլ բեգը, Վրաստանի վրա կատարած առաջին արշավանքից հետո, երբ վերադարձավ Թավրիզ, իր հետագա ռազմական գործողությունների թիկունքը ապահովելու նպատակով իր շուրջը համախմբեց

[110] Տե՛ս M. Fuat Koprulu, Anadolu Selçuklulari tarihin yerli kaynaklari, Belleten, VII, Ankara, 1947, p. 459. (Այնուհետև հեղինակը նշում է, որ իբր թե Գթլմուշի վրեժը լուծելու համար է, որ Ալփասլանը խոշոր բանակով 1064 թ. գրավեց և ավերեց Անին։ Անշուշտ, վերևում Գթլմուշի մահվան մասին եղած հիշատակությունը ճիշտ չէ։ Հետաքրքիր է, որ արաբական մի այլ հեղինակ՝ Ազիմին, Գթլմուշի մահը դնում է 1049 թ. Նիկեփոր Ներքինու արշավանքի ժամանակ սելջուկ-Թուրքերի Գանձակի մոտ, կրած պարտությունից հետո։ Տե՛ս Minorsky, Studies, p. 62. Ինչպես հետագայում կտեսնենք Գթլմուշը մահացավ 1064 թ. սուլթան Ալփասլանի ժամանակ։

[111] G. Schlumberger, p. 613.

[112] M. Yinanc, p. 49.

[113] Տե՛ս Յուզբաշյան Կ., Արիստակես Լաստիվերտցու Պատմության մեկ տարընթերցվածքի մասին. Վոանգք և ոչ փոանգք, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1958, № 4, էջ 77—82։

[114] G. Schlumberger, l'Épopée, p. 613.

Ատրպատականի Ռավադյան Աբու Մանսուր Վահսուդանին և Գանձակի Շադդադյան ամիրա Աբու-լ-Ասվարին[115]։

Վերջիններս ճանաչելով Տուղրիլ բեգի գերիշխանությունը, խոստացան տարեկան հարկ վճարել նրան։ Դիարբեքիրի Մրվանյան ամիր Նասր ադ-Դաուլան նույնիսկ խոստացավ բանակով և ռազմական մթերքով մասնակցել Տուղրիլի հետագա արշավանքներին[116]։

Բյուզանդացիները և հայերը այժմ կարող էին չափել իրենց թույլ տված սխալի ծանրությունը։ Նրանք մոտավորապես 100 տարի հանդուրժել էին մահմեդական ամիրայությունների գոյատևումը հայկական հողի վրա, խաբվելով այն բանից, որ Դվինի Շադդադյան ամիրաները քիչ թե շատ ոչ նվաճողական քաղաքականություն էին վարում իրենց շուրջը գտնվող հայկական թագավորությունների և իշխանությունների նկատմամբ և նրանք ոչ միայն ճանաչում էին Անիի Բագրատունիների գերիշխանությունը, այլև նույնիսկ խնամիական կապերի մեջ էին նրանց հետ։ Բագրատունյաց թագավորության անկումից հետո Դվինի շադդադյանները քաղաքականություն էին վարում Բյուզանդական կայսրության նկատմամբ՝ ընդունելով վերջինիս գերիշխանությունը։ Սակայն, սելջուկների՝ Մերձավոր Արևելքում քաղաքական ու ռազմական թատերաբեմ դուրս գալուց հետո, նրանք հնարավորություն ստացան դաշնակցել իրենց հավատակիցների հետ ընդդեմ քրիստոնյա «անհավատների»՝ Վրաստանի, Հայաստանի և Բյուզանդիայի դեմ։ Ապարդյուն էին Բյուզանդական կայսրության ձեռնարկած մեծ ու փոքր արշավանքները Հայաստանի տարածքում գտնվող մահմեդական ամիրայությունների դեմ, որոնց բանակները համալրվում ու խաղացվում էին Խորասանի՝ դեպի Ատրպատական քոչող Թուրքմեն խաժամուժով։ Ինչպես հետագայում կտեսնենք, նրանք պակաս գլխացավանք չպատճառեցին Բյուզանդական կայսրությանը, Հայաստանում ծավալվող նվաճողական ռազմական գործողությունների ժամանակ, թեև այդ նույն ամիրայությունները կուլ գնացին սելջուկ Թուրքական հրոսակների հորձանքին։

Այսպիսով, Տուղրիլ բեգը իրեն հպատակեցնելով իր ռազմական գործողությունների հանգուցակետում թառած հավատակից քուրդ ամիրաներին՝ 1053 թ. վերջին նորից գնաց Վրաստանի դեմ, այս անգամ իր հետ տանելով մի մեծ բանակ, սակայն նա մեծ հաջողություն չունեցավ։ Վրաստանի այն կողմը, որտեղ նա կատարում էր ասպատակություններ,

[115] Ибн ал-Асир, стр. 117.

[116] Տե՛ս O. Turan, Selçuklular tarihi, p. 69.

պաշտպանված էր ամուր բերդերով, և ազգաբնակչությունը զգալով վերահաս վտանգը թաքնվեց նրանց մեջ։ Այսպիսով, Տուղրիլ բեգը 1052—1053 թթ. Վրաստանի առաջխաղացումը կանգնեցնելու և մյուս կողմից Գրիգորին հետապնդելու նպատակով երկու անգամ արշավեց Վրաստան, դարձնելով վերջինս սելջուկյան սարսափելի ասպատակումների թատերաբեմ։ Սակայն նկատելով, որ բյուզանդացիները կարողացել են որոշ չափով ամրացնել Վրաստանը, Տուղրիլ բեգը 1054 թ. ավար և գերիներ ձեռք բերելու նպատակով, ինչպես և Խորասանից նոր եկած թուրքմեն սելջուկ ոհմակների ախորժակին բավարարություն տալու համար, անթիվ զորքերով, փղերով, կառքերով և ռազմական հանդերձանքով՝ Ատրպատականի վրայով խուժեց Հայաստան[117]։

Սելջուկները թեև մեծ հաջողությունների չհասան Կարինի և Կարսի շրջաններում, այնուամենայնիվ, նրանց հաջողվեց կողոպուտի ենթարկել Տարոնը, Խորձյան և Անձիտ գավառները. Եկեղյաց, Տայքի, Խաղտյաց և այլ շրջանների բնակչության մի մասին սրի քաշել և շատերին գերի տանել[118]։ Առավել ուժեղ դիմադրություն էին ցույց տվել Կարսի հայ ռազմիկները։ Այսպես, քաղաքի շուրջը մղված մարտերից մեկի ժամանակ Թաթուլ անունով մի իշխան մահացու հարվածով վիրավորել էր Տուղրիլի ազգական մի երիտասարդի, բայց ինքն էլ գերի էր ընկել։ Տուղրիլը իր մոտ կանչելով Թաթուլին՝ ասում է. «Եթե սա (վիրավորը) ապրի, քեզ կաղատեմ, իսկ եթե մեռնի, կհրամայեմ քեզ մատաղ անել նրան»։ Թաթուլը վստահ իր բազկի վրա, հանգիստ պատասխանում է. «Եթե հարվածը իմն է, չի ապրի»։ Անշուշտ վիրավորը մեռնում է, իսկ Թաթուլը գլխատվում[119]։

Տուղրիլի զորքերը, չկարողանալով դրավել Մանազկերտ քաղաքը, գնացել էին ասպատակելու մյուս գավառները՝ այդ վայրերից հարուստ ավարով և առատ պաշարով վերադառնալիս, կրկին պաշարեցին Մանազկերտը։ Տուղրիլի զորքերի բացակայության ժամանակ, քաղաքի բնակիչներին հաջողվել էր սննդամթերք բերել դրսից, քանի որ հունձքի ժամանակ էր[120]։

Քաղաքի բնակչությունը ցուցաբերեց մեծ վճռականություն և նվիրվածություն՝ պաշտպանելու համար իր քաղաքը։ Տուղրիլը այս անգամ պաշարելով այն, հույս ուներ պատերազմական մեքենաների՝ բաբանների օգնությամբ քանդել պարիսպը կամ թե անցք փորելով գետնի տակով ներխուժել քաղաքը։ Սակայն այդ բոլոր ձեռնարկումները խափանվեցին քաղաքացիների հերոսական ջանքերի շնորհիվ։ Քաղաքի կառավարիչ Վասիլ իշխանի առաջնորդությամբ նրանք հերոսաբար պաշտպանեցին Մանազկերտը։ Վերջապես նրանց համառ դիմադրությունը ընկճում է սելջուկներին և վերջիններս, շուրջ մի ամիս քաղաքը պաշարելուց հետո, ամոթահար նահանջում են Պարսկաստան։ Սակայն, նրանք Մանազկերտում կրած պարտության համար վրեժ են լուծում մյուս հայկական քաղաքներից և ավաններից։ Իրենց նահանջի ճանապարհին ավերում են Արծկե, Բերկրի և այլ բնակավայրեր ու սրի անցկացնում շատ վայրերի բնակիչներին[121]։

Արիստակես Լաստիվերտցին այսպես է նկարագրում սելջուկների վերջին ավերածությունները։

«Զկնի այսր պատմութեանս, ի գալ տարւոյն էր Թուականիս մերոյ ամք հինգհարիւր երեք, (1054) ի նոյն ամիսն և ի նոյն քանիս ամսոյն, ուր զառաջին աշխարհս գերի տարան, զԱրծն այրեցին, և զայլ քաղաքս և զաւանս, խաղաց գազանն մահաշունչ արիւնարբու և մարդախոշոշն Սուլտան անհամար զօրօք, փղօք և կառօք և երիվարօք, կանամբք և որդւովք, և բազում պատրաստութեամբ։ Զանց արարեալ զԱրճիշաւ և զԲերկրաւ՝ եկեալ բանակեցաւ շուրջ զքաղաքաւն, որ կոչի Մանազկերտ, ի գաւառն Ապահունեաց, և կալաւ բովանդակ զընդարձակ վայրս դաշտացն։ Եւ արձակեաց ասպատակս յերեսին կողմանս աշխարհիս, ի հիւսիս՝ մինչև յամուրն Ափխազաց և մինչև ի լեառն որ կոչի Պարխար և մինչև ցստորոտն Կովկասու. և յարևմուտս՝ մինչև յանտառսն Ճանեթոյ, իսկ ի հարաւ՝ մինչև ցՍիմն կոչեցեալ լեառն. և բովանդակ կալեալ զաշխարհս իբրև հնձօղք ոճոյ ագարակի։

Արդ զայնմ ժամու զչարիսն՝ զոր նոքա աշխարհիս հասուցին, ո՞վ կարէ ընդ գրով արկանել, կամ ո՞յր միտք բաւեն ի համար ածել. զի ամենայն աշխարհս լի էր դիակամբք, շէնք և անշէնք, ճանապարհք և

117 Ա. Լաստիվերտցի, էջ 84։ Տե՛ս նաև «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 215։

118 Ա. Լաստիվերտցի, էջ 84—90։

119 Ա. Լաստիվերտցի, էջ 88։ Մ. Ուռհայեցի, էջ 118 և հետ։

120 Ա. Լաստիվերտցի, էջ 90։ Մ. Ուռհայեցի, էջ 118։

121 Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 118 և տե՛ս նաև՝ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 25։ Ուռհայեցին պատմում է, որ Մանազկերտի բնակիչները, ծաղրելու համար սուլթանին, քարանետ մեքենայով մի խոզ գցեցին նրա ճամբարը գոռալով՝ «առ այս խոզը քեզ կին, և մենք Մանազկերտը օժիտ կտանք քեզ»։ Ուռհայեցի, էջ 122։

անապատ տեղիք, քարանձաւք և առապարք, անտառախիտ մայրիք և ափափայ վայրք՝ և յամենայն շինանիստ տեղիս հուր հարեալ ապականեցին զտունսս և զեկեղեցիս, որոյ բոց հրատին առաւել բարձրանայր քան զհնոցին Բաբելովնի, և այսպիսի ձեռնարկութեամբ ապականեցին զաշխարհս ամենայն, ո՛չ միանգամ, այլ երիցս անգամ մի ի միոյ վերայ դարձ արարեալ՝ մինչև առհասարակ հատաւ երկիրս ի բնակչաց և բարձաւ կառաչ անասնոց»[122]։

Ինչպես 1048—1049 թթ. արշավանքից հետո, այնպես էլ 1054 թ. արշավանքին հաջորդեց հաշտության բանակցություններ Բյուզանդիայի ու Տուղրիլ բեգի միջև։ Տուղրիլ բեգը Բյուզանդիայից զինադադարի հաշտության փոխարեն պահանջում էր տարեկան հարկ, որը ինչպես աղբյուրներն են հաղորդում, ընդունվել էր Թեոդորա կայսրուհու կողմից[123], սակայն այդ status-quo-ի հարատևմանը խանգարեցին թուրքմեն հրոսակախմբերի շընդհատվող ներխուժումները Հայաստանի տարածքում, որի պատճառով էլ անհնարին էր իսկական խաղաղությունը և հաշտությունը երկու կայսրությունների միջև։ Դեպքերին ժամանակակից և ականատես Արիստակես Լաստիվերտցին հետևյալ ձևով է նկարագրում 1054 թ. ժամանակաշրջանում ընկած դեպքերը։ Նշելուց հետո, որ Թեոդորա թագուհին քաղցած գազանին՝ սուլթանին (իմա Տուղրիլ բեգին) տուրքերի առատությամբ այնպես հագեցրեց, որ նա մոռացավ մեր վրա հարձակվելը. այնուհետև.

«Այլ անդրէն ի Բաբելովն և որ զնովաւ կողմամբքն յուզէր զմարտն. քանզի յոյժ պատերազմասէր էր այրն։ Բայց որ մերոյս էին սահմանակիցք և դրացիք՝ խանձեալ, ոչ դադարեցին զամառն և զձմեռն յապականելոյ զաշխարհս Հայոց. քանզի դիտօք որոնէին և ուր լսէին զմարդաբնակ տեղեաց, գիշերագնաց եղեալ՝ յանկարծուստ ի վերայ անկանէին. և նորանշան հարուածովք անողորմաբար զամենեսեան առհասարակ

122 Ա. Լաստիվերտցի, էջ 84—85։ Համեմատի՛ր նաև Մ. Ուռհայեցի, Վաղարշապատ, 1898, էջ 118 և հետ.։ Ուռհայեցու վկայությունը մի փոքր տարբերվում է Լաստիվերտցու վկայությունից։ Ինչպես պատմում է Ուռհայեցին, Մանազկերտ գնալիս՝ Տուղրուլ բեգը պատերազմել ու գրավել էր Բէյ-կրի քաղաքը, սրի էր անցկացրել սրա բնակչությունը և այնուհետև պաշարել նաև Արճեշը, որը հնազանդվել էր նրան և ուղարկել էր մեծ քանակությամբ ոսկի ու արծաթ և ձիեր ու ջորիներ։ Տե՛ս նաև Ս. Սպարապետ, էջ 51—52, Մ. Չամչյան, հ. Բ, էջ 954—959

123 *Abul Faraj*, p. 207. *Cedrenus* II, 500—594. *Attaliates*, p. 45. Ա. Լաստիվերտցի, էջ 99—101։

սատակէին և անհոգացեալ յերկիւղից՝ բաղում աւուրս առնէին ի տեղւոջն, մինչև խիլ արկեալ տանցն, ճթեն ուրուք կայր ինչ ի թաքստեան՝ զամենն հանեալ, և բնաբարձ աւերմամբ քանդեալ զվայրն, առեալ զառ և զգերի՝ յաշխարհն իւրեանց դառնային»[124]։

Այնուհետև Արիստակես Լաստիվերտցին անմիջական վկայություն ունի Տուղրիլ բեգի և Թեոդորա կայսրուհու միջև տեղի ունեցած բանակցությունների ընթացքի և հետևանքի մասին։ Տաճիկների սուլթանը (իմա—Տուղրիլ բեգը), նշում է Արիստակես Լաստիվերտցին, դեսպան է ուղարկում Թեոդորա կայսրուհու մոտ և գրում է այսպիսի մի հրովարտակ. «Կամ տուր զքաղաքս և զգաւառս ինձ, զոր նախնիքն քո տարեալ են ի Տաճկաց, կամ տուր յամենայն աւուր հազար դահեկան»։ (Կամ տուր ինձ այն քաղաքներն ու գավառները, որ քո նախնիները խլել են տաճիկներից, կամ տուր ամեն օր հազար դահեկան)[125]։

Աղբյուրների հաղորդումներից երևում է, որ Տուղրիլ բեգը պահանջում էր Բյուզանդական կայսրությունից չեղյալ հայտարարել 1027 և 1054 թթ. կնքված բյուզանդա-եգիպտական քաղաքական և տնտեսական դաշնագրերը և դրանով մեկուսացնել Ֆաթիմյան Եգիպտոսը և ճանաչել Բաղդադի խալիֆային որպես մահմեդականների օրինական առաջնորդ (կրոնապետ)։

Աբու-լ-Ֆարաջը այդ առթիվ հաղորդում է, որ 1055 թ.[126] Մոնոմախը գունավոր մագաղաթի վրա հունարեն, տողերի արանքում արաբերեն թարգմանությամբ հանդերձ ոսկե կնիքով մի նամակ (chrysobulle) է ուղարկում Աբու Ջաֆար ալ-Կայիմ խալիֆային. վերջինիս անվանելով մահմեդականների առաջնորդ և Բյուզանդիայի հարգելի ու սիրելի բարեկամ։ Այնուհետև հաղորդում է, որ Բյուզանդական կայսրությունը խզել է իր հարաբերությունը եգիպտական Ֆաթիմյան խալիֆայության հետ և որ այդ հնարավոր է դարձել Տուղրիլ բեգի հետ կնքված համաձայնագրի հետևանքով[127]։

Այնուամենայնիվ, Մանազկերտի մոտ կրած անհաջողությունից հետո, Տուղրիլ բեգը ստիպված էր հանգիստ թողնել Հայաստանը և կռիվ-

124 Ա. Լաստիվերտցի, էջ 101—102։

125 Ա. Լաստիվերտցի, էջ 96, աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Լաստիվերտցի, Պատմություն, թարգմ. Վ. Ա. Դևորգյանի, Երևան, 1971, էջ 65։

126 Աբու-լ-Ֆարաջը սխալմամբ նամակի թվականը դնում է 1057 թ., քանի որ այդ ժամանակ Մոնոմախ կայսրը մահացել էր, իսկ Բաղդադում գերիշխում էր արդեն սուլթան հռչակված Տուղրիլ բեգը։

127 Տե՛ս *Abul Faraj*, p. 207.

ներ էր վարում գլխավորապես Միջագետքում և Պարսկաստանի հարավային կողմերում ու հիմնականում զբաղված էր սուլթանության մահմեդական թիկունքի ամրապնդմամբ։

1055 թ. Տուղրիլ բեգը, իրեն ապահով զգալով թիկունքից, կարողացավ գրավել Բաղդադը, որով Բուիդների բոլոր երկրները Միջագետքում անցան նրա իշխանության տակ։ Այնուհետև, մոտավորապես երեք տարի, կռվելով և հաղթանակ տանելով Եգիպտոսի Ֆաթիմյան խալիֆայի կողմնակիցների դեմ և ճնշելով այդ թվում վերջիններին միացած Իբրահիմ Յաննալի ապստամբությունը՝ 1058 թ. Տուղրիլը Բաղդադի խալիֆայից ստացավ սուլթանի կոչում և դրանով պաշտոնապես հիմք դրվեց սելջուկյան աշխարհակալ պետության։

Այսպիսով թեև Տուղրիլ բեգը, սկսած 1055 թ. մինչև 1063 թ.՝ իր մահը, խոշոր արշավանք չկազմակերպեց Բյուզանդիայի դեմ, սակայն այդ տարիներին, նույնիսկ տարին մի քանի անգամ ավարառական ասպատակություններ էին կազմակերպվում հարևան մահմեդական քուրդ ամիրայությունների և բազմաթիվ թուրքմեն ցեղային առաջնորդների կողմից։ Այս ներխուժումները նկատի ունենալով՝ Արիստակես Լաստիվերտցին, Մատթեոս Ուռհայեցին, Սամուել Անեցին, Սմբատ Սպարապետը և այլ հայ պատմիչներ[128] բազմաթիվ էջեր են նվիրում ոչ միայն այդ ավերածություններին, կողոպուտին, սպանություններին, գերեվարությանը, այլև դրանց պատճառը համարում են Բյուզանդական կայսրության հայատյաց քաղաքականությունը։ Այդ ավերածությունների պատճառով, եթե մի կողմից Մերձավոր Արևելքի տարածքը, սկսած Ատրպատականից մինչև հարավային Հայաստանի սահմանները՝ ողողվում էին Խորասանից Պարսկաստանի վրայով դեպի Հայաստան և Միջագետք ներխուժող թուրքմեն հրոսակներով, ապա մյուս կողմից հայ գյուղացուն մղում էին պանդուխտի ցուպը ձեռքին զանգվածաբար գաղթել դեպի Բյուզանդական կայսրության՝ կենտրոնական և հարավային նահանգները՝ դեպի Կապադովկիա և Կիլիկիա։

Դեռևս 1055 թ., ինչպես հաղորդում է Արիստակես Լաստիվերտցին, պարսից (իմա—սելջուկյան) զորքերը եկան Հայոց աշխարհ՝ Սուլթանի (իմա՝—Տուղրիլ բեգ) անվան տակ, թեև ասում էին, որ դրանք Աբու-լ-Ասվարի զորքերն էին, որը Դվինի ու Գանձակի իշխանն էր և հայոց Աշոտ Թագավորի փեսան։ Սրանց ասպատակումներից փախչելով՝ տարբեր տեղերի բնակիչները հավաքվեցին Անի քաղաք, բայց ոչ բոլորը հասցրին ներս մտնել, որովհետև մութն ընկավ, և քաղաքի դռները փակեցին։ Իսկ պարսից (իմա՝—սելջուկ թուրքմենական) զորքերը գիշերով եկան, քաղաքի դուռը բռնեցին և անօգնական ժողովրդի վրա սուրը գործի դնելով՝ աննկարագրելի կոտորած գործեցին և վերցնելով ավարն ու գերին՝ գնացին իրենց երկիրը[129]։

Այնուհետև Արիստակես Լաստիվերտցին, շարունակելով պատմել 1055 թ. դեպքերի մասին գրում է.

«Իսկ ի կողմանս Տարօնոյ Թէոդորոս որդի Ահարոնի, զոր Աւանն կոչէին ըստ իւրեանց լեզուին, զդիրն պակաս ունելով, որ նա էր իշխան գաւառին։ Առ որ եկեալ գունդ մի ի Թուրքաստանէ՝ հնազանդեցան նմա, և կամեցան զմիամտութիւն ցուցանել. մտեալ ի գաւառն Խլաթայ և առեալ աւար բազում, ածին ի Տարօն։ Իսկ ժողովեալ զօրք ի Պարսից և Թուրքաստանէ յղեցին առ Թէոդորոսն՝ թէ կամ տուր զապստամբսդ ի մեզ, կամ թէ ոչ՝ զերկիրդ գերի տանիմք։ Որում ոչ առեալ յանձն, յետ որոյ եկեալ ճակատեցան ընդ միմեանս երկիցս և երիցս, և բազում արութիւնս ցուցեալ իշխանին, յետոյ կարեվէր խոցեալ՝ յետ սակաւ աւուրց վախճանեցաւ։ Որ յոյժ ապաշաւանաց արժանի էր նորա վախճանն. մանուկ հասակաւ և զեղեցկաշուք կերպարանօք զԴաւթի մարգարէին ունելով զնմանութիւն, և բաջութեամբ առաւել քան զբազումս, որ տարաժամ բարձաւ ի միջոյ»[130]։

Թուրքմեն հրոսակները ներխուժեցին նաև նախորդ արշավանքների ժամանակ ավերածություններից զերծ մնացած Դիարբեքիրի Մրվանյանների ամիրայության մայրաքաղաք Նփրկերտը։ Վերջինները զգալով, որ անխուսափելի է Տուղրիլի վրեժխնդրությունը իրենց նկատմամբ, որ նրանք համագործակցել էին Եգիպտոսի խալիֆայի օժանդակող արաբ ամիրների հետ, ցանկանում էին հաշտվել Տուղրիլի հետ։ Սակայն Տուղրիլի հրամանատարներից Յակութի հրոսակախմբերը, որին միացավ Մոսուլը ասպատակող Տուղրիլի զորքերի մի մասը, 1057 թ. մտան Դիարբեքիրի շրջանը։ Մրվանյան Նասր ալ-Դաուլան, վախեցած հաշվեհարդարից, ապաստանեց Ամիդի պարիսպներից ներս, երկիրը անպաշտպան

128 Ա. Լաստիվերտցի, էջ 101—106։ Մ Ուռհայեցի, էջ 109—145. Սամուել Անեցւոյ, հավաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ 1893, էջ 54—55։ (Այսուհետև Ս. Անեցի)։ Ս. Սպարապետ, էջ 53—55։

129 Ա. Լաստիվերտցի, էջ 96։

130 Ա. Լաստիվերտցի, էջ 96—97։

թողնելով։ Թուրքական հրոսակախմբերը Մայաֆարկինի շրջանում մի շարք հայկական ու ասորական վանքեր կողոպտեցին և ոչնչացրեցին։ Նասր ալ-Դաուլան, վախենալով իր երկրի կործանումից, դիմեց Իբրահիմ Յանալին, որպեսզի վերջինս բարեխոսի սուլթանի մոտ, չմոռանալով ուղարկել նաև 10000 դինար և շատ թանկագին այլ նվերներ։ Սրանով վերջ տրվեց այդ ասպատակություններին, և Մրվանյանները նույնպես ստիպված էին ճանաչել սելջուկյան սուլթանության գերիշխանությունը[131]։

Ավելի ուշ 1061 թ., երբ մեռնում է Աբու Նասր Ահմադը, որը Նասր ալ-Դաուլա էր կոչվում, նրան հաջորդում է իր որդին՝ Նիզամ ալ-Դաուլա Նասրը։ Վերջինիս մեծ եղբայրը՝ Սաիդը, Ամիդի ամիրն էր։ Թեև Սաիդը ժամանակավորապես լռում և չի պահանջում իր ավագության իրավունքը, դառնալու Աղձնիքի՝ Նփրկերտի[132] (Միյաֆարիկին կամ Մայաֆարկին, Մուֆարդին) մեծ ամիրա, սակայն նույն թվականին նա գնում է սուլթան Տուղրիլի մոտ և պահանջում վերջինիս օգնությամբ վերականգնել այդ իրավունքը։ Սուլթանը տալիս է նրան 5000 զորք և ուղարկում Նփրկերտ և ցանկանում ուժով գրավել այն։ Սակայն Նփրկերտի վեզիր Աբու Նասր Մուհամմադի միջնորդությամբ ստեղծվում են երկու փոքր ամիրայություններ, մեկը Նփրկերտում՝ Նիզամ ալ-Դաուլա Նասրի, իսկ մյուսը՝ Ամիդում[133], վերջինիս մեծ եղբոր՝ Սաիդի գլխավորությամբ։ Սելջուկ-Թուրքական ամիրան, որը որպես օգնական ուժ ուղեկցել էր Սաիդին, որպես ճանապարհածախս ամիրաներից վերցնում է 50000 դինար (ոսկի) և վերադառնում Ռեյ[134]։ Ինչպես նշվեց վերևում, թեև սուլթան Տուղրիլը մինչև իր մահը անձամբ չձեռնարկեց որևէ արշավանք դեպի Անդրկովկաս, սակայն նրա հրամանով, սկսած 1056 թ. դեռևս շարունակվում էին փոքր և մեծ չափի ավարառական արշավանքները՝ նրա տեղակալների և թուրք ցեղային առաջնորդների կողմից։

Այսպես, 1056 թ. Ատրպատականի և Առանի սելջուկյան բանակ-

131 *M. Yinanc*, p. 51—52.

132 Մուֆարդին կամ Միաֆարդին հնում Մարտիրոպոլիս։ Ասորական «Մայֆարկաթ» բառի աղավաղումն է, որ նշանակում է «բաժանված ջրեր»։ Միջին հայերենում կոչվել է Մուհարկին, Մուփարկին, նաև Նփրկերտ։ Տե՛ս Արաբական աղբյուրներ, էջ 112, 205։

133 Ամիդ քաղաքը, որը գտնվում է Դիարբեքիր երկրամասում, հետագայում ստացավ Դիարբեքիր անունը։ Տե՛ս Արաբական աղբյուրները..., էջ 66, 170, ծան., էջ 192։

134 *M. Yinanc*, p. 55—56.

ների հրամանատար Տուղրիլ բեգի եղբորորդի Յակութը և թուրքմեն ամիրաներից Սարուկը մի շարք ասպատակություններ կատարեցին Հայաստանի սահմանամերձ շրջաններում։ Ապարդյուն էին անցնում այդ արշավանքները կանգնեցնելու համար բյուզանդական կայսրի կողմից սահմանային ուժերի գլխավոր հրամանատար նշանակված Նիկեփոր Վրիենոսի պաշտպանական հապաղած ձեռնարկումները։ 1057—1058 թթ. Յակութի ավազակախմբերին են միանում նաև Իբրահիմ Յաննալի օժանդակող և Տուղրիլ սուլթանի դեմ ապստամբած թուրքմենների մեծ մասը և պաշարում Կարսը։ Չկարողանալով գրավել բերդը, անցնում են Անի. բախվելով Անիի ամրակուռ պարիսպներին, հրոսակախմբերը մտնում են Բասենի հովիտը և ավերածության ենթարկում մի շարք բնակավայրեր և գյուղեր։ Մեծապես տուժում է Օկոմի ավանը, որտեղ սելջուկները սպանում են բնակիչների մեծ մասին և ավերակի վերածում այն[135]։

1057—58 թթ. Բյուզանդական կայսրությունում գահակալական կռիվների պատճառով տիրող քաղաքացիական պատերազմի ընթացքում, Կայսրությունը բաժանվել էր երկու մասի[136]։ Այդ պատճառով էլ Հայաստանը ամբողջությամբ լքված էր Բյուզանդիայի կողմից. Վրաց Լիպարիտ իշխանի որդի Իվանեն իր հոր գերեվարումից հետո վրաց Բագրատ թագավորի կողմից ճանաչվել էր Հայրենի կալվածքների տեր։ Նա այնքան ուժեղ էր, որքան վրացական թագավորը[137]։ Բյուզանդացիները Իվանեին որպես պարգև բնակության տեղ էին տվել Հաշտենից գավառի Երիզա[138] մեծ ավանը՝ իր շրջակա դաստակերտներով։ Իվանեն օգտվելով քաղաքացիական պատերազմի պատճառով ստեղծված խառը դրությունից գնաց և խաբեությամբ գրավեց Եղանց[139] բերդ կոչված ամրոցը և այն իր ձեռքի տակ ունենալուց հետո կրկին վերադարձավ Աղորի գավառը և այն ամրոցը, որ Հավճիշ է կոչվում։ Քաղաքը նրան բարեկա-

135 Ա. Լաստիվերտցի, էջ 102։

136 Նույն տեղում։

137 *M. Brosset*, Histoire de la Géorgie, t. I, p. 324—325.

138 Բարձր Հայքի ինը գավառներից մեկն է, որն այժմ իր տարածքով համապատասխանում է Երզնկայի սարահարթին։ Եկեղյաց կամ Եկեղիք գավառի պատմական նշանավոր վայրերից են Երիզա քաղաքը, որն այժմ կոչվում է Երզնկա և Թիլ գյուղը կամ Ավանը։ Տե՛ս Ա. Լաստիվերտցի, Ծանոթագրություններ, էջ 111։

139 Եղանց բերդը կամ Եղնուտը Տարոնի Տարոն գավառում ամուր բերդ էր (տե՛ս Հովհ. Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 189)։ Ըստ Ռ. Գրուսեի սա բյուզանդական Olnout կամ Elnout-ն է, տե՛ս *R. Grousset* թ. 603։

մաբար դիմավորեց։ Երբ Իվանեն տեսավ այն իշխանին, որն արևելյան կողմի կառավարիչն էր և այն ժամանակ այնտեղ էր գտնվում, հրամայեց անմիջապես բռնել։ Նրանից վերցրեց անչափ գանձ, ձիեր, ջորիներ, և այն բոլորը, ինչ որ նա հավաքել էր արևելքից, իրեն էլ բանտարկեց Եղնուտում, իսկ ինքը շտապ գնաց Կարին ամուր քաղաքի վրա։ Որոշ ժամանակ խաբեությամբ աշխատեց քաղաքն առնել, ասելով թե՝ «Թագավորից հրաման ունեմ, այդ քաղաքն իմն է, դռները բացե՛ք, որ ներս մտնեմ»։ Երբ այդ միջոցով չկարողացավ հնազանդեցնել, կռիվ սկսելով՝ պատերազմով էր ուզում տիրել քաղաքին, իսկ քաղաքի իշխանը շուտափույթ հայտնեց Անիում նստող իշխանին, որը մագիստրոսության պատիվ ուներ։ Երբ սա լսեց այդ, գլխավորներից մեկին զորքով ուղարկեց Իվանեի վրա։ Իվանեն երբ տեղեկացավ, երկիրն ասպատակելով՝ վերադարձավ իր տեղը և մարդ ուղարկեց Պարսկաստան՝ օգնության համար զորքեր բերելու։ Այս եղավ սկիզբն այն անհնարին աղետների,— դառնությամբ նշում է Լաստիվերտցին, որ եկան մեզ վրա[140]։

Թուրքմենները արձագանքելով Իվանեի հրավերին բազմաթիվ զորքով հասան նրան օգնության։ Երբ Իվանեն տեսավ զորքի բազմությունը, սարսափեց, որովհետև ոչ ոք չկար նրանց դիմադրող, քանի որ այն իշխանը, որի պատճառով նրանք եկել էին, երբ լսեց նրանց գալու աղմուկը, մտնելով մեծ բերդը՝ ամրացավ։ Այն ժամանակ եկած զորքերն ասացին. «Մեզ ավարի ճանապարհ ցույց տուր և դատարկ մի՛ վերադարձրու»։ Իսկ նա ճարահատված՝ իր մարդկանցից նրանց առաջնորդ տվեց, և նրանք գիշերն անցնելով անապատ տեղերով՝ հարձակվեցին Խաղտյաց գավառի վրա և բնակիչներին անհոգ գտնելով՝ ում որ հանդիպեցին, բոլոր տղամարդկանց սրակոտոր արին, մինչև Ճանեթի խրթի կոչված անտառը, անչափ ավար ու գերի առնելով՝ մեծ հաղթությամբ վերադարձան ու գալով շարիքների առաջնորդի մոտ՝ մեծամեծ պարգևներով շնորհակալություն մատուցեցին նրան՝ այն մեծ հաջողության համար, որ իրենց հանդիպեց. ապա գնացին իրենց աշխարհը»[141]։

Այսպիսով, վրաց իշխանի Իվանեի փորձը Հայաստանին տեր դառնալու համար, որին հայերը դիտում էին որպես նախախնամության կողմից ուղարկված ազատարարի, ոչ միայն վերջացավ անհաջողությամբ, այլև պատճառ դարձավ ավերածությունների և կոտորածների[142]։

140 Ա. Լաստիվերտցի, էջ 106։

141 Ա. Լաստիվերտցի, էջ 107—108։ Տե՛ս նաև Մ. Չամչյան, հ. Բ, էջ 963—964։

142 Ա. Լաստիվերտցի, Երևան, 1963, էջ 106—108։ Մ. Չամչյան, էջ 963—964։

Թուրքմենները, տեսնելով, որ երկիրը անտերունչ է ու առանց պահապանի, սկսում են հաճախակի ասպատակել Հայաստանի տարբեր գավառները։ Այսպես, նույն 1057 թ. նրանց հրոսակախմբերը մտնում են Մանանագի գավառը, որտեղից բաժանվելով երկուսի, մի մասը խուժում է Հաշտենից գավառը, կողոպտում և կոտորում Երիզա ավանի բնակիչներին, այստեղից անցնելով Կարնո գավառը, պաշարում է Բլուր ավանը և կոտորում 7000 հայ բնակիչների, որոնք այստեղ ապաստան էին գտել[143]։ Իսկ մյուս մասը ասպատակում է Անձիտ և Խորձյանք գավառները[144]։ Երիզա քաղաքում «կատարված աղետագին ու ողորմելի շարիքները, ես անկարող եմ գրի առնել,— գրում է Ա. Լաստիվերտցին, քանզի, երբ որ առավոտ լուսացավ այնքան լալագին ու խռովահույզ մի տեսարան էր այնտեղ երևում, որ և քարերին, և բոլոր անշունչ արարածներին անգամ հառաչել, ողբալ էր տալիս, այդ ո՞ր տեսնողը չէր դողացավից, այդ որի՞ սիրտը չէր կտրատվելու, որի՞ աչքերը չէին խավարի՝ միգով մթամած, հրապարակները, տներն ու բնդարձակ սրահները, բողջ սահմանը ներկված էր կոտորածների արյամբ»[145]։

1058 թ. սելջուկները Աբու Դինար ամիրայի գլխավորությամբ ձեռնարկեցին մի նոր արշավանք, հարուստ և փարթամ Մելիտենե քաղաքի վրա։ Այս անգամ էլ սելջուկյան բանակը բաժանվեց երկու մասի։ Մեկը անցնելով Ճորոխի հովտով, գրավում է Կոլոնիա[146] քաղաքը, մյուսը՝ թվով 3000 հոգի, Աբու-Դինարի հրամանատարությամբ հարձակվում է Մելիտենեի վրա, գրավում այն և տասը օր շարունակ կողոպտում և կոտորում բնակիչներին[147]։ Մ. Ուռհայեցին նշում է, որ Մելիտենե քաղաքը ավերածության ենթարկող թուրքմեն զորքերին առաջնորդում էր Լիպարիտի որդին՝ Իվանեն։ Այնուհետև Մ. Ուռհայեցին նշելով, որ Մելիտենե քաղաքը հռչակավոր էր և անվանի, նույն տեղում նշում է մի հետաքրքիր երևույթի մասին, որը բնորոշ էր սելջուկյան արշավանքներին և հաճախ նախորդում էր դրանց։ Սելջուկները սովորաբար ավարառական արշավանքից առաջ տեղեկություններ էին հավաքում քաղաքների հարստության մասին։

143 Ա. Լաստիվերտցի, 1971, էջ 106—108։ Մ. Չամչյան, հ. Բ, էջ 965։

144 Մ. Չամչյան, հ. Բ, էջ 965։

145 Ա. Լաստիվերտցի, աշխարհաբար թարգմ., 1971, էջ 76։

146 Կոլոնիա կամ Կողոնիա, քաղաք Առաջին Հայքում։

147 Մ. Ուռհայեցի, էջ 128։ Տե՛ս նաև Անեցի, էջ 111։ Ս. Սպարապետ էջ 54—55։ Մ. Չամչյան, հ. Բ, էջ 966—967։

«Ելեալ գայր ի Պարսից նահանգէն Ամիրայ ոմն մեծ և հզօր՝ Դինար անուն, և զօրօք բազմօք....,— գրում է Մ. Ուռհայեցին, և անցանէր անվնաս ի բազում տեղեաց և խաղայր գնայր և հասանէր մինչև ի հռչակաւոր քաղաքն և յանուանին, որ կոչի Մելտենի, վասն զի ի բազում ժամանակաց մատնած էր քաղաքն Պարսից՝ թէ անչափ է հարստութիւն ոսկւոյ և արծաթոյ՝ ականց և մարգարտանց և դիպակաց»[148]։

Այնուհետև Աբու Դինարի ջոկատները անցնելով Եփրատ գետը ձմեռեցին Անձիտում[149]։

Բյուզանդացիք թեև զորքով հետապնդեցին Դինարին, սակայն չհամարձակվելով մարտ տալ նրա դեմ, վերադարձան Կ. Պոլիս։ Այլ կերպ վարվեցին Թուրքերի հետ Տարոն գավառի՝ Սասունի հայերը։ Սասունում կիսանկախ իր գոյությունն էր պահպանում Տայքի Զորտվանել իշխանի տոհմը, որը խնամիական կապերով կապվել էր հայ Մամիկոնյանների և Պահլավունիների իշխանական տների հետ և դարձել նրանց մոտ ազգականը[150]։

Սասունում իշխում էր հայոց հզոր և քաջ Թոռնիկը՝ Մուշեղի որդին, որը լսելով Թուրքերի Տարոն գավառը ներխուժելու մասին, բովանդակ Սասունում զորահավաք կատարեց և արշավեց այլազգիների զորքի վրա։ «Այլազգիների զինվորները հնչեցրին պատերազմական շեփորները և բոլորը միասին ելան մարտի։ Այդ օրը սոսկալի և ահավոր եղավ, քանզի երկու կողմն էլ միմյանց դեմ էին կռվում առյուծների ջոկերի նման։ Քաջ Թոռնիկը ձայն տվեց իր զորքի աջ թևին, հարձակվեց այլազգիների ձախ թևի վրա և մեծ ուժգնությամբ ճեղքեց այն։ Նա դարձավ նայեց սուրբ Կարապետի վանքին և գոչեց. «Դլակավանք, Սուրբ Կարապետ, հասիր մեզ օգնության և այս օրը հավատացյալների համար երևելի դարձրու»։ Բոլորը միասին իրար ձայն տալով հարձակվեցին այլազգիների վրա, նրանցից խլեցին ամբողջ ավարը և ազատեցին բոլոր գերվածներին։ Մի կերպ կենդանի մնացած այլազգիները խայտառակ կերպով գնացին պարսից երկիրը։ Քաջ Թոռնիկը վերադարձավ Սասուն և շնորհակալություն հայտնեց աստծուն, որ Մելիտենե քաղաքի անթիվ բազմությունը ազատեց պարսից (իմա՝ սելջուկ Թուրքերի—Ս. Բ.) անհավատ ժողովրդի ստրկությունից[151]։

148 Մ. Ուռհայեցի, էջ 129։

149 Չորրորդ Հայքի Անձիտ գավառում։

150 Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Գ, էջ 51։

151 Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 86։ Տե՛ս նաև Ս. Անեցի, էջ 111, նաև՝ Ս. Սպարապետ, էջ 54—55։ Մ. Չամչյան, հ. Բ, էջ 966։

Թոռնիկի օրինակը մեկ անգամ ընդմիշտ ապացուցում է այն անժխտելի փաստը, որ Հայաստանում մնացող հայ իշխանները ամենուրեք քաջաբար և անվեհեր կռվել են իրենց հայրենիքի պաշտպանության համար։ Այնուհետև, ինչպես ասվեց վերևում, այդ գոյամարտերին մասնակցում էին ոչ միայն իշխանները և ազատանին, այլև իր անկախության և ազատության նախանձախնդիր հայ գյուղացին։ Նրանք շարունակում էին հայ ժողովրդի դարավոր ավանդույթները և կռվում՝ Թուրք նվաճողների դեմ այնպես, ինչպես իրենց նախորդները պարսիկ և արաբ նվաճողների դեմ։

Հայ գյուղացիները Թուրք ասպատակողների վրա հարձակվում էին այն ժամանակ, երբ բյուզանդական զորավարները և նրանց վարձկան բանակները տեղի տալով Թուրքերին, իրենք էին փախուստի դիմում։

1058—59 թթ. Իբրահիմ Յաննալի ապստամբությանը մասնակցած Թուրքմեն ցեղախմբերի ընչաքաղց ախորժակին հագուրդ տալու և ապստամբ տարրերին կենտրոնից հեռացնելու նպատակով, սկսած 1060 թվականից, Տուղրիլ սուլթանի հրամանով, մի շարք արշավանքներ են կազմակերպում Հայաստանի արևմտյան և հարավային շրջանները և այդ սահմաններին հարող բյուզանդական հարուստ քաղաքները։ Պետք է նշել, որ այս արշավանքները հնարավոր էին դառնում ոչ միայն Բյուզանդական կայսրության մեջ անընդմեջ բռնկվող գահակալական կռիվների և կենտրոնախույս երկպառակությունների՝ այլև Բյուզանդիայի կողմից հայերի նկատմամբ վարած նենգ քաղաքականության հետևանքով։

1059 թ. Կեկավմենոսը Կոստանդին Դուկասին կայսր դարձնելու համար, բյուզանդական զորքերով վերադառնում է Կ. Պոլիս, անպաշտպան թողնելով արևելյան նահանգները։ Հայ և օտար ժամանակագիրները դառնությամբ են արձանագրում Բյուզանդիայի բռնած անտարբեր դիրքը սելջուկների կողմից Հայաստանի շեն վայրերի ավերման նկատմամբ։ 1059—1060 թթ. դեպքերը շարադրելիս Սմբատ սպարապետը սելջուկների կատարած չարագործությունների համար մեղադրելով բյուզանդացիներին, գրում է. «և այս լինէր յանտիրութենէ, և ի չարաբարոյացն Յունաց. զի հանին զերկիրն հայոց ի տէրութենէ Հայոց. և զքաջ զօրականցն Հայոց սպանին խարմամբ»[152]։ Եվ ապա շարունակում է

152 Ս. Սպարապետ, էջ 56։

Սմբատ Սպարապետը. այս սարսափելի օրերին, թողնելով Հայաստանը անպաշտպան, փախչում են Կ. Պոլիս։

Միքայել Ասորին դառնությամբ նշում է, որ բյուզանդական կայսրերը ոչ միայն ասորիների, այլև հայերի նկատմամբ վարելով թշնամական քաղաքականություն, հրամայում էին վառել եկեղեցիների ու վանքերի գրքերը[153]։ Բյուզանդացիների վարած նենգ քաղաքականության[154] և սելջուկների հաճախակի կատարած ավարառական արշավանքների համար բյուզանդական պատմիչները ևս մեղադրում են բյուզանդական կայսրերին։

1060 թ. Սալար Խորասան ամիրայի («Խորասանի Սալարը, տիտղոս է) գլխավորությամբ մի հրոսակախումբ արշավեց Եդեսիայի վրա։ Նոր կայսր դարձած Կոստանդին Դուկասը Անտիոքի դուքս Խաչատուր Անեցու օժանդակությամբ ձախողության մատնեց Եդեսիան պաշարող սելջուկներին։ Այնուհետև, նույն թվականին սելջուկյան մի այլ բանակ[155] Տուղրիլ բեգի մեծ դիվանի ամիրաների գլխավորությամբ արշավում է Վասպուրականի Սենեքերիմ թագավորի որդիների՝ Ատոմի և Աբուսահլի տիրույթ՝ Սեբաստիա քաղաքի վրա։ Վերջիններս փախան և ապաստանեցին Խավատանեք անառիկ բերդում։ Այսպիսով, սելջուկները հեշտությամբ գրավեցին անպարիսպ Սեբաստիան և կողոպտեցին Սենեքերիմ թագավորի դանձարանը։ Գերեվարեցին շատ կանանց և երեխաների։ Թեև Կ. Պոլսից ժամանած օժանդակ զորքերը, հայ զորավար Պանկուրասի գլխավորությամբ հետապնդեցին Ատրպատական վերադարձող սելջուկներին, սակայն ճանապարհին պարտություն կրեցին[156]։

Մինչդեռ Բյուզանդիան սթափվելով անընդհատ կրկնվող արշավանքներից, սկսեց վերակառուցել Հայաստանում գտնվող ավերված բերդերն ու քաղաքների պարիսպները, 1062 թ. Տուղրիլի հրամանով, վերոհիշյալ Սալար Խորասանի գլխավորությամբ և Ճեմճեմ և Իսոլու ամիրաների ընկերակցությամբ, սելջուկյան թուրքմենական մի բանակ այս անգամ ներխուժում է Դիարբեքիրի սահմանում գտնվող Զորորդ Հայքի Պաղինի, Հայոց Միջագետքի՝ Թլխումի և Արղնիի հայերով բնակեցված՝

153 Chronique de Michel le Syrien, ed. par Chabot, 1899—1905, ch. III, p. 166.

154 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Գ, էջ 43։

155 Մ. Ուռհայեցի, էջ 133։ Հիշատակվում են Դամուխ, Ամբ-քափր Գ, Դիճաճիճի ամիրաները։

156 Մ. Ուռհայեցի, էջ 134—135։ Ս. Սպարապետ, էջ 56։ Մ. Չամչյան հ. Բ, էջ 973—975։

157 Ս. Սպարապետ, էջ 57։

շրջանները[157]։ Նրանց միացավ նաև Մրվանյան Նիզամ Ալ-Դաուլա Նասր ամիրան։ Զեռք բերված գերիները վաճառվում էին Ամիդի շուկաներում։ Կայսր Դուկասի ուղարկած բյուզանդական բանակը Ֆրանկոպոլ (Հերվե) անունով Նորմանդացի զորավարի գլխավորությամբ՝ որին միացավ նաև Եդեսիայի Տավտանոս զորավարի գլխավորած զորքը, հետապնդելով Ատրպատական վերադարձող սելջուկներին՝ պաշարում են Ամիդը։ Թեև Մրվանյան ամիրային հաջողվում է կաշառելով Ֆրանկոպոլին, վերացնել քաղաքի պաշարումը, սակայն վերջինս 1063 թ. Կարին վերադառնալու ճանապարհին պարտության է մատնում Ճեմճեմ և Իսոլու ամիրաների հրոսակախմբերին[158]։

Վերևում շարադրվածից պետք է հետևցնել, որ սելջուկյան թուրքերի և Հայաստանի հարևան մահմեդական ամիրայությունների արշավանքներին առաջին հերթին զոհ դարձան Հայկական լեռնաշխարհի դաշտային անպաշտպան շրջանները։ Հայաստանի հարավային ու արևմտյան ավերված ու կողոպտված կողմերում հայությունը միայն տեղ-տեղ կարողացել էր փրկվել, ապաստանելով անմատչելի կամ ամրություններով պաշտպանված լեռնային շրջաններում։

«Հարձակումներից համեմատաբար,— գրում է Հ. Մանանդյանը,— զերծ մնացած այդպիսի անկյուններ էին, օրինակ, Վանա լճի արևելքում ու հարավում՝ Ամյուկը, Աղթամարը, Ռշտունիքը և Մոկքը, իսկ հարավ-արևմուտքում՝ Սասունը։ Ամյուկում և Աղթամարում դեռ շարունակում էին իշխել Արծրունիների տոհմի շառավիղները»[159], որոնք մնացել էին երկրում և չէին գաղթել Սեբաստիա, Մոկքում ևս պահպանվել էին ազնվական հին իշխող տոհմերի մնացորդները, իսկ Սասունում, ինչպես մանրամասն ցույց է տվել Մարկվարտը[160], իշխում էր Տայքի Զորտվանել իշխանի տոհմը, որը կապվել էր խնամիական կապերով հայ Մամիկոնյանների և Պահլավունիների իշխանական տների հետ և դառել նրանց մոտ ազգական»[161]։

Այսպիսով, թեև Տուղրիլ բեգի ժամանակ (1025—1063 թթ.) կատարվող սելջուկյան արշավանքները չհանգեցրին Հայաստանի նվաճ-

158 Մ. Ուռհայեցի, էջ 138, Սմբատ Սպարապետի Տարեգիրք, էջ 57—58։ Abul Faraj, p. 216. Մ. Ուռհայեցու մոտ նշված Ճեմճեմ ամիրան պետք է լինի Ճեմճեմ։

159 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Գ, տե՛ս Թովմա Արծրունի, IV, ԺԲ, էջ 302 և հետ։

160 Y. Marquart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, p. 517—530.

161 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Գ, էջ 51։

մանը, սակայն նրանք հեշտացրեցին առաջիկա արշավանքներն ու նվաճումները այն իմաստով, որ երկարամյա շարունակվող ավերումներն ու կողոպուտը կոտորածներն ու գերեվարությունը այն հետևանքները ունեցան, որ ամայացրին և թուլացրին Բյուզանդական կայսրության արևելյան սահմանների պաշտպանական գծերը՝ հատկապես Հայաստանը և հող նախապատրաստեցին ոչ միայն ամբողջ Հայաստանի, այլև՝ Բյուզանդական կայսրության Փոքր Ասիայի արևելյան և արևմտյան նահանգների նվաճմանը՝ Ալփասլանի (1063—1072 թթ.) և Մելքիշահի (1072—1092 թթ.) ժամանակ։

Հայաստանի տարածքի վրա կատարված ավերածությունների և կոտորածների գլխավոր պատճառը պետք է համարել Բյուզանդական կայսրության ոչ միայն վերջին 30 տարիներում վարած հայատյաց քաղաքականությունը, այլև Բյուզանդիայի և նրա քաղկեդոնական հոգևորականության վարած ագրեսիվ քաղաքականությունը՝ հայերի նկատմամբ, որով մեկ առ մեկ Կայսրությանը կապվեցին Հայաստանի տարածքում գտնվող հայ իշխանների տիրույթները, արմատախիլ անելով Հայրենի բուն երկրից՝ տեղափոխվեցին Բյուզանդական կայսրության Փոքր Ասիայի կենտրոնական և հարավային նահանգները՝ Կապադովկիա և Կիլիկիա։ Ինչպես պատահեց Տայքի, Վասպուրականի, Անիի, Արծրունյաց, Բագրատունիների և այլ թագավորական իշխանական տների հետ, ընդ որում թողնելով հայ ժողովրդի զանգվածներին անտերունչ ու անպաշտպան[162]։

Ուռհայեցին դառնությամբ նկարագրելով սելջուկյան արշավանքների ժամանակ կատարված ավերումներն ու կոտորածները, այդ բոլորի համար մեղադրելով Բյուզանդիայի քաղաքականությունը Հայաստանում, ցասումով և դառնությամբ արձանագրում է,— «Ո՞վ կարասցէ մի ըստ միոջէ պատմել զկորուստ բարկութեանն և զլաց ապաշաւանաց տանս Հայոց, զոր յանօրէն և յարեանարբու գազանացն զօրացն Թուրքաց կրեաց յանտիրութենէ, ի սուտ պահապանացն, ի տկար և ի թուլամորթ վատ ազգին Յունաց, վասն զի մի առ մի քակեալ հանին զքաջ զզօրականսն ի տանէն Հայոց, զորս հանին յարկաց և ի գաւառաց և բարձեալ խափանեցին զաթոռ թագաւորութեանն Հայոց. քակեցին զցանկ պահպանութեանն զօրաց և զօրավարաց. և ազգն Հոռոմոց իւրեանց անուն քաջութեան զանդարձ փախչելն արարին պարծանք. նմանեցան վատ հովուացն, որ յորժամ զգայլն տեսանէ՝ փախչի։ Սակայն Հոռոմք (իմա՝ բյուզանդացիք—Ս. Բ.) յայն ջանս ջանացան, որ լուր զպարիսպ ամրութեան տանս Հայոց քակեալ կործանեցին և զՊարսիկք (իմա՝ սելջուկ-Թուրքերը—Ս. Բ.), ի վերայ արձակեցին սրով և զամենայն յաղթութիւնն իւրեանց համարեցան և ինքեանք անպատկառելի երեսօք կուրտ զօրավարօք և ներքինի զօրոք զՀայք պահել ջանային»[163]։

Այնուհետև, Ուռհայեցին նշում է, որ սելջուկ Թուրքերը գտնելով Հայաստանը անտեր, անտիրական, հեշտությամբ գրավեցին այն և կարճ ժամանակում ծնկի բերելով բյուզանդական զորքին հասան մինչև Կ. Պոլսի դարբասները։ Բյուզանդացիք «զամենայն իշխանսն Հայոց և զքաջ զօրականսն հանին յարևելից և բերին բնակեցուցին ի Յոյնս». և այդ պատճառով ոչ ոք չկար դիմադրելու Թուրքերին, իսկ բյուզանդական զորքի մեջ եղած հայերը ի վրեժխնդրություն բյուզանդացիներին, հաճախ չէին կռվում՝ և թողնում փախչում էին, որովհետև հայերին ստիպում էին քաղկեդոնականություն ընդունել, իսկ մերժվելու դեպքում կամ բանտարկվում էին կամ էլ «զաչսն խաւարեցուցանէին և կամ ի ծովն ձգեալ խեղդամահ սատակէին»[164]։

Բյուզանդական կայսրության հայատյաց ու նենգ քաղաքականությունը դատապարտում են ոչ միայն հայ, այլև բյուզանդական ժամանակագիրները։ Դա այնքան ակնհայտ է, որ սկսած XVIII դ. ոչ միայն հայ պատմագրության ներկայացուցիչները, այլև բյուզանդագետներ ու հայագետներ՝ Մ. Բրոսեն, Գ. Շլյումբերժերը, Ժ. Լորանը, Հոնիգմանը, Ռ. Գրուսեն և Լ. Կահենը, քննարկում և դատապարտում են այդ քաղաքականությունը։ Հետաքրքիր է նույնիսկ, որ արդի Թուրք պատմաբաններ Մ. Յընանչը, Ի. Քաֆեսօղլուն, Օ. Թուրանը, Ֆ. Սումերը և ուրիշներ, քննարկելով այդ ժամանակաշրջանի Բյուզանդական կայսրության վերաբերմունքն ու քաղաքականությունը հայերի, վրացիների և այլ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ արձանագրում են հայ և օտար ժամանակագիրների վկայությունները այդ առթիվ։ Անշուշտ, Թուրք պատմագրությունը մի կողմից նշելով Բյուզանդական կայսրության անտարբեր ու անփույթ վարքագիծը Բյուզանդիայի արևելյան նահանգների ժողովուրդների ճակատագրի նկատմամբ[165], միաժամանակ փորձում են

162 Մ. Ուռհայեցի, էջ 137։ Տե՛ս նաև Մ. Չամչյան, հ. Բ, էջ 969—971, Մ. Չամչյանը վկայակոչում է բյուզանդական պատմիչներ Սկիլիցային և Զոնարասին։

163 Մ. Ուռհայեցի, էջ 135—136։

164 Մ. Ուռհայեցի, էջ 136։

165 O. Turan, Selçuklular Tarihi, p. 107.

արդարացնել սելջուկ թուրքերի, հատկապես Տուղրիլ բեգի ձեռնարկած ավարառական արշավանքները, հիմնավորելով այն թուրքմենական քոչվոր ցեղերի տնտեսական պահանջները բավարարելու, իրենց անասունների հոտերի համար՝ նոր և ընդարձակ արոտավայրեր որոնելու՝ անհրաժեշտությամբ[166]։

Ֆ. Սումերը հետևյալ կերպով է բացատրում այն, որ Տուղրիլ բեգի ժամանակ սելջուկները Հայաստանի տարածքի նվաճման ու գրավման նպատակներ չունեին։ «Տուղրիլ բեգի ժամանակ Անատոլիայում (իմա՝ Բյուզանդական կայսրության փոքրասիական նահանգները—Ս. Բ.) խոշոր նվաճումների բացակայության պատճառը պետք է համարել Միջագետքի արշավանքները, որը Տուղրիլ բեգը ստիպված էր կատարել Աբբասյան խալիֆայության պաշտպանության նպատակով։ Այնուամենայնիվ նա ի վիճակի եղավ մի խոշոր արշավանք կազմակերպել 1054 թ. Վանի շրջանում, նախքան միջագետքյան արշավանքները, նա գրավեց բյուզանդական սահմանային ամրոցը՝ Բերկրին, սակայն չկարողացավ գրավել ուժեղ ամրացված Մանազկերտը։ Արդարև, նրա բանակները հասան մինչև Տրապիզոն՝ ձեռք բերելով մեծ քանակությամբ ավար, ինչն էր այս արշավանքների նպատակը։ Դրանք կատարվում էին ավար ձեռք բերելու համար։ Արտուխ բեգը, Մելիքշահի ժամանակաշրջանի գլխավոր հրամանատարներից մեկը, մի անգամ ասել էր, որ գերիները սովորաբար վաճառվում էին, իսկ եթե ընդունում էին իսլամը, ազատվում էին գերությունից։ Այն փաստը, որ հազարավոր հայ զինվորներ կային սելջուկյան կանոնավոր բանակում, հաստատում է Արտուխ բեգի ասածը»[167]։ Այնուհետև Ֆարուք Սումերը, անտեսելով և կեղծելով փաստերը, ցանկանում է ապացուցել, որ «Այս արշավանքներում ավերումն ու ջարդը հազվադեպ էին և սելջուկ թուրքերը դիմում էին դրան միայն (թշնամու) լուրջ դիմադրության դեպքում»[168]։ Մինչդեռ ոչ միայն հայ և այլ քրիստոնյա պատմիչներն են վկայում խաղաղ բնակչության բազմաթիվ կոտորածներն ու ջարդերը, այլև մահմեդական՝ արաբ և պարսիկ պատմիչները հաստատում են այդ պատմիչների վկայությունները, այն էլ ոչ թե միայն քրիստոնյա բնակչության, այլև նույնիսկ իրենց հավատակիցների նկատմամբ։

---

166 M. Yinanç, p. 57.

167 F. Sumer, նշվ. աշխ., էջ 141—142։

168 Նույն տեղում, էջ 142։

Մի՞թե Ֆարուք Սումերին և մյուս թուրք պատմաբաններին հայտնի չեն Ա. Լաստիվերցտու, Մ. Ուռհայեցու, Սմբատ Սպարապետի, վրաց ժամանակագրի, Մ. Ասորու, Աբու-լ-Ֆարաջի, Իբն ալ-Ասիրի, Իմադ ադ-դին ալ-Բոնդարիի, Բուրհան ադ-Դին Անեցու, Սադր ադ-Դին Աբու-լ-Հասան Ալի Իբն-Նասր Իբն Ալի ալ-Հուսեյնի վկայությունները սելջուկ թուրքական կանոնավոր բանակների և թուրքմեն հրոսակների կատարած եղեռնական ավերումների ու կոտորածների մասին՝ Հայաստանի բարգավաճման, ծաղկուն և վաճառաշահ քաղաքներ՝ Վանում, Բերկրիում, Դվինում, Անիում, Արծնում, Կարսում, Սեբաստիայում, Մանազկերտում, Կարինում, Արճեշում, գյուղաքաղաքներ և ավաններ՝ Սմբատաբերդում, Բյուրում, Օկոմիում, Արծկեում, Երիզայում և այլ բազմաթիվ գավառներում և քաղաքներում։

Մի՞թե բավարար չեն վերոհիշյալ վկայությունների մեջ այն հատվածները, որտեղ պատմիչները անմիջականորեն նշում են, որ անօրենները, այսինքն՝ սելջուկ թուրքերը, վերոհիշյալ քաղաքների բնակիչների վրա հարձակվում են ու կոտորում՝ տոների ժամանակ, երբ նրանց մեծ մասը գտնվելիս են լինում եկեղեցիներում կամ զբաղված են լինում դաշտային աշխատանքներով կամ էլ բյուզանդական դավաճան բանակների նահանջի պատճառով ապաստանած են լինում քաղաքների պարիսպների հետևում կամ բերդերում։ Ըստ երևույթին, պատմաբաններին դուր չի գալիս այն դիմադրությունը, որ ցույց էին տալիս հայկական իշխանությունների մնացորդները՝ Կարսում, Անիում, Տարոնում կամ հայ անվեհեր քաջամարտիկները՝ Արծնում, Մանազկերտում, Բերկրիում և այլն։ Չենք ուզում կրկին անմիջական մեջբերումներ կատարել հայ և օտար պատմիչների այդ վկայություններից, քանի որ այդ կատարել ենք դեպքերը շարադրելիս։ Ինչպես նշվեց վերևում, սելջուկ թուրքմենական հրոսակ ցեղերը այնքան էին կլանված ավարառական մոլուցքով, որ կողոպտելիս նրանք նույնիսկ չէին խնայում իրենց հավատակից պարսիկներին ու արաբներին։

Արդի թուրք պատմաբաններ Մ. Յընանջը, Ի. Քաֆեսօղլուն և Օ. Թուրանը 1025—1063 թթ. ընկած ժամանակաշրջանում սելջուկ թուրքերի և նրանց թուրքմենական հրոսակների կատարած ավարառական արշավանքներն ու ապստամբությունները շարադրելիս միտումնավոր զանց են առնում՝ ոչ միայն հայ և քրիստոնյա պատմիչների վկայությունները, այլև վերոհիշյալ արաբ և պարսիկ պատմիչների ու ժամանակագիրների և այլոց վկայությունները Խորասանում, Պարսկաստանում, Դելմիկների

երկրում, Ատրպատականում, Պարսկական Իրաքում, Միջագետքում, Դիարբաքրի՝ Մրվանյանների ամիրայություններում, Ասորիքում և մյուս մահմեդական երկրներում պարսիկ և արաբ բնակչության նկատմամբ Օղուզների՝ թուրքմենների կատարած կոտորածների, գերեվարության ու ավերումների մասին։ Հիշյալ պատմաբանները պնդում են, որ եթե նույնիսկ կատարվել են այդպիսիք, դրանք իբր կատարվել են ոչ թե սելջուկ թուրքական կենտրոնական իշխանությունը ներկայացնող Տուղրիլ և Չակրի բեգերի հրամանով ու թույլտվությամբ, այլ կենտրոնական իշխանության դեմ ըմբոստացող և դրանց հետապնդումից փախչող օղուզների՝ թուրքմենական ցեղերի և դրանց գլխավորող թուրքմեն առաջնորդների՝ Իբրահիմ Յաննալի, Դիլմուշի և այլ առաջնորդների գլխավորությամբ։ Մինչդեռ վերոհիշյալ պատմիչները բաղմաթիվ առիթներով նկարագրում են նշված երկրների քաղաքների ավերման ու կողոպտման և այդ քաղաքների բնակչության կոտորածների և գերեվարության մասին։ Միջագետքում օղուզների կատարած կողոպուտը այնքան մեծածավալ ու դաժան է եղել, որ Դիարբաքրի Մրվանյան ամիրա Նասր-ալ-Դաուլան և Բաղդադի Ջալալ ալ-Դաուլա Իբն Բուվայհը, Դիարբաքրի տարածքում, Մոսուլում և այլ քաղաքներում կատարած չարագործությունների մասին առանձին նամակներով տեղեկացնում են Տուղրիլ բեգին։ Վերջինս իր պատասխան նամակում արդարանում է նրանով, որ իբր թե նրանք ըմբոստներ են և իրեն չեն ենթարկվում[169]։

1030-ական թվականներին Ուրմիայում և Միջագետքում օղուզ թուրքմենների կատարած սպանությունների ու կոտորածների քանակի ու չափի մասին գաղափար կազմելու համար՝ ոչ միայն կարելի է վերհիշել մեր շարադրանքի ընթացքում բերած բազմաթիվ վկայությունները, այլև այդ կոտորածների ընթացքում օղուզ թուրքմենների տված մարդկային զոհերի քանակը։

Մոսուլի Քիրվաշ ամիրան Ուրմիայի տիրակալ Իբն Ռաբիբ ադ-Դաուլային հասցեագրած նամակում՝ ավետելով իր հաղթանակը օղուզ թուրքերի դեմ, տեղեկացնում է, որ նա օղուզներից սպանել է 3000 մարդ։ Իր հերթին Իբն Ռաբիբ ադ-Դաուլան Քիրվաշի դեսպանին հետևյալն է ասում. «Շատ տարօրինակ բան. սրանք՝ օղուզները իմ երկրից անցնելու ժամանակ կամուրջների վրա մարդ նշանակելով նրանց հաշվել

169 El-Bundari. Նշված աշխատության մեջ Իբն ալ-Ասիրից բերված հատվածների թուրքերեն թարգմանությունը, տե՛ս նաև Ибн ал-Асир, стр. 113—114։

տվեցի։ Նրանք ավելի քան 30000 հոգի էին։ Պարտությունից հետո նրանց վերադարձին 5000 հոգի էլ չէին մնացել»[170]։

Ի դեպ, Իմադ ադ-դին Անուշիրվանի և Իբն ալ-Ասիրի մոտ գտնում ենք հետաքրքիր մի հատված Խորասանի Նիշաբուր քաղաքի մոտ 1039 թ. տեղի ունեցած մի դեպքի մասին՝ որը վկայում է ոչ միայն սելջուկ-թուրքական աշխարհակալության կազմավորման արշալույսին սելջուկ թուրքերի հետապնդած կողոպտչական նպատակներն ու նրանց կատարած դաժանությունները, այլև ժխտում է վերոհիշյալ թուրք պատմաբանների կողմից սելջուկ թուրք առաջնորդներ՝ Տուղրիլ և Չակիր բեգերին վերագրված մեղմ և խաղաղասիրական քաղաքականությունն ու պետականության զգացումով և պատասխանատվությամբ տոգորված լինելը։ Այսպես Իմադ ադ-Դինը գրում է. «Երբ մոտենում են (Հիջրի 429 թ.) Նիշաբուր քաղաքին, երկու եղբայրներ՝ Տուղրիլ բեգի և Չակիր Իբն Դավուդ բեգի միջև վեճ է ծագում։ Չակրի բեգը ուզում է կողոպտել և ավերել Նիշաբուրը։ Տուղրիլ բեգը թույլ չի տալիս (այդ անել) հատկապես այն բանից հետո, երբ խալիֆան (իմա՝ վերևում հիշատակված Ջալալ ալ-Դաուլա իբն-Բուվայհը—Ա. Բ.) դեսպան է ուղարկում և (նամակով) խնդրում է հրաժարվել կողոպուտից (մահմեդական բնակչության նկատմամբ)։ Օրը ուրբաթի նախօրյակն էր»։ Սակայն, ավելացնում է Իմադ ադ-դինը, Չակիր բեգը «պնդեց իր առաջարկը (այսինքն՝ կողոպուտի ենթարկել քաղաքը), հանեց դանակը, ասելով (Տուղրիլ բեգին) կամ ինձ կթողնես կամ թե ինքնասպանություն կկատարեմ։ Սրա վրա Տուղրիլ բեգը հանդարտվեց և կարծես թե համաձայնվեց կողոպուտին»[171]։

Այնուհետև Իմադ ադ-դինը գնալով սելջուկների նվաճումների հետքերով Տուղրիլ բեգի տնտեսական և քաղաքական հզորության աղբյուրներից մեկը դիտում է դելմիկների երկրում գտած հարուստ գանձը, «Դայլամցիների երկրում այնքան գանձ և հարստություն գտավ (իմա՝ Տուղրիլ բեգը—Ա. Բ.), որ դրանց շնորհիվ Տուղրիլ բեգի նեղությունները անցան և դրանց հաջորդեցին երջանիկ և ուրախ օրերը»։

Այսպիսով, Տուղրիլ բեգի հաջորդները՝ Ալփասլանի ու Մելիք շահի և վերջինիս հաջորդների ժամանակ XI—XII դդ. սելջուկ-թուրքական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում կողոպուտը, ավերումներն ու կոտորածը Հայաստանի XI—XII դդ. պատմության գլխավոր հատկանիշներից ու աղետալի օրինաչափություններից էին։

170 Ибн ал-Асир, стр. 114.

171 El-Bundari, p. 3—4։ Հետաքրքիր է, որ Իբն ալ-Ասիրի մոտ, ինքնասպանությամբ սպառնացողը ո՛չ թե Չակիրն է, այլ Տուղրիլը։ Տե՛ս El-Bundari, p. 4

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ (1063—1072 թթ.)

ա. Ալփասլանի արշավանքները Հայաստան և Վրաստան 1063—1065 թթ.: Անի քաղաքի գրավումը և ավերումը: Կարսի Գագիկ թագավորի հպատակվելը Ալփասլանին և գաղթը Փոքր Ասիա (1064—1065 թթ.):

Սելջուկյան անդրանիկ սուլթան Տուղրիլ բեգի մահը ազդարարեց սուլթանության ռազմաֆեոդալական կառուցվածքի թույլ կողմերից մեկը՝ ֆեոդալական մասնատվածությունը և դրան ուղեկցող երկպառակություններն ու գահակալական կռիվները: Երկարատև գահակալական կռիվներն ու ուժգնորեն ի հայտ եկող գահի հավակնորդների կենտրոնախույս նկրտումները, հետագայում՝ դառնալու էին աշխարհակալության տրոհման ու անկման գլխավոր պատճառներից մեկը: Հասկանալի է, որ աշխարհակալության մեջ մտնող բազմաթիվ երկրներ ու երկրամասեր դառնալու էին ռազմական գործողությունների թատերաբեմ: Անշուշտ, այդ խժդժություններն ու ավերածությունները բացասական և աղետալի հետևանքներ էին ունենալու այդ երկրների, այդ թվում և Հայաստանի տնտեսական զարգացման վրա և պատճառ էին դառնալու հայ աշխատավոր ժողովրդի դաժան շահագործմանը: Այնուհետև յուրաքանչյուր սուլթանի մահը և նրան հաջորդող սելջուկյան հարստության ներկայացուցչի գահակալումը առիթ էր հանդիսանալու կենտրոնախույս ուժերի աշխուժացմանը:

Թեև Տուղրիլ բեգի մահից հետո նրա եղբոր՝ Չակիր բեգի որդի՝ Ալփասլանից քիչ չանքեր չպահանջվեց ճնշելու գահի հակառակորդների դիմադրությունը սուլթան դառնալու համար (1063—1072), սակայն Ալփասլանին հաջորդող որդու՝ Մելիք շահի (1072—1092) մահից հետո տեղի ունեցող գահակալական երկպառակությունների հետևանքով ստեղծված քաղաքական ճգնաժամերը և նրան ուղեկցող տնտեսական քայքայումը պատճառ դարձան աշխարհակալության վերջնական տրոհման և ապա՝ անկման:

Ալփասլանը իր հոր՝ Չակիր բեգի մահվանից հետո Խորասանի նահանգապետն էր: Տուղրիլ բեգը լինելով անժառանգ, իր կյանքի վերջին տարիներին իրեն հաջորդ էր նշանակել եղբորորդուն՝ Չակիր բեգի մյուս որդուն՝ Սուլեյմանին[1]: Տուղրիլ բեգի սուլթանության վերջին տարում (1063 թ.) դեռևս շարունակվում էր սելջուկյան Արսլանի որդի Գթլմուշի[2] ապստամբությունը կենտրոնական իշխանության դեմ: Վերջինի ճնշմամբ զբաղվում էր սուլթանի մեծ վեզիր՝ Ամիդ ալ-մուլքը, որը լսելով Տուղրիլի մահը դադարեցնում է Գիրդ-գուհ (Գիրգիգուկ) բերդում ապաստանած Գթլմուշի զորքերի պաշարումը, շտապում է Ռեյ մայրաքաղաքը և միջոցառումներ ձեռք առնում Սուլայմանին սուլթան հռչակելու համար: Հետևաբար, բանակը իր շուրջը համախմբելու և գահի մյուս հավակնորդների դեմ օգտագործելու նպատակով զինվորներին բաշխում է 700000 դինար, 10000 թոփ (հակ) գործվածքեղեն և կերպասեղեն ու զենքեր: Սպահանում գտնվող Սուլայմանին տեղափոխում է Ռեյ և Տուղրիլ բեգի կտակին համախոհ զինվորականների հետ միասին հռչակում է նրան սուլթան: Սակայն Ալփասլանը և Գթլմուշը նույնպես գահի հավակնորդներ էին: Սուլայմանի հակառակորդ սելջուկյան Յունուսի որդի Ալ-Բասանը Կազվին գնալով, Ալփասլանին հռչակում է սուլթան: Ամիդ ալ-Մուլքը 1063 թ. հունիսին սուլթանի մահից առաջ մի պայմանագրով Գիրդ-գուհ ամրոցը զիջել էր Գթլմուշին: Սուլթանի հիվանդության ժամանակ Ալփասլանը 20000 զորքով Խորասանի Մերվ քաղաքից շարժվել էր Ռեյի վրա, սակայն իմանալով Տուղրիլի ապաքինումը վերադարձել էր Մերվ: Մյուս կողմից զլուխ էր բարձրացրել գահի հավակնորդ Գթլմուշը: Գնահատելով դրության ծանրությունը Ամիդ ալ-Մուլքը հաշտեցնում էր գահի հավակնորդներ Ալփասլանին և Սուլայմանին այն պայմանով, որ խութբաներում առաջինը հիշատակվելու էր Ալփասլանի անունը և ապա՝ Սուլայմանինը:

---

[1] *Տուղրիլ բեգը իր եղբոր Չակիր բեգի մահից հետո ամուսնացել էր նրա կնոջ հետ:* O. Turan, Selçuklular tarihi, p. 97.

[2] *Գթլմուշի փոխարեն վերջին հետազոտություններում առաջարկվում է Գութլամիշ անվանումը: Տե՛ս* Köprülu, Belleten, XXVII, p. 475. *К. Э. Босфорт*, Мусульманские династии, М., 1971, стр. 178; *Cl. Cahen-ը առաջարկում է Քութլումուշ: Տե՛ս* Cl. Cahan, Qutlumush et ses fils avant l'Asie Mineure. Der Islam, XXXI, 1965, p. 5, 14.

Դահի մյուս հավակնորդը՝ Գիլմուշը, Գիրդ-գուհ ամրոցից 50000 թուրքմեններով շարժվում է Ռեյի վրա և իրեն հռչակում սուլթան։ Ամիդ-ալ-Մուլքի կողմից ուղարկված Ցինանջ բեգի զորքերը գերի վերցվեցին Գիլմուշի կողմից[3]։ Նույն վախճանին արժանացան նաև Ալփասլանի ուղարկած էրդեմ ամիրայի հրամանատարության ներքո գտնվող զորքերը[4]։ Ալփասլանը իր թիկունքը ապահովելու նպատակով զբաղված էր դահի մյուս հավակնորդ իր մեծ հորեղբոր՝ Ցախր ալ-Մուլք Ինանջ (Մուսա) Յաբղուի ապստամբության ճնշմամբ, որը պարտվելով գերի ընկավ։ Այնուհետև Ալփասլանը իր զորքով արշավեց Գիլմուշի վրա, որը գտնվում էր Ռեյում։ Գիլմուշը վախենալով Ամիդ ալ-Մուլքի զորքերի և Ալփասլանի զորքերի դեմ երկու ճակատով կռվելուց լքում է Ռեյը և Նիշաբուրի մոտ ճակատելով Ալփասլանի զորքերի դեմ, պարտության է մատնվում։ Ապա փախչելով Ալփասլանի առջևից, ձիուց ընկնում է և մեռնում[5]։

Ալփասլանը պարտության մատնելով դահի հավակնորդներին և իր հակառակորդներին, Ռեյում՝ սուլթան Տուղրիլի պալատում, մեծ հանդիսավորությամբ հռչակվեց սուլթան։ Ալփասլանը ապստամբների մնացորդներին սիրաշահելու նպատակով ներում է Գիլմուշի որդիներին, և մյուս կողմնակիցներին շնորհում ամիրա և մելիք տիտղոսները։ Կենտրոնից հեռացնելու նպատակով նրանց նշանակում է Հայաստանի և Փոքր Ասիայի սահմանները ասպատակող թուրքմեն ջոկատների պետեր[6]։

Ապստամբ ամիրաներին՝ այդ թվում նրան գլխավորողներից՝ Գիլմուշին պարտության մատնելուց և սուլթանության արևելյան շրջանները ապստամբներից մաքրելուց և Իրանի ամբողջ տարածքում իր տիրակալությունը հաստատելուց հետո, Ալփասլանը ձեռնարկեց մի շարք արշավանքներ Հայաստանի հյուսիսային և կենտրոնական շրջանները, որոնք նախորդ հարձակումների ժամանակ համեմատաբար զերծ էին մնացել ավերումներից։ Գլխավորն այն էր, որ այս արշավանքները մասամբ նվաճողական բնույթ էին կրում և գրավված երկրների մի մասում ստեղծվում էին սելջուկյան վարչա-քաղաքական միավորումներ՝ ամիրայություններ։

Ալփասլանի առաջին արշավանքը դեպի Հայաստան ուներ և ռազ-

[3] *Abul Faraj*, p. 213.
[4] *El-Bundari*, p. 28.
[5] *Sadruddin El-Hüseyni*, p. 22—23. *El-Bundari*, p. 28.
[6] *Cl. Cahen*, Qutlumush et ses fils avant l'Asie Mineure, p. 15—16.

մագիտական նշանակություն։ Այն ապահովելու էր նրա Մերձավոր Արևելքում՝ Եգիպտոսի ֆաթիմյանների և Բյուզանդիայի դեմ ձեռնարկվելիք հետագա խոշոր արշավանքների թիկունքը։

Ալփասլանը մեծ բանակով 1064 թ. փետրվարին Հյուսիսային Իրանի Ռեյ քաղաքից եկավ Ատրպատականի Մարանդ քաղաքը։

Որոշ հեղինակներ Ալփասլանի Մարանդ դալը բացատրում են նրանով, որ իբր թե նա նպատակ չի ունեցել արշավել Հայաստան և Վրաստան, այլ եկել էր այնտեղ պատժելու Սաքիի քրդերին, որոնք իրենց ասպատակություններով և ապստամբություններով նեղություն էին պատճառում սելջուկյան բանակներին և հաճախ իրենց հարձակումներով խոչընդոտում սելջուկյան բանակների առաջխաղացումը։ Սակայն Մարանդում Ալփասլանը ծրագրում է արշավել Անդրկովկաս։ Այդ մտքին նա հանդում է Անդրկովկաս մի քանի անգամ ներխուժած թուրքմեն առաջնորդներից մեկի՝ Թուգտեքինի խորհրդով[7]։ Վերջինս սուլթանին հաղորդում է, որ բյուզանդական տարածքում, հատկապես Վրաստանում տիրում է ապստամբական և խառնաշփոթ վիճակ և որ հայերն ու վրացիները դժգոհ են Բյուզանդիայից։ Այնուհետև Թուգտեքին բեգը մանրամասն զեկուցեց Վրաստանի, Հայաստանի և Առանի տարածքի վրա գտնվող ճանապարհների, բերդերի և քաղաքների մասին։ Հետևաբար նրա դրդմամբ և հորդորանքով Ալփասլանը որոշեց արշավանք սկսել Բյուզանդիայի դեմ[8]։ Շուտով նրա շուրջը համախմբվեցին Ատրպատականի և Առանի ամիրաները։ Վերջիններիս օգնությամբ նա կառուցեց բազմաթիվ նավակներ և իր մեծ բանակով հեշտությամբ անցավ Արաքս գետը և մտավ Նախճավան[9]։ Այստեղ իր որդու՝ Մելիքշահին նշանակում է Բագաժառանգ[10] և մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքի[11] առաջնորդությամբ

[7] *Տե՛ս Kafesoglu*, Meliksah devrinde buyuk selcuklu imperatorlugu, Istanbul, 1953, p. 10. Sadruddin el-Huseyni, p. 24.
[8] *Sadruddin el-Huseyni*, p. 24.
[9] Նույն տեղում։
[10] Մելիքշահը ծնվել է 6 օգոստոսի 1055 թ., ուստի նա ինքը ինը տարեկան էր, երբ նշանակվեց Բագաժառանգ։ *Տե՛ս Kafesoglu*, Meliksah deurinde, p. 9.
[11] Նիզամ ալ-Մուլք Աբու-Ալի-Հասան Իբն-Ալի Իբն-Իսահակ-ատ Թուսի, ծնվել է 1018 թ. Թուսի նյուկան գավառում, հայրը դեհկան էր, և ծառայում էր Ղազնեյանների հարկային գերատեսչությունում։ Հասանը լավ կրթություն էր ստացել։ Զբաղվել է գրականությամբ։ Դանդանականի 1040 թ. ճակատամարտից հետո մտել է սելջուկների ծառայության մեջ։ Նրա առաջին պետական գործունեությունը սկսել է Բելխում՝ Ալփասլանի պալատում, երբ վերջինս Մելիք էր։ Հասանը այստեղ ստանում է պետության ղեկավարման փորձ։ Ընդհարվելով Ալփասլանի վեզիր Ամիդ Աբու-Ալի Իբն

և Ատրպատականի ամիրա Յակութի ուղեկցությամբ՝ մի մեծ զորաբանակ Նախճավանի վրայով ուղարկում է նվաճելու Հայաստանի կենտրոնական շրջանները, իսկ ինքը ուղղվում դեպի Վրաստան[12]։

1064 թ. Ալփասլանի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքի, այնուհետև՝ Անիի գրավման հանգամանքների մասին մեզ են հասել հայ և օտար աղբյուրների բազմաթիվ վկայություններ։ Հետևաբար, աղբյուրներում նշված արշավանքների ուղղության և դրանց ճանապարհների վրա գտնվող սելջուկների կողմից գրավված բերդերի և քաղաքների անունների և դրանց տեղադրման աղբյուրներում նշված հակասական տեղեկությունները առիթ են տվել արևելագետներ Մ. Բրոսսեյին, Է. Դյուլորիեյին, Է. Հոնիգմանին, Յ. Մարկվարտին, Սեն Մարտենին, Լը Բոյին, Հ. Մանանդյանին, Վ. Մինորսկուն, Քլ. Քահենին, Ռ. Գրուսեյին, Մ. Կանարին արդի թուրք սելջուկագետներ՝ Մ. Յընանչին, Ի. Քաֆեսօղլիին, Օ. Թուրանին և այլոց կատարելու մասնակի ուսումնասիրություններ և ճշգրտումներ։

Անիի գրավման և նրան նախորդող դեպքերի ու արշավանքների մասին ընդարձակ տեղեկություններ են հաղորդում ոչ միայն հայկական, այլև՝ արաբական, ասորական, պարսկական և բյուզանդական աղբյուրները։ Նկատի ունենալով Անիի ռազմագիտական և քաղաքական նշանակությունը՝ Բյուզանդիայի և Հայաստանի համար, ավելորդ չենք համարում մեջբերումներ կատարել աղբյուրների վկայություններից և հանգամանորեն ուսումնասիրության ենթարկել այն։

Ինչպես նշվեց, Ալփասլանը իր որդու՝ Մելիք շահի առաջնորդությամբ մի մեծ զորաբանակ ուղարկել էր Հայաստանի կենտրոնական մասերը նվաճելու, իսկ ինքը՝ իր բանակով ուղղություն էր վերցրել Վրաստան։

Ըստ Հ. Մանանդյանի[13], մի շարք հայ և օտար ուսումնասիրողներ, հենվելով միայն հայ և վրաց աղբյուրների վրա[14], ենթադրում են[15], որ Ալփասլանի այս արշավանքը տեղի էր ունեցել Ուտիքի վրայով դեպի Լոռի, Ջավախք և Շիրակ։ Հետևաբար Հ. Մանանդյանը հավաստի և կարևոր է համարում Իբն ալ-Ասիրի վկայությունները և միաժամանակ ընդունում է Յ. Մարկվարտի կողմից կատարված ուսումնասիրությունը՝ սելջուկյան զորքերի արշավանքի ճանապարհի մասին[16]։

Իբն ալ-Ասիրը իր «Թարիխ ալ-Քամիլ» աշխատության մեջ հիջրի 456 (25 դեկտ. 1063, 12 դեկտ. 1064) թվականի տակ տալիս է երկար և մանրամասն տեղեկություններ սելջուկների կատարած ռազմական արշավանքի մասին։ Նրա տեղեկությունից իմանում ենք, որ Ալփասլանը արշավանք է կատարել երեք ուղղությամբ։ Առաջինը՝ ինքը անձամբ կատարել է Վրաստանում, երկրորդը կատարվել է սուլթանի որդի՝ Մելիք-շահի կողմից մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքի ուղեկցությամբ և երրորդը, երբ Ալփասլանի և Մելիքշահի բանակները, Մարիամ Նիշինի գրավումից հետո, միանում են, պաշարում Անին և գրավում այն։

Ինչ վերաբերում է Մարիամ Նիշինի գրավումից առաջ տեղի ունեցած ռազմական գործողություններին, մեջ ենք բերում Իբն ալ-Ասիրի վկայությունը, որը վերլուծության է ենթարկել Է. Հոնիգմանը[17]։

Ըստ Իբն ալ-Ասիրի, սուլթանը փետրվարի 22-ին 1064 թ. հասնում է Ատրպատական և ապա նավեր կառուցելով անցնում՝ Արաքս գետը և մտնում Նախիջևան։ Հետո նա արշավում է Վրաստան, բանակի մյուս մասը հանձնելով Մելիքշահին[18]։

Շադանի հետ մեկնում է Բելխից։ Տուղրիլի մահվան հաջորդող գահակալական կռիվներում օգնում է Ալփասլանին այն պայքարում, որ նա մղում էր իր մեծ եղբոր Սուլեյմանի նրան հովանավորող՝ Տուղրիլի մեծ վեզիր Ամիդ-ալ-մուլք ալ-Քունդուրուլի դեմ և վերջինիս Ալփասլանի կողմից սպանությունից հետո դառնում է Ալփասլան սուլթանի մեծ վեզիր և Աբասյան խալիֆայից ստանում է Նիզամ-ալ-Մուլք-Քվամ ադ-Դին Վեզ-Դաուլա մականունը և ապա շնորհվում է Ռաքիա Ամիր ալ-Մումինին տիտղոսը։ Նա Ալփասլանի և հետագայում Մելիքշահի զինվորական վարչական և կրոնական խորհրդականն էր և իր ժամանակին սելջուկյան աշխարհակալության հիմնադիր սյունն էր եղել։ Տե՛ս Քաֆեսօղլու նշվ. աշխ., էջ 9—10։

12 *Sadruddin el-Huseyni*, p. 24.

13 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Գ, էջ 54։ Ինչպես կտեսնենք, Մանանդյանին չի հաջողվել օգտագործել մի շարք մահմեդական աղբյուրներ, որոնք կարևոր լույս են սփռում լուսաբանվող խնդիրների վրա։

14 Տե՛ս Մ. Ուռնայեցի, էջ 145 և Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 207։

15 Տե՛ս Մ. Չամչյան, հ. Բ, էջ 977։ Le Beau, Histoire du Bas-Empire, t. XIV p. 443, *Tournebize*, Histoire politique et religieuse de l'Armenie, p. 133.

16 *J. Marquart*. Skizzen zur historischen topographie und Geschichte von Kaukasien, wien, 1928, p. 36—5.

17 Տե՛ս *E. Honigmann*, Die Ostrenze des byzantinisehen Reiches von 363 bis 1071, Bruxelles, 1935, p. 185 և շարունակությունը։ Տե՛ս նաև *I. Marquart*, Osteuropäische und ostasiatische Streifzüge ed. 1927, p. 120—121. (Այսուհետև՝ *I. Marquart*, Streüfzüge.

18 Տե՛ս Ибн ал-Асир, стр. 118

Թեև Իբն ալ-Ասիրը Ալփասլանի՝ Վրաստանում կատարած ռազմական գործողությունների մասին չի խոսում, սակայն այդ մասին տեղեկություններ կան վրացական ժամանակագրության մեջ[19]։ Ըստ վրացական ժամանակագրի, Ալփասլանը շարժվում է դեպի հյուսիս Կանկարնի, այսինքն՝ հայկական Գուգարքը, հին Գոգարենը, ապա անցնում է առաջ միշտ ուղղություն վերցնելով դեպի հյուսիս մինչև Տրիալետ (Թռեղք), որը ավերելուց հետո նրա առաջապահ ջոկատները մի օրում հասնում են Ղվելիս-Ղուր[20], ապա նա անցնում է Կլարջեթի (Կղարջք) և մի խոշոր շրջան կատարելուց հետո Հայաստանի հյուսիսային և հյուսիսարևմտյան կողմերը, հասնում է մինչև Փանասկերտ, Տայքի հյուսիս-արևելքում, այստեղից նա վերադառնում է Ծրիալետ։ Նրա առաջատար ուժերին չի հաջողվում հանկարծակի բերելով՝ բռնել Վրաստանի թագավոր Բագրատ Դ-ին։ Վերջինիս հաջողվում է փախչել ավելի հյուսիս՝ Քարթլի. հրաժարվելով հետապնդել թագավորին։ Մինչդեռ բանակի մյուս մասը Մելիքշահի հրամանատարությամբ՝ պաշարեց և գրավեց մի ամրոց, որի անունը հայտնի չէ։ Իբն ալ-Ասիրի վկայությամբ «Եվ Մելիքշահն ու Նիզամ ալ-Մուլքը գնացին մի բերդի դեմ, որի մեջ կային բազմաթիվ հոռոմներ։ Բերդի բնակիչները գրոհում էին դեպի դուրս. բռնում էին զորաբանակից շատերին և սպանում նրանցից ահագին բազմություն։ Նիզամ ալ-Մուլքը և Մելիքշահը ցած եկան, առաջ շարժվեցին դեպի բերդը և կռվեցին նրա մեջ գտնվողների դեմ։ Ապա բերդի հրամանատարը սպանվեց, և մահմեդականները տիրեցին բերդին։

Այստեղից նրանք գնացին դեպի Սուրմարի[21] բերդը, որտեղ կային հոսող ջրեր և այգիներ։ Մահմեդականները մարտնչեցին սրա դեմ, տիրեցին նրան և բնակիչներին ստիպեցին դուրս գալ միջից։ Սուրմարիի մոտ գտնվում էր ուրիշ բերդ[22], որը Մելիքշահը նվաճեց և ուղեց քանդել։

---

19 Տե՛ս M. Brosset, Additions, I մաս, էջ 327, A. suiv.

20 Բրոսսեն այդ անվան մեջ տեսնում է Կվելիսցիխե վայրը Մեսխեթիում, տե՛ս M. Brosset, Additions, p. 327, № 4.

21 Ա. Լաստիվերտցու (էջ 58) մոտ Սուրմարի բերդաքաղաք, Գ. Գանձակեցի (էջ 260) «Սուրբ Մարի», բյուզանդական աղբյուրներում Ագիա Մարիա։ Այժմ Սուրմալու Սուրմարի, Արաբական աղբյուրները, էջ 78։

22 Հոնիգմանի կարծիքով, այդ երկու չանվանված բերդերը կարող են լինել Անբերդը և Hagios Grigorios-ը, Honigmann, p. 187. Կարծիք կա, որ դա Բջնին է. J. Marquart, Streifzüge, p. 129. Մյուս բերդը ըստ J. Marquart-ի Կաղզվանն է Արաքսի վրա Կարսի հարավում։

Սակայն Նիզամ ալ-Մուլքը խորհուրդ չտվեց այդ անել և ասաց որ դա մահմեդականների համար սահմանային բերդ է, ուստի և Մելիքշահը հայթայթեց սրան կայազոր, մթերքներ, նաև միջոցներ ու զենք և բերդը հանձնեց Նախիջևանի ամիրային»[23]։

Իբն ալ-Ասիրի վերոհիշյալ վկայություններից հաստատվում են մահմեդական մի այլ աղբյուրի «Սադրուդդին ալ-Հուսայնիի» աշխատության մեջ։ Այստեղ նույնպես նշվում է, որ սուլթան Ալփասլանի արշավանքը երկու ուղղությամբ է եղել։ Ինչպես մատնացույց էր արված Իբն ալ-Ասիրի վերոհիշյալ վկայությունում։ Սադ-ադ-Դին ալ-Հուսայնիի բացատրությամբ Ալփասլանը շտապում է Վրաստան քանի որ սուլթանին հայտնում են, որ Վրաստանի ժողովուրդը դժգոհ է բյուզանդացիներից[24]։ Եվ այնուհետև հեղինակը նույն ձևով նկարագրում է Մելիքշահի ռազմական գործողությունները Սուրմարիի ուղղությամբ և Իբն ալ-Ասիրի կողմից հիշատակված վերջին բերդի գրավումից հետո ասում է, որ «Նիզամ ալ-Մուլքը մահմեդականների համար կարևոր նշանակություն ունեցող այս բերդում տեղավորեց Բահադիրներ (սելջուկ ազնվականներ)»[25]։

Այնուհետև, Իբն ալ-Ասիրը և Սադր ադ-Դին ալ-Հուսայնին մանրամասն տեղեկություններ են հաղորդում Մարմաշենի նվաճման մասին, որը նրանց մոտ անվանված է «Մարիամ Նիշին», այսինքն՝ Մարիամի աթոռանիստ։ Նրանց վկայությամբ՝ Մարիամ Նիշին քաղաքն ունեցել է ամրապատ պարիսպներ և պաշտպանված է եղել մի մեծ գետով։ Հ. Մանանդյանը[26] Մարիամ Նիշինը նույնացնելով Մարմաշենի հետ գրում է. «Ակադ. Մառի «Անի» աշխատության մեջ այս բերդ-քաղաքը թյուրիմացաբար նույնացված է Անի քաղաքի հետ[27], բայց իրապես «Մարիամ Նիշինը», ինչպես ուղիղ կռահել է Մարկվարտը[28], Գալիճայում գտնվող Մարմաշեն վանքն է, որը կառուցել էր Վահրամ Պահլավունին 988—1029 թթ.։ Վանքի հիմնադրմանը կենդանի մասնակցություն էր ցույց տվել, ինչպես երևում է նույն վանքի արձանագրություններից, «Ափխազ և հայոց» Մարիամ թագուհին, որը Արծրունյաց Սենե-

---

23 Ибн ал-Асир, նշվ. աշխ., էջ 118։

24 Sadruddin el-Huseyni, p. 24.

25 Նույն տեղում։

26 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Գ, էջ 55—56։

27 Н. Я. Марр, Ани, Л.—М., 1934, стр. 26.

28 J. Marquart, Skizzen, 47—48. Համեմատիր նաև «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», Երևան, 1936, էջ 125—126։

քերիմ թագավորի դուստրն էր, Բագրատունյաց Դավիթ Ա թագավորի թոռը և վրաց ու Ափխազ Բագրատ Դ թագավորի (1027—1072) մայրը։

Կեկելիձեն և Մելիքսեթ-Բեկը հավանական են համարում[29], որ Մարմաշեն անունը ոչ թե Մարմարաշեն է նշանակում, ինչպես սովորաբար ենթադրվում է, այլ Մարիամաշեն։

Ալիշանը կարծում է, որ նույն այս Գանձակում և Մարմաշենում պետք է ենթադրել Վահրամ Պահլավունու կառուցած ամրապատ ու աշտարակազարդ պարիսպներն ու դղյակը[30], որոնց մասին սանահնեցիներին գրած իր թղթում Գրիգոր Մագիստրոսն ունի հետևյալ վկայությունը.

«Եվ դղյակները սքանչելի ու ամրապատ պարիսպներով ու աշտարակներով նա հարդարեց»[31]։ Մարիամ Նիշինին Անիի հետ է նույնացնում արդի թուրք պատմաբան Ի. Քաֆեսօղլուն[32]։ Մ. Ցրնանջը Մարիամ Նիշինը տեղադրում է Վանա ծովի ափին[33]։

Վերոհիշյալ երկու աղբյուրներն էլ մանրամասն նկարագրում են Մարիամ Նիշին քաղաքի գրավումը։ «Այնուհետև, գրում է Սադր-ադ-Դին ալ-Հուսայնին, Մելիքշահը Մարիամ Նիշին կոչվող մի քաղաք գնաց։ Այստեղ հոգևորականներ, եպիսկոպոսներ և քահանաներ էին նստում։ Քրիստոնյաների թագավորները և ժողովուրդները գալիս էին այստեղ որպես սրբավայր։ Այս քաղաքը ամրացված էր, պարիսպները ամուր քարերից էին կառուցված։ Քարերը իրար միացված էին երկաթե կեռերով։ Սրա կողքին մի մեծ գետ էր հոսում։ Նիզամ ալ-Մուլքը գետը անցնելու և այս քաղաքը գրավելու համար նավակներ պատրաստել տվեց։ Զորքը Նիզամ ալ-Մուլքի հրամանատարությամբ շատ շարշարվեց, սակայն չկարողացավ քանդել պարիսպը։ Այնուհետև պատահական մի երկրաշարժ պարիսպի մեջ ճեղքեր է առաջացնում և սելջուկ զորքերը մտնում են քաղաք, ավերում բազմաթիվ եկեղեցիներ և շատ մարդկանց սրի անցկացնում»[34]։

29 Կ. Կեկելիձե, Երկու Եփիմոս վրաց հին գրականության մեջ, վրացերեն, «Զվենի Մեցնիերեբա», 2—3, 1923, էջ 113, ծան. 2. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 109։

30 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1888, էջ 153։

31 Տե՛ս Կ. Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 141։

32 *Kofesoglu*, Meliksah devrinde, p. 3.

33 *Yinanc*, p. 58.

34 *Sadruddin el-Huseyni* p. 25.

Քաղաքի գրավումը այլ կերպ է նկարագրում Իբն ալ-Ասիրը, որն ավելի հավանական է թվում, քան Սադր-ադ-Դին ալ-Հուսայնիի բացատրությունը։ Մահմեդականները, պատմում է Իբն ալ-Ասիրը, որովհետև նրանց բրիչները քարերի կարծրության պատճառով պարիսպը ծակելիս խիստ բթացել էին, մոտեցան քաղաքի պարսպին, դեմ արին նրան սանդուղքներ և բարձրացան ծայրը։ Երբ քաղաքի բնակիչները տեսան, որ մահմեդականները պարսպի վրա են՝ նրանց ձեռքերը թուլացան։ Մելիքշահը և Նիզամ ալ-Մուլքը ներս մտան քաղաք, քանդեցին այն, եկեղեցիներն այրեցին և բնակիչներից շատերին կոտորեցին, իսկ շատերն ընդունեցին մահմեդականություն և կոտորածից ազատվեցին»[35]։

Մարիամ Նիշինի առումից հետո Ալփասլանը Մելիքշահին կանչեց իր մոտ։ Վերջինս «իր ճանապարհի վրա ընկած բերդերը գրավեց, այսպիսով արժանի դարձավ հոր տիրույթները ժառանգելու»[36]։

1064 թ. Ալփասլանի և նրա որդի Մելիքշահի Հայաստան կատարած արշավանքից դուրս չմնաց նաև Սյունիքը։ Ի տարբերություն Հայաստանի մյուս նահանգների, Սյունիքը համեմատաբար զերծ էր մնացել սելջուկ Թուրքերի նախորդ արշավանքներից։ Դրա պատճառը ոչ միայն Սյունիքի բնական անառիկությունն և աշխարհագրական դիրքն էր, այլև՝ հայկական թեկուզ փոքր թագավորության գոյությունը։ Հասկանալի է, որ Սյունյաց թագավորությունը ի վիճակի չէր դիմադրավելու սուլթանական ահեղ ու գերազանց ուժերին և հետևաբար սելջուկ Թուրքերի 1064 թ. արշավանքի ժամանակ Սյունյաց Գրիգոր թագավորը (1044—1084), խուսափելով ավերածությունից, ճանաչեց նրանց գերիշխանությունը։ Պետք է նշել, որ Սյունիքը ասպատակության ենթարկվեց ոչ թե Ալփասլանի, այլ Մելիքշահի բանակի կողմից, որին օգնում էին Գանձակի և Դվինի Շադդադյանները, որոնց հաջողվում է իրենց դիրքերը ամրապնդել ոչ միայն Հայաստանի միջնաշխարհում, այլև նրա արևելյան նահանգներում։ Կնքված հաշտության ծանր պայմանագրով Սյունյաց աշխարհի սահմանամերձ մի շարք գավառակներ՝ Կովսականը, Ծղուկ գավառի հյուսիսային որոշ մասերը խլվեցին հայ իշխողներից և անցան մահմեդականների գերիշխանության ներքո։ Սյունյաց աշխարհի հայրենասեր պատմիչ՝ Ստեփանոս Օրբելյանը դառնությամբ նշում է. «Եւ յայնմ ժամանակի էր բարձրացեալ և զօրացեալ տէրութիւնն Տաճկաց և ամենայն աշխարհ ի ներքոյ հարկի նորա նուաճեալ կայր,

35 *Ибн ал-Асир*, стр. 119.

36 *Sadruddin el-Huseyni*, p. 25.

վան որոյ և յոլով գաւառս շորթեալ հանին ի Սիսական աշխարհէս ի ձեռաց բնիկ տէրանցն...»[37]։

Այնուհետև, Իբն ալ-Ասիրի և Սադր ադ-Դին ալ Հուսայնիի մոտ իբրև արշավող զորքերի առաջնորդ մատնանշված է ինքը Ալփասլանը։ «Ալփասլանը Սեպիտ-շահրի-(Սապիտշահր, «Սպիտակ քաղաք») վրա արշավելու նպատակով մի բանակ պատրաստեց։ Այս քաղաքի բնակչության հետ շատ կռիվներ վարեց։ Աստված նրան այդ քաղաքի նվաճումն էլ հաջողացրեց»[38]։

Իբն-ալ-Ասիրը Սապիտշահրից հետո անմիջապես հիշատակում է Ա'ալլալ քաղաքը և այնուհետև Ախալքալաքը։ Այս վերջին հանգամանքը շփոթություն է առաջացրել հետազոտողների մոտ։ Այսպես, Սեն Մարտենը, նմանապես և Յ. Մարկվարտը ենթադրում են, որ Սապիտշահրը Ջավախք գավառում գտնվող Ախալքալաքն է, իսկ Ա'ալլալը՝ Ղալ բերդ-քաղաքը[39]։ Սապիտշահր քաղաքը Է. Հոնիգմանի կողմից տեղադրվում է Մարիամ Նիշինից հյուսիս և նույնացվում՝ վոտացական Տետրիս-ցիհեի հետ[40]։ Հ. Մանանդյանը ասում է, որ Իբն ալ-Ասիրի տեղագրական ցուցումներից կարելի է ըստ իս կռահել, որ Ախալքալաք քաղաքի հետ պետք է նույնացնել ավելի շուտ Ա'ալլալը, քան Սապիտշահրը, որի տեղադրությունը մնում է անորոշ[41]։

Եթե Իբն ալ-Ասիրի տեղագրական ցուցումները ազատ են Ախալքալաքի նկատմամբ, ապա Սադր ադ-Դին ալ-Հուսայնիի ցուցումից երևում է, որ Սապիտշահրը չէր գտնվում Ախալքալաքի մոտ, քանի որ աղբյուրը պարզ հիշատակում է Ախալքալաք քաղաքը Աղաքքալ ձևով։ «Սուլթանը, գրում է Սադր ադ-Դին ալ-Հուսայնին, Աղաքքալ անունով մի քաղաք էլ ցանկացավ նվաճել։ Սրա պարսպի երկարությունը 100 զիրա (կանգուն) էր, իսկ լայնությունը սրանից էլ ավելի։ Արևելքից և հյուսիսից քաղաքը պաշտպանող սարեր կային և սարերի գագաթին բերդեր կային։ Այս պարսպի առաջ Ջեյհոնի պես մի գետ կար։ Գետի վրա մի կամուրջ էր սարքված։ Թշնամին այս կամուրջը քանդեց։ Սրա վրա մահմեդականների հույսը կտրվեց, և սուլթան Ալփասլանը քաղաքի դարպասի առաջ վրաններ խփեց։ Զինվորները մի կամուրջ սարքեցին, և սկսվեց կռիվը։ Այդ պահին Սուլթանը աղոթում էր աստծուն, և նա չշարժվեց տեղից մինչև վերջացներ աղոթքը։ Շատ ուժեղ ընդհարումից հետո քաղաքից երկու մարդ դուրս եկան և սուլթանից պահանջեցին լիազորված պատվիրակներ ուղարկել քաղաք՝ բանակցելու համար։ Սուլթանը ամիրա Իբն Մուջահիրին և Աբու Սեմրային ուղարկեց քաղաք որպես պատվիրակ։ Սրանք հենց որ քաղաք մտան, վրացիները պաշարեցին նրանց և սպանեցին։ Այս դժբախտները մնացին թշնամու և գետի արանքում։ Սրա վրա Ալփասլանը ուժեղ հարձակում սկսեց և մտավ քաղաք։ Քաղաքի աշտարակներից մեկում թշնամու մի հզոր խումբ բաղկացած ավազակներից շարունակում էր քաջությամբ և հերոսությամբ դիմադրել։ Տեսնելով այդ, սուլթանը հրամայեց այս բուրգի շուրջը փայտ հավաքել և վառել։ Սրանով դիմադրությունը վերջացավ։ Մահմեդականների ձեռքը անթիվ անհամար գերի և մեծ ավար ընկավ։ Գիշերը ուժեղ քամի սկսվեց, բուրգի շուրջը գտնվող կրակը տարածվեց քաղաքում և մեծ մասը այրեց։ Այս քաղաքի մոտ մի ուրիշ բերդ էլ կար, սուլթանը այդ էլ գրավեց։ Հետո վրաց մելիքները նվերներ ուղարկեցին Ալփասլանին և հաշտություն խնդրեցին։ Սուլթանը նրանց առաջարկեց ընդունել մահմեդականությունը կամ էլ ջիզիա վճարել։ Վրաց թագավորը (իմա՝ Բագարատ Դ—Ս. Բ.) ընդունեց վերջինը»[42]։

Պետք է նշել, որ արաբ մյուս հեղինակ Իբն ալ-Ասիրի տեղեկությունները Ախալքալաքի գրավման մասին համարյա համընկնում են վերոհիշյալ հեղինակի նկարագրությանը։ Իբն ալ-Ասիրը նշում է, որ «Այս քաղաքի (իմա՝ Ախլքալաքի—Ա. Բ.) իշխանը մի վրացի էր, որը նույնպես տիրակալն էր այն բոլոր երկրների, որոնց գրավման մասին նախօրոք նշեցինք»[43]։ Հետաքրքիր է, որ Իբն ալ-Ասիրի այս վկայությունը այն տպավորությունն է թողնում, որ Մելիքշահի կողմից գրավված բոլոր քաղաքների տիրակալը վրացի է, հետևաբար այդ քաղաքները՝ վրացական[44]։ Մինչդեռ հայտնի է, որ Մելիքշահի կողմից նվաճված քաղաքները պատկանում էին Անիի Բագրատունյաց թագավորության և, որ նրանք դեռ նոր միացվել էին Բյուզանդական կայսրության։ Հայտնի է, որ բյուզանդացիները բերդերի և ամրոց քաղաքների հրամանատարությունը հաճախ վստահում և հանձնում էին վրացի ազնվականներին։

---

37 Ստեփանոս Օրբելեան, *Պատմութիւն նահանգին Սիսական*, Տփղիս, 1911, էջ 319։

38 *Sadruddin el-Huseyni*, p. 25.

39 *Տե՛ս Y. Saint-Martin*, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, 1818—1819, t. I, p. 84 et t. II, p. 227.

40 *E. Honigmann*, Ostgrenze, p. 187.

41 Հ. Մանանդյան, *Քննական տեսություն...*, հ. Գ, էջ 57։

42 *Sadruddin el-Huseyni*, p. 25—26.

43 *Ибн ал-Асир*, стр. 120.

44 *J. Marquart*, Streifüge, p. 121.

Ախալքալաքի գրավումը հակիրճ արձանագրված է նաև վրաց ժամանակագրության մեջ։— Երբ թագավորը (իմա՝ Բագարատ Դ—Ս. Բ.) արդեն նրանցից (իմա՝ սելջուկներից—Ս. Բ.) առաջ Քարթլի էր եկել՝ նրանք մտան Ջավախք և պաշարեցին Ախալքալաքը։ Սակայն մեսխ ազնվաուրները և երկրի մեծամեծները զորեղ կերպով պաշտպանվում էին այդ տեղում, բայց, որովհետև Ախալքալաքը դեռևս չէր շրջապատված լավ պարիսպներով՝ նրանք կռվեցին միայն երեք օր։ Վերջ ի վերջո սրանք չկարողացան այլևս ընդդիմադրել նրանց հզոր հարձակումներին՝ սպառազինվեցին, բաց արին քաղաքի դռները և արյունահեղ ճակատամարտից հետո սուսերահար եղան ու ընկան»[45]։

Ա՛ալլալի (Ախալքալաք) գրավումը և հրդեհումը Իբն ալ-Ասիրի մոտ ցույց է տրված հիջրի 456 թ. ռաջաբ ամսին (—19 հուն., 1064—18 հուլ. 1064 թ.)։

Հարավային Վրաստանը ավարառության ենթարկելուց հետո Ալփասլանը դիմեց Տաշիր Զորագետի հայոց թագավոր Կյուրիկե Ա-ին (1048—1089 թթ.), որ Հայոց Արևելից կողմանց վրա էր տիրում[46]։ «Եւ զկնի այսչափ բարկութեանս առաքեաց սուլտանն առ թագաւորն Աղուանից և Կիւրիկէ և խնդրեաց զդուստրն իւր ի կնութիւն, որ յաղագս ահին տուեալ եղեւ. և արար սուլտանն ընդ նմա սէր և խաղաղութիւն յաւիտեան և զթագաւորն Աղուանից զԿիւրիկէ զորդի Դաւթի Անհողինի յուղարկեաց մեծաւ պատուով ի քաղաքն իւր Լոռէ բաղում ընծայիւք»[47]։

Ինչպես վերևում նշեցինք, հենվելով հայ և վրաց աղբյուրների վրա, հայ և օտար ուսումնասիրողները, ըստ երևույթին, անտեղյակ լինելով մահմեդական աղբյուրներին Կիւրիկէ Ա թագավորի դստեր ամուսնությունը կապում են Ալփասլանի հետ, մինչդեռ մահմեդական աղբյուրները նշում են, որ Կիւրիկէ թագավորի դուստրը ամուսնացել էր ոչ թե Ալփասլանի, այլ վերջինս նրան ամուսնացրել էր Նիզամ ալ-Մուլքի հետ[48]։

Հայկական աղբյուրներից Արիստակես Լաստիվերտցին, Մատթեոս Ուռհայեցին, Սամուել Անեցին, Սմբատ Սպարապետը, Վարդան Վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը շատ քիչ տեղեկություններ են հաղորդում Ալփասլանի Անիի գրավման, նախորդող վերոհիշյալ դեպքերի մասին, որոնք այնքան մանրամասն նկարագրված էին արաբական աղբյուրներում։ Դեպքերի ժամանակակից Արիստակես Լաստիվերտցին թեև հատուկ գլուխ է նվիրել «Տիեզերահռչակ Անի քաղաքի սրով խողխողման մասին», Անի քաղաքի գրավման նախորդող դեպքերին նվիրել է սոսկ ընդհանուր դատողություններ, որոնք հագեցված են քրիստոնեական և հայրենասիրական ինքնամեղադրանքով, որ իբր թե ասված թուրքերի միջոցով պատժում է ցոփ ու ամբարտավան կյանք վարող Անիի իշխաններին և բնակչությանը և այլն[49]։ Վերոհիշյալ հայ հեղինակներից Ուռհայեցին և Վարդան Վարդապետը նույնպես որոշ տեղեկություններ են հաղորդում Անիի գրավման նախորդող դեպքերի մասին, որոնք թեև ոչ մի նոր բան չեն ավելացնում մահմեդական աղբյուրների տված մանրամասների մասին, սակայն որոշ չափով հաստատում են Ալփասլանի 1064 թ. արշավանքի ուղղության և սելջուկ զորքերի Աղվանքում ու Վրաստանում կատարած ավերածությունների և գերեվարությունների մասին։ Այսպես Ուռհայեցին գրում է «Դարձեալ ի թուականութեանս Հայոց և յամի ՇԺ (1064) զօրաժողով արար թագաւորն Պարսից Ապօլան (Ալփասլան) սուլտանն... և գայր հասանէր ի Հայաստան աշխարհս և անհամար բազմութեամբ զօրօք մտանէր յաշխարհս Աղուանից և մատնեաց զնոսա ի սուրս և ի գերութիւնս»[50]։

Հետաքրքիր է, որ Հ. Մանանդյանը զանց առնելով Ուռհայեցու վերոհիշյալ վկայության մեջ եղած այն նախադասությունը, որտեղ պարզ ասված է, որ «և գայր հասանէր ի Հայաստան աշխարհս» և ապա շարունակության մեջ ասում է. «զօրօք մտանէր յաշխարհս Աղուանից» Մ. Ուռհայեցուն վերագրում է, որ ըստ նրան «Ալփասլանի այս արշավանքը

---

45 *M. Brosset*, Histoire de la Géorgie, I, p. 328.

46 Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրություն, էջ 325. ծնթ.*

47 Մ. Ուռհայեցի, *էջ 145—146։* **Վարդան Վարդապետ**, *էջ 101։ Վրաց ժամանակագրությունը նշում է, որ սկզբում հրաժարվեց համաձայնվել, ուստի Ալփասլանը դիմեց Բագարատ Դ-ի միջամտությանը, որն աղջկա քեռին էր։ Սակայն Կորիկեն չէր համաձայնում, ուստի և վրաց թագավորի զորագլուխները էրիստավ Վարազ Բագուր-Դամրեկելի գլխավորությամբ ձերբակալեցին Կյուրիկե Ա-ին և ստիպեցին նրան համաձայնվել ոչ միայն Ալփասլանի պահանջի հետ, այլև վրաց թագավորին հանձնել Շամշուլդե քաղաքը։ Տե՛ս* M. Brosset, Histoire de la Georgie, t. I, p. 329. **Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 207։*** *L. Movsesian*, Histoire des rois Kuriktan de Lori, Revue des Etudes Armeniennes, t. II, 1927, p. 241—242. *René Grousset*, Histoire de l'Arménie des Origines a 1071, Paris, 1947, p. 611. **Հ. Մանանդյան, *Քննական տեսություն, էջ 58։***

48 *O. Turan*, Selçuklular Tarihi, p. 105. *Տե՛ս Resideddin*, Câmi ultavarih uşr. A. Ateş (Selçuklular kismi) Ankara, 1960, p. 31—32.

49 Ա. Լաստիվերտցի, *էջ 133—134։*

50 Մ. Ուռհայեցի, *էջ 144—145։*

տեղի էր ունեցել Աղվանքի (Ուտիքի) վրայով դեպի Լոռի, Ջավախք և Շիրակ»[51]։ Եվ հակադրվելով Ուռհայեցուն, Իբն ալ-Ասիրին տալիս է նախապատվություն Ալփասլանի արշավանքի ուղղությունը ճշտելու համար։ Պետք է նշել, որ այդ թյուրիմացությունը առաջացել է միայն այն պատճառով, որ Ուռհայեցու մոտ Նախճավանի փոխարեն նշված է Հայաստանը, որը ոչնչով չի փոխում Ալփասլանի՝ Հայաստանի վրայով դեպի Աղվանք և այնուհետև հայոց Աղվանքի (Ուտիքի) վրայով Վրաստան և ապա, ինչպես նշված է Ուռհայեցու հետագա շարադրանքի մեջ, Ախալքալաքի գրավումն ու ավերումը[52]։

Հայկական աղբյուրները պարզություն են մտցնում նաև Ախալքալաք քաղաքի աղավաղված ձևով հայ և օտար աղբյուրներում նշված Ա՛ալլալի[53], Աղաքլարի[54], Ալախի[55] անվանումների հարցում։ Մեր կարծիքով, ավելորդ պետք է համարել վերևում նշված օտար և Հայ ուսումնասիրողների ենթադրություններն ու կռահումները։ Քանի որ Սամուել Անեցու մոտ պարզ ասված է «էառ (իմա՝ Ալփասլանը—Ս. Բ.) և զԱխալքաղաք»[56]։ Նույնը վկայում է Վարդան Վարդապետը. գրելով, որ Ալփասլանը Վրաստանի արշավանքի ժամանակ «աւերեաց քսան և չորս գաւառս... և առ զՆոր քաղաք, զոր վիրք Ախալ-քալաք ասեն»[57]։

Ախալքալաքի գրավումից հետո Ալփասլանն իր բոլոր ուժերով շարժվեց Անիի վրա «Սուլթանը (իմա՝ Ալփասլանը—Ա. Բ.), գրում է Իբն ալ-Ասիրը, պաշարեց մի ուժեղ բերդ, որը այս քաղաքի մոտ էր և գրավելուց հետո այն, մեկնեց Կարսի և Անիի ուղղությամբ։ Վերջինիս մոտակայքում կային գավառներ, որոնք կոչվում էին Դ. Ս. լ Վարդա և Նուրա[58]։ Նրանց բնակիչները դուրս գալով սուլթանին ընդառաջ իրենց հպատակությունը հայտնեցին Իսլամին։ Մահմեդականները քանդեցին եկեղեցիները և կառուցեցին մզկիթներ»[59]։ Այնուհետև ոչ միայն արաբական, այլ նաև պարսկական, ասորական, հայկական ու բյուզանդական աղբյուրները ընդարձակ տեղեկություններ են հաղորդում Անիի գրավման մասին։ Այսպես. «Երբ նա (սուլթանը), պատմում է Իբն ալ-Ասիրը,— եկավ այնտեղ (Անի), տեսավ որ սա ամուր քաղաք է և բոլորովին անմատչելի, որովհետև սրա երեք քառորդի վրա հարձակվել չէր կարելի Արաքս գետի պատճառով[60], իսկ մնացած մի քառորդը պատսպարված էր մի խոր ու արագահոս գետով, որը գլորում ու տանում էր մեծ քարեր, որ մեջն էին գցում։ Ճանապարհը գնում էր քաղաք փոսի միջով, որի վերևում գտնվում էր պարիսպը՝ շինված հաստաբետ քարերից։ Սա մի մեծ ու բարգավաճող քաղաք էր, ուներ մեծ բնակչություն և նրա մեջ կար ավելի քան 500 եկեղեցի։

Սուլթանը պաշարեց այն և շրջափակեց, սակայն մահմեդականները հույս չունեին քաղաքը վերցնելու, նրա անառիկ լինելու պատճառով, որ նրանք տեսնում էին։ Ապա սուլթանը շինել տվեց մի փայտե աշտարակ, զինավորեց նրան կռվողներով և նրա վրա կանգնեցրեց քարաձիգ մեքենան ու նետաձիգներին։

Այնուհետև, հոռոմները ստիպված եղան պարսպի վրայից հեռանալ և մահմեդականները մոտեցան նրան, որպեսզի նրա մեջ անցք բանան։ Եվ այդ ժամանակ Աստծու ողորմությամբ այնպիսի բան պատահեց, որ նրանք հաշվի չէին առել, պարսպի մի մեծ մասն ինքն իրեն քանդվեց առանց պատճառի։ Դրա շնորհիվ նրանք մտան քաղաք և կոտորեցին անթիվ քանակությամբ բնակչություն, այնքան շատ, որ մահմեդականներից շատերը չկարողացան ներս խուժել քաղաք, սպանվածների բազմության պատճառով։ Եվ նրանք գերի վերցրին գրեթե նույնքան, ինչքան որ սպանել էին»[61]։

---

51 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Գ, էջ 54։

52 Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 145—146։

53 Ибн ал-Асир, стр. 119.

54 Sadrudain el-Huseyni, p. 25.

55 Մ. Ուռհայեցի, էջ 146։

56 Անեցի, էջ 112։

57 Վարդան Վարդապետ, էջ 101։

58 Է. Հոնիգմանը ասում է, որ սրանք անորոշ վայրեր են, և որոնք գտնվում են Կարսի շայի, Ջալգիր գյուղի (Ախուրյանի ակը) մոտ։ Տե՛ս E. Honigmann, նշվ. աշխ., էջ 188։ Սեն Մարտենը, որը օգտագործել է Իբն ալ-Ասիրի այս հատվածը, նուրա բառը ճշտման ենթարկելով դարձրել է Լուրա և ապա Լորե, նույնը կատարել է Սիլ Վարդայի ստուգաբանմանը, որը ըստ իրեն մոտ է Վարդաբլուրին Լորեից մի քիչ հեռու։ «Վարդա» արաբերեն և վարդ հայերեն բառերը, նման են իրար և ունեն նույն նշանակությունը։

Տե՛ս Saint-Martin, նշվ. աշխ., էջ 226—228։ Ժ. Մարկվարտը ենթադրում է, որ արաբերեն բառի առաջին մասը Դ. Ս. Լ.-ը պետք է լինի Վարդաշեն, այսինքն՝ վարդի գյուղ կամ Նորաշեն, Նոր գյուղ, կամ Նորագյուղ, սակայն չի ասում, թե որտեղ են գտնվում դրանք։ Տե՛ս Marquart, Streifzüge, p. 122. p. 61. Sadruddin el-Huseyni, 27—29.

59 Ибн-ал-Асир, стр. 120.

60 Հ. Մանանդյանը իրավացի է, երբ ասում է, թե «Այս տեղեկությունը, իհարկե, սխալ է։ Անին գտնվում էր ոչ թե Արաքս, այլ Ախուրյան կամ Արփա-չայ գետի ափին։ Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Գ, էջ 59։

61 Ибн ал-Асир, стр. 120. հայերեն թարգմ. վերցված է Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Գ, էջ 59—60։

Մի այլ արաբական աղբյուր, որը գրված է Սիբտ Իբն ալ-Ջաուզիի կողմից (մեռած 1257 թ.՝ Իբն ալ-Ասիրից 23 տարի հետո) ավելի քիչ մանրամասնություններ է տալիս Ալփասլանի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքի մասին։ Նա անմիջապես խոսում է Անիի պաշարման մասին։ «Առաջին վայրը բյուզանդական տարածքում» հատվածում նա վկայակոչում է մի ականատեսի՝ Ալ-Քամիլ Աբու-լ-Ֆավարիզին, որը ուղեկցում էր Ալփասլանին Անիի գրավման ժամանակ։ Նա Բաղդադի խալիֆից բերել էր սուլթանի հանդերձանքը և դրա համար էլ ուղեկցում էր նրան[62]։ Հետևաբար նա ականատես է Անիի գրավման հետ կապակցված դեպքերին։

Վկայակոչելով Անիի գրավման ականատես Ալ-Քամիլ Աբու-լ-Ֆավարիզին, Սիբտ Իբն ալ-Ջաուզին, (որը թարգմանաբար բերում ենք ֆրանսիացի բյուզանդագետ-հայագետ Մ. Կանարի հոդվածից), գրում է. «Ինչ վերաբերում է քաղաքին (իմա՝ Անի—Ս. Բ.), որ ես նշելու եմ, տեսել եմ իմ աչքերով, թե ինչ ահաբեկող տեսարան էր ներկայացնում այդ։ Եթե ոչ մի թագավոր փորձ չի կատարել կամ նույնիսկ մտքից չի անցկացրել գրավել քաղաքը, այդ նրա համար է, որ քաղաքի երեք չորրորդ մասը եղրված է ալ-Թ. ր. ս.-ով[63]։ Մինչդեռ մյուս մեկ չորրորդը փոս է, որը ալ-Արասի շարունակությունն է, որտեղ գետի ջուրը թափվում է սարսափազդու որոտով։ Այստեղ հոսանքը այնքան ուժեղ է, որ եթե մեջը խոշոր քարեր գցենք, այդ քարերը կբշվեն և ջարդ ու փշուր կլինեն։ Քաղաք մտնելու համար պետք է անցնել մի կամուրջով, որը դրված է այդ փոսի վրա։ Նրա պատերը շինված են շատ ամուր քարերով և դժվար է հարձակում կատարել քաղաքի վրա։ Ասում են, որ քաղաքում կա յոթ հարյուր հազար տուն, հազար եկեղեցի և վանք։ Պարսպի միջով չկա անցք, որ տանի քաղաք և չկա վայր ճակատամարտ մղելու համար։ Հույս չկար այն գրավելու և սակայն մի օգնություն եկավ ալլահից, որ ակնկալվածի հակառակն էր, և որի դեմ ոչ մի պաշտպանություն չէր կարող լինել, քանի որ դա աստվածային հրաշք էր։ Այն ժամանակ, երբ զորքերի թիվը կրկնապատկվում էր, բանակները հոգնած, թուլացած ու կանգնելու վրա էին, որովհետև հույս չունեին հաղթանակի, մի ակն-

62 Տե՛ս M. Canard, La campagne arménienne du Sultan Salguqide Alp Arslan et la prise d'Ani en 1064,—REA, nouvelle série, II, 1965, p. 244

63 M. Canard p. 244։ Մ. Կանարը ասում է, որ տեքստի մեջ գրված ալ-Թ. ր. ս.-ն վերաբերում է ալ-Արասին, այսինքն՝ Արաքսին, որը, անշուշտ, սխալ է. դա պետք է լինի Ախուրյան, որից մինչև Արաքս գետը 32 կմ է։

թարթում պատի մի մասը փլվեց, առանց որևէ բացատրվելիք պատճառի. Այնուհետև բանակը մտավ քաղաք, ջարդեց և սրից անցկացրեց բնակիչներին, հրդեհեց և ավերակի վերածեց քաղաքը։ Այնքան շատ էին մեռյալների դիակները, որոնց վրայով անցնելը հնարավոր չէր։ Ովքեր փախել էին ջարդից, դերի վերցվեցին։ Դերիների թիվը պակաս չէր հիսուն հազար հոգուց։

Ես ուզում էի մտնել քաղաք և իմ աչքերով տեսնել այդ։ Ես ստիպված էի փնտրել մի ուրիշ ճանապարհ դիակների վրայով չանցնելու համար, սակայն դա հնարավոր չեղավ։ Ինձ հայտնեցին, որ եկեղեցիներից մեկում մի բյուրեղապակյա սափոր կա։ (Զինվորները) կոտրել էին այն և բաժանել իրենց միջև[64]։ Ես կշռեցի մի կտորը, դրա կշիռն էր տասնութ ռաթլ»[65]։ (Մեկ ռաթլը մոտավորապես երեք կգ է)։ Ինչպես տեսնում ենք, բացի որոշ մանրուքներից, սա չի տարբերվում Իբն ալ-Ասիրի վկայությունից։ Այստեղ ինչպես նկատելի է, Իբն ալ-Ասիրի նման, քաղաքի պատերի ճեղքումը վերագրված է մի գերբնական ուժի։ Նկատելի է նաև, որ չափազանցված է եկեղեցիների և բնակչության թիվը։ Արաբական աղբյուրների մեջ Սադր ադ-Դին ալ-Հուսայնի տված նկարագրությունը որոշ չափով նման է Իբն ալ-Ասիրի պատմածին, սակայն տալիս է շատ հետաքրքիր մանրամասնություններ, որոնք որոշ չափով տարբեր են վերոհիշյալ արաբական աղբյուրներից, հատկապես այն մասում, որտեղ նա խոսում է պարսպի ճեղքման մասին և, ի տարբերություն մյուսների, այն չի վերագրում աստվածային հրաշքի կամ երկրաշարժի, այլ այն համարում է արդյունք ռազմական հնարանքի։ Ահա թե ինչպես է նկարագրում այն Սադր ադ-Դին ալ-Հուսայնին։

«Սրանից հետո Սուլթանը առանց ժամանակ կորցնելու քայլեց Անիի վրա։ Այս քաղաքի պարիսպները շատ ամուր էին և սարերի վրա բերդեր կային։ Այս քաղաքը Ռումի ամենից շատ ամրացված քաղաքներից էր։

64 Հավանական է, որ այս վկայության մեջ հիշատակված սափորը այն բյուրեղապակյա կանթեղն է, որի մասին խոսում է Մ. Ուռհայեցին, ասելով, որ «Զարագոթ ազգից մի մարդ սուրբ Կաթողիկե եկեղեցու գմբեթը բարձրանալով, նրա վրայի թանկագին խաչը գետին տապալեց, ապա մտնելով եկեղեցու գմբեթի վրա գտնվող գոնից ներս, Հնդկաստանից մեկ բյուր գանձով Սմբատ Տիեզերակալի բերել տված կլոր կանթեղը գցեց եկեղեցու մեջ և ջարդուփշուր արեց։ Նա տասներկու լիտր էր կշռում և տարողությունն էլ նմանապես 12 լիտր էր։ Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 149։

65 M. Canard, էջ 244—245։ Մ. Կանարը այս հատվածը բերել է Փարիզի մատենադարանի ձեռագրից, իսկ մենք այն թարգմանաբար բերել ենք վերոհիշյալ հոդվածից։

Բոլոր գանձերը և հարստությունները այս բերդերի մեջ էին գտնվում։ Քաղաքի բնակիչները սուլթանին և զինվորներին վաճառականների տեղ դրեցին, որովհետև մինչ այդ թշնամու զինվորներ չէին տեսել։ Սուլթանը իր վրանը խփեց արտերի մեջ։ Սրա վրա, քաղաքից դուրս ցանված արտերի ջրամատակարարումը հսկող հեծյալ պաշտոնյաներ դուրս եկան և ցանկացան սուլթանի զինվորներին արտերից դուրս քշել։ Այս տեսնելով սուլթանի զինվորներից մի խումբ անմիջապես հարձակվեցին սրանց վրա։ Հոռոմները տեսնելով զինված մարդկանց, ահ ու սարսափի մեջ ընկան, փախան և մտան քաղաք։ Քաղաքում հոռոմների մեջ խառնաշփոթություն առաջացավ։ Սուլթանի ուժը տեսնելով, բարձրացան իրենց քաղաքի պարիսպների մեջ տեղադրված աշտարակների վրա, փայտով ու քարով փակեցին այն անցքերը, որոնք տանում էին դեպի քաղաք և այնուհետև փակեցին դեպի բերդերը տանող ճանապարհները։ Սուլթանը հրամայեց այրել փայտերը և քանդել քարե պատնեշները, սրա վրա հոռոմները ներքնաբերդից դուրս գալով ընդունեցին ջիհադ վճարել սուլթանին։ Սուլթանը սրանց վրա վերակացու նշանակեց Խորասանի ամիրային և Շեմս ալ-Խաղիմին։ Սրանք (հոռոմները) ստորացած զգալով այդ հաշտությունից հրաժարվեցին և նորից սկսեցին կռվել։ Սուլթանը պարսպի տակ մի բլուր շինելու համար հրամայեց տոպրակների մեջ լցնել հարդ և հող, ու իրար վրա դարսելով բլրի տեսք տվեց։ Սրա վրա բարձրացան պարսատիկավորները և նավթոտ քուրջ նետողները։ Իսկ ուրիշները երկաթե գործիքներով ցցեր էին մխում պարսպի մեջ։ Հոռոմները իրենց քաղաքի ամենագեղեցիկ կանանց ու մանչերին ընտրելով, ուղարկեցին սուլթանի առաջ, որպեսզի վերջինս զբաղվի նրանց գերելով։ Սուլթանը հրամայեց բոլորին գերի վերցնել։ Սուլթանը և զինվորները նույնիսկ ժամանակ չէին վատնում ուտելու և հանգստանալու վրա։ Սուլթանը հրամայեց շինել փայտե մի աշտարակ և նրա վրա ծածկել տվեց քացախի մեջ թաթախված թաղիքով, որպեսզի չայրվի, սրանից հետո այս աշտարակի (որը շարժական էր) վրայից սկսեցին կռվել և արդելակել հոռոմներին մոտենալ պարսպին։ Վերջապես մահմեդականներին հաջողվեց ամուր մասերը քանդել և մտնել քաղաք։ Այնուհետև քաղաքի բնակիչներին ոտնակոխ արեցին իրենց ձիերի սմբակների տակ[66]։ Եվ կոտորեցին անթիվ քանակությամբ բնակչություն, այնքան շատ, որ մահմեդականներից շատերը չկարողացան ներս խուժել քաղաք սպանվածների բազմության պատճառով։ Եվ նրանք գերի վերցրին գրեթե նույնքան, ինչքան որ սպանել էին[67]։

Ինչպես վերևում նշեցինք, Անիի գրավման ու նրան նախորդող դեպքերի մասին տեղեկություններ են հաղորդում նաև մահմեդական այլ աղբյուրներ։ Դրանցից առաջինն է Իմադ ադ-Դին ալ-Քաթիբ ալ-Իսֆահանիի «Զուբդատ ալ-Նուսրա Վա Նուհբատ ալ-Ուսրա», աշխատությունը, որը մեզ հասել է ալ-Բոնդարիի վերաշարադրանքով։ Սա առաջին անգամ հրատարակվել է Մ. Հուցմայի կողմից 1889 թ., իսկ թուրքերեն թարգմանությունը հրատարակվել է 1943 թ. Կ. Պոլսում «Իրաքի և Խորասանի սելջուկների պատմություն»[68] վերնագրով։ Հետաքրքիր է, որ այս երկի մեջ մանրամասնություններ չենք գտնում Անիի գրավման մասին։ Այստեղ հեղինակը համառոտակի պատմում է Նախճավանի վրայով Ալփասլանի կատարած արշավանքը Վրաստան, նրա հաշտությունը Աբխազիայի (իմա՝ Վրաստանի—Ս. Բ.) թագավոր Գեորգիի որդի Բագարատ Դ-ի հետ և վերջինիս քրոջ աղջկան, Լոռեյի թագավոր Կյուրիկեի դստեր ամուսնությունը Նիզամ ալ-Մուլքի հետ։ Եվ ապա մի փոքր հատված Անիի գրավման և ենթարկման մասին[69]։

Անիի գրավման մասին որոշ տեղեկություններ է հաղորդում նաև (պարսկերեն) XVI դ. գրված մի այլ աշխատություն՝ «Նիզարստան» վերնագրով, որի հեղինակն է Ահմեդ բեն-Մուհամեդ ալ-Ջաֆարի[70]։ Ջաֆարիի վկայությունը ունի որոշ նմանություն Նիզամ ալ- Մուլքի «Վասայա»-ի հետ[71]։ Ջաֆարիի վկայությունը զերծ չէ շփոթությունից և անճշտություններից, թեև նա տալիս է բնական բացատրություն Անիի պարիսպների ամրությունների փլուզման բնական պատճառների, այսինքն երկրաշարժի մասին, որը տարբեր է Իբն ալ-Ասիրի և Իբն ալ-Ջաուզիի բերած վկայությունից, որտեղ պարսպի փլուզումը վերագրում

---

[66] *Sadruddin el-Huseyni*, p. 27—28.

[67] Նույն տեղում, էջ 28։

[68] Ինչպես մեր շարադրանքի սկզբից, այնպես և այսուհետև այս աշխատությունը նշելու ենք *El-Bundari*.

[69] Տե՛ս *El-Bundari*, p. 31.

[70] *Марр*, Ани, стр. 26—27. Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., էջ 59։ Անիի մասին եղած հատվածը ֆրանսերեն է թարգմանել Մ. Խանիկովը, թարգմանությունը մեջ է բերված *M. Brosset*, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie éxecuté en 1847—1848, 1949. ալ-Ջաֆարիի և նրա գործի մասին տե՛ս Enc. de L'Islam, 2 eme ed., tome II, 1107. Ջաֆարին մահացել է 972/1564։

[71] Տե՛ս *E. Brown*, A literary History of Persia, Cambridge, 1929—1930, p. 151—152.

են ասուլածային միջամտության։ Անիի պաշարման և գրավման նկարագրությունները որոշ կողմերով նման են Մարիամ Նիշինի պաշարման և գրավման մանրամասնություններին։ Այնուհետև ճիշտ չէ այն, որ իբր թե Անիի գրավումը կատարվել է միայն Մելիքշահի և Նիզամ ալ-Մուլքի հրամանատարության ենթակա զորքի կողմից։ Սակայն այնտեղ, որտեղ հեղինակը խոսում է գրավված քաղաքի աշխարհագրական դիրքի մասին, պարզ երևում է որ խոսքը վերաբերում է Անիին։ Հեղինակը քաղաքի պաշտպանությունը վերագրում է վրացիներին, որն ավելի շատ է նման 1161 թ. Անիի գրավմանը, երբ Անին գտնվում էր վրացական թագավորության վերահսկողության տակ։

Անիի գրավման մասին խոսում են նաև ասորական աղբյուրները։ Աբու-լ-Ֆարաջի վկայությունը որոշ չափով նման է Իբն ալ-Ասիրի նկարագրությանը։ Այս քաղաքը (իմա Անի—Ս. Բ.) Հայաստանում Հռոմի (իմա՝ Ռումի կամ Բյուզանդիա—Ս. Բ.) երկրի առաջին քաղաքն էր, որ Ալփասլանը գրավեց և շատ արյուն թափեց։ Քաղաքում կան 70000 տներ և 1000-ից ավելի եկեղեցիներ։ Քաղաքը երեք կողմից շրջապատված է Արաս (իմա՝ Արաքս—Ս. Բ.) գետով... Թուրքերը հուսահատ վիճակում էին պաշարման ժամանակ, երբ երկնքից իջած նշանով աշտարակներից մեկը փուլ եկավ։ Թուրքերը փոսի վրայով մի կամուրջ դցելով մտան քաղաք։ Այս թվականից սուլթանը կոչվեց Աբու-լ-Ֆաթախ, այսինքն Աբու-լ-Ֆաթհ[72] (Նվաճող)։

Ասորական աղբյուրներից Միխայիլ Ասորու Շաբոյի[73] կողմից հրատարակված ֆրանսերեն թարգմանություններում խոսք չկա Անիի գրավման մասին։ Մինչդեռ հայկական թարգմանությունում վկայություն կա Շամշուլդե և Անի քաղաքների գրավման մասին. «և անցեալ յԱնի հարիւր հազարաւ առ գնա և սպան հազար այր ի փոս մի և լոգացաւ արեամբ. և դարձաւ ի Նախջուան»[74]։

Անիի գրավման մասին հետաքրքիր տեղեկություններ կան նաև բյուզանդական աղբյուրներում։ Առաջինը Սկիլիցան[75] է, որը ապրել է XI դ. երկրորդ կեսին։

Ընդգծելով բյուզանդական զորքերի տկարությունը ու սպառազի-

[72] *Abul Faraj*, p. 216—217.

[73] „Chronique de Michel le syrien", III, liver XXV.

[74] «Տեառն Միխայելի Պատրիարքի Ասորւոյ ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1870, էջ 404։

[75] „Georgius Cedrenus, Bonnae, II, 1839, p. 653—654.

նության տեսակետից թույլ լինելը, նշում է, որ դրանից քաջալերված Թուրքերը կատարում էին ասպատակություններ և ներխուժումներ։ Նա մեղադրում է Անիի հայ կառավարիչ Պանկրատիոսին[76], որը ձեռքն էր վերցրել քաղաքի իշխանությունը, խոստանալով ստեղծել ազդեցիկ հրամանատարություն։ Սկիլիցայի վկայությամբ, փաստորեն Անին գայթակղեցրել էր Ալփասլանին։ Պանկրատիոսի գնդերը հարձակվել էին Ալփասլանի հետնապահ զորքերի վրա, որ իբր թե անցնում էին Անիի մոտակայքով, առանց դիպչելու Անիին։ Այդ պատճառով Սուլթանը նա և վերադառնում, պաշարում է Անին իր ամբողջ ուժերով, այնուհետև գրավում է ոչ միայն Անին, այլ նաև նրա շուրջը գտնվող ամբողջ տարածքը։ Ալփասլանը հեռանում է Անիից, այնտեղ թողնելով պահակախմբերը[77]։

Բյուզանդական մյուս հեղինակ Միքայել Ատտալիատեսի վկայությունը ավելի հարուստ է իր մանրամասնություններով[78]։ Ատտալիատեսը նախ նկարագրում է Անիի աշխարհագրական դիրքը, անառիկ լինելը, և բնակչության խտությունը։ Նա Անիի կորուստի համար մեղադրում է կայսրին ագահության մեջ։ Պատմում է, թե ինչպես հայ կառավարիչ Պանկրատիոսը ձեռք է բերում Անիի կառավարչի պաշտոնը։ Նրան այպանում է անկարողության և անփութության մեջ։ Նրա ասելով նա ժամանակին քաղաքը չի ապահովել ռազմանյութերով և սննդամթեր-

[76] Համաձայն Մ. Ուռհայեցու, Անիի պաշտպանությունը ղեկավարում էին Սմբատի հայրը՝ Բագարատ և Բագուրանի որդի Գրիգորը, որոնց կայսրը նշանակել էր հայոց երկրի պահապաններ։ Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 148։ Սրանցից առաջինը Բագարատ Վխատցին է, որը 1059 թ. եղել է Վասպուրականի կառապան (կառավարիչ)։ Սակայն Կոստանդին Դուկասի թագավորության ժամանակ գնում է կայսեր մոտ և խնդրում իրեն նշանակել Անիի կառավարիչ՝ առանց ռոճիկի։ Նա խոստանում էր ամեն ինչ տնօրինել ներքին ռեսուրսներով։ Միքայել Ատտալիատեսի ասելով, Բագարատը շատ ապիկար կառավարիչ դուրս եկավ, քաղաքի պաշտպանության համար ոչ մի անհրաժեշտ քայլի չդիմեց, քաղաքի կայազորն էլ ցրեց՝ դրամ տնտեսելու համար։ Բացի այդ, նա անընդհատ վիճաբանությունների մեջ էր, Անի ուղարկված կայսեր ներկայացուցչի (Գրիգոր Բակուրյանի) հետ։ Ահա այսպիսի վիճակում գտնվող Անին շատ հեշտությամբ դարձավ Թուրքերի զոհը։ Տե՛ս Մ. Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխ. թարգմ. Հ. Բարթիկյանի, ծանոթ., էջ 325—326։ Տե՛ս նաև Повествование Аристакеса Ластивертци, пер. К. Юзбашяна, М., 1968, стр. 171—172. Три армянские надписи из эпохи византийского владычества, Пал. сб. 1921, стр. 21—28. *H. Bartikian*, La généalogie du magistros Bagarat, REA, nouvelle série, II, 1965, p. 260—262.

[77] Տե՛ս *M. Canard*, p. 256—257.

[78] „Michaelis Attaliotae Historia" Bonnae, 1853, p. 79. Ատտալիատեսը ապրել է մինչև 1080 թ.։

քով։ Ոչ քաղաքականապես և ոչ էլ ռազմականապես կանգնած չի եղել ճիշտ ուղու վրա։ Նա այս հրաշալի քաղաքը թողել էր անպաշտպան, ենթարկելով մեծ վտանգների։ Ապա Ատտալիատեսը ծառանում է ոչ միայն Պանկրատիոսի, այլև կայսերական մի ւտրուկի դեմ (հեղինակը չի խոսում վերջինիս ինքնության մասին), որը ուղարկվել էր Անի, կայսրի կողմից։ Մեղադրում է վերջինիս այն բանում, որ նա գայթակղեցրել էր Սուլթանին, հարձակվելով նրա հետնապահ բանակի վրա, մինչդեռ Սուլթանը ոչ մի վնաս չհասցնելով, անցնելիս է եղել Անիի մոտերքով։ Սուլթանը կատաղած և նույնիսկ գրգռելով իր զինվորների կողմից փոխվրեժ լուծելու, գալիս և պաշարում է Անին։

Անին չուներ բավարար չափով ինքնապաշտպանության բանակ, քանի որ կայսրի ուղարկած ստրատեգը խոստացել էր պաշտպանել քաղաքը առանց լրացուցիչ սպառազինության, որպեսզի դրանով օգուտ տար կայսերական գանձարանին։ Բնակչությունը ռազմական գործից անտեղյակ էր և զուրկ հմուտ «ազնվական» ղեկավարներից։ Տեսնելով ղեկավարների և հրամանատարների երկպառակությունը, բնակչությունը հուսահատվում և փորձում է ընծաներով մեղմացնել արյունարբու թշնամու անողոքությունը և նույնիսկ անձնատուր լինել։ Բարոյալքված թուրքերի հաճախակի հարձակումներից և պարիսպների վրա թշնամու հասցրած հարվածներից բնակիչները դիմում էին փախուստի. այս տեսնելով թուրքերը դիմում են դեպի դարպասները, քանդում են պարսպի մի մասը և խուժում են քաղաքից ներս և որտեղ մոլեգնում է ահռելի ջարդը։ Սպանդից փախչողների մի մասը ապաստանում է բերդում, որտեղ և ապաստանում են թշվառ առաջնորդները, մյուսները գերեվարվում են։ Շուտով բերդի պաշտպանները չունենալով ուտելու պաշար հանձնվում են թշնամուն։

Ատտալիատեսը վերջացնում է իր պատմածը, կրկին ընդգծելով պարտության պատճառների մեջ այն հանգամանքը, որ կայսրը անկուշտ էր, ագահ և հարստություն տենչացող։ Կայսրը չէր հասկանում, որ առատաձեռնությունը երբեմն օգտակար է և երբեմն հույժ հարկի և ստիպողական, իսկ կարիքի դեպքում անհրաժեշտություն[79]։

Ֆրանսիացի պատմաբան Ժ. Լորանը ջանալով ըստ արժանվույն գնահատել Սկիլիցիայի և Ատտալիատեսի վերոհիշյալ մեղադրանքները, փորձում է արդարացնել Բյուզանդական կայսրության քաղաքականությունը, ասելով, որ Անիի պաշտպանությունը վատ էր կազմակերպված, դա այն պատճառով էր, որ Բյուզանդական կայսրությունը զբաղված էր ուղերի հարձակումների դիմակալմամբ Բալկաններում, հետևաբար, Կայսրությունը չէր կարող անհրաժեշտ ուժեր ուղարկել Արևելք[80]։

Ինչպես կարելի էր ակնկալել Անիի գրավումը սելջուկների կողմից արձագանք է գտել նաև հայկական աղբյուրներում։ Դրանք սուղ տեղեկություններ են տալիս Անիի գրավման նախորդող դեպքերի մասին, սակայն նրանց հաղորդումները ոչ միայն արժանահավատ են, այլև լրացուցիչ նյութեր են Անիի ներսում պաշարման ժամանակ տեղի ունեցող դեպքերի, ռազմական ղեկավարների և Բյուզանդական կայսրության վարած քաղաքականության մասին, որոնց մասին հատկապես քիչ տեղեկություններ կան օտար աղբյուրներում։

Դեպքերի ժամանակակից Արիստակես Լաստիվերտցին չի խոսում **Անիի գրավման նախորդող դեպքերի** մասին և բավարարվում է ասելով, որ «Թագավորը (իմա՝ Ալփասլանը—Ս. Բ.) բազմահարյուր ու անթիվ զորքերով սպառազինված եկավ հասավ ու մտավ մեր աշխարհը ոտնատակ արեց ու ավերեց շատ գավառներ[81], մինչև հասավ այն քաղաքը, որ մեղքերով կատարելության սահմանին էր հասել»[82]։

Այնուհետև Լաստիվերտցին նկարագրելով Անիի պաշարման և գրավման ժամանակ տեղի ունեցած ռազմական գործողությունների և եղեռնագործ ու նենգ թշնամու կատարած սպանդի, շարագործությունների և կողոպուտների մասին, գրում է.

«Կանգնեաց զխորանն իւր (իմա՝ Ալփասլանը—Ս. Բ.) ընդդէմ քաղաքին Անւոյ, և տարածեաց զբանակս իւր ընդ լայնութիւն երկրին։ Ջանայր, հնարէր՝ զի զդուռն երկաթի և զնիգս պղնձի ի բաց խլեսցէ, որ կայր ընդդէմ թագաւորութեանն իւրոյ. և անյոյս լեալ յաղագս ամրութեանն՝ թէպէտ և զմարտն սաստկացուցանէր, կամէր չուել։ Եւ զայն ոչ գիտացէալ թէ էարկ տէր ի մէջ պահապանացն և իշխանացն երկպառակութիւն և անմիաբանութիւն, ամբոխումն և բաժանումն. և անդէն թողեալ զգործ պատերազմին՝ ի փախուստ դարձան, և խուճապեալք յերկիւղէն՝ ոչ ոք յաղգայինս կամ ի կարևոր բարեկամսն հայեցաւ, այլ

[79] *M. Canard*, p. 257—258.

[80] *J. Laurent*, Byzance et les turcs Seldjoucides jusqu'en 1081, p. 33, 57, 74.

[81] Ըստ երևույթին Ա. Լաստիվերտցին նկատի ունի Ալփասլանի ու Մելիքշահի կատարած ռազմական գործողությունները Հայաստանի տարածքի վրա, որոնց մասին ինչպես տեսանք մանրամասն տեղեկություններ են հաղորդում մահմեդական աղբյուրները։

[82] Ա. Լաստիվերտցի, էջ 134։

իւրաքանչիւր ոք ահիւ ըմբռնեալ։ Եւ տեսեալ զայս սպառազէն զօրացն, որ արտաքոյ մարտնչէին, հանդէպ ինքեանց ի վերայ պարսպին ճանապարհ առնէին, և իբրև զկուտակումն ալեաց ծովու ի ծոց քաղաքին հեղուին, և զպարսկական (իմա՝ սելջուկ Թուրքական—Ս. Բ.) սուրն ի գործ արկեալ, ոչ ումեք խնայէին։ Իսկ բազմութիւն արանց և կանանց յապարանս Թագաւորացն դիմեալ՝ իբր Թէ կարիցեն ապրել, և այլքն ճողոպրեալ յամուրն որ ներքի բերդ կոչի։ Իսկ որ ի մէջ քաղաքին ամրացեալ էին, իբրև զիտացին Թշնամիքն Թէ անպատրաստ են, եւ ոչ գոյ ի նոսա այր պատերազմող կամ կերակուր և ըմպելի, վաղվաղակի շուրջ պատեալ և շտապ տագնապի հասուցանէին, մինչև յակամայ արտաքս հանին»[83]։

Այնուհետև հայրենասեր պատմիչը անհուն կսկիծով նկարագրելով քաղաքի ներսում տեղի ունեցող սպանդն ու հայ ժողովրդի մարտիրոսությունը, գրում է.

«Անդ էր տեսանել զվիշտս և զտագնապս իւրաքանչիւր հասակի, զի ի գրկաց մարդն յափշտակեալ լինէին մանկունք անողորմաբար զքարի հարեալ, և մարդն արեամբ և արտասուօք զմանկունս իւրեան Թանային. զհայր և զորդի մի սուր խողխողէր, զի ծերք և երիտասարդք, քահանայք և սարկաւագունք զմի սրոյ ճաշակ մահու ընկալան զի լցաւ քաղաքն լի ծայրիւ և ծայրիւ և ճանապարհ էր մարմին սպանելոցն, զի ի բազմութենէ կոտորելոցն և յանթուելի դիականցն՝ վտակն մեծ, որ անցանէ առ քաղաքաւն, ներկանէր արեամբ, և գազանք վայրի և ընտանի՝ եղեն զերեզման դիականցն, վասն զի ոչ գոյր որ Թաղէր և հարկաւոր հողոմն ծածկէր զխողխողեալսն։ Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նմա գործելոցն տոչորեցաւ բարձրաշէն և գեղեցկայարմար ապարանքն, և եղև ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր. և վաշխն և նենգութիւնն որ ի նմա՝ խափանեցաւ»[84]։

Լաստիվերցին դեմ լինելով ավատատիրական հասարակարգի սոցիալ-տնտեսական կյանքում դրսևորված ծայրահեղություններին, առիթը բաց չի թողնում խարազանելու այն անիրավությունները, որոնք կատարվում էին իշխող դասակարգի՝ վաշխառու դասի կողմից, գրում է.—

«Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն. և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ աղքատս և տնանկս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ի գործոց աղտեղութեան ո՛չ խորշին, այլ միայն արբեալ լինին ի ցանկութեանցն որ զնոսա ըմբռնեալ ունի։ Եւ արդ զի՞նչ լինի նոցա ի հասանել բարկութեան տեառն. սպառին և պակասին որպէս մոմ յերեսաց հրոյ, եթէ Թագաւոր իցէ և եթէ իշխան, որպէս ծանեաք ի գրելոցս։ Բայց Թագաւորն Պարսից (իմա սելջուկյան Ս. Բ.) բազում գաւառաց տիրեալ և անթիւ աւարաւ դարձաւ յաշխարհն իւր»[85]։

Ինչպես նշվեց վերևում, Անիի գրավման մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև Մատթեոս Ուռհայեցին։ Ի տարբերություն մահմեդական աղբյուրների և Արիստակես Լաստիվերտցու, Ուռհայեցին հիշատակում է Անիի պաշտպանությունը կազմակերպող զեկավարների անունները՝ Սմբատի Հոր Բագարատին[86] և Բակուրանի որդի Գրիգորին[87]։

Այնուհետև Ուռհայեցին պատմում է, որ Ալփասլանը, չկարողանալով ներս խուժել քաղաք՝ արդեն հուսահատվել էր և սկսել ետ նահանջել, սակայն Անիի իշխանավորները, Բագարատը և Գրիգոր Բակուրյանը հենց նույն այդ ժամանակ թողին ժողովրդին անպաշտպան և ետ քաշվեցին միջնաբերդ։ Մահմեդականները, իմանալով այդ և տեսնելով, որ ժողովուրդը խուճապի է մատնվել, ետ դարձան և գրավեցին քաղաքը, որը առանց պահապանների էր[88]։

Քաղաքի գրավման ժամանակ սելջուկ Թուրքերի կատարած չարագործությունների և գերեվարության մասին Ուռհայեցին գրում է. «...և դարձաւ բազմութեամբ զօրօք և մտաւ ի քաղաքն Անի և առ հասարակ ամենայն զօրքն անօրինաց ունէին դանակ քաջասուր, զերկուսն ունելով յերկոսեան ձեռսն և զմէկն ունելով յատամունսն. և այսպիսի օրինակաւ սկսան զամենայն քաղաքն առ հասարակ կոտորել անողորմաբար... և ամենայն մեծամեծք իշխանք տանն հայոց և դասք ազատացն երկաթի

83 Նույն տեղում, էջ 135։

84 Նույն տեղում, էջ 136։

85 Նույն տեղում, էջ 136։

86 Տե՛ս նախորդ էջերում տողատակի բացատրությունները Բագարատի մասին։

87 Մ. Ուռհայեցի, էջ 148։ Տե՛ս նաև Մ. Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխարհ. թարգմ. Հ. Բարթիկյանի, էջ 97. Ազգությամբ վրացի դարձվածքի տակ, ինչպես ասել է Հ. Բարթիկյանը, պետք է հասկանալ «վրացադավան»։ Գրիգոր Բակուրյանը ազգությամբ հայ էր, բայց քաղկեդոնիկ։ Բյուզանդացի կին պատմիչ Աննա Կոմնենան պարզ վկայում է, որ նա ազգությամբ հայ էր։ Գրիգոր Բակուրյանի՝ Ֆիլիպուպոլիս քաղաքի մոտ կառուցված վանքի կանոնադրության հունարեն բնագիրը Գրիգոր Բակուրյանն ստորագրել է հայերեն տառերով։ Տե՛ս աշխարհ. թարգմ. Հ. Բարթիկյանի, էջ 226, ծան. 43։ Տե՛ս նաև «Повествование Вардапета Аристакеса Ластивертци», пер. К. Юзбашян. стр. 171—172.

88 Մ. Ուռհայեցի, էջ 148—149։

կապանօք կային առաջի սուլտանին... վարեցան ի Պարսիկք ի գերութիւն... նա և զոմանս յոտից մինչև զգլուխսն քերթեալ շարաշար խոցուածով որ և տեսողացն սոսկալի էր»...[89]։

Անիի գրավմանը արձագանքել են նաև Սամուել Անեցին, Կիրակոս Գանձակեցին[90], Սմբատ Սպարապետը[91], Վարդան Վարդապետը[92], Ստեփանոս Օրբելյանը[93] և մանր ժամանակագրությունների հեղինակները[94]։

Մանր ժամանակագրություններից ուշագրավ և հետաքրքիր է հետևյալը. «Ի թվին ՇԺԳ (1064) բարձան թագավորքն հայոց զԱնոյ...[95], որ էր վերջին թագաւոր Յովանէս[96], որ և յետ ԻԴ (23) ամի մահու նորա Ալփասլան, որ է հաւր եղբաւր որդի Տողրիլ սուլտանին[97] և դաւրագլուխ զաւրաց նորայ, որ էառ ԻԴ (24) գաւառս և զհետ մահու Տողրիլին եղև ինքն սուլտան և դարձեալ եկն ՃՌ (100000) աւ[98] առ զԱխլքաղաք և զՍամշոյտէ[99] և զԱնի և Ռ (1000) այր զենու ի փոս մի և լուանայ յարիւնս նոցա. զոր ասեն թէ զոհ մեռելոց իւրոց արար զայն»[100]։

---

89 Մ. Ուռհայեցի, էջ 148—149։

90 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 92—93։

91 «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Ի Վենետիկ, Ս. Ղազար, 1956, էջ 59—60։

92 Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 101։

93 «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի», Երևան, 1942, էջ 14։

94 «Մանր ժամանակագրություններ», XIII—XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, հ. Ա, էջ 25, 29։ 1956, հ. Բ, էջ 133։

95 Նույն տեղում, հ. Բ, էջ 133։ Վ. Հակոբյանը ծանոթագրությունում գրում է, որ Բագրատունիների վերացման տարեթիվը մեր պատմիչները տարբեր են հասկանում և նշում։ Օրինակ Ս. Սպարապետը այն համարում է 1045 թ., երբ բյուզանդացիք Գագիկ Բ-ի ժամանակ գրավեցին Անին։ Մ. Ուռհայեցին այդ բանի համար նկատի ունի Գագիկ Բ-ի սպանությունը 1079 թ., Մ. Ուռհայեցի, էջ 220։ Իսկ Սամվել Անեցին 1065 թ., սելջուկների կողմից Անիի և Կարսի գրավումը։ «Մանր ժամանակագրություն», հեղինակը, ըստ երևույթին, հետևել է Ս. Անեցուն։ Տե՛ս հ. Բ, էջ 133, ծան. 1։

96 Բագրատունիների վերջին թագավորը Գագիկ Բ-ն է։

97 Հայկական աղբյուրներից միակն է, որ ճիշտ է վկայում Տուղրիլի և Ալփասլանի ազգակցական կապը։ Օրինակ Մ. Ուռհայեցին նրան համարում է Տուղրիլ սուլթանի եղբայրը։ Մ. Ուռհայեցի, էջ 146։

98 Զորքերի թիվը նույնն է, ինչ Միխայիլ Ասորու մոտ։ Տե՛ս «Ժամանակագրություն Մ. Ասորւոյ», էջ 405։

99 Իմա՛ Շամշյուլդե, ճիշտը Սամշվիլդե։ Գտնվում է այժմյան Վրաստանի Խրամ գետի ձախափնյա վտակներից մեկի վրա։

100 «Մանր ժամանակագրություն», հատ. Բ, էջ 133։ Պետք է նշել նաև, որ այս ժամանակագրությունը շատ նման է Մ. Ասորու ժամանակագրության հատվածին, տե՛ս «Ժամանակագրութիւն Մ. Ասորւոյ», էջ 405։

Անիի գրավումը Մ. Չամչյանը և նրան հետևելով նաև Սեն Մարտենը, Հերբերգը և պատմաբանների մեծագույն մասը[101] ենթադրում են 1064 թ. հունիսի 6-ին։ Այս հաշիվը ճիշտ չէ։ «Ավելի ճիշտ է, ասում է Հ. Մանանդյանը, ըստ իս Դյուլորիյեի տոմարական հաշիվը»[102]։

Սամուել Անեցու մոտ Անիի առումը ցույց է տրված «Ի ՇԺԳ-ին ի տօնի Տիրամօրն յաւուր երկշաբաթօջ»[103]։ Հիմնվելով այս կարևոր վկայության վրա, Դյուլորիեն Անիի գրավումը Ալփասլանի զորքերի կողմից դնում է 1064 թ. օգոստոսի 16-ին, երկուշաբթի[104]։

Մահմեդական աղբյուրներից երևում է, որ Ալփասլանը 1064 թ. Անին գրավելուց հետո այն հանձնեց ամիրաներից մեկին[105] և ապա 1065 թ. հաջորդ արշավանքից հետո, երբ նվաճել էր շատ բերդեր ու ամրոցներ Հայաստանում, դրանք հանձնեց Աբու-լ-Ասվարին՝ Առանի տիրոջ խնամակալությանը[106]։ Վերջինս «նկատի ունենալով նվաճված վայրերի մոտիկությունն իր թագավորության տարածքին (Ռաջաբ 457 (հունիս, 1065) Աբու-ալ-Ասվարը հրամայեց իր զորքերին հավաքվել և ապա մտնելով Հայաստանի և Ռումի տարածքը, նա շարժվեց դեպի Անիի սահմանները և կարգի բերեց ինչ որ անկարգ էր այնտեղ։ Նա նշանակեց իր ֆինանսական գործակալներին Անիում...»[107]։

Ըստ երևույթին, Անին մինչև 1072 թ. մնում էր Ալփասլանի գերիշխանության տակ, քանի որ, ինչպես վկայում են հայկական աղբյուրները, 1072 թ. Գանձակի Փատլուն ամիրան Անին Ալփասլանից գնեց և տվեց իր մանկահասակ Մանուչե թոռան[108]։

---

101 Մ. Չամչյան, Պատմություն հայոց, հ. 2, էջ 982, Le Beau, Histoire du Bas-Empire, t. XIV, p. 445. Herzberg, Geschichte der Byzantiner und des osmanischen Reiches, p. 244.

102 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 60։

103 Ս. Անեցի, էջ 112։ Տե՛ս նաև «Մանր ժամանակագրություններ», հ. Ա, էջ 29։

104 *Ed. Dulaurier*, Recherches sur la chronologie arménienne, Paris. 1859, p. 297. *M. Brosset*, Collection d'historiens arménien, t. II. Tables chronologiques, p. 448—449.

105 *Sadruddin el-Huseyni*, p. 27—28.

106 *V. Minorsky*, Studies, p. 21.

107 *V. Minorsky*, Studies, p. 21—22.

108 Տե՛ս Վարդան Վարդապետ, էջ 193։ Մահմեդական աղբյուրներում վկայություններ կան այն մասին, որ Մանուչեն ոչ թե Փատլունի թոռն է, այլ եղբայրը՝ Աբու-լ-Ասվարի որդին։ Ռ. Գրուսեն հայտնում է այն միտքը, որ 1072 թ. Ալփասլանը Անին Փատլունին տվեց որպես խաս։ *R. Grousset*, նշվ. աշխ., էջ 634։

Ալփասլանի այս արշավանքի ժամանակ դեռևս շարունակում էր իր գոյությունը պահպանել Կարսի Բագրատունյաց թագավորությունը Աբասյան Գագիկի իշխանության տակ։ Ալփասլանը պատվիրակություն է ուղարկում Գագիկի մոտ և նրան կոչում է հնազանդության։ Վերջինս պատվիրակներին դիմավորում է սգավոր՝ սև հագուստ հագած և նստած մի սև բարձի վրա, ասելով նրանց թե ինքը սգում է Տուղրիլ բեգի մահը։ Ալփասլանը լսելով այս, բանակով գալիս է Կարս։ Գագիկը նրան ընդունում է պատվով։ Այնուհետև հնազանդություն հայտնելով սուլթանին, ազատում է Կարսը թուրքական վայրագ ավերածություններից։ Սակայն նույն տարում (1065 թ.) վախենալով թուրքերի հետագա հարձակումներից, Գագիկը իր թագավորությունը հանձնեց Բյուզանդիայի Դուկաս կայսրին (1059—1067), փոխարենը ստանալով նրանից Կիլիկյան Տավրոսում՝ Ծամնդավ, Կեսարիա և Խավատանեք քաղաք-ամրոցները[109]։ Գրիգոր Բակուրյանը բյուզանդական կայսրի նկատմամբ կատարած բարձր ծառայությունների դիմաց նշանակվեց Կարսի կառավարիչ (1065—1074)։

Ալփասլանի 1064 թ. արշավանքից հետո, բացի Կարսի Գագիկ թագավորից, Բյուզանդիայի, Փոքր Ասիայի կենտրոնական և հարավարևմտյան նահանգներն (Կիլիկիա) էին գաղթել նաև հայ զանգվածներ, Հայաստանի հյուսիսային և արևելյան կողմերից։ Այդ մասին է վկայում Մ. Ուռհայեցու հետևյալ վկայությունը «Արդ՝ այսպիսի նմանութեամբս (ակնարկությունը վերաբերում է Գագիկ թագավորի գաղթին—Ս. Բ.) գերեցաւ տունն հայոց և արեամբ լցաւ առ հասարակ ամենայն աշխարհն... և քակտեալ ապականեցաւ հայրենատունն մեր խլեալ, խախտեցաւ հիմն բնակութեան Հայաստան ազգացս... Եղաք մատնեալք ի ծառայութիւն ազգաց անօրինաց և օտար դաղանաց»[110]։

Այնուհետև Ալփասլանը իր բանակով ու բազմահազար գերիներով վերադարձավ Ռեյ։ 1064 թ. մեծ հաջողություններից հետո Ալփասլանը, որը կատարելապես ապահովել էր իր թիկունքը՝ կարող էր համարձակ

109 Մ. Ուռհայեցի, էջ 151, «Սմբատ Սպարապետի Տարեգիրք», 1956, էջ 60։ Տե՛ս նաև Վարդան Վարդապետ, էջ 103։ Վերջինիս մոտ տարբեր է վկայությունը, «իսկ թագաւորն Կարուց Գագիկ որդի Աբասայ նեղեալ յերկիւղէ Թուրքացն տայ զՀայրենիս իւր ի Յոյնս և առնու զԾամնդաւ, և զԼաւիսա, և զԱմասիա, և զԿոմանա, և զպատրինս հարիւր, որ է գեղջանա»։

110 Մ. Ուռհայեցի, էջ 151։

կերպով իր հաղթական սուրը դարձնել Ֆաթիմյան Եգիպտոսի ու ապա Բյուզանդական կայսրության դեմ։

Սելջուկյան ավերածություններից զերծ չմնաց նաև Վասպուրական աշխարհը։ 1064 թ., երբ Ալփասլանը գրավում էր Անին, սելջուկ-թուրքական մի այլ բանակ «արյունարբու» Սրահանք ամիրայի առաջնորդությամբ մտնում է Վասպուրական։ Սրահանքը պաշարում է Վանը, «և զնա տառապեցոյց ի տառապանս խիստ... և զբնակութիւնսն այրեաց հրով»։ Նույն ճակատագրին է ենթարկվում նաև Արճեշը։ Թշնամին տարածվում է Վասպուրական աշխարհով մեկ։ Անմատչելի են մնում միայն Ամյուկ ամրոցն ու Աղթամար կղզին։ Ամյուկում էր հաստատված նահատակ Թոռնիկ Արծրունու տղան՝ Աբղմսեհը. «զայր ոմն տոհմակից արքային Սենեքերիմայ»[111]։

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհը, որ Բյուզանդական կայսրության ամրակուռ բնական պատնեշն էր՝ այժմ գրեթե խորտակված էր։ Բավական էր մեկ հուժկու հարված ևս, և թափառական թուրք ցեղերը կկարողանային արդեն ազատ ներս խուժել Փոքր Ասիայի արգավանդ դաշտերն ու արոտատեղերը և հաստատվել այստեղ, որպես տիրող և իշխող ժողովուրդ[112]։

Սակայն Ալփասլանը այդ անելուց առաջ նախ պետք է ամրապնդեր իր թիկունքը Թուրքեստանից եկող իր ցեղակիցների հարձակումներից և վերջ դներ երկրի ներսում հաճախակի բռնկվող ապստամբություններին, ապա պետք է թուլացնել, Եգիպտոսի Ֆաթիմյանների հզորությունը Բյուզանդիայի հարավային սահմաններին հարող երկրներում՝ Արևմտյան Միջագետքում, Ասորիքում և Պաղեստինում։

Մյուս կողմից, Բյուզանդիան չզգաստանալով մոտալուտ ահավոր վտանգից և դաս չառնելով իր պարտություններից դեռևս շարունակում էր իր հայատյաց քաղաքականությունը։ Ապարդյուն անցավ 1065 թ. բյուզանդական կայսր Կոստանդին Դուկասի թույլտվությամբ և Կարսի՝ այժմ Ծամնդավի Գագիկ շահնշահի հրամանով՝ Գրիգոր Մագիստրոսի որդու՝ Վահրամ Պահլավունու Գրիգոր Բ. Վկայասեր մականունը կրող նորընտիր կաթողիկոսի հայերի և բյուզանդացիների միջև հաշտության եզր համագործակցություն ստեղծելու ջանքերը, որը այնքան հրամայա-

111 Թովմա Արծրունի, էջ 502։

112 Հ. Մանանդյան, Քննական պատմություն..., էջ 61։

կան էր դարձել երկու ժողովուրդներին՝ սելջուկների ահավոր վտանգից փրկվելու համար[113]։

Անիի անկումից մինչև Մանազկերտի ճակատամարտը Բյուզանդիան դարձյալ վարում էր ոչ միայն հայ եկեղեցու և եկեղեցականների դեմ հալածանքների քաղաքականություն, այլև հայ ժողովրդին դավանափոխ անելու քաղաքականություն։ Այդ իրագործելու համար դիմում էր բռնության հայ ազնվականների մնացորդների նկատմամբ, կամ էլ ձգտում էր հույն և հայ եկեղեցիների միության հաստատմանը։

Մատթեոս Ուռհայեցին մատնացույց անելով այդ քաղաքականությունը, գրում է, որ սելջուկյան ահավոր վտանգը դիմագրավելու փոխարեն Կոստանդին Դուկաս կայսրը 1065 թ. սկսում է դավանական և հավատափոխման հալածանք հայերի դեմ, փոխանակ համախմբելու նրանց իր շուրջը։ Այնուհետև Ուռհայեցին գրում է. «Յայսմ ամի Տուկիծ թագաւորն Հոռոմոց և պատրիարքն և ամենայն կղերիկոսքն և ամենայն դասք ներքինեացն լծակիցք լեալ շարաշունչ և պիղծ խորհրդոյ անօրէն թագաւորին և ամենայն մեծամեծ իշխանքն Հոռոմոց ձեռն տուեալ խաւարային խորհրդոցն, վասն զի կամէր թագաւորն շար միաբանելովք իւրովք բառնալ զՀայոց հաւատոյ դաւանութիւնն և խորհէին եղծանել զհաւատս սուրբ Լուսաւորչին Գրիգորի և կամեցաւ զիւր դիւաբուն և զխառնափնդոր և զթերակատար զհաւատսն հաստատել ի Հայք»[114]։ Ապա պատմիչը մանրամասն պատմում է, որ Կոստանդին Դուկաս կայսրը այդ նպատակին հասնելու համար Սեբաստիայից Կ. Պոլիս է կանչում Արծրունյաց թագավոր Սենեքերիմի որդիներ Ատոմին և Ապուսահլին։ Վերջիններս Կ. Պոլիս են գնում Հակոբոս Սանահնեցի վարդապետի ուղեկցությամբ։ Կայսրը նրանց ուղղակի առաջարկում է հավատափոխ լինել, ասելով «Հրամանք է թագաւորութեանս մերում զի դուք և ամենայն իշխանք Հայոց աշխարհին առնուք յանձինս ձեր զկնունք հաւատոյ ազգիս Հոռոմոց»[115]։ Թեև Ատոմ և Ապուսահլ թագավորազունները մերժում են կայսրի առաջարկը, ասելով, թե առանց Գագիկ թագավորի համաձայնության չեն կարող այն ընդունել, սակայն կայսրը ստիպում է Հակոբոս Սանահնեցուն ստորագրել հայերի և հույների (հավատո)

[113] *R. Grousset*, Histoire de l'Arménie des origines à 1071, Paris, 1947, p. 615—617. Մ. Ուռհայեցի, էջ 153—154։

[114] Մ. Ուռհայեցի, էջ 159—160։

[115] Նույն տեղում, էջ 161։

միության գիրը։ Գագիկ թագավորը Արծրունի քաջազունների միջոցով իմանալով եղելությունը շտապում է Կ. Պոլիս, ներկայանում կայսրին և կարդալով միության գիրը վերջինիս աչքերի առաջ պատռում է այն և շպրտում գետին։ Այնուհետև Գագիկ Բ թագավորը քաջությամբ և իմաստությամբ պաշտպանում է հայոց հավատո հանգանակը և մերժում հավատքի միությունը[116]։ Թեև կայսրը Գագիկին թույլ է տալիս վերադառնալ Կեսարիա, սակայն Գագիկը այնքան է զայրանում եղելությունից, «որ զայր Գագիկ յամենայն իշխանսն, հրամայեաց ամենայն զօրացն Հայոց խայտառակել զփառաւոր կանայս Հոռոմոց և այնու նախատեաց զնոսա, վասն զի խորհեցաւ այլ ոչ մտանել բնաւ ի Կոստանդնուպոլիս, այլ խորհեցաւ գնալ՝ առ Աբասլան (իմա՝ Ալփասլան—Ս. Բ.) սուլտանն Պարսից և տիրանալ աթոռոյ թագաւորութեան տանն Հայոց, զի բազում անգամ կոչէր զԳագիկ սուլտանն»[117]։

Հայերի նկատմամբ նույն քաղաքականությունն է շարունակում Դուկաս կայսրին հաջորդող Ռոմանոս Դ Դիոգենես կայսրը (1067—1071)։

Մանազկերտի ճակատամարտի նախօրեին 1069—1070 թթ. Հայաստանի տարածքում սելջուկ Թուրքերի դեմ կատարած սահմանները ամրացնող մանր արշավանքների ժամանակ շարժվելով արևելք, ճանապարհին հանդիպելով Սեբաստիա, այստեղ հավատ ընծայելով հույն բնակչության և իշխանների բամբասանքին, սպառնում է ոչնչացնել Ատոմ և Ապուսահլ իշխաններին և նրանց ազատանուն։ Մյուս կողմից սպառնում էր ուժի միջոցով հավատափոխ անել հայերին[118]։

Միքայել Ասորին Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիայի պարտության գլխավոր պատճառը համարում է Բյուզանդիայի վարած հայատյաց քաղաքականությունը և ուղղակի մատնացույց անելով, այդ մասին նա արձանագրում է հետևյալ դեպքը Մանազկերտի ճակատամարտի նախօրեին։ «Իսկ Դէօժանն կուտեալ անթիւ զօրս, շոգաւ ի վերայ Նորա (իմա՝ Ալփասլանին—Ս. Բ.) և եկեալ ի Կարս այրեաց զՀայոց եկեղեցին. և երդուաւ եթէ յաղթէ Թուրքաց կամ ջնջէ բնաւ զՀայս կամ ի կրօնս իւր դարձուցանէ»[119]։

Անշուշտ, հայ և հույն եկեղեցիների ու ազնվականության միջև եղած վեճերը, հայ և հույն իշխանների փոխադարձ վրիժառության փաստերը,

[116] Նույն տեղում, էջ 160—178։

[117] Նույն տեղում, էջ 180։

[118] Նույն տեղում, էջ 198—199։

[119] Մ. Ասորի, էջ 404—405։

որոնք բնականաբար արտացոլվում էին հայ և հույն զանգվածների և զորականների հարաբերություններում, ոչ միայն թուլացնում էին բյուզանդական բազմազգ բանակների անմիջական մարտունակությունը, այլև նպաստավոր պայմաններ էին ստեղծում սելջուկ թուրքերի հետագա ռազմական հաջողությունների համար։

բ. Սելջուկյան արշավանքները 1065—1071 թթ.։ Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիայի կրած պարտության հետևանքները

Եթե Անիի անկումը ազդարարում էր Բյուզանդական կայսրության տիրապետության անկման սկիզբը բուն Հայաստանում, ապա 1071 թ. բյուզանդական զորքերի պարտությունը Մանազկերտի ճակատամարտում այդ տիրապետության արևամուտն էր։ Մանազկերտի ճակատամարտում բյուզանդացիների կրած պարտությունը ոչ միայն վերացնում էր բյուզանդական տիրապետությունը բուն Հայաստանում և Փոքր Ասիայում, այլև նախադրյալներ էր ստեղծում սելջուկ թուրքերի տիրապետության հաստատմանը այդ վայրերում և Փոքր Ասիայի սելջուկյան պետության ստեղծմանը։ Հետևաբար, Մանազկերտի ճակատամարտին նախորդող դեպքերը և բուն Մանազկերտի ճակատամարտը մեծ արձագանք են գտել դեպքերին ժամանակակից և նրան հաջորդող դարերի հայ և օտար պատմագրության մեջ։ Հետաքրքրությունը այդ ճակատամարտի շուրջը շարունակվել է մինչև մեր օրերը, և գրվել են մի շարք ուսումնասիրություններ, նկատի ունենալով այդ ճակատամարտի բոլոր ճշգրիտ ու մանրամասն իրադարձությունները։ Սակայն պետք է նշել, որ ինչպես դեպքերին ժամանակակից և առաջիկա դարերի օտար պատմիչների մոտ նկատվում է դեպքերի շարադրման միակողմանի մեթոդ և նույնիսկ կողմնակալ դիրք, նույնը և նկատվում է նոր և նորագույն պատմագրության մեջ։ Արդի հեղինակների մի մասը ավելի շատ հենվել են քրիստոնյա, մեծավ մասամբ բյուզանդական աղբյուրների վրա[120], իսկ հեղինակների մի մասն էլ բոլորովին անտեսում են արաբական աղբյուրները, լավագույն դեպքում վկայակոչելով միայն Իբն-ալ-Ասիրին»[121]։ «Մանազկերտի ճակատամարտը ըստ մահմեդական

[120] *J. Laurent*, Byzance et les Turcs Seldjoucides jusqu'en 1081, Nancy 1913. *Նույնը*, Des Grecs aux Croises, Byzantion, I (1924), p. 367—449, *Le Beau*, Histoire du Bas—Empire, Paris 1824. *R. Grousset*, Histoire de l'Arménie des origines à 1071, p. 62—63.

[121] *G. Weil*, Geschichte des Chalifen, Mannheim, 1851, t. III. *Aug. Müller*, Der Islam im Morgen und Abendland, Berlin, 1885, t. II. Հ. Գելցեր, *Համառոտու-*

աղբյուրների» խորագիրը կրող կլոր Քահենի[122] հոդվածը մինչև այժմ եղած ուսումնասիրությունների մեջ ամենածավալունն է, որտեղ գլխավորապես օգտագործված են մահմեդական աղբյուրներից՝ արաբական աղբյուրները։ Մանազկերտի ճակատամարտին ոչ ծավալուն էջեր են նվիրել նաև արդի թուրք սելջուկագետ պատմաբանները[123], որոնք հաճախ գերագնահատելով Մանազկերտի ճակատամարտի դերը ոչ միայն թուրք պետականության ստեղծման գործում Փոքր Ասիայում, այլև «մահմեդական աշխարհի վերածննդյան սկիզբը դնող և խոշոր դարձուլուխ հանդիսացող իրադարձություն», այդ պատճառով էլ նրանք երբեմն ծավալվող իրադարձություններին տալիս են կողմնակալ գնահատանք, հենվելով հաճախ ոչ հավաստի և արժանահավատ աղբյուրների վրա։

Բոլորովին նպատակ չունենալով ուսումնասիրել Մանազկերտի ճակատամարտին վերաբերող նյութերն ու հանգամանքները, Հ. Մանանդյանը ընդամենը երկու էջով կանգ է առնում այդ հարցի վրա[124]։

Մանազկերտի ճակատամարտին նախորդող դարերում (VI—XI դդ.) Անդրկովկասի, հատկապես Հայաստանի նկատմամբ տարվող Բյուզանդական կայսրության քաղաքականության գնահատմանն է նվիրված Ս. Թումանովի հոդված-զեկուցումը[125]։

Ինչպես վերևում ասվեց, Մանազկերտի ճակատամարտին նախորդող դեպքերն ու բուն ճակատամարտի պարագաները արտացոլվել են նույն դարի՝ ժամանակակից և հաջորդող դարերի հայ և օտար ժամանակագիրների ու պատմիչների երկերում։ Ինչպես կարելի էր սպասել այդ դեպքերը որոշ կողմնապահությամբ արձանագրվել են բյուզանդական պատմիչներ Մ. Ատտալիատեսի, Սկիլիցայի և դեպքերին մասնակից Նիկեփոր Վրիենիոսի ժամանակագրություններում և պատմական երկերում։ Թեև մեզ հասած մահմեդական աղբյուրների մեծ մասը ավելի ուշ դարերի հեղինակների գործեր են, սակայն նրանց հաղորդումները

թիւն բիւզանդական կայսրների պատմութեան, գերմաներենից թարգմանեց Մեսրոպ վարդ. Տեր-Մովսեսեան, Վաղարշապատ, 1901։

[122] *Cl. Cahen*, La campagne de Mantzikert d'apres les sources musulmannes, Byzantion, Bruxelle, 1934.

[123] *M. Yinanc*, p. 75—82. *O. Turan*, Selçuklular Tarihi, p. 123—134.

[124] Հ. Մանանդյան, *Քննական տեսություն..., էջ 63—65։*

[125] *C. Toumanoff*, The Background to Mantzikert (Thirteenth international congress of Byzantine studies) Main Papers XIII, Oxford, 1966.

մեծ արժեք են ներկայացնում, քանի որ նրանք մեջբերումներ են կատարում դեպքերին ժամանակակից հեղինակներից, որոնք չեն հասել մեզ։ Եթե զանց առնենք այդ հեղինակների գործերում ավելի ուշ շրջանում ավելացված առասպելական պատումներն ու ձոները, նվիրված սելջուկ սուլթանի հասցեին և համեմատենք այդ աղբյուրները ավելի վաղ շրջանի այլ լեզուներով գրված երկերի հետ, ապա պարզ կդառնա, որ նրանք մեծ փոփոխություն չեն մտցնում սկզբնաղբյուրների հիմնական դրույթների մեջ։

Պետք է նշել, որ մահմեդական աղբյուրների մեջ թեկուզ որոշ կողմնակալությամբ առավել հավաստի են արաբ ժամանակագիրները, որոնք արձանագրում են իրականությունն ու փաստերը իրենց արտացոլման շրջանակներում, առանց մեծ փոփոխության ենթարկելու դրանք։

Արաբական աղբյուրներում ամենավաղ հիշատակությունը Մանազկերտի ճակատամարտի մասին գտնում ենք XII դ. հեղինակ Աբու Ցալա Համզա իբն ալ-Կալանիսիի երկում։ Նրա փաստերը հենված են գլխավորապես արխիվային նյութերի և այն պաշտոնական հաղորդագրությունների վրա, որոնք արձանագրված են Ասորիքի մայրաքաղաք Դամասկոսի պետական դիվանատանը[126]։

XIII դ. Հալեպի ժամանակագիր Քամալ ադ-Դին իբն ալ-Ադիմի կենսագրական բառարանի՝ Ալփասլանին նվիրված հոդվածում ոչ միայն բառացիորեն կրկնում է Իբն-ալ-Կալանիսիին, այլև մեզ ծանոթացնում է երկու այլ ժամանակագիրների, որոնց վկայությունների վրա շարադրել է Հալեպի ամիրայի դերը Մանազկերտի ճակատամարտում և առհասարակ Բյուզանդիայի դեմ մղված մարտերում[127]։

Պետք է նշել նաև Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկիի, «Թարիխ Մայաֆարիկին» երկը, որի մեջ Մանազկերտի ճակատամարտի մասին եղած հատվածը տպվել է Ամեդրոզի հրատարակած Իբն Կալանիսիի երկի լուսանցքներում[128]։

Արաբական մյուս պատմական երկերի լրիվ բովանդակությունը (որոնք մեզ չեն հասել) մտել է XII դ. հեղինակ Իմադ ադ-Դին ալ-Իսֆահանիի և XIII դ. հեղինակ Սիբտ իբն-ալ-Ջաուզիի շարադրանքի մեջ[129]։

---

126 *Cl. Cahen.* La Campagne de Mantzikert. (Ibn Kalânisi. Chronique de Damas (Edition Amedroz) Leide 1908.

127 Recueil des historiens des croisades, Documents orientaux t. III, p. 712.

128 Տե՛ս *Ibn Kalânisi*, Նշվ. աշխ., էջ 90—100։

129 Այս հեղինակների մասին տես ներածության համապատասխան բաժինը։

Վերջին հեղինակի մոտ Մանազկերտի մասին եղած հատվածը նույնպես տպագրված է Իբն ալ-Կալանասիի վերևում նշված երկի լուսանցքներում[130]։ Սա միակ արաբ հեղինակն է, որ խոսում է Մանազկերտին հաջորդող դեպքերի՝ բանակցությունների Ռոմանոս Դիոգինես կայսրի ճակատագրի մասին։

Արաբական մյուս հեղինակն է նշանավոր ժամանակագիր Իբն-ալ-Ասիրը, որին հայտնի էին վերևում նշված արևելյան գրեթե բոլոր երկերը[131]։

Մահմեդական աղբյուրներից ամենակարևորն է XII դ. վերջին հեղինակ Սադր ադ-Դին ալ-Հուսայնիի «Ախբար ադ-Դաուլա աս-Սելջուկիե» աշխատությունը[132]։

Ասորական աղբյուրներից պետք է նշել Աբու-լ-Ֆարաջի և Միքայել Ասորու ժամանակագրությունները։

Մանազկերտի ճակատամարտի մասին եղած աղբյուրների մեջ ամենակարևորն են հայկական աղբյուրները, որոնք զուրկ են միակողմանիությունից և կողմնապահությունից[133]։

Արդարև ինչպիսին էր քաղաքական և ռազմական դրությունը Մերձավոր Արևելքում Մանազկերտի ճակատամարտի նախօրեին։ Այդ մասին հիշատակություններ ենք գտնում գերազանցապես հայկական և բյուզանդական աղբյուրներում։

Անիի գրավումից հետո ընկած ժամանակաշրջանում Բյուզանդիան չկարողացավ իր արևելյան նահանգներում ռազմական գործողություններ դիմել սելջուկների դեմ և մյուս կողմից՝ Ալփասլանը զբաղված լինելով իր թիկունքի ամրապնդմամբ Թուրքիստանում, Իրանում, Պարսկական Իրաքում և հատկապես մտահոգված լինելով Եգիպտոսի Ֆաթիմյանների ուժեղացմամբ՝ նույնպես մտադրված չէր դիմելու խոշոր ռազմական գործողությունների ընդդեմ Բյուզանդիայի և բավարարվում էր սահմանային գոտու վրա իրեն ենթակա թուրքմենական ցեղերի կատարած ավարառական արշավանքներով։

Այսպիսով, Բյուզանդական կայսրության մեջ տեղի ունեցող գահա-

---

130 Տե՛ս *Ibn Kalânisi*, Նշվ. աշխ., էջ 100—105։

131 Տե՛ս Ներածության Իբն ալ-Ասիրի համապատասխան բաժինը։

132 Տե՛ս Ներածության համապատասխան բաժինը։

133 Տե՛ս «Ա. Լաստիվերտցու պատմություն», էջ 137—141 և Մ. Ուռհայեցի, Նշվ. աշխ., էջ 190—203։ Ս. Անեցի, էջ 115։ Ս. Սպարապետ, Նշվ. աշխ., էջ 72—73։ Կ. Գանձակեցի, էջ 104։ Վարդան Վարդապետ, էջ 103։

կայական կոիվները, սլածինակների (պեչենիկների) և այլ ցեղերի հարձակումները Բալկաններում 1064—1067 թթ., հնարավորություն են ընձեռում սելջուկ Թուրքերի ենթակա թուրքմեն ցեղային առաջնորդներին շարունակել իրենց ավարառական արշավանքները դեպի Փոքր Ասիայի կենտրոնական, հարավարևելյան և հյուսիսային մասերը։ Սակայն բարձր լեռներով, խոր հովիտներով, ամրակուռ քաղաքներով և անառիկ բերդերով ծածկված այս երկրամասը, բավականին դժվարացնում էր քոչվոր հրոսակների արշավանքները։ Վերջիններս վարժ էին կռվելու բաց տափաստաններում։ Մյուս կողմից, նեղվելով բյուզանդական կանոնավոր բանակների և կայազորների ռազմագիտական հմտությունից, այդ քոչվոր հրոսակային ջոկատները, երբեմն ձեռնունայն վերադառնում էին Ատրպատական և Իրան։ Տեխնիկայից՝ հատկապես պաշարողական մեքենաներից զուրկ Թուրքմենները, սառնց սելջուկյան կանոնավոր պետական բանակների օգնության հաճախ ստիպված էին երկարատև կանգ առնել անառիկ քաղաքների ու բարձրաբերձ բերդերի պարիսպների առջև։ Հետևաբար պետք է տարբերություն դնել Թուրքմենական ինքնագլուխ ցեղային խմբերի և բուն սելջուկյան սուլթանի վարած ռազմական գործողությունների և Բյուզանդիայի նկատմամբ վարած քաղաքականության միջև։ Եթե ցեղային առաջնորդները, երբեմն նույնիսկ կենտրոնական իշխանությունից անկախ, ամեն տարի ասպատակում և կողոպտում էին բյուզանդական սահմանային երկրները՝ Հայաստանը, Կապադովկիան մինչև Անտիոք քաղաքը, շահագրգռված չլինելով հաստատվելու և հիմնավորվելու այդ վայրերում, հաճախ հեռանում էին ձեռք բերած ավարը տեղ հասցնելու հոգսով։ Մինչդեռ սուլթանն իր ուժերից վեր համարելով Բյուզանդական խոշոր կայսրության ահավոր ռազմական ուժը ջախջախելու միտքը, մասամբ շահագրգռված էր խաղաղ հարաբերություններ հաստատել Բյուզանդական կայսրության հետ և սկզբում չէր հետապնդում Բյուզանդական կայսրության փոքրասիական նահանգները, այդ թվում և Հայաստանը նվաճելու քաղաքականություն։ Սակայն մյուս կողմից վախենալով Ֆաթիմյան Եգիպտոսի և Բյուզանդական կայսրության իր դեմ հավանական դաշինքից, շահագրգռված էր բյուզանդական տիրապետության թուլացմամբ, այնքանով, որքանով որ դրանից կշահեր նրա պայքարը Եգիպտոսի դեմ։

Մյուս կողմից՝ սուլթանը քաջալերում էր Թուրքմեն ցեղերի արշավանքները ոչ միայն Բյուզանդական կայսրության արևելյան և հարավային քրիստոնյա վայրերի, այլև՝ արևելյան Ասորիքի և Իրաքի շատ

իշխանությունների դեմ, որոնք գտնվում էին Ֆաթիմյան Եգիպտոսի ազդեցության ներքո։

Այսպիսով, 1065—1067 թթ. շարունակվում էին Թուրքմեն ցեղերի ասպատակությունները Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի խորքերը։

1065—1066 թթ. Սալար Խորասան ամիրան թեև երեք անգամ ասպատակելու նպատակներով արշավում է Ուռհայի (Եդեսիա) շրջակայքը, սակայն պարտության է մատնվում Ուռհայի բյուզանդական կայազորի կողմից[134] և երբ Դիարբեքիրի վրայով նահանջում էր Իրան, թակարդի մեջ է ընկնում և սպանվում Մրվանյան Նիզամ ալ-Դաուլա ալ-Նասիրի կողմից[135]։

1066—1067 թթ. Թուրքմեն այլ հրոսակներ՝ Աֆշին[136] ամիրայի գլխավորությամբ, մեծ արշավանք սկսեցին Փոքր Ասիայի հարավային մասում՝ Անտիոքում և Կիլիկիայում։ Նրանց հաջողվեց մեծ քանակությամբ գերիներ և ավար ձեռք բերել[137]։

Նույն տարին, 1066 թ. մի այլ հզոր ամիրա, որը սուլթանի հեջուքն էր, Գոմեշտիկին[138] (իմա՝ Կումուշտեկին) անունով, ասպատակում է Թլմուխի և Հարսնամսիր (Հիսն Մանսուր) գավառները և ապա Օշեն հռչակավոր բերդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Ուռհայի Արվանդանոս բյուզանդական Դուկի և վերոհիշյալ գավառների և բերդերի հայ իշխանների միացյալ ուժերը մեծ պարտություն են կրում։ Դուկը գերի է ընկնում և սելջուկյան ամիրան մեծ ավարով ու բազմաթիվ գերիներով վերադառնում է Իրան[139]։

Նույն տարիներին սելջուկ Թուրքական այլ ասպատակներ շարունակում էին ավերել Մելիտինեի[140] (իմա՝ Մալաթիայի—Ս. Բ.) և Կեսարիայի[141] շրջանները։

Պետք է նշել, որ սուլթան Ալփասլանը, ինչպես նշվեց, թեև չէր ցան-

---

134 Մ. Ուռհայեցի, էջ 158։ «Ս. Սպարապետի Տարեգիրք», էջ 62—63։

135 *O. Turan.* Selçuklular tarihi, p. 110.

136 Մ. Ուռհայեցու մոտ Աֆշինի փոխարեն նշված է Օշին, որը նույն անձնավորությունն է, էջ 185։ Նույնը տե՛ս Ս. Սպարապետ, էջ 67—69։

137 Մ. Ուռհայեցի, էջ 185—187։ Ս. Սպարապետ, էջ 67—68։

138 Ս. Սպարապետի մոտ՝ Գոմշտիկ, էջ 68։

139 Մ. Ուռհայեցի, էջ 187, 189։ Ս. Անեցի, էջ 113։ Ս. Սպարապետ, էջ 67—69։

140 *Michel le Syrien*, III, 162—165. *Abul Faraj*, 217.

141 *Le Beau*, Histoire du Bas-Empire, p. 459—461. *Vasilief*, Histoire de l'Empire Byzantin, Paris, 1932, I, p. 468.

կանում անձնապես պատերազմի մեջ մտնել Բյուզանդիայի հետ, սակայն աներկբայելի է, որ թուրքմեն ցեղերի որոշ առաջնորդներ՝ ինչպիսիք էին սուլթանի Հեջուբ Կումուշտեկինը, Սալար Խորասան ամիրան և Աֆշին ամիրան, չէին կարող արշավանքներ կատարել առանց սուլթանի համաձայնության։ Սակայն, ինչպես կտեսնենք հետագայում, օրինակ, Տուղրիլ բեգի քրոջ ամուսինը՝ Ալ-Բասասիրը կամ Արիսիդին, որին Ուռհայեցին Կարիճ[142] ամիրա է անվանում, ապստամբել էր սուլթանի դեմ և ապաստանել բյուզանդական կայսրի մոտ։ Սա նշանակում էր, որ դեռևս չէր ընկած Բյուզանդիայի հեղինակությունը։ Դեռևս Տուղրիլ բեգը Բյուզանդիայի դեմ կռվելուց խուսափում էր և մեծ երկյուղով էր կատարում իր արշավանքները Հայաստանում և երբեք չէր փորձել ամրանալ իր գրաված տարածքում։ Այդպիսին էր և ամիրաների վերաբերմունքը Կայսրության նկատմամբ։ 50—60-ական թվականներին կատարված արշավանքների ժամանակ բյուզանդական որևէ զորամասի հայտնվելը հաճախ առաջացնում էր խուճապ ու փախուստ։ Նույնիսկ թուրքմենները թողնում էին իրենց ձեռք բերած ավարն ու գերիներին և երբեմն մեծ քանակությամբ զոհեր էին տալիս։ Միաժամանակ այդ արշավանքների ռազմական գործողությունները, ինչպես նշվեց, ցույց էին տալիս, որ սելջուկները չունեին պաշարման բավարար գործիքներ ու տեխնիկա և որ խիստ կարևոր է, թուրքմեն հրոսակը չուներ համբերություն, որն այնքան անհրաժեշտ էր պաշարումը հաջողությամբ ավարտելու համար։ Վերևում մեր շարադրածից հայտնի են այդպիսի շատ դեպքեր, օրինակ. Արծնի, Մանազկերտի, Կարսի, Անիի և այլ անառիկ քաղաքների պաշարման ելքը, ինչպես հետագայում կտեսնենք, Մանազկերտի ճակատամարտի հաղթանակից հետո նույնիսկ շատ ամրակուռ ամրոցներ դեռևս երկար ժամանակ շարունակում էին դիմադրել և շատ տարիներ էր հարկավոր, որ թուրքմեն ցեղերը օգտվեին Մանազկերտի ճակատամարտի հաղթանակի պտուղներից։ Պետք է ասել ավելին, թե ինչու սուլթանը չէր ցանկանում կռվել Բյուզանդական կայսրության դեմ՝ այն վերջնականապես ջախջախելու նպատակով։ Սուլթանի և նրա խորհրդականների, հատկապես Նիզամ ալ-Մուլքի, հոգում կար մի հավատք, ըստ որի գոյություն ուներ երկու կայսրություն. քրիստոնեական, հանձինս Բյուզանդական կայսրության և մահմեդական՝ հանձինս սելջուկյան սուլթանության։ Այս հավատքն էր իշխում, անշուշտ. Մանազկերտի ճակատամարտի նախօրեին Ալփասլանի և Ռոմանոս Դ. Դիոգենես կայսրի հաշտության բանակցությունների ընթացքին։ Ալփասլանի կողմից Դիոգենեսին հղած պատասխան նամակում, որը մեզ հաղորդել է Ուռհայեցին։ «Եւ յայնժամ գրեաց սուլտանն,— գրում է Մ. Ուռհայեցին,— թուղթ հաւանութեան առ թագաւորն Տիւրքէն վասն սիրոյ և միաբանութեան և խաղաղութեամբ մնալ առ միմիանս, յաւիտեան ոչ մեղանչել միմեանց, այլ սիրով կեալ ընդ ազգին քրիստոնէից և յաւիտեան սէր և միաբանութիւն ընդ Պարսիկք և ընդ Հոռոմք։ Եւ յայնժամ Տիւրքէնն հպարտացեալ և ոչ էառ յանձն զբանս սուլտանին, այլ ևս առաւել բորբոքեալ ի պատերազմ»[143].

Այս նույն գաղափարը ընկած է այն պայմանագրի հիմքում, որը կնքվել էր Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիայի պարտությունից հետո։ Ուռհայեցին վկայելով այդ պայմանագրի մասին, նշում է Բյուզանդիայի կայսրությունը չկործանելու սելջուկների մտադրությունը, ասելով. «Իսկ յետ աւուրց ինչ արար սուլտանն սէր և միաբանութիւն ընդ թագաւորին Հոռոմոց և արար զՏիւրքէնն սուլտանն իւր եղբայր արեամբ. վասնզի զայն ուխտեալ էր ընդ Աստուծոյ և հաստատեաց ահագին ուխտ սիրոյ և միաբանութեան ընդ Պարսիկք (իմա՝ սելջուկ թուրքեր—Ս. Բ.) և ընդ Հոռոմք յաւիտեան»[144].

Նույնը վկայում է նաև Արիստակես Լաստիվերտցին։ Ակնարկելով այդ պայմանագիրը և վկայակոչելով սուլթանի խոսքերը ուղղված Ռոմանոս Դիոգենեսին, ասում է. «Տայսմ հետէ մի եղիցի ընդ իս և ընդ քեզ խռովութիւն, այլ խաղաղութեամբ զթագաւորութիւն քո ունիցիս, և մեք զպարսկական տէրութիւնս, բայց զոր առի պատերազմաւ՝ ինձ լիցի, և այլ մի՛ արշաւեսցուք յաշխարհս ձեր»[145].

Հետևաբար, ըստ սելջուկների համոզմունքի, Սելջուկյան կայսրության գլխավոր նպատակը պետք է լիներ՝ ուժեղացնել Աբբասյան խալիֆայության կրոնական ազդեցությունը մահմեդական աշխարհի վրա։ Ուստի, սուլթանի գլխավոր մտահոգությունն էր՝ թուլացնել Եգիպտոսի Ֆաթիմյաններին։ Չմոռանանք նշելու, որ թեև տասնվեց տարի էր անցել այն օրվանից, երբ Տուղրիլ բեգը գրավել էր Բաղդադը և սկսել էր արշավել արաբական երկրներ, սակայն Ասորիքում և Պաղեստինում դեռևս

142 Մ. Ուռհայեցի, էջ 192—193։

143 Մ. Ուռհայեցի, էջ 200։

144 Մ. Ուռհայեցի, էջ 201—202։

145 Ա. Լաստիվերտցի, (գրաբար), էջ 141։ «Պատմություն», թարգ. Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971, էջ 105։

ուժեղ էր ֆաթիմյանների քաղաքական և կրոնական ազդեցությունը և հաճախ ռազմական դաշնակցություն էր կազմակերպում Եգիպտոսի և մյուս արաբական երկրների միջև՝ ընդդեմ սելջուկյան սպառնացող վտանգի։ Միջագետքում վաղուց պարտված շիիզմը հրահրում էր ազգային թշնամություն թուրքերի դեմ և նույնիսկ խալիֆայության մայրաքաղաք Բաղդադում առաջացնում էր արյունոտ ընդհարումներ[146]։

Ուստի, սուլթան Ալփասլանի 1070 թ. դեսի արևմուտք կատարած արշավանքի գլխավոր նպատակը պետք է լիներ Ֆաթիմյան Եգիպտոսի ջախջախումը Ասորիքում և Պաղեստինում։ Եվ իրոք հեղինակ Ալ-Ջաուզիի վկայությունից երևում է, որ այդ արշավանքը ուղղված էր ոչ թե Բյուզանդիայի՝ այլ Ֆաթիմյան Եգիպտոսի դեմ[147]։

Ալ-Ջաուզին վկայում է, որ Ալփասլանը կանչված էր Մեմբիջի[148] մահմեդական բնակչության կողմից, որը վերջերս գրավված էր բյուզանդական կայսր Դիոգենեսի կողմից[149], օգնելու համար իրենց ազատվելու քրիստոնյա Բյուզանդիայի գերիշխանությունից։ Սակայն մինչ արշավանքը Ալփասլանի և Դիոգենեսի միջև տեղի ունեցած հաշտության բանակցությունները, մի կողմից և այն հանգամանքը, որ Ալփասլանը խուսափելով Մեմբիջը գրավելու պատճառով Բյուզանդիայի հետ ընդհարվելուց, շրջանցեց Մեմբիջը մի քանի կիլոմետրով, և չհարձակվեց այդ քաղաքի վրա կարող են բացատրել Ալփասլանի հիմնական նպատակը մյուս կողմից։ Արաբ ժամանակագիրներ Քամալ ադ-Դինը և Ալի Իբն-Մունջիդ Իբն-Մույասարը վկայում են, մեկը մյուսից անկախ, որ այդ արշավանքը կատարվել է Եգիպտոսի դեմ ըմբոստացած ինչ-որ ապստամբի հրավերի առիթով[150]։ Ինչպես հետագայում կտեսնենք, Ալփասլանի առաջին գործը եղավ իրեն ենթարկել Հալեպի ամիրային, որը մինչ այդ ենթակա էր Եգիպտոսին։

Հալեպի ամիրայության հզորացումից վախենում էր նաև Բյուզանդիան։ Ինչպես տեսանք, հիսունական թվականներին Տուղրիլ բեգի արշավանքների սպառնալիքի պատճառով գրեթե խզվել էին հարաբերու-

[146] *Cl. Cahen*, La campagne de Mantzikert, Byzantion, IX, 1934, p. 623—624.

[147] *Cl. Cahen*, La campagne de Mantzikert, p. 623.

[148] *Տե՛ս* Մ. Ուռհայեցի, *աշխարհ. թարգմ., ծան., էջ 328։ Մնեթը (Մեմբիջ, նաև Հիերապոլիս) Ասորիքի հյուսիս-արևելքում գտնվող քաղաք էր, Եփրատ գետի աջ ափից ոչ հեռու, Անտիոքից Եդեսիա տանող ճանապարհի վրա։*

[149] Մ. Ուռհայեցի, *էջ 191—192։*

[150] *Cl. Cahen*, La campagne de Manzikert, p. 623.

թյունները Եգիպտոսի և Բյուզանդիայի միջև՝ քանի որ վերջինս ընդունել էր խութբայի (տիրակալի անվան հիշատակման) կատարումը Կ. Պոլսո մզկիթում Աբբասյան խալիֆայի անունով։ Մինչդեռ 60-ական թվականներին Բյուզանդիայի դաշնակցությունը Եգիպտոսի հետ առավելապես ձեռնտու էր Բյուզանդիային, քանի որ Հալեպի ամիրայության բանակում ծառայության վերցված թուրքմեն վարձկան հրոսակներին ավելի շատ հետաքրքրում էր բյուզանդական սահմանային քաղաքների հարուստ ավարը, քան կրոնական ու քաղաքական ենթարկվածության և ազդեցության հարցը։ 1067 թ. Անտիոքի մոտ գտնվող սահմանային Արտահ ամրոցի գրավումը[151] Հալեպի ամիրայության կողմից ազդարարում էր Անտիոքի վրա կախված վտանգի լրջությունը։

Սակայն, ինչպես կտեսնենք ներքևում, մինչև 1070 թ. կատարվող դեպքերը, տեղի ունեցան այլ իրադարձություններ, որոնց ճնշման ներքո անխուսափելի դարձավ սելջուկների և բյուզանդացիների բախումը Մանազկերտի տակ։

Ինչպես տեսանք 1065—1067 թթ. թուրքմեն առաջնորդների գլխավորությամբ կատարված ներխուժումները Հայաստան և Փոքր Ասիայի կենտրոնական և հարավային նահանգները հաճախ խոշոր չափերի էին հասնում, ընդ որում, դրանք չէին կարող անհանգստություն չառաջացնել Կ. Պոլսում։ Ուստի, Բյուզանդիան զգալով մոտալուտ ահարկու վտանգը, սկսեց միջոցներ ձեռք առնել դիմագրավելու և ետ մղելու ոչ միայն թուրքմեն ամիրաների ասպատակությունները, այլև՝ կանգնեցնելու սելջուկյան սուլթանի հավանական արշավանքը։ 1068 թ. Բյուզանդիայում գահ բարձրացավ նշանավոր զինվորական Ռոմանոս Դ. Դիոգենեսը[152] (1068—1071) որոշեց զորական մեծ ուժերով դիմագրել սելջուկներին և վերջ դնել նրանց ստեպ-ստեպ կրկնվող հարձակումներին, որոնց ենթարկվում էին ոչ միայն Կապադովկիան, այլև Պոնտոսը։ 1068 թ. հույներին հաջողվեց ետ մղել թուրքմենական զորամասերը, որոնք ավերում ու կողոպտում էին Պոնտոսի շրջակայքը։ 1068 թ. կայսրը ետ քշեց նաև սելջուկ թուրքմեններին Եփրատ գետի ափերից, ապա 1069 թ. գրավեց ու հարկատու դարձրեց Մեմբիջը[153]։ Մեմբիջի գրավումով կայսրը ցանկանում էր մի կողմից ամրապնդել իր թուլացած սահմանները և մյուս կողմից՝ կտրել հաղորդակցության ուղիները Հալեպի

[151] „Chronique de Michel Le Syrien", p. 168.

[152] Մ. Ուռհայեցի, *էջ 189—190։*

[153] *Նույն տեղում, էջ 191—192։*

և Արևելքի միջև։ Այնուհետև կայսրը համարձակորեն շարժվեց դեպի արևելք, կամենալով գրավել Խլաթը։

Սակայն այս առաջշարժման միջոցին պարտվել էր Կապադովկիայում Փիլարտոս (Ֆիլարտոս) զորավարը, և թուրքմեն հրոսակախմբերը հասել էին մինչև Իկոնիա, ուր ավերում ու թալանում էին հույն զորքի թիկունքը։ Արդարև, Ռոմանոս Դիոգենեսի կողմից խոշոր բանակով առաջխաղացումը դեպի արևելք (1068—1070 թթ.) չկարողացան արգելակել թուրքմենական ռազմական ուժերի ներթափանցումը Փոքր Ասիայի խորքերը[154]։ Թեև Ամորիում քաղաքի գրավումը Աֆշին ամիրայի կողմից, աղբյուրները վերագրում են մի բարձրաստիճան հույնի դավաճանության[155], (որի եղբայրը բանտարկված էր Ռոմանոս Դիոգենեսի կողմից), սակայն բյուզանդական բանակների պարտությունը պետք է բացատրել ոչ միայն դրանց կազմալուծմամբ (որը հետևանք էր զինվորական առաջնորդների ապստամբության), այլ նաև նրանով, որ Բյուզանդիան դարասկզբից հայ և վրաց իշխանությունների և թագավորությունների նկատմամբ վարում էր նվաճողական քաղաքականություն։ Ընդորում, Բյուզանդիային կցված Հայաստանի՝ Տայքի, Վասպուրականի, Անիի և Կարսի հայ բնակչությունը չէր շահագրգռված իրենց երկրների արդյունավետ պաշտպանությամբ և հատկապես, հայերի նկատմամբ Բյուզանդիայի վարած դավանաբանական քաղաքականությունը էլ ավելի էր թշնամացնում և օտարացնում այդ վայրերի բնակչությանը[156]։ Բյուզանդական բանակների պարտության մյուս պատճառը պետք է փնտրել նաև այն որակական տարբերության մեջ, որ գոյություն ուներ բյուզանդական և թուրքմենական բանակների միջև։ Բյուզանդական բանակը թեև լավ մարզված էր, և փորձառու, սակայն ծանրաշարժ էր, այն դեպքում, երբ նա գործ ուներ թուրքմենական արագաշարժ և թեթև հեծելազորային բանակների հետ։ Ուստի, եթե Ռոմանոս Դիոգենեսին հաջողվում է գրավել Մեմբիջը, ոչ թե այն պատճառով, որ նրա զորքերը տարան վճռական հաղթանակ, այլ դա պետք է բացատրել Բյուզանդական կայսրության դարավոր հեղինակությամբ և ազդեցությամբ։ Մինչդեռ Ռոմանոս Դիոգենեսի հապճեպ կազմակերպած բանակը վատ էր

154 *Abul Faraj*, p. 217. „Chronique de Michel Le Syrien", p. 168—170.

155 *Cl. Cahen*, La campagne de Mantzikert, p. 624. Նույնի La première pénètration, Byzantion, XVIII, 1946—1948, p. 27.

156 *C. Toumanoff*, The Background to Mantzikert, Oxford, 1966, p. 13—14.

հագնված և անկարգապահ, և արագ կազմալուծվում էր սովի և համաճարակի պայմաններում[157]։

Այդպիսին էր ռազմաքաղաքական իրավիճակը Բյուզանդիայի փոքրասիական նահանգներում, երբ Կ. Պոլսից կայսրուհուց ստացած նամակին ի պատասխան Դիոգենեսը վերադարձավ Կ. Պոլիս[158]։ Թեև Ուռհայեցուն հայտնի չէ նամակի բովանդակությունը, սակայն պետք է ենթադրել, որ Դիոգենես կայսրը Կ. Պոլիս էր կանչվում Իտալիայում և Եվրոպական մասի նահանգներում ծագած ներքին խռովությունների պատճառով։ Անշուշտ, Դիոգենեսի վերադարձը Կ. Պոլիս թելադրված էր նաև թուրքմեն բանակների՝ Փոքր Ասիայի խորքում տարած հաղթանակներով և այն պատճառներով, որ մենք նշեցինք վերևում։

Բյուզանդիայի ռազմական ուժերի այս առաջխաղացման հետ որոշ կապ են ունեցել հավանորեն Ալփասլանի կռիվները Անդրկովկասում Բագրատ Դ-ի դեմ, որն, ըստ երևույթին, նորից հարել էր կայսրությանը։ Բացի այդ, մի շարք հանգամանքներ ստիպել էին Ալփասլանին երկրորդ անգամ արշավել Անդրկովկաս։ Դրությունը Անդրկովկասում, սկսած 1066 թվականից փոփոխության էր ենթարկվել։ 1066 թ. Ատրպատականից եկող թուրքմենական ջոկատները Կարա-Տեկին ամիրայի առաջնորդությամբ պաշարում են Շիրվանի մայրաքաղաքը և Շիրվանշահից ստանալով մեծ գումար և ապրանք, հեռանում են այնտեղից։ Սակայն նույն տարում Կարա-Տեկինը Շիրվանշահի հորեղբոր Մամլանի հետ միասին երկրորդ անգամ պաշարում է Շիրվանի մայրաքաղաքը, սակայն Շիրվանշահին օգնության հասնող նշանավոր Հեջուբ Սավ-Տեկինի ճնշման տակ թուրքմենները ստիպված են լինում Կուր գետի վրայով անցնելով հեռանալ Շիրվանից[159]։

Օղուզ թուրքմենների այս արշավանքի ժամանակ Դերբենդի վրայով Անդրկովկաս են մտնում ալաններն ու խազարները, ողողելով Շաքիի և Առանի հովիտները։ Գանձակի Շադդադյան Աբու-լ-Ասվար ամիրան արդյունավետ դիմադրություն չկարողացավ ցույց տալ մինչև իր մայրաքաղաքը հասնող հրոսակներին։ Օգտվելով այս դրությունից, Վրաստանի թագավոր Բագրատ Դ-ն արշավում է Շաքի, գրավում և հանձնում

157 *Cl. Cahen*, La campagne de Mantzikert, p. 624—625.

158 Մ. Ուռհայեցի. էջ 192։

159 *O. Turan*, Selçuklular Tarihi, p. 112. *V. Minorsky*, History of Sharvan and Darband, Cambridge, 1958, p. 66 և շարուն։ Նույնի Studies, p. 23—65.

այն Կախեթիայի թագավոր Գագիկի որդի Աղսարտանին[160]։ Վերջինս գրավում է նաև Պարտավ քաղաքը։ Շիրվանշահը չկարողանալով դիմադրել վրացական զորքերին, նահանջում և օգնության է կանչում թուրքմեն առաջնորդներ՝ Կարա-Տեկինին և Կայմազին[161]։

Ալփասլանը Անդրկովկասի ռազմաքաղաքական խառնաշփոթ վիճակի մասին իմացավ Քիրմանում, որտեղ նա զբաղված էր ապստամբ սելջուկ ցեղերի առաջնորդներ՝ Կավուրդի[162] և ալ-Բասանի[163] ապստամբության ճնշմամբ։ Ալփասլանը մի կողմից Վրաց՝ Կախեթի ու Քարթլիի թագավորներին հպատակեցնելու և մյուս կողմից իր առաջից Անդրկովկաս փախչող ապստամբ (Ալ-Բասանի գլխավորությամբ) թուրքմեն ջոկատներին հետապնդելու նպատակով ձեռնարկում է իր երկրորդ արշավանքը դեպի Անդրկովկաս։ Ալփասլանին ընկերակցում էին Նիզամ ալ-Մուլքը և Անդրկովկասը մի քանի անգամ ասպատակող՝ Սավտեկին ամիրան։ 1068 թ. սկզբին Ատրպատականի և Առանի վրայով Շաքի մտավ Վրաստանի Բագարատ Դ թագավորը, չկարողանալով դիմադրել, նահանջեց Տփղիս, իսկ Կախեթիայի թագավոր Աղսարտանն ընդունելով մահմեդականություն, ենթարկվեց Ալփասլանին։ Այնուհետև, Ալփասլանը 1068 թ. դեկտեմբերին Զորագետի Կորիկե թագավորի, Տփղիսի ամիրայի և Աղսարտանի միացյալ ռազմական ուժերով գրավեց Տփղիսը և մոտավորապես վեց շաբաթ տևող ռազմական գործողությունների ընթացքում գրավեց բազմաթիվ քաղաքներ և բերդեր, հասնելով մինչև Հայաստանի Սպեր ամրոցը։ Խստաշունչ ձմեռվա պատճառով հինգ ամիս ձմեռեց Կարսում։ Վրաց թագավոր Բագարատը, դիմելով խորամանկության հաշտության բանակցություններ վարելու համար, սուլթանի մոտ է ուղարկում Լիպարիտի որդուն՝ Իվանեին։ Վրաստանը հարկատու դառնալու պայմանով հպատակություն է հայտնում Ալփասլանին։ Վերջինս Տփղիս և Ռուստավ քաղաքները հանձնելով Գանձակի Շադդադյան ամիրա Փատլունին, վերադառնում է Իրան[164]։

---

160 *V. Minorsky*, History of Sharvan and Darband, p. 66. Studies, p. 23—65

161 *Sadruddin al-Huseyni*, 28—36.

162 Ալփասլանի եղբայրը։ Հիշատակվում է, նաև Կարա-Ասլան։

163 Տուղրիլ բեգի քրոջ ամուսինը։ Սելջուկի որդի Յունուսի որդին։

164 Վերևում նշված բոլոր փաստերի համար տե՛ս *Sadruddin El-Huseini*, p. 30—32. *M. Brosset*, Histoire de la Georgie, *Abul Faraj*, p. 218. *V. Minorsky*, History of Sharvân and Darband, 66. Նույնի Studies in Caucasian history, p. 65—66. *M. Yinanç*, p. 62—64.

Մի կողմից օգտվելով դերբենդցիների և շիրվանցիների միջև սկսած ռազմական ընդհարումից, որին մասնակցում էր Գանձակի և Տփղիսի Փատլուն Բ ամիրան և մյուս կողմից, լսելով Ալփասլանի հեռանալը Անդրկովկասից, վրաց Բագարատ Դ թագավորը իջնում է իր լեռնային ապաստանից և Փատլուն ամիրայի երեսուներեք հազարանոց բանակի դեմ ուղարկում Լիպարիտի որդուն՝ Իվանեին։ Փատլունը պարտության մատնվելով մազապուրծ փախչում է տասնհինգ հեծյալներով, սակայն ճանաչվելով վրաց ազնվականների կողմից՝ գերվում և հանձնվում է Կախեթիայի թագավորին, և ապա Բագարատից ստացած երկու ամրոցների փոխարեն, Աղսարթանը Փատլունին հանձնում է վրաց թագավորին։ Բագարատ Դ-ը Փատլունին ստիպում է Տփղիսը հանձնել իրեն։ Սակայն շուտով Անդրկովկասի մահմեդական ամիրաներին օգնելու և քաղաքական դրությունը կարգավորելու նպատակով Ալփասլանը Անդրկովկաս է ուղարկում Սրահանգ (Սերհանգ, հաջիբ ալ-խաս տիտղոսը կրող) Սավտեկինը։ Վերջինիս հաջողվեց փրկագնով գերությունից ազատել Գանձակի ամիրա Փատլունին[165]։

Ալփասլանը 1069 թ. վերջերին՝ արկմուտք կատարելիք արշավանքին նախապատրաստվելիս Համադան էր կանչել Տուղրիլ բեգի փեսա ապստամբ ալ-Բասանին՝ մասնակցելու ծրագրված արշավանքին։ Սակայն ալ-Բասանը, վախենալով սուլթանի պատժից, որոշում է ապստամբել բյուզանդական տարածքում։ Յավդու ցեղի առաջնորդ ալ-Բասանը[166] յուրայինների հետ միասին Դերբենդի և հյուսիսային Վրաստանի վրայով մտնում է Հայաստան, հարձակվում Արմենիակոն բանակաթեմի վրա։ Սեբաստիայում ընդհարվում է բյուզանդական զորավար Մանուել Կոմնենոս կուրապաղատի հետ, որն ուղարկված էր Սեբաստիա՝ դի-

---

165 *V. Minorsky*, History of Sharvan and Darband, p. 66—67. Նույնի Studies in Causasian History, p. 22—24, 67—68.

166 Մահմեդական աղբյուրներում հիշատակված էլ-Բասան կամ էր-Բասան ամիրան հայ և օտար աղբյուրներում հիշատակված է տարբեր անուններով։ Մ. Ուռհայեցին այն անվանում է Կորիճ։ Ն. Վրիենոսը՝ Խրիսոսկուլոս Սիրտ-ալ-Դաուլին՝ Արիսիաղի։ Տե՛ս *Cl. Cahen*. La premiere penetration, p. 28. Նույնի La campagne de Manzikert, p. 625. Մ. Ուռհայեցի, էջ 192—193։ Նույնի աշխ. թարգմ. Հ. Բարթիկյանի, ծան. բաժին, էջ 328։ *O. Turan*, Selcuklular tarihi, Ալ-Բոնդարին Արիսիղի, տե՛ս *El-Bundari*, p. 28, 120—123. Մ. Չամչյանի մոտ՝ (Հ. Բ. էջ 990) «Խրուհ, պարսիկ խրուհ—որ ի գիրս հայոց Կորիճ ասի ի տոհմէն Տուղրիլայ։ Սմբատ Սպարապետի մոտ էլ Բասանը անվանված է Յաղդու ամիրա, որը մեր կարծիքով անվանված է Յավդու ցեղի անունով։ Հիշատակվում է նաև էլբասդան օղլու Կուրտղու. տե՛ս M. Yinanc, 68.

մաղրելու այդ վայրերն ասպատակող թուրքմեններին։ Սեբաստիայում ալ-Բասանը հաղթում է Մանուել Կոմնենոսին և գերի վերցնում վերջինին։ Տեսնելով հույների պարտությունը հայոց Արծրունի թագավորը, իշխաններն ու բոլոր նախարարները բարեկամություն և հաշտություն կնքեցին ալ-Բասան ամիրայի հետ, որը վերցնելով կուրապաղատին և մյուս գերիներին՝ շուրջ երեքհազար հոգու, ծածուկ հասավ Կ. Պոլիս՝ հունաց կայսեր մոտ։ Վերջինս նրան ընդունում է մեծ պատիվներով ու մեծարանքով[167]։

Հետաքրքիր է, որ արաբական և ասորական աղբյուրները վերոհիշյալ դեպքերը արձանագրելիս այլ կերպ են ներկայացնում դրանց։ Ըստ վերոհիշյալ աղբյուրների, սուլթան Ալփասլանը, իմանալով ալ-Բասանի՝ Սեբաստիա ժամանելու մասին, ծածուկ հանձնարարությամբ՝ Աֆշին ամիրային լիազորում է հետապնդել ալ-Բասանին, բռնել և վերադարձնել նրան իր մոտ։ Աբու-լ-Ֆարաջը, շփոթելով Աֆշինին ալ-Բասանի հետ, Ուռհայեցու մոտ հիշատակված Կտրիճ ամիրայի կողմից կատարված արշավանքը Սեբաստիա և նրա ընդհարումը Մանուել Կոմնենոսի հետ վերագրում է Աֆշինին[168]։ Մինչդեռ ըստ Ատտալիատեսի[169] ալ-Բասանը խոստանում է առանց փրկագնի ազատել Մանուել կուրապաղատին գերությունից, եթե վերջինս նրան ազատի Աֆշինի հետապնդումից։ Այնուհետև, Խրիսոսկուլոս Ալ-Բասանը Մանուել Կոմնենոսի կողմից տարվում է Կ. Պոլիս[170]։ Ըստ Նիկեփոր Վրիենոսի, Մանուել կուրապաղատը համոզում է Խրիսոսկուլոսին (իմա՝ ալ-Բասանին—Ս. Բ.) անցնել կայսրության կողմը[171]։

Ինչ վերաբերում է ալ-Բասանի բանակին, հավանական է, որ մի մասն անցնելով բյուզանդացիների կողմը մասնակցում է Մանազկերտի ճակատամարտին, իսկ մեծ մասը անցնում է Եգիպտոսի Ֆաթիմյանների տարածքը՝ Ասորիք և Պաղեստին, վերջինում հիմնելով թուրքական մի բեգություն կամ մելիքություն[172]։

Աֆշին ամիրան սպառնում է ասպատակության ենթարկել բյուզանդական նահանգները, եթե իրեն չհանձնվի ալ-Բասանը։ Բյուզանդական

167 Մ. Ուռհայեցի, էջ 192—193։

168 *Abul Faraj*, p. 218.

169 Ատտալիատեսը թուրք ամիրայի անունը չի հիշատակում։

170 *Cl. Cahen*. La campagne de Manzikert, p. 626.

171 Տե՛ս Մ. Ուռհայեցու ժամանակագրության աշխ. թարգմ., էջ 328։

172 *O. Turan*. Selçuklular tarihi, p. 121.

կայսրը մերժում է նրա պահանջը, ասելով, որ իր պատվին թույլ չի տա թշնամու ձեռքը հանձնել իր մոտ ապաստանած անձին։ Այնուհետև Աֆշինը ի կատար է ածում իր սպառնալիքը և անխնա ասպատակում ամբողջ Կապադովկիան, մինչև Իկոնիա և գրավում այն[173]։

Երբ Աֆշինը և մի շարք այլ ամիրաներ[174], 1069 թ. վերջին 1070 թ. սկզբներին, շարունակում էին իրենց ասպատակությունները Կապադովկիայում և Կիլիկիայում՝ Ռոմանոս Դ Դիոգենես կայսրը, որը, ինչպես տեսանք, ստիպված վերադարձել էր Կ. Պոլիս իր ռազմաքաղաքական վիճակի թուլության պատճառով, չցանկանալով ընդհարվել սուլթան Ալփասլանի հետ, նա մի դեսպան ուղարկեց սուլթանի մոտ՝ թանկարժեք նվերներով, և առաջարկեց նրան հաշտության պայմանագիր։ Սակայն սուլթան Ալփասլանը այնքան էլ շահագրգռված չլինելով բյուզանդական կայսրության հետ ընդհարվելու մտքով, այնուամենայնիվ չկարողանալով ազդել և դադարեցնել կենտրոնախույս ամիրաների և թուրքմեն այլ առաջնորդների ասպատակությունները Հայաստանում և բյուզանդական Փոքր ասիական նահանգներում, թողնում էր, որ այս ասպատակություններով ու կողոպուտներով հագեցվեն նրանց ընչաքաղց ախորժակը։ 1070 թ. Ալփասլանին հատկապես հետաքրքրում էր արևմտյան արշավանքը, որով պետք է վերջ տրվեր Ֆաթիմյան Եգիպտոսի տիրապետությանը Ասորիքում և Պաղեստինում, իսկ իր նվաղագույն ծրագիրը իրագործելուց հետո նա ծրագրում էր գրավել բուն Եգիպտոսը, որի իրագործման համար նա հիմքեր ուներ։ Եգիպտոսի վեզիր Նասիր ադ-Դաուլա Համդանի և եգիպտական բանակի հայազգի գլխավոր հրամանատար՝ Բադր ալ-Ջամալի (Դամալի) միջև սկսված վեճի պատճառով վեզիրը մի դեսպան ուղարկեց սուլթանի մոտ, առաջարկելով նրան հանձնել Եգիպտոսը և վերջ տալ շիիզմին։ Դրությունը Ալփասլանի արևմտյան արշավանքի համար նպաստավոր էր նաև նրանով, որ, ինչպես տեսանք, թուրքմենական Յավզու ցեղի մի մասը Ասորիքի վրայով մտել էր Պաղեստին։ Հետևաբար Ալփասլանը իր հաջողության համար կարող էր հույս դնել նաև թուրքմեն բեգության օժանդակության վրա։

173 *Cl. Cahen*. La campragne de Manzikert, p. 626—627. Ատտալիատեսը սխալմամբ այդ ասպատակությունը վերագրում է էլ-Բասանին։

174 Արաբական աղբյուրները հիշատակում են Սանդուկ և Ահմեդշահ ամիրաներին, որոնք ասպատակելով Կիլիկիայի և Կապադովկիայի բյուզանդական նահանգները, անցնում են Ասորիք և ձմեռելուց հետո այնտեղ 1070 թ. գարնանը նորից վերադառնում են Փոքր Ասիա։ Տե՛ս *O. Turan*. Selcuklular tarihi. 117.

Հետևաբար, Ալփասլանը ստեղծված նպաստավոր պայմաններն իր արևմտյան արշավանքին ի սպաս դնելու նպատակով, 1070 թ. հուլիսին մի մեծ բանակով շարժվեց, մտավ Հայաստան և բանակ դրեց Խլաթում և ապա, ինչպես Մ. Ուռհայեցին է պատմում, «Իբրև զամպ ուռուցեալ միդով անօրէնութեան յաշխարհն Հայոց բաղում կոտորածիւ և արեան հեղմամբ և իջեալ ի վերայ Մանծկերտոյ և առ ի չգոյէ պահապանաց քաղաքին՝ յաւուր միում առաւ քաղաքն Մանծկերտ, վասնզի փախեան Հոռոմոց պահապանքն և արար զքաղաքն կոտորած վասն առաջին հայհոյութեան եղբօր նորա Տուղրիլ սուլտանին, վասնզի զայս անդարձ արարեալ էր նորա ի ժամ մահուանն»[175]։ Այնուհետև գրավեց նաև Արճեշը։ Այդ միջոցին Դիարբեքիրի Մրվանյան ամիրա Նիզամ ադ-Դինի եղբայր Սաիդը ներկայանալով սուլթանին խնդրեց վերջինից իրեն հանձնել Դիարբեքիրի տիրությունը։ Սուլթանը, հիշելով Սալար Խորասանի անփառունակ վախճանը Դիարբեքիրում, Նիզամ ադ-Դինից վրեժ լուծելու նպատակով ընդունեց Սաիդի խնդրանքը, և սուլթանը իր բանակով ուղևորվեց Ամիդ (Դիարբեքիր)։ Նա Նիզամ ալ-Մուլքին ուղարկեց Մայաֆարդինում նստած Նիզամ ադ-Դինի մոտ և առաջարկեց նրան ենթարկվել սուլթանի կամքին և զիջել իշխանությունը իր եղբոր՝ Սաիդի օգտին։ Նիզամ ադ-Դինը մեծ նվերներով ներկայացավ սուլթանին, նեղություն խնդրեց Սալար Խորասանի հետ կատարված դեպքի համար և խոստացավ հարկատու դառնալ սուլթանին և միանվագ վճարել հարյուր հազար դինար, սակայն սուլթանը իմանալով, որ այդ գումարը Նիզամ ադ-Դինը ձեռք էր բերելու հարկադրելով հայ գյուղացիներին, հրաժարվում է գանձել այդ, իբր թե վերջիններին չդժգոհեցնելու համար[176]։

Սուլթանը հեռանալով Ամիդից եկավ Թլմուխ գավառը։ Չկարողանալով գրավել այն, դիմեց խորամանկության և մեծ դժվարությամբ վերցրեց բերդաքաղաքը։ Այնուհետև սուլթանն իր ահավոր զորքով շարժվեց Ուռհա (Եդեսիա) քաղաքի վրա։ Ճանապարհին՝ ուժեղ գրոհով գրավեց Սևերակի մոտ գտնվող Թլթովրավ բերդը և Առյուծաթիլը, մեծ ջարդ տալով և ամբողջ շրջանը ողողելով արյամբ։ Այնուհետև հարկատու դարձնելով Սևերակի շրջանը շարժվեց Ուռհայի վրա և մոտավորապես հինսուն օր պաշարելով, չկարողացավ գրավել այն։ Այս պաշարմանը մասնակցում էր Դվինի ամիրա Աբու-լ-Ասվարը[177]։ Եդեսիայի հույն կառավարիչ Վասիլ Բուլղարը սուլթանին հանդարտացնելու նպատակով դիմեց խորամանկության և խոստացավ նրան հարկ վճարել[178]։ Ապա հենվելով հայերի քաջարի դիմադրության վրա, նրան հաջողվեց Ուռհայի պարիսպների տակ այրել սուլթանի զորքերի կողմից օգտագործվող սարքերը՝ բաբաններն ու փիլիկպանները[179], հրաժարվելով վճարել խոստացված հարկը։

Ուռհայի պաշարման ժամանակ Ալփասլանին է ներկայանում Դիոգենես կայսրի ուղարկած դեսպանը, որն առաջարկում է սուլթանին վերացնել Ուռհայի պաշարումը, հաշտություն կնքել, խոստանալով հարկ տալ սուլթանին։ Վերջինս սպառնում է սպանել Դիոգենեսի դեսպանին՝ վրեժ լուծելու Վասիլ Բուլղարի խոստումնադրուժ վարքի համար։ Սակայն դիվանագետ Նիզամ ալ-Մուլքի խորհրդով հրաժարվում է այդ մտքից և բավականին դրական վերաբերմունք է ցույց տալիս Դիոգենեսի հաշտության առաջարկին։ Վերջինս, ըստ Աբու-լ-Ֆարաջի, Ալփասլանին առաջարկել էր տարեկան հարկ, որի դիմաց սուլթան Ալփասլանը խոստանալու էր դադարեցնել թուրքմեն ներխուժումները բյուզանդական տարածքի վրա։ Այնուհետև Դիոգենեսը սելջուկներին զիջելու էր Մեմբիջ սահմանային անառիկ ամրոցը, դրա դիմաց ստանալով Մանազկերտն ու Արճեշը[180]։

Ըստ երևույթին, Ալփասլանը անսալով Նիզամ ալ-Մուլքի խորհրդին, խուսափելով Բյուզանդիայի հետ ընդհարումից, շրջանցեց Մեմբիջ բերդաքաղաքը[181] և հետապնդելով իր գլխավոր նպատակի իրականացմանը և, ինչպես Մ. Ուռհայեցին է վկայում, արաբների ավագ ամիրա Խուրեշի ուղեկցությամբ Եդեսիայից մեկնեց և գնաց Հալեպ քաղաքի վրա[182] և 1071 թ. ապրիլի կեսից մինչև մայիսի կեսը մոտ մեկ ամիս պաշարելուց հետո չկարողացավ գրավել այն, սակայն ստիպեց Հալեպի ամիրա Մահմուտին իրեն ենթարկվելու[183]։ Այնուհետև, երբ սուլթանը պատրաստվում էր իրագործել իր եգիպտական արշավանքը, այդ միջոցին Դիոգենես կայսրն իր դեսպանի միջոցով սուլթան Ալփասլանին

---

175 Մ. Ուռհայեցի, էջ 194։

176 *Abul-Faraj*, p. 219. Տե՛ս նաև *O. Turan*, Selcuklular tarihi, p. 118. Մ. Ուռհայեցի, էջ 194։

177 Նույն տեղում, էջ 196—197։ *Abul-Faraj*, p. 219.

178 *Abul Faraj*, p. 219. Տե՛ս *Cl. Cahen*. La campagne de Mantzikert, 127.

179 Մ. Ուռհայեցի, էջ 197։ Տե՛ս նաև Ս. Սպարապետ, էջ 72—73։

180 *Abul Faraj*, p. 220. *El-Bundari*, p. 37.

181 Նույն տեղում։

182 Մ. Ուռհայեցի, էջ 197։ Տե՛ս նաև Ս. Սպարապետ, էջ 75։

183 *O. Turan*, Selcuklular, tarihi p. 119.

հղած նամակում պահանջում էր նրանից վերջնականապես Բյուզանդիային հանձնել Մանազկերտ, Խլաթ, Արճեշ և Մեմբիջ քաղաքները։ Հակառակ դեպքում սպառնում էր մեծ բանակով արշավել և գրավել Իրանը։ Անակնկալի եկած սուլթանը մերժեց բյուզանդական կայսրի առաջարկը։ Սակայն այդ միջոցին Փոքր Ասիայից և Հայաստանից Դիոգենեսի ռազմական նախապատրաստությունների մասին ստացած տեղեկություններից ահաբեկված, սուլթանը որոշեց հրաժարվել Եգիպտոս կատարելիք արշավանքից և իր իսա (սուլթանական) ընտրյալ բանակի ուղեկցությամբ որոշեց շտապել և վերադառնալ Իրան[184]։

Բյուզանդական կայսր Դիոգենեսը իր հերթին ահաբեկվելով Ալփասլանի դեպի արևմուտք՝ Հալեպ կատարած արշավանքի ընթացքում ունեցած հաջողություններից, 1070 թ. վերջերին հրամայեց մեծ բանակ կազմել Բյուզանդիայում[185]։ Բյուզանդական կայսրության բոլոր կողմերից՝ Բուլղարիայից, Հեռավոր կղզիներից, Գոթերի երկրից, Անտիոքից, Դամիրքից, Կիլիկիայից «եւ զամենայն տունն հայոց՝ որք էին մնացեալ ի քաջ զօրականացն»։ Մ. Ուռհայեցու վկայությամբ նա նույնիսկ այլազգիներից[186] բաղկացած զորք բերեց Խուժաստանից։ Այդ հսկայական բանակով Դիոգենեսը 1071 թ. գարնանը շարժվեց դեպի արևելք և ինչպես «կարկտաբեր ամպ» հասավ Սեբաստիա քաղաքը։ Թեև Սեբաստիայում մեծ հանդիսավորությամբ նրան ընդառաջ գնացին հայոց թագավորազուններ՝ Ատոմն ու Ապուսահլը, սակայն հավատ ընծայելով Սեբաստիայի հույն իշխանների և հույն բնակչության հայերի հասցեին տված չարախոսություններին, որ իբր թե Կտրիճ (իմա՝ Էլ-Բասան—Ս. Բ.) ամիրայի հարձակման ժամանակ հայերը ավելի շատ են կոտորել հույներին, քան թուրքերը, հրամայեց հույն զինվորներին ավարի առնել ողջ Սեբաստիա քաղաքը, պատվազուրկ անելով Ատոմին ու Ապուսահլին։ Թեև Աշոտի որդի Գագիկ Շահնշահի և Կտրիճ ամիրայի միջամտությամբ որոշ չափով հանդարտվեց Դիոգենեսի զայրույթը, սակայն ինչպես Մ. Ուռհայեցին է որակավորում «անօրէն կայսրը» սպառնաց իր վերադարձին վերացնել հայադավանությունը[187]։

184 *Abul-Faraj*, p. 220. Տե՛ս նաև *Cl. Cahen*, La campagne de Manzikert, p. 628. Turan, Selcuklar tarihi, p. 119. Մ. Ուռհայեցի, էջ 199—200։

185 Ա. Լաստիվերտցի, էջ 137։

186 Մ. Ուռհայեցի, էջ 199։ Տե՛ս նաև Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, (Աբուլ-Ֆիդա), էջ 193։

187 Մ. Ուռհայեցի, էջ 179։

Այնուհետև Դիոգենես կայսրը իր բանակի հիմնական կորիզով շարժվեց դեպի Արևելք, ինչպես Արիստակես Լաստիվերտցին է վկայում, «եկավ հասավ Թեոդուպոլիս (իմա՝ Կարին, Կալիկալա, Էրզրում—Ս. Բ.) մեծ քաղաքը և այնտեղ այրուձին կազմակերպեց»[188] Կարինից ուղևորվեց Կարս[189], այրեց հայոց եկեղեցին և ինչպես Միքայել Ասորին է վկայում ի հավաստումն իր հայատյաց քաղաքականությանը «երդուաւ (իմա՝ Դիոգենեսը—Ս. Բ.) եթէ յաղթէ թուրքաց կամ ջնջէ բնաւ զՀայս կամ ի կրօնս իւր դարձուցանէ»[190]։

Կարսից նա Հայաստանի տարածքի վրայով շարժվեց հայկական Մանազկերտ քաղաքի վրա[191], որը ինչպես տեսանք գրավվեց Ալփասլանի՝ դեպի Արևմուտք կատարած արշավանքի սկզբին։ Ահա այս միջոցին էր, որ սուլթանը իմանալով Դիոգենեսի դեպի Արևելք կատարած մեծ արշավանքի մասին, ընդհատեց իր եգիպտական արշավանքը և Եդեսիայի վրայով խուճապահար անցավ Եփրատ գետը, կորցնելով կենսակայն նա որոշեց կանգ առնել և ճակատել Դիոգենեսի դեմ։ Ըստ երևույթին Ալփասլանի այդ համարձակ որոշման վրա անմիջական ազդեցություն էր թողել ոչ միայն Դիոգենեսի ճամբարից սուլթանին բերված նենգ հոռոմների նամակը, որտեղ հավաստիացվում էր սուլթանին, որ հույները կօգնեն իրեն[193], այլ նաև այն, որ այդ ժամանակ նամակ էր ստացվել նաև Փոքր Ասիան ասպատակող Աֆշին ամիրայից, որը չէր կարողացել պարտության մատնել Ծամնդավ ամրոցի տեր հույն կնոջ՝ Մարիի զորքերին, և վերադարձել էր Խլաթ։ Աֆշինը սուլթանին հաղորդած նամակում գրում էր, որ ինքը մեծ ավարով վերադարձել է Հռոմ (իմա՝ Բյուզանդիա—Ս. Բ.) կատարած արշավանքից, և որ հոռոմները ի վիճակի չեն պաշտպանելու իրենց երկիրը[194]։ Մյուս կողմից Աբու-լ-Ֆարաջի կարծիքով Ալփասլանի կռվի միջոցը ընտրելու պատճառը, համարում է կայսրի կողմից արված մշտական հաշտության առաջարկները։ Այնուամենայնիվ, մինչ այդ, եթե Դիոգենեսն էր դիմում

188 Ա. Լաստիվերտցի, էջ 138։

189 Մ. Ասորի, էջ 405։ Վարդան Վարդապետ, էջ 102։

190 Նույն տեղում։

191 Մ. Ուռհայեցի, էջ 200։ Ա. Լաստիվերտցի, էջ 138։

192 Մ. Ուռհայեցի, էջ 200։

193 Նույն տեղում։

194 *Abul Faraj*, p. 220. Տե՛ս նաև *O. Turan*, Selçuklular tarihi, p. 119.

Ալփասլանին հաշտություն կնքել, այժմ Եփրատ գետը խուճապահար անցնելուց և կազմալուծված բանակով Մայաֆարղինի վրայով Մուսուլ հասնելուց հետո ըստ երևույթին խորամանկելով և ժամանակ շահելու նպատակով ինքն է դիմում կայսրին։ Ուռհայեցու վկայությամբ «եւ յայնժամ գրեաց սուլտանն Թուղթ հաւանութեան առ Թագաւորն Տիօժէն վասն սիրոյ և միաբանութեան և խաղաղութեամբ մնալ առ միմիեանս, յաւիտեան ոչ մեղանչել միմեանց, այլ սիրով կեալ ընդ աղգին քրիստոնէից և յաւիտեանն սէր և միաբանութիւն ընդ Պարսիկք և ընդ Հոռոմք»[195]։ Այնուամենայնիվ Ալփասլանը թեև պատճառ ուներ դիմելու հաշտության, քանի որ նա պատրաստ չէր կռվելու Դիոգենեսի ահավոր բանակի դեմ, սակայն մյուս կողմից կռվի դիմելու գլխավոր պատճառը պետք է համարել Դիոգենեսի առաջխաղացումը դեպի արևելք՝ դեպի սելջուկյան սուլթանության սահմանները, սպառնալով Իրանում սելջուկների տիրապետությանը։

Թեև Ուռհայեցին և Լաստիվերտցին Ալփասլանի հաշտության առաջարկի մերժվելը կայսրի կողմից վերագրում են վերջինիս անբարտավանությանը[196], սակայն այդ որոշման համար վճռական դեր էր խաղացել Ալփասլանի խոշոր կորուստները Եփրատ գետը անցնելու պահին և նրա բանակի կազմալուծումը, որի մասին անմիջապես հաղորդել էր կայսրին սուլթանի հետ բանակցություններ վարող՝ դեսպան Լևոն Դիաբատինը[197]։

Այսպիսով, թեև Դիոգենեսին ուղեկցող ռազմագետներն ու խորհրդականները հակված էին բավարարվելու միայն Հայաստանի պաշտպանության ուժեղացմամբ, սակայն սուլթանական բանակի կազմալուծման լուրը արագացրեց հարձակման անցնելու որոշումը։

Միաժամանակ, Ուռհայեցու վկայությամբ, շարանենգ մարդիկ խորհուրդ էին տալիս Դիոգենեսին չվախենալ սուլթանից, ասելով, որ «ոչ ոք ի վիճակի չէ ընդդիմակալել քո մեծաթիվ զորքին»։ Միաժամանակ խորհուրդ էին տալիս, որ բանակի պարենը վերջանալու վրա է, հետևաբար պետք է մաս-մաս արձակել նրանց, որպեսզի մինչև պատերազմի օրը պարենի պակաս չզգացվի»։ «Դրա վրա (Դիոգենեսը) նշում է Մ. Ուռհայեցին, Կտրիճ ամիրային Կ. Պոլիս վերադարձրեց, իսկ Տարխանիատին[198] երեսուն հազար հոգով խլաթ ուղարկեց, տասներկու հազար հոգի էլ՝ Ափխազիա՝ (իմա՝ Վրաստան—Ս. Բ.)։ Եվ այսպիսով, ամբողջ զորքը ցիրուցան արեցին[199]։ Այս շարանենգության մասին սուլթանին տեղյակ պահեցին»[200]։

Հետաքրքիր է, որ մահմեդական աղբյուրները կայսրի կողմից բանակի վերոհիշյալ ջոկատների ուղարկվելը Վրաստան և այլ վայրեր, բացատրում են ոչ թե բանակը ցիրուցան անելու նպատակով կատարված շարագործություն, այլ իբր այն հետապնդել է կայսեր հիմնական բանակին պաշար ձեռք բերելու նպատակը։ Ըստ այդ աղբյուրների, կայսրը կարգադրել էր նրանց շուտափույթ վերադառնալ և միանալ հիմնական բանակին[201]։

Ալփասլանը Դիոգենեսի բանակի շարժման ուղղությունը դեպի խլաթ և Մանազկերտ, իմացավ Սայաֆարղինում։ Դա այն ժամանակն էր, երբ 1071 թ. հունիս և հուլիս ամիսներին Դիոգենեսի բանակի առաջապահ մի զորաբաժին, որը հիմնականում կազմված էր թուրք և ֆրանկ վարձկան զորքերից, զորավարներ՝ Թարխանիատի և Ուրսելի (իմա՝ Ռուսել—Ս. Բ.) հրամանատարության տակ ուղարկված էր ավարառության ենթարկելու և վերագրավելու խլաթն ու Մանազկերտը։ Սուլթանը տեղեկանալով այդ մասին, Արզնի և Բաղեշի վրայով գալիս է խլաթ[202]։ Ճիշտ չեն որոշ աղբյուրների այն հաղորդումը, որ Ալփասլանը խլաթում դիմագրավեց բյուզանդական զորաբաժինը միայն իրեն ուղեկցող տասն-

---

195 Մ. Ուռհայեցի, էջ 200։

196 Նույն տեղում։ Ա. Լաստիվերտցի, էջ 138։

197 *Abul Faraj*, p. 220. Տե՛ս նաև *Cl. Cahen*. La campagne de Mantzikert, p. 628.

198 Անունը ծագում է «Թարխան» (իշխան) բառից։ Այս զորավարի անունը հիշում է Նիկեփոր Վրիենիոսը, երբ նշանակելով Հովսեփ Տրախանիոտ։ Նա ուներ Մագիստրոսի բարձր տիտղոս, տե՛ս Մ. Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխարհ. թարգ. Հ. Բարթիկյանի, էջ 328—329. ծան. 91։

199 Նիկեփոր Վրիենիոսի ասելով, Հովսեփ Տրախանիոտեսը Ռոմանոս Դիոգենեսին խորհուրդ էր տալիս զորքը բաժան-բաժան չանել, բայց չկարողանալով նրան համոզել, գնաց խլաթ, որը թուրքերին էր ենթակա և ուներ թուրքական ուժեղ կայազոր։ Նույն տեղում, էջ 329։

200 Մ. Ուռհայեցի, էջ 200։ Ա. Լաստիվերտցին Դիոգենեսի կողմից մի շարք զորաբաժինների ուղարկվելը այլ ուղղությամբ, բացատրում է «մի շարք զորաբաժինների ուղարկվելը այլ ուղղությամբ, բացատրում է «մի ինչ որ անպատեհ մտադրությամբ», տե՛ս Ա. Լաստիվերտցի, էջ 138։

201 Տե՛ս *Cl. Cahen*. La campagne de Mantzikert, p. 631.

202 Ըստ Իմադ ադ-Դինի (ալ-Բոնդարի) Ալփասլանը նահանջել և գնացել էր Ատրպատական։ Տե՛ս *El-Bundari*, p. 32. Իսկ ըստ Իբն ալ-Ասիրի, Ալփասլանը բնակատեղի է ընտրում Խուվայ (Խոյ) բնակավայրը, որը ճանապարհների մի կարևոր հանգույց էր՝ Ուրմիա լճի հյուսիս-արևմուտքում։

հինգ հազար խաս բանակով։ Այստեղ Խլաթում նրա զորքերին էին միացել Աֆշին զորավարի թուրքմենական ջոկատները և Մրվանյան Նիզամ ադ-Դին ամիրայի՝ քրդերից և մահմեդականներից բաղկացած տասհազարանոց բանակը։ Ընդ որում, նրա զորքը հասնում էր մոտավորապես հիսուն հազարի, որոնցից տասնչորս հազարը ձիավորներ էին։ Հետաքրքիր է աղբյուրների այն հաղորդումը, որ ձիավորներից յուրաքանչյուրն իր ձիու կողքին ունեցել է պահեստային ևս մի ձի[203]։

Ալփասլանի բանակը հիմնականում բաղկացած էր մահմեդականներից՝ թուրքմեն, արաբ և քուրդ տարրերից։ Ի հակադրություն Ալփասլանի բանակին, Դիոգենեսի բանակը միատարր չէր և բաղկացած էր Բյուզանդական կայսրության մեջ ապրող բազմաթիվ ժողովուրդներից։ Ըստ Իմադ ադ-Դինի, բանակում գտնվում էին հույներ, հայեր, վրացիներ, ֆրանկներ, օղուզ թուրքեր, աբխազներ, զիշախներ և այլն. մոտ երեք հարյուր հազար հոգի[204]։ Որոշ հեղինակներ խիստ չափազանցելով այն հասցնում են վեց հարյուր հազարի, իսկ Ալփասլանինը՝ չորս հարյուր հազարի[205]։ Ավելի հավանական է, որ Դիոգենեսի բանակը հասնում էր երկու հարյուր հազարի, իսկ Ալփասլանինը, ինչպես վերևում ասացինք, երկու հարյուր հազարի։ Ընդ որում, եթե հաշվի առնենք մի շարք զորաբաժինների պարեն ձեռք բերելու պատճառով հեռանալը, հիմնականում Մանազկերտի ճակատամարտին մասնակցում էին Դիոգենեսի բանակից հարյուր հազար հոգի։

Հայ և օտար աղբյուրները նշում են, որ Դիոգենեսի բանակի որոշ ջոկատների բացակայության պատճառով. Ալփասլանը որոշել էր առանց հապաղելու ճակատամարտ տալ[206]։ «Բայց թագաւորն Պարսից խորամանկութեամբ առ երկիւղի զպատերազմելն խնդրէր, զի մի ցրուեալ զօրացն եկեալ՝ զթագաւորն ամրացուցցեն, և անմարտնչելի նմա ճակատն լինիցի։ Լաւ համարէր երկու մասին քան թէ երիցն ընդդէմ կալ.

---

203 *El-Bundari*, p. 38.

204 Նույն տեղում։ Տե՛ս նաև Մ. Ուռհայեցի, էջ 199—200։ Թեև Մ. Ուռհայեցին չի նշում քանակը, սակայն, ինչպես վերևում տեսանք, ըստ Մ. Ուռհայեցու բանակի կազմում էին գտնվում նաև Դոթերը, պաժինակները (պեչենեկները) և բուլղարները։ Ըստ Սադր ադ-Դին էլ-Հուսայնիի (էջ 36) 300000։

205 Տե՛ս *Cl. Cahen*, La campagne de Mantzikert, p. 29. *O. Turan*, Selçuklular tarihi, p. 126.

206 Ա. Լաստիվերտցի, էջ 138, 139։ Աշխարհ. թարգ., տե՛ս նաև Մ. Ուռհայեցի, էջ 199—200։ *El. Bundari*, p. 38.

շտապ տագնապի յարուցանէր, մինչև անդէն ակամայ յունական ճակատն կազմէր ընդդէմ կազմ ճակատուն Պարսից»[207]։

Ինչ վերաբերում է Դիոգենեսի բանակի կառուցվածքին, նրա շարքերում կային հեծյալներ, հետիոտներ, նետաձիգներ, նիզականետներ, գործավորներ, բեռնակիրներ, կառապաններ և այլն։ Նրան ուղեկցում էին մոտ երեսուն նշանավոր անձնավորություններ՝ դուքսեր, կոմսեր, իշխաններ և զորավարներ[208], այդ թվում մի շարք հայ իշխաններ՝ Խատապը և Վասիլակը[209], որոնց, ըստ Ուռհայեցու, Դիոգենեսը նշանակել էր իր զորքի հրամանատարներ[210]։ Աղբյուրները հատկապես հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում Դիոգենեսի բանակի ռազմական տեխնիկայի և փոխադրական միջոցների մասին։ Ըստ Իմադ ադ-Դինի «Բյուզանդական բանակի բեռները և զինամթերքը տեղափոխող երեք հազար կառք կար[211] (որոնց լծված էին գոմեշներ)։ Այս կառքերին բարձված բաբանների մեջ մի տեսակը կար, որը ամենամեծն ու ամենածանրն էր, նետում էր մեկ զանթար[212] քար և գործի էր դրվում հազար-երկու հարյուր մարդու կողմից։ Այս բաբանը նման էր երկինք բարձրացող մի լեռան»[213]։ Դիոգենեսի գանձը հաշվվում էր մեկ միլիոնի արժողությամբ, առանց հաշվելու թանկագին հագուստներն ու զոտիները և անհաշիվ թանկարժեք քարեր։

Չնայած երկու ճակատող բանակների քանակական և որակական տարբերությունը ակնհայտ էր, սակայն Դիոգենեսի բանակի գլխավոր թուլությունը նրա ազգային, կրոնական, դավանաբանական[214], այլազանությունն էր։ Հասկանալի է, որ բանակի կազմում կռվող տարբեր

---

207 Ա. Լաստիվերտցի, էջ 138։

208 *Cl. Cahen*, La campagne de Mantzikert, p. 628—629. *El Bundari*, p. 39.

209 Վրիենիոսը հիշում է այս Վասիլակին, որը Դիոգենես կայսեր դիմավորեց Մանազկերտում։ Նա Ասորիքից և Հայաստանից մեծ զորք էր հավաքագրել։ Բյուզանդական հրամանատարներից նա առաջինն է գերվում Խլաթի թուրքերի կողմից։ Ավելի կարևոր մանրամասնություններ տալիս է Սկիլիցան։ Նրա ասելով, Վասիլակը Կարինի դուքսն էր և գլխավորում էր «տեղացի» զինվորներից, հավանաբար, հայերից բաղկացած զորք։ Տե՛ս Մ. Ուռհայեցի, աշխարհ. թարգմ. Հ. Բարթիկյանի, էջ 329, ծանոթ. 93։

210 Մ. Ուռհայեցի, էջ 200։

211 Ըստ Սադրուդդին ալ-Հուսայնիի (էջ 36) տասնչորս հազար։

212 Մեկ զանթարը քառասուն օխա է կամ հիսուն կգ։

213 *El-Bundari*, p. 40.

214 Ինչպես հայտնի է, հույները քաղկեդոնական էին, գոթերը՝ կաթոլիկ, հայերը առաքելական (լուսավորչական), թուրքերը՝ մահմեդական և այլն։

ազգերի և ժողովուրդների ներկայացուցիչները նույնիսկ թշնամիներ էին մեկը մյուսի նկատմամբ։ Հետևապես այդ զորաբաժինների ամենափոքր անհաջողությունն իսկ դավաճանության կասկածանքի առիթ էր տալիս Դիոգենեսին։ Պատահական չէ, որ Տարխանիատ և Ուրսել հրամանատարների խլաթում կրած պարտությունից հետո, երբ Տարխանիատը թողնելով ռազմի դաշտը նահանջում է Կ. Պոլիս և Ուրսելը՝ Մելիտենե և այն բանից հետո, երբ Մանազկերտի ճակատամարտի առաջին օրը հայ իշխաններ Խատատը և Վասիլակը սպանվեցին, Դիոգենեսը կասկածելով և համոզվելով հույների նենգ դավաճանությանը, «նա,— ինչպես վկայում է Մ. Ուռհայեցին,— փառք և իշխանություն էր խոստանում, քաղաքներ և գավառներ»[215],— եթե նրանք երդվեն արիաբար մարտնչել սելջուկ զորքերի դեմ։ Արիստակես Լաստիվերտցին վկայում է. որ երբ անաստվածների (Իմա՝ Թուրքեր—Ս. Բ.) մի մեծ գունդ, հունաց թագավորի դեմ ապստամբելով անցավ թշնամիների կողմը և այդ պատճառով էլ որոշ գնդեր անվճռականությամբ էին կռվում, հունաց թագավորը անտեղյակ լինելով կատարվածից և պատճառը չիմանալով, բարկությամբ լցվեց հայոց զորքի ու ազգի դեմ և խեթ աչքերով էր նայում նրանց. բայց իմանալով եղելությունը և տեսնելով հայերի նվիրվածությամբ կռվելը նրանց նկատմամբ շափից դուրս սեր ցուցաբերեց և չտեսնված պարգևներ խոստացավ[216]։

Թեև ի հակադրություն բյուզանդական բանակի, սելջուկյան բանակը միատարր էր, այսուհանդերձ սուլթանին ուղեկցող հրամանատարները[217], ինչպիսիք էին Սավթեքինը, Աֆշինը, Սանդուքը (հայ և բյուզանդական աղբյուրներում Սամուկ) Այթեքինը, լավ էին գիտակցում պարտության աղետաբեր լինելը սելջուկյան սուլթանության հետագա գոյատևման համար, և բնականաբար, բյուզանդական բանակի ահեղ ուժը՝ մտահոգություն էր պատճառում սուլթանին և հրամանատարներին։ Պատահական չէ, որ մահը աչքի առաջ ունենալով, ճակատամարտի նախօրյակին Ալփասլանը իր զորքերից պահանջեց հավատարիմ լինել թագաժառանգ Մելիքշահին։ Նույն պատճառով էլ Նիզամ ալ-Մուլքին ուղարկեց Ռեյ, որպեսզի վերջինս հոգ տանի Մելիքշահին և սուլթանության ապահովությանը։

Այնուհետև սուլթանը ուղղվում է դեպի Խլաթ։ Մինչ այդ նա ուղարկում է մի առաջապահ զորք դեպի այդ քաղաքը՝ Սանդուք ամիրայի հրամանատարությամբ[218]։ Ինչպես նշեցինք վերևում, Դիոգենես կայսրը նույնպես առաջապահ զորքեր էր ուղարկել Խլաթ[219] վրացի զորավար Տրախանիատի և ֆրանկների հրամանատար Ուրսելի կամ Ռուսելի[220] գլխավորությամբ։ Երբ վերջիններս պարտության մատնվեցին, Դիոգենես կայսրին թվաց, որ իր առաջապահ զորքերին պարտության մատնողը Խլաթի կայազորն էր, որովհետև նա չէր ակնկալում, որ Ալփասլանը այդքան արագությամբ կարող էր ժամանել Խլաթի շրջանը։ Ուստի կայսրը, որն այն ժամանակ գրավել էր Մանազկերտը Խլաթի առաջապահ զորքին օգնության հասնելու և Ալփասլանի ժամանելու մասին տեղեկություններ ստանալու համար Վասիլակ հայ իշխանին ուղարկում է Խլաթ։ Վերջինիս գլխավորած հույն բանակը ճանապարհին հանդիպելով Խլաթից դեպի Մանազկերտ արշավող Ալփասլանի զորքերին անակնկալի գալով թուլացավ և տեղի տվեց։ Վիրավորված ռազմական հրամանատարների թվում էր նաև բյուզանդական պատմիչ Նիկեփոր Վրենիոսը[221]։ Վասիլակը գերի ընկավ սելջուկների ձեռքը, իսկ հայ իշխան Խատատը սպանվեց[222]։

Անակնկալի եկած բյուզանդական հիմնական բանակի առաջապահ զորքերը նահանջեցին դեպի Մանազկերտ։ Դիոգենեսի բանակում ծառայող Մանազկերտի հայ և հույն բնակիչները օգտվելով խառնաշփոթությունից լքեցին բանակը և փախան[223]։ Կայսրը տեսնելով այդ, հար-

---

215 Մ. Ուռհայեցի, էջ 200։

216 Ա. Լաստիվերտցի, էջ 139։

217 Ճիշտ չպետք է համարել Մ. Ասորու այն վկայությունը, որ հրամանատարների շարքում էր գտնվում նաև Դիլմուշի որդին՝ Սուլեյմանը, քանի որ վերջինս թշնամություն էր տածում սուլթան Ալփասլանի նկատմամբ և որ Սուլեյմանը Փոքր Ասիա եկավ Ալփասլանի մահից հետո։ Տե՛ս Միխայել Ասորի, էջ 406։

218 *El-Bundari*, p. 38.

219 Նույն տեղում։

220 Նույն տեղում։ Իմադ ադ-Դինը, որի վերցրել է Բունդարին վերջինից էլ՝ Իբն ալ-Ասիրը բյուզանդական 2000-անոց առաջապահ զորքի ռեխներ (առաջնորդներ) են նշում ռուս ռեյիսներին։ Մեզ թվում է, որ Իմադ ադ-Դինի մոտ բյուզանդական առաջապահ զորքի որպես հրամանատարներ հիշատակված «Ռուս առաջնորդներ» արտահայտությունը Ռուսել անվան աղավաղումն է։

221 *Bl. Cahen*, La campagne de Mantzikert, p. 631.

222 Մ. Ուռհայեցի, էջ 200։ Թեև բյուզանդական պատմիչ Սկիլիցան խոսում է Վասիլակի գերի ընկնելու մասին, սակայն Մ. Ուռհայեցին նշում է հայ իշխաններ Խատատի և Վասիլակի սպանության մասին։

223 *El-Bundari*, p. 38.

կադրաբար կանգնեցրեց արշավը և բանակ դրեց Տողոտափ կոչվող[224] մի վայրում, որը գտնվում էր Մանազկերտ և Խլաթ քաղաքների միջև։

Մեր կարծիքով Դիոգենեսի կողմից արշավանքը կանգնեցնելու պատճառներից մեկը պետք է համարել բանակի մի շարք զորաբաժինների բացակայությունը, որոնք ցրվել էին Հայաստանի և Վրաստանի տարածքում՝ պարեն ձեռք բերելու նպատակով։ Ուստի վճռական ճակատամարտի նախօրեին կայսրի մոտ մնացել էր ոչ ավելի, քան հարյուր հազար զինվոր[225]։

Սանդուք ամիրայի գլխավորած սելջուկյան առաջապահ զորքը կրնկակոխ հետևել էր իր առաջից փախչող կայսրի առաջապահ զորքերի մնացորդներին և դիշերելու բանակատեղի էր ընտրել կայսրի բանակից ոչ հեռու մի վայր։ Դարան մտած թուրքերը պատրաստ էին բռնելու նրանցից որևէ մեկին, որը կհամարձակվեր դուրս գալ կայսրի ճամբարից։ Գիշերային մթության մեջ սելջուկյան բանակատեղիից լսվող թմբուկների և շեփորի աղմուկն ու թնդյունը ահաբեկում և խառնաշփոթություն էր ստեղծում կայսրի զինվորների մեջ։ Հետևաբար, կայսրի զինվորները երեքշաբթի-չորեքշաբթի՝ 16—17 օգոստոսի լուսացող գիշերը անցկացրեցին մեծ անձկությամբ։ Չորեքշաբթի օրը արևածագին է՛լ ավելի սաստկացավ նրանց հուզումը, երբ տեսան Ալփասլանի տասնհինգ հազարանոց ձիավորների բանակի ժամանումը, որը վրան էր խփել մի փարսախ հեռու գտնվող դետակի ափին[226]։

Այնուամենայնիվ, չորեքշաբթի օրը՝ օգոստոսի 17-ին կողմերից ոչ մեկը չկարողացավ նախաձեռնությունը վերցնել վճռական ճակատամարտ մղելու համար։ Այդ օրը սուլթանի ճամբարը ժամանեց Բաղդադի խալիֆայի ուղարկած պատվիրակությունը՝ Իբն ալ-Մուհալլաբանի գլխավորությամբ, որը պետք է միջնորդեր կայսրի և սուլթանի միջև հաշտություն կնքելու, թերևս սուլթանի նախօրոք կատարած կարգադրության համաձայն։ Անկասկած իր սուլթանության գոյությանը Բյուզանդիայի կողմից սպառնացող լուրջ վտանգի երկյուղով պետք է բացատրել այն, որ ճակատամարտի նախօրեին սուլթանը վերջին անգամ

---

224 Մ. Ուռհայեցի, էջ 200։ *Sadruddin El-Huseyni*, p. 34. *El-Bundari*, p. 39. Տողոտափը անվանված է Զուհրա կամ Ալ-Զահրա։ Տե՛ս նաև *Ибн-ал-Асир*, стр. 122.

225 Անհավանական պետք է համարել Բոնդարու (էջ 39) մոտ նշված 200000 թիվը, քանի որ նախքան զորաբաժինների ցրվելը ըստ նրա հաշորդման 300000 էր։ Իսկ ըստ Սադրուդդին ալ-Հուսայնիի (էջ 36) 300000։

226 *El-Bundari*, p. 39.

փորձում էր հաշտություն կնքել Բյուզանդիայի հետ։ Հավանական է, որ սուլթանը կարծում էր թե ավելի նպատակահարմար է այդ դեսպանությունը կայսրին ներկայանար խալիֆայի անունով։ Հետևաբար նույն օրը իր հրամանատարներից մեկի՝ Սավտեկինի ուղեկցությամբ խալիֆայի միջնորդ դեսպան Իբն ալ-Մուհալլաբանին ուղարկում է կայսրի մոտ, առաջարկելով նրան հաշտություն կնքել և վերջ տալ արյունահեղությանը[227]։ Հայ և օտար աղբյուրները միմյանց հակասող վկայություններ են տալիս սուլթանի գաղտնի մտադրության և հաշտության առաջարկի նպատակների մասին։ Այսպես, ըստ ալ-Բոնդարիի, դեսպանի գլխավոր նպատակն էր բյուզանդական բանակի ներքին վիճակի հետախուզումը[228]։ Սադր ադ-Դին ալ-Հուսայնին նշում է միայն սուլթանի խաղաղասիրական նպատակը[229]։ Ուռհայեցու մոտ սուլթանի հաշտության առաջարկը նշված է առանց մեկնաբանության[230]։

Մեզ հասած բոլոր վկայություններից ակնհայտ և աներկբայելի է այն, որ Իբն ալ-Մոհալլաբանը կայսրին առաջարկել էր կնքել զինադադար և հաշտություն, իսկ կայսրը անբարտավանությամբ[231] և արհամարհանքով էր վերաբերվել դեսպանի և նրա հաշտության առաջարկի նկատմամբ ու կտրականապես մերժել այն[232]։

Անշուշտ, կայսրը այդպես վարվելու համար ուներ մի շարք պատճառներ։

Նախ նա վրեժ էր ուզում լուծել այն ասպատակությունների համար, որոնք կատարվել էին թուրքմեն հրոսակների կողմից։ Ըստ Իմադ ադ-Դինի, կայսրը խալիֆայի դեսպանի հաշտության առաջարկը մերժելիս ավելացրել էր, որ «այդ առաջարկիդ պատասխանը կտամ Ռեյում, երբ անձամբ կտեսակցեմ խալիֆայի հետ»[233]։ Առաջարկը կոպտորեն մերժելիս կայսրը դեսպանին հարցրել է, թե՞ սուլթանը որտեղ է պատրաստվում հանձնվել[234]։ Ապա շարունակում է՝ «Սպահա՞ն է ավելի գեղեցիկ, թե

---

227 *Abul Faraj*, p. 221. *Sadruddin el-Huseyni*, p. 34. *El-Bundari*, p. 39. Վերջին երկու հեղինակները չեն նշում դեսպանի անունը։

228 *El-Bundari*, p. 39.

229 *Sadruddin el-Huseyni*, p. 34.

230 Մ. Ուռհայեցի, էջ 199։

231 Նույն տեղում, էջ 216։

232 Նույն տեղում։ *Sadruddin el-Huseyni*, p. 34. *El-Bundari*, p. 39. Արաբական աղբյուրները... էջ 216։

233 *El-Bundari*, p. 39.

234 *O. Turan*. Selçuklular tarihi, p. 127.

Համադանը, խնդրում եմ ինձ տեղեկացրեք»։ Դեսպանը պատասխանում է՝ «Սպահանը»։ Ապա կայսրը շարունակում է. «Համադանի ցուրտ լինելը իմացանք։ Մենք Սպահանում՝ իսկ մեր անասունները Համադանում կձմեռեն»։ Դեսպանը զայրացած պատասխանում է. «Ձեր անասունները կձմեռեն այնտեղ, բայց դուք որտեղ կձմեռեք, այդ չգիտեմ»[235]։

Կայսրը գիտակցում էր, որ նա ահռելի միջոցներ էր ծախսել այս արշավանքի համար, հետևաբար ստիպված էր անհապաղ լուծել իր առջև դրված խնդիրը։

Բացի այդ նա մեծ կարծիք և համարում ուներ իր ռազմական ուժերի վրա։ Եթե նույնիսկ ճիշտ չլինեին այն երևակայական ծրագրերը, որոնք վերագրում են կայսրին արաբ հեղինակները։ Ըստ Սիբտ ալ-Ջաուզիի, նա իր զորավարներին խոստացել էր տալ որպես ավար ամբողջ մահմեդական աշխարհը, բացի Բաղդադից[236]։ Անշուշտ, ինչպես վերևում տեսանք, ճակատամարտի նախօրեին և ճակատամարտի ընթացքում կայսրը առատ պարգևներ, քաղաքներ ու գավառներ, փառք և իշխանություն էր խոստացել հայ և այլազգի իշխաններին[237]։ Որ նա մեծ կարծիք ուներ իր ռազմական ուժերի վրա, այդ է վկայում Սադրադ-Դին ալ-Հուսայնիի հետևյալ հաղորդումը. ռազմական գործողություններից մի օր առաջ կայսրի կողմից ուղարկված դեսպանը կայսրի անունից Ալփասլանին հայտարարում է. «Ես եկա, իմ զինվորներին դու չես կարող դիմադրել, եթե դու ինձ ենթարկվես, ես քեզ բավարարելու չափ երկրներ կտամ (շատ հավանական է Հայաստանի տարածքից—Ս. Բ.) և դու ինձնից վախենալու կարիք չես ունենա։ Եթե այս պայմանը չընդունես, ինձ մոտ երեք հարյուր հազար հեծյալ և հետիոտն կա. բանակի զենքն ու զրահը փոխադրող տասնչորս հազար կառք կա. իմ առաջ ոչ մի մահմեդական բերդ չի կարող փակ մնալ»[238]։

Վերջապես այն համոզմունքը, որ առաջացել էր կայսրի դեսպան Լևոն Դիաբատանի կողմից տրված հաղորդումների վրա։ Դեսպանը կայսրին հավաստիացրել էր, որ սուլթանի բանակը կազմալուծված է և մինչև օժանդակ ուժերի ժամանումը Իրանից, սուլթանը ժամանակ

235 Նույն տեղում տե՛ս Ibn ul-Azrak, Târih Meyyâfârkîn, Kahire, 1959, 153a. Տե՛ս նաև Cl. Cahen, La campagne de Mantzikert, p. 692.

236 Տե՛ս Cl. Cahen, La campagne de Mantzikert, p. 692.

237 Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 200։ Ա. Լաստիվերտցի, էջ 138։

238 Sadruddin el-Huseyni, p. 36.

շահելու և կայսրին ապակողմնորոշելու համար դիմում է անհապաղ ռազմի[239]։

Եթե, ինչպես Լաստիվերտցին է վկայում, Ալփասլանը «երկյուղից մղված» խորամանկությամբ ուզում էր պատերազմը սկսել, որպեսզի ցրված զորքերը չհասնեն թագավորին»[240] (իմա՝ կայսրին—Ս. Բ.)։ Ապա նույն գործոնն էր ստիպում կայսրին շտապել ու արագացնել ռազմի նախապատրաստությունը։ Ինչպես վերևում նշեցինք, կայսրի բանակը միատարր չէր, ուստի նրանց՝ հատկապես վարձկան թուրքերի և հայերի մարտունակության ու հավատարմության վրա կասկածելու համար ուներ պատճառներ։ Վերևում նշեցինք նաև կայսրի մոտ կասկած առաջացրած մի շարք դավաճանական դեպքերի մասին[241]։ Հետևաբար, կայսրը չէր կարող մեծ հույսեր կապել բյուզանդական բանակի հետ, նկատի ունենալով նրա բարոյական և հոգեկան վիճակը, ուստի և չէր կարող ուշացնել ճակատամարտը և ավելի կազմալուծել բանակը, որն առանց այդ էլ ջղաձիգ վիճակում էր այդքան երկար պատրաստությունից ու երկար ճանապարհ կտրելուց հետո։ Երկյուղով պետք է համակված լիներ բյուզանդական բանակի այն մարտիկները, որոնք նախկինում ահաբեկված, մազապուրծ փախել էին թուրքմենական արյունարբու հրոսակների ահեղ դատաստանից։

Ահա այսպիսի մտորումների մեջ պետք էր անցկացրած լիներ շաբաթշաբթի օրը (17 օգոստոսի) երկու ընդդիմադիր բանակների առաջնորդները։

Սուլթանի հաշտություն կնքելու առաջարկի մերժումը կայսրի կողմից էլ ավելի պետք է գրգռած լիներ Ալփասլանի ռազմական եռանդն ու բորբոքը։ «Սուլթանը,— նշում է Իմադ ադ-Դինը, այս մերժումը—(Ս. Բ.) լսելով զայրացավ և բոլոր հարաբերությունները խզեց։ Հաջորդ օրը երկու բանակները պատրաստվեցին վճռական ճակատամարտի՝ մահ ու կենաց կռվի»[242]։

Բաղդադի խալիֆան սուլթանին ուղարկել էր քաջալերող, հորդորող և ոգեշնչող մի նամակ, որտեղ նա ասում էր, որ «նա հրամայել է Մզկիթներում աղոթել սուլթանի հաղթանակի համար, ամեն ուրբաթ օր։ ...Դու կռվելու ես ալլահի կրոնի համար, որը քեզ խոստացել է հաղ-

239 Տե՛ս El-Bundari, p. 40. Մ. Ուռհայեցի, էջ 199։ Abul Faraj, p. 220.

240 Ա. Լաստիվերտցի, էջ 138։

241 Մ. Ուռհայեցի, էջ 199։ Ա. Լաստիվերտցի, էջ 139։ Attaliates, p. 156.

242 El-Bundari, p. 39. Տե՛ս նաև Sadruddin el-Huseyni, p. 34—35.

թանակ տանել բոլորի դեմ և որ ճակատամարտը տեղի կունենա ուրբաթ օրը աղոթքից հետո»[243]։

Հետևաբար, ուրբաթ առավոտյան աղոթքի ժամին, Ալփասլանը աչքից անցկացրեց իր զինվորներին և հորդորեց նրանց չզիջել «պիղծ» հույների հանդգնությանը։ Սուլթանը քաջալերելով հրոսակներին, գրգռելով նրանց կրոնական մոլեռանդությունը, ասում էր, որ «այս ճակատամարտը սուլթանինը չէ միայն, այլ ամբողջ իսլամին և որ ինքը անձամբ հոժարական կռվելու է իրենց հետ կողք-կողքի։ Զոհվածները կմտնեն դրախտ, որպես մարտիրոսներ, իսկ ողջերը կհաղթանակեն»։ Բանակը օվացիայով ընդունեց նրա կոչը և երդվեց գնալ նրա ետևից։ Բոլորը հետևելով իր օրինակին աղոթեցին Աստծուն։ Այնուհետև սուլթանը իր սպիտակ շորերը հագնելուց և ձիու ասպանդակը ամրացնելուց հետո՝ կապում և հանգուցում է ձիու պոչը։ Ապա մի կողմ դնելով իր նետն ու աղեղը, վերցնում է լախտն (վիրգը) ու սուրը, հարդարում սաղավարտը և կզակակալը, ապա ցույց տալով բարուրը, դիմելով զինվորներին ասում է.— «Եթե ես սպանվեմ, սա կլինի իմ պատանքը»[244]։

Վերևում ճակատամարտից առաջ սելջուկյան բանակում կատարված արարողության նկարագրությունը գլխավորապես հաղորդել են մահմեդական հեղինակները և կարող է չհամապատասխանել իրականությանը։ Սակայն պետք է նշել, որ այդ արարողությունը համապատասխանում է պատմական ժամանակաշրջանի մահմեդական և թուրքական սովորույթներին ու ավանդույթներին և այդ պատճառով էլ մենք նպատակահարմար գտանք ամբողջությամբ մեջ բերել, թեկուզ արևելագիտական տեսակետից, հետաքրքիր այդ հատվածը։

Նույնանման արարողություն էր կատարվել նաև բյուզանդացիների ճամբարում։ Դրա նկարագրությունը տալիս է Սադրադ-Դին ալ-Հուսայնին։ Բյուզանդական կայսրը կարմիր ատլասից զգեստ էր հագել և և նստած էր ոսկե գահի վրա, որը գտնվում էր նույն կերպասից պատրաստված վրանի կենտրոնում։ Գահի վրա թանկագին քարերով զարդարված մի խաչ կար, վրանի առջևում քահանաներն ու մյուս հոգևորականները պատարագ էին մատուցում և ավետարան էին կարդում։ Բանակում աղոթք էր կատարվում և ի ցույց մահմեդականների մեծ խաչեր էին բարձրացված բանակի առաջամասում»[245]։

Կայսրը իր բանակը դասավորել էր հետևյալ կերպ. ձախ թևը հանձնել էր Նիկեփոր Վրիենոսի հրամանատարությանը, այդ թևում էին նաև պաժինակները։ Աջ թևը հանձնել էր Կապադովկիայի կատապան Ալիատին, որի շարքերում էին վարձկան ուզերը (իմա՝ թուրք օղուզները— Ս. Բ.)։ Ինքը կայսրը վերցրել էր բանակի առաջապահ կենտրոնի հրամանատարությունը, իսկ թիկունքը հանձնել էր իր եղբոր որդուն՝ Անդրոնիկոս Դուկասին[246]։

Հայ և օտար աղբյուրների վկայությունները[247] օգոստոսի 19-ին[248] ուրբաթ օրը տեղի ունեցած վճռական ճակատամարտի ընթացքի մասին՝ բազմազան են և իրարից խիստ տարբեր։

Ի մի բերելով ճակատամարտի մասին մեզ հասած վկայությունները, կարելի է ասել հետևյալը. սելջուկյան բանակը, որը չորս մասի էր բաժանված, անցավ հարձակման թմբուկների և շեփորների հնչյունների և թնդյունների տակ։ Հարձակվող ուժերի պակասը զգալով, Ալփասլանը հրամայել էր իր մամլուք հրամանատարներից մեկին՝ Տարանգին իր զորամասով դարան մտնել[249]։ Այդ միջոցին բյուզանդական զորքը նույնպես անցնում է հարձակման։ Սելջուկ զորքերը նախօրոք ծրագրված կեղծ հարձակումից հետո սկսում են կռվելով նահանջել և բյուզանդական զորքերին հետապնդելով առաջանում են։ Բյուզանդացիներին թվում էր, թե հաղթանակ են տանում, այդ միջոցին դարան մտած սելջուկյան զորքերը բյուզանդացիների թիկունքից հարձակվում են առաջացող կայսեր զորքերի վրա։ Մարտի թեժ պահին բյուզանդական բանակի աջ և ձախ թևում գտնվող վարձկան ուզերն ու պաժինակները սուլթանի հետ նախօրոք պայմանավորվածության հիման վրա օղուզների թամիշ (թա-

243 *El-Bundari*, p. 40—41. *Sadruddin el-Huseyni*, p. 35.

244 *Sadruddin el-Huseyni*, p. 35. *El-Bundari*, p. 40. *Abul Faraj*, p. 220. Տե՛ս նաև *Cl Cahen*, La campagne de Mantzikert, p. 634. *O. Turan*, Selçuklular tarihi, p. 129.

245 *Sadruddin el-Huseyni*, p. 35.

246 Մ. Ուռհայեցի, էջ 201։

247 Մ. Ուռհայեցի, էջ 201—202։ Ա. Լաստիվերտցի, էջ 139—140։ *Ибн ал-Асир*, стр. 122—123. *El-Bundari*, p. 40—41. *Sadruddin el-Huseyni*, p. 35—36. Bryennios, p. 492—494. *Abul Faraj*, p. 221—222. Մ. Ասորի, էջ 406։ *Attaliates*, p. 158—159, «Արաբական աղբյուրները Հայաստանի...», էջ 216։

248 Ըստ որոշ թուրք հեղինակների, Մանազկերտի ճակատամարտը դնում են օգոստոսի 26-ին, ուրբաթ օրը։ Տե՛ս *O. Turan*, p. 133—134.

249 Տե՛ս *El Bundari*, p. 40. Sadruddin el-Huseyni p. 35. Bryennios, p. 492. Անհավանական պետք է համարել Սիրտ ալ-Դաուդիի, Իբն ալ-Ասիրի և Աբուլ-Ֆարաջի հաղորդումները այն մասին, որ իբր թե ճակատամարտի հենց սկզբից Ալփասլանը անցել էր հարձակման և մխրճվել հունական բանակի ամբոխի մեջ։

միս) բեգի գլխավորությամբ անցնում են իրենց հավատակիցների կողմը[250]։ Այդ դեպքը անշուշտ խառնաշփոթություն և կազմալուծում է առաջացնում կայսեր բանակում։ Տեսնելով իր բանակի աջ թևի փլուզումն ու փախուստը, Դիոգենես կայսրը ջանում է օգնական ուժեր հասցնել ձախ թևից։ Այնուհետև կայսրը, տեսնելով իր զորքերի մի մասի խուճապահար փախչելը, անմիջապես, մարտիկի նման հանդերձավորվելով ու սպառազինվելով, հասնում է ճակատամարտի տեղը, անվեհեր կռվում է սելջուկ զինվորների դեմ[251]։ Սակայն պահեստային ուժերի հրամանատար Անդրոնիկոս Դուկասը հայտարարելով կայսրի սպանությունը հեռանում է ճակատամարտի վայրից, որը և պատճառ է դառնում բյուզանդական բանակի ընդհանուր նահանջին և փախուստին։ Սելջուկ թուրքերը կազմակերպում են թշնամու զինվորների անխնա ջարդ ու կոտորած։ Դիոգենեսը քաջաբար կռվելուց հետո լքված իր զորքերից, երբ միայնակ էր մնացել, գերի է վերցվում Շադի[252] անունով մի մամլուքի (ստրուկ զինվոր) կողմից[253]։

Բյուզանդական կայսրի գերի ընկնելը մահմեդական սուլթանի ձեռքին աննախադեպ էր պատմության մեջ։ Հավանաբար այդ պատճառով էր, որ սուլթանը կասկածանքով վերաբերվեց և չհավատաց եղելությանը, մինչև որ բանակցությունների ժամանակ կայսրին ներկայացած դեսպաններն ու գերի ընկած հայ իշխան Վասիլակը չհաստատեցին նրա ինքնությունը։ Թեև կայսրի ոտքերն ու ձեռքերը շղթայված էին ու վզին երկաթե մանյակ էր անցկացված, սակայն սուլթանը նրան կայսերավայել դիմավորելուց հետո[254], ինչպես Սկիլիցան է ասում, խստությամբ

250 Մ. Ուռհայեցի, էջ 201—202։ Ա. Լաստիվերտցի, էջ 139։ Թամիշ բեգին հիշատակում է միայն Ատտալիատեսը։ Տե՛ս Attaliates, p. 158.

251 Ա. Լաստիվերտցի, էջ 139։

252 Հետագայում պարզվում է, որ այս գերին, շատ հավանական է, ծագումով հույն էր. փախել էր հունական բանակից իր վատառողջ լինելու պատճառով։ Այնուհետև, գերվելով սելջուկների կողմից, հանձնվել էր Նիզամ ալ-Մուլքին։ Վերջինս այն հանձնել էր մի ուրիշին։ Ալփասլանը տեսնելով նրա վատ կերպարանքը, ասել էր վեզիրին.— «Ով իմանա, մի օր կարող է նա կայսին մեզ բերի գերի վերցրած»։ Տե՛ս La Campagne de Mantzikert, p. 636. Տե՛ս նաև Rawendy, RAS, 1902, p. 596.

253 Sadruddin el-Huseyni, p. 35. El-Bundari, p. 40. Abul Faraj, p. 221. Մ. Ասորի, էջ 407։ Դիոգենեսի գերի ընկնելու մասին տե՛ս նաև Մ. Ուռհայեցի, էջ 202։ Ա. Լաստիվերտցի, էջ 139։ Վարդան Վարդապետ, էջ 102։ Մ. Անեցի, էջ 115։ Կ. Գանձակեցի, էջ 104։ Ս. Սպարապետ, էջ 77։ Ибн ал-Асир, стр. 123. Bryennios, p. 494.

254 Ա. Լաստիվերտցին (էջ 141) այդ առթիվ վկայում է «և յորմէ (իմա՛ կայսրից—Ս. Բ.) զոզայրն և զարհուրէին՝ կապանօք առաջի իր յոտին կացուցեալ կայր իբրև

հիշեցնում է կայսրին նրա կողմից ապստամբ Ալբասան ամիրայի հանձնման և հաշտության պայմանները մերժելու պարագաների ու պատճառների մասին[255]։ Կայսրը ընդունելով իր սխալը, պատասխանում է. «Ո՛վ սուլթան, քո երկրները նվաճելու համար շատ դրամ ծախսեցի. այլազան ժողովուրդներից բանակ կազմեցի. հաղթանակը հնարավոր չեղավ, ես և իմ երկիրը դերի դարձանք, իմ և իմ երկրի ճակատագիրը քո ձեռքումն է, որքան ուզում ես ինձ կշտամբիր ու հանդիմանիր։ Այժմ վերաբերվիր ինձ հետ ինչպես որ ցանկանաս»։ Ապա սուլթանը ասում է. «Եթե դու հաղթող լիներիր, ինչպես կվերաբերվեիր ինձ հետ»։ Կայսրը պատասխանում է. «Ես քեզ հետ խիստ կվերաբերվեի»։ Ապա սուլթանը շարունակում է. «Իսկ հիմա ի՞նչ ես կարծում, թե ինչպես կվերաբերվեմ քեզ հետ»։ Կայսրը երեք հնարավորություն նախատեսելով, պատասխանում է.— «Ինձ կարող ես սպանել. դա սպանդագործի արարք է։ Հաղթանակդ ցուցաբերելու համար դու կարող ես ինձ ման բերել քո տերությանդ մեջ և այնուհետև վաճառել ինձ, դա էլ վաճառականի գործ է։ Երրորդ հնարավորության մասին խոսելը ավելորդ է, քանի որ դու այդ չես անի»։ Ալփասլանը կայսրին ստիպում է հայտնել երրորդ հնարավորությունը։ Այն ժամանակ կայսրը ասում է.— «Եթե դու թագավոր ես, շնորհիր ինձ իմ կյանքը, և վերադարձրու ինձ իմ գահը, այնուհետև քեզ բարեկամ կմնամ, տարեկան հարկ կվճարեմ, երբ դու կցանկանաս կներկայանամ իմ բանակով հանդերձ և կծառայեմ քեզ, ինձ մեռցնելուց դու ոչինչ չես շահի, ընդհակառակը, ինձ կփոխարինեն մի ուրիշ կայսրով, այն էլ քեզ թշնամի կլինի։ Ես այլ մտադրություն չունեմ, բացի քո ներողամտությունը խնդրելուց և փրկագնվելուց[256]։ Ինչպես Մ. Ուռհայեցին է նշում, մի քանի օր անց, սուլթանը հոռոմոց կայսեր հետ բարեկամություն և հաշտություն հաստատեց, արյամբ եղբայրացավ Տիոժենի հետ։ Նա այդ բանը ասածուն ուխտ էր արել և պարսիկների (իմա՝ սելջուկների—Ս. Բ.) ու հոռոմների միջև առհավետ մեծ բարեկամություն և հաշտություն հաստատեց[257]։

Ինչպես նկատելի է, կայսրի վերջին պատասխանը իր մեջ պարունակում է երկու կայսրությունների միջև կնքվելիք հաշտության պայ-

զմի ի ծառայից իւրոց, յայնժամ ապա յիշեաց զդաշինսն զոր ետ ընդ Աստուծոյ, և յարուցեալ նստոյց զնա ընդ աջմէ իւր մէ և իբրև զբարեկամ հաւատարիմ մեծարեաց զնա, և ուխտ եդ ընդ նմա»։

255 Cl. Cahen, La campagne, p. 636.

256 Cl. Cahen, La campagne, p. 637. O. Turan, Selçuklular Tarihi, p. 131.

257 Մ. Ուռհայեցի, էջ 202։

մանագրի նախադրյալները, որոնք այնուհետև քննարկվում են երկու տիրակալների միջև։ Սկզբում սուլթանը առաջարկում է տաս միլիոն դինար, սակայն Դիոգենեսը հիշեցնում է, որ ինքը բանակի զինման համար վատնել է բյուզանդական կայսրության հարստությունը և աղքատացրել ժողովրդին[258]։

Թեև հայ[259] և օտար աղբյուրները հստակորեն չեն նշում կնքված պայմանագրի բոլոր հոդվածները, սակայն ի մի բերելով վերոհիշյալ աղբյուրներում նշված վկայությունները, կարելի է արտաբերել, պայմանագրի հետևյալ կետերը.

ա) Դիոգենեսը որպես փրկագին, պետք է վճարեր հարյուր հազար ոսկեդրամ (դինար)։ Իսկ Բյուզանդիան պարտավորվում էր վճարել տարեկան երեք հարյուր վաթսուն հազար ոսկեդրամ (դինար)՝ խարաջ[260]։ Սուլթանի պահանջի դեպքում Բյուզանդիան պետք է առաքեր ռազմական օգնություն։ Կայսրը միաժամանակ խոստանում էր այսուհետև չձեռնարկել ռազմական գործողություններ մահմեդական երկրների դեմ, անմիջապես պետք էր վերադարձվեին մահմեդական ռազմագերիները։ Մյուս կողմից, հարկ եղած դեպքում սուլթանը պետք է օգներ Դիոգենեսին, վերականգնելու համար իր գահը[261]։

բ) Դիոգենեսը խոստացավ իր դուստրերից մեկին ամուսնացնել սուլթանի թագաժառանգ որդու Մելիքշահի հետ[262]։ Պայմանագրի այս հոդվածը բոլորովին չիրագործվեց։

գ) Բյուզանդական կայսրության հարավարևելյան ու հարավային սահմաններում գտնվող՝ մի քանի անգամ ձեռքից ձեռք փոխանցվող

258 Վերոհիշյալ վկայությունների համար տե՛ս *Abul Faraj*, p. 221—222. *Michel le Syrien*, p. 170. El Bundari, p. 41. *Cl. Cahen*, La campagne, p. 637. *O. Turan*.

259 Ուռհայեցի, էջ *202*, նույնը տե՛ս Ա. Լաստիվերտցի, էջ *141*։

260 *Le Beau*, Histoire du Bas-empire, Paris, 1824, XIV, p. 505. Ըստ Սադրուդինի, կայսրը խոստացել էր մեկ միլիոն դինար ջիզիա։ Տե՛ս *Sadruddin el-Huseyni*, p. 37. Տե՛ս նաև «արաբական աղբյուրները Հայաստանի...» էջ *216*։

261 Տե՛ս *G. Le Beau*, XIV, p. 505. *Cl. Cahen*, p. 637—638. *O. Turan*, p. 131—132. *I. Kafesoglu*, Melikşah devrinde, p. 59.

262 *G. Le Beau*, XIV, p. 505. Տե՛ս *Zonoras*, III, p. 107. *Abul Faraj*, p. 222. *Cl. Cahen*, La campagne, p. 638. Դ. Լորանին, անհավանական է թվում Սկիլիցայի այն հաղորդումը, որ իբր թե Դիոգենեսը, որպես օժիտ է տվել Կոլոնիա (Կողոնիա) քաղաքը իր շրջակայքով, տե՛ս J. Laurent, Byzance, et les Turcs Seldjoucides Jusqu'en 1081, Nancy, 1913, p. 95. Տե՛ս նաև *R. Grousset*, l'Empire du Levant, p. 167.

սահմանային քաղաքներ ու ամրոցներ՝ Մանազկերտը, Խլաթը, Եդեսիան, Մեմբիջը և Անտիոքը պետք է հանձնվեին սելջուկների տիրությանը[263]։ Արիստակես Լաստիվերտցին թեև չի հիշատակում վերոհիշյալ քաղաքները, սակայն մեր կարծիքով նրա հետևյալ վկայությունը ցույց է տալիս տարածքային այն զիջումները, որը կայսրից պահանջել էր սուլթան Ալփասլանը։ Վկայակոչելով սուլթան Ալփասլանի խոսքերը, Ա. Լաստիվերտցին գրում է. «Յայսմ հետէ մի եղիցի ընդ իս և ընդ քեզ խռովութիւն, այլ խաղաղութեամբ զթաղավորութիւն քո ունիցիս, և մեք զպարսկական (իմա՝ սելջուկյան—Ս. Բ.) տէրութիւնս, բայց զոր առի պատերազմամբ՝ ինձ լիցի և այլ մի արշաւեսցուք յաշխարհս ձեր»[264]։

Մեկնաբանելով Արիստակես Լաստիվերտցու վերոհիշյալ վկայությունը արդի թուրք պատմաբաններից Օսման Տուրանը, առանց այլ ապացույցների հետևցնում է, որ այդ պայմանագրի տարածքային զիջումների մեջ պետք է մտցնել նաև «ամբողջ արևելյան Անատոլուի (իմա՝ Փոքր Ասիայի—Ս. Բ.) այն մասը, որը եղերում է Տավրոսյան լեռներ—Մալաթիա (Մելիտենե) և Էրզրում (Կարին) գծից դեպի արևմուտք ընկած տարածքը, որը նրա կարծիքով դեռևս IX դարից մշտապես եղել է մահմեդական (արաբ և թուրքական) ուժերի նվաճման ներքո[265]։ Մինչդեռ Ա. Լաստիվերտցու վկայության մեջ Ալփասլանը չի հիշատակում մահմեդական նվաճողներին ընդհանրապես, այլև խոսում է իր նվաճումների մասին, ասելով, «Ինչ որ ես պատերազմով վերցրեցի, կմնա ինձ»։ Պետք է նշել նաև, որ վերոհիշյալ քաղաքներից և ամրոցներից Մանազկերտն ու Խլաթն էին, որ միայն անմիջապես գրավվեցին սուլթանի բանակի կողմից։ Ստույգ պետք չէ համարել որոշ հեղինակների[266] այն հետևությունները, որոնք հիմնվելով աղբյուրների մշուշապատ վկայությունների վրա[267], Ալփասլանի մահից հետո 1070—1080-ական թվականներին Հայաստանում և Փոքր Ասիայում՝ Գելմուշի որդի Սուլայմանի և մի շարք թուրքմեն ամիրաների կատարած նվաճումները համարում են Ալփասլանի ծրագրերի մի մասը և իբր թե տեղի են ունեցել նրա կենդանության ժամանակ։ Ճիշտ է, որ Միքայել Է. Դուկասի կողմից Դիո-

263 Տե՛ս *Abul Faraj*, p. 222.

264 Ա. Լաստիվերտցի, էջ *141*։

265 *O. Turan*, Selçuklular tarihi, p. 132.

266 Նույն տեղում, էջ *135*։ *I. Kafesoglu*, p. 61—62.

267 Մ. Ուռհայեցի, էջ *203*։ *Abul Faraj*, p. 223. Ա. Լաստիվերտցի, էջ *141*։ *Zonoras*, p. 108. Մ. Ասորի, էջ *406—407*։

գենեսին հաղորդված պայմանագրի հոդվածների և Դիոգենեսի սպանությունը գրգռել էին սուլթանի ախորժակը՝ նվաճումներ կատարելու համար, և նա կոչ էր արել թուրքմեններին ասպատակել Հռոմոց երկիրը և սրի քաշել քրիստոնյաներին[268]։ Սակայն 1072 թ. սուլթանի անակնկալ սպանությունը ընդհատել էր նրա նվաճողական ծրագրերի իրագործումը։ Ուղղակի մատնացույց անելով այդ մասին Ա. Լաստիվերտցին գրում է. «Զկնի այսր իբրև ետես եթէ դաւաճանութեամբ յիւրոց նախարարացն ըմբոնեալ եղև, և յաչիցն զրկեցին (Դիոգենեսին) և ոչ եհաս ի թագաւորութիւնն, այլ շարշարանօք մեռաւ, լի եղև (Ալփասլանը—Ս. Բ.) խռովութեամբ և ցասմամբ, կամէր զսիրելւոյն հատուցանել, և անդէն ժամանեաց նմա մահ և ել յաշխարհէս զկնի ամենայն երկրածնաց, ուր ի միասին են թագաւորք և տնանկք»[269]։

Լը Բոն, հենվելով բյուզանդական մի շարք աղբյուրների վկայությունների վրա, ցույց է տալիս, որ Ալփասլանին ուրիշ բան չէր մնում անելու, եթե ոչ նվաճելու հրաման արձակել։ Անշուշտ Լը Բոն անտեսելով սելջուկների նվաճողական քաղաքականությունը, առավելապես մեղադրում է բյուզանդացիներին հաշտության պայմանագրի խախտման և մյուս կողմից Դիոգենեսի դաժանորեն սպանության համար, որ իբր թե Դիոգենեսը եղել էր Ալփասլանի դաշնակիցն ու բարեկամը[270]։ Այլ բան է, թե Մանազկերտի ճակատամարտից հետո Բյուզանդիայի արևելյան (այդ թվում՝ Հայաստանի) և հարավային նահանգների սելջուկների կողմից նվաճումը հեշտ կատարվելիք իրողություն էր։

Հաշտության պայմանագրի առաջին հոդվածի լիակատար իրականացմանը խանգարել էր Դիոգենեսի անմիջական փոխարինումը Միքայել Է. Դուկասի (Պարապինակես) կողմից և Դիոգենեսի կուրացումն ու անփառունակ մահը։

Ինչպես ասվեց, թեև հաշտության պայմանագիրը ծանր ու նույնիսկ ստորացուցիչ էր Բյուզանդիայի համար, սուլթանը շարունակում էր կայսերավայել վերաբերմունք ցույց տալ Դիոգենեսին դեպի Կ. Պոլիս ճանապարհելիս, ընդ որում, հավանական է, որ Մանազկերտի ճակատամարտից հետո նույնիսկ նա շարունակում էր հավատալ երկու կայսրությունների անձեռնմխելի լինելու տեսությանը։ Այդ մտքի ար-

268 Ա. Լաստիվերտցի, էջ 141։
269 Մ. Ուռհայեցի, էջ 203։
270 *Le Beau*, XXV, p. 7.

տացոլումը գտնում ենք ոչ միայն կողմնակալ աղբյուրներում[271], այլև համեմատաբար անկողմնակալ հայ աղբյուրներում։

Այդ միտքը դժվար չէ նկատել Մ. Ուռհայեցու հետևյալ վկայությունում. «Իսկ յետ աւուրց ինչ արար սուլտանն սէր և միաբանութիւն ընդ թագաւորին Հռոմոց, և արար զՏիրոժէնն սուլտանն իւր եղբայր արեամբ. վասընդի այն ուխտեալ էր ըստ Աստուծոյ և հաստատեաց ահագին ուխտ, սիրոյ և միաբանութեան ընդ Պարսիկք (իմա՝ սելջուկներ—Ս. Բ.) ընդ Հռոմք յաւիտեան»[272]։

Նույնն է վկայում դեպքերի ժամանակակից Ա. Լաստիվերտցին ասելով. «Եւ ուխտ եդեալ (իմա՝ Ալփասլան—Ս. Բ.) ի մտի, եթէ ի բուռն արկանի՝ սիրով և պատուով արձակեմ զնա յիւր թագաւորութիւնն։ Եւ երդմամբ դաշինք հաստատեալ, զի խաղաղութիւն եղիցի ընդ Պարսից (իմա՝ սելջուկների—Ս. Բ.) թագաւորութիւնս և ընդ Յունաց»[273]։

Եվ այսպես, Ալփասլանը Դիոգենեսին մեծ պատվով ճանապարհ է դնում երկու սելջուկ բեգերի հրամանատարության տակ գտնվող զինվորների մի գնդի ուղեկցությամբ։ Սուլթանը անձամբ ուղեկցում է նրան մի փարսախ հեռավորության վրա։ Դիոգենեսը Կարինի վրայով ուղևորվում է Սեբաստիա և ապաստանում՝ Սեբաստիայի մոտ գտնվող Դուկիա կոչվող ամրոցում։ Այստեղ է, որ նա իմանում է իր գահընկեցության մասին, ուստի նա նամակ է գրում իր նախկին զորավար, այժմ կայսր Միքայել Դուկասին, որով հայտնում է նրան հաշտության պայմանագրի հոդվածների, սուլթանի կողմից նրան ցույց տրված հարգալից վերաբերմունքի մասին։ Այնուհետև նա Միքայել Դուկասից խնդրում է ուղարկել սուլթանին խոստացված փրկագինն ու խարաջը և առաջարկում է կայսրին, որ ինքը միջնորդի դեր կատարի Բյուզանդիայի և սելջուկների միջև։ Միքայել Դուկասը պատասխանում է Դիոգենեսին և խոստանում մաս առ մաս ուղարկել պայմանագրով նախատեսված գումարը, քանի որ պատերազմը հյուծել էր կայսերական գանձարանը։ Այնուհետև խոստումնազանց չլինելու համար Դիոգենեսը Դուկիայում դժվարությամբ ձեռք բերած վաթսուն հազար դինար գումարը[274] և քսան հազար դինար արժողությամբ թանկարժեք իրեղենները և սուլթանին

271 *Rambaud*. Michel Psellos, Revue Historique 1877, p. 275. *El-Bundari*, p. 41.
272 Մ. Ուռհայեցի, էջ 202։
273 Ա. Լաստիվերտցի, էջ 141։
274 *Sadruddin el-Huseyni*, p. 37. (Սադրուդդինը այդ գումարը հասցնում է մեկ միլիոն դինարի)։

հասցեագրած նամակը, վերևում հիշատակված երկու սելջուկ բեգերի՝ ուղեկալների միջոցով ուղարկում է Ալփասլանին[275]։ Այս մանրամասնությունները, որոնք չեն նշված այդ աղբյուրներում, հավանական է, որ վերցված են Դիոգենեսի Ալփասլանին հասցեագրված վերոհիշյալ նամակից, որից և այդ տեղեկությունները քաղել է Սիբտ Իբն ալ-Ջաուզին։ Այնուհետև վերջինս հաղորդում է, որ Դիոգենեսը կուրացնում է Սեբաստիայի հայ թագավորին այն բանի համար, որ վերջինս մերժել էր օգնել Դիոգենեսին՝ Միքայել Դուկասի դեմ նրա մղած պայքարում։ Այնուհետև ըստ Սիբտ իբն ալ-Ջաուզիի, Դիոգենեսը Սեբաստիայում կազմակերպում է մի բանակ, որի մեջ մտնում են այն հույներն ու հայերը, որոնք ապաստանել էին Սեբաստիայի հայ թագավորի մոտ։ Այդ բանակով նա գրավում է Փոքր Ասիայի մի մասը՝ Իկոնիայից մինչև Մելիտինե։ Ապա օգնություն է խնդրում Ալփասլանից, որը խոստանում է ուղարկել զորքեր[276]։

Հասկանալի է, որ Սիբտ Իբն ալ-Ջաուզիի վերոհիշյալ տեղեկությունների մեջ սխալ պետք է համարել Սեբաստիայի հայ թագավորի կուրացումը Դիոգենեսի կողմից։ Անհավանական պետք է համարել նաև Աբու-լ-Ֆարաջի հաղորդածը, ըստ որի ոչ թե Դիոգենեսն է կուրացնում Սենեքերիմին, այլ ընդհակառակը, Սենեքերիմը Դիոգենեսին[277]։ Մինչդեռ հայ և օտար աղբյուրները Դիոգենեսի կուրացումը վերագրում են հույն զորավարներին[278]։

Թեև Դիոգենեսը չկարողացավ հարգել իր խոստումը և ուղարկել փրկագին ու խարաջը, սակայն այն ավարը, որ սուլթանի բանակը ձեռք էր բերել Մանազկերտի ճակատամարտի վայրում, տասնյակ անգամ գերազանցել էր հաշտության պայմանագրով խոստացված գումարը։ Ձեռք բերված ավարը այնքան շատ է եղել, որ փոխադրական միջոցների չգոյության պատճառով մի մասը թողնվել էր ճակատամարտի վայրում։ «Բյուզանդական բանակից ոչ ոք չմնաց, որ չսպանվի կամ գերի չընկնի։ Սրանց ապրանքի մի մասը մնջտեղում լքված վիճակում էր և ոչ ոք ձեռք

275 *Abul Faraj*, p. 222. *Cl. Cahen*, La campagne de Mantzikert, p. 639—640.

276 *Cl. Cahen*, La campagne de Mantzikert, p. 640.

277 *Abul Faraj*, p. 222—223. Հասկանալի է, որ Սիբտ իբն ալ-Ջաուզիի և Աբուլ Ֆարաջի հիշատակած Սենեքերիմ թագավորը պետք է լինի Սենեքերիմի որդիներից մեկը՝ Ատոմը կամ Աբուսահլը։ Սենեքերիմը մահացել է 1025 թ.։

278 Ա. Լաստիվերտցի, էջ 141։ Մ. Ուռհայեցի, էջ 202—203։ Ս. Անեցի, էջ 115։ Ս. Սպարապետ, էջ 76—77։ Կ. Դանձակեցի, էջ 104։ Վ. Վարդապետ, էջ 102, *El-Bundari*, p. 41. *Sadruddin el Huseyni*, p. 37.

չէր տալիս, կարծես թե նման էր վաճառքի հանված ապրանքի։ Ձենքն այնքան էժան էր, որ երեք զրահը վաճառվում էր մեկ դինարով[279]։ Սուլթանի բանակի հեռանալուց հետո թողնված ապրանքը հավաքվել էր Խլաթի և Մանազկերտի ժողովրդի կողմից։ Վերջիններս մասնակցել էին այդ ճակատամարտին և կուտակել այնքան մեծ գանձ, որ դրա մնացորդները դեռևս XII դ. կեսերին վաճառվում էին շուկաներում[280]։ Սուլթան Ալփասլանը ճակատամարտում ձեռք բերած գերիներով և մեծ ավարով Ատրպատականի վրայով վերադարձավ Համադան, այնտեղից էլ՝ Սպահան[281]։

Ինչպես վերևում նշեցինք, Ալփասլանը, զայրանալով Բյուզանդիայի նոր զեկավարների վերաբերմունքից, հրամայել էր թուրքմեն առաջնորդներին վերսկսել իրենց արշավանքներն ու ասպատակությունները Բյուզանդիայի Փոքր Ասիական տարածքում, սակայն անձամբ ինքը չէր կարողացել մասնակցել դրանց, քանի որ ծրագրված էր 1072 թ. սեպտեմբերի վերջերին երկու հարյուր հազարանոց բանակի ուղեկցությամբ մտնել Թուրքեստան «Սամարղանդի երկիրը, ցանկանալով տիրել այն»[282]։ Նրա գլխավոր նպատակն էր միջամտել այդ երկրամասում Կարախանյան տիրակալների միջև մշտապես տեղի ունեցող ավատատիրական երկպառակություններին և այնուհետև իրեն ենթարկել նրանց։ Այդ կռիվներից մեկի ժամանակ սուլթանի կողմից պաշարված Բալզամ[283] բերդի բերդատեր՝ Յուսուֆ Հարիզմին գիշերը իր երեխաներին և կնոջը սպանելուց հետո, առավոտյան ներկայանում է սուլթանին իբր հպատակություն հայտնելու։ Այդ միջոցին իր կոշիկի մեջ պահած դաշույնով ծանրորեն վիրավորում է նրան[284]։ Ջղիմանալով ստացած մահացու վերքերին, անկատար թողնելով իր նվաճողական նկրտումների իրագործումը Ֆաթիմյան Եգիպտոսի, Բյուզանդական կայսրության և Թուրքեստանի նկատմամբ, 1072 թ. հունվարի 25-ին մեռավ արյունարբու սուլթան Ալփասլանը։

279 *El. Bundari*, p. 41.

280 *Cl. Cahen*, La campagne de Mantzikert, p. 636.

281 *El-Bundari*, p. 41. Մ. Ուռհայեցի, էջ 203։

282 Մ. Ուռհայեցի, էջ 203—205։

283 Մ. Ուռհայեցու մոտ (էջ 203) այն անվանվում է հռչակավոր Համա բերդը։ Վարդան Վարդապետի մոտ, էջ 104՝ Ալամութ բերդը։

284 *El-Bundari*, p. 46 (ըստ հեղինակի, նույն պահին ոճրագործին սպանում է մի հայ թիկնապահ)։ *Sadruddin El-Huseyni*, p. 40. Մ. Ուռհայեցի, էջ 203—204։ (Վերջինիս մոտ նշված չէ բերդատիրոջ անունը)։

Մանազկերտի ճակատամարտում բյուզանդական բանակի պարտությունը ընդհանրապես ոչ միայն ծանր հետևանքներ ունեցավ Բյուզանդիայի՝ այլև մասնավորապես Հայաստանի համար։ Պետք է նշել, որ Բյուզանդիայի պարտությունը և հետագայում 1070—1080-ական թթ. Հայաստանի գրավումը սելջուկների կողմից՝ անխուսափելի հետևանք էր այն նվաճողական անհեռատես քաղաքականության, որ Բյուզանդական կայսրությունը իրագործում էր Հայաստանում ու Վրաստանում Ժ և ԺԱ դարերի ընթացքում։ Սակայն Բյուզանդիան չկարողացավ վայելել իր ձեռք բերած ավարը։

Ինչպես տեսանք, 1030—1071 թթ. Հայաստանը մնալով անտերունչ, հիմնականում ասպատակվեց և նվաճվեց սելջուկների կողմից։ Թեև մի քանի հայ պետական միավորներ շարունակում էին մնալ Հայաստանում, ինչպիսիք էին Լոռի (Տաշիր Զորագետի), Սյունիքի և Արցախի թագավորությունները հյուսիսում և արևելքում, սակայն վերջիններս այնքան թուլացած էին, որ չկարողացան շեղոք պետության դեր կատարել։ Այդ թագավորությունները գտնվում էին Բյուզանդիա տանող ճանապարհներից դուրս, որոնք հիմնականում ձգվում էին Բյուզանդիայի կողմից կցման ենթարկված թագավորությունների տարածքով, հատկապես Վասպուրականով։ Այդ դերը չէին կարող կատարել նաև Ամյուկի և Աղթամարա Արծրունիների տոհմի շառավիղները հարավում և ոչ էլ Սասունի Մամիկոնյան-Թոնիկյանները հարավ-արևմուտքում[285]։

Մանազկերտի ճակատամարտում՝ Բյուզանդիայի պարտությամբ վերջ տրվեց նրա ազդեցությանը ոչ միայն ամբողջ Հայաստանում, այլև Կապադովկիայից արևելք (բացառությամբ Տավրոսի ամրացված վայրերի), գրավվեցին թուրքմենների կողմից, որոնք ավարառությունից հետո այլևս կարիք չունեին նահանջելու Ատրպատական։ Կարճ ասած, Մանազկերտի ճակատամարտի հետևանքով խորտակվեց Բյուզանդական տիրապետությունը արևելյան երկրներում, այդ թվում և Հայաստանում, որտեղ դարերի ընթացքում գոյացած բյուզանդական ռազմավարչական ապարատը նկատելիորեն կազմալուծվել էր վերջին քառասուն տարիների ընթացքում։

Հայաստանի նվաճումը սելջուկների կողմից է՛լ ավելի ուժեղացրեց հայերի զանգվածային գաղթը դեպի Կիլիկիա, որտեղ հայ ժողովուրդը համախմբվելով իր քաջաղուն զավակների շուրջը, ու համառ պայքար

285 Տե՛ս C. Toumanoff, Նշվ. աշխ., էջ 15—16։

մղելով սելջուկների ու Բյուզանդիայի դեմ, պետք է վերականգներ հայկական պետականությունը Կիլիկիայում (1080—1375 թթ.)։

Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության և սելջուկների արշավանքների հետևանքով գաղթած հայ իշխաններն ու նրանց հպատակները, որոնք մի ամբողջ դար հեղեղեցին փոքրասիական տարածքը, կրոնապես, ազգային և լեզվական տեսակետից Բյուզանդիայի նկատմամբ թշնամական տարր էին և անշուշտ այս հանգամանքն իր հերթին հեշտացնում էր Կապադովկիայի և ապա Փոքր Ասիայի մեծ մասի անցումը սելջուկյան լծի և հյուսիսային Ասորիքի անցումը ֆրանկների տիրապետության տակ[286]։

Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիան կորցրեց իր ռազմական ուժերի համարյա ամբողջ կարողությունը, որը հնարավորություն տվեց թուրքմեն բանակներին արագ կերպով նվաճել կայսրության արևմտյան նահանգները՝ Փոքր Ասիայում, հակառակ այն փաստին, որ ռազմական գործողությունները չէին կատարվում պետական կանոնավոր բանակների կողմից։

«1071 թ. Մանազկերտի պարտության ճակատագրական սարսափելի օրը,— ասում է պրոֆ. Գելցերը,— Բյուզանդական մեծ պետության մահվան օրն էր։ Թեև նրա հետևանքներն իրենց բոլոր ահավորությամբ անմիջապես զգալի չեղան, սակայն Փոքր Ասիայի արևելյան մասերը, Հայաստանը և Կապադովկիան, որոնք այնքան կայսրեր և զորապետներ էին տվել և կազմում էին պետության իսկական ուժը՝ ընդմիշտ կորած էին Կայսրության համար, և թափառական թուրքը հաստատեց հին հռոմեական փառահեղության ավերակների վրա իր վրանը»[287]։

Մանազկերտի ճակատամարտը մի կողմից հանդիսացավ Բյուզանդիայի արևելյան քաղաքականության մայրամուտը և մյուս կողմից վերջ տվեց ավելի քան կես հազարամյակ տևող հայ-բյուզանդական հարաբերություններին՝ բուն Հայաստանում։

286 Տե՛ս նույն տեղում, էջ 16։
287 H. Gelzer, p. 1010.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ՄԵԼԻՔՇԱՀԻ (1072—1092 ԹԹ.) ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ (1092—1194 ԹԹ.)

Մելիքշահի գահակալումը: Սուլայմանի հաղթանակները և սելջուկների իշխանության հաստատումը Փոքր Ասիայում: Թուրքմենական հորդաների գաղթը Փոքր Ասիա: Հայերի գաղթի ուժեղացումը դեպի Կապադովկիա և Կիլիկիա: Փիլարտոս Վարաժնունու վաղամեռիկ պետությունը: Մելիքշահի արշավանքը Անդրկովկաս: Կարսի վերջնական գրավումը: Մրվանյան ամիրայության վախճանը: Կրոնական ու ճարկային քաղաքականությունը: Նիզամ ալ-Մուլքի մեծ դերը կառավարման գործում: Սելջուկյան աշխարհակալության տրոհումը մի շարք մելիքությունների և ամիրայությունների (XII—XIII դդ.):

Ալփասլանի վաղաժամ մահը անակնկալի չբերեց սելջուկյան տիրակալներին: Ինչպես նշեցինք վերևում, Ալփասլանը դեռևս 1064 թ. սուլթանության թագաժառանգ էր նշանակել իննամյա իր որդուն՝ Մելիքշահին և նրա դաստիարակությունն ու խնամակալությունը հանձնել էր պետական մեծ գործիչ, Կայսրության հիմնադիր սյուներից մեկի՝ Նիզամ ալ-Մուլք (—«տերության կարգավորում») Կվամ ադ-Դին ու ադ-Դաուլա[1] մականունը, «Վզրուկ խաւճա»[2] աստիճանը և դեռևս ոչ մի վեզիրին չշնորհված «Ռազիա ամիր ալ-մումինին» տիտղոսը կրող, Մելիքշահի Աթաբեգ[3], պատմության մեջ հանրածանոթ մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքին:

Հայ և ասորի հեղինակների մեծ մասը, ելնելով հոգևորականության վերին խավերի շահերից, գովասանքով են խոսում Մելիքշահի մասին,

---

1 *El-Bundari*, p. 57. *Տե՛ս* Сиасет-намэ, стр. 158.

2 *«Ժամանակագրություն Ստեփանոսի Օրբելյանի», Երևան, 1942, էջ 15։*

3 *Сиасет-намэ*, Книга о правлении вазира XI столетия Низам ал-Мулька. Перевод Б. Н. Заходера, М., 1949. стр. 242.

կոչելով նրան բարի, գթասիրտ, քրիստոնյաների նկատմամբ հեզահամբույր թագավոր՝ արդարամիտ, ազատաբարո և մեծախորհուրդ[4]։ Նույն հեղինակները Մելիքշահի տիրակալությունը որակավորում են որպես սելջուկյան աշխարհակալության ամենահզոր ու խաղաղ ժամանակաշրջանը և այն վերագրում՝ Մելիքշահի տիրակալական բարեմասնություններին և ընդունակություններին։ Մինչդեռ մահմեդական աղբյուրների մեծ մասը այն վերագրում է Նիզամ ալ-Մուլքի կառավարման արժանիքներին[5]։ Պետք է նշել, որ դեռևս սելջուկյան առաջին սուլթան Տուղրիլի ժամանակվանից պետական կառավարման համակարգը ենթարկվել էր տեղական ժողովուրդների՝ պարսկական և արաբական մշակույթի ազդեցությանը[6]։ Ուստի, Մելիքշահի ժամանակ իրանական և արաբական երկրների ականավոր ներկայացուցիչները խոշոր դեր էին խաղում Մելիքշահի կառավարության մեջ։ Այդպիսիներից էր պարսիկ Նիզամ ալ-Մուլքը[7]։

Այսպիսով, Ալփասլանի մահից հետո Նիզամ ալ-Մուլքի բարձր խնամակալության և հովանավորության ներքո գահ բարձրացող Մելիքշահը (1072—1092) երիտասարդ լինելու[8] և մյուս կողմից իր հորեղբոր Քիրմանի Մելիք Կավուրդի (Կարա Արսլան) գահակալական նկրտումները չեզոքացնելու համար բանակի զինվորներին և զինվորական հրամանատարական անձնակազմին սիրաշահելու նպատակով յոթհարյուր հազար ոսկի դինարով ավելացրեց նրանց ռոճիկը և արքայազուն ամիրաներին բաշխեց մեծ քանակությամբ թանկարժեք նվերներ և հողակտորներ։ Այնուամենայնիվ բանակում Կավուրդի կողմնակիցները շատ էին։ Նրանք նամակներ էին գրում Կավուրդին և հրավիրում՝ տիրելու գահին։ Բանակում տեղ գտած կենտրոնախույս տրամադրություններին քաջատեղյակ Նիզամ ալ-Մուլքը Կավուրդի գահին տիրելու փորձերը ձախողեցնելու նպատակով մայրաքաղաք է բերում Մելիքշահի և իրեն հավատարիմ ամիրաների զորքերին, այդ թվում Արտուխ բեգին, որը Մանազկերտի ճակատամարտից հետո 1071—1073 թթ. զբաղված էր Փոքր Ասիայի հեռավոր վայրերի նվաճմամբ ու ավարառությամբ։

---

4 Մ. Ուռհայեցի, *էջ 205*։ Ս. Անեցի, *էջ 115*։ Ս. Սպարապետ, *էջ 80*։ Կ. Գանձակեցի, *էջ 106*։ Մ. Ասորի, *էջ 406*։

5 *El-Bundari*, p. 57—58. Sadruddin el-Huseyni, p. 45—46.

6 Հ. Մանանդյան, *Նշվ. աշխ., հ. Գ, էջ 67*, *I. Kafesoglu*, Melikşah devrinde, p. 136. 165—170.

7 *I. Kafesoglu*, Meliksah devrinde, p. 136—137.

8 *Մելիքշահը ծնվել է 1055 թ., օգոստոսի 6-ին։ Տե՛ս El Bundari*, p. *56*։

1073 թ., Կավուրդը արշավում էր Ռեյի վրա, Մելիքշահի զորքերը Նիզամ ալ-Մուլքի հրամանատարության ներքո, Համադանի մոտ պարտության մատնեցին Կավուրդին և գերի վերցրեցին նրան։

Մելիքշահի զինվորների մի մասը գերի Կավուրդի վրանի առաջ ի նպաստ նրա գահակալմանը, ցույցեր կատարեցին։ Նրանք պահանջում էին ավելացնել Իկթան և ռոճիկը։ Նիզամ ալ-Մուլքը խուսափելով հետագա բարդություններից, Մելիքշահի համաձայնությամբ բավարարեց նրանց պահանջը, երկրորդ անգամ ավելացնելով իկթան[9] և պիշեգանին (ռոճիկը)[10]։ Հավանական է, որ Նիզամ ալ-Մուլքի կարգադրությամբ նույն գիշերը թունավորվելով՝ սպանվում է Կավուրդը։

Մելիքշահը որպես հատուցում Նիզամ ալ-Մուլքին շնորհեց Թուս նահանգի իկթադարական իրավունքը և ապա մեծ վեզիրի աստիճանը՝ դարձնելով նրան իրեն աթաբեգ[11]։

Ալփասլանի մահը, Կավուրդի և Մելիքշահի եղբայրներ Այազի և Տեկիշի գահի շուրջ հարուցած երկպառակություններն ու կռիվները նպաստավոր պայմաններ ստեղծեցին Կարախանիների և Ղազնեվիների համար՝ հարձակվելու սելջուկյան արևելյան սահմանների վրա։ Մելիքշահը 1074 թ. մեծ բանակով արշավեց և կանգնեցրեց նրանց առաջխաղացումը[12]։

1072—1075 թթ., այն ժամանակ, երբ Մելիքշահը զբաղված էր իր գահի կայունացմամբ և արևելյան սահմանների ամրապնդմամբ, կարևոր դեպքեր էին տեղի ունենում Անդրկովկասում և Բյուզանդիայի Փոքր Ասիայի հարավարևմտյան նահանգներում։ Այդ պատճառով էլ նա շտապ վերադառնում է Սպահան՝ կարգավորելու համար դրությունը վերոհիշյալ նահանգներում։

Ինչպես նշվեց, Մանազկերտի ճակատամարտից հետո է՛լ ավելի վատացավ Բյուզանդիայի ներքին և արտաքին քաղաքական դրությունը։ Պայքարը գահը զավթած Միքայել է Դուկասի և Ռոմանոս Դիոգենեսի միջև ավարտվեց վերջինի մահով։ Թեև Ալփասլանը Դիոգենեսի «վրեժը լուծելու» համար կոչ արեց թուրքմեններին ներխուժել բյուզանդական տարածքը, սակայն իր մահվան պատճառով չկարողացավ նախաձեռնել

9 Իկթայի մասին տե՛ս սույն աշխատության «հողատիրության ձևերը» հատվածը։
10 Տե՛ս El-Bundari, p. 59. Տե՛ս Сиасет-Намэ, прим., стр. 106—287, 177—325.
11 Տե՛ս O. Turan, Selcuklular tarihi, p. 142. Նիզամ ալ-Մուլքը Մելիքշահի աթաբեգ էր նշանակված Ալփասլանի կողմից։
12 Sadruddin el-Huseyni, p. 59—63. El-Bundari, p. 49.

որևէ արշավանք։ Արդարև, նրա կոչը գրգռեց թուրքմենների կողոպտչական և ավարառական մոլուցքը։ Շուտով սրանք սկսեցին իրենց պարբերական ներխուժումները Բյուզանդիայի հարավարևմտյան սահմանները։ Ռազմական տեսակետից Բյուզանդիան չէր կարող դիմադրություն ցույց տալ, և այն նվազ ուժը, որ մնացել էր՝ հազիվ էր պահում նրա գոյությունը կենտրոնում. իսկ թուրքմենների կողմից մեկուսացված վայրերում բյուզանդական զորավարները կռվում էին մեկը մյուսի դեմ և հաճախ օգնության էին կանչում թուրքմեններին։ Կապադովկիայում, որի բնակչության մեծ մասը հայեր էին և մասամբ ճնշված՝ բյուզանդացիներից, չէին օգնում բյուզանդական զորավարներին։ Բյուզանդիայի բախտով բոլորովին չէին շահագրգռված նաև հարավային նահանգներում ապրող արաբախոս միաբնակ ասորիները, որոնք ավելի շատ կապված էին այդ նահանգներին սահմանակից արաբական երկրների՝ Ասորիքի և Միջագետքի ժողովուրդների հետ, քան թե հույների։

Թուրքմենները որոշ նկատառումով նոր տարր էին այդ վայրերում։ Ինչպես նշվեց, մինչ Մանազկերտի ճակատամարտը ընկած ժամանակաշրջանը թուրքմենները չէին հաստատվում նվաճված վայրերում, այլ ասպատակությունից հետո վերադառնում էին հարևան մահմեդական երկրները՝ Իրան և Ատրպատական։ Ուստի, նրանց պատճառած գլխավոր չարիքը ավարառությունն ու գերեվարությունն էր։ Այն թուրքմենները, որոնք հաստատվում էին լեռնահովիտներում, չունենալով կազմակերպված պետություն, չէին հարկադրում քաղաքային տեղական բնակչությանը, ինչպես քաղաքներում հաստատված բյուզանդական պետական վարչական անձնակազմը, որոնք վարում էին ծանր հարկային ճնշում ու կրոնադավանաբանական շարանենգ և խորամանկ քաղաքականություն։ Թուրքմենն իր կյանքի մեծ մասն անցկացնում էր ասպատակության մեջ, քրիստոնյաների դեմ մղելով սրբազան պատերազմ, որն իր բնույթով ավարառական էր։ Թուրքմենական «ռազզիան»՝ ակինջին նման էր մահմեդական՝ խալիֆայական «ղազի»-ին և բյուզանդական «ակրիտես»-ին[13]։

Սկսած 1072 թվականից Բյուզանդական կայսրության նահանգները, որոնք գտնվում էին Կապադովկիայից արևելք (բացառությամբ Տավրոսի ամրացված վայրերը), գրավվեցին թուրքմենների կողմից։ Վերջիններս ավարառությունից հետո այլևս կարիք չունեին նահանջելու դեպի Իրան

13 Cl. Cahen, La première pénétration, p. 32. Д. Е. Еремеев, Этногенез турок, М., 1970, стр. 112.

և Ատրպատական։ Սուլթանի դեմ ապստամբած թուրքմենները սկսեցին գրավել նաև Փոքր Ասիայի կենտրոնական նահանգները[14], Այդ հնարավոր դարձավ, քանի որ Մանազկերտի ճակատամարտի հետևանքով վերջնականապես կործանվել և կազմալուծվել էր բյուզանդական սահմանային պաշտպանությունը, որը ինչպես տեսանք վերևում, սկսվել էր դեռևս XI դ. սկզբից Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած նվաճողական քաղաքականության հետևանքով, որն ավարտվում էր հայ բնակչության գաղթեցումով դեպի Կապադովկիա, Կիլիկիա և այլ փոքրասիական նահանգներ։

Արդարև, Մանազկերտի ճակատամարտից հետո բյուզանդական փոքրասիական նահանգներում Կ. Պոլսի գահի հավակնորդների միջև տեղի ունեցող ներքին երկպառակությունները ոչ միայն էլ ավելի էին թուլացնում Բյուզանդիայի ռազմական հզորությունը, այլև պայմաններ էին ստեղծում թուրքմեններին գրավելու Կապադովկիայից արևմուտք ընկած տարածքը և նույնիսկ հաստատվելու այդ վայրերում։ Այսպես, 1072 թ., օգտվելով Ռոմանոս Դիոգենեսի մահից հետո Բյուզանդիայում սկսած գահակալական կռիվներից, սելջուկյան նշանավոր ռազմական և քաղաքական գործիչ Արտուխ բեգը սկսեց նվաճումներ կատարել Հալիս գետի ավազանում։ Նույն տարում պարտության է մատնում Իսահակ Կոմնենոսի գլխավորած բյուզանդական բանակը և գերի վերցնում՝ մի շարք հրամանատարների։ Ֆրանկ վարձկան զորքերը Նորմանական հրամանատար Ուրսելի (Ռուսելի) գլխավորությամբ Կեսարիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում լքում են Իսահակ Կոմնենոսի բանակը, որի հետևանքով բյուզանդական բանակը պարտության է մատնվում և Իսահակը գերի է ընկնում։ Վերջինիս եղբայր Ալեքսիոս Կոմնենոսը մեծ դժվարությամբ կարողանում է Կեսարիայից Անկարայի արևմուտքը փոխադրել սելջուկներից պարտության մատնված բյուզանդական բանակի մնացորդները։ Ուրսելին պատժելու նպատակով Միքայել Է. Դուկակի մնացորդները 1073 թ. սկզբներին իր հորեղբոր Կեսար Դուկասին մի բանակով ուղարկում է նրա դեմ։ Ուրսելը ցանկանում էր բյուզանդական գահ բարձրացնել Հովհաննես Դուկասին և միաժամանակ Փոքր Ասիայում ստեղծել մի առանձին պետություն։ Կեսար Դուկասը իր հերթին ձգտելով գահակալության, անցնում է Ուրսելի կողմը։ Կայսրը ստեղծված սպառնալիքի ներքո Արտուխ բեգին հրավիրում է օգնության։ Վերջինս Նիկոմեդիայի մոտ պարտության է մատնում Ուրսելի և Կեսար Դուկասի միացյալ ուժերին։ Թեև Ուրսելը և Կեսար Դուկասը գերի են ընկնում, սակայն հակառակ բյուզանդական կայսրի կամքին Արտուխ բեգը ազատ է արձակում Ուրսելին, որն իր զորքերով քաշվում է դեպի Արևելք։ Վերջինիս ապստամբությունը ճնշելու համար Ալեքսիս Կոմնենոսը ստիպված էր կաշառելու միջոցով օգնության հրավիրել մի ուրիշ ցեղի թուրքմենական առաջնորդ Տուտակին, որը լավ հարաբերություններ մեջ էր գտնվում Ուրսելի հետ։ Օգտվելով այս խառնաշփոթ վիճակից և կայսրի դեմ ապստամբած բյուզանդական զորավարներին հետապնդելու պատրվակով, Արտուխ բեգը իր նվաճումները կարողանում է ծավալել մինչև Զմյուռնիայի ծովածոցը[15]։

Ինչպես նշվեց, Մելիքշահի հորեղբոր՝ Կավուրդի ապստամբությունը ճնշելու նպատակով Արտուխ բեգը[16] Նիզամ ալ-Մուլքի հրավերով վերադարձել էր Սպահան։ Ահա այս շրջանում է, որ աչքի են ընկնում Գիլմուշի որդիները, հատկապես Սուլայմանը, Մելիքշահից անկախ՝ իր շուրջը համախմբելով գահին անհնազանդ թուրքմեններին, օգտվելով բյուզանդական զորավարների գահակալական երկպառակություններից, նշանակալից նվաճումներ կատարելով Փոքր Ասիայի արևմտյան նահանգներում հիմք է դնում. այսպես կոչված, Ռումի կամ Իկոնիայի սելջուկյան սուլթանության[17]։

Ալփասլանը 1064 թ. գահակալական կռիվների ժամանակ պարտության էր մատնել Գիլմուշին և սպանել նրան։ Այնուհետև Գիլմուշի որդիներին կենտրոնից հեռացնելու նպատակով աքսորել էր Բյուզանդիայի սահմանակից Եդեսիայի շրջանը։ Ընդ որում, մինչև Արտուխ բեգի 1073 թ. Սպահան վերադառնալը նրանք դեռևս շարունակում էին աննշան ապստամբություններ կատարել այդ շրջանում։ Արտուխ բեգի վերադառնալուց հետո, առանց սելջուկ առաջնորդի՝ լքված թուրքմեն ջոկատ-

14 Մ. Ասորի, էջ 405—410։

15 Վերոհիշյալ դեպքերի համար տե՛ս C. Cahen, La première pénétration, p. 33. M. Yinanc, Meliksah devrinde, p. 82—86. O. Turan, Selçuklular tarihi, p. 198. I. Kafesoglu, p. 62—63. F. Chalandon, Alexis Comnène, I, Paris, 1910, p. 29—31, Anne Comnene, Alexiade, Paris, 1937, I, p. 14—15. Հ. Մանանդյանը Արտուխ բեգի վերոհիշյալ բոլոր ռազմական և նվաճողական գործողությունները սխալմամբ վերագրում է Գիլմուշի որդուն՝ Սուլեյմանին, որը, ինչպես կտեսնենք, դեռևս 1072—1073 թվականներին գտնվում էր Եդեսիայի շրջանում։ Տե՛ս Հ. Մանանդյան, հ. գ., էջ 66։

16 Արտուխ բեգը հետագայում Միջագետքում հիմնում է Արտուխյան սելջուկ ամիրայությունը։ Տե՛ս Մ. Ասորի, էջ 408։

17 Այս սուլթանությունը կոչվում է նաև Փոքր Ասիայի սելջուկյան սուլթանություն։

ները սկսեցին համախմբվել Գիլմուշի չորս որդիների շուրջը։ Վերջիններս օգտվելով (1072—1074 թթ.) Մելիքշահի գահակալմանը հաջորդող ժամանակաշրջանում իշխանությունը զավթելու համար մղվող պայքարից սկսեցին նվաճումներ կատարել Ասորիքում և Փոքր Ասիայում։ Գիլմուշի երկու որդիները միացել էին Ասորիքում Մելիքշահի դեմ ապստամբած և Եգիպտոսի Ֆաթիմյաններին հարած Շոկլի ամիրայի ուժերին և 1074 թ. պարտության էին մատնվել Ցավղու թուրքմենների առաջնորդ Աթսըզի կողմից և գերի ընկնելով նրա ձեռքը ուղարկվել էին Մելիքշահին[18]։ Գիլմուշի մյուս որդիները՝ Մանսուրն ու Սուլայմանը, որոնք չէին մասնակցել 1074—1075 թթ. Ասորիքում տեղի ունեցած դեպքերին, իրենց շուրջը համախմբելով թուրքմեններին, մտել էին Փոքր Ասիայի Կապադովկիայից արևմուտք գտնվող բյուզանդական նահանգները և օգտվելով բյուզանդական զորավարների երկպառակություններից 1075 թ. նվաճել էին Նիկիա (Իզնիկ) քաղաքը և այն դարձրել իրենց մայրաքաղաքը[19]։

Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիայի պարտությունը մի կողմից և մյուս կողմից 1072—1074 թթ. Արտուխ բեգի և Սուլայմանի Փոքր Ասիայում կատարած խոշոր նվաճումները՝ քրիստոնյա աշխարհին հայտնի Նիկիա քաղաքի գրավումն ու Հռոմեական Կայսրության մայրաքաղաք Կ. Պոլսո նվաճման ենթարկվելու լուրջ սպառնալիքը՝ մի պահ սթափեցրեց գահակալական երկպառակությունների պատճառով ծվատվող Բյուզանդիայի՝ տիրակալ Միքայել Է. Դուկաս կայսրին։ Կայսրը 1074 թ. կոչ արեց Հռոմի Գրիգորիոս Է. Պապին օգնության հասնել Բյուզանդիային և սելջուկ թուրքերի դեմ խաչակրաց արշավանք սկսել։ Միքայել Է. Դուկասը այդ օգնության դիմաց խոստանում էր իրագործել հունադավան կաթոլիկ եկեղեցիների միությունը։ Թեև այս առաջարկը մեծ գոհունակությամբ դիմավորող պապը, հատուկ կոնդակներով դիմեց եվրոպական մի շարք թագավորների, քրիստոնյա եկեղեցիների ու քրիստոնյա ժողովուրդների՝ խաչակրաց արշավանք կազմակերպել արևելյան կայսրության փոքրասիական նահանգները նվաճող սելջուկների դեմ, սակայն պապերի ու եվրոպական թագավորների միջև առաջնության համար ծավալվող պայքարի պատճառով, այն իրականացավ միայն 20 տարի հետո[20]։

Ջատանալով կաթոլիկ Եվրոպայի ռազմական օժանդակությունը, հուսակտուր Միքայել Է. Դուկաս կայսրը Մելիքշահի հետ հաշտություն կնքելու նպատակադրումով, 1074 թ. կեսերին դիմեց Բաղդադի խալիֆայի միջնորդությանը։ Այդ նպատակով 1075 թ. թանկարժեք նվերներով հատուկ դեսպան ուղարկեց Ատրպատականում գտնվող սուլթանին[21]։

Սուլայման շահը, օգտվելով 1077—1078 թթ. Բյուզանդիայում ծավալվող գահակալական կռիվներից, իր նվաճումները հասցրեց մինչև Խրիստոպոլիս[22] և է՛լ ավելի ամրապնդեց իր պետությունը։ Այսպիսով, բյուզանդական անճարակ կայսրների ու փառամոլ զորավարների գահի շուրջ ծավալած երկպառակությունները օգնում էին Ռումի սուլթանության բարձրացմանն ու ամրապնդմանը, ուստի ավելորդ չենք համարում ներքևում բերել Սուլայմանի այդքան արագ հզորացմանը սատարող իրադարձությունները։

Նախ պետք է նշել, որ Սուլայմանի ռազմական և քաղաքական գործունեությունը չէր համաձայնեցված Մելիքշահի հետ։ Վերջինս ոչ մի շահ չուներ, որ սելջուկյան ընտանիքի ապստամբ անդամներից որևէ մեկը ընդուներ քրիստոնյա պետության հովանավորությունը։ Ընդհակառակը, Մելիքշահը Բյուզանդիայից պահանջեց բռնել և իրեն հանձնել

---

18 Chronique de Michel le Syrien, p. 179.

19 Ս. Ասորի, էջ 405։ *Abul Faraj*, p. 226—227· *Anonim*, Selçuknâme, Ankara, 1952, p. 36—37. *Azimi Tarih*, Տե՛ս *Cl. Cahen*, I. A., 1938, p. 361. Տե՛ս *O. Turan*, Selçuklular tarihi, p. 199. *Մի շարք հեղինակներ, հենվելով միայն բյուզանդական աղբյուրների վրա, Սուլեյմանի նվաճումները և Ռումի սուլթանության հիմնադրումը նշում են 1077, 1078, 1080 և 1081 թթ.։ Տե՛ս J. Laurent*, Byzance et les origines du Sultanat de Roum, Paris, 1930, p. 180—181. *M. Yinanc*, p. 109.

20 *S. Runciman*, A. History of the Crusades Cambridge, 1951—1952, V, I, p. 98. *Պետք է նշել, որ Եվրոպան առաջին անգամը չէր, որ «անհավատներիս» մահմեդականների դեմ լսում էր մարտահրավերի կոչ պապերի կողմից։ Երուսաղեմը մահմեդականների ձեռքից ազատագրելու համար Հռոմի պապերի կողմից արված առաջին հրավերը դալիս է Սիլվեստր Բ-ի կողմից (999—1003)։ Պիզան (քաղաք իտալական) ընդառաջելով հրավերին՝ ցամաքահանումի փորձ է կատարում Ասորիքի ծովեզերքը։ Տե՛ս Ch. Mills*, The History of the Crusades, Philadelphia, 1826, p. 21. *T R. Archer* and *Ch. Kingsford*, The Crusades, London, 1894, p. 20. *A. Vasiliev*, History of the Byzantine, Empire, v. 2, p. 395. *Իսկ 1063 թ. Ալեքսանդր Բ և 1073 թ. Գրիգոր Է պապերի կողմից խաչակրաց արշավանքի կոչեր են արվում եվրոպական թագավորներին ու իշխաններին՝ կռվելու Սպանիայի մահմեդականների դեմ։ 1078 և 1080 թթ. քրիստոնյաները նոր արշավանքներ են կազմակերպում արաբների դեմ, որոնցից երկրորդը վայելում էր Գրիգոր Է-ի քաջալերանքը։ Տե՛ս* Նելսոն Հ. Քասունի, *Կիլիկիոյ Հայկական իշխանապետությունը Մերձավոր Արևելքի քաղաքական հոլովույթին մէջ (1080—1137)։ Պէյրութ, 1974, էջ 42—43։*

21 *Sadruddin el-Huseyni*, p. 63—64.

22 *Այժմ Սկյուդար։*

ապստամբ Սուլայմանին[23]։ Այդ նպատակով 1078 թ. Մելիքշահը իր նշանավոր ամիրաներից մեկին՝ Բաղդադի շահնե Բուրսուխին, մի բանակով առաքում է Փոքր Ասիա՝ պատժելու համար Սուլայմանին։ Ի դեպ 1077 թ., երբ Նիկեփոր Վոտանիատես զորավարը գահը գավթելու նպատակով ապստամբեց Միքայել Է. Դուկաս կայսեր դեմ, Սուլայմանի ռազմական օժանդակությամբ դարձավ կայսր (1078—1081 թթ.)։ Ուստի, Բուրսուխի արշավանքի ժամանակ 1078 թ. դեռևս շարունակում էր Վոտանիատեսի և Սուլայմանի ռազմական դաշնակցությունը։ Թեև Բուրսուխին հաջողվում է մարտի ժամանակ գերանել Սուլայմանի եղբոր Մանսուրին, սակայն ապարդյուն է անցնում Բուրսուխի ջանքերը Սուլայմանին ենթարկելու Մելիքշահին[24]։

Բուրսուխ ամիրայի վերադառնալուց հետո շուտով վատացան Վոտանիատեսի և Սուլայմանի հարաբերությունները վերջինիս կողմից կայսեր դեմ ապստամբած զորավար Մելեսիանոսին ռազմական օժանդակություն ցուցաբերելու պատճառով։ Օգտվելով առիթից, Սուլայմանը ընդարձակեց իր սահմանները մինչև Փոյուգիա։ Սուլայմանին պատժելու համար 1080 թ. Վոտանիատեսը մի բանակ ուղարկեց Նիկիան գրավելու։ Արշավանքից վերադարձող Սուլայմանը պարտության մատնեց բյուզանդական զորքը և իր նվաճումները հասցրեց նեղուցների ափերը, այնտեղ հիմնելով մաքսատուն՝ **նավերի երթևեկությանը** հսկելու համար[25]։

Մի կողմից Սուլայմանի հզորացումից ահաբեկված, մյուս կողմից Բալկանյան թերակղզում պածինակների (պեչենեգների) դեմ արշավանք կազմակերպելու և այդ առթիվ իր թիկունքը ապահովելու նպատակով, 1081 թ. գահ բարձրացած Ալեքսեյ Կոմնենոսը վերանորոգեց դաշինքը Սուլայմանի հետ և վերջինիս Մարմարայի ափերից հեռացնելու միտումով դրդեց նրան գրավել Բյուզանդական կայսրությունից անկախացած՝

23 *Abul Faraj*, p. 227. Անհավանական է թվում Հ. Մանանդյանի այն ենթադրությունը, որ Մելիքշահը իր «կռիվը Բյուզանդիայի դեմ հանձնարարեց Գելմուշի որդուն՝ Սուլեյմանին, որը Տուղրիլ սուլթանի թոռն էր»։ Տե՛ս Հ. Մանանդյան, հ. Գ, էջ 66։ Միաժամանակ պետք է նշել, որ Սուլեյմանը ոչ թե Տուղրիլի թոռն էր, այլ նրա հորեղբոր՝ Իսրայել Ասլան Եարղուի թոռն էր։

24 *Abul Faraj*, p. 227. Ըստ մահմեդական որոշ հեղինակների, Բուրսուղ ամիրայի արշավանքը ուղղված էր Բյուզանդիայի դեմ։ Տե՛ս *El-Bundari*, p. 70. *Sadruddin el-Huseyni*, p. 72—73.

25 *O. Turan*, Selçuklular tarihi, p. 103.

Փիլարտոս Վարաժնունու և մի շարք այլ հայ իշխանների տիրապետության տակ գտնվող՝ դաշտային Կիլիկիայի և Կապադովկիայի քաղաքներն ու ամրոցները, որոնց հետ Կ. Պոլիսը պահպանում էր անկայուն հարաբերություն[26]։ Ի դեպ, պետք է նշել, որ թեև աղբյուրները սկսած 1080 թ. Սուլայմանին կոչում են սուլթան, սակայն այդ հորջորջումը չէր ճանաչված ոչ Մելիքշահի և ոչ էլ Բաղդադի խալիֆայի կողմից։

Պետք է նշել, որ Սուլայմանի և թուրքմեն մյուս առաջնորդների նվաճողական քաղաքականության իրականացմանը սատարում էին ոչ միայն Բյուզանդիայում ծավալվող դահակալական կռիվները՝ այլև Մանազկերտի ճակատամարտից հետո սուլթանության արևելյան երկրամասերից՝ Խորասանից ու Իրանից Ատրպատականի վրայով թուրքմենական հորդաների հոսքը դեպի Հայկական լեռնաշխարհը և այնտեղից էլ Փոքր Ասիայի արևմտյան տարածքը։

Եթե սելջուկյան սուլթանության կազմավորումից (1040 թ.) մինչև Մանազկերտի ճակատամարտը (1071 թ.) ընկած երեսուն տարիների ընթացքում թուրքմենները բազմաթիվ անգամ ներխուժել էին Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավարևմտյան տարածքն ու վերադարձել էին Իրան և Ատրպատական, ապա Մանազկերտի ճակատամարտից հետո բյուզանդացիների համատարած նահանջի հետևանքով նրանք՝ թուրքմեն քոչվոր ու խաշնարած արյունարբու ոհմակները այլևս կարիք չունեին վերադառնալու իրենց որջերը։ Այսպիսով, XI դ. 70-ական թվականներին՝ Շիրվանի ու Առանի, հարավարևմտյան Վրաստանի ու Հայկական լեռնաշխարհի լեռնահովիտները, թեկուզ ժամանակավորապես, գրավվեցին ու ողողվեցին թուրքմեն քոչվորական ցեղերի կողմից։ Ասում ենք ժամանակավորապես, քանի որ դրանց օգնությամբ Հայաստանի մի շարք քաղաքներում՝ Բաղեշում, Կարսում, Կարինում, Խլաթում, Երզնկայում, Նփրկերտում սելջուկյան ամիրայությունների կազմավորումից հետո նրանց մեծ մասը քոչելու էին Բյուզանդիայի Փոքր Ասիայի արևմտյան նահանգները՝ համալրելու Ռումի սուլթանության և Ասորիքում՝ Հալեպում և Դամասկոսում 70—80-ական թվականներին ստեղծված սելջուկյան պետությունների բանակների նոսրացող շարքերը, որոնք սկսած XI դ. վերջից մահու և կենաց պայքար էին մղելու խաչակիրների դեմ։ Բյուզանդական, վրացական ու հայկական ժամանակագիրների հա-

26 *Anne Comnene*, p. 69—71. F. *Chalandon*, Alexis Comnene, p. 66—72. *Cl. Cahen*, La première pénétration, p. 43—44. *O. Turan*, Selçuklular tarihi, p. 102.

զորդումներից երևում է, որ 70-ական թվականներին Թուրքեստանից, Իրանի և Ատրպատականի վրայով սկսվել է թուրքմենների մեծ գաղթ, Բյուզանդական անանուն մի ժամանակագիր գրում է «ցամաքը և ծովը, կարծես ամբողջ աշխարհը անհավատ բարբարոսների (թուրքմեններ) կողմից գրավվեց և ավերվեց։ Նրանք Արևելքի (Փոքր Ասիայի) բոլոր գյուղերն ու բնակավայրերը՝ եկեղեցիների հետ միասին ավարառության մատնեցին և նվաճեցին»[27]։ Մի այլ ժամանակագիր վկայում է, որ թուրքմենները ի տարբերություն նախկինի, որպես ավարառու չէ որ գրավեցին Փոքր Ասիան, այլ՝ որպես իսկական տեր[28]։

Ըստ Միքայել Ասորու, թուրքմենների առջևից փախչող հույները Միքայել է. Դուկաս կայսրի կարգադրությամբ տեղափոխվեցին ծովից այն կողմ Բալկանյան թերակղզին։ Այսպիսով, կայսրը նպաստեց առանց բնակչության մնացած այս վայրերում նրանց տեղավորմանը[29]։

1076 թ. Քարթլին սելջուկյան ամիրա Սևթեքինի կողմից գրավվելուց հետո «թուրքերը տեղավորվեցին Աղվանքի (Առանի) երկրների բերդերում, բնակավայրերում և հովիտներում»[30]։

Որ Ատրպատականը, Շիրվանն ու Աղվանքը (Առանը) այդ ժամանակաշրջանում ևս շարունակում էին կամուրջի դեր կատարել Միջին Ասիայից դեպի Փոքր Ասիա քոչող թուրքմեն հրոսակներին, այդ մասին են վկայում վրացական աղբյուրները։ «Թուրքերը,— գրում է վրաց ժամանակագիրը, Տփղիսից մինչև Պարտավ այս գեղեցիկ վայրերում վրաններ էին խփում։ Անթիվ անհամար էին ձիերը, ջորիները, ուղտերն ու ոչխարները։ Այս վայրերում լավ կյանք էին վարում։ Քաղաքների առևտուր էին կատարում ու երբեմն մտնելով մեր երկիրը, ավարառությամբ ու գերեվարությամբ էին զբաղվում։ Ձմռանը մնում էին Կուր գետի եզերքին, իսկ գարնանը բարձրանում էին հայոց (Սոմխիթի) Արարատյան լեռները... Կարծես թուրքերը աշխարհի բոլոր կողմերից ժամադրվել էին հանդիպելու այս վայրերում։ Ներառյալ սուլթանը ոչ ոք չէր կարող նրանց այս վայրերից հանել, քշել և վնաս հասցնել»[31]։ Վրաց նույն ժամանակագիրը Անդրկովկաս և Արևմտյան Հայաստան թուրքմենների կատարած արշավանքներից մեկի մասին հաղորդում է հետևյալ սրտա-

[27] Տե՛ս A. Vasilief, Histoire de l'Empire Byzantin, Paris, 1932, I, p. 468.

[28] Նույն տեղում։

[29] Chronique de Michel le Syrien, p. 160, 172.

[30] Sadruddin, el-Huseyni, p. 76.

[31] M. Brosset, Histoire de la Géorgie, t. I, p. 359.

մորմոք վկայությունը։ Ըստ նրան, «Թուրքերի բազմացման և հզորացման պատճառով հույները Արևելքում (իմա՝ Հայաստան և Իբերիա—Ս. Բ.) իրենց քաղաքներն ու բերդերը թողնելով փախչում են։ Այս երկրամասերը թուրքերին են թողնում և նշանց հնարավորություն են տալիս հաստատվելու այնտեղ։ Մեզ սահմանակից երկրներում գտնվող թուրքերը գրավեցին բոլոր կողմերը։ Ահմադ ամիրայի հրամանատարությամբ Կարսը գրավելուց հետո Գեորգի թագավորին ստիպեցին փախչել և շատ գերիներ ու ավար ձեռք բերեցին։ Վերադարձի ճանապարհին նրանք հանդիպեցին Ռումի երկրները չվող թուրքմենների բազմությանը։ Ցույց տալով իրենց ձեռք բերած ավարն ու գերիները, կոչ արեցին նրանց արշավել Վրաստան, որը լի է մարդկանցով և հարստությամբ։ Այսպիսով, 1080 թ. հունիսին Քարթլին, Շավշեթը, Աջարիան մինչև ծովի ափը թուրքերով լցվեց։ Հույների պետությունը փլուզման վիճակում էր գտնվում, որովհետև թուրքերը ծովից այս կողմ գտնվող բոլոր երկրները (իմա՝ Հայաստան և Փոքր Ասիա) գրավել էին[32]։

Բյուզանդացիների՝ Հայաստանից և Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններից դեպի արևմտյան նահանգները և Բալկանյան թերակղզի քաշվելու ժամանակ հայերն էլ թուրքերի առջևից փախչելով գաղթում էին դեպի Կապադովկիա և Կիլիկիա, մեծացնելով հայ գաղթականների թիվը, որոնք դեռևս XI դ. սկզբից Բյուզանդիայի կողմից հայերի գաղթեցման քաղաքականության հետևանքով հաստատվել էին այդ վայրերում։

Այս դեպքերին ականատես Ուռհայեցին արձանագրում է հետևյալ վկայությունը. «Իսկ յորժամ բարձրացաւ թուականութիւնս Հայոց ի յամս ՇԻԸ՝ եղև սով սաստիկ ընդ ամենայն աշխարհս[33] խաչապաշտից յայնկոյս ծովուն Ովկիանոսի, գրում է Մ. Ուռհայեցին, վասն զի արեանարբու և գազանացեալ ազգն թուրքաց տարածեցաւ ընդ ամենայն երեսս երկրի որ ոչ մնաց գաւառ ի խաղաղութեան, այլ կայր մատնեալ ամենայն տունն քրիստոնէից ի սուր և ի գերութիւն. և արգելաւ վաստակ հողագործութեան յերկրէ, և հատաւ կերակուր հացի, և սրով և գերութեամբ հատան մշակք և վաստակաւորք, և առհասարակ տարածեցաւ ընդ ամենայն աշխարհս։ Եւ անմարդ եղան բազում գաւառք, և քակե-

[32] Տե՛ս M. Brosset, Histoire de la Géorgie, I, p. 346—347.

[33] Ս. Անեցի (էջ 116), Մերձավոր Արևելքում եղած սովը արձանագրում է 1077 թվականին. «Ռշէ, Յայսմամի եղև ահագին սով ընդ ամենայն երկիր և աւերեցաւ արևելք»։

ցաւ տունն արևելից, և եղև աւերակ աշխարհն Հոռոմոց, և ոչ ուրեք գտանէին հաց, և կամ դադար հանգստեան մարդոյ, բայց ի յՍուրհայ և յամենայն սահմանսն նորա։ Եւ յԱնտիոք և յամենայն աշխարհն Կիւլիկեայ և մինչև ի Տարսոն և յամենայն աշխարհն Մարաշայ, ի Տլուք և յամենայն սահմանս աշխարհացս այսոցիկ ոչ գտանէին հանգիստ դադարման մարդոյ, և բախեալ ելանէին միահամուռ ամենայն արարածք և գային յաշխարհս յայսոսիկ անթիւ բազմութեամբ, հազարք առ հազարս և բիւրք առ բիւրս, ծփայր մարդ ի վերայ երկրի. և ծածկեցաւ աշխարքս այս և որպէս զմարախ ի բազմութենէ նոցա ծածկէր երկիր, ...եւ այսպիսի ահագին բազմութեամբ լցաւ երկիր, և արք մեծամեծք և փառաւորք, ազատք և իշխանք և կանայք մեծաշուք շրջեալ մուրանային. և դայն ամենայն աչք մեր տեսանէին... Այս եղև սկիզբն աւերման և քակելոյ տանն արևելից և Յունաց, զորս յաղագս մեղաց մերոց ընկալաք դհատուցումն յԱրդար դատաւորէն Աստուծոյ...»[34]։

Հայտնի է, որ Բյուզանդիայի կողմից հայերի բռնի գաղթեցումը Կապադովկիա, Կիլիկիա և Փոքր Ասիայի բյուզանդական մյուս նահանգները մեծ չափերի էր հասել X դ. երկրորդ կեսից մինչև XI դ. կեսերը։

Դեռևս 962 թ., երբ Հովհաննես Չմշկիկը Արևելյան բանակի հրամանատարն էր և նվաճում էր Հայաստանի սահմանամերձ արաբական երկրները, այդ վայրերից բազմաթիվ հայեր տեղափոխում են Սեբաստիա և Եփրատի արևմտյան կողմը գտնվող բյուզանդական սահմանամերձ ամրոցները, Մամբիճ, Տլուք և այլն[35]։ 965 թ., երբ բյուզանդացիների՝ Կիլիկիայի վրա կատարած արշավանքը պսակվեց հաջողությամբ և գրավվեց դաշտային Կիլիկիան, Աբու-լ-Ֆարաջի վկայությամբ, «Եվ այն բոլոր պատերազմներում, որ բյուզանդացիք մղեցին, հայկական հետևակ զորքերը արշավեցին նրանց հետ և մեծապես օգնեցին նրանց»[36]։

X դ. վերջին այնքան էր աճել հայ բնակչության քանակը Կիլիկիայում, որ Խաչիկ Արշարունի (973—992 թթ.) կաթողիկոսը հայ եպիսկոպոսներ է ձեռնադրում Կիլիկիայի և Ասորիքի մի շարք քաղաքներում, հոգալու համար հայրենիքից հեռացած հայ բնակչության կարիքները։ Այդ առթիվ Ստեփանոս Տարոնեցին գրում է. «Իսկ յաւուրս Տեառն Խաչկայ հայրապետի Հայոց սփռեալ տարածեցաւ ազգս Հայոց զկողմամբքն արևմտից, մինչեւ ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորւոց և ի Տարսոն Կիլիկեցւոց եւ ի Սուլնդայ և յամենայն գաւառսն յայնոսիկ»[37]։

Այդ նույն տարի անցքերի մասին խոսելով, Միքայել Ասորին գրել է. «Հույները արաբներից գրավեցին Կապադովկիայի, Հայաստանի (իմա՝ Փոքր Հայքի) և Ասորիքի քաղաքները, նրանք մեծ Հայաստանից այդ վայրերն էին տեղափոխում ժողովրդական բազմություններ։ Վերջիններս հաստատվում էին այդ վայրերում, աճում և նույնիսկ ստանում հողային տիրույթներ»[38]։

Հետագայում, XI դարում, Հայաստանի համար ստեղծված քաղաքական աննպաստ վիճակը բնակչության մի մասին ստիպեց թողնել իր հայրենիքը և հեռանալ հարևան երկրներ։ Այդ գաղթը հիմնականում տեղի էր ունենում Բյուզանդական կայսրության բռնի գաղթեցման միջոցով։ Հայերը գաղթում էին նաև զերծ մնալու համար սելջուկ թուրքական ավերածություններից։ Այդ գաղթը հատկապես ուժեղացավ, երբ Բյուզանդիան XI դ. շեմքին գրավեց Տայքը, իսկ հետագայում Վասպուրականի, Անիի և Կարսի թագավորությունների տարածքը և այդ վայրերի բնակչության մի մասին տեղափոխեց Փոքր Ասիայի կենտրոնական, հարավային, արևմտյան նահանգները և Կիլիկիա։ Հայտնի է, որ Հայաստանի այդ շրջանների թագավորներն ու իշխանները տեղափոխվում էին նոր վայրեր իրենց տոհմերով, բազմաքանակ ազատներով, ստորադաս իշխաններով, հորթ գյուղացիներով և քաղաքների արհեստավորներով հանդերձ[39]։

Աբու-լ-Ֆարաջը նշում է, որ Արծրունյաց թագավորության Սեբաստիա տեղափոխվելուց հետո հայերը ցրվեցին Կապադովկիայի, Կիլիկիայի և Ասորիքի ամբողջ տարածքում[40]։

Թովմա Արծրունին վկայում է, որ բյուզանդացիք հայերին գաղթեցնելով այդ նահանգները, նրանց տալիս էին հողային տիրույթներ, ոստաններ, գյուղեր, ագարակներ, վանքեր, և հայ իշխանները դառնում

---

34 Մ. Ուռհայեցի, էջ 217—218։

35 *Les Hittites*, Histoire d'un Empire oublié, par. *A. H. Sayce*, 1891, Paris, p. 250.

36 *Abul Faraj*, p. 169.

37 «Ստեփաննոսի Ասողկան, Պատմութիւն Տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 258։

38 «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի» Յերուսաղեմ, 1871, էջ 198։

39 Տե՛ս Թովմայի Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց», Պետերբուրգ, 1887, էջ 307։ Ս. Անեցի, 1893, էջ 104։ Ուռհայեցի, էջ 40, 57, 59, 217—218։ «Մխիթար Սպարապետի տարեգիրք», 1956, էջ 26—27, 49, 63։

40 *Abul Faraj*, p. 172.

էին բյուզանդական կայսրի ստորագրյալներ, զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներ ու գավառների կառավարիչներ[41]։

Դեռևս X դ. երկրորդ կեսից Բյուզանդիայի հարավային նահանգների ու քաղաքների կառավարիչներ են հիշատակվում՝ հայազգի Միքայել Վուրցեսը (976—992 թթ.)՝ որպես Անտիոքի կառավարիչ։ Անտիոքի հայազգի երկրորդ կառավարիչ է հիշատակվում Դամիանոսը (995—998 թթ.)[42]։ Հայ ժամանակագիրները 1065 թ. Անտիոքի դուքս են հիշատակում Պեխտ կամ Եպիխտ (1065—1068 թթ.) անունով Շիրակունի մի հայի. «մի ոմն ի հայոց քաջ զօրականաց»[43]։

Պեխտից հետո Անտիոքի դուքս է հիշատակվում Խաչատուր իշխանը (1068—1072 թթ.)[44]։ Վերջինս 1071 թ. Ռոմանոս Դիոգենես կայսրի գերությունից վերադառնալուց հետո նրան ցույց է տալիս զինվորական աջակցություն՝ վերստին գահին տիրանալու համար[45]։

Պետք է նշել, որ նույնիսկ Մանազկերտի ճակատամարտի անփառունակ վախճանից հետո, բյուզանդացիների հայատյաց քաղաքականությանը զոհ գնացին Անտիոքի դուքս վեստ Խաչատուրը, որը 1072 թ. գերի է վերցվում Անդրոնիկոս զորավարի կողմից և հեռացվում քաղաքական ու ռազմական ասպարեզից[46]։ Նույն բախտին արժանացավ նաև Եպիխտը (կամ Պեխտը)։ 1076 թ., երբ Անդրիոնի[47] իշխան Եպիխտը հիվանդանում է, Բյուզանդիայի կայսր Միքայել է. Դուկասը մի խոստո-

41 «Թովմա Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 307։ Մ. Ուռհայեցի, էջ 217—218։

42 *P. Charanis*, The Armenians in the Byzantine Empire, p. 45.

43 Մ. Ուռհայեցի, էջ 157։ Ս. Սպարապետ, էջ 62։ Վարդան Վարդապետ, էջ 105։ Պեխտ (նաև Եպիխտ) անուն չէ, այլ հունարեն բառ է, որը վերակացու, տեսուչ է նշանակում։ Տե՛ս Մ. Ուռհայեցու աշխ. թարգմ., էջ 326։ Նույն., էջ 51։

44 Ց. Լօրան, Խաչատուր իշխան Անտիոքի 1068—1072, «Հանդէս ամսօրեայ», ԽԴ տարի, 1930, էջ 303—310։ Արդի հայ պատմագիրներից ոմանք Պեխտը կամ Եպիխտը նույնացնում են Անտիոքի դուքս Խաչատուրի հետ։ Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 46—47։ Եղիշե Դուրյան, Ազգային պատմութիւն, Երուսաղէմ, 1934, էջ 403—404։ Ա. Այպոյեանեան, Պատմութիւն հայ կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937, էջ 439, ծնթգ. 1։ Եր Քասունի, ԺԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պեխտ-Խաչատուր և Վասակ Պահլավունի, «Հայկազեան հայագիտական հանդէս» (Պէյրութ), հ. Բ, 1971, էջ 130։

45 *M. Psellus*, Fourteen Byzantine rulers, translated by E. R. A. Sewter, Suffolk, 1966, p. 360—362. Տե՛ս նաև Եր. Քասունի, էջ 128—129։ *Cl. Cahen*, La campagne de Manzikert, p. 638.

46 *J. Laurent*, p. 306.

47 Անարիոնը գտնվում է Հալեպից մի փոքր հարավ։

վանահայր է ուղարկում նրա մոտ։ Մի օր, երբ Պեխտը քնած էր իր անկողնում, հույն աբեղան մտնում է նրա սենյակը. «գաղանաբար հարձակվում է նրա վրա և բարձով խեղդամահ անում նրան։ Եվ այսպես «շարագործ ու պիղծ կրօնաւորն Հոռոմոց», սպանում է Եպիխտին, «այր հզօր և քաջ», որ հակառակ իր հունադավան կարծվելուն «ի ծածուկ զհայրենի հաւատն իւր պաշտէր զսրբոյն Գրիգորի»[48]։

Բյուզանդական դավադրության զոհ գնաց նաև Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավունին, որը Խաչատուրի պաշտոնազրկումից հետո նշանակված էր Անտիոքի դուքս։ 1076 թ. Անտիոքի շուկաներից մեկում նա նենգաբար սպանվում է երկու հույն «հաստատների» նիզակակիրների կողմից[49]։

Երեք տարի անց, 1079 թ. Վոտանիատես կայսեր հայահալած քաղաքականության զոհ գնաց նաև Անիի վերջին թագավոր Գագիկ Բ Բագրատունի շահնշահը։ Նա դավադրաբար սպանվեց Մանդալեյի որդիների կողմից Կիզիստրա կոչվող բերդում[50]։

Ինչպես նշեցինք վերևում, հայերի զաղթը դեպի Կապադովկիա և Կիլիկիա զանգվածային բնույթ է կրում Անիի գրավումից (1064) և Մանազկերտի ճակատամարտից հետո։ Կիլիկիա գաղթող իշխաններից նշանավոր է դառնում Վասպուրականի խուլ խաչիկի թոռնիկ, Հասանի որդի Աբլղարիպը, որը մտնելով բյուզանդական կայսեր ծառայության մեջ ստանձնում է Կիլիկիայի Տարսոն և Մամեստիա քաղաքների կառավարչությունը[51]։ 1071—1079 թվականների ընթացքում սելջուկյան արշավանքների առջևից Հայաստանից հեռացող հայ իշխաններից մեկն էր նաև Օշին Դանձակեցի իշխանը։ Ըստ Սամուել Անեցու ժամանակագրության, 1073 թ. «ի բռնութենէն Տաճկաց (սելջուկներից—Ս. Բ.) ել Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ՝ որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Դանձակայ՝ ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ... ազատագունդ իշ-

48 Մ. Ուռհայեցի, էջ 214։ Ս. Սպարապետ, էջ 84։ Վարդան Վարդապետ, էջ 105։

49 Մ. Ուռհայեցի, էջ 213—214։ Ս. Սպարապետ, էջ 83—84։ Վարդան Վարդապետ, էջ 104։

50 Մ. Ուռհայեցի, էջ 220։ Ս. Սպարապետ, էջ 86—87։ Սամուել Անեցի, էջ 116։ Վարդան Վարդապետ, էջ 106։

51 Գ. Հովսեփյանց, Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 541, 551—552։ Մ. Ուռհայեցի, էջ 219։ Ս. Սպարապետ, էջ 86։ Վարդան Վարդապետ, էջ 105—106։ Աբլղարիպի մասին տե՛ս Եր. Քասունի, Տարսոնի իշխանը Ապլղարիպ Հասան Արծրունի (1071—1080 թթ.) «Հայկազեան հայագիտական հանդէս» հ. Գ, Պէյրութ, 1972։

խանօքն և ամենայն գահիւն... և եկեալ յաշխարհն Կիլիկեցւոց և աջողմամբ Քրիստոսի... էառ ի Տաճկաց և զականաւոր բերդն Լամբրոն, որ է մերձ առ ստորոտով լերինն Տօրոսի ի գահ մայրաքաղաքին Տարսոնի»[52]։ Ըստ Աննա Կոմնենայի, Օշին իշխանը ծագումով Արշակունի էր և կայսրի նկատմամբ մատուցած ծառայության դիմաց ստացել էր Կիլիկիայի կառավարման իրավունքը[53]։ Այնուհետև, ըստ մի հիշատակարանի, Տարսոնի տեր Աբլղարիպ Արծրունին իր «սիրելեցյալ և մտերիմ», ինչպես և «հավատարիմ» Օշինին հանձնում է Լամբրոնի բերդը[54], որտեղ Օշինը հիմք է դնում Հեթումյան իշխանությանը, որը մինչև XIII դ. սկիզբը վասալական ծառայության մեջ է մնում Բյուզանդիայից և այնուհետև 1226 թ. հիմնադրվում է Հեթումյան թագավորությունը։

Բացի Աբլղարիպ Արծրունի և Օշին Գանձակեցի (Հեթումյան) իշխաններից, XI դ. երկրորդ կեսին Կիլիկիա գաղթած հայ իշխաններն էին՝ Նաթանելյանները, որոնք տեր էին Լամբրոնի սահմանակից շրջաններին, իսկ Ատոմյանները կառավարում էին Ծովեղրյա շրջանները։ Նրանք հետագայում XII դ. վերջին մտնում են Կիլիկյան Հայկական թագավորության կազմի մեջ[55]։

XI դ. 70-ական թվականներին Կիլիկիայում և Կապադովկիայում հայկական տերություն հիմնելու փորձ է կատարել Բյուզանդական կայսրությունից ռազմական և վարչաքաղաքական վասալական ծառայության մեջ գտնվող հայ իշխան Վարուժան Վարաժնունին[56], որը հունադավան լինելու համար հիշատակված է Փիլարտոս (բյուզանդական աղբյուրներում Ֆիլարտոս, Ֆիլարետոս, Վախամիոս)[57] անունով։

Փիլարտոսը իր պատանեկությունը անցակցրել է իր հորեղբոր՝ ժամանակի նշանավոր գիտնական Կոզեռնի մոտ, Հարսն-Մսրու գավառի Զորվրի-Կոզեռն վանքում։ Սակայն նա շուտով դուրս էր եկել վանքից և մտնելով զինվորական ասպարեզ հասել էր բարձր դիրքերի։ Հունադավանության և ազգակիցների նկատմամբ իր որդեգրած անխնա դիր-

52 Ս. Անեցի, էջ 117։

53 *Anna Comnena*, Alexiade, XII, p. 276.

54 Դ. Հովսեփյանց, Հիշատակարան ձեռագրաց, էջ 542, 552, 553։

55 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 313։

56 *Nicolas Adontz*, l'aieul des Roubeniens, in Etudes Arméno-Byzantines Lisbonne, 1965. p. 148.

57 Ըստ Սկիլիցիայի, Փիլարտոսը սերում էր Վահրամյան տոհմից։ Ատատլիատեսը նրան անվանել է Ֆիլարտոս Վախամիոս։ Տե՛ս Մ. Ուռհայեցի, աշխ. թարգմ. Հ. Բարթիկյանի, էջ 329, ծնթգ. 99։

քի մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Սա եկեալ յանապատէ եւ եղեւ պիղծ անապատի»[58]։ «Ուռհայեցիի այս բնորոշումը,— գրում է Երվանդ Քասունին,— պատճառ պիտի ըլլար որ Գանձակեցի, Միքայել Ասորի ու Բար Հեբրայոս (Աբու-լ-Ֆարաջ) չկարենար տեսնել Փիլարտոսի Ասորի ու Բար Հեբրայոս (Աբու-լ-Ֆարաջ) չկարենար տեսնել Փիլարտոսի հայրաւ ծագումը եւ զայն նկատեն փախստական հայերու կամ «աւազակներու» առաջնորդ»[59]։

Հունադավան Փիլարտոսի Սասունի քաջ իշխան՝ Թոռնիկ Մամիկոնյանին[60] նենգությամբ իրեն ենթարկելու անհաջող փորձ պատճառ էր, որ քաղկեդոնականության դեմ ատելությամբ լցված Ուռհայեցին, խտացրած գույներով նկարագրի նրա գործունեությունն ու պայքարը հայ իշխանների դեմ, նրան որակելով «անօրէն, դիւաբնակ, կարապետ պղծոյ ներին անհաւատ քրիստոնէայ»[61]։ Այսպես, 1073 թ. Փիլարտոսը պատվիրակություն է ուղարկում Սասունի հայ իշխան Թոռնիկի մոտ և նրան հրավիրում՝ «գալ նմա ի հնազանդութիւն»։ Մուշեղի որդի Թոռնիկը, լսելով այդ «ծիծաղեալ զանմիտ հրամանս նորա և ասացեալ թէ «Ահա որ բնաւ ես ոչ տեսանեմ զերեսս նորա»[62]։

Փիլարտոսը դիմում է Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի միջնորդությանը։ Վերջինս հրաժարվում է կատարել Փիլարտոսի ցանկությունը։ Փիլարտոսը զայրանալով, գաղտագողի, զորքով գնում է Սասուն։ Թեև Թոռնիկը անակնկալի է գալիս, սակայն հավաքելով իր զորքը գնում է «Ճապաղջուրն» (Ճապաղջուրն)։ Փիլարտոսին չգտնելով այնտեղ, Թոռնիկը հետևակ զորքը ետ է ուղարկում Սասուն և ինքը հազար ձիավորով մեկնում է Աշմուշատ (Շիմշաթ) քաղաքը և այնուհետև Անձիտ գավառի Ալելուա կոչվող դաշտում հանդիպելով Փիլարտոսի զորքերին, որի կազմում կային և ֆրանկների կոմս Ռմբաղատի[63] ուխտարյուր զինվորները, խայտառակ պարտության են մատնում նրանց, գերելով բազմաթիվ զորական իշխաններ, փախուստի են մատնում Փիլարտոսին։ Վերջինս նա-

58 Մ. Ուռհայեցի, էջ 206։ Տե՛ս նաև Ս. Սպարապետ, էջ 279։

59 Տե՛ս Եր. Քասունի, Ռուբեն Ա. եւ Ռուբինեան իշխանության հիմնադրութիւնը, էջ 71։ Տե՛ս Կ. Գանձակեցի, էջ 83։ Մ. Ասորի, էջ 406—407։

60 XI դարի կեսերին Տարոնը և Սասունը մտնում էին Գրիգոր Մագիստրոսի վարչությանը հանձնված Բյուզանդիայի արևելյան բդեշխության մեջ, գտնվելով անմիջորեն Մագիստրոսի փեսա՝ Թոռնիկ Մամիկոնյանի իշխանության ներքո։

61 Մ. Ուռհայեցի, էջ 206։

62 Նույն տեղում։

63 Ռմբաղատի տակ ենթադրվում է Roussel de Bailleul-ը Բյուզանդիայում ծառայող մի նորման գործիչ։ Տե՛ս Մ. Ուռհայեցի, աշխ. թարգմ., էջ 330—3, ծնթ. 104։ Roussel-ը վերևում նշված Ուրսելն է, որը 1072 թ. ապստամբել էր Դուկաս Է կայսեր դեմ։

հանջում է խարբերդ։ Իսկ Թոռնիկ քաջազուն իշխանը մեծ ավարով վերադառնում է Աշմուշատ բերդը։

Փիլարտոսը այնուհետև դիմում է խորամանկության։ Լսելով Թոռնիկի փոքրաթիվ ջոկատով Աշմուշատում (այս բերդը Սասունի տիրոջն էր պատկանում, որը կառուցված էր Արածանի գետի վրա)[64] լինելու մասին, այնտեղ է ուղարկում մի ոմն ամիրա՝ Ամր-Քափրին (որը Մայաֆարդինի շրջանի Մրվանյան ամիրաներից էր), որպեսզի ամիրայի կողմից կազմակերպված խնջույքի ժամանակ դավադրությամբ սպանի Թոռնիկին։ Վերջինս հրավիրված էր այդ խնջույքին։ Թոռնիկը հաջողում է մազապուրծ ազատվել նենգ ոսոխի ճիրաններից և ծանր վիրավորելով ամիրային փախչում է Աշմուշատ։ Սակայն դավադիր Թուրքմեններից մի ոմն թաքստոցից սպանում է Թոռնիկին և նրա գլուխը ուղարկում Փիլարտոսին[65]։ Այնուհետև Թոռնիկ Մամիկոնյանին հաջորդեց նրա որդի Զորտուանել Բ Մամիկոնյանը[66]։

Ի դեպ, պետք է նշել, որ Փիլարտոս Վարաժնունու կյանքի և գործունեության, նրա հիմնած պետության արժեքավորման ու գնահատման հարցերով զբաղվել են ոչ միայն միջնադարյան հայ և օտար պատմիչներն ու ժամանակագիրները[67], այլև, սկսած XVIII դ. մինչև մեր օրերը, հայ և օտար պատմաբանները[68]։

64 Մ. Ուռհայեցի, էջ 208։

65 Մ. Ուռհայեցի, էջ 206—209։

66 Ղ. Ալիշան, Հայապատում, 1901, էջ 300։

67 Տե՛ս Մ. Ուռհայեցու, Ս. Անեցու, Ս. Սպարապետի, Կ. Գանձակեցու, Մ. Այրեվանեցու, Մ. Ասորու, Աբուլֆարաջի, Սկիլիցայի, Ատտալիատեսի և Աննա Կոմնենայի՝ պատմությունների և ժամանակագրությունների Փիլարտոսին վերաբերող համապատասխան էջերը։

68 Տե՛ս Մ. Ջամշյան, հ. Բ, 1785 և Գ. Վենետիկ, 1786։ Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885։ Եղիա Քասունի (Կոմմագենացի), Փիլարտոս Հայը, Հալեպ, 1930։ Նույնի Անթէպի շրջանակին աշխարհագրականը և Անթէպ քաղաքին տեղագրականը (տե՛ս Գ. Ս. Սարաֆյան, Պատմութիւն Անթէպի Հայոց, Ա, հ.), Լոս Անճէլոս, 1953։ Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937։ Յ. Ասատուրեան, Պատմութիւն Հայոց, Պէյրութ, 1960։ Եր. Քասունի, Ռուբէն Ա. եւ Ռուբինեան իշխանութեան հիմնադրութիւնը, Պէյրութ, 1972։ Նույնի Կիլիկիոյ Հայկական իշխանապետութիւնը, Մերձաւոր Արեւելքի քաղաքական հոլովոյթին մէջ (1080—1137) Պէյրութ, 1974։ *N. Adontz*, L'aieule des Roubeniens, Etudes Arméno-Buzantine, Lisbonne 1965. *Cl. Cahen*, La première pénétrationturque en Asie-Mineure, "Buzantion", XVIII, 1946—1948. Նույնի The Turkish invasion: The Selchukids, in *K. M. Setton*, A history of the Crusades, Pennsylvania, vol. I, 1958. *P. Charanis*, The Armenians in the Byzantine Empire Lisboa, 1963. *Г. Микаелян*, История Киликийского Армянского государства,

Փիլարտոս Վարաժնունու սկզբնական գործունեության մասին վկայություններ ունեն հայ և ասորի ժամանակագիրները։

Ըստ Միքայել Ասորու (1126—1199), որը հաճախ ի պաշտոնե հարաբերության մեջ է գտնվել Ռուբինյան իշխանության հետ, նշում է, որ երբ սելջուկյան արշավանքները ավերածության էին ենթարկում Հայաստանը, հիսուն հայեր, որոնք անապատում էին ապրում և զբաղվում էին թուրքերին կողոպտելով, գալիս են Մարաշ, որտեղ գտնում են Փիլարտոսին։ Վերջինս դառնում է այս խմբի առաջնորդը, մտնում է Կիլիկիա և թուրքերից գրավում է Քեսունը, Մարաշը, Ալպսթանը և հետագայում Մելիտինեն, Ուռհան և այլ բազում վայրեր։

«Եւ յորժամ եղեն պատառմունքս այս, ելին ոմանք ի Հայոց արք թուով յիսուն եւ բնակէին յանապատս եւ ծեծէին զթուրքն եւ առնուին 'ի նոցանէ ինչս 'ի պէտս իւրեանց, եւ եկին յերկիրն Մարաշայ, եւ զտին անդ այր մի հայ ազգաւ՝ Փիլարտոս անուն, այր անձեայ և գեղեցիկ, եւ եղեւ նոցա գլուխ եւ մտին յերկիրն Կիլիկիոյ, եւ տիրեալ էր թուրքն երկրին, եւ առին 'ի նոցանէ բերդ մի եւ ամրացան 'ի նմա, եւ անտի առին զամենայն երկիրն քաղաքօք եւ բերդօք, եւ առին շուրջանակի Կիլիկիոյ աշխարհս բազումս, զՄարաշ, զՔեսուն, զԱպլսթայն եւ զՄլտենի եւ զՈւռհա՝ յանկոյս Եփրատայ, եւ զայլս բազումս»[69]։

XI դ. վերջին և XII դ. սկզբին Կիլիկիայում տեղի ունեցած դեպքերի մասին նշելիս Միքայել Ասորին նորից է ակնարկում Փիլարտոս Վարաժնունու սկզբնական գործունեության մասին. «Եւ յայնժամ կային գլխաւոր իշխանք 'ի Հայոց՝ Վասիլն, որ 'ի ժամանակին Փիլարտոսին ունէր զՔեսուն և զԻապան, եւ ոմանք ի Կիլիկիա՝ որք կոչին որդիք Ռոբինայ, ի Փիլարտոսէ իշխանացեալ 'ի տեղիս տեղիս, որք առաքեցին եւ տարան զկաթողիկոսն Հայոց 'ի Կիլիկիա»[70]։

Ереван, 1952. *M. Yinanç, O. Turan*, Selçuklular Tarihi: *J. Laurent*, Byzance et Antioche sous le curopalate Philarète, Revue des Etudes arméniennes, Paris, T. IX, (1929) 61—72.

69 Մ. Ասորի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1871, էջ 399։ Ըստ Կ. Գանձակեցու, էջ 83։ «Ի սկսանել թագաւորութեանն Թուրքաց՝ արք յիսուն, հայ ազգաւ, նեղեալք ի նոցունց, ելին յանապատ ապառազինեալք, և եկին ի Մարաշ, գտին այր մի քաջ, Փիլարտոս անուն, հայ, եղին զնա գլխաւոր և, մտեալ ի Կիլիկիա, առին զրովանդակ աշխարհն յորս էին և Ռուբինեանք՝ սերեալք թագաւորազունքն։ Տե՛ս նաև Մ. Այրիվանեցի, Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 55։ «Բարձաւ իշխանութիւն տաճկաց և զօրացաւ Թուրքման սալջուքն, Արք յիսուն իշխանք սանցիք նեղեալք ի Թուրքաց գնացին ի Կիլիկիա և Աստուծով տիրեցին սակաւ սակաւ»։ Մ. Այրիվանեցին Փիլարտոսին հիշատակում է ցուցակի գլխում (էջ 16)։

70 Մ. Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871, էջ 406։

Մ. Ասորու վերոհիշյալ պատմածն է հաստատում Աբուլ-լ-Ֆարաջի հետևյալ վկայությունը. «Եւ այն ժամանակ, երբ հույները թուլացած էին և Թուրքերը (իմա՝ սելջուկներ—Ս. Բ.) ամենուրեք գրավել էին, մի խումբ հայեր, որոնք քաջ և հանդուգն մարդիկ էին, իրար միացան և կազմեցին 50 հոգուց բաղկացած մի հրոսակախումբ և նաև գնացին հույների երկրները և կողոպտեցին ու ավերեցին։ Երբ նրանք Մարաշի մեջ էին, երիտասարդ մի մարդ, որը նույնպես հայ էր, և որի անունը Փիլարտոս էր, հանդիպեց նրանց, և երբ նրանք տեսան, թե նա ուժեղ է և խորամանկ, հանդուգն ավարառության և սպանության մեջ նրան վերցրեցին իրենց հետ, և նա նրանց առաջնորդ ու պետ դարձավ և նրանք սկսեցին որոշ ամրություններ գրավել Կիլիկիայում և բազմացան»[71]։

Հայ և Ասորի ժամանակագիրների վերոհիշյալ վկայությունները հիմք են տվել Կոմմագենացուն եզրակացնելու «թե Կիլիկեան հայկական իշխանութեան հիմնադրութեան պատիւը կը պատկանի Փիլարտոս Հայի»[72]։

Վերոհիշյալ վկայությունները առիթ են տվել Թուրք պատմաբան Մ. Յընանջին, որ Փիլարտոսի ռազմական և քաղաքական սկզբնական շրջանի գործունեությունը բնութագրի «ավազակային», իսկ նրան ուղեկցող հայ իշխաններին «հիմարներ և ավազակներ», սակայն նույն պատմաբանը XI դ. 70-ական թվականներին Փիլարտուի տարած հաղթանակների փաստերի ճնշման տակ մեծ պատկառանքով խոսելով նրա ռազմական և քաղաքական գործունեության մասին, ափսոսանքով նշում է, որ Փիլարտոսը ավելի քան մեկ տասնամյակ պատվար է կանգնել Կապադովկիայում Թուրքմենների առաջխաղացման ճանապարհին[73]։

Թեև հայկական սկզբնաղբյուրները լռում են Փիլարտոսի 60-ական թվականների գործունեության մասին, սակայն բյուզանդական աղբյուրների տվյալներից երևում է, որ նա ռազմական ծառայության մեջ էր գտնվում Ռոմանոս Դիոգենեսի (1068—1072 թթ.) բանակում, ընդ որում, նրան հիշատակում են (1068—1070) Արևելք արշավող Դիոգենեսի բանակի զորավարների շարքում։ Խոսելով Ռոմանոս Դ. Դիոգենեսի 1070 թ. դեպի Ռոմանոպոլիս և Խլաթ կատարած արշավանքի մասին, Սկիլիցան ցույց է տալիս, որ կայսրը բանակի կեսը տալիս է Փիլարտոսին, որ Վահրամյան տոհմին էր պատկանում, նրան զորավար

71 Abul Faraj, p. 228։ Կոմմագենացին 50 հայերի հանդիպումը Փիլարտոսի հետ դնում է 1059 թ.։ Տե՛ս Եր. Քասունի, Անթէպի Շրջանակին Աշխարհագրականը..., էջ 212։

72 Եղիա Քասունի (Կոմմագենացի), Փիլարտոս Հայը, Հալէպ, 1930, էջ 56։

73 M. Yinanç, p. 120—121.

նշանակելով։ Սկիլիցան ընդգծելով Փիլարտոսի զորավարական տաղանդը, միաժամանակ ցույց է տալիս նրա վատ կենցաղը և շահասիրությունը[74]։ Իր մատուցած ռազմական ծառայությունների համար, նա Ռոմանոս Դ. Դիոգենեսից ստանում է «Մեծ Դոմեստիկի» տիտղոսը[75]։

Փիլարտոսի ռազմաքաղաքական գործունեության փայլուն ժամանակաշրջանը սկսվում է Մանազկերտի ճակատամարտից հետո։

1071 թ. Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիայի անփառունակ պարտությունից հետո Փիլարտոսը փորձեց իր իշխանությանը միացնել Կիլիկիայի, Միջագետքի և Ասորիքի որոշ շրջանները։ Արդարև, որոշ չափով նրան հաջողվում է իրագործել իր՝ հայկական պետություն ստեղծելու ծրագիրը։ Մի կողմից, հենվելով Կիլիկիայի և Կապադովկիայի հայաշոտ շրջանների մարդկային և տնտեսական հզորության վրա, մյուս կողմից, օգտվելով Դիոգենեսի մահվան պատճառով սկսված քաղաքացիական պատերազմների հորձանուտում երկփեղկվող և թուլացող Բյուզանդիայի խառնաշփոթ դրությունից, միաժամանակ՝ Ալփասլանի մահից հետո սելջուկյան սուլթանության ներսում ծավալվող գահակալական երկպառակություններից՝ Փիլարտոսին հաջողվեց դուրս գալ իր սահմաններից, և Մարաշը դարձնել պետության կենտրոն, և տիրել «բազմաթիվ քաղաքների և գավառների»[76]։ Նրա գլխավոր ծառայությունն այն էր, որ հենվելով հայ բնակչության ռազմական ուժի վրա, կարողացավ ժամանակավորապես կասեցնել սելջուկների առաջխաղացումը և ներթափանցումը վերոհիշյալ երկրամասերում։

Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիայի նահանջով խախտվել էր ուժերի հավասարակշռությունը վերոհիշյալ երկրամասերում և որի գլխավոր զոհերն էին դառնում Հայաստանի և նրա սահմաններից դուրս գտնվող հայկական փոքր «թագավորություններն» ու իշխանությունները։ «Այս թոհուբոհին մէջ,— գրում է Եր. Քասունին,— սակայն, յանկարծ կը բարձրանայ դէմքը Փիլարտոս Հայի, որուն զինուորական եւ դիւանագիտական ընդարձակ գործունէութիւնը կը յաջողի խաղաղութեան գօտի մը ստեղծել Եփրատացւոց աշխարհին մէջ, ու նոր յոյսեր ներշնչել շրջանի հայութեան»[77]։

74 Տե՛ս Մ. Ուռհայեցի, աշխ. թարգմ. Հ. Բարթիկյանի, էջ 320, ծնթ. 99։

75 Տե՛ս Recueils des Historiens des Croisades, Documents arméniens, T. I, p. 41.

76 Մ. Ուռհայեցի, էջ 205։ Տե՛ս նաև Ս. Սպարապետ, էջ 79։ Վարդան Վարդապետ, էջ 104։

77 Ներուն-Երուանդ Քասունի, Կիլիկիոյ Հայկական իշխանապետութիւնը, էջ 23։

Դիոգենեսի մահից հետո Բյուզանդիայի նոր տերերի գահակալական երկպառակությունները հնարավորություն չտվեցին նրանց կարգավորելու Կայսրության արևելյան սահմանների վիճակը։ Այդ երկրամասերը Բյուզանդական կայսրության կենտրոնից հեռու գտնվելու պատճառով, ընկան ծանր դրության մեջ։ Այդ վայրերում կային շատ քաղաքներ ու բերդեր, որոնք կառավարվում էին տեղական իշխանների և տիրակալների կողմից։ Դրանց մեծ մասը, հատկապես անառիկ բերդերը Թուրքմենների ռազմական տեխնիկայի թուլության պատճառով դեռևս չէին գրավված նրանց կողմից։ Վաչկատուն Թուրքմեն բեգերը չէին փորձում գրավել այդ վայրերը և մեծավ մասամբ բավարարվում էին տեղական տիրակալների կողմից պարգևի ձևով տրված տարեկան որոշ հարկով և ապրանքով։ Կային շատ քաղաքներ, որոնք չէին ենթարկված Թուրքմեն քոչվոր ցեղերի ավարառությանը։ Հետևաբար՝ այդ քաղաքների, հատկապես Հայաստանից գաղթած հայ բնակիչները հանձինս Փիլարտոսի տեսնում էին իրենց փրկարարին, ուստի և ապավինում էին նրա կառավարչությանը։ Փիլարտոսը իրեն հպատակություն հայտնող քաղաքների՝ Մելիտենեի, Անտիոքի, Խարբերդի, Եդեսիայի ու բերդերի՝ Հարսնմսուրի (Հիսնմանսուր, Հասնմանսուր, Ադրյաման) Սամոսատի, Ռապանի, Քեսունի, Պեհեսնիի, Ալպսթանի և բազմաթիվ մեծ ու փոքր բնակավայրերի ու ամրոցների վրա նշանակում էր նոր կառավարիչներ ու բերդապահներ կամ թողնում էր հներին։ Հասկանալի է, որ Բյուզանդիայի կողմից իրեն կառավարչությանը հանձնված Կիլիկիայի բանակաթեմում (որն իր մեջ ընդգրկում է Կիլիկիայի հյուսիս և հյուսիս-արևմտյան շրջանը)[78] և դաշտային Կիլիկիայում շարունակում էին իրենց տիրակալությունը պահպանել Աբլղարիբ Արծրունին և լամբրոնի Օշին իշխանը[79], որոնք անշուշտ ենթարկվում էին իրենց նոր սյուզերենին՝ Փիլարտոսին։ Այդպես էր և Գող Վասիլի իշխանությունը, որը տիրում էր Քեսունի շրջանին և դրա սահմանակից Ռապան և Հռոմկլա բերդերին, Պեհեսնի և Հարսնմանսուր քաղաքներին[80]։

1072—1078 թթ. Փիլարտոսը իրականում չէր ճանաչում Բյուզանդիայի գերիշխանությունը և իր նվաճումները կատարում էր առանց Բյուզանդիայի թելադրանքի։ Արդարև, նրա անկախության հասնելու

[78] Տե՛ս W. Ramsay, Historical Geography of Asia Minor, Amsterdam, 1962, p. 303. Տե՛ս նաև Եր. Քասունի, էջ 219։ Ս. Սպարապետ, էջ 86։ Ս. Անեցի, էջ 116—117։

[79] Մ. Ուռհայեցի, էջ 219։ Ս. Սպարապետ, էջ 86։ Ս. Անեցի, էջ 116—117։

[80] Տե՛ս Կոմմագենացի, Փիլարտոս Հայը, էջ 36 և 57։

նկրտումները ժամանակավորապես պսակվել էին հաջողությամբ։ Դրա իրականացմանը մեծ չափերով օգնում էին հայ իշխանների և հայ ժողովրդական զանգվածների Բյուզանդիայից անկախանալու և Թուրքմեն ավարառու ոսոխին ազդու դիմադրություն ցույց տալու ձգտումները։

Այսպիսով, Փիլարտոսը ձգտելով իր իշխանության սահմանները ընդարձակել, գրավում է ամբողջ Կիլիկիան, Մելիտենեն, Ուռհան և բազմաթիվ այլ շրջաններ[81]։ 1076 թ., երբ Անտիոքի դուքս Վասակ Պահլավունին զոհ գնաց Բյուզանդիայի գործակալների դավադրությանը, ընդառաջելով Վասակ Պահլավունու հայ զինվորների հրավերին, Փիլարտոսը շտապում է Անտիոք, դավադրությամբ սպանում է յոթհարյուր հույն «հաստատներին»[82] նիզակակիրներին և քաղաքը վերցնում իր իշխանության ներքո[83]։

Փիլարտոսը իր տիրակալությունը օրինական և փառաշուք դարձնելու նպատակով հայոց օրինավոր կաթողիկոս Գրիգոր Վկայասերին (Պահլավունի) հրավիրում է իր մոտ Մարաշ՝ առաջարկելով նրան հայրապետական աթոռը փոխադրել իր ենթակայության տակ գտնվող Հոնի քաղաքը։ Թեև Հայրապետը մերժում է այդ առաջարկը, սակայն խորհուրդ է տալիս նրան կաթողիկոս նշանակել Հանգուցյալ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի քրոջ որդուն՝ Սարգսին։ Փիլարտոսը համոզվելով, որ Գրիգոր կաթողիկոսը այլևս չի վերադառնա իր հայրապետական աթոռը, հրամայեց եպիսկոպոսների, վանահայրերի և վանականների ժողով գումարել։ Ջահան գավառի Հոնի կոչվող քաղաքում 1076 թ.[84] հայոց կաթողիկոս ձեռնադրեցին տեր Սարգսին։

Փիլարտոսի ռազմաքաղաքական հաջողությունները ժամանակավորապես կասեցնում էին սելջուկների առաջխաղացումը և ներթափանցումը նրա տիրապետության ներքո անցած երկրամասերում, որն անուղղակիորեն ծառայում էր Բյուզանդիայի շահերին։ Ուստի, բյուզանդացիները հարկադրվեցին ճանաչելու ոչ միայն նրա նվաճումները,

81 Մ. Ասորի, էջ 406։ Կ. Դանձակեցի, էջ 83։ Abul Faraj, p. 228։ Մ. Ուռհայեցի, էջ 223։

82 Տե՛ս Մ. Ուռհայեցի, աշխ. թարգմ. Հ. Բարթիկյանի, էջ 330—331, ծնթ. 111։

83 Մ. Ուռհայեցի, էջ 213—214։ Ս. Սպարապետ, էջ 83—84։ Վարդան Վարդապետ, էջ 104։

84 Մ. Ուռհայեցի, էջ 210։ Պետրոս Գետադարձի քեռորդի Սարգիսը կաթողիկոս դարձավ 1076 թ. Փիլարտոսի տիրույթների սահմաններում։ Համայն Հայոց կաթողիկոսությունը շարունակում էր մնալ Գրիգոր Վկայասերի ձեռքում։ Սարգիսը պարզապես «օրինավոր աթոռակից» էր։

այլև որդեգրելու ավելի ճկուն քաղաքականություն նրա նկատմամբ, շնորհելով նրան «Սեբաստոս» տիտղոսը։ Այդ առթիվ Մ. Ասորին գրում է. «Իսկ լուեալ (Մ. Ասորին նկատի ունի Փիլարտոսի տարածքային նվաճումները[85], որոնք նշել էր նախորդ էջում) Յունաց թագաւորն (իմա՝ Վոտանիատ կայսրը—Ս. Բ.) առաքեաց նմա պարգևս և անուանեաց զնա Սեվաստոս»[86]։

Բար Հեբրաոսը (Աբու-լ-Ֆարաջ) այդ առթիվ տալիս է այլ մանրամասնություններ։

«Եվ երբ Ռոմայայի (Բյուզանդիայի) թագավորը լսեց այս, նվերներ ուղարկեց նրան, և Փիլարտոսը անձամբ գնաց Կ. Պոլիս, և հույները նրան ուրախացրին և նրան տվեցին ոսկի, պատերազմական զենքեր և նրան նշանակեցին Սեբաստոս։ Եվ նա վերադարձավ և իշխեց Կիլիկիայի ու Անտիոքի վրա»[87]։

Փիլարտոսը գտնվում էր իր հզորության գագաթնակետին։ «Կեսար»-ից հետո Սեբաստոսը երկրորդ բարձրագույն տիտղոսն էր Բյուզանդիայում[88]։

Շնորհելով Փիլարտոսին բարձր տիտղոսներ, անշուշտ, Բյուզանդիան իրականում հույս էր տածում, որ Փիլարտոսը կճանաչեր Բյուզանդիայի գերիշխանությունը։ Մինչդեռ դրանք այն ժամանակներն էին, երբ Փիլարտոսը արդեն հաստատել էր իր իշխանությունը Կիլիկիայում և նրա սահմանակից երկրներում։ Արդարև, Փիլարտոսը լինելով անկախ, միաժամանակ ձևականորեն գտնվելով բյուզանդական զինվորական ծառայության մեջ և առերես ցույց տալով իր հավատարմությունն ու նվիրվածությունը բյուզանդական կառավարության նկատմամբ՝ ընդունեց այդ տիտղոսներն ու պարգևները և միաժամանակ դարձավ քաղկեդոնական։ Հետևաբար հակասություն պետք չէ փնտրել նրա այն վարքագծի մեջ, որը ցուցաբերեց բյուզանդական Մանդալե երեք եղբայրների կողմից Գագիկ Բ Բագրատունի շահնշահին սպանելու կապակցությամբ։ Մանդալե եղբայրները դավադրությամբ ձերբակալում են

85 *Տե՛ս* Մ. Ասորի, *էջ 406—407։*

86 *Տե՛ս* Մ. Ասորի, *էջ 407։*

87 *Abul Faraj*, p. 229.

88 *Ատտալիատեսը նրան անվանում է «Կուրապաղատ Ֆիլարետոս Վախամիոս», Կուրապաղատը չորրորդ բարձրագույն տիտղոսն էր Բյուզանդիայում։ Տե՛ս* Մ. Ուռհայեցի, *աշխ. թարգմ. Հ. Բարթիկյանի, էջ 329, ծնթ. 99։ Տե՛ս նաև* Լէո, *երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, 1967, էջ 610, ծան. 1։* *P. Charanis*, The Armenians in the Byzantine Empire, Lisboa, 1963, p. 53.

Գագիկ Բ Բագրատունուն և բանտարկում նրան Կիզիստրա բերդում։ Երբ ապարդյուն է անցնում Գագիկին օգնության հասնող Վասպուրականի Սենեքերիմ թագավորի որդիներ Ատոմի և Աբուսահլի, Կարսի նախկին թագավոր Աբասի որդի Գագիկի և հայոց մյուս բոլոր իշխանների ջանքերը, Գագիկ շահնշահին ազատելու գործում, Փիլարտոսը փորձում է օգնել Գագիկին, Մանդալե եղբայրներին պատգամ ուղարկելով սպառնում է նրանց կորստյան մատնել ասելով.— «Զիարդ համարձակեցայք զայդ գործել ընդ առն թագաւորի. եթէ թողոյք և եթե ոչ ձեզ կորուստ գործեցիք զայդ»[89]։

Իմանալով այս, այժմ մեզ հասկանալի պետք է լինի այն գնահատականը, որ տվել է բյուզանդացի ժամանակագիր Ատտալիատեսը, Փիլարտոսի ռազմաքաղաքական գործունեության մասին. «Կուրապաղատ Ֆիլարետոս Վախամիոսը վասալական հպատակություն հայտնեց (Վոտանիատես) կայսեր»[90]։ Ֆիլարտոսը, Ատտալիատեսի ասելով, թուրքական արշավանքների ճանապարհներից հեռու, դժվարանցանելի և լեռնային վայրերում հաստատվեց, նա պարսպապատեց կիրճերն ու ամրացրեց լեռնանցքները և հակառակորդի համար այդ շրջանները անառիկ դարձրեց։ Նա այնտեղ ապաստան գտած բազմաթիվ հայերից մարտունակ զորաբանակ կազմեց և նախորդ կայսեր (իմա՝ Միքայել Է Դուկաս (Պարապինակես) հպատակություն չհայտնեց։ Նա անկախ էր և սեփականացնում էր կայսեր պատկանող քաղաքներն ու ընդարձակում իր տիրույթները։ Բայց երբ գահ բարձրացավ Վոտանիատեսը, նա ինքնաբերաբար հպատակություն հայտնեց և հլու-հնազանդ կատարում էր նրա հրամանները»[91]։

Արդարև, մեզ անհավանական է թվում Ատտալիատեսի վերոհիշյալ վկայության վերջին տողերը, թեկուզ այն պատճառով, որ հենց նույն տարում (1078 թ.) և նրան հաջորդող տարիներին (1078—1083 թթ.), երբ Բյուզանդիան Փիլարտոսին շնորհեց սեբաստոսի կոչումը, վերջինս շարունակում էր քաղաքական ասպարեզից մեկը մյուսի ետևից հեռաց-

89 Մ. Ուռհայեցի, *էջ 220։ Մանդալե եղբայրների կողմից Գագիկ Բ-ի սպանության և այլ մանրամասնությունների մասին տե՛ս* Մ. Ուռհայեցի, *էջ 219—221։*

90 *Ատտալիատեսը նկատի ունի Բյուզանդիայի կողմից Փիլարտոսին Սեբաստոս տիտղոս շնորհվելը և նրա ուղղորդությունը Կ. Պոլիս՝ 1078—1079 թթ.։*

91 Մ. Ուռհայեցի, *աշխ. թարգմ. Հ. Բարթիկյանի, էջ 329—330, ծնթ. 99։ Լորանի կարծիքով Փիլարտոսը 1078 թ. ճանաչել էր Բյուզանդական կայսրության սյուզերենությունը, որի դիմաց ստացել էր կուրապաղատ տիտղոսը։ Տե՛ս* J. Laurent, Byzance et Antioche sous le curopalate Philarète, REA, T. IX, Paris, 1929, p. 61—72.

նել դեռևս Բյուզանդիայի ենթակա քաղաքների վասալ կառավարիչներին։

Այսպես, 1078 թ. Եդեսիան (Ուռհան), որը շարունակվում էր կառավարվել Բյուզանդիային ենթակա Դավատանոսի եղբոր՝ Լևոն դուքսի կողմից, Փիլարտոսի հրամանով և բաղաքի բնակչության օգնությամբ գրավվեց Փիլարտոսի վասալ՝ հայազգի իշխան Վասիլի կողմից[92]։

Այնուհետև, 1083 թ. Վասիլի մահից հետո, Ուռհայի հայ մեծամեծները ու իշխանները դքսությունը հանձնում են «ի ձեռն Սմբատայ առն քաջի և արիական պատերազմողի ընդ Պարսից (իմա՝ սելջուկ Թուրքերի—Ս. Բ.)»[93]։

Սմբատը Ուռհայի դուքսի պաշտոնում մնաց վեց ամիս, այնուհետև քաղաքի մեծամեծներից Իշխան անունով մեկը, որ Արշքթոնք տոհմից էր և Ուռհա քաղաքում ուներ բազմաթիվ երևելի ազգականներ, ապըստամբություն բարձրացնելով, գնաց Փիլարտոսի մոտ, և դրդելով նրան Ուռհա բերեց։ Ուռհայի բնակիչները «ետուն զքաղաքն ի ձեռն Փիլարտոսին»[94]։

Փառամոլ Փիլարտոսը վախենալով կենտրոնական ուժերի հետագա ապստամբություններից, ձերբակալում է Սմբատին, Իշխանին և նրա եղբայր Թոտոռակին (Թոթոռիկ) ու կուրացնելով նրանց, բանտարկում Մարաշի բերդում[95]։

Անշուշտ, Փիլարտոսի ստեղծած ընդարձակ պետությունը հաշտ աչքով չէր դիտվում Բյուզանդիայի և այդ տարիներին Փոքր Ասիայում նվաճումներ կատարող ու սելջուկյան նոր սուլթանություն հիմնելու հավակնորդ՝ Սուլայմանի կողմից։ Իսկապես Փիլարտոսի հիմնած ընդարձակ պետության տարածքը ոչ միայն մեկուսացնում էր Սուլայմանին սելջուկյան արևելյան երկրամասերից, այլև կտրատում էր Սուլայմանի բանակը սնող երակները, որի միջով հոսելու էր Թուրքմեն քոչվոր ցեղերի հոսքը դեպի Փոքր Ասիայի արևմտյան նահանգները։

Ինչպես վերևում նշվեց, 1081 թ. Բյուզանդական գահ բարձրացած Ալեքսիոս Կոմնենոսը (1081—1118 թթ.) վերանորոգեց դաշինքը Սուլայ-

92 Մ. Ուռհայեցի, էջ 216։ Վասիլը Դավիթ Կուրապաղատի նախկին վրանապահ Աբուբաքի որդին էր։ Նույն տեղում։

93 Նույն տեղում, էջ 223։ Դյուսորիեի կարծիքով, այս Սմբատը Անիի կառավարիչ հայազգի Բագարատ Վխկացու որդին էր։

94 Մ. Ուռհայեցի, էջ 223։

95 Նույն տեղում, էջ 224։

մանի հետ և վերջինիս Մարմարայի ափերից հեռացնելու միտումով դրդեց նրան գրավել Բյուզանդական կայսրությունից անկախացած Փիլարտոս Վարաժնունու և մի շարք այլ հայ իշխանների՝ այդ թվում Աբլղարիբ Արծրունու, Օշին Գանձակեցու և Ռուբինյանների տիրապետության տակ գտնվող Կիլիկիայի և Կապադովկիայի քաղաքներն ու ամրոցները, որոնց հետ Կ. Պոլիսը պահպանում էր անկայուն հարաբերություն։ Արդարև, Սուլայմանը 1084 թ., օգտվելով մի կողմից բալկաններում Բյուզանդական կայսրությանը պածինակների (պեչենեգների) կողմից սպառնացող վտանգից[96] և մյուս կողմից Ուռհայում և Փիլարտոսին ենթակա այլ քաղաքներում տիրող իշխանության համար ծավալվող ապստամբություններից ու երկպառակություններից, գաղտագողի անցնում է Նիկիայից մինչև Անտիոք ընկած երկարաձիգ ճանապարհը «հասանէր (իմա՝ Սուլայմանը—Ս. Բ.) ծածկաբար մինչև ի քաղաքն Անտիոք, և գտեալ զքաղաքն անպատրաստ և ի Հալպայ դիհէն ի գիշերի գողացան զքաղաքն Անտիոք և Փիլառտոսն էր ի քաղաքն Ուռհա, և յայնմ ժամու զօրք հեծելոց ոչ գոյր ի քաղաքն։ Եւ Սուլիման երեք հարիւր արամբք մտաւ ի քաղաքն Անտիոք... և օր քան զօր բազմանայր զօրք Թուրքացն, և էառ զքաղաքն... եւ լուեալ զայս ամենայն Փիլառտոսն՝ ոչինչ կարաց առնել զուր ի հոգւոց հանեալ և դառնապէս ապաշաւէր։ Եւ Սուլիման տիրեաց Անտիոքայ և ամենայն աշխարհին Կիլիկեցւոց»[97]։

Անտիոքի անկումը ազդարարում էր Փիլարտոսի վաղամեռիկ պետության մայրամուտը։

1085 թ. Պոլճատճի անունով մի Թուրք ամիրա գրավում է Փիլարտոսի ենթակա Ջահան գավառը։ Այս գավառի Հոնի քաղաքում շարունակում էր գոյատևել Փիլարտոսի ենթակա հայրապետական աթոռը։ 1078 թ. Սարգիս կաթողիկոսի վախճանվելուց հետո նրան հաջորդել էր Թեոդորոս Ալախոսիկ մականունը կրող կաթողիկոսը[98]։ Փիլարտոսը, որը գտնվում էր Մարաշ քաղաքում, իր մոտ կանչեց Թեոդորոս կաթողիկոսին, սակայն նա չկարողացավ գնալ, որովհետև գտնվում էր ամիրա Պոլճատճիի իշխանության ներքո։ Փիլարտոսն իր մոտ հրավիրեց Վարագա սուրբ Նշան վանքի վանահայր Պողոսին և նրա հրամանով, եպիսկոպոսների ու վարդապետների ժողովը, Պողոսին Մարաշ քաղաքում կա-

96 Տե՛ս *Chalandon*. Les Comnènes, t. I, Paris, 1910, p. 66—72.

97 Մ. Ուռհայեցի, էջ 224—225, տե՛ս նաև Մ. Ասորի, էջ 407—408։ *Abul Faraj*, p. 229, «Արաբական աղբյուրները...», էջ 216։

98 Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 216—226։

թողիկոս ձեռնադրեց։ Սակայն Պողոս կաթողիկոսը տեսնելով, որ հայերը բացասաբար են վերաբերում Փիլարտոսի արարքին և հասկանալով, որ կատարվածը անօրինական էր, մի քանի օր հետո հրաժարվում է աթոռից[99]։

Ի դեպ, պետք է նշել, որ XI դարում Բյուզանդիայի կողմից հայերի բռնի գաղթեցման և սելջուկյան թուրքերի ավերածությունների պատճառով հայ ժողովրդի համար ստեղծված քաղաքական և տնտեսական ծանր դրությունը կազմալուծել ու երկփեղկել էր ոչ միայն հայ աշխարհիկ իշխող դասակարգի, այլև այդ երևույթները քաղցկեղի նման տարածվելով հայ հոգևորականության միջավայրում, եղծանել ու դիմակազերծել էին նաև նրա շարքերը։

Պետք է նշել նաև, որ հայ հոգևորականները, նման աշխարհիկ ավատատերերի ու իշխանների իրենց հերթին վերցնում էին գաղթականի ցուպը՝ հետևում էին հայ հավատացյալների հոտին՝ նոր միջավայրում ստանձնում էին հայ ժողովրդական զանգվածների հոգևոր հովվության պարտականությունը։

Ուստի Կապադովկիայում, Կիլիկիայում, Ասորիքում ու Մերձավոր Արևելքի այլ երկրներում հայկական գաղթավայրերի ստեղծմանը զուգահեռ, սնկի նման առաջանում էին հայրապետական աթոռներ, որոնց վրա նստող կաթողիկոսները ասուպի նման անհետանում էին, երբ վերանում էր նրանց հովանավորող հայ իշխանապետերի տիրակալությունը։

Իր հերթին հայ հոգևորականների միջավայրում առաջացող դավանաբանական երկպառակությունները, որոնք հաճախ ուժգնորեն բորբոքվում էին քաղկեդոնական ու կաթոլիկ եկեղեցու առաքյալների և նրանց հարող հայ հոգևորականների կողմից, նպաստում էին հայ պետականության տկարացմանը հատկապես Կիլիկյան Հայաստանում և ի վերջո պատճառ դառնում նրա ազգային դիմադրկմանն ու քաղաքական կազմալուծմանը։

Այսպիսով, այժմ հասկանալի է, թե ինչու XI դ. վերջին քառորդում, ինչպես արձանագրել է Մ. Ուռհայեցին, չորսի, իսկ հետագայում վեցի էր բաժանվել ս. Գրիգորի հայրապետական աթոռը։ Ընդ որում, տեր Բարսեղը հովվապետ էր հայոց թագավորանիստ Անի քաղաքում[100], տեր Վահրամը՝ (Պահլավունի) Եգիպտոսում[101] (Եգիպտոսի հայրապետական աթոռը հիմնում է տեր Գրիգորիսը 1075 թ.)[102], տեր Թեոդորոսը Հոնիում և տեր Պողոսը՝ Մարաշ քաղաքում[103]։

Մատթեոս Ուռհայեցին այդ բաժանվածությունը և կաթողիկոսների շատ լինելը բացատրում է նրանով, որ այդ ժամանակներում կաթողիկոս էին ընտրում ոչ թե նկատի ունենալով թեկնածուի արժանավորությունը, այլ ուժեղ ու կարողությամբ բարձր իշխանավորների ցանկությունը։ Կաթողիկոսների ընտրության վիճակը ավելի բարվոք էր Արևելից կողմանց (Աղվանից կոչված) հայրապետական առաքելական աթոռում[104]։ Հավանաբար, հայրապետական աթոռի հարյուրամյա տնտեսական և քաղաքական ճգնաժամին էր արձագանքում Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական»-ում. «Քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ զոյ ազգի մերում, որպէս զի անդանօր նստելով յԱթոռ հայրապետութեան...։ Այլ եմք իբրև զայծամն յորսորդաց և ի շանց փախուցեալք ի քարանձաւս յայս բնակելով յորում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիւք շատացեալք ի գիւղից կամ յագարակաց, յորոց ունիմ և ոչ մի։ Նաև ոչ անդաստան հողոյ, զի վաստակօք և աշխատութեամբ զպէտս մեր լնուաք, և ոչ օգնութիւն ուստէք որպէս արժան էր ի թագաւորաց և յիշխանաց ի Քրիստոս հաւատացելոց»[105]։

Արդարև, տեր Պողոս կաթողիկոսի հապճեպ հրաժարումը Մարաշում հիմնված հայրապետական աթոռից բարոյալքող ազդեցություն պետք է ունենար Փիլարտոսի վրա, որի իշխանությունը առանց այդ էլ սկսել էր

---

99 Մ. Ուռհայեցի, էջ 226։

100 Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 221։ 1082 թ., Աղվանից Ստեփաննոս կաթողիկոսի հրամանով, Կյուրիկե թագավորի հավանությամբ, Անիում նստող Շիրակի Բարսեղ արքեպիսկոպոսը ձեռնադրվեց ամենայն հայոց կաթողիկոս։ Սրանով Անիում վերականգնվեց Ս. Գրիգորի աթոռը, որը վաղուց ի վեր վերացել էր դաժան հոռոմների նենգ մեքենությունների պատճառով։ Մ. Ուռհայեցի, էջ 221։

101 Մ. Ուռհայեցի, էջ 210։ Ուռհայեցին նշում է, որ այդ ժամանակներում (1074—1075 թթ.) «եվ բազումք ժողովեցան հայոց յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց»։ Տե՛ս Մ. Ուռհայեցու ժամանակագրություն Երուսաղեմի հրատարակությունը։

102 Տեր Գրիգորիսը (Գրիգոր Մագիստրոսի որդին) Վահրամ Պահլավունու, հոգևորական անունն է, որը, ինչպես տեսանք, չենթարկվելով Փիլարտոս Վարաժնունուն, գնացել էր Սասուն, այնտեղից էլ Անի, որտեղ իր քեռորդի Բարսեղին եպիսկոպոս ձեռնադրելուց հետո (որը, ինչպես տեսանք, 1082 թ. ձեռնադրվեց ամենայն հայոց կաթողիկոս), գնաց Կ. Պոլիս ու Հռոմ, այնուհետև Եգիպտոս և հաստատեց հայրապետական աթոռը։ Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 210։

103 Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 225—226.

104 Մ. Ուռհայեցի, էջ 227—229։

105 «Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանելի սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ», էջմիածին, 1865, էջ 8—9։

երբալ ոչ միայն Սուլայմանի՝ Անտիոքը և Կիլիկիան ու Պոլճտանի ամիրայի կողմից Ջահան գավառը գրավելուց, այլև իրեն ենթակա մյուս քաղաքներում սկսվող կառավարիչների երկպառակությունների պատճառով։ Հետևաբար, ըստ երևույթին, Փիլարտոսին մնում էր դիմել սելջուկյան Սուլթան ալ-Աղամ Մելիքշահին, խնդրելով վերջինից օգնություն՝ փրկելու իր փլուզվող իշխանությունը։

«Շէլ (1086 թ.),—գրում է Մ. Ուռհայեցին,—յարուցեալ անօրէն Փիլարտոսն և գնաց յերկրպագութիւն Մելէք-շահին՝ տիեզերական սուլտանին վասն խնդրելոյ ի նմանէ զքաղցրութիւն և զխաղաղութիւն ամենայն հաւատացելոցն Քրիստոսի... և առեալ Փիլարտոսն բազում զանձս ոսկոյ և արծաթոյ և ազնիւ ձիս և ջորիս, և հանդերձս երևելիս և պայծառս, և գնացեալ առ սուլտանն ի յաշխարհն Պարսից»[106]։ Փիլարտոսը իր քաղաք Ուռհայում որպես իր տեղակալը թողեց Պառակամանոս[107] անունով մի հույն իշխանի, որին սպանում են Փիլարտոսի կողմնակիցները Պարսամա անունով մի իշխանի գլխավորությամբ[108]։

«Մելիք Շահը, լսելով Պարսկաստանում կատարվածի մասին, դաղարեց Փիլարտոսին հարգել և պատվել։ Փիլարտոսը, ամեն կողմից հուսահատված, անմիջապես հրաժարվեց իր քրիստոնեական հավատքից, որ մինչ այդ աղտեղությամբ էր դավանում և դարձավ Քրիստոսի հավատքի ուրացող, կարծելով, որ այդպիսով պարսից (իմա՝ սելջուկների) շրջանում պատիվների կարժանանա։ Սակայն նա սոսկ շահեց այն, որ Քրիստոսին ուրանալով՝ աստծու և մարդկանց արգահատելի և ատելի դարձավ»[109]։

Ըստ Միքայել Ասորու, Փիլարտոսը հայ և բյուզանդական զորքերով պայքարում է սելջուկների դեմ։ Սակայն տեսնելով, որ նա ի վիճակի չէ դիմադրել սելջուկներին, գնում է Բաղդադ ու խորասան և ընդունում է մահմեդականություն։ Ստանալով հրովարտակ խալիֆայից և սելջուկյան սուլթանից (Մելիքշահից), իր իշխանությունը պահպանելու մասին, վերադառնում է իր երկիրը։ Մինչև այդ, իր բացակայության ժամանակ, սելջուկները գրավել էին իր երկրի տարածքի մեծ մասը[110]։

Հետևաբար մահմեդականությունն ընդունելու և Մելիքշահի հովանավորության տակ մտնելու գնով, իր իշխանությունը հաստատելու բոլոր հույսերը կորցնելուց հետո[111] Փիլարտոսը զզջալով վերստին դավանում է քրիստոնեությունը, մտնում վանք[112] (հավանաբար Մարաշի վանքերից մեկը) և մեռնում է այնտեղ, 1090 թ.[113]։ Նրա մահից չորս տարի առաջ (1086 թ.) մահացել էր նաև նրա գլխավոր ախոյաններից մեկը՝ Սուլայման շահը, որն սպանվել էր Մելիքշահի եղբոր Տուտուշի հետ՝ Հալեպին տիրելու համար նրանց միջև տեղի ունեցած ճակատամարտի ընթացքում[114]։

Այսպիսով, XI դ. 70—80-ական թվականներին ձախողվեց Փիլարտոսի փորձերը՝ հիմնելու ընդարձակ մի պետություն, որը տարածվում էր Հայաստանի արևմտյան սահմաններից մինչև Անտիոք քաղաքը։ Այլ կերպ էլ չէր կարող լինել։ Նրան խանգարում էին, ինչպես տեսանք, մի կողմից Սուլայման շահի նվաճումները (1084—1085 թթ.) Դաշտային Կիլիկիայում և Անտիոքում, Ասորիքի նվաճումը Տուտուշի կողմից 1078—1086 թթ. և մյուս կողմից՝ Միջագետքի ու Ասորիքի (Սիրիայի) նվաճումը (1086 թ.) Մելիքշահի կողմից[115]։

1087 թ. Մելիքշահի հրամանով Պուղան ամիրան գրավեց Ուռհան և քաղաքի կառավարիչ նշանակեց Խուլուխ անունով մեկին[116]։ Եդեսիան մնաց Պուղանի իշխանության ներքո մինչև 1094 թ., երբ Ասորիքի տիրակալ Մելիքշահի եղբայր Տուտուշը հաղթեց Պուղանին, գրավեց Եդեսիան և քաղաքապետ վերահաստատեց Հոռոմոց իշխան Կուրապաղատ Թորոսին՝ Հեթումի որդուն[117]։

Ուռհան մնում է Թորոսի կառավարչության ներքո մինչև խաչակիրների ժամանումը։ 1098 թ. Եդեսիան գրավվում է Պաղտին խաչակիր իշ-

106 Մ. Ուռհայեցի, էջ 233։

107 Պառակամանոսը անուն չէ, այլ՝ պարակիմոմենոս (սենեկապետ) տիտղոսը։ Տե՛ս Մ. Ուռհայեցի, աշխ. թարգմ. էջ 333, ծնթ. 135։

108 Տե՛ս Մ. Ուռհայեցի, էջ 235—237։ 1087 թ. Պուղան ամիրան Մելիքշահի հրամանով ավարառուական պատժիչ արշավանք է կատարում Ուռհայի վրա և գրավում այն։ Ուռհա քաղաքի կառավարիչ է նշանակվում մի զորահրամանատար, որին Խուլուխ էին անվանում, Պուղանը անսալով զրպարտիչներին սպանել է տալիս տասներկու հայ իշխանավոր։ Տե՛ս նաև Վարդան Վարդապետ, էջ 107։

109 Մ. Ուռհայեցի, էջ 234։ Աշխարհ, թարգմ., էջ 153։ Տե՛ս նաև Ս. Սպարապետ, էջ 92—93։ Վ. Վարդապետ, էջ 106։

110 Մ. Ասորի, էջ 407։

111 Մ. Ուռհայեցի, էջ 233, Ս. Սպարապետ, էջ 93։

112 Ասորի, էջ 407։

113 S. Runciman, A. History of the Crusades, I, London, 1965.

114 Մ. Ուռհայեցի, էջ 232։ Մ. Ասորի, էջ 411։ Տուտուշը գրավեց Անտիոքը, 1086 թ.։

115 Մ. Ուռհայեցի, էջ 234։ Abul Faraj, p. 231. El-Bundari, p. 70.

116 Մ. Ուռհայեցի, էջ 236—237։ Վարդան Վարդապետ, էջ 107։

117 Մ. Ուռհայեցի, էջ 248 Գ. Միքայելյանի կարծիքով Թորոսին Եդեսիայի կառավարիչ էր նշանակել 80-ական թվականներին Փիլարտոսը, Տե՛ս Г. Микаелян, История Киликийского Армянского государства, Ереван, 1952, стр. 75.

խանի կողմից[118]։ Վերջինս դավաղրությամբ սպանում է Թորոս (Թեոդորոս) հայ իշխանին և գրավում է քաղաքը՝ հիմնելով այնտեղ Եդեսիայի (խաչակրաց) գրսությունը (1098—1144)։

Փիլարտոսի պետության փլուզման ժամանակ նրա պետության սահմանների մեջ գտնվող Խարբերդը գրավվել էր Զուբու ամիրայի կողմից (1085—1086 թթ.) և այնտեղ հիմնվել էր սելջուկ-թուրքական մի ամիրայություն[119]։ Նրա տիրապետության տակ գտնվող Մելիտինե քաղաքը, որի կառավարիչն էր Ուռհայի Թորոս իշխանի աներ Գաբրիելը[120], որը հարկատու էր դարձել սելջուկներին, 1101 թ. Գաբրիելի և խաչակիր իշխանների միացյալ զորքերի պարտությունից հետո, քաղաքը անցավ Դանիշման ամիրայի ձեռքը[121]։

Արդարև, XI դարի 60—70-ական թվականներին Կիլիկիա գաղթած և Փիլարտոսին ենթարկվող հայ իշխաններից առավելապես կենսունակ դարձան Ռուբինյանները, որոնք սկզբում տիրելով Տավրոսյան լեռնաշխարհի՝ Լեռնային Կիլիկիայի դժվարամերձ ամրոցներին ու բերդերին, շարունակելով հայ ժողովրդի անկախանալու ձգտման ավանդույթները, հենվելով Կիլիկիա գաղթող հայ բնակչության օրեցօր աճող տնտեսական ու ռազմա-քաղաքական ուժի վրա, իսկ հետագայում XII դարում համառ պայքար մղելով Բյուզանդիայի, սելջուկ թուրքերի և խաչակիրների դեմ, օգտագործելով նրանց հակամարտությունները հիմք դրեցին Կիլիկիայի հայկական պետությանը, որը գոյատևեց ավելի քան երեք հարյուր տարի։

Ինչպես նշվեց վերևում, 1072—1075 թթ., այն ժամանակ, երբ Մելիքշահը զբաղված էր իր գահի ամրապնդմամբ, կարևոր դեպքեր էին տեղի ունենում Բյուզանդիայի՝ Փոքր Ասիայի հարավարևմտյան ու հարավային նահանգներում և Անդրկովկասում։ Այդ պատճառով էլ նա շտապ վերադառնում է Սպահան կարգավորելու համար դրությունը վերոհիշյալ նահանգներում։

Ինչպես նշվեց, Ալփասլանի սուլթանության վերջին շրջանում

118 Մ. Ուռհայեցի, էջ 261—262։ J. Laurent, Des Grecs aux croisés, Etudes sur l'histoire d'Edésse entre 1071 et 1098, Byzantion, 1 (1924) p. 367—368.

119 Տե՛ս M. Yinanc, էջ 125։

120 Մ. Ուռհայեցի, էջ 252։ Ուռհայեցին նրան անվանում է Խորիլ, որը բյուզանդական Ղավրիլն է։ Ս. Սպարապետի Տարեգրքում՝ Խավրիլ։ E. Honigmann, Malatya, Islam Enc. 3 (1936) p. 195.

121 Տե՛ս Abul Faraj, p. 229։ Մ. Ուռհայեցի, էջ 272—274։

Անդրկովկասի մահմեդական ամիրայությունները Վրաստանի ու Աբխազիայի թագավորությունները և Տաշիր-Զորագետի կամ Գուգարքի Կյուրիկյան հայկական փոքրիկ թագավորությունը անցել էին սելջուկյան սուլթանության գերիշխանության տակ։ Այդ քաղաքական իրավիճակը թեև շարունակվում էր գոյատևել Մելիքշահի սուլթանության սկզբնական շրջանում 1072 թ., սակայն, ըստ երևույթին, սուլթանության արևելյան նահանգներում սկսվող գահակալական կռիվներն ու երկպառակությունները մի պահ առիթ էին տվել Աբխազիային և Վրաստանի թագավոր Գեորգի Բ-ին (1072—1089 թթ.) նորից հարելու Բյուզանդիային և հրաժարվել էին ենթարկվել սելջուկյան գերիշխանությանը[122]։

Դեռևս Ալփասլանի սուլթանության վերջին տարիներին Բագրատ Դ-ը հարձակվեց Տփղիսի վրա, որն Ալփասլանը տվել էր Փատլուն ամիրային։ Գանձակի ամիրան այս կռվում պարտության մատնվելով Լիպարիտի որդու Իվանե Բաղվիվաշի կողմից, գերի բռնվեց և ազատ արձակվելով՝ տվեց Աբխազների ու վրաց թագավորին Տփղիսն ու նաև Գադաբերդը և Քավազի կամ Գավարդին ամրոցը («ղՔոզինն»), որոնք գտնվում էին Ղազախ գավառում՝ Ազատև գետի արևմտյան կողմում[123]։

Սուլթան Մելիքշահը գահ բարձրանալուց հետո, Բագարատի տեղ Վրաստանի թագավոր դարձած Գեորգի Բ-ի ժամանակ (1072—1089) տեղի ունեցան որոշ փոփոխություններ։ Գագա բերդը ապստամբեց թագավորի դեմ։ Այս ապստամբությունը ճնշող Իվանեն ու նրա որդի Լիպարիտը գնում են Մելիքշահի մոտ և դրդում նրան արշավանք սկսել Գեորգի Բ թագավորի դեմ։

Արդարև Մելիքշահը այլ պատճառներ ուներ արշավելու Անդրկովկաս։ Ինչպես գիտենք, դեռևս Ալփասլանի ժամանակ 1069—1070 թթ. Ալփասլանի դեմ ապստամբած Ալ-Բասասիրը՝ թուրքմենական Յավղու ցեղի առաջնորդը, յուրայինների մի մասի հետ Ատրպատականի և Հայաստանի վրայով անցել էր Սեբաստիա՝ թողնելով Յավղու թուրքմենների մի խոշոր մասը Ատրպատականում։ Վերջիններս օգտվելով Մելիքշահի գահ բարձրանալու առիթով տեղի ունեցած գահակալական երկպառակություններից, Մելիքշահից անկախ ասպատակություններ էին կատարում Հայաստանում։

122 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., էջ 68։

123 «Համառոտ պատմութիւն ընծայեալ Ջուանշերի պատմչի», էջ 113—114։

Հետևաբար, Մելիքշահը 1075 թ. արշավանք է կազմակերպում դեպի Անդրկովկաս, մի կողմից պատժելու Յավղու ցեղի թուրքմեններին և մյուս կողմից, չհանդուրժելով Վրաստանի զորեղացումն ու միրձեցումը Բյուզանդիային, ցանկանում էր սելջուկյան աշխարհակալությանը ենթարկել Անդրկովկասի մահմեդական և քրիստոնյա տիրակալներին։

Մելիքշահը Իվանեի և նրա որդի Լիպարիտի ընկերակցությամբ Ատրպատականի վրայով մտնում է Աղվանք (Առան)։ Մինչ այդ Յավղու ցեղի մնացորդները Մելիքշահի առջևից Հայաստանի և Միջագետքի վրայով անցել էին Ասորիք։ Հետևաբար Մելիքշահը մտնում է Վրաստան, պաշարում և գրավում Տփղիս և Շամշուլդե քաղաքները, այնուհետև՝ Քարթլին[124]. և վերադարձի ճանապարհին գրավում է Գանձակը, վերջ է դնում Շադդադյանների տիրապետությանը[125]։ Ատրպատականի, Շիրվանի և Հայաստանի կուսակալն է նշանակվում ամիրա Սրահանդ Սավտեքինին։ Բազմաթիվ գերիներով և ավարով Մելիքշահը 1076 թ. վերադառնում է Սպահան[126]։ Սրահանդի նահանգապետության ժամանակ Առանի հովիտներում, սարերում և բերդերում տեղավորվում են Խորասանից գաղթած քոչվոր թուրքմենների զանգվածներ[127]։ Սակայն շուտով տեղի ունեցան նոր ընդհարումներ վրացիների հետ։ Գեորգի Բ-ը կռվի բռնվելով Սրահանդ Սավտեքինի և նրան ուղեկցող Գանձակի և Դվինի ամիրաների հետ, Շամշուլդեի դաշտում՝ Փարցխիսում պարտության մատնելով վերջինին, վերագրավում է Տփղիսն ու Շամշուլդեն։ Այնուհետև Գեորգին վերագրավում է Կարսն ու Վանանդը և բազմաթիվ այլ բերդեր Կղարջքում, Շավշեթում, Ջավախքում և Արդահանում[128]։

Չհանդուրժելով Վրաստանի հզորացումը, Մելիքշահը 1078 թ. ստիպված է լինում նորից վերադառնալ Անդրկովկաս։ Մելիքշահը Արաքսի վրայով մտնում է Վրաստան, կողոպուտի է ենթարկում Սոմխիթը, պարտության է մատնում Իվանեին և գերի վերցնում։ Մելիքշահը գրաված վայրերը նորից հանձնում է Սրահանդին։ Վերջինս երկրորդ անգամ 1078 թ. հարձակվում է Վրաստանի վրա և կրկին պարտվում Գեորգ Բ-ի կողմից։ Սրա հետևանքով Ուղթիքը, Կարինը, Կարսը և այլ քաղաքներ ու բերդեր անցնում են հայ իշխան Գրիգոր Բակուրյանի իշխանության ներքո, որը, իբրև առանձին վարչական միավոր, ճանաչում է Վրաստանի հպատակությունը[129]։

Սակայն Մելիքշահը 1080 թ. մի մեծ բանակ ուղարկեց Ահմեդ ամիրայի հրամանատարության ներքո, որը գալով Վրաստան, պարտության մատնելով վրացական զորքերին, անցնում է Գրիգոր Բակուրյանի դքսության սահմանները, պաշարում է Կարսը, գրավում այն և վերջնականապես ենթարկում սելջուկներին։ Նա գրավում է Կարինը, Ուղթիքը և այլ բերդեր։ Սրանով վերջ է դրվում Գրիգոր Բակուրյանի դքսությանը, որի տարածքի վրա նույն թվականին հիմնադրում է Սալտուխյան ամիրայությունը՝ Կարին կենտրոնով[130].

Այնուհետև Ահմեդ ամիրան կրկին մտնում է Վրաստան և ընդհարվում Գեորգի Բ թագավորի հետ։ Վերջինս փախչում է Աբխազիա։ Ահմեդը ավարառության է մատնում թագավորի գանձարանը և բազմաթիվ գերիներով ու ճոխ ավարով վերադառնալիս, ճանապարհին հանդիպում է թուրքմեններին, որոնք Աբու Յակուբ և Իսա Բորու ամիրաների գլխավորությամբ Հայաստանի վրայով քոչում էին Փոքր Ասիայի արևմտյան նահանգները։ Ամիր Ահմեդը խորհուրդ է տալիս նրանց արշավել Վրաստան, մի կողմից շահագրգռելով նրանց՝ Վրաստանում ձեռք բերելիք ճոխ ավարով, մյուս կողմից Վրաստանի անպաշտպան լինելու հանգամանքով։ Թուրքմեն ամիրաները շլանալով Ահմեդ ամիրայի ձեռք բերած ավարի ճոխությամբ, փոխում են իրենց ճանապարհը և մտնելով Վրաստան, գրավում են Քարթլին և Քութայիսը, հրդեհում են Արտանուջի և Կղարջքի վանքերն ու եկեղեցիները[131], ձեռք բերելով ճոխ ավար, վերադառնում են ու ձմեռում Առանի հովիտներում։ Հաջորդ տարում 1081 թ. նորից ասպատակում են Վրաստան, այս անգամ իրենց նվաճումները հասցնում են մինչև Ճորոխ գետի ավազանը ու այնուհետև գրավում Տրապիզոնը։

Հավանական է, որ վերոհիշյալ դեպքերն է ակնարկում վրաց ժա-

---

124 Տե՛ս M. Brosset, t. I, p. 343—344.

125 V. Minorsky, Studies, p. 24—25.

126 Տե՛ս M. Yinanc, p. 110. J. Kafesoğlu, Meliksah devrinde, p. 114, O. Turan, Selcuklular tarihi, p. 144. M. Brosset, I, p. 343—344.

127 Դերբենդնամե, տե՛ս Z. Togan, Islam Ansiklopedisi Ադրբեջան հոդվածը։

128 Տե՛ս Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները, հ. Ա, էջ 208 և 216, Ջուանշեր, գլ. ԺԷ, էջ 114։ Պետք է նշել ակադ. Ի. Ջավախիշվիլին Տփղիսի ու Շամշուլդեի գրավումը սելջուկյան զորքերից և Շամշուլդեի դաշտում տեղի ունեցած ճակատամարտը ենթադրում է 1073—1074., որը անհավանական է, քանի որ Մելիքշահը այդ թվերին գտնվում էր Խորասանում և չէր կարող զբաղվել Անդրկովկասում։ Տե՛ս նաև Հ. Մանանդյան, հ. Գ, էջ 69։

129 Տե՛ս M. Yinanc, p. 110. Kafesoğlu, Melikšah devrinde, p. 14.

130 M. Yinanc, p. 111. J. Kafesoğlu, Meliksah devrinde p. 113—114. M. Brosset, p. 346—347. Տե՛ս նաև Н. Джавахишвили, նշվ. աշխ., էջ 249։

131 Տե՛ս M. Yinanc, p. 111—112.

մանակագրի հետևյալ վկայությունը,— «Ցաւուրսն յայնոսիկ ասպատակեցին Թուրքք յերկիրն Վրաց, և բաղում արիւնս հեղին, և զյոլովս գերեցին և գնացին, որոց գլխաւորին անուն Բուժղուբ կոչեին»[132]։

1086 թ. երբ Մելիքշահը ուղևորվում էր Արևմուտք, կարգավորելու Ասորիքի գրությունը, ճանապարհին երրորդ անգամ Ատրպատականի վրայով մտնելով Հայաստան, վերջնականապես իրեն ենթարկեց այն։ Մելիքշահի՝ Հայաստանի վրայով դեպի Ասորիք կատարած արշավանքի և Մելիքշահի աշխարհակալության հզորության մասին, Մ. Ուռհայեցին գրում է հետևյալը. «Եւ յայսմ ամի (1086 թ.) տիրեաց սուլտանն (Մելիքշահը) ամենայն աշխարհին Հայոց և Հոռոմոց և գայր հասանէր ի մեծ քաղաքն Անտիոք և տիրանայր այնմ աշխարհին և Հալպայ և տիրելով տիրեաց ի Կազբիականէն[133] մինչև ի յՈվկիանոս[134] և հաւանքցոյց առ հասարակ զամենայն թագաւորութիւնս իւրոյ աթոռոյն՝ որք յայսկոյս Ովկիանոսի և ոչ մնաց աշխարհ՝ որ ոչ հնազանդեցաւ նորա թագաւորութեանն, և եղեն հարկատուք և հնազանդեցան նմա երկոտասան ազգ թագաւորաց։ Եւ եղեւ ետ տիրանալոյն Անտիոքու՝ իշեալ յեղբ յՈվկիանոս ծովուն ի տեղին որ կոչի Սեռոտի[135] և տեսեալ Սուլտանին զծովն մեծ՝ զոհանայր և օրհնէր զԱստուած, որ մեծացոյց զթագաւորութիւնն նորա առաւել քան զհօրն նորա Աբասլանայ (իմա՝ Ալփասլան—Ս. Բ.) և ձիով իւրով մտեալ կոխէր զՈվկիանոս և եհան զթուրն իւր և երեք հաղ (հեղ, անգամ) մխեաց ի յՈվկիանոս զթուրն իւր»[136]։

Հայաստանում եղած ժամանակ Մելիքշահը կրկին հաստատում է Մանուչեի տիրակալությունը Անիում։ Մանուչեն իր հերթին ճանաչում է նրա գահերեցությունը։ Որ Մանուչեն հավատարիմ էր իր գահերեցի՝ Մելիքշահի նկատմամբ, այդ երևում է Անիի Մզկիթի Մինարեի վրայի արձանագրությունից, որտեղ ասված է, որ այն կառուցված է Մաուլանա ալ-Սուլթան ալ-Մուաղդամ Շահանշահ Մալիք իբն Ալփ Արսլանի կառավարության ժամանակ[137]։

Այս ժամանակ Մելիքշահին իր հպատակությունն է հայտնում նաև

132 Տե՛ս Ջուանշեր, գլ. ԺԷ, էջ 114—115։

133 Այսինքն՝ Կասպից ծով։

134 Այսինքն՝ Միջերկրական ծով։

135 Խոսքը Մուսա լեռան շրջանի, ժամանակակից Սվեդիայի մասին է։

136 Մ. Ուռհայեցի, էջ 234—235։ Տե՛ս նաև Վարդան Վարդապետ, էջ 106, Ս. Սպարապետ, էջ 90։

137 V. Minorsky, Studies, p. 81—82.

Շիրվանի մելիքը, որը տարեկան յոթանասուն հազար դինար հարկ էր վճարում Մելիքշահին[138]։

Այսպիսով, մի կողմից 1070—1080-ական թվականներին սելջուկյան սուլթանի և ամիրաների կատարած ավարառական արշավանքները Անդրկովկաս և մյուս կողմից այդ թվականներին քոչվոր թուրքմենների գաղթը դեպի Անդրկովկաս, այդ թվում Հայաստանի և Վրաստանի տարածքը, ստիպեցին հայ և վրաց թագավորներին ու իշխաններին ճանաչել սելջուկների գերիշխանությունը և դառնալ հարկատու նրանց։

Այսպես, Վրաստանի Գեորգի Բ թագավորը գնաց Մելիքշահի մոտ՝ հայտնելով իր հպատակությունը, խոստացավ տարեկան խարաջ վճարել սելջուկյան սուլթանությանը։ Նրան հետևեց նաև Տաշիր Զորագետի Կյուրիկյանների թագավոր Կյուրիկեն, որը 1088 թ. այցելեց Սպահան և տեսակցելով Մելիքշահի հետ, ճանաչեց նրա հպատակությունը, խոստանալով հարկատու դառնալ սուլթանությանը[139]։ Սակայն Մելիքշահի մահից հետո սկսվում է Գուգարքի աստիճանական նվաճումը սելջուկների ու վրացիների կողմից և ի վերջո չդիմանալով բյուզանդացիների, վրացիների ու սելջուկների ճնշմանը[140], ուժասպառ է լինում և XII դ. առաջին քառորդում միացվում է Վրաստանին[141]։

Հայկական մյուս մեծ իշխանությունը Արևելքում Բաղաց կամ Կապանի Սյունյաց թագավորությունն էր։ Ստեփանոս Օրբելյանի՝ Սյունյաց պատմիչի վկայությամբ, այս թագավորության իշխանության տակ էին գտնվում տվյալ ժամանակաշրջանում 43 բերդ, որոնցից հայտնի ու նշանավոր էին տասներկուսը, 48 վանք և 1008 գյուղ, իսկ նրա կենտրոնն էր Կապան մայրաքաղաքը[142]։

Նույն այս պատմագիրը վկայում է, որ Սյունյաց Սենեքերիմ թագավորը գնացել էր Սպահան Մելիքշահի մոտ և հպատակություն հայտնելով, կարողացել էր պահպանել իր թագավորությունը։ Մելիքշահի

138 Sadruddin El-Huseyni, p. 50.

139 Վարդան Վարդապետ, էջ 106։ Կյուրիկե Ա-ի ժամանակ (1048-ից մինչև XII դարի իննսունական թվականները) Կյուրիկյան թագավորության մեջ էր մտնում հին Գուգարք նահանգի արևելյան գավառները՝ Տաշիր-Լոռին, Զորագետը և նրանց հյուսիսում գտնվող շրջանները, որ վրացիներն անվանում էին Սոմխեթ, ինչպես նաև Ուտի նահանգի արևմտյան գավառները։

140 Е. Пахомов, О Монете Корике Куропалата, стр. 48.

141 Տե՛ս Ջուանշեր, նույն տեղում, էջ 119 և Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները, հ. Ա, էջ 217։

142 Տե՛ս Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1911, գլ. ԿԱ, էջ 134։

հրամանով վերականգնվել էր Սյունյաց թագավորության նախկին սահմանները (որը, ինչպես տեսանք, կորցրել էր Ալփասլանի՝ Հայաստան կատարած 1064 թ. արշավանքի ժամանակ)։ Այդ մասին Սյունյաց պատմագիրը արձանագրում է հետևյալ վկայությունը. «Եւ էր յաթոռ սուլտանութեանն Մէլիք շահն՝ այր բարեբարոյ և խաղաղարար. յորմէ մեծարեալ լինէր Սենեքերիմ ի պատիւ թագաւորութեան. եւ յոյժ երեւելի փառօք թագաւորեաց ի տանս Բաղաց, և ընդարձակեաց զամենայն սահմանս տէրութեան իւրոյ, և բազում ամօք վարեալ զթագաւորութիւնն քաղցր և խաղաղական կենօք մինչև ի մահ Մելիք սուլտանին, որ մեռաւ ի 541 (1092) թուականին»[143]։

Սյունիքի սահմանները որոշ տեղերում վերականգնում են զենքի ուժով։ Այսպես, Հասան իշխանը 1086 թ. Գանձակի Փատլունյաններից ազատագրում է Կովսականը[144]։

Սյունյաց թագավորության կախվածությունը սելջուկյան աշխարհակալությունից ձևական բնույթ էր կրում, հպատակության միակ արտահայտությունը հարկատվությունն էր Ատրպատականի և Հայաստանի կուսակալին։

Հայկական իշխանությունների XI դ. երկրորդ կեսին իրենց գոյությունն էին պահպանում մանավանդ Հայաստանի Ուտիք և Արցախ նահանգներում «Այդպիսիներից էին,— ինչպես նշում է Գարեգին Հովսեփյանը,— Արցախի կամ Խաչենի երկնչող իշխանությունները՝ խոխանաբերդում և Հաթերքում, իրենց սուորագրյալ ավելի փոքր իշխանություններով կամ ազատներով»[145]։ Արցախի իշխանությունները կարևոր դեր էին խաղում Հայաստանի ինքնուրույնության համար մղվող պայքարում։

Իր գոյությունն էր պահպանում Վասպուրականի Խեդենեկյան Արծրունիների փոքր իշխանությունը, որին ապաստան էին ծառայել Ամյուկ անմատույց ժայռաբերդը և Ախթամար կղզին։ Այս իշխանության սահմաններում հիմնագիրն էր Խեդենեկ Արծրունին, որի իշխանության սահմաններում էին գտնվում Վանա լճի արևելյան և հարավային կողմի գավառները[146]։ Խեդենեկ Արծրունուն հաջորդեցին որդին՝ Թոռնիկը, ապա թոռը՝ Թագեվոսը, որը հաջողությամբ ետ մղեց թշնամիների բոլոր հարձակումները

143 Նույն տեղում, էջ 319։

144 Նույն տեղում, էջ 326։

145 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 13։ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 112—123։

146 Թովմա Արծրունի, էջ 310։

Վասպուրականի գավառներից։ Մինչև Մելիքշահի մահը Խեդենեկյան Արծրունիների իշխանությունը ենթակա էր սելջուկներին։

Բացի հիշատակված այս իշխանություններից, հայկական իշխանություններ եղել են նաև լեռնային ու ամրացված և այլ տեղերում, գլխավորապես Ռշտունիքում և Մոկքում[147]։

Այս իշխանությունները, իհարկե, դժվարությամբ էին կարողանում իրենց գոյությունը պահպանել, որովհետև շրջապատված էին թուրքական և այլ հին ու նոր ամիրայություններով, որոնք կազմակերպվել էին Հայաստանի շրջաններում։ Այսուհանդերձ նրանք Հայաստանի անկախության վերականգնման հենարաններ էին։

1070—1080-ական թվականների սելջուկ-թուրքական արշավանքների հետևանքով նյութական և մարդկային մեծ վնասների էր ենթարկվել Հայաստանը և Վրաստանը։ Թուրքմենների ավարառությունը մի կողմից և հարկերի ծանրությունը մյուս կողմից ստիպում էին հայերին արտագաղթել դեպի Կապադովկիա և Կիլիկիա, որի մասին նշվեց վերևում։

Ինչպես վկայում են հայ և օտար մատենագիրները այդ տարիներին, Հայաստանը ասպատակության ենթարկելուց և նվաճելուց հետո օտար և հայ տեղական իշխաններից պահանջում էին ծանր հարկեր, որոնք ջիզիա և խարաջ անվան տակ մուծվում էին Ատրպատականի, Աղվանքի (Առանի) և Հայաստանի կուսակալի գանձարանը Գանձակում։ Հարկերի ծանրության մասին գաղափար կազմելու համար բավական է բերել առաջին կուսակալ Սավտեքին ամիրայի մահվանից հետո նրա թողած ժառանգությունը, երկու միլիոն ոսկի դինար, տասնհինգ հազար թանկագին հագուստ, երեսուն հազար ոչխար, հինգ հազար ձի և հազար ուղտ[148]։ Վկայություն կա նաև, որ Հայաստանից հավաքված տարեկան հարկը կազմում էր մեկ միլիոն դինար ոսկի, որը մուծվում էր Մելիքշահի գանձարանը[149]։

Ինչպես նշվեց, սելջուկյան սուլթանության գանձարանը մուծվող ջիզիայի ու խարաջի չափը կարգավորելու նպատակով մի շարք հայ և վրացի թագավորներ ու իշխաններ[150] գնացին Մելիքշահի մոտ։

147 Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Գ, էջ 77։

148 Sadruddîn El-Huseyni, p. 64. El-Bundari, p. 78. Սիբտ Իբն-ալ-Ջաուզի, Միրատ ալ-Զաման։ Տե՛ս M. Yinanc, p. 119. Նշվ. աշխ., էջ 119։

149 El-Bundari, p. 56.

150 Սույն հատորում մենք մանրամասն չենք շարադրել XI դարի երկրորդ կեսում գոյություն ունեցող հայկական թագավորությունների և իշխանությունների պատմությու-

1090 թ. ճոխ նվերներով Մելիքշահի մոտ գնաց նաև հոգևորականությունից և ազնվականությունից կազմված մի պատգամավորություն Անիի Բարսեղ կաթողիկոսի գլխավորությամբ և խնդրեց սուլթանից ազատել հայ եկեղեցին ծանր հարկերից և աջակցություն ցույց տալ կաթողիկոսական աթոռի միացմանը[151]։

Մելիքշահը պատվով ընդունեց Բարսեղ կաթողիկոսին և կատարեց նրա խնդրանքը։ «Եւ տեսեալ սուլտանին զՏէր Բարսեղն յոյժ մեծարեաց զնա և կատարեաց զամենայն խնդրուածս նորա. և արարեալ զամենայն կամս Տէր Բարսեղին և ազատեաց զամենայն եկեղեցիս և զվանորայսն և զքահանայսն, և առեալ գիր ազատութեան, և հրովարտակօք և մեծարանօք արձակեաց զհայրապետն Հայոց»[152]։

Ինչպես տեսանք, XI դ. 70—80-ական թվականներին հայոց հայրապետական աթոռը բաժանված էր չորսի, որը մասամբ հետևանք էր հայերի գաղթման և ցրվածությանը Մերձավոր Արևելքի երկրներում։

Օգտվելով առիթից, Բարսեղ կաթողիկոսը խնդրել էր Մելիքշահին աջակցություն ցույց տալ կաթողիկոսական աթոռի միացմանը և նրան միաժամանակ թույլ տալ այցելելու Կիլիկիա և Կապադովկիա՝ կարգավորելու հայրապետական աթոռի բաժանվածության հարցը։ Մելիքշահը ընդառաջելով կաթողիկոսի խնդրանքին, թույլ տվեց նրան ուղևորվել Կիլիկիա և Կապադովկիա։ Այդ մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է.— «Եւ եկեալ արքունական հրամանօք Տէր Բարսեղն գնաց մեծաւ ուրախութեամբ, և արք փառաւորք ի սուլտանէն զհետ իւր. և եկեալ հասանէր ի Ջահան գաւառին և յարեաւ ի վերայ Տեառն Թեոդորոսի, որ հրամանաւ Փիլատոսին նստեալ էր կաթուղիկոս ի Հոնին. և Տէր Բարսեղն ընկենոյր յաթոռոյն զՏէր Թեոդորոսն և առեալ ի նմանէ զքօղն և զգաւազանն... և արար միահեծան զհայրապետութիւնն իւր, և անտի եկն ի քաղաքն Ուռհա»[153]։

Բարսեղ կաթողիկոսի այս եռանդուն գործունեությունը, որի շնորհիվ ինչ-որ չափով ապահովվեց հայ եկեղեցու միասնականությունը, կարևոր նշանակություն ունեցող երևույթ էր, քանի որ հայ եկեղեցին XI դ.

նը, քանի որ այդ մասին հանգամանորեն խոսելու ենք մեր աշխատության երկրորդ հատորում։

151 Մ. Ուռհայեցի, էջ 240։

152 Մ. Ուռհայեցի, էջ 240։ Ս. Անեցի, էջ 118։

153 Մ. Ուռհայեցի, էջ 240—241։ Ս. Սպարապետ, էջ 95—96։

խառնաշփոթ իրադրության մեջ, հայ ժողովրդի ցրված ուժերի միավորման համար, մի ուժեղ ազդակ էր։

1090 թ. Մելիքշահը իր հորեղբորորդի Կութբ ադ-Դին Իսմայիլ Իբն Յակութ ամիրային նշանակեց Ատրպատականի, Շիրվանի և Հայաստանի ընդհանուր կուսակալ՝ մելիք տիտղոսով, որն իրեն կենտրոնավայր էր ընտրել Գանձակ քաղաքը։ Վարդան Վարդապետը վկայում է, որ նա իր «քաղցր և բարեմիտ առ հայս, վասն որոյ խնամածեալ ազգիս՝ շինեցաւ աշխարհս, ազատեալ զվանորայս, և զամենայն եկեղեցականս»[154]։

Ուռհայեցին ևս նրա մասին գրում է.— «Եւ զԻսմայիլն զորդին Ակութին... տիրեալ էր ամենայն աշխարհին Հայոց... և շինող ամենայն աշխարհին Հայոց, զարդարիչ վանորէից և մխիթարիչ կրօնաւորաց, և ազատ պահէր զհաւատացեալսն յամենայն չարեացն Պարսից (իմա՝ սելջուկ թագավորից—Ս. Բ.)»[155]։

Սելջուկյան աշխարհակալության զորեղացումը թույլ տվեց Մելիքշահին վերանայելու ոչ սելջուկ թուրքական ամիրայությունների նկատմամբ մինչ այդ վարած քաղաքականությունը։ Մինչ այդ, եթե սելջուկները հանդուրժում էին մի շարք մահմեդական ոչ թուրք ամիրայությունների առկայությունը Շիրվանում, Հայաստանում և Միջագետքում, որոնք դեռևս 1040—1050 թվականներից վասալական կապերի մեջ էին սուլթանությունից և օգնում էին վերջինիս ռազմական ձեռնարկումներին, ապա 1070-ական թվականներից մեկ առ մեկ վերջ է տրվում նրանց գոյությանը։ Այսպես, 1075 թ. Մելիքշահի Անդրկովկաս կատարած առաջին արշավանքից հետո վերջ տրվեց Գանձակի Շադդադյանների ամիրայությանը[156]։

1085 թ. մահացել էր Ատրպատականի և Հայաստանի կուսակալ Սրահանդ Սավտեքին ամիրան (1075—1085)։ Ընդ որում, կուսակալի նստավայր Գանձակը վերագրավվել էր Փատլունի կողմից։ Այդ պատճառով էլ 1087 թ. Մելիքշահը Պուզան Ամիրայի ընկերակցությամբ նորից ժամանում է Անդրկովկաս։ Այս անգամ նրա գլխավոր նպատակն էր վերջնականապես իրեն ենթարկել Գանձակը։ Գանձակի ամիրա Փատլունը մեծ դիմադրություն ցույց տվեց Պուզանի զորքերին։ Սելջուկները քանդեցին պարսպի հիմքերը, փլցրին մի բուրգ և գրավեցին Գանձակ

---

154 Վարդան Վարդապետ, էջ 108։

155 Մ. Ուռհայեցի, էջ 233—234, 247։ Տե՛ս նաև Ս. Սպարապետ, էջ 97։

156 *V. Minorsky*, Studies, p. 24—25.

քաղաքը. նրանք քաղաքացիների մի մասին կոտորեցին։ Պուղանի հրամանով ջարդը դադարեց և խաղաղություն տիրեց։ Աղվանից կաթողիկոս Տեր Ստեփանոսը այդ ժամանակ քաղաքում էր գտնվում, նա «աստծո օգնությամբ փրկվեց». «վասնզի պահեալ եղև ի Հայոց զօրացն որք էին զհետ Պուղանին»[157]։ Սրանով վերջ դրվեց Շադդադյանների տիրապետությանը Գանձակում։ Այնուհետև Գանձակը նորից դարձավ Ատրպատականի, Առանի և Հայաստանի կուսակալության մայրաքաղաք, որի առաջին կուսակալը, ինչպես տեսանք, դարձավ Կութբ ադ-Դին Իսմայիլ Իբն Յակութը։

Սելջուկյան նվաճումներից զերծ չմնաց նաև Մրվանյան ամիրայությունը Դիարբաքրում։ Հակառակ այն իրողության, որ նրա տիրակալ Նիզամ ալ-Դաուլա Նասրը (1062—1079) հպատակություն էր հայտնել Մանազկերտի ճակատամարտում վճռական հաղթանակ տարած Ալփասլանին, սակայն նրա մահից (1079 թ.) հետո նրան հաջորդող որդին՝ Նասր ալ-Դաուլա Մանսուրը (1079—1096) թեև անվանապես շարունակում էր ճանաչել սելջուկյան հպատակությանը, այնուամենայնիվ, սելջուկյան տիրակալները որոշեցին վերջ տալ նրա ամիրայությանը։

Մրվանյան ամիրայությունը բաղկացած էր հիմնականում Նփրկերտի և Խլաթի շրջաններից։ Միայն Նփրկերտի մասում կային մոտ երեսուն քաղաք և այդքան թվով էլ բերդեր։ Արաբներից բացի կային քրիստոնյաներ, որոնց մեծ մասը հայեր էին։ Ինչ վերաբերում է Խլաթի շրջանին, նրա ազգաբնակչության հիմնական մասը կազմում էին հայերը և մասամբ մահմեդականները։ Ըստ պարսիկ նշանավոր մատենագիր Նասիրի Խոսրովի, որը 1046 թ. ճանապարհորդել էր Հայաստանի գավառներով, Խլաթը համարում է հայերի և մահմեդականների ավագների սահմանագլուխը այն իմաստով, որ մահմեդական տարրը մնացել էր միայն Խլաթում և նրանից հարավ՝ Բաղեշում։ Խլաթում, ասում է նա, երեք լեզվով են խոսում՝ արաբերեն, պարսկերեն և հայերեն։ Ըստ նրա, հենց այս պատճառով էլ քաղաքը կոչվել է Ախլաթ (արաբ. խառնուրդ)[158]։ Սակայն Տուղրիլ բեգի և Ալփասլանի ժամանակ (1040—

157 Մ. Ուռհայեցի, էջ 237։ Գանձակի գրավման մասին տե՛ս նաև Ս. Անեցի, էջ 118։ Վարդան Վարդապետ, էջ 106։ Ս. Սպարապետ, էջ 91։ Փաստորը մահացավ 1091 թ. Բաղդադի մզկիթներից մեկում՝ թշվառության մեջ։ Տե՛ս El-Bundari, p. 77—78.

158 Նասիրի Խոսրով. Սաֆարնամե (պարսկերեն), էջ 8։ Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, էջ 204։

1072 թթ.) Խլաթի, Բաղեշի և Վանա լճի հյուսիս և հյուսիսարևմտյան լեռնային հովիտները բնակեցվել էին քոչվոր խաշնարած քիչ թվով թուրքմեններով[159]։

Թեև Խլաթը Մանազկերտի ճակատամարտի ժամանակ, ժամանակավորապես որպես իկթա հանձնվել էր Սանդուք ամիրային, սակայն Ալփասլանը, որպես հատուցում Մրվանյանների հավատարմությանը՝ Խլաթը նորից վերադարձրել էր նրանց[160]։

Ինչպես վերևում նշեցինք, 1061 թ. Մայաֆարղինի վեզիր Աբու Նասր Մուհամմադի միջնորդությամբ և Տուղրիլ սուլթանի օժանդակությամբ Մրվանյանների տիրույթները բաժանվել էին երկու ամիրայությունների. մեկը Նփրկերտում, Նիզամ-ադ-Դաուլա Նասրի, մյուսը՝ Ամիդում մեծ եղբոր Սաիդի գլխավորությամբ։ Այս երկու ամիրաների մահից հետո Նփրկերտն ու Ամիդը անցան Նիզամ ալ-Դաուլա Նասրի որդուն՝ Նասր ալ-Դաուլա Մանսուրի ձեռքը, որը շարունակում էր ճանաչել սելջուկների գերիշխանությունը։

Մրվանյան վերջին ամիրաների վեզիր արաբազգի Ֆախր ալ-Դաուլան, որը 1062 թվականից Բաղդադի խալիֆայության վեզիրն էր, 1083 թ. իր որդու հետ (որը Նիզամ ալ-Մուլքի փեսան էր) գալիս է Սպահան և, Նիզամ ալ-Մուլքի միջնորդությամբ, մեծ պատվով ընդունվում է Մելիք-շահի կողմից։ Դրդռելու համար վերջինի ախորժակը, տեղեկացնում է նրան Մրվանյան ամիրայության հարյուր տարվա ընթացքում կուտակած հարստության քանակի և դրա տեղի մասին, միաժամանակ խորհուրդ տալով սուլթանին՝ նվաճել այդ ամիրայությունը և բռնագրավել գանձը[161]։

Պետք է նշել, որ Մելիքշահի դիվանը մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքի գլխավորությամբ խիստ դժգոհ էր Մանսուրի վարքագծից։ 1082—1083 թթ. Մուսուլի արաբ ամիրա Շարֆ ադ-Դաուլա Մուսլիմը նվաճելով Միջագետքի և Ջազիրայի քաղաքները, հասել էր Հալեպ և դրանք միացրել իր տիրույթներին։ Մուսլիմը, որը այդ առթիվ ընդհարվել էր Դամասկոսի սուլթան Մելիքշահի եղբոր Տուտուշի հետ, կապ էր հաստատել սելջուկյան սուլթանության կրոնական և քաղաքական գլխավոր հակառակորդներից մեկի՝ Ֆաթիմյան Եգիպտոսի հետ[162]։ Հետևաբար,

159 El-Bundari, p. 76.

160 M. Yinanc. p. 136.

161 Տե՛ս El-Bundari, p. 76. M. Yinanc. p. 137.

162 El-Bundari, p. 11, Chronique de Michel le Syrien, p. 169. Սիբթ Իբն-ալ-Դաուզի, էջ 116—117։ Տե՛ս O. Turan, Selcuklular tarihi, p. 145.

457 — 14

Մրվանյան Մանսուրի բարեկամական հարաբերությունները Մուսուլի տեր Մուսլիմի հետ լավ աչքով չէր դիտվում Մելիքշահի դիվանում։

Մելիքշահը դժգոհ էր նաև այն բանից, որ Մանսուրը իր ամիրայության վեզիր էր նշանակել ոմն քրիստոնյա Աբու Սալիմին, որը, բնականաբար, պաշտպանում էր քրիստոնյաների, այդ թվում՝ հայերի իրավունքները և արտոնություններ տալով քրիստոնյաներին՝ դժգոհություն և բողոք էր առաջացնում մահմեդական բնակչության մեջ։

Այժմ հասկանալի պետք է դառնա, թե ինչու Մրվանյան ամիրայության նախկին վեզիր արաբազգի Ֆախր ալ-Դաուլան այդքան մեծ կրքոտությամբ էր դրդում Մելիքշահին՝ նվաճելու և սուլթանությանը միացնելու Մրվանյան ամիրայության տարածքը։

Սակայն Դիարբեքրի Մրվանյան ամիրայության տարածքի ռազմագիտական նշանակությունը այն գլխավոր գործոնն էր, որը մղում էր սելջուկյան տիրակալներին վերջ տալու այդ ամիրայությանը։

Դիարբեքրի ամիրայության տարածքն ու ամիրայության գլխավոր քաղաքները՝ Նփրկերտն ու Ամիդը, Խլաթն ու Բաղեշը գտնվում էին այն երկու գլխավոր մայրուղիների հանգուցակետերի վրա, որոնք մի կողմից կապում էին Իրանը Տրապիզոնի և Սինոպի վաճառաշահ նավահանգիստների՝ և մյուս կողմից Բյուզանդիայի կենտրոնական և արևմտյան նահանգների, այդ թվում Բյուզանդիայի սրտի՝ Կ. Պոլսի հետ։

Այն հանգամանքը, որ դեռևս Մելիքշահը չէր հրաժարվել իրեն ենթարկելու Սուլայմանի հիմնած սուլթանությունը, ավելի էր մեծացնում Դիարբեքրի ամիրայության տարածքի ռազմագիտական նշանակությունը։

Մյուս կողմից, պետք է նշել, որ դժվար է թերագնահատել նաև հյուսիսային Միջագետքի՝ Մուսուլի և Ջազիրայի, այնուհետև Հալեպ և Անտիոք վաճառաշահ քաղաքների վրայով դեպի Միջերկրական ծով երկարաձգվող մայրուղու ռազմագիտական և առևտրական նշանակությունը։

Արդարև, Մելիքշահի առջև խնդիր էր դրված, իր աշխարհակալական նկրտումների իրագործման ճանապարհին կանգնած երկու խոչընդոտների՝ Մուսուլի, Ջազիրայի և Հալեպի տիրակալ Մուսլիմի սուլթանության և Դիարբաքրի Մրվանյան ամիրայության միացումն ու ենթարկումը իրեն։

Մելիքշահը սկսեց վերջինից։ Ընդ որում, Ֆախր ալ-Դաուլայի առաջարկը արագորեն որդեգրվեց և ընդունվեց Նիզամ ալ-Մուլքի գլխավորած մեծ դիվանի կողմից։ Չվստահելով միայն Ֆախր ալ-Դաուլայի հավատարմությանը, Մրվանյանների դեմ ձեռնարկվող արշավանքի համահրամանատարներ նշանակվեցին Ֆախր ալ-Դաուլան՝ որպես արշավանքի քաղաքական և ռազմական գործերի լիազոր, իսկ Ալթունտուկը, որպես ռազմական հրամանատար։ Մելիքշահի հրամանով սուլթանական բանակին միացան նաև Խարբերդի Ջուբուք ամիրայի զորքերը, Մանազկերտի և Մուշի ամիրա Սանդուկը, Իրաքում նվաճումներ կատարող Արտուխ բեգի և մի շարք այլ սելջուկների վասալ՝ Միջագետքի արաբ ամիրաների բանակները[163]։

Մրվանյան Նասր ալ-Դաուլա Մանսուրը, լսելով սպառնացող վտանգի մասին, օգնության է կանչում իր բարեկամ Մուսլիմին, խոստանալով նրան տալ Ամիդը իր շրջակայքով։ Մուսլիմը վախենալով Մելիքշահի հաշվեհարդարից, փորձում է բարեխոսել Մրվանյանների մասին Մելիքշահի մոտ, սակայն վերջինս մնում է անդրդվելի։ Ուստի Մուսլիմը իր զորքով ներկայանում է Ամիդ և Մանսուրի հետ նախապատրաստվում են դիմադրավել Ամիդի վրա արշավող սելջուկյան բանակներին։ Մուսլիմը տեսնելով մոտեցող սելջուկյան բանակների հզորությունը խնդրում է Ֆախր ալ-Դաուլայից բարեխոսել սելջուկների մոտ հաշտություն կնքելու համար։ Վերջինս գաղտնի համաձայնվում է Մուսլիմի հետ և հրամայում իր բանակներին նահանջել, որպեսզի հնարավորություն տա Մուսլիմին գնալ դեպի Մուսուլ։ Արտուխ բեգի հրամանատարության տակ գտնվող թուրքմենները չեն ենթարկվում Ֆախր-ալ-Դաուլայի հրամանին, ասելով, որ մենք հեռու երկրներից ենք եկել ավար և ապրանք ձեռք բերելու, մինչդեռ սրանք արաբների հետ հաշտություն են կնքում. զայրանալով եղելությունից, Արտուխից ծածուկ, գիշերը անցնում են Ջուբուք ամիրայի հրամանատարության տակ։ Հակառակ մահմեդական ավանդույթներին, 1084 թ. հուլիսի 19-ին՝ ուրբաթ օրը, անակնկալ հարձակվելով արաբական զորքերի վրա, ցիրուցան են անում նրանց։ Ռազմի դաշտից մազապուրծ փախած Մուսլիմն ու Մանսուրը ապաստան են գտնում Ամիդի պատերից ներս։ Թուրքմենները մտնելով արաբ ամիրաների և հրամանատարների վրանները, գերում են կանանց և երեխաներին, ապա վզերին անցկացնելով պարաններ, վաճառում էին մեծամեծներին՝ տասը, ցածր աստիճանավորներին՝ հինգ, մյուս տղամարդկանց, կանանց և երեխաներին հաջորդաբար երկու և մեկ, ձիերին հինգ, ուղտերին մեկ, ոչխարներին կես, գրաստներին մեկ քառորդ դինարով և այլն։

---

[163] *El-Bundari*, p. 76.

Ֆախր ալ-Դաուլան, չդիմանալով իր ազգակիցների նվաստացուցիչ թշվառ կացությանը, դիմում է Արտուխ բեգին ներգրավելու թուրքմենների վարքագծի վրա և առաջարկում՝ արաբ գերիներին ուղարկել Սպահան։ Արտուխ բեգը Ֆախր ալ-Դաուլային տալիս է թուրքմենի ավարառական վարքագիծը բնորոշող պատասխան. «Ես կռվող մարդ եմ։ Ռազմագերիներին բանտարկելը մեր (իմա՝ թուրքմենների) սովորության մեջ չի մտնում։ Մենք նրանց (ռազմագերիներին) կա՛մ վաճառում ենք, կա՛մ էլ ազատ ենք արձակում և ես քո առաջարկը չեմ կարող կատարել»[164]։ Սակայն Արտուխ բեգը վիրավորվելով Ֆախր ալ-Դաուլայի և Ալթունտուկ ամիրայի վերաբերմունքից, գաղտնի համաձայնության մեջ է մտնում Մուսլիմի հետ։ Մուսլիմը 1084 թ. հուլիսի 28-ին, թողնելով Ամիդը, նահանջում է դեպի Ասորիքի Ռակկա քաղաքը և այնտեղից Արտուխ բեգին է ուղարկում նրան խոստացած գրամական գումարը։ Մանսուրը մնալով մենակ, Ամիդից գնում է Նփրկերտ, նախապատրաստելու այդ քաղաքի պաշտպանությունը։ 1084 թ. հուլիսից սկսում է Ամիդի և Նփրկերտի պաշարումը սելջուկ թուրքերի կողմից։ Ֆախր ալ-Դաուլան, թողնելով այդ երկու քաղաքների պաշարումը Ալթունտուկին, սկսում է մեկ առ մեկ գրավել ամիրայության մեջ մտնող մյուս քաղաքները։ Մանսուրը, տեսնելով իր տիրակալության փլուզումը, դիմում է դիվանագիտության։ Նփրկերտի պաշտպանությունը թողնելով քրիստոնյա (բժիշկ) Վեզիր Աբու-Սալիմին, Մանսուրը վեզիրների ուղեկցությամբ ճոխ նվերներով գնում է Սպահան Մելիքշահի մոտ։ Մեծ դժվարությամբ հաջողվում է նրան կապ հաստատել Մելիքշահի հետ։ Սուլթանը առաջարկում է իրեն հանձնել ամիրայության բոլոր քաղաքները բացի Ամիդից և Նփրկերտից։ Սակայն Մանսուրը հույսը դնելով քաղաքների պաշտպանության ամրության վրա, մերժում է սուլթանի առաջարկը։ 1085 թ. Մելիքշահը Մուսլիմին պատժելու և նրա տիրույթները՝ Մուսուլը, Ջազիրան և Հալեպը սելջուկյան սուլթանությանը միացնելու նպատակով մեծ բանակով արշավում է Իրաք, սակայն Մուսլիմը հպատակություն է հայտնում նրան, որով սուլթանը ներում է շնորհում Մուսլիմին և ինքն էլ վերադառնում է Խորասան[165]։

Ալթունտուկը, իր հետ վերցնելով Նփրկերտը պաշարող բանակի մի մասը, Սանտուկ և Մուհամմադ Իբն Դլմաջ ամիրաների ուղեկցությամբ

[164] M. Jinane, p. 138.
[165] El-Bundari, p. 77.

մեկ առ մեկ գրավելով Խլաթը, Մանազկերտը, Մուշը, Արճեշը, Ռստաքը, Բերկրին, Վանա լճի ավազանի բոլոր մեծ ու փոքր քաղաքներն ու գյուղաքաղաքները հանձնում է Սանտուկ ամիրային, որպես իկթա, իսկ Բաղեշը՝ Մուհամմեդ Իբն-Դլմաջին։ Այնուհետև, վերադառնում և շարունակում է Մայֆարղինի և Ամիդի պաշարումը։ Այդ ժամանակ Մանսուրը նորից գնում է Սպահան և դիմում Մելիքշահի ողորմածությանը։ Սպահանում, լսելով իր բանակների պարտությունը, վերջապես հրաժարվում է իր բոլոր տիրույթներից։

Մինչ այդ 1085 թ. գարնանը Ֆախր ալ-Դաուլան, Ամիդի համառ պաշտպաններին սովի մատնելու նպատակով, հրամայում է ավերել Ամիդի շրջակայքում գտնվող հայ գյուղացիների պարտեզներն ու այգիները։

Ամիդի մահմեդական ղեկավարները, մեղադրելով քաղաքի հայ, հույն և ասորի բնակիչներին սննդամթերքի չարաշահման մեջ, հարձակվեցին քրիստոնյա թաղերի վրա, կոտորելով քրիստոնյաներին, բռնագրավեցին ուտելիքի պաշարները։ Չդիմանալով սովին, Ամիդի գյուղացիների մի մասը բաց արեց քաղաքի դռները և այն հանձնեց թուրքմեններին։

Նփրկերտի պաշտպանները, կաշառելով Ալթունտուկ ամիրային, հաջողեցնում են դրսից սննդամթերք ներմուծել քաղաք։ Քիչ անց, մահանում է Ալթունտուկը և որպես փաստ իր դավաճանության, նրա վրանում հայտնաբերվում են Նփրկերտի պաշտպանների կողմից ուղարկված գաղտնի նամակներ և նվերներ։ Քաղաքը շրջապատող բանակների նոր գլխավոր հրամանատար Ջեվհեր-Այինը, ուժեղացնելով քաղաքի պաշարումը, բաբանների միջոցով քանդում է քաղաքի պարսպի մի մասը և 1085 թ. սեպտեմբերի 9-ին գրավում է Նփրկերտը։ Քաղաքի գանձարանում և բերդի նկուղներում պահված ամբողջ ոսկեղեն և մարգարտեղեն ճոխ հարստությունը բռնագրավվում և ուղարկվում է Սպահան, այնուհետև ամիրայության տարածքում գտնվող բոլոր քաղաքները հանձնվեցին որպես իկթա թուրքմեն առաջնորդներին, իսկ լեռնահովիտները թուրքմեններին՝ որպես արոտավայրեր, յայլախներ և ղշլաղներ։ Մի քանի բերդերի բերդապահներ նշանակվեցին Մրվանյանի ընտանիքի ներկայացուցիչներից։ Նփրկերտի շահնե նշանակվեց Զուբուք ամիրան։ Ամիրայության ամբողջ տարածքը ենթարկվում է սուլթանի մեծ դիվանին։

Մելիքշահը Մանսուրին նշանակեց Բաղդադի հյուսիսում գտնվող

Հարպ նահանգի կուսակալ, որը որպես իկթա ուներ երեսուն հազարի եկամուտ։

Օգտվելով Մելիքշահի մահից հետո բռնկվող գահակալական կռիվներից, Մանսուրը վերադառնում է Նփրկերտ և 1093 թ. ճանաչում է Մելիքշահի եղբոր՝ Տուտուշի հպատակությունը, սակայն Մանսուրի մահից հետո (1096 թ.) Նփրկերտը հանձնվում է Արտուխ բեգի որդուն՝ Ալ-Ղազիին, որը XII դ. սկզբին հիմնում է Արտուխյան ամիրայությունը։ Ամիրը իկթա է արվում Ինալ ամիրային, իսկ Բաղեշն ու Արզենը՝ (Արզն)՝ Մոհամմադ իբն-Դլմաջին։ Վանի ավազանը իր շրջակայքով և Խլաթը իկթա է արվում Սանդուկ ամիրային, որտեղ XII դ. սկզբին, Սուկման Կութբին հիմնեց Շահարմենների ամիրայությունը[166]։

Ինչպես Ալփասլանի, այնպես էլ նրա որդու՝ Մելիքշահի ժամանակ սելջուկյան աշխարհակալության արտաքին քաղաքականության հիմնական նպատակն էր նվաճել առաջավոր Ասիայի և Մերձավոր Արևելքի մահմեդական երկրները։ Հետևաբար Դիարբաքրի Մրվանյան ամիրայության և Անդրկովկասի մահմեդական ամիրայությունների նվաճումն ու միացումը սելջուկյան աշխարհակալությանը՝ սելջուկյան տիրակալների արտաքին քաղաքականության կարևոր օղակներից մեկն էր։ Հարկավոր էր վերացնել նաև այն խոչընդոտները, որոնք արգելակում էին այդ քաղաքականության իրագործմանը։ Սակայն աշխարհակալության ռազմաֆեոդալական պետական կառուցվածքն զսպանակում ու դանդաղեցնում էր հիմնական նպատակի իրագործումը։

Մելիքշահը և Նիզամ ալ Մուլքը մեծ նշանակություն էին տալիս Բաղդադի Աբբասյան խալիֆայության քաղաքական և կրոնական դերին, որ նա խաղալու էր աշխարհակալության գլխավոր նպատակների իրագործման հարցում։ Այդ պատճառով էլ որոշված էր Բաղդադում պաշտոնապես թագավոր օծել Մելիքշահին և միաժամանակ Մելիքշահի դստերն ամուսնացնել խալիֆի հետ և դրանով է՛լ ավելի ամրապնդել խալիֆայության և սուլթանության ռազմաքաղաքական և կրոնական դաշնակցությունը։

Մինչ այդ Մելիքշահը և Նիզամ ալ-Մուլքը 1085—1086 թթ. ստիպված էին երրորդ անգամ ճնշել գահի հավակնորդ Մելիքշահի եղբոր Խորասանի Մելիք Տեկիշի ապստամբությունը։

Հետաքրքիր է նշել, որ Տեկիշի 1081 թ. ապստամբության գլխավոր հենարանը յոթհազար հայերից բաղկացած մի զորաբանակի անցումն էր Տեկիշի կողմը։ Ահա թե ինչ է վկայում Իմադ ադ-Դինը հայկական այդ զորաբանակի գործունեության մասին. «Հիջրի 474 թ. (1081 թ.) Մելիքշահը այցելելով Ռեյ, բանակը (սելջուկյան) ստուգարքի ենթարկեց։ Բանակի շարքերում նա հայտնաբերեց թուրքական տարազ հագած յոթհազար հայ զինվորներ։ Հակառակ Նիզամ ալ-Մուլքի խորհրդին, վերջիններին նա հեռացրեց բանակի շարքերից։ Այս հայերը գնացին Մելիքշահի եղբոր Տեկիշի մոտ, որն այն ժամանակ ապաստանած էր Խորասանի Վենեջ բերդում։ Տեկիշը սրանց (հայերի) գալու պատճառով ուժեղացավ և ապստամբեց»[167]։

Ինչպես 1081, այնպես էլ 1085—1086 թթ. ապստամբությունները ավարտվեցին Տեկիշի պարտությամբ։

Ի դեպ, պետք է նշել, որ Մելիքշահի ժամանակ հայերի զինվորական ծառայությունը սելջուկյան զորաբանակներում վկայվում է նաև հայ մատենագիրների կողմից։ Ինչպես վերևում նշվեց, 1087 թ. Գանձակը գրավող Պուզան ամիրայի զորաբանակում կռվում էին հայ զինվորականներ, որոնք փրկեցին Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի կյանքը[168]։

Այսպիսով, Մելիքշահը իրագործելով աշխարհակալական նկրտումները, Հայաստանի վրայով մեծ արշավանք կատարեց Ասորիք, հասավ մինչև Միջերկրական ծով, գրավեց Հալեպ և Անտիոք քաղաքները և այդ երկրամասերը որպես իկթա հանձնելով սելջուկյան ամիրաներին, վերադարձավ Սպահան։

Չհաշտվելով Սուլայման շահի ստեղծած սուլթանության գահից անկախ վարած քաղաքականության ու նվաճումների հետ, Պուզան ամիրային մեծ բանակով ուղարկեց Սուլայման շահի մահից հետո Նիկիայի Ռումի սուլթանության զորաբանակների հրամանատար Աբու-լ-Կասիմի դեմ[169]։ Հավանական է, որ Պուզան ամիրան նպատակադրել էր հնարավորության պայմաններում գրավել նաև Կ. Պոլիսը[170]։

166 Դիարբաքրի ամիրայության նվաճման վերևում հիշատակված բոլոր դեպքերի մանրամասնությունների համար տե՛ս El-Bundari, p. 76—78. Abul Faraj, p. 228. Մ. Ասորի, Գիրք III. Ибн-ал-Асир, гл. X. Amedroz, The Marvanid dynasty, of Mayyafarqin JRAS (1903). M. Yinanc, p. 137—151. J. Kafesoğlu, p. I. A 668. Ali Sevin, Belleten, (1962), p. 129—136. M. Yinanc, p. I A, Diyarbekir. K. Zettersten, I A, Mervaniler. O. Turan, Selçuklular tarihi, p. 145—147.

167 El-Bundari, p. 70.

168 Մ. Ուռհայեցի, էջ 237։

169 Abul Faraj, p. 231. O. Turan, Selcuklular tarihi, p. 149—203.

170 Մ. Ուռհայեցի, էջ 242։ Պուզանի այս նախաձեռնությունը խանգարվում է ըստ երևույթին Մելիքշահի անակնկալ մահվամբ։

1087 թ. Մելիքշահը գալիս է Բաղդադ, խալիֆայի կողմից թագադրվում է սուլթան։ Թագադրության ծիսակատարություններին հետևվում է իր դստեր Մահմելեք Խաթունի ամուսնությունը աբբասյան խալիֆա Մուկտադիի հետ։ Այս ծիսակատարությունները վերածվում են սուլթանության և խալիֆայության ռազմաքաղաքական և կրոնական դաշինքի կնքման ու ամրապնդման լավագույն առիթի։ Այնուհետև սուլթանը 1091 թ. մեծ բանակով Նիզամ ալ-Մուլքի և մի շարք խոշոր ամիրաների ուղեկցությամբ կրկին այցելում է Բաղդադ։ Այս այցելության գլխավոր նպատակն էր իր շուրջը համախմբել աբբասյան խալիֆայության ենթակա արաբական ամիրաներին և արշավանք կազմակերպել Ֆաթիմյան Եգիպտոսի դեմ գրավել ոչ միայն Եգիպտոսը, այլև հյուսիսային Աֆրիկայի, Միջերկրականի ափին գտնվող երկրները, ամբողջ Բյուզանդիան և ինչպես Իմադ ադ-Դինն է վկայում, «մտադրվել էր նվաճել աշխարհը»[171]։ Իր թիկունքը ամրապնդելու նպատակով, Մելիքշահը Ջեվհեր Ային ամիրայի հրամանատարությամբ մի մեծ բանակ է ուղարկում Եմենի և Ադենի շրջանները նվաճելու համար[172]։

Մելիքշահը նպատակ է ունեցել նաև Բաղդադը դարձնել սելջուկ մահմեդական աշխարհակալության կենտրոնը, այդ պատճառով էլ նա սկսեց վերակառուցել Բաղդադը։ Ի դեպ, նա, Նիզամ ալ-Մուլքի խորհրդով, իրագործում էր ռազմական և շինարարական վերափոխումներ։ Հասկանալի է, որ սելջուկյան հսկայական պետությունը ավերված էր ռազմական արշավանքների պատճառով։ Ուստի, ելնելով իր պետության շահերից, Մելիքշահը հնարավորություն տվեց նվաճված երկրների ժողովուրդներին մասամբ վերականգնելու իրենց քայքայված երկրներն ու տնտեսությունը։ Սկսեցին որոշ չափով վերաշինվել ավերված քաղաքներն ու գյուղերը, որտեղ բնակչություն էր մնացել։ Կարգի էին բերվում հաղորդակցության ճանապարհները, թեթևացնում էին առևտուրը արգելակող ծանր մաքսերը, կառուցվում էին կարավանատներ ու կամուրջներ[173]։

Ինչպես նշվեց, Մելիքշահի կառավարության մեջ խոշոր դեր էին խաղում պարսկա-արաբական երկրների ականավոր ներկայացուցիչները, հատկապես նշանավոր դարձավ Մելիքշահի մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքը։ Այնքան մեծ էր պարսիկ գործիչների ազդեցությունը, որ Նիզամ ալ-Մուլքի քաղաքական գործունեությունը գնահատելիս Իմադ ադ-դինը մեջ է բերում Օսմանյան խալիֆա Աբդալ-մալիքի որդու Սուլայմանի հետևյալ խոսքերը. «Ես զարմանում եմ այս իրանցիների վրա. հազար տարի տիրություն են արել, մի պահ մեր կարիքը չեն զգացել, ինչ վերաբերվում է մեզ, մենք մի դար իշխեցինք, մի պահ անգամ նրանցից (իմա՝ իրանցիներից—Ս. Բ.) անկախ չենք եղել»[174]։

Նիզամ ալ-Մուլքի խորհրդով անցկացված ռազմատնտեսական վերափոխումների մեջ ամենանշանակալիցը հողատիրության մեջ նոր հիմունքներով իկթատիրական (ավատատիրական) համակարգի ամրապնդումն էր[175]։

Սակայն իր սուլթանության վերջին տարիներում Մելիքշահը ընկնելով մեծ վեզիրի թշնամիների ազդեցության տակ, հաճախ դժգոհություն էր հայտնում Նիզամ ալ-Մուլքից։ Անշուշտ, Մելիքշահը ուներ լուրջ պատճառներ, կասկածի տակ առնելու նրա գործունեությունը։ Մյուս կողմից շատ դժվար էր վեճի մեջ մտնել Նիզամ ալ-Մուլքի հետ։ Մեծ վեզիրի որդիները, թոռներն ու փեսաները մեծ պաշտոններ էին գրավում աշխարհակալության տարածքում և դիզել էին մեծ հարստություն։ Նիզամ ալ-Մուլքը ուներ իր տրամադրության տակ քսան հազար մամլուքներից բաղկացած մի բանակ[176]։ Մելիքշահի ու Նիզամ ալ-Մուլքի հարաբերությունները վատացնելու գործում զգալի դեր էր խաղում Մելիքշահի գեղեցկուհի կինը՝ Թերքեն (Թուրխան) խաթունը, որը ազգությամբ Կարախանյան թուրքերից էր և ուներ տասներկու հազարանոց բանակ։ Թերքեն խաթունն իր շուրջը համախմբելով Նիզամ ալ-Մուլքի թշնամի՝ քաղաքական և զինվորական գործիչներին, ցանկանում էր իր չորս տարեկան որդուն՝ Մահմուդին Մելիքշահի Բարկիյարուխ որդու փոխարեն դարձնել թագաժառանգ, որին դեմ էր Նիզամ ալ-Մուլքը։ Արդարև, Մելիքշահի և Նիզամ ալ-Մուլքի հարաբերությունների վատացմանը նպաստեց նաև այն, որ Նիզամ ալ-Մուլքը Մերվի նահանգապետ նշանակեց իր որդիներից մեկին՝ Օսմանին։ Վերջինս փոխարինելու էր Մելիքշահի ազդակիցներից Կավդան ամիրային։ Այս առթիվ Մելիքշահը Նիզամ ալ-Մուլքին հղած իր նամակում ասում է հետևյալը. «Դու իմ պետությունը և երկրները գրավեցիր և քո որդիներին ու փեսաներին այնպես բաժանեցիր, որ կարծես թե դու իմ պետության կիսարքն ես։ Սրանք չեն հար-

171 *El-Bundari*, p. 70. Միասեռանամե, տե՛ս *O. Turan*, Selçuklular tarihi, p. 154.
172 *El-Bundari*, p. 69—78.
173 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Գ, էջ 66—67։

174 *El-Bundari*, p. 58.
175 Նույն տեղում, էջ 59։
176 *El-Bundari*, p. 57—63.

գում իմ մարդկանց։ Ժողովրդին ճնշում են և դու լուռ ես մնում այս բոլորի հանդեպ։ Ուզո՞ւմ ես, որ վեզիրության թանաքամանն ու գրիչը ձեռքից և խոջայական փաթթոցը գլխից վերցնեմ և ժողովրդին փրկեմ քո անիշխանությունից»։ Նիզամ ալ-Մուլքը իր պատասխան նամակում համեստաբար ու խոնարհաբար նշելով իր ծառայությունները թագի նկատմամբ, այնուհետև ասում է. «Պետության կիսբար լինելուս ցարդ չէի՞ր իմանում։ Այս վեզիրական գրիչը և (սուլթանական) թագը այնքան կապված են մեկը մյուսի հետ, որ գրիչը ձեռիցս վայր ընկնելուց հետո քո թագն էլ իսկույն կխորտակվի»[177]։

Արդարև (հիջրի 485 թ. ռամազանին), 1092 թ. հոկտեմբեր-նոյեմբերին, երբ Մելիքշահը իր մեծ վեզիրից խռոված գնաց Բաղդադ, նրան հետևող մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքը ճանապարհին սպանվեց[178] իսմայիլական աղանդավորների ֆիդայու ձեռքով։ Անշուշտ, այդ դավադրության մեջ մեծ բաժին ունեին Մելիքշահի կինը՝ Թերքեն խաթունը և նրա վեզիր Թաջ ալ-Մուլքը[179]։ Սրա մահից երեսուներեք օր հետո, Բաղդադում մնում էր նաև Մելիքշահն իր կնոջ՝ Սամարղանդի սուլթանի դստեր (իմա՝ Թերքեն խաթունի—Ս. Բ.) նենգ դավով[180]։ Իսկ երեք ամիս հետո Նիզամ ալ-Մուլքի կողմնակիցների կողմից սպանվեց նաև Թաջ ալ-Մուլքը[181]։

* * *

1092 թ. սելջուկյան երկու պետական գործիչների՝ մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքը և Սուլթան Մելիքշահի մահով վերջանում էր սելջուկյան աշխարհակալության վերելքի ու հզորության ժամանակաշրջանը։ Դրան հաջորդեց սելջուկյան հսկայածավալ տերության կազմալուծման և տրոհման ժամանակաշրջանը, որը հետևանք էր ոչ այնքան այս երկու նշանավոր գործիչների ասպարեզից հեռացվելուն, որքան սելջուկյան պետական կարգի ռազմաֆեոդալական բնույթի։ Այս վերջին ժամանակաշրջանն իր հերթին բաժանվում է երկու՝ լճացման և տրոհման (1092—1157), քայքայման ու անկման ժամանակաշրջանների (1157—

[177] *El-Bundari*, p. 63.

[178] Ս. Անեցի, էջ 118—119։

[179] *El-Bundari*, p. 62.

[180] Մ. Ռոհայեցի, էջ 243։ Ս. Անեցի, էջ 118—119։ Ս. Սպարապետ, էջ 97։ *El-Bundari*, p. 63. Վարդան Վարդապետ, էջ 107։ «Ժամանակագրություն Ստեփանոս Օրբելյանի», Երևան, 1942, էջ 15։

[181] *El-Bundari*, p. 63.

1194)։ Տրոհումը սկսվել էր դեռևս 1086 թ. Փոքր Ասիայի արևմտյան մասում Գիլմուշի որդի Սուլայմանի կողմից՝ սուլթանության ստեղծմամբ (հետագայում Իկոնիայի սելջուկյան սուլթանություն) որը, իրականում, անկախ էր և ձևականորեն էր ճանաչում մեծ սուլթանի իշխանությունը։

Մելիքշահի մահից հետո նրա որդիների, եղբայրների և սելջուկյան տան մյուս անդամների միջև սկսված գահակալական արյունահեղ երկպառակություններից ու կռիվներից հաղթանակած դուրս եկավ Մելիքշահի տասնչորսամյա որդի Բարկիարուքը (1093—1104)։ Այդ պայքարում զոհ դարձան և քաղաքական թատերաբեմից հեռացան Ատրպատականի, Աղվանքի (Առան) և Հայաստանի կուսակալ Գանձակի ամիրայության մելիք (Մելիքշահի հորեղբորորդի) Իսմայիլը և Ասորիքում իրեն անկախ հռչակած՝ գահի հավակնորդ, Մելիքշահի եղբայր Տուտուշը։ Վերջինիս որդիների միջև սկսված գահակալական կռիվները թուլացրին սելջուկյան տիրապետությունը՝ Պաղեստինում և Ասորիքում։ Դրությունից օգտվելով Եգիպտոսի Ֆաթիմյանները գրավեցին ամբողջ Պաղեստինը։

Թեև 1096 թ. սկսված խաչակրաց առաջին արշավանքը ժամանակավորապես համախմբեց սելջուկյան տիրակալներին Բարկիարուք սուլթանի շուրջը, սակայն սելջուկ և արաբ ամիրաների երկպառակություններն է՛լ ավելի թուլացրին սելջուկյան՝ առանց այդ էլ կազմալուծված քաղաքական միասնությունը։

Բարկիարուքի եղբայր Մուհամմադ Տափարը, որը Ատրպատականի, Աղվանքի և Հայաստանի կուսակալ՝ մելիք էր նշանակված, երկու անգամ անհաջող փորձ կատարեց (1099 և 1101) գրավելու սուլթանի գահը։ Բաղդադի խալիֆայի միջնորդությամբ երկու եղբայրների միջև կնքված պայմանագրի համաձայն, Բարկիարուքը մնաց սուլթան, իսկ Մուհամմադ Տափարին Գանձակի մելիք հորջորջմամբ դարձավ տիրակալ՝ Ատրպատականի, Աղվանքի (Առան), Հայաստանի, Նփրկերտի (Դիարբեքիր) և Ջազիրայի էլելթների[182]։ Սակայն նորից խախտելով կայացած համաձայնությունը, Մուհամմադ Տափարը վերջին անգամ՝ 1103—1104 թթ. փորձ կատարեց խլել գահը իր եղբորից։ Մուհամմադը փախչելով Բարկիարուքի բանակների առջևից, 1103 թ. ապաստանեց Խլաթի Շահարմենների մոտ։ Այստեղ իր շուրջը համախմբեց Կարինի Սալդուխ-

[182] *Ibn ul-Cavzi*, al-Muntazam, Haydarabad, 1358, IX, 131. *Ibn al-Asir*, Tarih, Kahire, 1302, X, 115.

յան, Խլաթի Սուքմանյան Շահարմեն և Անիի Շադդադյան ամիրաներին և պատրաստվում էր արշավել Բարկիարուքի դեմ։ Վերջինս, նկատի ունենալով սուլթանության տնտեսական և քաղաքական քայքայված վիճակը և Վրաստանի ու խաչակիրների կողմից սպառնացող վերահաս վտանգը, առաջարկեց հաշտություն։ 1104 թ. կնքված պայմանագրով Ատրպատականը, Աղվանքը (Առանը), ամբողջ Հայաստանը և վերջինից մինչև Ասորիք ընկած տարածքը մնում էր Մուհամմադ Տափարիի իշխանության տակ։ Իրականում այդ պայմանագրով սելջուկյան կայսրությունը բաժանվել էր երեք սուլթանությունների՝ Սպահան, Գանձակ և Կոնիա կենտրոններով։ Սակայն Բարկիարուքի հաջորդ՝ նրա որդի Մելիքշահ Բ-ի մահով (1104—1105) Մուհամմադ Տափարը սուլթան դարձավ, վերամիավորելով առաջին երկու հատվածները[183]։ Արդարև, պայքարը շարունակվեց Իկոնիայի սուլթան Խլիճ Ասլան Ա-ի և Մուհամմադ Տափարի միջև։ Առաջինը փորձ կատարեց գրավել Նփրկերտը, Ջազիրան և Մոսուլը։ Մոսուլի մատույցներում ունեցած ճակատամարտում Իկոնիայի սուլթանը պարտվեց, ինքն էլ զոհվեց[184]։

Մուհամմադ Տափարը շարունակելով պայքարը խաչակիրների դեմ, կարողացավ իր շուրջը համախմբել Խլաթի Շահարմեն և Դիարբաքրի Արտուխյան ամիրաներին։ Խլաթի Շահարմեն ամիրայի վերահաս մահվան (1113 թ.) և սելջուկյան բանակում սկսված երկպառակությունների հետևանքով, խաչակիրներին հաջողվեց որոշ հաղթանակներ տանել սելջուկյան ամիրաների դաշնակցության դեմ։

Օգտվելով սելջուկյան աշխարհակալության քաղաքական ճգնաժամից, Վրաստանը Դավիթ թագավորի գլխավորությամբ նույնպես կարողացավ մի շարք հաղթանակներ տանել սելջուկների դեմ։

Վրացական բանակները 1110 թ. հասան Գանձակ։ Քիչ ջանքեր չպահանջվեց Մուհամմադ Տափարից՝ կանգնեցնելու վրացական զորքերի հաղթարշավը[185]։ Թեև Մուհամմադ Տափարին հաջողվեց որոշ ժամանակ կայունացնել երկրի քաղաքական վիճակը, սակայն այդ հարաբերական կայունացումը ընդհատվեց նրա մահով (1118 թ.)։ Ի դեպ, Մուհամմադ Տափարը իր կենդանության օրոք՝ 1117 թ., գահաժառանգ էր նշանակել իր տասներեքամյա որդուն՝ Մահմուդին։ Այսուհանդերձ, Խորասանի մելիք Սինջարը (Մուհամմադ Տափարի եղբայրը) առաջ քաշելով օղուզ թուրքմենական սովորութային օրենքների գահակալական ավագության իրավունքը, իրեն հռչակեց սուլթան։ Վերջինս հավաքելով մեծ բանակ, արշավանք սկսեց իր եղբորորդու՝ Մահմուդի դեմ և մեծ դժվարությամբ հաղթանակ տարավ վերջինիս դեմ։ Կնքված հաշտության պայմանագրի համաձայն, սելջուկյան աշխարհակալությունը բաժանվեց երկու սուլթանությունների։

Սուլթան Սինջարը «ամենամեծ սուլթան» տիտղոսով միանգամ ընդմիշտ հրաժարվում էր Պարսկական Իրաքից հյուսիս և արևմուտք ընկած նահանգների տիրակալությունից և մնում էր տիրակալ Պարսկական Իրաքից արևելք ընկած նահանգների վրա։ Ընդ որում, Պարսկական Իրաքը, Ատրպատականը, Աղվանքը (Առանը), Հայաստանը, Արաբական Իրաքը, Միջագետքը, Ասորիքը և Իկոնիայի սուլթանությունը անցնում էին Մահմուդ սուլթանի գերիշխանության ներքո[186]։ Արևելյան սուլթանության մայրաքաղաքը այնուհետև դարձավ Մերվը։ Իրաքի սելջուկների մայրաքաղաքը մնաց Սպահանը, որը ավելի ուշ տեղափոխվեց Համադան։ Այսպիսով, իրականում ստեղծվեց երեք սուլթանություն. առաջինը, որի միակ տիրակալ սուլթան Սինջարը[187] (1119—1157), ձևականորեն հանդես էր գալիս աշխարհակալության մեջ գտնվող բոլոր մյուս սուլթանների, մելիքների և ամիրաների՝ գահերեցը։ Երկրորդը՝ Պարսկական Իրաքում ստեղծված սուլթանությունը, որի տիրակալը հորջորջվելով «Մեծ սուլթան» իրականում ձևականորեն իրենից վասալական կախման մեջ էին գտնվում վերոհիշյալ նահանգների մելիքներն ու ամիրաները[188]։ Երրորդը՝ Իկոնիայի սուլթանությունը, որը թեև ձևականորեն ենթարկվում էր Իրաքի սելջուկներին, բայց իրականում անկախ էր։

Այնուհետև Հայաստանի և առհասարակ Անդրկովկասի պատմությունը կապվում է Իրաքի և Իկոնիայի սուլթանությունների հետ։ Իրաքի սուլթանությունը իր գոյությունը պահպանեց մինչև 1194 թ.։ Իրաքի սելջուկյան սուլթանության տարածքը շարունակեց թատերաբեմ դառնալ

---

[183] *Sadruddin el-Huseyni*, p. 77—78. *Abul Faraj*, p. 238. *El-Bundari*, Ravendi, 147—148.

[184] *O. Turan*, Selçuklular tarihi, p. 168.

[185] *Տե՛ս Sadruddin el-Huseyni*, p. 51.

[186] *Ibn al-Asir*, X, p. 193—195. *El-Bundari*, p. 125—129. *Sadruddin el-Huseyni*, p. 88—89. *Ravendi*, p. 170.

[187] Տարօրինակ է, որ օղուզ-թուրքմեն ցեղերի ջանքերով ստեղծված սելջուկյան աշխարհակալությունը 1153—57 թթ. կործանվեց նույն ցեղերի հարվածների տակ։ Տե՛ս *Sadruddin el-Huseyni*, p. 95. *El-Bundari*, p. 280—281.

[188] *Տե՛ս M. Koymen*, Buyuk Selçuklu imperatorlugu tarihi, II (Sancar devri) Ankara, 1954, p. 5—27. Receuils des historiens des Croisades, Historiens Orientaux, II/2, Paris, 1876, p. 40.

սելջուկյան տոհմի ներկայացուցիչների գահակալական կոիվներին։ Սուլթանությունը հատկապես թուլացավ Մահմուդի (1116—1132) հաջորդներ՝ Տուղրիլ Ա[189] (1132—1135) և սուլթան Մասուդի ժամանակ (1135—1152)։ Վերջինի օրոք (1147) Ատրպատականում և այլ նահանգներում հիմնվեց Ելտկուզյան ամիրայությունը Աթաբեգ Շամսադդին Ելտկուզի կողմից, որը Իրաքի սուլթանության իրանական տիրակալն էր։ Այնուհանդերձ, Ելտկուզ Աթաբեգը (1147—1175) և նրան հաջորդող եղբայրը՝ Փահլևանը (1175—1191), հատկապես Վրաստանի դեմ մղած կեսդարյա պայքարում, մշտապես օգտագործում էին Իրաքի սելջուկյան սուլթանության մեծ սուլթանի թեկուզ ձևական հեղինակությունը՝ իրենց շուրջը համախմբելու Հայաստանի սելջուկ և քուրդ ամիրաներին։ Անիի 1164 և 1175 թթ. սելջուկների կողմից վերագրավման ժամանակ Իրաքի սուլթան Ասլանշահը (1162—1176) ուղեկցում էր սելջուկյան ամիրաների բանակներին։

Փահլևան Աթաբեգի կողմից սուլթան հռչակված Ասլանշահի փոքր որդի Տուղրիլ Բ սուլթանի (1176—1194) ժամանակ 1190 թ. Փահլևանի որդի Խզբլ Ասլանը փորձեց գրավել սուլթանության գահը և իրեն հռչակեց սուլթան, սակայն 1191 թ., Տուղրիլ Բ-ն պարտության մատնելով Խզբլ Ասլանին, վերագրավեց գահը։ Այնուհետև 1194 թ. մարտի 1-ին Խորեզմշահ Տեկտաշը, Ռեյի մոտ պարտության մատնելով Տուղրիլ Բ-ի բանակներին, սպանեց սուլթանին և դրանով վերջ տվեց սելջուկյան սուլթանության գոյությանը Իրաքում[190]։

Սկսած XII դ. երկրորդ կեսից մինչև XIII դ. կեսը իր գոյության հզորացման ժամանակաշրջանն էր բոլորում Իկոնիայի սուլթանությունը։ Վերջինս XII դ. վերջին քառորդում և XIII դ. առաջին քառորդում իր տիրապետությունը ընդարձակում էր Հայաստանի ամիրայությունների հողերը գրավելու հաշվին։ Սակայն նրա առաջխաղացումը դեպի Հայաստան զուգադիպեց Վրաստանի հզորացմանը և Զաքարյանների գլխավորությամբ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին։ Այդ պայքարը XII դ. վերջին և XIII դ. սկզբներին հերթականությամբ վերջ տվեց

---

189 Սա նույն Մելիքն է, որ եղել էր Ատրպատականի, Աղվանքի և Հայաստանի կուսակալ, 1118—1132 թթ., Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Հ. Գ, էջ 91, 92—103։

190 *O. Turan*, Selçuklular tarihi, p. 186—187.

սելջուկյան ամիրայությունների տիրապետությանը Հայաստանում և կասեցրեց Իկոնիայի սուլթանության հետագա առաջխաղացումը։ Վերջինս Քյոսեդաղի ճակատամարտում 1243 թ. մոնղոլների կողմից պարտության մատնվելուց հետո ապրեց իր թուլացման և կործանման ժամանակաշրջանը (1243—1307)։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐՔԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ա. Հայաստանի տնտեսական դրությունը XI դ. 2-րդ կեսից—XII դ. վերջը

Սելջուկ Թուրքերի արշավանքները ահավոր վնաս հասցրին Հայաստանի տնտեսությանը՝ քաղաքային արհեստագործությանը, առևտրին և գյուղատնտեսությանը։ Հայաստանի քաղաքների մեծ մասը ավերվելով և կողոպտվելով կորցրեցին ոչ միայն իրենց առևտրական նշանակությունը, այլև՝ միջազգային տարանցիկ առևտրի դերը։ Մելիքշահի օրոք (1072—1092), կարճատև խաղաղության ժամանակ, Հայաստանը կապված էր սելջուկյան աշխարհակալության պատկանող մյուս երկրների հետ, սակայն նրա հաջորդների և ամիրայությունների ժամանակ, երբ մի կողմից անպակաս էին սելջուկյան տան անդամների գահակալական կռիվները և մյուս կողմից՝ սուլթանների և ամիրայությունների հարյուրամյա պատերազմները Վրաստանի դեմ, նրանք այլևս ի վիճակի չէին ապահովելու տնտեսական վերելքը։

Խաչակրաց արշավանքների և Հարավային Ռուսաստանի երկրների դեմ Ղիպչաղ Թուրքերի ավերիչ ասպատակությունների հետևանքով, միջազգային տարանցիկ առևտուրը կատարվում էր Առաջավոր Ասիայի հարավային երկրների՝ Ասորիքի, Պաղեստինի և Եգիպտոսի վրայով։

Ճիշտ է, XI—XII դարերում Հայաստանի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքը չընթացավ բացարձակ լճացման կամ հետաշարժի հունով, սակայն կատարվեց այդ ոչ թե սելջուկ նվաճողների շնորհիվ, այլ՝ հակառակ այդ նվաճողների ավերածությանը։

Ավերված քաղաքներից մի քանիսը, XIII դարում մասամբ հառնեցին մոխիրների միջից կամ զիջեցին իրենց տեղը նորերին։ Անիի հետ միաժամանակ նշանակություն ստացան Նախճավանն ու Մանազկերտը, Խլաթը, Կարինն ու Երզնկան։ Թեև աննշան փոփոխությունների ենթարկվեց քաղաքների ազգային կազմը, բայց ոչ նրանց սոցիալական դերը։ Այդ քաղաքները վերածվեցին տնտեսական կենտրոնների։ Ֆեոդալական հարաբերությունների գյուղատնտեսական հիմքերը խախտվեցին՝ զարկ տալով սոսկ ապրանքափոխանակման ծավալմանը։ Օղուզ Թուրքմեն ցեղերը գերազանցապես ապրում էին քոչվորական կենցաղով «...Թուրքերն իրենց վրաններով աշնանը Հայքով (Սոմխիթով) էին անցնում՝ կանգ առնելու Գաջենքում (Գաշինայում) և Կուր գետի եզերքին՝ Տփղիսից մինչ Պարտավ (Բարգավ)՝ և Իորի ափին և ձմեռային արոտատեղ (ծառայող) բոլոր այս սքանչելի տեղերում... իսկ գարնանը սկսում են (կրկին) վեր բարձրանալ դեպի Հայոց (Սոմխիթի) Արարատյան լեռները, ուր ամռան պահին նրանք գտնում էին հանգիստ և ուրախություն՝ խոտով և դաշտավայրով սքանչելի աղբյուրներով և ծաղկապսակուած տեղերով...»[1]։

Թեև երկրագործական և խաշնարածային տնտեսության կողքին շարունակում էին զարգանալ արհեստագործությունն ու առևտուրը, սակայն օղուզ Թուրքմեն ցեղերի պայքարը նոր արոտավայրեր նվաճելու և մյուս կողմից՝ Մելիք շահի տրոհված պետության տասից ավելի վասալական մելիքությունների և ամիրայությունների միջև տեղի ունեցած պատերազմները, կործանարար հետևանքներ ունեցան ոչ միայն քաղաքային կյանքի, այլև երկրագործության հետագա զարգացման համար։

Երկրագործության զարգացմանը խոչընդոտում էին քոչվոր անասնապահ ցեղերի անընդհատ տեղաշարժերը մի արոտավայրից դեպի մյուսը։ Անասունները ոտնատակ էին տալիս և ոչնչացնում հայ գյուղացու մշակած արտերն ու այգիները։ Հատկապես գյուղատնտեսության քայքայման պատճառ էին դառնում սելջուկների ծանր հարկապահանջությունը, ինչպես նաև հայ աշխատավոր ժողովրդի՝ արհեստագործների և շինականների արտագաղթը։

Ինչպես ասվեց վերևում, դրությունը որոշ չափով փոխվել էր Մելիք շահի ժամանակ։ Վերջինս ելնելով իր պետության շահերից, հնարավորություն տվեց նվաճված երկրների ժողովուրդներին մասամբ վերականգնելու տնտեսությունը, վերաշինելու ավերված գյուղերն ու քաղաքները, որտեղ մնացել էր բնակչությունը։ Կարգի էին բերվում հաղորդակցության ճանապարհները, թեթևացնում էին առևտուրն արգելակող մաքսերն ու տուրքերը, կառուցում էին կարավանատներ ու կամուրջներ։

[1] Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 3, Երևան, 1955, էջ 42։

Գյուղատնտեսության զարգացման խթան պետք է հանդիսանային նաև Նիգամ ալ-Մուլքի ագրարային բարեփոխումները։

«Պեղումները և հնագիտական սակավաթիվ ուսումնասիրությունները ցույց են տալիս,— գրում է Մանանդյանը,— որ բուն Հայաստանում, սելջուկյան արշավանքների ժամանակներից մինչև Զաքարյանների տիրապետությունը՝ շինարարությունը և կուլտուրական աշխատանքները կանգ էին առել։ Ճիշտ է՝ Մելիքշահի ժամանակ (1072—1092) հայ բնակչության դրությունը սկսվել էր մասամբ բարելավվել, սակայն նրա հաջորդների ժամանակ անիշխանությունն ու անապահովությունը պարբերաբար շարունակվել էին, և երկար ժամանակ էր հարկավոր, որպեսզի հայ բնակչությունը կարողանար ուշքի գալ, և վերաստեղծել կիսավեր երկրում նոր կյանք ու նոր տնտեսություն և նախապատրաստել երկիրը քաղաքական ու կուլտուրական նոր վերելքի համար»[2]։

Հայաստանը կորցրել էր իր միջազգային առևտրական նշանակությունը։ «Ամիրայությունները,— գրում է Մանանդյանը, որոնք կազմվել էին Հայաստանի զանազան շրջաններում և որոնք պարբերաբար կռիվ էին մղում թե իրար դեմ և թե Վրաստանի ու նրա գերագույն իշխանության տակ գտնվող երկրների դեմ՝ դժվար թե ի վիճակի լինեին իրենց հովանավորությամբ ապահովելու առևտրական կանոնավոր ու հարատև երթևեկությունը»[3]։

Այնուհետև, շարունակելով իր միտքը, Հ. Մանանդյանը նշում է այն պատճառները, որով Հայաստանը հետզհետե կորցնում էր իր նշանակությունը իբրև միջազգային փոխանցիկ առևտրի ճանապարհ։ «11—12-րդ դարերում մեծ դժվարությունների էր հանդիպում Հայաստանի ու Անդրկովկասի առևտուրը Հարավային Ռուսաստանի հետ, Ղփչաղ թուրքերի արշավանքների պատճառով, որոնք 11-րդ դարի երկրորդ կեսից սկսած գրեթե անընդհատ հարձակվում էին ու ավերում Հարավային Ռուսաստանի երկրները։ Մյուս կողմից՝ խաչակրաց արշավանքների ընթացքում միջազգային առևտուրը սկսել էր խիստ զարգանալ Առաջավոր Ասիայի հարավային երկրներում և առաջնակարգ նշանակություն էին ստացել առևտրական հարավային ճանապարհները։ Առևտրական ամենախոշոր կենտրոններ էին դառել այստեղ՝ Եգիպտոսը, Ասորիքը, Կիլիկիան և Միջագետքը»[4]։

---

2 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. Գ, էջ 162։

3 Նույն տեղում, էջ 163։

4 Նույն տեղում։

«Հենվելով արձանագրությունների և պատմական վկայությունների որոշ ակնարկների վրա,— եզրակացնում է Հ. Մանանդյանը,— ինձ թվում է, կարելի է ենթադրել, որ սելջուկյան արշավանքների հետևանքով Հայաստանը այլևս չի ունեցել տնտեսական զարգացման ու բարգավաճման այն մեծ հնարավորությունները և նպաստավոր պայմանները, որ հատուկ էին Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանին»[5]։

բ. Սելջուկների ագրարային քաղաքականությունը։ Հողատիրության ձևերը։ Գյուղացիության վիճակը։

XI դարի երկրորդ կեսերին սելջուկների կողմից նվաճվելուց հետո (1071—1080) Հայաստանի արևմտյան և հարավային մասերում մտցվել էին ռազմաֆեոդալական հողատիրության այն ձևերը, որոնք առկա էին սելջուկյան պետության մեջ։ Մահմեդական իրավունքի համաձայն հողը և պետության սահմաններում ապրող ժողովուրդները ամբողջությամբ վերցրած տիրակալի (սուլթանի) սեփականությունն էին[6]։

Սուլթանի և նրա ընտանիքի անդամների անմիջական եկամուտները ապահովվում էին՝ խաս անունը կրող հողաբաժիններից։ Խաս հողերի վրա բնակվող և այդ հողը որպես հացահատիկային ցանքատարածություններ, այգի, պարտեզ և արոտավայր օգտագործող գյուղացուց գանձվում էր հարկ՝ հողային ռենտա, որը մտնում էր պետական գանձարանի «իհտիյաթ հաղինեի» բաժանմունքը[7]։

Սելջուկյան աշխարհակալության մեջ, որը ռազմաֆեոդալական պետություն էր, հողատիրության հիմնական ձևը զինվորական անձնակազմին զինվորական ու պետական ծառայության դիմաց նվաճված հողերից պարգևած բաժնեկալվածքներն էին, որոնք կոչվում էին իկթա։ Ինչպես հայտնի է, իկթան նախքան սելջուկները կիրառվում էր մահմեդական երկրներում՝ Արաբական խալիֆայության, Սամանիների, Կարախանիների, Բուվայհիների պետություններում[8]։

Հողի տիրակալման իկթայական ձևը սելջուկները ժառանգելով վերոհիշյալ պետություններից, հատկապես Կարախանիներից, սկսեցին

---

5 Նույն տեղում, էջ 165։

6 Сиасет-намэ, Книга о правлении визиря XI столетия, Низама ал-Мулька, Л., 1949, глава V.

7 Նույն տեղում։ Տե՛ս նաև Kafesoglu, Melikşah devrinde, p. 163.

8 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении XVI—XIX вв., Л., 1949, стр. 152.

կիրառել իրենց աշխարհակալության մեջ, այդ թվում և Հայաստանում[9]։ Հողերը ամբողջությամբ վերցրած նվաճված հողեր էին, որոնց նախկին տերերը կամ ոչնչացված էին, կամ հողազրկված։ Այդպիսի երկիր էր Հայաստանը (մանավանդ հարավային և արևմտյան մասերը)։

Մեծ Հայքի տարածքը դեռևս վերջնականապես չէր նվաճվել սելջուկյան արշավանքների առաջին և երկրորդ փուլերում (1016—1063, 1068—1072)։ Մեծ Հայքի նահանգներն ու գավառները, քաղաքներն ու գյուղերը գրավելուց հետո արշավող սելջուկյան զորքերը բավարարվելով ձեռք բերած հարուստ ավարով ու գերիներով վերադառնում էին Իրան[10]։ Այս ժամանակաշրջանում սելջուկների գլխավոր նկատառումը նաև այն էր, որ նրանք ժամանակավոր հաշտության պայմանագրեր կնքելով բյուզանդական կայսրների հետ, վերջիններիս ստիպում էին տարեկան ջիզիա կամ խարաջ վճարել 100000-ից մինչև 360000 ոսկի դինար[11]։ Հասկանալի է, Բյուզանդիան այդ գումարը գանձում էր հայ աշխատավորներից։

Սակայն Հայաստանը նվաճելուց հետո սելջուկների խժդժությունների հետևանքով հայ ֆեոդալները հեռանում էին իրենց տիրույթներից։ Այդ մասին են վկայում հայ և օտար մատենագրական բազմաթիվ աղբյուրներ։ Ար. Լաստիվերտցին մեծ վշտով նկարագրելով հայկական նահանգների ու գավառների՝ Կարինի, Բասենի, Սպերի, Խաղտյաց գավառի, Տարոնի և Հաշտյանք գավառի բազմաթիվ բերդերի ու ամրոցների գրավումը սելջուկյան հրոսակների կողմից[12], ավելացնում է, որ այս ասպատակությունների հետևանքով «ելին իշխանքն ի հայրենի ժառանգութենէ իւրեանց (ընդգծումը մերն է — Ս. Բ.) և եղեն պանդուխտ յօտար երկիր... ելեալ ի տանէ, օտարացեալ ի ծանօթից հեռացեալ յընտանեաց և յազգականաց, գերի և կալանաւոր ամենայն ազգաց»[13]։

Թովմա Արծրունին, Արիստակես Լաստիվերտցին, Մատթեոս Ուռհայեցին բազմաթիվ վկայություններ ունեն Վասպուրականի Արծրունյաց, Անիի և Կարսի Բագրատունի թագավորների ու իշխանների գաղթի մասին դեպի Բյուզանդիայի փոքրասիական կենտրոնական և հարավային նահանգները[14]։

Հասկանալի է, որ հայերի զանգվածային արտագաղթը նոսրացնում էր հայկական բնակչությունը երկրում, որն իր հերթին բացասական հետևանք էր ունենում ոչ միայն երկրի պաշտպանունակության, այլև արհեստագործության ու երկրագործության վրա։

Սելջուկները բռնագրավել ու իրենց մարդկանց էին նվիրել Սյունիքի, Արցախի, Անի-Շիրակի և այլ նահանգների ու գավառների հայ իշխանների շատ կալված-հայրենիքները։ «Եւ յայնմ ժամանակի էր բարձրացեալ և զօրացեալ տէրութիւնն Տաճկաց (իմա՝ սելջուկ-թուրքերի— Ս. Բ.) — գրել է Ստ. Օրբելյանը,—. ամենայն աշխարհ ի ներքոյ հարկի նոցա նուաճեալ կայր. վասն որոյ և յոլով գաւառս շորթեալ հանին ի Սիսական աշխարհէս ի ձեռաց բնիկ տէրանցն...»[15]։

Սելջուկների կողմից հայ իշխանների հողազրկման մասին այս տեղեկությունը հաստատվում է նաև այլ վկայություններով։ «Ի ժամանակս բռնակալութեանն Ղեմացւոց, յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց ի սպառասպուռ, և անտէրուչք շրջէին մնացորդք իշխանաց՝ որ ընդ բնաւ աշխարհս վարատեալք՝ ոչ հնազանդելով միմեանց, մանաւանդ այնոքիկ՝ որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ, աւազակաբար կելով ի լերինս և ի գերծ տեղիս և յանցս ճանապարհաց նստելով՝ առնուին կապուտ կողոպուտ յամենայն ազգաց՝ յորս յաղթելն կարէին...»[16]։

Սելջուկյան արշավանքները շարադրելիս տեսանք, որ սելջուկյան ավերածություններից գերծ չէին մնում նաև վանքերն ու եկեղեցիները։ օրինակ, Սյունյաց հայրենասեր պատմիչ Ստ. Օրբելյանը տալով սելջուկների արշավանքների և ասպատակությունների ընդարձակ նկարագրությունը, ասում է, որ նրանք ասպատակել էին նաև Վահանավանքը, բռնագրավել նրա կալվածքները[17]։

Սելջուկյան արշավանքներից գերծ չէր մնացել նաև Տաթևի վանքը։ Սելջուկյան «բազում» բանակը, հաղորդում է նույն պատմիչը, անցնելով

---

9 С. Еремян, Опыт периодизации истории Армении эпохи феодализма. Ս. Հակոբյան. Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1964, էջ 40։ Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ., էջ 264—265։

10 Sadruddin el-Huseyni, Մ. Ուռհայեցի, էջ 102—103։ Ибн ал-Асир, стр. 116.

11 Ա. Լաստիվերտցի, էջ 64, 79, 82, 94։

12 Նույն տեղում, էջ 67։

13 Նույն տեղում, էջ 68։

14 Թ. Արծրունի, շարունակող, էջ 307, Ս. Անեցի, էջ 104, Մ. Ուռհայեցի, էջ 49։

15 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան», Թիֆլիս, 1910, էջ 319։

16 Հ. Մանանդյան և Հ. Անասյան, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 28։

17 Տե՛ս Ստ. Օրբելյան, էջ 319—321։

Երասխ (Արաքս) գետը, ներխուժել էր Սյունիք, ասպատակել Տաթև «մեծ մայրաքաղաք» վանքը, ավարի էր ենթարկել նրա «զանհուն կարասիս», «սրոյ ճարակի» էր տվել ս. Գրիգորի անվան եկեղեցին, այրել, քանդել և «յատակել» նաև «զգործատներն և զտրապէզն մարմնաւոր սեղանոյն և զամենայն յարկս կրօնաւորացն և այլ բնակչացն...[18]։

Այսպիսով, սելջուկ Թուրքերի ասպատակություններն ու ավերումները մի պահ նեղը գցեցին նաև հայ հոգևոր ավատատերերին. «Որ դառն էր ժամանակս, —գրում է Սամուել Անեցին,— ի վերայ մեր յամենայն դիմաց... զբակտումն և զխափանումն ժամատեղեաց մտածեաց (սատանայ), թէ ցրուեցէք ամենեքեան, ինձ երէց չէ պիտոյ, կամ տուք զհարկն կամ գնացէք։ Վանօրայքս ամեն աւերեցաւ և չկայ տեղի գնալոյ, ինչ առնեմք[19]։ Սակայն շուտով սելջուկները փոխում են իրենց քաղաքականությունը հայ հոգևորականների նկատմամբ և ազատում նրանց հարկերից։

Հայ աշխարհիկ[20] և հոգևոր ֆեոդալների հարկատու լինելու մասին է վկայում նաև Ուռհայեցին։ Ըստ նրա 1090 թ. Բարսեղ կաթողիկոսի Մելիքշահի մոտ ուղևորվելու գլխավոր պատճառը ծանր հարկերն էին, որոնք պահանջվում էին Մելիքշահի կուսակալների կողմից։ Նա գրում է. «Դարձեալ ի թուականութեանս Հայոց ի յամս ՇԼԹ (1090) յարուցեալ հայրապետն Հայոց Տէր Բարսեղ և գնացեալ առ տիեզերակալ սուլտանն Մելիք-շահն, զի տեսանէր զհաւատացեալսն Քրիստոսի, զի նեղէին զնոսա ի տեղիս տեղիս և հարկ։ պահանջէին յեկեղեցեացն Աստուծոյ և յամենայն ժառանգաւորացն նորա՝ և զվանորայսն և զեպիսկոպոսունսն հարկիւ շարշարէին...»[21]։

Այնուհետև Ուռհայեցին վկայում է, որ հայոց Բարսեղ կաթողիկոսն իր հետ վերցրել էր բյուրավոր ոսկի, արծաթ և դիպակներ, որպես սուլթանին նվեր, նա ազատներով, եպիսկոպոսներով, քահանաներով ու վարդապետներով գնացել էր Պարսկաստան, սուլթանի մոտ[22]։

Բանն այն է, որ սելջուկները իրենց իշխանությունը հաստատելուց հետո ստիպված էին սիրաշահել Հայաստանի իշխող դասակարգը, Թուլացած հայ ավատատեր իշխանների հպատակությունը ապահովելուց հետո, նրանց անհրաժեշտ էր ապահովել հայ հոգևորականության որոշ համակրանքը։

Բնական է, որ իրենց արտոնությունների մեջ վերահաստատված հայ հոգևորականները դրվատում էին սուլթանին և Ատրպատականի, Շիրվանի և Հայաստանի ամիր՝ (կուսակալ—Ս. Ք.) Իսմայիլ Իբն Յակուբ Մելիքին։ «Սիրէր (իմա՝ սուլթան Մելիքշահ) զազգս մեր այնքան, մինչ զի աղօթս հայցէր և օրհնութիւն, յորմէ և անդ երբեմն չոգաւ հայրապետն. Օշ թէ միայն էր աշակերտեալ քրիստոնեական կրօնից և կարգաց»[23] գրում էր Սամուել Անեցին։

Նույն ձևով է արտահայտվում Իսմայիլ Իբն-Յակուբի մասին նաև Ուռհայեցին[24]։

Չնայած երբեմնի շեղումներին, ընդհանուր առմամբ նույն քաղաքականությունն առաջ էին տանում նաև Մելիքշահի հաջորդները։ Այսպես «Անուանք նախարարաց» կոչվող ձեռագիր մի տեղեկագրից իմանում ենք, որ այդ ժամանակվա Հայաստանի կառավարողը «Երարձ հարկն եկեղեցեաց»[25]։

Սելջուկ տիրակալներից «փարման և Մանշուր» վանքապատկան հողերի նկատմամբ վանքի սեփականատիրության իրավունքը հաստատող հրովարտակ է ստացել Հովհաննավանքի վանահայր Հովհաննես եպիսկոպոսը, որը 1105 թ. մեկնում է Մուհամմադ-Տափար (1105—1118) սուլթանի մոտ և նրանից և նրա մորից «անսուտ սիգելաւ և անանցական մանշուրաւ» բացի վերոհիշյալ հրովարտակից որպես «ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն նորավանից» ստանում է նաև «զՀրասեկայ բերդն... զԱնապատ բերդն՝ երկոտասան ագարակօք...»[26]։

Հովհաննեսի մահից հետո վանքի վանահայր է դառնում Ստեփաննոս եպիսկոպոսը։ Սրա օրոք, շարունակում է պատմիչը, հին աթոռը «աւերեալ էր և ապականեալ»։ Ստեփաննոսը դիմում է բոլոր միջոցներին եկեղեցու և վանքի նախկին «ժառանգութիւնն» վերականգնելու համար։ Նրան հաջողվում է 1174 թվականին Ելտկուզ Աթաբեկից ետ ստանալ «ամենայն ժառանգութեանց եկեղեցւոյն նորավանից»։ Նա ոչ միայն հաստատել է տալիս Նորավանքի հին տիրույթները, այլև ստանում է

18 Նույն տեղում, էջ 312—313։
19 Ս. Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 110։
20 Մ. Ուռհայեցի, էջ 234։
21 Նույն տեղում, էջ 240։
22 Նույն տեղում։

23 Ս. Անեցի, էջ 119։
24 Մ. Ուռհայեցի, էջ 247։
25 Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ, գիրք առաջին, էջ 307։
26 Ստ. Օրբելյան, էջ 349։

նաև Ագարակ գյուղը։ Ավելին, վանքապատկան բոլոր հողերը, ջրերը, այդ թվում նաև «զայգի, զգիւղ և զագարակ և զբերդն իսկ Անապատայ... և զամենայն որ ինչ էր վանիցն», ազատել է տալիս «յամենայն աշխարհական հարկաց»[27]։

Եկեղեցին սիրաշահելու քաղաքականություն էին տանում ոչ միայն Ելտկուզ Աթաբեգն, այլև Շահարմենները[28]։

Սելջուկների այս վերաբերմունքը հայ եկեղեցիների և վանքերի նկատմամբ արտահայտվում էր նաև նրանով, որ Մեծ Հայքի մելիքներն ու ամիրաները որոշ գյուղեր և դաստակերտներ են պարգևում Հռոմկլայի կաթողիկոսարանին[29]։

XII դ. վերջին քառորդում այնքան է մեծանում և աճում հայ հոգևոր ֆեոդալների հարստությունն ու հողային տիրույթները, որ Սմբատ սպարապետը Գրիգոր Տգա Կաթողիկոսին (1173—1193) համեմատում է արքաների հետ, գրելով թե «զկեանս իւր արքայակերպ վարէր մեծամեծ տրիւք և առատ պարգևօք»[30]։ Պիտի նշել, որ հայ եկեղեցական ու վանքապատկան հողերը մտնում էին սելջուկյան տիրապետության ժամանակ տարածված հողատիրության այն ձևի մեջ, որոնք կոչվում էին վակֆ (վակիֆ արազի)[31]։

Վերոհիշյալ վկայությունների մեջ ուշագրավ է հայոց Բարսեղ կաթողիկոսին և Նորավանքի վանահայր Հովհաննես եպիսկոպոսին սելջուկ տիրակալների կողմից տրված հարկից ազատելու պայմանագրերն ու վանքի հողային սեփականությունը հաստատող ֆերմաններն ու մանշուրները, որը նոր երևույթ չէր և գալիս էր դեռևս արաբական խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանից։ Հայաստանում մահմեդական տիրապետության համարյա բոլոր ժամանակաշրջաններում հայ ժողովուրդը և նրա վերնախավը հանդիսացող հողատեր իշխաններն ու բարձրաստիճան հոգևորականությունը իրենց քաղաքացիական իրավունքներով հավասար չէին իշխող մահմեդական զանգվածին և մտնում

27 Նույն տեղում, էջ 351—352։

28 Վ. Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մ., 1861, էջ 163։

29 Կ. Դանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 191։

30 «Սմբատայ սպարապետի Տարեգիրք», էջ 161։

31 *Uzuncarsili*, Osmanli devleti teskilatina medhal, Istanbul, 1941, p. 124—125.

էին այն խմբի մեջ, որը մահմեդական իրավագիտության մեջ կոչվում էր զիմմի (հովանավորյալ)[32]։

Պետք է նշել, որ զիմմի, այսինքն՝ ոչ մահմեդական ազգաբնակչության վերոհիշյալ բոլոր խավերի հողատիրության իրավունքի և պետության վճարելիք հարկերը (գլխահարկ, խարաջ) որոշվում էին մահմեդական պետության հետ զիմմիների կնքած պայմանագրերով[33]։

Հետևաբար, հոգևորականության վիճակը նույնպես որոշվում էր պայմանագրերով՝ ազատության գրերով ու հրովարտակներով, ինչպես հիշատակված է Մատթեոս Ուռհայեցու վերոհիշյալ վկայության մեջ, ինչպես նաև ֆերմաններով ու մանշուրներով, որոնք հիշատակված էին Օրբելյանի վերևում մեջ բերված հատվածի մեջ։

Ինչպես նկատելի է, վերոհիշյալ տեղեկություններում նշված լինելով «հարկ», «հարկատուք», «հարկիւ շարշարէին», սակայն այնտեղ բնորոշված չէ հարկերի բնույթը։ Հայտնի է, որ հոգևորականությունը տեսականորեն գլխահարկից ազատ էր համարվում, սակայն ինչպես վերևում տեսանք հոգևորականները, այս դեպքում Բարսեղ կաթողիկոսը, ստիպված լինելով նվերներով գոհացնել մահմեդական տիրակալին, Մելիքշահի մոտ ուղևորվելիս իր հետ տարել էր քանկարժեք ընծաներ, որպեսզի զերծ մնար հարկահանների կողոպտչական մոլուցքից։

Այնուհետև Ուռհայեցին պատմում է, որ Բարսեղ կաթողիկոսը խընդրել էր միևնույն ժամանակ Մելիքշահից աջակցություն ցույց տալ կաթողիկոսական աթոռին՝ վերականգնելու հայրապետության միասնությունը։ Ինչպես տեսանք, քաղաքական դեպքերը շարադրելիս, այդ ժամանակ, XI դ. վերջին քառորդին քաղաքական իշխանության փլուզման ժամանակաշրջանում, ինչպես Ուռհայեցին վկայում է, սունկի նման առաջացել էին հինգից վեց կաթողիկոսական աթոռներ, որոնցից Ջահան գավառի Հոնի քաղաքում Փիլարտոսի կողմից նշանակված Թեոդորոս կաթողիկոսը առավել չափով սպառնում էր մասնատելու հայ հոգևորականության շարքերը։

Ուռհայեցու հետևյալ վկայությունից երևում է, որ Մելիքշահը ընդառաջել էր Բարսեղ կաթողիկոսին։ Այսպես. «Եւ ելեալ արքունական հրամանօք Տէր Բարսեղն գնաց մեծաւ ուրախութեամբ. և արք փառաւորք

32 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Հայ ժողովրդի իրավական վիճակը խալիֆայության տիրապետության ներքո, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, № 4 (388), էջ 74—76։

33 Նույն տեղում, էջ 77—79։

ի սուլտանէն զհետ իւր, և եկեալ հասանէր ի Ջահան գաւառին, և յարեաւ ի վերայ Տեառն Թեոդորոսի, որ հրամանաւ Փիլարտոսին նստեալ էր կաթողիկոս ի Հոնին, և Տէր Բարսեղն ընկենոյր յաթոռոյն զՏէր Թեոդորոսն և առեալ ի նմանէ զքօղն և զդաւազանն... և արար միահեծան զհայրապետութիւնն իւր և անտի եկն ի քաղաքն Ուռհա»[34]։

Թեև այս փաստը ուղղակի միջամտություն չէր հայ հոգևոր ֆեոդալների ներքին գործերին, բայց ինչպես երևում է վերոհիշյալ վկայություններից, մահմեդական տիրակալները պատրաստ էին հայ հոգևորականներին որոշ զիջումներ անելու և որպես իրենց տիրապետությունը ամրապնդելու միջոց աջակցում էին հայ եկեղեցու հեղինակության բարձրացմանը։ Սրանով պետք է բացատրել վերևում մեջ բերված Մելիքշահի և նրա հաջորդների հասցեին ուղղված հայ հոգևորականության ներկայացուցիչների՝ մատենագիրների մաղթանքներն ու գովերգությունները։

Ինչպես վերևում նշեցինք, զիմմիների շարքում էին նաև աշխարհիկ հայ իշխանները։ Սելջուկյան արշավանքների առաջին շրջանում (1045—1071 թթ.) հայ իշխանների մի զգալի մասը, բյուզանդացիների կողմից բռնի գաղթեցման պատճառով զրկվեց հայրենի տիրույթներից, իսկ մի մասն էլ ոչնչացվեց սելջուկ նվաճողների յաթաղանով։ Սակայն սկսած Մելիքշահի ժամանակաշրջանից, երբ երկրում սկսվեց հարաբերական խաղաղություն և ձեռնարկվեց երկրի տնտեսության վերականգնման (թեև ժամանակավոր) աշխատանքները, մահմեդական տիրակալները փորձում էին սիրաշահել նաև հայ իշխանների մնացորդներին՝ վերականգնելով նրանց հայրենի տիրույթները պայմանական իկթայական և մուլքատիրական իրավունքով։ Թեև մեզ չէին հասել այդ իրավունքները վերականգնող որևէ մի պայմանագիր, սակայն փաստերը ցույց են տալիս, որ հայ իշխանները զինվորական պարտականություններ են կատարել մահմեդական տիրակալների համար։

Ուստի, պետք է նշել այն իրողությունը, որ Մելիքշահի և հատկապես նրա հաջորդների օրոք, երբ Հայաստանում համեմատաբար հաստատվել էր մի խաղաղ ժամանակաշրջան, հայ իշխանների մի մասը զանազան ճանապարհներով դարձյալ վերականգնում է հողատիրության այն իրավունքը, որը խախտվել էր սելջուկյան արշավանքների առաջին

34 Մ. Ուռհայեցի, էջ 240—241։ Տե՛ս նաև Ս. Սպարապետ, էջ 95—96։

շրջանում։ Սասունի, Տարոնի, Վասպուրականի, Խեղենեկյան Արծրունիների տիրույթները, Տաշիր Զորագետի Կյուրիկյան և Սյունիքի թագավորների, ինչպես նաև Խաչենի իշխանության տիրույթները շարունակում էին մնալ հայ իշխանների ձեռքին։ Վերջիններս, որպես ինքնավար իշխանություններ, տարեկան հարկ (խարաջ) էին վճարում սելջուկյան սուլթանին կամ իկթադար մելիքներին։

Ինչպես ասացինք, եկեղեցիներն ու վանքերը տեր են դառնում իրենց տիրույթներին՝ Մելիք Իսմայիլ Իբն-Յակութի օրոք (1085—1093)։ Նրանցից ետ չէին մնում նաև աշխարհիկ ավատատերերը։ «Եւ ամենայն ոք,— ասում է Մ. Ուռհայեցին,— տիրեալ էր հայրենեաց իւրոց (ընդգծումը մերն է—Ս. Բ.) յաւուրս նորա, և ի ժամանակս նորա կայր ուրախութեամբ լցեալ ամենայն Հայքն»[35]։

Վարդան Բարձրբերդցին վկայում է, որ երբ Այփասլանը գրավում է Անին և այն տալիս է Շադդադյան Փատլունին, վերջինս այնտեղ կառավարիչ է նշանակում իր եղբորը՝ Մանուչեին (Դվինի Աբուլ-Ասվար ամիրայի որդուն)[36]։ Մանուչեն Անի-Շիրակ է կանչում Պահլավունի Գրիգոր իշխանին և ուրիշներին և վերականգնում նրանց իրավունքներն իրենց կալվածների նկատմամբ[37]։ Այնուհետև հայ իշխաններն իրենց աղատանիներով կռվել են Շադդադյան բանակում[38]։

Կարինի Սալդուխ ամիրան խնդությամբ ու մեծարանքով ընդունեց վրացական թագավոր Գեորգ Գ-ի ոխակալությունից վախեցած, Կարին ապաստանած Տփղիսի քաղաքապետ Վասակ իշխանին ու նրա Քուրդ ու Սարգիս եղբայրներին։ Սալդուխը Վասակին պարգևեց բազմաթիվ գյուղեր։ Վասակի մահից հետո, ասում է Մխիթար Գոշը, սրա «դրոշը, պատերազմական փողը և իշխանությունը» ժառանգեց նրա Քուրդ եղբայրը, որը մնաց այնտեղ ու վայելում էր մեծ հարգանք[39]։

Իկթա-բաժնեկալվածքներ են ստանում նաև հայ, հույն և վրացի

35 Մ. Ուռհայեցի, էջ 247։

36 *Muneccim-basi*, Sahalf ul-Ahbar, Istanbul, 1285, 2, p. 208. Sadruddin el-Huseyni, p. 38. Տե՛ս նաև *O. Turan*, Selcuklular tarihi, p. 108.

37 Վարդան Բարձրբերդցի, էջ 145։

38 Հետագայում, XII դ. երկրորդ կեսին Շադդադյանները սկսեցին հալածել հայ իշխաններին և զրկել նրանց հողատիրական իրավունքից, երբ վերջիններս կռվում էին ազատագրելու Հայաստանը օտար լծից։ Նույն տեղում, էջ 156։ Ս. Անեցի, էջ 125—128։

39 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 389—390։

իշխանները, որոնք ծառայում էին Շահարմենների և Իկոնիայի սուլթանության տիրույթներում[40]։

Սելջուկները հայ իշխաններից բռնագրաված հողերի մեծ մասը հանձնել էին սելջուկ ցեղերին, օգտագործելու որպես արոտավայրեր, իսկ մի մասը սելջուկ զինվորականներին և պաշտոնյաներին որպես իկթա։ Այս մասին են վկայում հայ և օտար աղբյուրները։ Այսպես, «... երբ որ Շամշվիլդեն գրավեցին, նույն տարին (այսինքն՝ 1110 թվականին)[41] սուլթանի զորքը և բովանդակ թրքությունն եկավ... (ապա) վրաց զորքն աներկյուղած հարձակվեց (այն) թուրքերի վրա, որոնք նստած էին մինչ Բասեն (Բասիան) և Կարմիր փորա (յի) լեռն(եր)ում...

... Իսկ մյուս տարին ծաղկազարդին դուրս եկավ (Դավիթ) թագավորն Ղանուխից՝ գնալու Արաքսի (Ռախսի) եզերքը, և Ջատիկը տոնեց Նախիդուրում... և հարձակվեց Արաքսի (Ռախսի) եզերքին կանգնած թուրքերի վրա...»[42]։

«Իսկ մինչ այդ Ղանի և Գեղարքունյաց (Գեղարքունիի) թյուրքերի արշավախմբերն եկան և ավերեցին Պաղակացիի (Պալակացիոսի) երկիրը՝ Շնաձոր կոչվածը...

... Եվ այս պահին եկան Կարնո-քաղաքացիք, ասորիք (շամեցիք և Թյուրք-դարմնացիք... (որոնց նույնպես) փախուստի ենթարկեցին...

Սրանից հետո (նույն Գեորգ ռուսը) մեծ զորք ժողովեց ու դիմեց Գեղարքունիք (Գելաքուն), որը դժվար էր գրավել թուրքմենների՝ այնտեղ ծովի ավազի պես շատ լինելու պատճառով... իսկ երբ (Գեորգի զորքերը) հաղթող վերադառնում էին, նրանց հետևից ընկավ ամբողջ թուրքմենությունը Գեղարքունիքում (Գելաքունում)...»[43]։

1076 թվականին Քարթլին սելջուկյան ամիրա Սավտեքինի կողմից գրավվելուց հետո «թուրքերը տեղավորվեցին Առանի երկրների բերդերում, բնակավայրերում և հովիտներում»[44]։

Օղուզ-թուրքմենական ցեղերը, XI դ. վերջերին Մրվանյանների տիրապետության վախճանից հետո, բնակվեցին Վանա լճի ավազանի հովիտներում[45]։

---

40 Տե՛ս J. H. Uzunçarsili, Medhal, p. 124—127. Վ. Բարթրբերդցի, էջ 123։

41 Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. 1, Երևան, 1934, էջ 221, ծանոթություն 10։

42 Նույն տեղում, էջ 216—217։

43 Նույն տեղում, հ. 2, 1935, էջ 11—12։

44 Տե՛ս Sadruddin el-Huseyni, p. 16.

45 Տե՛ս El-Bundari, p. 76—78. Ibn al-Asir, X, 47—49, 53.

Պետք է նշել, որ XI—XII դդ. Հայաստանի քաղաքային բնակչության և գյուղում երկրագործությամբ զբաղվող գյուղացիների ճնշող մեծամասնությունը հայերն էին։

Օղուզ-թուրքմենական ցեղերի կենցաղը և սելջուկյան աշխարհակալության հողատիրության ձևերը չէին կարող արմատավորվել Անի-Շիրակում։ Ինչպես հայտնի է, Շադդադյանները Անի-Շիրակում և Դվինում էին հաստատվել նախքան սելջուկ թուրքերի նվաճումը[46]։ Այս վայրերը թափանցած թուրդ Շադդադյանները մեծ մասամբ դարձել էին նստակյաց բնակիչներ և արդեն նրանց մոտ առկա էր այն արտադրաեղանակը, որ գոյություն ուներ Հայաստանում, մինչև սելջուկյան տիրապետությունը[47]։

Ինչպես նշվեց վերևում, սելջուկները հայ իշխաններից բռնագրաված հողերի մեծ մասը հանձնում էին սելջուկ քոչվոր ցեղերին՝ թուրքմեններին՝ օգտագործելու այն, որպես արոտավայրեր։ Մեր կարծիքով մի կողմից հենվելով վերևում բերված վկայությունների վրա և ընդունելով, որ XI—XII դարերում Հայաստանի քաղաքային բնակչության և գյուղում երկրագործությամբ զբաղվող գյուղացիների ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը, աներկբայելիորեն պետք է եզրակացնել, որ Հայաստանում եկվոր քոչվոր ցեղերը՝ թուրքմենները, հիմնականում տեղավորվել են Հայաստանի լեռնային արոտավայրերի մերձակա հովիտներում ու դաշտերում և հիմնականում զբաղվել են քոչվորական անասնապահությամբ։

Ուստի որպես հողատիրության հատուկ կատեգորիա պետք է առանձնացնել այն հողերը, որոնք ծառայում էին վաչկատուն ցեղերին արոտավայրային քոչվորական անասնապահական տնտեսություն վարելու համար։ Որպես ամառային արոտավայրեր օգտագործում էին բարձր լեռնային ալպիական մարգագետինները՝ յայլախները, իսկ ձմեռայինը՝ հարթավայրերում ղշլախները։ Ղշլախներն ու յայլախները գտնվում էին մեկը մյուսից շատ մեծ հեռավորության վրա։ Պետք է ենթադրել, որ ոչ միայն հարմարավետ և հարուստ արոտավայրերի համար մղվող միջցեղային ընդհարումներն ու խժդժությունները, այլև ղշլախից

---

46 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 206—214։

47 Տե՛ս Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1956, էջ 256—260։

յայլախ և հակառակ ուղղությամբ խաղաղ պայմաններում տեղի ունեցող երկարաձիգ թափառումները ավերիչ ու կործանարար էին երկրագործությամբ ու խաղաղ շինարարությամբ զբաղվող հայ գեղջուկի ու արհեստավորի համար։

Որպես արոտավայր օգտագործվող հողերը կոչվում էին յուրդ[48], որը ուներ տարածքային իմաստ, և որի սահմաններում տեղի էին ունենում տվյալ ցեղային միավորման տեղաշարժերը։

Թեև պաշտոնապես այսպիսի հողերը երբեմն չէին դասվում այլ կատեգորիաների հողերի շարքում, սակայն ելնելով դրանց հիմնական առանձնահատկություններից, այն պետք է համարել հողատիրության հատուկ ձև։ Այս հողերի առանձնահատկությունն այն էր, որ դրանց ֆեոդալական սեփականատիրական բնույթը ծածկված էր նահապետական համայնքային սովորույթների շղարշով, որքանով որ բոլոր քոչվորները պահպանում էին ցեղային բաժանումներն ու ցեղային կազմը-վածքը[49]։

Իրականում արոտավայրերի հողերի սեփականատեր-տնօրինողը և կարգավորողը քոչվոր ցեղի տոհմի գլխավորն էր։

Արոտավայրերի օգտագործումը կրում էր համայնական բնույթ։ Ցեղի ներսում ամենափոքր բջիջը համայնքն էր, որը սկզբնաղբյուրներում հիշատակվում է թուրքերեն օբա բառով[50]։

Չնայած ամիրաները իրենց վասալների հետ տնօրինում ու զեկավարում էին քոչվորական ցեղերի քոչելն ու վերաքոչելը, սակայն նրանք չէին կարող զրկել իրենց ենթակա քոչվորներին արոտավայրերի օգտագործման իրավունքից։

Ֆեոդալական հողային սեփականության այս ձևը սերտորեն կապված էր աշխարհազորային քոչվորական ցեղերի ռազմական կազմակերպության հետ։ Ինչպես իկթային, այնպես էլ յուրդին տիրելու իրավունքը պայմանավորված էր ամիրաների և նրանց վասալների սուլթանի նկատմամբ կատարած զինվորական ծառայության և պարտավորության հետ։

[48] *M. Quatremère*, Vie de Rachid ad-Din, Introduction a l'histoire des Mongols de la Perse, I, Paris, p. 54, note 72.

[49] *И. Петрушевский*, Земледелие и аграрные отношения в Иране в XIII—XIV вв., Л., 1960, стр. 275.

[50] Նույն տեղում։

Այլ կերպ ասած, այսպիսի հողերը ավատական պայմանական սեփականություն էին, ռազմական լեների ձևով[51] և իկթայի այլատեսակը։

Սելջուկյան աշխարհակալության մեջ հողատիրության գլխավոր կատեգորիա էր իկթադարական հողատիրությունը, կարճ ասած, իկթան։ Ռազմաֆեոդալական պայմանական հողատիրության այս ձևը թեև նոր չէր, սելջուկյան աշխարհակալությանը նախորդող մահմեդական երկրներում տիրող հողատիրության իրավունքի մեջ, սակայն այդ ինստիտուտը իր զարգացումը ապրեց սելջուկյան տիրապետության ժամանակ, բավարարելով տնտեսական-ռազմական ու քաղաքական ստեղծված դրության առկա ու հրատապ պահանջները։

Մինչև Մելիքշահի ժամանակաշրջանը, դեռևս Տուղրիլ բեգի (սուլթան, 1040—1063) և Ալփասլանի (1063—1072) ժամանակ, սելջուկյան աշխարհակալության մեջ հիմնականում կիրառվում էր իկթայի այն ձևը, երբ ամբողջ մի երկրամասի կամ նահանգի (էալեթի) կառավարումն ու եկամուտների գանձումը հանձնվում էր այդ երկրամասերը նվաճող ստորադաս ամիրայի կամ Ամիրի (կուսակալի) տնօրինությանը[52]։ Վերջինս իկթայի չափի և մեծության համեմատ պետության գանձարանին էր մուծում նախօրոք նշանակված որոշակի չափսի հարկ։ Կուսակալը կամ ամիրան իկթադար էր մնում այնքան ժամանակ, ինչքան նա հավատարիմ էր տիրակալի՝ սուլթանի նկատմամբ։ Հակառակ դեպքում իկթան վերացվում և վերադարձվում էր պետական գանձարանի՝ պետական հողերի ֆոնդին և անմիջապես նշանակվում էր նոր իկթադար-կուսակալ։ Վերջինիս ենթակա զինվորականները ստանում էին ռոճիկ այն եկամուտներից, որ ավագանին ստանում էր իր էալեթից։ Հետևաբար, իկթադարը շահագրգռված չէր տնտեսության զարգացմամբ, այլ նա աշխատում էր, ինչքան հնարավոր է շատ հարկեր վերցնել գյուղի և քաղաքի աշխատավորներից։ Հասկանալի է, որ վերջիններն էլ ավելի էին աղքատանում, որն իր հերթին պատճառ էր դառնում տնտեսական ճգնաժամերի[53]։

Իկթադարական այդ սիստեմից դժգոհ էին նաև ռոճիկ ստացող զինվորները, որոնք հաճախ համախմբվում էին սուլթանի դեմ ապստամբած և իրենց սուլթան հռչակած շահզադեների (իմա՝ սելջուկյան տոհմի իշխաններ) շուրջը և կռվում էին կենտրոնական իշխանության դեմ։

[51] Նույն տեղում։

[52] *С. Агаджанов*, Очерки истории..., стр. 221.

[53] Տե՛ս *Usuncarsili*, Medhal, p. 18—19.

Այդպիսի ապստամբություններ տեղի ունեցան Տուղրիլ սուլթանի ժամանակ 1052 և 1059 թվականներին, Իբրահիմ Յաննալի[54], սուլթան Ալփասլանի ժամանակ 1063 թվականին, Գթլմուշի[55] և Մելիքշահի ժամանակ 1073 թվականին Քերմանի մելիք Կավուրդ Ասլանի (Մելիքշահի եղբայրը) գլխավորությամբ[56]։

Սելջուկ աշխարհակալության մեջ մտնող երկրների՝ հատկապես Մերձավոր Արևելքի, այդ թվում և Հայաստանի տնտեսական դրությունն ավելի վատացրեցին 1056[57], 1076 և 1085[58] թթ. պարբերաբար տեղի ունեցող համաճարակային հիվանդությունները, որոնք խլում էին մեծ թվով տարբեր ժողովուրդների պատկանող աշխատավորների կյանքը։

Թուրքմեն զինվորներին չէր բավարարում նաև սուլթանների գահակալության առթիվ նրանց բաշխած մեծ գումարները։ Ալփասլանը 1063 թ. թուրքմեն զինվորներին իր կողմը գրավելու և ապստամբ շահզադեների դեմ օգտագործելու համար, մայրաքաղաքի կայազորի զինվորներին բաշխել էր 700000 ոսկի դինար, 10000 թուփ կերպասեղեն և այլ թանկարժեք իրեր[59]։ Նույնը կատարել էր նաև Մելիքշահը 1073 թ., ավելացնելով կայազորի զինվորների ռոճիկը 700000 ոսկի դինարով[60]։

Թեև իկթայական խոշոր ձևի հողատիրությունը տիրապետող էր մնում սելջուկյան աշխարհակալության մեջ մինչև XI դ. 60-ական թվականները, սակայն Մելիքշահի ժամանակ անհրաժեշտություն զգացվեց մինչ այդ տիրող հողի իկթայական ձևի էության փոփոխմանը։ Վերոհիշյալ դրդապատճառներին պիտի ավելացնել նաև սելջուկյան բանակների կազմակերպման ձևի և արշավանքներից ստացված ավարի ու նվաճված երկրներից գանձվող եկամուտների բաշխման սիստեմը։ Ընդ որում զինվորները չէին ապահովված մշտական եկամուտով։ Ֆեոդալականացող ազնվականական վերնախավը պետական նշանավոր գործիչ, մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքի գլխավորությամբ հասկանում էր, որ օղուզ թուրքմենական անկանոն աշխարհազորերը չէին կարող հանդիսանալ ամուր

54 Տե՛ս С. Г. Агаджанов, Очерки, стр. 216—217.

55 Abul Faraj, p. 213. El-Bundari, p. 28.

56 Ravendi, Rahat us-sudûr, London, 1921, p. 127.

57 Gregory Abul Farac, (Bar Hebraeus), Abûl Farac tarihi, Ankara, 1945, p. 307—308.

58 Նույն տեղում, էջ 327, El-Bundari, նշվ. աշխ., էջ 51։

59 Տե՛ս O. Turan, նշվ. աշխ., էջ 97։

60 Նույն տեղում, էջ 141։

հենարան, մեծ չափի նվաճողական քաղաքականության իրականացման ու նվաճված երկրների հարատև ու հաստատուն տիրակալման համար։ Այդ պատճառով սելջուկյան տոհմացեղային աշխարհազորերի փոխարեն ստեղծվեց մշտական, ֆեոդալական կանոնավոր բանակ, որի անդամները զինվորական ծառայության դիմաց, ռոճիկի փոխարեն ստանում էին իկթա՝ զինվորական բաժնեկալվածքներ (պարգև, բենեֆիցիաներ) գրանց վրա ապրող բնակչությունից իրենց օգտին հարկեր (հողային renta) և տուրքեր գանձելու իրավունքով[61]։ «Նա (իմա՝ Նիզամ ալ-Մուլքը),— գրում է Իմադ ադ-Դինը,— հողը որպես իկթա բաժանեց զինվորների միջև և այն դարձրեց եկամտի աղբյուր»[62]։ Բաժնեկալվածքները զինվորներին, որպես տիրույթ, պարգևելու սովորությունը թեև կիրառվում էր Մելիքշահի նախորդների, հատկապես Ալփասլանի օրոք, սակայն դա համատարած երևույթ չէր։ Այդ մասին է վկայում Իմադ ադ-Դինի հետևյալ վկայությունը. «Նիզամ ալ-Մուլքը բաժանեց զինվորներին հողը որպես իկթա և դարձրեց այն եկամուտի աղբյուր. հողը տվեց նրանց, ովքեր չունեին իկթա»[63]։

Նիզամ ալ-Մուլքի բարենորոգումների մյուս առանձնահատկությունն այն է, որ նա վախենալով խոշոր իկթադարների հզորացումից և անջատվելու նկրտումներից, նպատակ ունենալով կապել նրանց կենտրոնական կառավարման մարմնի մեծ դիվանի հետ, բաժնեկալվածքները պարգևում էր՝ պետության տարբեր նահանգների հողերից և եկամուտներից։ «Նիզամ ալ-Մուլքը,— գրում է Սադր ադ-Դին ալ-Հուսայնին,— յուրաքանչյուր ռազմիկի համար նշանակում է իկթա 1000 դինարի չափով, որի կեսը հաճախ նա ստանում էր Սամարղանդի, իսկ մյուս կեսը՝ Ռումի (իմա՝ Հայաստան և Փոքր Ասիայի Բյուզանդական մյուս նահանգները) երկրի եկամուտներից»[64]։

XI—XII դարերում գոյություն են ունեցել իկթայի մի շարք կատեգորիաներ, որոնք իրենց չափի համեմատ բաժանվում էին խոշոր, միջին և մանր իկթաների։ Սրանց մեջ ամենատարածված ձևն էր զինվորական բաժնեկալվածքներ—ռազմական ավատ-իկթաները, որոնք կոչվում էին իկթա-խաշամ։ Մելիքշահի ժամանակ տիրապետող ձևը պայմանական

61 Снасет-намэ, стр. 34, 106.

62 El-Bundari, նշվ. աշխ., էջ 58։

63 Նույն տեղում, էջ 59։

64 Sadruddin el-Huseyni, p. 46. El-Bundari, p. 58.

իկթաներն էին։ Կային ժառանգական և ցմահ տիրակալության հանձնված խոշոր իկթաներ։ Վերջիններս տրվում էին սուլթանական տան անդամներին, պետության առավել աչքի ընկնող սուլթանին առավել հավատարիմ և ստրկությունից աղատված զուլամ (մամլուք) հրամանատարներին։ Հասարակ զինվորների ձեռքին էին գտնվում աննշան փոքր չափի մնայուն ժառանգական ավատները[65]։ Հողերի տիրապետման ժառանգական իկթայական նվիրապետական բնույթ ստանալը՝ կապված վասալական զինվորական և պետական ծառայության հետ, մի նոր կարևոր փուլ էր հողատիրության իկթայական ձևի զարգացման մեջ, որը հիմք դրվեց սելջուկների ժամանակ[66]։ Իկթադար զինվորները կոչվում էին սիպահիներ[67] (հեծյալներ)։ Զինվորական բաժնեկալվածքը, որ այս դեպքում կոչվում էր իկթա թիմար[68], սիպահիին տրվում էր զինվորական ծառայության դիմաց և փոխանցվում էր սիպահիի արու որդուն։ Այսպիսի իկթա թիմարներին օջաքզադե անունն էր տրվում[69]։

Ամիրաներին ենթարկվող սիպահիները լրիվ մարտական վիճակում առաջինների հրամանատարության ներքո մասնակցում էին արշավանքներին կամ պատերազմներին։ Սիպահիներին իրենց կարիքներն ապահովում էին իկթայի եկամտից և դրանով քեռ չէին դառնում պետական գանձարանին։ Նիզամ ալ-Մուլքի «Սիասեթնամեում» (կառավարման ձեռնարկ) ասված է, որ զինվորականները և պաշտոնյաները ստանում են իկթա և իրավունք ունեն այդ կալվածքի վրա ապրող բնակչությունից տուրքեր գանձել։ Այնուհետև ասված է, որ «մուկթաները (իմա՝ իկթադարները) թող գիտենան, որ ժողովրդի նկատմամբ նրանց թույլատրված է ոչ ավելին, քան բարությամբ հավաքել օրինական տուրքը, որ հանձնարարված է նրանց, այդ հավաքելիս, թող մարդկանց մոտ ապահով

[65] *Cl. Cahen*, L'évolution de l'iqta du IX a XIII siècle, Annales Economies-societés-Civilsations, t. VIII, № 1, Paris, 1953, p. 48.

[66] *И. П. Петрушевский*, Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV вв., М., 1960, стр. 259.

[67] *В. Гордлевский*, Государство сельджукидов в Малой Азии, Л., 1941, стр. 54, 74, 79, 150—152. Сиасет—намэ, с. 105.

[68] *M. Houtsma*, Recueil des Textes relatifs a l'histoire des Seldjoucides, Leiden, 1902, (Ibn Bibi) p. 116. *O. Turan*, Droit térrien sous les Seldjoukides de Turquie, R. E. Islamiques (1948) p. 25—49. *В. Гордловский*, Государство сельджукидов в Малой Азии, Л., 1941, стр. 74.

[69] *I. H. Uzunçarsili*, Medhal, p. 123.

լինեն նրանց անձը, ունեցվածքը, կանայք և երեխաները, թող ապահով լինեն նրանց իրերը և հողը, թող մուկթաներին նրանց մոտենալու որևէ առիթ չլինի»[70]։

Սիպահիները՝ հեծյալ զինվորները, կազմում էին սուլթանի խաս բանակը, որի մշտական քանակը 50000[71] էր։ Ամիրայություններում նրանց թիվը հասնում էր 12000-ի։ Վերջիններս ըստ իրենց ծառայության վայրի կոչվում էին «ասքերի խորասան», «ասքերի ֆարս», «ասքերի ռում» և այլն[72]։

1080 թ. Ահմադ ամիրայի գլխավորությամբ և Հայաստանի, Կարինի ու Բասենի շրջանները արշավող բանակների մեջ հիշատակվում են սուլթանական խաս բանակին պատկանող սիպահիներ։

Իկթաների բոլոր տեսակները ձևակերպվում էին սուլթանի մեծ դիվանի, իսկ ամիրայություններում՝ փոքր դիվանի կողմից տրվող մանշուրներով[73] (հրովարտակներով)։ Վերջիններում նշված էր իկթաների գոյավիճակը և հողաբաժինների արժեքը՝ դրամական արտահայտությամբ, որը որոշվում էր տվյալ հողաբաժնի եկամտաբերության համեմատ կամ իկթա տրված այլ ունեցվածքներից (քաղաք, շուկաներ և այլն) գանձված հարկերից և տուրքերից։ Եթե Նիզամ ալ-Մուլքը XI դարի սիպահիների համար նշանակել էր 1000 դինարի չափով իկթա, ապա XII դ. փաստաթղթերում իկթաները սահմանվում էին 2000, իսկ առավել խոշորները՝ մինչև 30000 դինարի սահմաններում[74]։

Սուլթան Սինջարի տված հրովարտակներից ակնհայտ է, որ այդ գումարի մեջ մտնում էր բացի դրամից՝ բնամթերքով ստացված եկամուտը, որը հիմնականում արտահայտվում էր ցորենով։

Այսպես, Սիասեթնամեում և XII դ. սելջուկյան իկթայական հրովարտակներում զինվորականներին տրված հողային պարգևը արտահայտված է «իկթա և մի կոր հաց (non pare)» ձևով։ «Հրամայում ենք,— ասված է Սինջարի հրովարտակներից մեկում,— որպեսզի յուրաքանչյուրն, որն ունի իկթա և մի կոր հաց (non pare) և որը գտնվում է մեր մշտական ծառայության մեջ, թող հաստատվի նրա հին իկթան և ոչ

[70] *Сиасет-намэ*, стр. 34.

[71] *Ravendi*, p. 131.

[72] Տե՛ս *I. Kafesoglu*, Melikşah devrinde, p. 159.

[73] Համաձայն մի վկայության, սուլթան Սինջարի (1118—1157) մեծ դիվանը-իկթադարական մանշուրներ է հանձնել օրական 70 հոգու։ Տե՛ս *И. П. Петрушевский*, Земледелие, стр. 262.

[74] Տե՛ս *С. Г. Агаджанов*, Очерки, стр. 223.

մեկի իրավունքը (իմա՝ իկթան) չվիճարկվի։ Յուրաքանչյուրը թող բավարարվի իր ունեցածով... Եվ նրանք ովքեր դուրս են մնացել հաշվառումից Մավերաննահրի արշավանքից հետո, թող նրանք ընդգրկվեն մեր անձնական դիվանի զինվորական ցուցակների մեջ։ Առանց հրովարտակի և տիրակալի հրամանին ոչ մեկին չտալ ոչ մի մանա (հացահատիկի չափ) ցորեն (ընդգծումը մերն է—Ս. Բ.) և ոչ մի դինար։ Թող ստանան այնքան, որքան սահմանված է իկթան»[75]։

Սիպահիները հեռավոր արշավանքների ժամանակ ստանում էին որպես պարգև անասնակեր և սննդամթերք իրենց պարգևած իկթայի եկամտի հաշվին[76]։ Այդ միջոցները վերացվում էին այն իկթա-նահանգի ելքի գանձարանի (մասրաֆ հազինայի)[77] բյուջեից, որտեղ որ նրանք ուղարկվել էին։ Դրա համար էլ արզը կամ արզիջեյշը[78] (զինվորական վերահսկիչը) կատարում էր արշավող բանակի անձնակազմի խիստ հաշվառում։ Զինվորական բաժնեկալվածք ստացող զինվորականները արձանագրված էին զինվորական վարչության «դիվան արզի»[79] դավթարներում։ Ինչպես վերևում ասվեց, սուլթանի խաս բանակի 46000 և նահանգներում ծառայող մեծ թվով սիպահիների իկթաները արձանագրված էին սուլթանի մեծ դիվանի մաս կազմող «փերվանե դիվանի» դավթարներում։ Գործակալը կոչվում էր «փերվանեչի», իսկ իկթադարին տրվող մանշուրը կոչվում էր «փերվանե»։ Ամիրաներին ենթակա սիպահիների իկթաները արձանագրված էին ամիրայությունների կենտրոնում գտնվող փոքր դիվաններում, որոնք արտահայտում էին նույն տերմիններով[80]։

Սուլթանության կամ ամիրայության սահմաններում գտնվող հողերը պարբերաբար ենթարկվում էին հաշվառման (հողային կադաստր), որը հատկապես կատարվում էր նոր նվաճված երկրների նկատմամբ։ Իզզ-ադ-Դին Քեյ Քավուս (1210—1219) Հայաստանում նոր նվաճված՝ Կարինի, Երզնկայի շրջանների հողերը ենթարկել էր հաշվառման և այն բաժանել էր խասերի և իկթաների[81]։ Այլուրյաններից խլաթը և նրա շրջակայքը նվաճելուց հետո, Իկոնիայի սուլթան Ալա ադ-դին Քեյքուբադը (1219—1236) խլաթ էր ուղարկել Թաջ ադ-դին Գերվանեչեյի գլխավորությամբ մի շարք ամիրաներից բաղկացած մի հանձնաժողով և 1000 զուլյամ (ստրուկ) զինվորների ընկերակցությամբ, որի պաշտոնն էր հաշվառման ենթարկել այդ վայրերի հողերը։ Հանձնաժողովը կոչ էր արել ժողովրդին՝ իկթադարներին, հողատեր գյուղացիներին և Օղուզ Թուրքմեն կոչվող անասնապահներին, հաշվառման ներկայացնել ոչ միայն մշակելի հողերը, այլև մարգագետիններն ու արոտավայրերը։ Հանձնաժողովը վերջացնելով իր գործը, ժողովրդին տալիս է անասուններ ու սերմացու և նրանց մի քանի տարի ազատում հարկերից[82]։

Հողային հաշվառումների ժամանակ ցուցակներից դուրս էին հանում այն իկթադար սիպահիներին, որոնք որևէ պատճառով տեղափոխվել էին այլ երկրամաս, որը բնական երևույթ էր քոչվոր Թուրքմենի համար։ Ցուցակից դուրս էին մնում նաև հակապետական խռովությունների մասնակիցները։

Ֆեոդալական տիրող կարգի համաձայն, խոշոր իկթաներում, այդ թվում՝ Ատրպատականի, Առանի (Աղվանքի) և Հայաստանի խոշոր նահանգում, դատական գործերը պետության գլխավոր Ղադիին ենթակա լինելով հանդերձ Շարիաթի մեջ չմտնող դատական՝ այդ թվում իկթայի հետ կապված գործերը քննվում էին խոշոր իկթադարներին՝ ամիրաներին, մելիքներին և ամիրաներին ենթակա «դիվանի մեզալիմում»[83]։ Մելիքշահի հաջորդների ժամանակ գնալով ավելի ու ավելի էր տարածվում մուկթաների հողատիրական ժառանգական իրավունքը[84]։ Սիպահին մեռնելու դեպքում իկթա թիմարը անցնում էր որդուն։ Եթե որդին փոքր էր, մինչև չափահաս դառնալը իկթան երաշխավորվում էր իկթադարի կնոջ կամ մի հեղինակավոր սիպահիի կողմից[85]։

XII դարում իկթայի զարգացման ընթացքը տանում է դեպի նրա վերաճումը պարգևական ժառանգական սեփականության[86]։ Նման երևույթ նկատվում էր դեռևս մինչ սելջուկյան ժամանակաշրջանը, սակայն

---

75 Նույն տեղում։

76 *I. Kafesoglu*, Melikşah devrinde, p. 158. *Сиасет-намэ*, стр. 105—106.

77 *I. H. Uzuncarsili*, Medhal, p. 43.

78 *Տե՛ս Сиасет-намэ*, стр. 332—335.

79 *El-Bundari*, p. 100, 214. *Ravendi*, p. 136.

80 *Տե՛ս Сиасет-Намэ*, стр. 92. *Ravendi*, p. 131. *I. H. Uzuncarsili*, Medhal, p. 104.

81 *Տե՛ս Ibn Bibi*, ed. Houtsma, 1902, p. 53—58.

82 Նույն տեղում, էջ 187։

83 *O. Turan*, Ikta, Journ. As., p. 949—959.

84 *И. П. Петрушевский*, Земледелие, стр. 251—259. *С. Агаджанов*, Очерки, стр. 225.

85 *Տե՛ս Uzuncarsili*, Medhal, p. 62.

86 *И. П. Петрушевский*, Земледелие, стр. 256.

չէր ընդունել համատարած բնույթ[87]։ XI դ. կեսերին խալիֆայության երկրներում նույնպես գոյություն ուներ ժառանգական իկթա, չնայած որ այն իրավաբանական ձևակերպում չէր ստացել, որովհետև համարվում էր անօրինական[88]։ Իկթայի մասնատիրական սեփականության վերաճման ընթացքը նկատվում է խորեզմշահերի և սելջուկների մոտ։ XI դ. վերջին Ասորիքում այդ ձևը կիրառվում էր ոչ միայն թուրքմեն ազնվականության միջավայրում, այլև ռազմական բաժնեկալվածքը հասարակ զինվորներին տրվում ժառանգաբար տիրելու իրավունքով[89]։

Սելջուկյան աշխարհակալության ֆեոդալներից մելիք Ադլ Նուր-ադ-Դին Մահմուդի զինվորները ասում էին. «Իկթաները մեր մուլքն են։ Մեր որդիները մեզանից հետո ժառանգորդ են դառնում։ Դրա համար մենք էլ վստահ լինելով այդ բանին՝ կռվում ենք»[90]։

Թեև սելջուկյան տիրակալները ճիգեր էին գործադրում կանգնեցնելու այդ ընթացքը, սակայն իկթադարները աստիճանաբար ձեռք էին բերում ավատների վրա ժառանգաբար տիրելու՝ ոչ միայն հողերի, այլև՝ դրանց վրա ապրող ռայաթի[91] նկատմամբ։ Հատկապես այդօրինակ իմունիտետային իրավունքներ ունեին հզոր իկթադարները՝ սելջուկյան իշխող տան անդամները և ենթակա կառավարիչները՝ էալեթներում և մարզերում։ Սինջարի հրովարտակները վկայում են, որ խոշոր իկթադարները իրականության մեջ եղել են լրիվ ինքնիշխան տերեր իրենց պարգևած հողերում։ Մաղանդարանի վիլայեթի կառավարիչ Ամիդի հրովարտակում ասված է. «Համաձայն (իմա՝ Սինջարի) մեր հրամանի, որ ունի մշտական գործողության ոլորտ, հրամայում եմ, որպեսզի մեր նաիբը (տեղակալը—Ս. Բ.), որ կլինի այդ վիլայեթում (Մաղանդարանում), որը իկթա է արված սուլթանական բարձրագույն հրամանով, անվիճելիորեն գտնըվում է նրա (Սարաջ ադ-Դինի) կառավարման ներքո և չի թույլատրվում խառնվել նրա գործերին»[92]։

---

87 *Cl. Cahen*, L'evolution de l'Iqta, p. 25—52.

88 *El-Maverdi*. Le droit du Califat, Paris, 1925.

89 *Семенова Л. А.*, Салах ад-Дин и мамлюки Египта, М., 1966, стр. 40.

90 *M. Belin*, De régime des fiefs militaires dans l'Islamisme, principalement en Turquie, Journ. As. XV, 56, 1870, p. 206. Makrizi, Histoire des sultans Mamelouks d'Egypte, par Quatremere, Paris, 1837, p. 220.

91 *Ռայաթը այս դարերում օգտագործվում էր և՛ բրիստոնյա, և՛ մուսուլման գյուղական բնակչության նկատմամբ։*

92 *С. Г. Агаджанов*, Очерки, стр. 225.

Այսպիսով, XII դ. ժառանգական հողատիրությունը դնալով վերաճում էր մուլքատիրական ժառանգական լիակատար անպայման-օտարելի հողատիրության[93], որը, սակայն, սելջուկյան սուլթանության և ամիրայությունների կործանումից հետո սահմանափակվեց։ Այնուհետև հայկական «Հայրենիք» հողատիրության ձևը վերականգնվեց և զարգացավ՝ Հյուսիսային (Զաքարյան) Հայաստանում։ Այլ կերպ ընթացավ հողատիրության ժառանգական ձևի հետագա զարգացումը Իկոնիայի սուլթանության միացված՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի տարածքում։ Վերջինում հողատիրության անհատական սեփականատիրական-մուլքատիրական ձևին փոխարինեց դերազանցապես հողատիրության պետական (միրի արադիե) ձևը[94]։

Պետք է նշել, որ դեռևս Իկոնիայի սուլթանության ստեղծման ժամանակաշրջանից նրա սահմաններում չէր կիրառվում իկթայական խոշոր հողատիրության ձևը, որը առկա էր սելջուկյան աշխարհակալության մելիքություններում և ամիրայություններում։ Խոշոր իկթաների բաշխմանը հատկապես վերջ տրվեց իզզ ադ-Դին Քլըջ Ասլան Բ-ի (1156—1188) ժամանակվանից։ Սելջուկյան պետության մեջ իրագործվող ֆեոդալական հողատիրության հիերարխիկ ձևի փոխարեն, երբ սելջուկյան աշխարհակալության մեջ մտնող ամիդները, մելիքները, ամիր ալ-ումարաները, ամիրաները, սելջեշքերները և սուբաշիները ոչ միայն իրենց ենթակա իկթադար սիպահիների հրամանատարներն էին, այլև գահերից ֆեոդալները, այստեղ Իկոնիայի սուլթանության մեջ ամիրաներն ու սուբաշիները իկթադար սիպահիների միայն հրամանատարներն էին[95]։

Դեռևս Մելիքշահի և նրա հաջորդների ժամանակ խոշոր իկթադարները, օգտագործելով իրեն գահերից ֆեոդալի իրավունքները, ոչ միայն արդարադատության և զինվորական գործերի պետեր էին, այլև իրենց անվամբ փող էին հատում, կարդալ տալիս խութբաներ և իրենց պալատների դարբասների առաջ օրը երեք անգամ նվագել էին տալիս «նյոբեթներ» և իրենց պահում էին տիրակալ սուլթանների նման[96]։

Հայաստանը դեռևս Մելիքշահի ժամանակ մտնում էր այն մեծ վար-

---

93 *Նույն տեղում, էջ 224—225։*

94 *O. Turan*, JA. Ikta, VI, p. 956—958.

95 *Տե՛ս O. Turan*. Selçuklular tarihi, 1965, p. 254—255. *Տե՛ս նաև O. Turan*, Ikta, JA. VI, p. 956—958.

96 *O. Turan*. Ikta, JA, VI, 956—959. *Մեծ սուլթանը օրը 5 անգամ էր նվագել տալիս։*

չական միավորի մեջ, որի կազմում էին նաև Ատրպատականը և Առանը (Աղվանքի)։ Ֆեոդալական վերոհիշյալ կարգի համաձայն, այդ խոշոր իկթայի մեջ մտնում էին առանձին էալեթներում և քաղաքներում կազմակերպված ամիրայությունները։ Այդ կուսակալության՝ էալեթի և ամիրայությունների գլուխ էին կանգնած դեռևս 1071 թ. Մանազկերտի ճակատամարտին մասնակցող և հետագայում Մելիքշահի ժամանակ, 1076, 1080 և 1086 թթ., Հայաստանը նվաճող մի շարք սելջուկ շահզադեներ և ստրկությունից ազատված ամիրաներ և թուրքմեն բեգեր։ Նրանցից Սրահանք Սեթեքինը նշանակված էր Առանի, Շիրվանի և Հայաստանի մի շարք նահանգների իկթադար կուսակալ (1076—1085)։ 1087 թ. Գանձակը Մելիքշահի կողմից իկթա էր տրված թուրքմեն Մահմեդ Յաղիսիան ամիրային[97]։

Այնուհետև Մելիքշահի հաջորդների օրոք հայկական և օտար աղբյուրներում Ատրպատականի, Առանի և Հայաստանի խոշոր իկթա- կուսակալության իկթադար մելիքներ են հիշատակվում՝ Իսմաիլ Իբն-Յակութը[98] մահացած 1093 թ., Մելիքշահի որդին՝ Մուհամմադ Տափարը (1093—1105)[99] հետագայում սուլթան (1105—1118) և Մելիքը[100], Մուհամմադ Տափարի որդին (հետագայում սուլթան՝ Տուղրիլ Բ (1131—1133)։ Այնուհետև սուլթան Մասուդը (1133—1152) սուլթանական տան անդամներից սելջուկ իշխանին իկթա է հանձնում «Սուքման իբն-Արտուխի Խլաթի և Մանազկերտի շրջանները և Սալդուխյան ամիրայության տիրույթ՝ Արզան առ-Ռումը (Էրզրում, Կարին)»[101]։

Թե ինչ մեծ եկամուտներ էին ստանում նահանգապետ մելիքները իրենց ենթակայության տակ գտնվող իկթաներից, այդ կարելի է դատել Սրահանգ Սավտեքինի մահվանից հետո (1085) թողած իր ժառանգությունից։ Նրա դրամական հարստությունը կազմում էր երկու միլիոն ոսկի դինար (20 միլիոն ռուբլի), 15 հազար ձեռք հագուստ, 30 հազար ոչ-

[97] *Ibn ul-Adim*, Tarih, II, Dimask, 1952—1954, p. 56. *El- Bundari*, p. 77—78. Ibn ul-Esir, Tarih, Kahire, 1302, X, p. 99—100.

[98] Մ. Ռոմայեցի, էջ 247։

[99] *Ibn ul-Esir*, Tarih, II, p. 115.

[100] Մ. Ռոմայեցի, էջ 348—350։

[101] *Ибн-ал-Асир*, стр. 123—124.

խար, 5 հազար ձի և հազար ուղտ[102]։ Իսկ Մուհամմադ Տափարը իր իկթայից ստանում էր 1330000 ոսկի (դինար) եկամուտ[103]։

Գահակալական կռիվները Սալիքշահի հաջորդների ժամանակ[104] մի կողմից և իկթայի ֆեոդալական ժառանգական և մուլքատիրական ձևերի հետագա զարգացումը մյուս կողմից, պատճառ դարձան սելջուկյան աշխարհակալության տրոհմանը՝ երեք խոշոր սուլթանությունների ու մի շարք մելիքությունների ու ամիրայությունների։ Վերջիններս հատկապես ստեղծվեցին Մեծ Հայքի և Փոքր Հայքի տարածքում, որոնց վասալական կախումը սելջուկյան սուլթանությունից կրում էր ձևական բնույթ։ Յուրաքանչյուր ամիրա իր տիրույթի ժառանգական տերն էր և վարվում էր իր իշխանության սահմաններում գտնվող հողերի և նրանց վրա ապրող բնակչության նկատմամբ այնպես, ինչպես ինքն էր ցանկանում։ Սակայն, ինչպես նշվեց վերևում, ամիրայություններում շարունակեցին հարատևել հողատիրության իկթադարական բոլոր ձևերը։

* * *

Անշուշտ, այդ նույն ժամանակաշրջանում հայկական տիպի ֆեոդալական հարաբերությունները՝ հողատիրության ձևերը և գյուղացիության կախումը դեռևս շարունակում էին զարգանալ Սյունյաց և Կյուրիկյան թագավորություններում, Արցախի իշխանության մեջ և մասամբ էլ Շադդադյան ամիրայությունում[105]։

Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և արևելյան նահանգներում գյուղացիների մի փոքր մասը ճորտացված էր, իսկ մեծ մասը գրաված էր ավատական իշխողներից ֆեոդալական կախվածության մեջ։ Հետևաբար, քիչ էին գյուղական ազատ մանր հողատեր գյուղացիները։ Սակայն դրությունը բարվոք չէր այս տեսակետից, հարավային ու արևմտյան նահանգներում։ Այստեղ գյուղացիության ճորտացման պրոցեսը ընդհատվել էր և, ինչպես տեսանք վերևում, իշխում էր նվաճողների հողատիրության «խաս», «դիվանի», «իկթա», «մուլք», «վակֆ» ձևերը, որտեղ աշխատող և հիմնական արտադրող զանգվածը՝ գյուղացիությունը, բաժանված էր երկու շերտի։ Դրանք աղբյուրներում հիշվում են

[102] *Sadruddin el-Huseyni*, p. 77.

[103] *Ibn ul-Esir*, Tarih, X, p. 99—100.

[104] Ռոմայեցի, էջ 348։

[105] Ս. Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 256։ Տե՛ս նաև Լ. Բարայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13—14-րդ դդ.։

«դեհկան»՝ մանր հողատեր ազատ գյուղացիներ, որոնք միավորված էին գյուղական համայնքներում և «մուզարիներ»՝ (վարձկան հողագործներ) ֆեոդալական կախվածության մեջ գտնվող գյուղացիներ[106]։

«Դեհկան» տերմինը, որպես գյուղացիությունը բնորոշող տերմին, մինչև XI դարը մահմեդական (մանավանդ իրանական) երկրներում ընդհանրապես նշանակել է հողատեր ինչպես խոշոր, այնպես էլ մանր հողի սեփականատեր՝ «ուլք իրավունքով», այսինքն՝ անհայտ սեփականատեր և ոչ թե գյուղական համայնքի անդամ։ Այսպիսով, դեհկան կարող է կոչվել նաև գյուղացին, որը հեռացած կամ բաժանված էր գյուղական համայնքից։

Սակայն XI—XII դդ. ընթացքում դեհկան տերմինը որպես հողատեր-ֆեոդալ նշանակությունը անհետացավ, քանի որ այս և ավելի ուշ շրջանում հողատեր ուլքադաները իրենց տեղը զիջեցին իկթադարներին։ Հետևաբար դեհկանների մասին խոսելիս, նկատի ունենք գյուղացիներին և նույնիսկ չքավոր գյուղացիներին[107]։ Այնուհետև դեհկան տերմինը ունեցել է ավելի լայն իմաստ։ Այն բնորոշել է գյուղացուն ընդհանրապես ինչպես հողատերի, այնպես էլ վարձակալ շինականին։ Դեհկան տերմինը, որպես խարաջ տվող գյուղացուն[108] բնորոշող տերմին, օգտագործվել է XI—XII դարերում։ Եվ քանի որ խարաջը (հողահարկ) վճարում էին հատկապես ոչ մահմեդական զիմմիները, այդ թվում և հայ գյուղացին[109], հետևաբար պետք է ենթադրել, որ այդ տերմինը օգտագործվել է նաև հայ գյուղացու համար։

Հողի բնավարձակալ գյուղացիները, որոնք գյուղական համայնքից դուրս գալով հողը վարձակալական սկզբունքով վերցրել էին պետությունից կամ ֆեոդալից, վերջիններիս վճարելով հարկ, սկզբնաղբյուրներում սովորաբար կոչվել են մուզարի, արաբերեն բառացի «սերմանող», «հողագործ», «ցանք կատարող» նշանակությամբ։ Այնուհետև սկզբնաղբյուրներում մուզարին ուներ վարձակալ կախյալ գյուղացու իմաստ[110]։

---

106 *В. Гордлевский*, Гос-во сельджук, стр. 94. Լ. Բարայան, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13—14-րդ դարերում, էջ 399։*

107 *Տեհկան տերմինի մասին տե՛ս И. Петрушевский*, Земледелие, стр. 308—310. *В. Бартольд*, История культурной жизни Туркестана, Л., 1927, стр. 21. Сиасет-намэ, стр. 318, прим. 72, 153, 213, 331. *Ծնթգ.* 260, 330, 243, 284:

108 *Տե՛ս Сиасет-наме*, стр. 343.

109 Ա. Տեր-Ղևոնդյան, *նշվ. հոդվածը, «Լրաբեր հաս. գիտ.», 1975, № 4, էջ 77, 85։*

110 *И. Петрушевский*, Земледелие, стр. 315.

Հայ, երբեմն նաև թուրքմեն և քուրդ գյուղացիները ընդհանուր անունով կոչվում էին ռայա կամ ռայաթ։

Միջին դարերում Մերձավորարևելյան մահմեդական երկրներում (Իրանում, Իրաքում) ռայաթ կամ ռայա էին կոչվում հարկատու դասերը ընդհանրապես, մահմեդական թե զիմմի։ Մահմեդական իրավունքի մեջ գյուղացիական խավերը իրավականորեն չեն սահմանազատված։ Սկզբնաղբյուրներում անմիջականորեն կամ պարզ ձևակերպում չկա դասերի մասին։ Ժողովրդական զանգվածները նշված են մի ընդհանուր տերմինով՝ ռայա կամ ժողովուրդ[111]։

Սելջուկյան ժամանակաշրջանում ռայան օգտագործվել է ընդհանուր իմաստով։ Այն բնորոշել է առհասարակ սելջուկյան պետության հողամասերի սահմաններում ապրող գյուղացիներին ու ժողովրդին՝ տվյալ հողամասի կառավարման կատեգորիայի համապատասխան և առանձնացվում էին ուլք (միլք), իկթա և վակֆի ռայաներ։ Եվ որովհետև մահմեդական իրավագետները հողային սեփականության հարցը շոշափում են միայն հարկերի մասին խոսելիս[112], ապա ռայայի տեսակները հանդես էին գալիս հարկերի մասին նշելիս։ Եթե հողը իկթա էր իկթադարի հողը մշակող ժողովուրդը կամ գյուղացին այդ իկթադարի ռայան էր համարվում։ Այդպես էլ հիշատակվում էին վակֆի կամ ուլքի ռայաները[113]։

Թեև աղբյուրները ժլատ տեղեկություններ են հաղորդում գյուղացիների՝ ռայայի շերտավորման մասին, սակայն պետք է ենթադրել, որ հողային բռնագրավումները բարձր խավի ազնվականության կողմից և պետական հարկային ճնշումները ապրանքային արդյունագործության զարգացումը մերձքաղաքային գյուղական շրջաններում, գյուղացիության սնանկացումը և քայքայումը վաշխառուների կողմից, այդ բոլորը առաջացնում էին գյուղացիության շերտավորումը։

Աղբյուրներում, ի հակադրություն հարուստ ֆեոդալների, հողազուրկ գյուղացիները հիշատակվում են «Ֆուքարա» (աղքատներ) տերմինով[114]։

Ինչպես նշվեց վերևում, սուլթանը հողի և նրա վրա ապրող «ջե-

---

111 *Նույն տեղում, էջ 305—306։*

112 Ա. Տեր-Ղևոնդյան, *նշվ. հոդվածը, էջ 77։*

113 *I. Uzuncarsili*, Osmanli devleti Teşkilâtina Medhal, 1941. Istanbul, p. 126—127.

114 *В. Гордлевский*, Государство сельджукидов, стр. 94.

մասթ»-ի (ժողովրդի) համայնքի՝ «ռայաթ»-ի սեփականատերն էր։ Սիասեթնամեն և մատենագրական այլ աղբյուրները ցույց են տալիս, որ բոլոր ձևերի հողերում ապրող գյուղացիները հողին տիրում էին հողօգտագործման իրավունքով և դրա դիմաց պարտավոր էին բոլոր տեսակի սեփականատերերին վճարել հողային ռենտա՝ բնամթերքով և դրամով։

Մանր հողատեր գյուղացիները և համայնքի ազատ հողատեր գյուղացիները թեև հողին տիրում էին հողօգտագործման իրավունքով, սակայն նրանց պայմանական հողասեփականատիրական իրավունքը ժառանգական էր և հողատիրոջ մեռնելու դեպքում հողը անցնում էր մեռնողի որդուն[115]։

Հողատիրության առանձին ձև էր կազմում գյուղական տերիտորիալ համայնական հողատիրությունը։

Քանի որ համայնատիրական հողատիրության և գյուղական համայնքի գյուղացիության մասին գրել են հայ և օտար պատմաբանները[116], հետևաբար մանրամասն կանգ չենք առնելու այդ հարցի վրա։

Ինչպես վերևում նշվեց, իկթա հողատիրությունը տիրապետող ձև էր, հետևաբար այդ հողերի վրա ապրող և աշխատող բնակչությունը կազմում էր տվյալ ժամանակաշրջանի գյուղացիության մեծամասնությունը։ Սիասեթնամեում ասված է, որ իկթադարը իկթայի վրա ապրող գյուղացիներից սահմանված հարկերն ու տուրքերը ստանալուց հետո, այլևս որևէ պահանջ և իրավունք չունի արտադրողի, ոչ նրա անձի, ոչ նրա ընտանիքի անդամների, կնոջ և երեխաների, ոչ ունեցվածքի և ոչ էլ անգամ հողաբաժնի նկատմամբ։ Գյուղացին տեղաշարժման ազատություն է ունեցել մի կալվածքից մյուս կալվածք[117]։

Ուստի XI դարի երկրորդ կեսին, քանի դեռ սելջուկների մոտ գերիշխում էր քոչվորային ավատատիրությունը և պետական հարկադրական օրգանները զարգացած չէին, Հայաստանի քաղաքական ստրկացումը, համաղոր չէր զանգվածների ծառայագրմանը, ընդհակառակը, ինչպես տեսանք, Սիասեթնամեի վերոհիշյալ ձևակերպումից հողատերերի նկատմամբ հպատակները որոշ չափով ազատ էին անձնական կախումից։

Հետևաբար, ճորտացման պրոցեսը, որը փոքր չափով խորանում

115 *I. Uzuncarsili*, Medhal, p. 62—63, 127.

116 *И. Петрушевский*, Земледелие, стр. 299. Ս. Պողոսյան. նշվ. աշխ., էջ 118—120։ Ս. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 184—191։ Լ. Բարայան. Հայաստանի սոցիալ-տնտեսական..., էջ 398—399։

117 *Сиасет-намэ*, стр. 34.

էր Բագրատունիների ժամանակ, կասեցվել էր։ Դա չէր կարող դիտվել առաջադիմական երևույթ, քանի որ այդ չէր բխում զարգացած արտադրության մակարդակից, այլ սելջուկների մոտ տիրող նախնական և թափառաշրջիկ անասնապահության արտադրաեղանակից։ Այդ պատճառով էլ գյուղատնտեսության հետագա զարգացմանը չօգնեցին նաև Նիզամ ալ-Մուլքի բարենորոգումները։ Հետևաբար սելջուկների մոտ գերիշխող արտադրաեղանակը չէր պահանջում գյուղացու ամրացումը հողին՝ իկթադարները բավարարվում էին սահմանված հարկերի և տուրքերի գանձումով և շահագրգռված չէին երկրագործության արտադրության ընդարձակմամբ[118]։ Գյուղացիների ճորտացման կասեցումը չբերեց երկրի տնտեսական կյանքի առաջխաղացում, այլ հակառակը՝ անկում[119]։

Սակայն գյուղացիների անձնական ազատությունը XII դարում գնալով վերանում է և դարավերջին Հայաստանի ամիրայություններում գյուղացու աղքատացումն ու անձնական կախումը ֆեոդալից, նրա ամրացումը հողին դառնում է օրակարգի հարց։ Գյուղացիների աղքատացման գործում, բացի ֆեոդալական հողատիրության զարգացումից և որոշ չափով սելջուկ ֆեոդալների նստակյաց կյանք վարելու փաստից, անշուշտ մեծ դեր ուներ նաև Մելիքշահից հետո նրա հաջորդների մեջ ծայր առած հակամարտություններն ու գահակալական կռիվները։ Ահավոր շարիքներ էին պատճառում գյուղացիներին թուրքմեն թափառաշրջիկ անասնապահ ցեղերի տեղաշարժերը, միջցեղային ու միջֆեոդալական ընդհարումներն ու ասպատակությունները, ավարառումներն ու գերեվարումները, որոնք ստեղծում էին հայ գյուղացու և նրա ունեցվածքի հարատև անապահով վիճակ։ Առաջին հերթին ավերվում էր գյուղացու բնակարանը, նրա ցանքն ու այգին էր տրորվում, անէանում թուրքմեն ցեղերի հեծելազորի ձիերի սմբակների տակ, և նա էր գերի տարվում առհասարակ։ Գրիգոր Դ. Տղայ (1173—1193) կաթողիկոսը Գրիգոր Տուհասարակ։ Գրիգոր Դ. Տղայ (1173—1193) կաթողիկոսը Գրիգոր Տուտեորդուն ուղղած իր նամակում ասում էր, որ Արարատյան երկրում, ինչպես նաև Կարնո և Տարոնի կողմերում, հայերը դեգերում են ծանր կացության մեջ։ «Նեղեալ և զզվեալ են ի հարկապահանջ բռնակալացն և կարօտին միայն աւուրն պարենի»[120]։ Նույնը վկայում է Գրիգոր Տղան Եկեղյաց դավառի եկեղեցականների մասին անգամ, տրտնջալով, թե

118 *И. П. Петрушевский*, Очерки, стр. 66.

119 Տե՛ս Պ. Պողոսյան. նշվ. աշխ., էջ 269։

120 Գրիգոր Տղա. Նամականի, Վենետիկ, 1865, էջ 88։

ճշմարիտ ուսումը վերացել է այդտեղ՝ աղքատության և անօրենների բռնության պատճառով[121]։

XII դ. ընթացքում գյուղացիների և ֆեոդալների հողային կապերը՝ ժառանգական և մուլքատիրական հողերի վրա, վերածվում էին անձնական կապանքների[122]։ Գյուղացու հողային ամրացման պահանջը առաջանում էր նաև այն պատճառով, որ սելջուկ ամիրաների մի մասը անցել էր նստակեցության և սկսել զբաղվել գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ։

Ըստ մահմեդական իրավունքի, խալիֆայության և հետագայում մահմեդական մյուս երկրների հպատակները բաժանվում էին երեք խմբի։

Խմբերը արտացոլում էին որոշ վիճակներ։ Առաջինը՝ ազատ մահմեդական, երկրորդը՝ զիմմի, այսինքն՝ այլահավատ-քրիստոնյա, հրեա կամ զրադաշտական։ Վերջիններս անձնապես ազատ էին, բայց քաղաքականապես անիրավահավասար և ունեին սահմանափակ քաղաքացիական իրավունքներ։ Երրորդ խումբը ստրուկներ էին։ Սկզբունքորեն նրանք պետք է լինեին այլահավատ, այլազգավան ռազմագերիներ կամ այլազգավան ստրուկների հետնորդներ[123]։

Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի ստրկության ինստիտուտի և հայ և օտար ստրուկների իրավական վիճակի հարցերը ուսումնասիրվել են հայ պատմաբանների աշխատություններում[124]։ Ուստի այստեղ մենք կանգ ենք առնում սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանի ստրկության վիճակի որոշ հարցերի վրա։

Ինչպես հայտնի է, ստրկության գլխավոր աղբյուրներից մեկը պա-

121 Նույն տեղում, էջ 230։

122 Միջնադարյան կրոնական մտայնության պայմաններում շարիաթի սկզբունքների վրա հիմնված մահմեդական օրենքը ծխտում էր մահմեդականի անձնական կախվածությունը տիրոջից։ Հետևաբար գյուղացիների սոցիալ-տնտեսական կյանքի իրավական վիճակը, եթե հակասում էր շարիաթի սկզբունքներին, իրավունքին, չէր կարող իր իրավաբանական ձևակերպումը ստանալ օրենսդրական և կրոնական գրքերում։ Այդ մասին տե՛ս Լ. Բաբայան, Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, Երևան, 1970, էջ 315։

123 *И. Петрушевский*, Земледелие, стр. 325. Տե՛ս նաև Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. հոդվածը, էջ 75։

124 Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը, էջ 327—339։ Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, էջ 205—223։ Ս. Վ. Բոնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում, Երևան, 1973, էջ 248—255։

տերազմի կամ արշավանքների ժամանակ թշնամուց գերի վերցրած ռազմագերիներն էին։ Հայտնի է նաև, որ—«գերի», պարսկերեն՝ «բանդա», արաբերեն՝ «ասիր» և դրանից վերցված, թուրքերեն՝ «եսիր», ինչպես առաջ, այնպես էլ հիմա նշանակում է ստրուկ։

Հայ և օտար մատենագրական աղբյուրներից մեզ են հասել բազմաթիվ վկայություններ այն մասին, որ սելջուկյան ասպատակությունների և արշավանքների ժամանակ սելջուկ սուլթաններն ու ամիրաները ձեռքբերված հարուստ ավարի կողքին Հայաստանից իրենց հետ տանում էին նաև հարյուր-հազարավոր հայ գերիներ, որոնց մի մասը վաճառում էին Փոքր Ասիայի և Իրանի շուկաներում[125], մի մասը բաժանում սուլթանի, ամիրաների և թուրքոր ազնվականների միջև։ Գերի կանայք, տղամարդիկ ծառայում էին որպես ներքինի, ստրուկներ և աղախիններ սուլթանների և ամիրաների պալատներում։ Թեև XI—XII դդ. արտադրության հիմնական աղբյուրը գյուղացու աշխատանքն էր, սակայն այս շրջանում ստրուկներին աշխատեցնում էին ոչ միայն տնային տնտեսության մեջ[126], այլև հանքերում, ճանապարհաշինարարության, ռազմական ու պետական այլ շինարարություններում[127]։

Գերի ստրուկների (ղուլամների) մի մասը ծառայում էին սուլթանի և ամիրաների «ղուլամանի սարայ» բանակներում։ Աղբյուրները հիշատակում են հայ 7000 ստրուկներից բաղկացած սուլթանական մի մեծ ջոկատի մասին։ Այդ ջոկատը հայ հրամանատարների գլխավորությամբ մասնակցել է Մելիքշահի դեմ խռովություն բարձրացրած սուլթանի եղբոր՝ Թեքիշի բանակում[128]։ Ստրկության մյուս աղբյուրը՝ հայ ծնողների կողմից իրենց զավակների վաճառքն էր։ Սելջուկների ծանր հարկապահանջության՝ պատերազմների և զանազան ասպատակությունների ժամանակ բնակչության կեղեքման ու աղքատացման պատճառով, հայ աշխատավորներն ի վիճակի չլինելով վճարել պահանջվող հարկերն ու տուրքերը, ստիպված էին լինում իրենց զավակներին ծախել ու ստրկության մատնել։ Վերոհիշյալ միջոցներով հայ և մյուս քրիստոնյա ժողովուրդներից ձեռք բերված երեխաներին Իկոնիայի սուլթանները զինվորական դաստիարակություն էին տալիս մայրաքաղաքում և այլ քա-

125 Ստրկավաճառման շուկաներ գոյություն ունեին Սեբաստիայում, Խլաթում։ Տե՛ս *O. Turan*, Selcuklular tarihi, p. 270. Chronique de Michel le Syrien, p. 572, 632, 648.

126 *В. Гордлевский*, Государство сельджукидов, стр. 91.

127 *O. Turan*, Selcuklular tarihi, p. 275.

128 *El Bundari*, p. 70—71.

զաքներում հիմնադրված զուլամ-խաններում (գերի ստրուկների դրպրոց)։ Այդ դպրոցներում դաստիարակված երեխաները մեծանալով հետագայում դառնում էին զուլամանի սարայի՝ զինվորներ և հրամանատարներ[129]։

Սելջուկյան սուլթաններին մեծ եկամուտ էր հայթայթում նաև գերեվարված հայ, հույն և վրացի իշխանների փրկագնումը[130]։

գ. Սելջուկ նվաճողների հարկային քաղաքականությունը, հարկերն ու տուրքերը

Հայաստանում սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանում սուլթանների և ամիրա ֆեոդալների հարստության և եկամուտների գլխավոր աղբյուրն էր հայ զիմմիներից՝ իշխաններից, քաղաքային բնակչությունից և հայ գյուղացուց (շինական) ստացված հարկերն ու տուրքերը։ Հասկանալի է, որ այդ ծանր հարկերն ու տուրքերը դրված էին հայ աշխատավոր գյուղացու ուսերին։

Հայաստանում սելջուկյան արշավանքների առաջին (1045—1063) և երկրորդ (1063—1071) փուլերում սելջուկ սուլթանների և քոչվոր վերնախավի գլխավոր եկամուտը հիմնականում արշավանքների և ասպատակությունների ընթացքում ձեռք բերած ավարն ու ռազմագերիների վաճառքից ստացված ապրանքային և դրամական միջոցներն էին։ Մանազկերտի ճակատամարտից հետո, երբ Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասը, որպես նվաճված երկիր անմիջականորեն ենթարկվում էր սելջուկյան աշխարհակալության կենտրոնական կառավարությանը կամ էլ ավելի ուշ Ատրպատականի, Առանի և Հայաստանի՝ Գանձակում հիմնավորված կուսակալությանը, հարկատու դարձավ սելջուկյան սուլթան Մելիքշահին[131]։ Իսկ Հայաստանի հյուսիս և հյուսիսարևելյան շրջաններում իրենց ինքնավարությունը պահպանող Լոռվա Կյուրիկյան և Սյունյաց Բաղաց թագավորությունը, ինչպես նաև Արցախի իշխանությունը տարեկան որոշ հարկ էին վճարում սուլթանին։

Սելջուկյան նվաճումները մոտ հարյուր տարի խախտեցին և գրեթե ոչնչացրեցին Հայաստանի հարավային, հարավարևմտյան և արևմտյան նահանգների տեղական սովորույթներն ու ավանդույթները, զարգացած ֆեոդալական հարաբերությունները, ֆեոդալի և գյուղացիների փոխհարաբերությունները, գյուղացիների կախվածությունը ֆեոդալից ու մասամբ գոյություն ունեցող ճորտության վիճակը։ Հիմնականում ուժեղացրեցին ձգտումը դեպի այն արտադրությունը, որտեղ հիմնավորվեցին հողային ռենտայի և հարկի բարձր տոկոսների կամայական գանձումը, ինչպես պետության, այնպես էլ առանձին ֆեոդալների, հատկապես քոչվորական վերնախավի կողմից։ Ռավենդու մոտ կան բազմաթիվ հիշատակություններ ռայաթի կամայականորեն մեծ չափերի հասնող հարկման մասին։ Այն միամտորեն վերագրում է ֆինանսական ապարատի և պաշտոնյաների դավերին։ «Նրանք,— ասում է Ռավենդին,— գրչի մի շարժումով փորձում էին յուրացնել հողային տիրույթները»[132]։ Այդ անօրինականությունները ձևակերպելով պաշտոնական գրություններում, քարտուղարները հանձնում էին զինվորական պետերին, ասելով,—ստացեք այն (ռայատներից) գավազանի հարվածներով[133]։

Դեռևս խալիֆայության ժամանակվանից հողային հարկը բարձր էր և հասնում էր բերքի քսան տոկոսից մինչև հիսուն տոկոսը։ Այդ ժամանակ հատկապես զիմմի՝ հայ գյուղացիների դրությունը շատ ծանր էր[134]։ Պետք է նշել նաև, որ իրականում ֆեոդալական շահագործման աճը տեղի էր ունենում թռիչքներով։ Հողային ռենտա-հարկի չափերը որոշ ժամանակաշրջանում փոխվում էին, երբեմն կրճատվում։ Այն կախված էր ապստամբություններից, իսկ երբեմն էլ ինքը ֆեոդալական պետությունը ձգտում էր կանգնեցնել երկրագործության մեջ նկատվող անկումը[135]։

Աշխարհակալության մեջ միասնական ագրարային քաղաքականություն վարելու փորձ էր կատարվել հատկապես Մելիքշահի կենտրոնացված պետականության ժամանակ, նրա մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքի կողմից։

Քաղաքական պատմությունը շարադրելիս, նշեցինք, որ Մելիքշահը, ելնելով իր պետության շահերից, հնարավորություններ էր ստեղծում նվաճված երկրների ժողովուրդներին մասամբ վերականգնելու իրենց քայքայված երկրներն ու տնտեսությունը։ Կարգի էին բերվում հաղորդակցության ճանապարհները։ Մելիքշահը առևտուրը հովանավորող քաղաքականություն էր վարում։ Որոշ չափով իջեցվում էին տարանցիկ առևտրից գանձվող մաքսերն ու տուրքերը։ Տարանցիկ առևտրով զբաղ-

---

129 *O. Turan*, Selcuklular tarihi, p. 255.

130 *Abul Faraj*, Chronography, London, 1932, p. 207. Վարդան Բարձրբերդցի, Պատմություն տիեզերական, էջ 13։ Մ. Ուռհայեցի, էջ 427։

131 Մ. Ուռհայեցի, էջ 234—235։

132 The Rahat as-Sudur wa ayat as-surur, by Muhammad ibn Ali... al-Rawandi, Ed. by M. Iqbal, London, 1931, GMS, New series, II, p. 32.

133 Նույն տեղում, էջ 37, 395։

134 Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. հոդված, էջ 77—85։

135 *И. Петрушевский*, Земледелие, стр. 350.

վող վաճառականական կարավանները Թուրքեստանի, Խորեզմի, Իրանի, Ատրպատականի և Իրաքի վրայով Ասորիք կամ էլ Ատրպատականի վրայով Հայաստան և Փոքր Ասիա կատարում էին աշխույժ առևտուր։ Հատկապես Նիզամ ալ-Մուլքը հոգ էր տանում դրանց ապահովության համար։ Այդ կարավանները զինվորական ջոկատների հսկողության տակ էր առնում և նույնիսկ վաճառականների վնասները հատուցում էր պետական գանձարանից։ Երբեմն կարավանների կողոպուտը պատճառ էր դառնում, որ սուլթանը ռազմական գործողություններ էր կատարում կողոպտող երկրի կամ քաղաքի դեմ և խիստ պատժում նրանց։ Իբն ալ-Ջաուզիի վկայությամբ, Մելիքշահի գանձարանը տարեկան 600000 դինարի վնաս էր կրում վերևում հիշատակված քաղաքականության պատճառով[136]։

Սակայն, պետք է նշել, որ այդ վնասը սուլթանը ծածկում էր հողից կամ հողօգտագործումից, այսինքն՝ գյուղացիներից գանձվող հարկերի ավելացումով։ Պետք է նշել, որ սելջուկների հարկային համակարգի հիմքը գյուղատնտեսությունից ստացված եկամուտներից, այսինքն՝ գյուղացիներից գանձվող հողային ռենտան էր։ Այնպես որ, առևտրի զարգացումը պայմանավորում էր գյուղացիներից գանձվող հարկի բարձրացումը։

Ինչպես առևտրի զարգացման նպատակով ներդրված՝ այնպես էլ պետական ռազմական հսկայական ծախսերը հիմնականում ապահովվում էին խոշոր, միջին և մանր իկթադարների կողմից՝ ռայաթի հողօգտագործման իրավունքի դիմաց գանձվող շարիաթի վրա հիմնված բնատուրքային և դրամական ռենտաների ձևերով։ Ինչպես տեսանք, այդ հարկերն ու տուրքերը օրինականացված էին Նիզամ ալ-Մուլքի սիասեթնամեում և յուրաքանչյուր իկթադարին սուլթանի կողմից տրված մենշուր-ֆերմանհրովարտակներով։ Սակայն իկթադարները իրականության մեջ գյուղացուց վերցրել են նշված հարկերից ավելին։ Այդ երևում է նրանից, որ Սիասեթնամեում միաժամանակ նշված է, որ իկթադարը գյուղացուց սահմանված տուրքերը վերցնելուց հետո այլևս գործ չպետք է ունենա հարկատուների հետ և պետք է հանգիստ թողնի մարդկանց անձը, ունեցվածքը, կնոջը և որդիներին։ Սուլթանի հրովարտակներից մեկում ուղղակի ասված է, որ «եթե որևէ մեկը (իկթադարը) կընդարձակի իր իրավունքները առանց մեր հրովարտակի, կվերցնի ավելի, քան ինչ որ մենք թույլատրել ենք, թող նա (կուսակալը) վերաբռնագրավի»[137]։

136 *O. Turan*, Selçuklular tarihi, p. 346.

137 *Տե՛ս С. Г. Агаджанов*, Очерки..., стр. 224.

Եթե Մելիքշահի ժամանակ Նիզամ ալ-Մուլքը փորձում էր վարել միասնական հարկային քաղաքականություն սելջուկյան աշխարհակալության ամբողջ տարածքի վրա, ապա բնականաբար այն պետք է խախտվեր Մելիքշահի հաջորդների ժամանակ, երբ աշխարհակալությունը տրոհվեց երեք սուլթանությունների և մի շարք մելիքությունների, իսկ Հայաստանում առաջացան մի շարք ամիրայություններ։ Թեև վերջիններս ձևականորեն ենթարկվում էին Իրաքում ստեղծված սելջուկյան սուլթանության (1118—1194) կամ էլ XII—XIII դդ. Իկոնիայի սուլթանության հարկային համակարգին, սակայն յուրաքանչյուր ամիրայությունում պետք է որոշ տարբերություններ երևան գային, նայած նախկինում տիրող ավանդույթներին ու սովորույթներին։ Մյուս կողմից, յուրաքանչյուր ամիրայությունում ամիրաները տանում էին հատուկ քաղաքականություն հայերի նկատմամբ, որը կախված էր հայ բնակչության շատությունից կամ էլ ամիրայությունների մրցակից ախոյան Վրաստանի նկատմամբ հայերի ցուցաբերած բարեկամական վարքագծից։ Օրինակ, Շահարմենները, որոնց ամիրայության տարածքի քաղաքներում բնակվող արհեստավոր բնակչության մեծ մասը հայեր էին, նրանց նկատմամբ վարում էին համեմատաբար սիրալիր և սիրաշահող քաղաքականություն։

Ելնելով մահմեդական օրենսդրությունից, որը նախատեսում էր հարկային միասնական համակարգ բնակչության մահմեդական և զիմմի խավերի նկատմամբ, ընդհանուր հարկային տերմինները պետք է որ լիներն նույնպես միասնական, սակայն իրականության մեջ տարբեր երկրներում հանդես եկող հարկային տերմինների անվանումն ու բովանդակությունը տարբեր պետք է լիներն, նկատի առնելով տվյալ երկրում տիրող տնտեսական և հարկային հարկադրման ավանդույթներն ու սովորույթները։

Այսպես, Նասր ադ-Դին Թուսին, որը մոնղոլների ժամանակ վարում էր նրանց ֆինանսական գերատեսչությունը, ասում է, որ յուրաքանչյուր վիլայեթում խարաջը լինում է համաձայն հարկային օրենսդրության։ Յուրաքանչյուր վիլայեթում, որտեղ կան պաշտոնյաներ և յուրաքանչյուր վայրում այդ (խարաջը) լինում է այն տեսակի, որը հարկավոր է (կամ պիտանի) տվյալ վիլայեթում[138]։

Բացի վերոհիշյալ հարկերից ու տուրքերից, որպես զիմմի ռայաթ, հայ գյուղացին ու հայ արհեստավորը սելջուկ մահմեդական իշխողներին վճարում էին խարաջ՝ հողահարկ և ջիզիա գլխահարկը։ Դեռևս, սկսած

138 *Տե՛ս И. Петрушевский*, Земледелие, стр. 359.

սելջուկյան արշավանքների ժամանակվանից (1045—1071), որպես պարտավոր կողմ, Բյուզանդական կայսրությունը պարտավորված էր վճարել սելջուկյան սուլթաններին (Տուղրիլ, Ալփասլան, Մելիքշահ) տարեկան 100.000-ից մինչև 360000 դինար խարաջ։ Որոշ գումարի ջիզիա էին տալիս նաև Կյուրիկյան և Սյունյաց թագավորությունները Արցախի, Տարոնի, Սասունի և այլ հայկական իշխանությունները, որոնք ազատ էին իրենց ներքին կյանքում։

Մելիքշահի և նրա հաջորդների ժամանակ մելիքությունների և ամիրայությունների մեծ ու փոքր դիվաններում «նշանակված էին հատուկ քարտուղարներ, որոնք վարում էին խարաջի և քրիստոնյաներից գլխահարկի գանձման գործը»[139]։ Այդ քարտուղարները կոչվում էին մուհասսիլանի խարաջ, որոնք կապված էին դիվանի մուստաֆիի հետ[140]։ Հարկահավաքները կոչվում էին ամիլներ[141]։

Խարաջը կամ ջիզիան գանձվում էին միայն ոսկե դրամով[142]։ Այնքան մեծ եկամուտներ էին ապահովում հողահարկն ու գլխահարկը, որ սելջուկ իշխողներին ձեռնտու չէր կորցնել հայ աշխատասեր հպատակներին։ Թեև գլխահարկի գանձումը միակ պատճառը չէր, որ սելջուկ ֆեոդալները ձգտում էին իրենց տիրույթներում պահպանել հայ բնակչության քանակը։ Սակայն հաճախ նեղվելով ծանր հարկերից, հայերը գաղթում էին Կիլիկյան հայկական պետության սահմանները, որի պատճառով երկիրը ամայանում էր, և սելջուկները զրկվում էին եկամուտներից։ Եկամուտներ ձեռք բերելու ձգտումը համակել էր Իկոնիայի սուլթաններին, Դանիշմանյան և Արտուխյան ամիրաներին։ XII դարում վերոհիշյալ սուլթաններն ու ամիրաները տարբեր ժամանակներում Հայաստանի զանազան շրջաններից 10000-ից մինչև 70000 գանգվածներով հայ գյուղացիներին իրենց նվաճած նահանգներից տեղափոխել են Անկարա, Ակշեհիր, Խլաթ և այլ քաղաքների շրջակայքը, օրինակ Ղիյաս ադ-Դին Քեյ Խոսրովը 1196 թ. Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններից 70000 հայերի տեղափոխում է Ակշեհիրի շրջանը։ Այստեղ հայ գաղթականներին բաժանելով 5000-անոց խմբերի, նրանց տալիս է գյուղեր, տներ, վարուցանքի գործիքներ և սերմացու։ Այն հարցին, թե ինչո՞ւ են նրանք գաղթեցնում հայերին դեպի իրենց տիրույթները, Արտուխյան Կարա Ասլանը պատասխանում է. «Մենք գաղթեցրած այս մարդկանց չենք ստրկացնելու։ Նրանց տեղավորելու ենք գյուղերում։ Նրանք ագարակներում կաշխատեն մեզ համար, այսինքն ստեղծված նյութական բարիքներով մեզ հարկեր կվճարեն»[143]։

Բացի վերոհիշյալ հարկերից ու տուրքերից, ամիրաները հարկադրում էին նաև քաղաքային բնակչությանը։ Ռավենդիի բերած մի վկայությունից պարզվում է, որ քաղաքի մանր առևտրականներից՝ նպարավաճառներից հարյուր, մսավաճառներից հիսուն, բանջարավաճառներից հարյուր, կերպասավաճառներից հինգհարյուր դինարի տարեկան հարկ էր գանձվում[144]։

Թե ինչ մեծ եկամուտներ էին բերում աշխատավորներից գանձված հարկերն ու տուրքերը, այդ ցույց են տալիս հետևյալ տվյալները։ Մելիքշահի ժամանակ իկթադարների ստացած եկամուտներից դուրս՝ պետական կենտրոնական գանձարանը մուծված գումարը ըստ Համդալլահ Ղազվինի (մոնղոլների ժամանակ վարել է ֆինանսների վեզիրի պաշտոն, այսինքն՝ «mustawfi») տարեկան հասնում էր 210 միլիոն ոսկի դինարի[145]։ Իկոնիայի սուլթանությունը XII դ. վերջին Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններից տարեկան ստանում էր 10 միլիոն դինար հասույթ, իսկ միայն Խլաթի շրջանից՝ (Էրմենիե կամ Արմինիա վիլայեթ)՝ 2 միլիոն դինար[146]։ Աղբյուրներում հիշատակվում են բազմաթիվ ամիրաների թողած ժառանգության մասին, որոնցից մեծ մասն իրենց անձնական գանձարաններում, բացի այլ թանկարժեք ապրանքներից, ունեցել են 100 հազարից մինչև մեկ միլիոն ոսկի դինար դրամ, Երզնկայի Մենգուջեքյան ամիրան իր աղջկան որպես օժիտ տվել է հարյուր հազար ոսկի դինար[147]։

Անկասկած, հայ գյուղացին շարունակում էր վճարել նաև հայկական եկեղեցական կանոնագրքում ու դատաստանագրքերում եկեղեցիների ու վանքերի համար նախատեսված հարկերն ու տուրքերը։

Կողոպուտը, ծանր հարկապահանջությունն ու գերեվարությունը հայ ժողովրդի համար ստեղծում էին տնտեսական ու քաղաքական ծանր կացություն և ոտքի հանում նրան սելջուկյան ամիրայությունների դեմ՝ նրանց

139 *В. Гордлевский*, Государство сельджукидов, стр. 145.

140 *I. H. Uznucarsili*, Medhal, p. 131.

141 *Ստ՛ս Սիսական-նամէ*, стр. 34.

142 *В. Гордлевский*, Государство сельджукидов, стр. 145.

143 *O. Turan*, Les Souverains Seldjoukides et leurs sujets non musulmans. Studia Islamica, I, p. 88—91.

144 *Ravendi*, p. 32.

145 *Hamdullah Kazvini*, Nuzhat ul-Kulub, Tehran, 1936, p. 28.

146 Նույն տեղում, էջ 109, 117, 120։

147 *O. Turan*, Selcuklular tarihi, p. 250—271.

տիրապետություններից ազատվելու համար։ XII դարի վերջերին այդ պայքարը գլխավորեցին Զաքարյանները։ Հյուսիսային Հայաստանի ազատագրված հողերում կազմավորվեց Զաքարյան իշխանապետությունը։

դ. Հայաստանը սելջուկյան պետության վարչամաղամական կառավարման կազմում։ Կառավարման կարգը Մելիքշահի (1072—1092) և նրա հաջորդների ժամանակ (1092—1194 թթ.)։

Սելջուկյան տիրապետությունը վերջնականապես հաստատվեց Մերձավոր Արևելքի երկրներում, այդ թվում և Հայաստանում՝ Մելիքշահի իշխանության ժամանակ (1072—1092)։ Սելջուկյան աշխարհակալությունը տարածվում էր արևելքից արևմուտք՝ Չինաստանի և Աֆղանստանի սահմաններից մինչև Միջերկրական ծով, իսկ հյուսիսից հարավ՝ Սև ծովից ու Կովկասից մինչև Եմեն և Հնդկական օվկիանոս։ Աշխարհակալության մայրաքաղաքը Իսպահանն էր։

Պետության գլուխը կանգնած էր սուլթանը, որը, ըստ Օղուզական քոչվոր ֆեոդալական օրենքի, ուներ գերմարդկային ուժ, նման էր աստծուն և նշանակված էր վերջինի կողմից ժառանգաբար իշխելու ժողովրդի վրա։ Թեև Մելիքշահի ժամանակ սուլթանը երկիրը ղեկավարում էր միանձնյա իշխանությամբ, սակայն պետությունը իշխող տոհմի մյուս անդամների համատեղ տիրույթ էր համարվում և թուրքմենական օղուզական բեգերը քոչվոր ֆեոդալական նվիրապետական օրենքների համաձայն երկրի ղեկավարման գործում ունեին մի շարք իրավունքներ[148]։ Այս վերջին հանգամանքը սելջուկյան աշխարհակալության թույլ կողմն էր (հակառակ սուլթանների կենտրոնախույս ուժերի դեմ մղած պայքարին և Նիզամ ալ-Մուլքի այդ ուղղությամբ տարած մեծ ջանքերին)[149], որն իր արտահայտությունն էր գտել ոչ միայն սուլթանության կազմավորման սկզբնական շրջանում, այլև շարունակում էր մնալ աշխարհակալության տրոհման ու կործանման հիմնական պատճառներից մեկը։

Թեև 1040 թ. Դանդանականի ճակատամարտից հետո Տուղրիլ սուլթանի կողմից ստեղծված պետությունը ըստ վերոհիշյալ օրենքների բաժանվել էր երեք մասի, սակայն երկու մասերի տիրակալների՝ Չագիր բեգի (Տուղրիլի եղբայրը) և Յնանջ Յաբղուի մահից հետո և Տուղրիլ սուլթանի կենտրոնացված ամուր պետություն ստեղծելու ջանքերի հետևանքով՝ Ալփասլանի և Մելիքշահի ժամանակ ստեղծվել էր որոշ չափով կենտրոնացված պետություն։ Այնուամենայնիվ, այդ օրենքները հատկապես իրենց զգացնել էին տալիս յուրաքանչյուր սուլթանի մահից հետո, որը հատկապես օրինաչափ երևույթ դարձավ Մելիքշահի հաջորդների ժամանակ։ Պետության ամրացմանն ու կայունացմանը չօգնեց նաև սուլթանի ընտանիքի անդամների, որպես նահանգապետների՝ փոխարինումը սուլթանին առավել հավատարիմ ղուլամ (ստրուկ) ամիրաներով։

Դրությունը չէր բարելավվում նույնիսկ այն ժամանակ, երբ սուլթաններից ոմանք իրենց կենդանության օրոք նշանակում էին գահաժառանգներ։

Ժառանգաբար գահ բարձրացող սուլթաններն այլևս չէին վարում քոչվորական կենցաղին պատշաճ կյանք։ Սուլթանն ուներ բազմամարդ արքունիք։ Արքունիքում ծառայում էին հաջիբներ՝ հաջիբ ալ հուջաբի[150] և պահակախմբեր՝ ամիրա չանդարի[151] գլխավորությամբ, ամիրի սիլահ[152] (սուլթանի զենքը կրող անձնավորություն), ամիրի ալեմ[153] (սուլթանի դրոշակակիր), բազմաթիվ թիկնապահ գնդեր, սենեկապաններ, նաժիշտներ, սպիտակ և սևամորթ ներքիններ, ախոռապետեր, որսորդներ և բարակապահներ։ Ավելորդ չէր լինի նշել, որ սուլթանի պալատի բոլոր ծախսերը կատարվում էին մահմեդական և հատկապես այլազգի աշխատավորների՝ հպատակներից ստացված հարկային եկամուտներով և արշավանքների ժամանակ նվաճված երկրներից ձեռք բերված ռազմական ավարով, որի մեկ հինգերորդը «խումսուխասը» ըստ մահմեդական օրենքի, պատկանում էր սուլթանին[154]։

Սելջուկյան պետության մեջ ռազմական իշխանությունը և քաղաքական ղեկավարությունը, ըստ հին թուրքական սովորութական օրենքի, գտնվում էր սուլթանի (խաքանի) և նրա ընտանիքի անդամների՝ կամ քոչվոր օղուզ և թուրքմենական ազնվականության (յաբղուների, բեգերի) ձեռքում[155], իսկ Իրանը նվաճելուց հետո ֆինանսատնտեսական ամբողջ ապարատը՝ տեղական, գերազանցապես իրանական քաղաքացիական բարձրաստիճան պաշտոնեության ձեռքում։

---

148 *Kafesoglu*, Melikşah devrinde, p. 141.

149 *El-Bundari*, Ներածությունը Մ. Հուցմայի, էջ 10—12։

---

150 *El-Bundari*, p. 37, 17, 21, 43.

151 *Ravendi*, p. 232, 389.

152 Նույն տեղում, p. 142, 143։

153 Նույն տեղում, էջ 389, 390։

154 Տե՛ս *I. Kafesoglu*, Melikşah devrinde, p. 143—145.

155 Տե՛ս *I. H. Uzuncarsili*, Medhal, p. 201.

Սելջուկյան լայնածավալ աշխարհակալության տարածքում ստեղծվեցին մի շարք վարչատնտեսական միավորումներ՝ էալեթներ (նահանգներ)։ Վերջինները գլխավորում էին ամիրները[156] (փոխարքաներ), մելիքներն ու ամիրաները։ Էալեթների նահանգապետներ էին նշանակում մեծ մասամբ սուլթանի ընտանիքի անդամներին կամ աչքի ընկած օղուզ և թուրքմեն բեգերին կամ այդ նահանգը նվաճող սուլթանի հավատարիմ, ստրկությունից ազատված ամիրաներին։

Նվաճված Հայաստանը մնում էր սելջուկյան ընտանիքի անդամներից մեկի՝ Գանձակի ամիրա Մելիքշահի հորեղբոր՝ Յակութի որդի Կութբ ադ-Դին Իսմայիլին (նահանգապետ՝ (1085—1093) մելիք տիտղոսով), որպես իկթա հանձնված խոշոր էալեթի կազմում, որի մեջ էին մտնում նաև Ատրպատականը և Առանը (Աղվանքը)[157]։ Իսմայիլին նախորդել էր Սրահանք Սավտեքին ամիրան (1076—1085), որը մի շարք ամիրաների ուղեկցությամբ վերջնականապես նվաճել էր Հայաստանը։ Նույն ժամանակաշրջանում Հայաստանի և հարևան երկրամասերի մի շարք գավառներն ու քաղաքները հանձնված էին որպես իկթա՝ նվաճման մասնակցած ամիրաներին։ Վերջիններս այդ շրջանների հրամանատարներն էին։ Քաղաքների ներքին կարգապահությանը հսկում էին շահնե[158] և մուհտասիբ պաշտոնյաները։ Նրանց պարտականությունների մեջ էին մտնում հսկել առևտրական գործարքների ճիշտ կատարմանը և չափերի ու կշիռների ճիշտ օգտագործման վրա։ Որպես առևտրի վերահսկիչներ՝ գանձում էին առևտրական հարկերը։ Նրանց պարտականությունների մեջ էր մտնում նաև հանրային բարոյականության վրա հսկելու իրավասությունը, և, որ ամենահետաքրքիրն է, քրիստոնյա և հրեա հպատակներին (զիմմիներին) մահմեդականներից բաժանող տարազը և նշանները չկրելու դեպքում նրանց կարգի հրավիրելու, հասարակական վայրերում գինի խմելու արգելումը և կանանց՝ գիտական ու կրոնական հավաքույթներում տղամարդկանց հետ խառն նստելու դեպքում նրանց արգելելու

156 *Сиасет-намэ*, стр. 332, прим. 280. *Տե՛ս նաև I. Kafesoglu*, Melikşah devrinde, q. 15).

157 *El-Bundari*, p. 82—83. *Sadruddin el-Huseyni*, p. 74—75. Վարդան Բարձրբերդցի, էջ *108*։ Մ. Ուռհայեցի, էջ *247*։

158 *Ibn bibi*, p. 41, 253. *El-Bundari*, p. 42, 76, 145. *Сиасем-наме*, стр. 49, 318. прим 67.

պաշտոնը[159]։ Արվարձաններն ու գյուղերը հանձնված էին ռեյիսներին, իսկ բերդերն ու ամրոցները և նրա ենթակա արվարձանները՝ քուտուվալներին, որոնք ենթարկվում էին տվյալ շրջանի սուբաշիներին[160] զինվորական հրամանատարներին[161]։

Ամիրներն ու ամիրաները իրենց հանձնված իկթա էալեթներից ստացված եկամուտներից որոշակի մի գումար ուղարկում էին պետության գանձարան։ Թեև Հայաստանի նահանգների քաղաքական ու ռազմական իշխանությունը գտնվում էր սելջուկյան իշխող տարրի ձեռքում, սակայն մի շարք գավառների ու քաղաքների վարչատնտեսական կառավարումը թողնված էր հայ ազնվականության ներկայացուցիչներին, հատկապես նախկին իշխաններին։ Վերջիններս ինքնավար լինելով հանդերձ, որպես սուլթանի և ամիրաների վասալներ, գավառների հարկերի մի մասը, որպես խարաջ ուղարկում էին իրենց սյուզերենին։ Մելիքշահի ժամանակ նույնպիսի վիճակում էին Սասունի ու Տարոնի Թոռնիկյանների և Վասպուրականի Խեդենեկյան իշխանությունները և հատկապես Սյունյաց ու Տաշիր-Զորագետի թագավորությունները և Արցախի իշխանությունը։

Ամիրները, մելիքներն ու ամիրաները ենթարկվում էին սուլթանի մեծ դիվանին (կամ դիվանի սուլթանին) և նշանակվում էին սուլթանի կամ մեծ դիվանի նախագահ՝ մեծ վեզիրի, կամ սահիբի դիվանի կողմից[162]։ Այս դիվանը գտնվում էր պետության կենտրոնում (Նիշապուրում, Ռեյում, Իսպահանում կամ Մերվում)։ Առաջին «սահիբի դիվանի»-ներ են եղել Ամիդ ալ-Մուլքը (մահացած 1064 թ.) և սելջուկյան աշխարհակալության պետական կարգը կարգավորող մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքը։ Սուլթանի տված հրամանները քննարկվում էին մեծ դիվանում և ապա դրվում գործողության մեջ։ Կային նաև զինվորական, ռազմական, տնտեսական և այլ գործերը վարող դիվաններ։ Այդ փոքր դիվանների նազիրները (մինիստրները) կամ սահիբները միաժամանակ մեծ դիվանի անդամներն էին։

159 *O. Turan*, Turkiye Selcuklulari hakkinde resmi vesikalar, Ankara, 1958, p. 35—37. *Տե՛ս նաև* Ա. Տեր-Ղևոնդյան, *նշվ. աշխ. էջ 251—252*։

160 *O. Turan*, Turkiye Selcuklulari hakkinde resmi vesikalar, Ankara, 1958, p. 41—42. *El-Bundari*, p. 3—4.

161 *Сиасет-намэ*, стр. 49.

162 *Sadruddin el-Huseyni*, p. 23. *El-Bundari*, p. 202—203.

Մեծ դիվանի սահիբի դիվանը, որպես վեզիրության նշան, կրում էր դիվիտ (թանաքաման) և գրիչ։ Գլխին կրում էր փաթթոց[163]։

Երբեմն մեծ դիվանի նիստերին նախագահում էր սուլթանը։ Առաջին մեծ դիվանը իր նիստը գումարել էր 1036 թ. Նիշապուրում Տուղրիլ բեգի գլխավորությամբ։ Տուղրիլ բեգը սովորություն է ունեցել շաբաթը երկու անգամ դիվանի նիստեր գումարել[164]։ Մեծ դիվանում աշխատում էին ամիրաներ կամ ամիդներ, որոնք գրասենյակների պետեր էին։ Մեծ դիվանի գործերի կառավարիչը կոչվում էր դիվանի մուֆեթթիշ[165]։

Մեծ վեզիրը կամ սահիբի դիվանը պարտավոր էր ամեն օր ներկայանալ դիվան։ Նիստերից հետո ճաշում էին, և այնուհետև դիվանը ցրվում էր[166]։

Մյուս դիվաններն էին.

ա) դիվանի մյուստաֆին, որը ղեկավարում էր երկրի ֆինանսական ու տնտեսական գործերը։

Վիլայեթների ամիդները[167], որոնք միաժամանակ պատասխանատու էին խարաջ հարկից ստացած եկամտահարկի համար, հաշվետու էին այդ դիվանին։ Վերջինի կողմից որոշվում էր էալեթների կամ վիլայեթների եկամուտներն ու ծախսերը[168]։ Յուրաքանչյուր վիլայեթ կամ էալեթ ուներ իր ամիդը։ Պատմության մեջ հիշատակվում են՝ Ամիդի Խորասան, Ամիդի Բաղդադ հորջորջումները։ Այս դիվանը գլխավորող վեզիրը կոչվում էր մյուսթաֆի կամ սահիբի դիվանի խսթիյֆա[169]։ Մյուսթաֆիի տեղակալները կամ օգնականները կոչվում էին Նաիբի խսթիյֆա[170]։

Պետական գանձարանը բաժանված էր երկու առանձին մասերի. Առաջինը, ելքի և մուտքի գանձարանը, կոչվում էր մասրաֆ հազինա։ Մյուսը՝ բուն գանձարանը, ասիլ հազինա։ Եթե ելքի և մուտքի գանձարանում փողի կարիք էր զգացվում, այն վերցվում էր վերջինից[171]։

---

163 *Sadruddin el-Huseyni*. p. 58—69. *El-Bundari*, p. 202.

164 *I. Uzuncarsili*, Medhal, p. 43—44.

165 *Ravendi*, p. 350. *Տե՛ս նաև Сиасет-намэ*, гл. 40. *El-Bundari*, p. 101.

166 *I. Uzuncarsili*, Medhal, p. 96. *Сиасет-намэ*, стр. 160, 322, 343. прим 401. *El-Bundari*, p. 64, 86, 95, 96, 151, 173.

167 *Տե՛ս Сиасет-намэ*, стр. 158—160. *El-Bundari*, p. 33, 74—76, 102, 179—180.

168 *Сиасет-намэ* стр. 232—234.

169 *El-Bundari*, p. 64, 85—87, 114, 124.

170 *Նույն տեղում, էջ 121, 124, 231։*

171 *Сиасет-намэ*, стр. 214—229.

բ) Թուղրա կամ ինշա դիվանը[172]։ Սահիբի դիվանը կոչվում էր Սահիբի թուղրա կամ ինշա[173]։ Դիվանը բաժանված էր երկու մասի։ Առաջինը կոչվում էր Թուղրա, իսկ երկրորդը մունշի անունն էր կրում[174]։ Այս դիվանը ձևակերպում էր էալեթների կամ ամիրայությունների հետ կապված փաստաթղթերը՝ պետական պաշտոնյայի նշանակման և իկթաներ պարգևելու մենշուրները (հրովարտակները)։

գ) Մուշրիֆ կամ իշրաֆ դիվանը[175], որը ստուգում և վերահսկում էր նահանգապետների տնտեսական և քաղաքական գործունեությանը։

դ) Դիվանի արզը կամ արիզը[176], որը վարում էր բանակի տնտեսական գործերը, վճարում էր զինվորների ռոճիկը և ապահովում էր բանակը անհրաժեշտ զենքերով և այլ ռազմամթերքով։ Գործում էին նաև այլ դիվաններ, որոնք կապված չէին մեծ դիվանի հետ։ Դրանք էին դիվանի մեղալիմը[177], որը քննում էր շարիաթից դուրս իկթադարների իկթայի ներսում արդարադատության հետ կապված գործերը, դիվանը գլխավորում էր էմիրի դադը կամ էմիրի բարը՝ մեծ Կադին։

Սուլթանի և էալեթների նահանգապետների միջև եղած կապը ապահովում էր սահիբի բարիդը[178], որը գլխավորում էր բարիդի դիվանը։ Սուլթանին և նահանգապետներին ենթարկվող բոլոր մեծ ու փոքր դիվանները և նրանցում ծառայողները սկսած մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքից, պարսիկներ էին, արաբներ և ուրիշներ։

Հատկապես հեղինակություն էին վայելում պետության մեջ սուլթանի անչափահաս գահաժառանգների խնամակալ-դաստիարակները, որոնք կոչվում էին աթաբեգներ։ Աթաբեգ տիտղոսի առաջին կրողը եղել է Նիզամ ալ-Մուլքը։ Աթաբեգների դերը հատկապես մեծացավ Մելիքշահի հաջորդների ժամանակ։ Նշանակվելով անչափահաս գահաժառանգ ամիդների ու մելիքների աթաբեգ, նրանք, փաստորեն, այդ նահանգների իրական տիրակալներն[179] էին։

---

172 *Ravendi*, p. 239, 421. *El-Bundari*, 60—62, 109, 124, 130.

173 *El-Bundari*, p. 59. *Sadruddin el-Huseyni*, p. 68.

174 *El-Bundari*, p. 113, 159. *Сиасет-намэ*, стр. 317, прим. 59.

175 *El-Bundari*, p. 107, 113, 124. *Сиасет-намэ*, 64, 318.

176 *Նույն տեղում, էջ 192, 194։*

177 *Ravendi*, p. 375—367.

178 *Сиасет-намэ*, стр. 65, 255, 322, прим. 26.

179 *Աթաբեգության ինստիտուտը հատուկ ուսումնասիրության է ենթարկել սովետական պատմաբան Ռ. Հուսեյնովը։ Р. А. Гусейнов*, Институт Атабеков П. С. вып. 15 (78) 1966. стр. 181—196.

Էալեթներում և ամիրայություններում գործում էին փոքր դիվաններ, որոնք թեև Մելիքշահի ժամանակ ենթարկվում էին մեծ դիվանին, սակայն Մելիքշահի հաջորդների ժամանակ էալեթների դիվանի վեզիրներն ու նազիրները նշանակվում էին ամիրների, մելիքների և ամիրաների կողմից և ենթարկվում էին վերջիններին։ Դեռևս Մելիքշահի ժամանակ շահզադեների (սուլթանի գերդաստանին պատկանող իշխաններ) գլխավորած էալեթները թեև սուլթանին ենթարկվող վասալ պետություններ էին, սակայն անկախ էին իրենց ներքին կյանքում։ Ամիրներն ու մելիքները ապրում էին սուլթանների նման։ Նրանց վասալական կապը սուլթանի հետ արտահայտվում էր նրանով, որ աշխարհակալության գանձարանն էին մուծում տարեկան հարկը և իրենց հրամանատարության ներքո գտնվող բանակների մի մասը դնում էին սուլթան Մելիքշահի տրամադրության տակ։

Էալեթների կուսակալները՝ Մելիքշահ սուլթանի վասալները, կրում էին սուլթան, մելիք, ամիր և ամիրա տիտղոսները, իսկ նրանց սյուզերեն սուլթան Մելիքշահը՝ սուլթան ալ-ազամ[180] (մեծ սուլթան) տիտղոսը։ Այդ էալեթներն ու ամիրայությունները որպես բաժնեկալվածք՝ իկթա էին պարգևում և հաստատվում Մելիքշահի կամքով և հատուկ հրովարտակով։ Չենթարկվողներին սպառնում էր բանտարկություն և մահ։

Սուլթանները, ամիրները, մելիքներն ու ամիրաները միայն սուլթան ալ-Ազամի թույլտվությամբ կարող էին օրական երեք անգամ թմբուկ խփել տալ իրենց պալատի դարպասի առաջ, փող կտրել և դրամի վրա իրենց անունները դրոշմել, խութբաներում Մելիքշահից հետո իրենց անունները հիշատակել ու դրոշակներ ունենալ։ Մելիքշահի ժամանակ այդ իրավունքից էին օգտվում Նփրկերտի (Դիարբեքիր) Մրվանյան տիրակալը, Ատրպատականի, Աղվանքի և Հայաստանի էալեթի մելիքը և Իկոնիայի սուլթանը։

Սելջուկյան մեծ աշխարհակալությունը, ինչպես տեսանք, ստեղծվել է ռազմական նվաճումներով։ Հետևապես պետության կառավարման ու պահպանման գործում մեծ դեր էր վիճակված բանակին։ Սելջուկյան պետության կյանքում պատերազմները և պատերազմից ձեռք բերված ռազմական ավարը ոչ միայն հիմքն էր քաղաքական սկզբունքների, այլև տնտեսական քաղաքականության[181]։ «Սելջուկյան բանակների և

[180] *El-Bundari*, p. 240.

[181] *Տե՛ս Р. Гусейнов*, Сельджукская военная организация. П. С. выпуск 17 (80), 1967, стр. 130.

հասարակության կառուցվածքը պահանջում էին մշտական նվաճողական ռազմական գործունեություն, որովհետև հսկա բանակի պահպանման միջոցները կարելի էր ձեռք բերել միայն տերիտորիալ բռնագրավումներով, ուստի սելջուկյան պետության գոյությունը պայմանավորված էր բանակի հզորությամբ»[182]։

Մինչև սուլթանության կազմակերպումը (1040 թ.), եթե սելջուկ բեգերին ասպատակության քաղաքականության իրագործմանը բավարարում էր թուրքմեն տոհմացեղային աշխարհազորային ջոկատները, ապա սուլթանությունը հիմնվելուց հետո, երբ սելջուկյան սուլթանությունը վարում էր նվաճողական քաղաքականություն, ապա նոր նպատակների իրագործման համար անբավարար էր աշխարհազորը։ Ուստի սելջուկյան պետությունը հատուկ ուշադրություն էր դարձնում բանակի կազմակերպմանը։ Թեև կանոնավոր բանակի ստեղծմանը հիմք դրվեց դեռևս առաջին սուլթան Տուղրիլի ժամանակ[183], սակայն կանոնավոր բանակների ստեղծմանը սատարեցին Նիզամ ալ-Մուլքի ագրարային և ռազմական բարենորոգումները։

Բանակը իր առջև դրված խնդիրների կատարմամբ ու կառուցվածքով, բաժանվում էր մի քանի մասերի։

ա) Ղուլամանի սարայը, որը կազմված էր վրացի, հայ, հույն, դայլամցի (դելմիկ) և այլ ազգությունների գերի ստրուկներից (ղուլամ)։ Սրանք հիմնականում կատարում էին թիկնապահի դեր, ստանում էին ռոճիկ տարին չորս անգամ, որը կոչվում էր փեշեկանի[184]։ Այս տիպի բանակներ ունեին ոչ միայն սուլթանները, այլև մելիքները, ամիրաներն ու պետական գործիչները։ Վերջիններից Նազամ ալ-Մուլքը ունեցել է 20 հազար ղուլամ զինվոր[185]։

բ) Սուլթանի և իշխող գերդաստանի մելիքներին ու ամիրաներին ենթակա իկթադար սիպահիներից բաղկացած խաս (խաս նշանակում է սեփական, անձնական) բանակները։ Սուլթանի խաս բանակի անձնակազմի քանակը մշտապես 50 հազար էր, նահանգներում այն հասնում

[182] *Cl. Cahen*, La première pénétration, p. 15. *Նույն տեղում, էջ 11։ T. Talbot Rice*, The Seljuks in Asia Minor, London, 1961, p. 34.

[183] *Ռազմական ռեֆորմները, բանակի ռազմագիտական հարցերը մանրամասն լուսաբանված են Ի. Հուսեյնովի հոդվածում։ Տե՛ս նշված հոդվածը։ Տե՛ս նաև I. Kafesoglu*, Melikşah devrinde, p. 156—165.

[184] *Kafesoglu*, Meliksah devrinde, p. 156.

[185] *Sadruddin el-Huseyni*, p. 46.

էր 12 հազարի, ամիրայություններում՝ հազարի։ Խաղաղ ժամանակ սիպահները զբաղվում էին գյուղատնտեսությամբ։

գ) Օղուզ թուրքմենական բեգերի աշխարհազորային բանակները։ Վերջիններիս դերը թեև նվազել էր Նիզամ ալ-Մուլքի բարենորոգումներից հետո, սակայն օղուզ թուրքմեն քոչվոր ցեղերի տեղաշարժերի և միջցեղային կռիվների ժամանակ մեծ պատուհաս էին հայ ժողովրդի գլխին։

Սելջուկյան բանակի ընդհանուր քանակը կազմում էր 400 հազար։ Քաղաքների կայազորների պետերը կոչվում էին սուբաշիներ[186], առանձին բանակների հրամանատարները՝ սպասալարներ[187], սահմանապահ (ուճ բեգեր) բեգ հրամանատարը՝ կիր (սահմանային) սպասալարներ[188], իսկ գլխավոր հրամանատարը՝ ամիր-ուլ-ումարա, ամիր սալար[189], իսկ ավելի ուշ՝ (XII դ. վերջերին) բեգլերբեգ։

Մելիքշահի մահից հետո, սելջուկյան միասնական աշխարհակալության քայքայման և տրոհման ժամանակաշրջանում (XI դ. վերջից XII դ.) Հայաստանի տարածքի վրա կազմակերպվեցին մի շարք սելջուկ թուրքական ամիրայություններ։ Վերջիններս թեև ձևականորեն պահպանում էին իրենց վասալական կապը սելջուկյան սուլթանության հետ, սակայն անկախ էին և՛ տնտեսապես, և՛ քաղաքականապես։ Նրանց վասալական կապը, ավելի ճիշտ, դաշնակցային կապը արտահայտվում էր հատկապես այն ժամանակ, երբ կարիք էր զգացվում ընդհանուր միասնական ռազմական ճակատ կազմել քրիստոնյա խաչակիրների և հզորացող Վրաստանի ու Հյուսիսային Հայաստանի դեմ։

Հայաստանի տարածքի վրա կազմակերպված սելջուկ և քուրդ ամիրայությունները ենթարկվում էին Գանձակի ամիրային, որը կրում էր՝ մելիք տիտղոսը։ Դեռևս Մելիքշահի մահից հետո Ատրպատականից, Աղվանքից ու Հայաստանից կազմված նահանգի կուսակալ՝ մելիք Իսմայիլը շարունակում էր մնալ իր պաշտոնին։ 1093 թ., նրա մահից հետո, մելիք նշանակվեց Մոհամմադ Տափարը (1093—1105)։ Վերջինիս

186 El-Bundari, 3, 4. Ոմանք սու բառը կապում են թուրքերենի ջուր բառի հետ։ Ուրիշները այն բացատրում են արաբերեն su՝ վասալություն բառով։ Թուրք պատմաբան Ի. Ուզունչարշիլին կապում է այն թուրքերեն սու, այսինքն՝ բանակ իմաստի հետ, հետևաբար սուբաշը թարգմանվում է բանակի հրամանատար։ Տե՛ս Uzuncarsili, Medhal, p. 111—112.

187 Сиасет-намэ. стр. 36—37. 101—102, 320, 343.

188 Ravendi, p. 396—397, 510.

սուլթան դառնալուց հետո աղբյուրները հիշատակում են Մուհամմադ Տափարի որդի Մելիքին[190]։

Քանի որ ամիրայություններում տիրող վարչաքաղաքական հիմքը շարունակում էր մնալ հողատիրության իկթադարական սիստեմը, հետևաբար քիչ փոփոխություններ տեղի ունեցան այդ սիստեմում։ Եթե Մելիքշահի ժամանակ ամիրաները նշանակվում էին սուլթանի կողմից, ապա XII դ. նրանց տիրակալական իրավունքը դարձել էր ժառանգական։ Եթե XI դարում ամիրայություններում գտնվող մեծ և փոքր դիվանների վեզիրներն ու նազիրները նշանակում էր սուլթանի մեծ դիվանը՝ ապա XII դարում նրանք նշանակվում էին ամիրաների կողմից և ենթարկվում վերջիններին։ Հատկապես մեծացավ աթաբեգների դերը XII դ. երկրորդ կեսին։ Վերջիններս հաճախ իրենց էին ենթարկում սուլթաններին։ Այդպիսին էր Գանձակի ամիրա՝ աթաբեգ Ելդկուզի հիմնած աթաբեգությունը (1147—1225)։

* * *

Սելջուկները խորտակելով Բյուզանդիայի քաղաքական ուժը և վերացնելով նրա մշակութային ու տնտեսական գերիշխանությունը և մյուս կողմից, ժամանակավորապես ընդհատելով Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման բնականոն առաջընթացը, չկարողացան դրանք փոխարինել տնտեսական և մշակութային նոր արժեքներով, քանի որ նրանք ցածր էին կանգնած նվաճված ժողովուրդներից, այդ թվում և հայերից։ Նրանց հաջողվեց հաստատել միայն քաղաքական բիրտ գերիշխանություն։

Նրանց քաղաքական տիրապետությունը տարբերվում էր նախկինում Հայաստանում տիրապետություն հաստատած պարսկական և արաբական գերիշխանությունից նրանով, որ եթե վերջինները իշխում էին հեռվից, ապա սելջուկները՝ նոր տիրողները իրենց քոչվոր ֆեոդալական տները հաստատել էին նաև բուն Հայաստանում, ստիպելով հայ ազնվական դասի ներկայացուցիչների մեծագույն մասին ֆիզիկապես ոչնչացնելու վերահաս սպառնալիքների ներքո, բռնելու դաղթի և տարագրության ուղին։ Սակայն սելջուկների առաջին ավերիչ արշավանքից դեռևս կես դար չանցած տիրող ավատական հասարակության տնտեսական, քաղաքական ու էթնիկական փոխհարաբերությունների հետևանքով բո-

190 Մ. Ուռհայեցի, էջ 348—350։ Ибн ал-Асир, стр. 123.

վանդակ Մերձավոր Արևելքը, այդ թվում նաև Հայաստանը, մասնատվեց քաղաքականապես անհամեմատ ավելի թույլ միավորների՝ ամիրայությունների և մելիքությունների։ XII դարի երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհում ծվարած նախկին հայ իշխանական տների բեկորները Զաքարյանների գլխավորությամբ մի կողմից, հենվելով հայ ժողովրդական զանգվածների օտար լուծը թոթափելու դարավոր ավանդույթների վրա և մյուս կողմից, ապավինելով հարևան Վրաստանի քաղաքական ու տնտեսական հզորությանը, մոտավորապես կես դար տևող պայքարից հետո XIII դ. սկզբին ազատագրեցին Հայաստանի տարածքի մեծ մասը, և առաջացավ Զաքարյան իշխանապետությունը։ Միաժամանակ հայ ստեղծագործ ժողովուրդը կարողացավ ուժ ու եռանդ գտնել վերակառուցելու իր հայրենիքի ավերված քաղաքներն ու շենները, և Հայաստանը նորից կընթանար տնտեսական և մշակութային վերընթաց զարգացման ուղիով, եթե Միջին Ասիայից մոնղոլ-թաթարական թափառաշրջիկ ցեղերի ձիերի սմբակները չտրորեին նրա սիրտն ու հոգին, նորեն Հայաստանը վերածելով ավերակույտերի։

Ց Ա Ն Կ Ե Ր

ՑԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի, Վենետիկ, 1865։

Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ 2, Երևան, 1960։

Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917։

ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950։

Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961։

Կ. Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910։

Հաւաքումն պատմութեան վարդանայ վարդապետի, Վենետիկ, Ս. Ղազար, 1862։

Հովսեփյանց Դ., Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951։

Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941։

Մաղ ժամանակագրություններ, 13—18-րդ դդ., հ. Ա, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951 և հ. Բ, 1956։

Մատթեոսի Ուռհայեցւոյ Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898։

Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1973։

Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պ., 1867։

Ներսես Շնորհալի, Նամականի, Վենետիկ, 1838։

Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանելւոյ սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ, Էջմիածին, 1865։

Պատմութիւն Արիստակեայ Լաստիվերտցւոյ, Երևան, 1963։

Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, աշխարհ., թարգմ. Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971

Սմբատայ սպարապետի Տարեգիրք, ի Վենետիկ, 1950։

Սամուել Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893։

Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1911։

Ստեփանոս Օրբելյանի Ժամանակագրությունը, Երևան, 1942։

Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885։

Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1862։

ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965։

Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, Յերուսաղեմ, 1870, և նույնը, 1871։

Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, հ.Բ, Երևան, 1936։
Ա. Տեր-Ղևոնդյան, Մունաջջիմ Բաշիի ԺԱ—ԺԲ դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 471—486։
Ա. Տեր-Ղևոնդյան, Ֆարիկիի «Նփրկերտի պատմությունը» (ԺԲ դ.), Հյուսիսային Հայաստանի դեպքերի մասին. «Միջին և Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ», VI, Արաբական երկրներ, Երևան, 1974, էջ 195—211։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆ

Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885։
Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ, 1888։
Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901։
Այպոյանեան, Պատմութիւն հայ կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937, հ. 1։
Այպոյանեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, Գահիրէ, հ. 2-րդ, 1955։
Առաքելյան Բ., Ապրանքային արտադրության և արհեստագործության տեխնիկայի զարգացումը 9—13-րդ դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2, 3։
Առաքելյան Բ., Հայաստանի միջնադարյան քաղաքների բնակչության սոցիալական կազմը, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2։
Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., հ. 1, Երևան, 1958, հ. 2, Երևան, 1964։
Ասատուրեան Յ., Պատմութիւն Հայոց, Պէյրութ, 1960 թ.։
Բաբայան Լ., Վ. Հակոբյան, Հ. Մանանդյան, Երևան, 1974
Բաբայան Լ., Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, Երևան, 1970 թ.։
Բաբայան Լ., Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13—14-րդ դդ., Երևան, 1964։
Բռնեազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, Երևան, 1973։
Գրիգորյան Գ., Վանական կալվածատիրությունը Սյունիքում 11—13-րդ դդ., Երևան, 1973։
Դուրյան Եղիշե, Ազգային պատմութիւն, Նրուսաղէմ, 1934։
Երեմյան Ս., Լիպարիտ զորավարը և նրա նախորդները (Երևանի պետհամալսարանի Ն. Մառի անվան կաբինետի «Աշխատություններ», 1947, № 2)։
Լեո, Հայոց պատմություն, երկրորդ հատոր, գիրք առաջին, Երևան, 1967։
Լօրան Յ., Խաչատուր իշխան Անտիոքի 1068—1072, Հանդէս ամսօրեայ, ԽԴ տարի, 1930։
Հակոբյան Ս., Հայ ժողովրդի ֆեոդալական շրջանի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 8։
Հակոբյան Ս., Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, Երևան, 1957, հ. 2, Երևան, 1964։
Հակոբյան Ս., Վարձկանները և վարձկանությունը միջնադարյան Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1։

Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957։
Հովսեփյան Գ., Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928։
Մանանդյան Հ., Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940։
Մանանդյան Հ., Ինչական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952։
Մովսեսյան Հ., Լոռի Կիրիկեան թագաւորներու պատմութիւն, Վիեննա, 1923։
Յուզբաշյան Կ., Դելմիկները Արիստակես Լաստիվերտցու պատմության մեջ, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 5, էջ 307—311։
Չամչեան Միքայել, Պատմութիւն Հայոց, ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, և հ. Գ, Վենետիկ, 1786։
Պայասանեան Ս., Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1902։
Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն, հ. 2 (9—19-րդ դդ.), Երևան, 1965։
Պողոսյան Ս., Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում 9—13-րդ դդ., Երևան, 1958, № 4։
Պողոսյան Ս., Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1956։
Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն, պրակ 5, Երևան, 1960։
Սարաֆեան Գ., Պատմութիւն Անթէպի հայոց, հ. Ա, Լոս Անճէլս, 1953։
Վարդանյան Վ., Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը (908—1021 թթ.), Երևան, 1969 թ.։
Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965։
Տեր-Ղևոնդյան Ա., Հայ ժողովրդի իրավական վիճակը խալիֆայության տիրապետության ներքո, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններից», Երևան, 1975, № 4, (388)։
Քասունի Եղիա, (Կոմմակենացի) Փիլարտոս Հայր, Հալէպ, 1930։
Քասունի Եղիա, Անթէպի շրջանակին աշխարհագրականը և Անթէպ քաղաքին տեղեկագրականը։ (Տես Գ. Սարաֆյան (խմբ.), Պատմութիւն Անթէպի հայոց, Ա. Հ., Լոս Անճելես, 1953)։
Քասունի Երուանդ, ԺԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պեխտ-Խաչատուր և Վասակ Պահլաւունի, «Հայկազյան հայագիտական հանդես», հ. Բ, Պէյրութ, 1971։
Քասունի Երուանդ Հ., Ռուբէն Ա և Ռուբինեան իշխանութեան հիմնադրութիւնը, Պէյրութ, 1972։
Քասունի Սերուե, Երուանդ Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը մերձաւոր Արևելքի քաղաքական հոլովոյթին մէջ (1080—1137), Պէյրութ, 1974։
Օրբելի Հ., Անւոյ աւերակները, Վաղարշապատ, 1911։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՌՈՒՍԵՐԵՆ

Абу-л-фазл Бейхаки, История Масуда, пер. и прим. А. К. Арендса.
Захир ад Дин Нишапури, Сельджук-намэ, Тегеран, 1332.
Ибн ал-Асир, Тарих ал камиль, Баку 1940.
Исторические записки Никифора Вриения, Пер. под ред. В. И. Карпова, СПб., 1895.

Насири Хусрау, Сафар-намэ, Книга путешествия, пер. Е. Э. Бертельса, М-Л., 1933.
Никита Хониат, История начинающаяся с царствования Иоанна Комнина, пер. под ред. В. И. Долоцкого, СПб 1860.
Повествование вардапета Аристакеса Ластивертци, перевод с древнеармянского К. Н. Юзбашяна 1968.
Рашид-ад-Дин, Сборник летописей, пер. А. А. Хетагурова, т. 1, кн. 1, М-Л., 1952.
Розен В., Арабские сказания о поражении Романа Диогена Алп-Арсланом, Садр эд-Дин ал-Хусейни, т. I, вып. 4, СПб., 1887, стр. 243—253.
Имад эд-дин Исфаганский. «Записки Восточного отделения императорского русского археологического общества», вып. III, 1887, СПб.
Сиасет-наме, Книга о правлении вазира XI столетия Низам ал-Мулька, пер. и прим. Б. Н. Заходера, М-Л., 1949.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՌՈՒՍԵՐԵՆ

Агаджанов С. Г., К вопросу о торговой и дипломатической практике огузо-туркменских племен в X-XI вв., ИАН ТССР, 1957, № 3.
Агаджанов С., Очерки истории огузов и туркмен Средней Азии в IX—XIII вв. Ашхабад, 1969.
Агаджанов С. Г., Юзбашян К. Н., К истории тюрских набегов на Армению в XI в., ПС вып. 13 (76), 1965.
Агаджанов С. Г., Средневековые этимологии названия «туркмен» ВСЭТН, Ашхабад, 1967.
Арутюнян Б., Социально-экономическое положение крестьян в Армении XII в., по Судебнику Мхитара Гоша («Вопросы истории», 1952, № 8).
Али-заде А. А., К некоторым вопросам, относящимся к истории владычества сельджуков на Средном Востоке и в Закавказье.
«Вопросы истории народов Кавказа», Тбилиси, 1966.
Бабаян Л., К вопросу о закрепощении крестьян в Армении домонгольского периода, Ереван, 1961.
Бартольд В., Туркестан в эпоху монгольского нашествия, ч. 1.
Бартольд В., История культурной жизни Туркестана, Л., 1927.
Бартольд В., Султан Санджар и гузы, ЗВОРАО, т. XX, 1912.
Босфорт К., Мусульманские династии, Москва, 1971.
Гордлевский В. А., Государство сельджуков Малой Азии, М.—Л., 1941.
Гусейнов, Сельджукская военная организация, ПС, 1967, вып. 17 (80).
Гусейнов Р., Сирийские источники XII—XIII вв. об Азербайджане, Баку, 1960.
Гусейнов Р., Институт атабеков, ПС выпуск 16 (78), 1966.
Гусейнов Р., «Хроника» Михаила Сирийца, ПС, вып. 5 (68), 1960.
Еремян С., История Армении IX—XV вв. (очерки истории СССР, ч. 1—2, М., 1953), Изд. АН СССР.

Еремян С., Опыт периодизации истории Армении эпохи феодализма, («Вопросы истории», № 7, 1951).
Заборов М. А., Современная буржуазная историография крестовых походов, Средние века, вып. IV, М., 1953.
Еремеев Д., Этногенез турок, М., 1971.
Заборов М. А., Апология захватнических воин под видом изучения истории крестовых походов. «Вопросы религии и атеизма» М., 1954.
Заборов М. А., Введение в историографию крестовых походов, М., 1966.
Заходер Б. Н., Данданакан, Исторический журнал, 1943.
Заходер Б. Н., История Восточного средневековья М., 1944.
Зулалян М., Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970.
Лен-Пуль, Стенли. Мусульманские династии, СПб., 1899.
Микаелян Г., История Киликийского армянского государства, Ереван, 1970.
Марр Н., Сборники притч Вардана, ч. 1, СПб, 1898.
Марр Н., Ани, Л-М., 1934.
Маркс К., и *Ф. Энгельс*, Архив К. Маркса и Ф. Энгельса, т. V. М., Госполитиздат, 1938.
Манандян А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н. э.), Ереван, 1954.
Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI и начале XIX вв. Л., 1949.
Петрушевский И., Земледелие и аграрные отношения в Иране в XIII-XIV вв., М-Л., 1960.
Пахомов Е., О монете Корике Куропалата, Изв. Кавказ. ист. арх. ин-та, т. II, 1925.
Петрушевский И., К вопросу о прикреплении крестьян к земле в Иране в эпоху монгольского владычества, «Вопросы истории», 1947, №4.
Петрушевский И., О формах феодальной зависимости крестьян в Иране в XIII—XIV вв., «Советское востоковедение», 1955, № 5.
Рахмани А. А., «Сельджук-намэ» Захир ад-Дина Нишапури как источник по истории Азербайджана, ИАН Аз. ССР, СОН, 1963, № 3.
Семенова Л. А., Салах ад-Дин и мамлюки Египта, 1966.
Росляков А. А., Первые сельджуки, ИТФАН СССР, 1951, № 3.
Шенгелия Н. Н., Сельджуки и Грузия в XI веке, Тбилиси 1968.
Юзбашян К. Н., «Варяги» и «прония» в сочинении Аристакеса Ластивертци. ВВ, т. XVI, 1959.
Три анийские надписи из эпохи византийского владычества, ПС, 1921.
Якубовский А., Сельджукское движение и туркмены в XI в. ИАН, СССР, 1937, № 4.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Abu l-Faraj Bar Hebraeus, Chronography, translated by W. Budge, London, 1932.
„Chronique de Michel le Syrien", ed. par Chabot, v. I—V, Paris, 1899—1905.

Histoire des Seljoucides de l'Iraq par al-Bondari, d'après Imad ad-Din al-Katib, al-Isfahani, texte arabe publie M. Th. Houthsma, Leide, 1889.
Georgius Cedrenus Ioannis Scylitzae ope, Bonnae, 1839.
Histoire des Seldjoucides de l'Asie Mineure, texte turc, Leide, 1891.
Histoire des Seljoucides de l'Asie Mineure, d'apres l'Abrege du Seljouknameh d'Ibn Bibi, Leide, 1902.
Houtsma Th., receuil des textes relatifs a l'histoire des seldjoucides, Leide, 1889.
Histoire de la Géorgie, depuis l'antiquité jusqu'au XIX s., I—II, St. Petersbourg, 1849—1850.
Histoire des mongols de la Perse... par Rashid el-Din, publie par M. Quatremere, t. I, Paris, 1836.
Ibn al-Azrak, Tarihi Meyyafariqin, Kahire, 1959.
Lambton A. K. S., The administration of Sanjars empire as illustrated in the „Atabat al-Kataba", BSOAS, v. XX, 1957.
Makrizi, Histoire des sultans Mamelouks, I, Paris, 1857.
Maverdi, La droit du Califat, Paris, 1925.
Michaelis, Attaliotae Historia, Bonnae, 1853.
Minorsky V., Studies in Caucasian History, London, 1953.
Psellus M., Fourteen Byzantine Rulers, translated by E. R. A. Sewter, Suffolk, 1966.
The Rahat us-Sudur va Ayat us-Surur, being a History of the Saljuqs by Muhammad Ibn Ali Ibn Sulayman al-Rawandi, ed. by M. Iqbal, Leyden-London, 1921.
Receuil des Historiens des croisades, Historiens Orientaux, t. II, III, IV, Paris, 1876—1898.
Receuil des historiens des Croisades, Historiens armeniens, t. I, Paris, 1869.
The tarikh-i-Guzida or „Select History" of Hamdullah Mustawf al-Qazwini, Leyden-London, 1910—1913.
The Tarikh-i-Baihaki containing the life of Masoud son of sultan Mahmud of Gaznih, Ed. by W. H. Morley, Calcutta, 1861—1862.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԹՈՒՐՔԵՐԵՆ

Aksarayli Kerimuddin Mahmud, Musameret ul-Ahbar, Ankara, 1943.
al-Bondari, Irak ve Horasan Selcuklular Tarihi (Imad ad-Din al-Katib al-Isfahani) tukceye ceviren Kivameddin Burslan, Istambul, 1943.
Gregory Abu l-Farac (Bar Hebraeus), Abu-l-Faraj Tarihi, turkceye ceviren R. O. Dogrul, cilt I, Ankara, 1945.
Ibn ul-Cavzi, al-Muntazam, Haydarabad, 1358.
Ibn ul-Esir, Tarihi, Kahire, 1302.
Koprulu F., Anadolu Selcuklulari tarihinin yerli kaynaklari, Belleten, VII, Ankara, 1947.
Resideddin, Cami uttavarih, (Selcuklular kismi), Ankara, 1960.

Sadruddin, Ebul Hasan Ali Ibn Nasir Ibn el-Huseyni, Ahbar ud-devlet is-Selcukiyye, M. Ikbalin 1933-de, nesrettigi metinden tercume eden Necati Lugal, Ankara, 1943.
Taran O., Turkiye Selcuklulari hakkinda resmi vesikalar, Ankara. 1958.

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Adontz N., L'aieul des Roubeniens, Etudes Armeno-Byzantines, Lisbonne, 1965.
Amedroz, The Marvanid dynasty of Mayyafariqin, JRAS, 1903.
Archer T., and Kingsford Ch. The Crusades, London, 1894.
Barthold W., Turkestan down to the Mongol invasion, London, 1928.
Bartikian H., La genealogie du magistros Bagarat, catepan de l'Orient et des Kekaumenos, Revue des Etudes Armeniennes, nouvelle serie, II, 1965.
Belin M., Du regime des fiefs militaires dans l'islamisme principalement en Turquie, JA, t. XV, p. 56, 1870.
Brice W. G., The turkish colonisation of Anatolia, Bulletin of the J. Rylands Library, v. 38, I, Manchester, 1955.
Brosset M., Additions et eclaircissements a l'histoire de la Georgie, St. Petersbourg, t. II, 1851.
Brosset M., Rapports sur un voyage archeologique dans la Georgie et dans l'Armenie execute en 1847—1848, t. I, 1849.
Brosset M., Collection d'historiens armeniens, t. II, Tables chronologiques, St. Petersbourg, 1876.
Brown E., A literary History of Persia, Cambridge, 1928.
Cahen C., La campagne de Manzikert, d'apres les sources musulmanes Byzantion, IX, Bruxelles, 1934.
Cahen C., Le Diarbakr au temps des premiers Urtukides, Jour. As., 1935.
Cahen C., La Syrie du Nord a l'epoque des croisades, Paris, 1940.
Cahen C., La premiere penetration turque en Asie Mineure, Byzantion, v. XVIII, 1948.
Cahen C., Qutulmush et ses fils avant l'Asie Mineure, Der Islam, XXXI, 1954.
Cahen C., Le Malik-nameh et l'histoire des origines Seldjoucides, Oriens, v. II, 1949.
Cahen C., Notes sur l'histoire des croisades et l'orient latin, Bulletin de la Faculte des lettres de l'Universite de Strasbourg, p. 2, 1950.
Cahen C., L'evolution de l'iqta du IX au XIII, s., Annales, Economies-Societes-Civilisations, t. VIII, n. I, Paris, 1953.
Cahen C., A propos de quelques articles du Koprulu armagani, Journ. As., t. CCXLII, 1954.
Cahen C., Mouvements populaires et autonomisme urbain dans l'Asie musulmane de moyen-age, Leiden, 1958.
Cahen C., The turkish invasion. The Selchukids, in K. M. Setton, „A History of the Crusades", Pensylvania, v. II, 1958.
Cahun L., Introduction a l'histoire de l'Asie-Turcs et Mongols, Paris. 1896.

Cahen C., Cagri-Beg, the Encyclopedia of Islam, v. II, Leyden-London, 1960.
Cahen C., The historiography of the Saljuqid period, HME, London. 1962.
Canard M., La campagne armenienne du Sultan Salduqide Alp Arslan et la prise d'Ani en 1064, Revue des Et. Arm., nouv. serie II, 1965.
Charanis P., The Armenians in the Byzantine Empire, Lisboa, 1963.
Defremery C., Recherches sur le regne du sultan Seljiukide Barkiarok, Journ, As., t. I—II, 1853.
Dulaurier Ed., Recherches sur la chronologie armenienne, Paris, 1859.
Eghbal A., Le ministere pendant la periode des grands rois Saldjuqides, Teheran, 1959.
Grousset R., l'Empire de Levant, Paris, 1946.
Grousset R., Histoire de l'Armenie des origines a 1071, Paris, 1947.
Kafesoglu J., A propos du nom Turkmen. Oriens, v. XI, 1958.
Honigmann E., Die Ostgrenze des byzantinischen Reiches von 363, bis 1071, Bruxalles, 1935.
Laurent J., Byzance et les Turcs Seldjoucides. jusqu'en 1081, Nancy, 1913.
Laurent J., Byzance et Antioche sous le curopalate Philarete, Revue des Et. Arm., Paris, t. IX, 1929.
Laurent J., Des Grecs aux croises, Etudes sur l'histoire d'Edesse entre 1071 et 1098, Byzantion, t. I, 1924.
Lambton A. K. S., Landlord and peasant in Persia, London, 1953.
Le Beau, Histoire du Bas-Empire, t. XIX, Paris, 1824—1836.
Marquart J., Südarmenien und die Tigrissqurllen, Wien, 1930.
Marquart J. Skizzen zur historischie Topographie und Geschichte von Kaukasien Wien, 1928.
Marquart J., Osteuropaische und ostasiatische Strefzuge, 1927.
Mills Ch., The History of the Crusades, Philadelphia, 1826.
Minorsky V., Studies in Caucasian history, London, 1953.
Minorsky V., The history of Sharvan and Darband in 10—11—th centuries. Cambridge, 1958.
Moravscik G., Byzantino turcica, Berlin, 1958.
Morgan de, J., Histoire du peuple armenien, Paris, 1859.
Movsesian Gh., Histoire des rois Kurikian de Lori, Revue des Etudes Armeniennes, t. II, Paris, 1927.
Ramsay W., Historical Geography of Asia Minor, Amsterdam, 1962.
Rice T., The Seljuks in Asia Minor, London, 1961.
Müller A., Der Islam im Morgen und Abendland, t. II, Berlin, 1885.
Runciman A., History of the Crusades, I, Cambridge, 1951—1952.
Saint-Martin M. J., Memoires historiques et geographiques sur l'Armenie, I—II, Paris, 1818—1819.
Sanders J. The Seljuk Turks and their place in the history, History today, May, 1962.
Sauvaget J., Quatre decrets Seldjoucides, Beyrouth, 1947.

Schlumberger G., L'Epopee byzantine a la fin du X s., Paris, 1896—1905.
Sumer F., The Turks in Eastern Asia Minor in the eleventh century, Supplementary papers, 13 th International Congress of Byzantine Studies, Oxford, 1966.
Toumanoff C., The background to Mantzikert, Thirtheenth International Congress of Byzantine Studies, Main Papers XIII, Oxford, 1966.
Tournebize F., Histoire politique et religieuse de l'Armenie, Paris, 1900.
Turan O., Le droit terrien sous les Seldjoucides de Turquie, Paris, 1948.
Turan O., Les souverains Seldjoucides et leur sujets non-musulmans, Studia Islamica, I.
Vasiliev A., Histoire de l'Empire Byzantine, Paris, 1932.
Vasiliev A., History of the Byzantine Empire, I—II, Wisconsin, 1964.

ՕՍՄԱՆՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԵՐԵՆ

Günaltay S., Islam dunyasinin inhitat sebebi Selcuk istilasi midir ITTK. Istanbul, 1943.
Honigmann E. Malatya Islam Enc. 3 (1936).
Kafesoglu I. Sultan Meliksah devrinde Büyük Selçuklu imperatorlugu, Istanbul, 1953.
Kafesoglu I. Selcuklu tarihinin meseleleri. TTKB, cilt XIX, 1955.
Kafesoglu I. Büyük Selcuklu veziri Nizamu'l Mulk'un eseri Siyasat-name ve turkce tercumesi. TM. cilt XII, 1955.
Kafesoglu I. Meliksah, I, A 668.
Kafesoglu I. Turkmen adi manasi ve mahiyeti. Jean Deny armagani, Ankara, 1959.
Kirzioglu, Kars Tarihi, cilt I. Istambul, 1953.
Köprülü M. F. Bizans müesseselerinin Osmanli muesseselerine te'siri hakkinda bazi mulahazalar. THITM, cilt I, 1931.
Koprülü M. F. Anadolu Selcuklalari tarihinin yerli kaynaklari. TTKB, cilt VII, № 27, 1943.
Köymen M. A. Büyük Selçuklular imperator lugunola Oguz isyani. Ankara Universitesi dil ve Tarihi—Gografya Fakultesi dergisi, cilt V, № 2, 1947.
Köymen M. A., Büyük Selçuklu imparatorlugu tarihi, cilt II, Sancar devri Ankara, 1954.
Togan Z. Velidi, Umumi Turk tarihinde giris. Istambul, 1946, c. I.
Turan O. Ikta, IA VII.
II Turk Tarih kongresi, Istanbul, 1943.
III Turk Tarih kongresi, Ankara, 1948.
IV Turk Tarih kongresi. Ankara, 1952.
V Turk Tarih kongresi, Ankara. 1960.
Uzuncarsili I. H. Osnamli devleti teskilatina medhal. Istanbul, 1941.
Uzuncarsili I. H. Türkiye Selçukluarinda toprak hukuku. Belleten, S. XLII.
Yinanc M. H. Turkiye tarihi Selcuklular devri. Istandul, 1944(

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբդալ-Մալիք, Օմայան խալիֆա 217
Ադլ Նուր-ադ-Դին Մահմուդ 246
Աբդլմսեհ, Թոռնիկ Արծրունու տղան 121
Աբդ ալ-Յուսուֆ 38
Աբլղարիբ Արծրունի 181, 182, 188, 193
Աբու Դինար, ամիրա 81, 82
Աբու-լ-Ասվար, ամիրա 40, 62, 71, 76, 119, 135, 141, 235
Աբու-լ-Կասիմ 215
Աբու-լ-Հայջա իբն Ռաբիբ ալ Դաուլա. 38
Աբու-լ-Ֆաթհ 112
Աբու-լ-Ֆարաջ 12, 59, 60, 75, 89, 112, 127, 138, 141, 143, 155, 162, 178, 179, 184, 186
Աբու Յալա Համզա Իբն ալ-Կալանիսի 126
Աբու Յակուբ, ամիրա 201
Աբու Նասր Ահմադ 78
Աբու Նասր Մուհամմադ 78, 209
Աբուսահլ, որդի Սենեքերիմի 84, 122, 123, 142, 162, 191
Աբու Սալիմ, վեզիր 210, 212
Աբու Սեմրա 103
Աբուբակր, Վասիլի հայրը 192
Ագիմի 63, 64, 70
Աթսրզ, Թուրքմեն. առաջնորդ 172
Ալա ադ-Դին Բելքուբադ, Իկոնիայի սուլթան 245
Ալ-Բասան, ամիրա 93, 130, 136, 138, 139, 142, 157, 199
Ալ-Բոնդարի տե՛ս Բոնդարի
Ալեքսանդր Բ պապ 172
Ալեքսիս Կոմնենոս 171, 174, 192
Ալթունտուկ 211—213
Ալիատտին, կատապան 155
Ալի Իբն-Մունջիդ Իբն- Մուլասար 132
Ալիշան Ղ. 100
Ալ-Ղազի տե՛ս Ղազի
Ալ-Քամիլ տե՛ս Քամիլ
Ալփասլան 14, 70, 86, 91—97, 99, 101—106, 108, 111—113, 115, 171—121, 126, 127, 129, 131, 132, 135—148, 152—157, 159—163, 166—168, 198, 199, 204, 209, 214, 235, 239—241, 260, 263
Ակուբ տե՛ս Կուբր ադ-Դին Իսմայիլ Իբն Յակոբ
Ահմադ, ամիրա 177, 201
Ահարոն Բուլղար 47, 49, 50—53
Ահմեդ Բեն—Մուհամեդ ալ-Ջաֆարի 111
Ահմեդշահ, ամիրա 139
Աղաջանով Ս. 9, 21
Աղսարտան, Կախեթիայի թագավոր Գագիկի որդին 136, 137
Ամիդ ալ-Մուլք 93, 94, 96, 246, 265
Ամեղրող 126
Ամր-Քափրի, ամիրա 184
Այազ, Մելիքշահի եղբայրը 168
Այթեքին, հրամանատար 148
Այյուբյաններ 244
Անազուդլին 40
Անդրոնիկոս Դուկաս 156, 180
Անիի Շադդադյան ամիրաներ 220
Անիի Բագրատունի թագավորներ 229
Աննա Կոմնենա 117, 182, 184
Աշոտ, հայոց թագավոր 77, 142
Առաքելյան Բ. 8, 19, 20
Ասլանշահ, սուլթան 222
Արիսիդի տե՛ս Ալ-Բասան ամիրա
Արլանդանոս 129
Ատոմ, Սենեքերիմ թագավորի որդին 84, 122, 123, 142, 162, 191
Ատոմյաններ 182
Ատտալիատես, պատմիչ 49, 113, 114, 125, 138, 184, 190, 191
Արիսիդի 137
Արիստակես Լաստիվերտցի 10, 47—49, 52, 53, 55, 67, 68, 73—77, 80, 81, 89, 98, 105, 115—117, 131, 143—145, 148, 153, 156, 159, 161, 228
Արծրունի, հայոց թագավոր 138
Արծրունի Սենեքերիմ, թագավոր 99
Արծրունի թաջազուններ 123
Արծրունիների տոհմ 85, 164
Արծրունյաց թագավորներ 229
Արծրունյաց իշխանական տուն 86
Արչթոնք տոհմ 192
Արտաշիր (Արտասիրոս) 63
Արտուխ բեգ 88, 167, 170—172, 211
Արտուխյան ամիրաներ 260
Աֆշին, ամիրա 129, 130, 134, 138, 139, 143, 146

Բագարատ Վխկացի, Անիի կառավարիչ 113, 117, 192
Բագրատունիներ 20, 69, 86, 118, 229, 253
Բագարատ Դ, վրաց թագավոր 56, 63, 79, 98, 100, 103, 104, 111, 113, 135—137, 199
Բարայան Լ. 8, 15, 16, 19, 31
Բակուրան 113
Բադր ալ-Ջամալի (Գամալի), եգիպտական բանակի հայազգի գլխ. հրամանատար 139
Բաղդադի խալիֆա 75, 76, 108, 173, 219
Բար Հեբրաոս տե՛ս Աբու-լ-Ֆարաջ
Բարթիկյան Հ. 8
Բարկիյարուք 217, 219, 220
Բարսեղ կաթողիկոս 194, 206, 230, 232—234
Բարտոլդ Վ. 9
Բասվորդ Կ. 9
Բոնդարի 13, 111, 137, 149, 150
Բրեհիմ, զորագլուխ 56
Բրոսսե Վ. 9, 51, 87, 96, 98
Բուլղար տե՛ս Ահարոն Բուլղար
Բուժղուբ, Թուրք առաջնորդ 202
Բուղա 38
Բուրհան ադ-Դին Աբու Նասր 14, 89
Բուրսուխ ամիրա 174

Գաբրիել, Թորոս իշխանի անները 198
Գագիկ Ա, Բագրատունի հայոց թագավոր 100
Գագիկ Բ, Բագրատունի թագավոր, Շահնշահ 40, 61, 118, 121, 123, 142, 181, 190, 191
Գագիկ Աբբասյան, Կարսի թագավոր 67, 92, 120, 191
Գագիկ, Կախեթիայի թագավոր 136
Գանձակի ամիրա 199, 200, 270
Գանձակի Շադդադյաններ 101
Գանձի, հայ իշխան 38
Գելցեր 9, 165
Գեորգ Դրոսոս, Բյուզանդական պատվիրակ 58, 59
Գեորգի Բ, վրաց թագավոր 111, 177, 199, 200, 201, 203
Գեորգի Դ, վրաց թագավոր 14, 235
Գեորգ ռուս 236
Գթլմուշ, որդի Արսլանի 41, 45, 46, 48, 51, 57, 63, 64—67, 69, 70, 72, 90, 93, 94, 148, 159, 171, 172, 219, 240
Գյունալտայ Շ. 9
Գող Վասիլ 188
Գոմեշտեկին, ամիրա 129
Գորգլեսկի Վ. 9, 21, 25
Գրիգոր երեց 10
Գրիգոր Մագիստրոս 50, 100, 121, 181, 183
Գրիգոր Լուսավորիչ 122
Գրիգոր Բ Վկայասեր (Պահլավունի) 40, 121, 183, 189
Գրիգոր Դ Տղա, կաթողիկոս 232, 253
Գրիգոր, Սյունյաց թագավոր 101

Գրիգոր Բակուրյան 113, 117, 120, 201
Գրիգոր, Վասակա որդին 53
Գրիգոր Տուտեորդի 253
Գրիգորիս է, Հռոմի պապ 172, 173
Գրուսսե Ռ. 9, 22, 40, 67, 79, 87, 119
Գուիլամիշ տե՛ս Գիլմուշ

Դամիանոս, Անտիոքի հայ կառավարիչ 180
Դանա, Թուրքմեն առաջնորդ 39
Դանիշման ամիրաներ 198, 260
Դավատանոս 85, 192
Դավիթ Անհողին 104, 192, 236
Դավիթ, որդի Սենեքերիմ Թագավորի 35
Դավիթ մարգարե 77
Դէոժան տե՛ս Տիոժեն
Դիարբաքրի Արտուխյան ամիրաներ 220
Դիարբեքիրի Մրվանյաններ 77
Դինար տե՛ս Աբու Դինար
Դյուլորիե է. 9, 96, 119, 192
Դիոգենես, Բյուզանդական կայսր 123, 131, 132, 135, 141—150, 156—158, 160—162, 188
Դվինի ամիրա 40, 53, 62, 63, 200
Դվինի Շադդադյաններ 47, 71, 101
Դրոսոս Դ. 59
Դուկաս է, Բյուզանդիայի կայսր 85, 120, 123, 185

Եգիպտոսի Ֆաթիմյաններ 57, 60, 76, 95, 121 127, 131, 138, 172, 219
Ելտկուզ Շամադդին, աթաբեգ 222, 231, 232, 271
Երեմեան Դ. 9, 25
Երեմյան Ս. 8, 15
Եպիխտ, Անտիոքի իշխան 180, 181

Զախոդեր Բ. 9, 21
Զահիր ադ-Դին Նիշաբուրի 15
Զաքարյաններ 222, 262, 272

Էլ-Բասան տե՛ս Ալ-Բասան
Էլբուղան օղլու Կուրտղու 137
Էրդեմ, ամիրա 94

Թադեոս, Թոռնիկի թոռը 204
Թաթուլ իշխան 72
Թաջ ալ-Մուլք, վեզիր 218
Թաջ ադ-Դին Փերվանեջե 245
Թավրիզի ռավվադյաններ 66
Թարխանիատ տե՛ս Տարխանիատ
Թերքեն (Թուրխան) խաթուն, Մելիքշահի կինը 217, 218
Թեոդորա կայսրուհի 60, 65, 74, 75
Թեոդորոս Այախտակի, կաթողիկոս 193, 195, 206, 233, 234
Թեոդորոս, որդի Ահարոնի 77
Թեքիշ, Մելիքշահի եղբայրը 255
Թոռնիկ Մամիկոնյան, Սասունի իշխան 82, 83, 183, 184, 204
Թոռնիկ Արծրունի 121
Թովմա Արծրունի 179, 228
Թոտոռակ (Թոթոռիկ), Իշխանի եղբայրը 192
Թորոս (Թեոդորոս), կուրապաղատ 197, 198
Թո՛գտեքին, Թուրքմեն առաջնորդ 95
Թումանով Ս. 9, 125
Թուրան Օ. տե՛ս Օսման Թուրան
Թուքշիրմիշ, Քերեկուշի խոջայի որդին 27

Իբն ալ-Ազրակ ալ Ֆարիկի 126
Իբն ալ- Ասիր 12, 14, 40 52, 54, 89—91, 97—99, 101—104, 106—109, 111, 112, 124, 127, 145, 149, 155
Իբն ալ-Ջաուզի տե՛ս Սիբտ Իբն ալ-Ջաուզի
Իբն Կալանիսի տե՛ս Աբու Յալա Համզա Իբն ալ-Կալանիսի
Իբն Մուջահիր, ամիրա 103
Իբն ալ- Մուհալլաբան 150, 151
Իբն Դուքմաք 64
Իբն Շադդադ 63
Իբն Ռաբիբ ադ-Դաուլա, Ուրմիայի տիրակալ 90
Իբրահիմ Յաննալ 45, 48, 51, 52, 54, 55, 57, 61, 64, 67, 78, 79, 83, 90, 240

Իզզ ադ-Դին Քեյքաուս Ա, Իկոնիայի սուլթան 14, 144
Իզզ ադ-Դին Քլըջ Ասլան Բ 247
Իկոնիայի սուլթաններ 260
Իմադ ադ-Դին Իսֆահանի 13, 111, 123, 141, 145—147, 149, 151, 153, 215, 216
Իմադ ադ-Դին Անուշիրվան 91
Իմադ ադ-Դին ալ-Բոնդարի 89
Ինալ, ամիրա 214
Ինանջ Բայղուլ, ամիրա 12
Իշխան, Արջքթոնք տոհմից 192
Իսա Բորու, ամիրա 201
Իսահակ Կոմնենոս 170
Իսմայիլ, Մելիքշահի հորեղբոր որդին 219
Իսմայիլ Իբն-Յակուբ 45, 96, 231, 235, 248, 264, 270
Իսրայել (Արսլան Եարղու), Գիլմուշի հայրը 29, 37, 45, 69, 93, 174
Իսրայել, Սելջուկի որդին 29
Իսոլու, ամիրա 84, 85
Իվանե, Լիպարիտ իշխանի որդին 79, 80, 81, 136, 137, 199, 200
Իվանե Բաղվիվաշ տես Իվանե

Լաշքարի, Գանձակի Շադդադյան ամիրա 64
Լեո 7, 22, 46
Լեն-Պուլ 9
Լիպարիտ Օրբելյան, վրաց մեծ էրիսթավ 36, 49—56, 58, 59, 64, 79, 81, 136, 137, 199, 200
Լը Բո 9, 96, 160
Լիպարիտ Բաղվիվաշի 61
Լորան Ժ. 9, 87, 114, 158, 191
Լևոն Դիարատին (Դիարատան) 144, 152
Լևոն, դուքս, Դավատանոսի եղբայրը 192
Լևոն Թոռնիկոս, Տարոնի Բագրատունիներից 47, 61

Խանիկով Մ. 111
Խաչատուր Անեցի, Անտիոքի դուքս 84, 180
Խաչիկ Արշարունի, կաթողիկոս 178
Խաչիկ Խուլ, Թոռնավանի Արծրունի իշխան 39, 181
Խաչիկյան Լ. 20
Խավրիլ տե՛ս Գաբրիել
Խատաբ, հայ իշխան 147—149
Խեղենեկյան Արծրունիներ 204, 205
Խզրլ Ասլան 222
Խլաթի Շահարմեններ 219, 220
Խլիճ Ասլան Ա 220
Խորեզմշահ Տեկուշ 222
Խորիլ տե՛ս Գաբրիել
Խրիստոկուլոս Սիբտ-ալ Դաուդ 137, 138
Խրուճ տե՛ս Կորիճ ամիրա
Խուլուխ, Ուռհայի կառավարիչ 196, 197
Խուրեշ, ամիրա 141

Կահեն Կլ. տե՛ս Քահեն Քլ.
Կահոն Լ. 9, 25—27, 87
Կայմազ, Թուրքմեն առաջնորդ 136
Կանար Մ. Բյուզանդագետ, հայագետ 9, 96, 108, 109
Կարախանյաններ 163, 168, 217, 227
Կարա Ասլան 136, 260
Կարա Տեկին, ամիրա 135, 136
Կավուրդ, սելջուկ ցեղերի առաջնորդ 136, 168, 171, 240
Կարինի Սալղուխյան ամիրա, 219, 235
Կարիթ տե՛ս Լիպարիտ Օրբելյան
Կատակոլոն Կեկավմենոս (Կամենաս), Անիի և Իբերիայի կառավարիչ 47, 50, 51, 52, 83
Կավդան, ամիրա 217
Կեկելիձե 100
Կեդրենոս 62
Կեսար Դ Դուկաս 170, 171
Կիրակոս Գանձակեցի 98, 101, 105, 118, 183—185
Կյուրիկե Ա 104, 105, 111, 136, 194, 203
Կոգեոն, Փիլարտոսի հորեղբայրը, զիտնական 182
Կոմմագենացի 186

Կոստանդին Դուկաս 83, 84, 113, 121, 122
Կոստանդին Մոնոմախ 58, 62, 65, 67
Կվամ ադ-Դին 166
Կորիճ ամիրա 130, 137, 138, 142, 144
Կրզի-օղլու 9, 56
Կութբ ադ-Դին Իսրայիլ Իբն Յակուբ 207, 208, 264

Հաբել, Պաղինի իշխան 65
Հակոբյան Ս. 8, 19, 22, 118
Հակոբոս Սանահնեցի 122
Համդալլահ Ղազվինի 15, 261
Հասան իշխան, Արլզարիպի հայրը 47, 95, 181, 204
Հասան խուլ, Տուղրիլի ազգական 46
Հաքիմ, Ալ Զահիրի հայրը 58
Հեթում, կուրապաղատ Թորոսի հայրը 198
Հեչուր Կումուշտեկին 130
Հեչուր Սավ-Տեկին 135
Հերձբերգ 119
Հոմերոս 55
Հոնիգման Ե. 62, 67, 87, 96, 97, 102
Հովհաննես եպիսկոպոս 231, 232
Հովհաննես Դուկաս 170
Հովհաննես Զմշկիկ 178
Հովհաննիսյան Ա. Դ. 8, 19, 20
Հովսեփ Տրախանիոտես 145
Հովսեփյան Գ. 204
Հոռոմի պապեր 173
Հուսեյնով Ռ. 9, 12, 21
Հուցմա Մ. 14, 111

Ղազի, Արտուխ Բեգի որդին, 214
Ղազնեյաններ 29, 43, 95, 168
Ղազնեյան Մահմուդ, սուլթան 29, 37
Ղավրիլ տե՛ս Գաբրիել
Ղիաս ադ-Դին Քեյ Խոսրով 260

Ճեմճեմ ամիրա 84, 85
Ճմճմ տե՛ս Ճեմճեմ

Մահմեդ Յազիսիան, ամիրա 248
Մալիք, Իբրահիմ Յաննալի եղբայրը 67
Մահմուդ, Հալեպի ամիրա 141
Մահմուդ, Ղազնեյան տիրակալ 27
Մահմուդ, Մելիքշահի որդին 217
Մամլան, Շիրվանշահի հորեղբայրը 135
Մանդալե եղբայրներ 181, 190, 191
Մամիկոնյաններ 82, 85
Մանանդյան Հ. 7, 19, 20, 22, 52, 68, 85, 96, 97, 99, 102, 107, 119, 125, 171, 174, 226, 227
Մանսուր, Սուլեյմանի եղբայրը 174
Մանսուր, Գիլմուշի որդին 172, 211—214
Մանուել Կոմնենոս, կուրապաղատ 137, 138
Մանուչե 119, 202, 235
Մառ Ն. 9, 20, 29
Մասլամա Իբն Աբդ ալ-Մալիք 59
Մասուդի, Ղազնեյան սուլթան 13, 222, 248
Մատթեոս Ուռհայեցի 10, 22, 36, 37, 40, 46, 49, 52—56, 73, 74, 76, 81, 82, 86, 87, 89, 105, 106, 109, 113, 117, 118, 120, 130, 131, 135, 137, 140—142, 144, 146, 147, 149, 151, 157, 161, 163, 177, 183, 184, 194, 195, 196, 198, 202, 206, 228, 230, 231, 233, 235
Մարիամ թագուհի, Արծրունյաց Սենեքերիմ թագավորի դուստրը 99
Մարի, Ամանդավի ամրոցի տերը 143
Մարկվարտ 9, 85, 96, 97, 99, 102, 107
Մաուլանա ալ-Սուլթան ալ-Մաուզզամ Շահնշահ Մալիք Իբն Ալփ Արսլան 202
Մելիք, սուլթան 204
Մելիք Խաթուն, Մելիքշահի դուստրը 216
Մելիք Տեկիշ, Մելիքշահի եղբայրը 215
Մելիքսեթ-Բեկ 100
Մելիք, Մուհամմադ Տափարի որդին 271
Մելեսիանոս, զորավար 174
Մելիքշահ 86, 88, 91, 92, 95—101, 103, 112, 115, 148, 149, 158, 166—168, 171—175, 196—207, 209, 211—217, 219, 220, 224—226, 230, 233, 234, 239—241, 245, 247—249, 255—257, 259—263, 265, 268, 270, 271

Միքայել Աքոթիթել 70
Միքայել Ատտալիատես տե՛ս Ատտալիատես
Միքայել Ասիտ, Անիի կառավարիչ 61
Միքայել Ասորի 84, 89, 112, 118, 123, 127, 143, 148, 176, 179, 183—186, 190, 196
Միքայել, որդի Սելջուկի 29
Միքայել Չամչյան 6, 7
Միքայելյան Գ. 8, 197
Միհերսկի Վ. 62—64, 96
Միրխոնդ 12
Միքայել Է. Դուկաս 159—162, 168, 170, 172—174, 176, 180, 191
Միքայել Վուրցես, Անտիոքի հայազգի կառավարիչ 180
Մխիթար Գոշ 235
Մխիթար Այրիվանեցի 10, 184, 185
Մոնոմախ, Բյուզանդիայի կայսր 41, 42, 54, 55, 58, 60, 62, 70, 75
Մովսիսյան Ղ. 8,
Մորգան Ժ. 9
Մրվանյաններ 78, 209—211
Մրվանյան ամիրա տե՛ս Նիզամ ալ-Դաուլա Նասր
Մրվանյան ընտանիք 213
Մուկդադի, Աբբասյան խալիֆա 216
Մուհամմադ Տափար 219, 220, 231, 248, 249, 270, 271
Մուհամմադ Իբն-Դլմաջ 212—214
Մահմուդ, Մուհամմադ Տափարի որդին 220—222
Մուշեղ (Մամիկոնյան) 82, 183
Մուսլիմ 210, 211

Յարդու, ամիրա տե՛ս Ալ-Բասան
Յակուբովսկի Ա. 9
Յակուբ, Տուղրիլի հրամանատարներից 77, 79
Յաղմուր 38
Յբնանջ Մ., թուրք պատմաբան 9, 87, 89, 94, 96, 100, 186, 262
Յովհաննէս, թագավոր 118
Յուզբաշյան Կ. 8
Յունուս, որդի Սելջուկի 136
Յունուս, Ալ-Բասանի հայրը 93
Յուսուֆ Հարիզմի 163

Նաթանելյաններ 182
Նասր ադ-Դաուլա, Մանսուր Մրվանյան ամիրա 39, 58, 71, 77, 78, 90, 208, 209, 211
Նասր ադ-Դաուլա Համադանի 139
Նասր ադ-Դին Թուսի 259
Նասիրի խոսրով, պարսիկ մատենագիր 208
Ներսես Շնորհալի 195
Նիզամ ալ-Դաուլա Նասր, ամիրա 78, 85, 208, 209
Նիզամ ադ-Դին, Մրվանյան ամիրա 140, 146
Նիզամ ալ-Մուլք 15, 17, 95—101, 105, 111, 112, 129, 130, 136, 140, 141, 148, 156, 166—168, 171, 209, 210, 214, 215, 217, 226, 240—243, 253, 257—259, 262, 265, 267, 269, 270
Նիկեփոր Վրենիոս 79, 125, 138, 145, 149, 155
Նիկեփոր Վոտանիատես, զորավար 174
Նիկիտա Խոնիատ, պատմիչ 33
Նիկեփոր Ներքինի 61—64, 70
Նոյ 25
Նովոսելցև Ա. 9

Շարո 112
Շադդադյաններ 61, 62, 101, 108, 235, 237
Շադի, մամլուք 156
Շահարմաններ 232, 236, 259
Շայխ ալ-Իսլամ Աբու-Աբդալլահ Իբն Մրվան 58
Շարաֆ ադ-Դաուլա Մուսլիմ, արաբ ամիրա 209
Շարաֆ ադ-Դին Աբու Նասր Անուշիրվան Իբն-Խալիդ Քաշանի 13
Շեմս ալ-Խաղիմի 110
Շերիֆ Նասր Իբն Իսմայիլ 59
Շենգելիա Ն. 9, 12

Շիրվանի մելիք 263
Շիրվանշահ 135, 136
Շլյումբերժեր 9, 40, 52, 63, 87
Շոկլի, ամիրա 172

Չակիր բեգ, եղբայր Տուղրիլի 29, 36, 37, 43, 45, 90, 91, 93, 262
Չորդուանել, Լիպարիտի քրոջ որդին 51, 53
Չորտվանել, Տայքի իշխան 82
Չորտուանել Բ Մամիկոնյան 184
Չուրուք, խարբերդի ամիրա 198, 211, 213

Պահլավունի Գրիգոր իշխան 235
Պահլավունիների իշխանական տներ 82, 85
Պաղտին, խաչակիր իշխան 197
Պանկրատիոս, Անիի հայ կառավարիչ 113, 114
Պանկուրաս, հայ զորավար 84
Պառակամանոս 196
Պարսամա, իշխան 196
Պեխտ (Նպիխտ) Շիրվանի հայ զորական, իշխան 180, 181
Պետրոս Գետադարձ, կաթողիկոս 189
Պետրոս կատապան 65
Պետրուշևսկի Ի. 9, 15, 21
ՊոլՀտահՃի, Թուրք ամիրա 193, 196
Պողի, Թուրքմեն առաջնորդ 40
Պողոս, Վարագա Ս. Նշան վանքի վանահայր 193, 196
Պողոսյան Ս. 8, 19, 22
Պուլան, ամիրա 196, 197, 207, 208, 213
Պուկի, Թուրքմեն առաջնորդ 40

Ջալալ ալ-Դաուլա Իբն-Բուվայհ 90, 91
Ջավախիշվիլի Ի. 9, 200
Ջաուզի տե՛ս Սիբտ Իբն ալ-Ջաուզի
Ջեվհեր-Ային 213, 216

Ռաղիա Ամիր ալ-Մումին 96
Ռայս Ի. 9
Ռաշիդ ադ-Դին 14
Ռավենդի 15, 257, 261
Ռմբաղատ, ֆրանկների կոմս 183
Ռուբինյաններ 185, 193, 198
Ռոմանոս Դ. Դիոգենես, կայսր 123, 127, 131, 133, 134, 139, 145, 168, 186

Սաբուկ, Թուրքմեն ամիրա 79
Սադր ադ-Դին ալ-Հուսայնի 14, 89, 99—102, 109, 127, 146, 150—152, 154, 161, 241
Սաիդ, Նիզամ ալ Դաուլայի եղբայրը 78, 140
Սալար Խորասան, ամիրա 84, 129, 130, 140
Սամանիներ 227
Սամուել Անեցի 10, 36, 76, 105, 106, 118, 119, 181, 184, 230, 231
Սանդուք (Սանտուկ), ամիրա 139, 148—150, 209, 211, 212—214
Սամուկ տե՛ս Սանդուք
Սասունի Մամիկոնյան-Թոռնիկյաններ 164
Սավտեքին Սրահանդ 121, 136, 137, 148, 151, 200, 201, 205, 207, 236, 248, 264
Սևտեքին տե՛ս Սավտեքին Սրահանդ
Սարաջ ադ-Դին 246
Սարգիս, Վասակ իշխանի եղբայրը 235
Սարգիս, Պետրոս Գետադարձի քրոջ որդին 189
Սելջուկ 27—29, 37, 136
Սեն Մարտեն 9, 102, 106, 119
Սենեքերիմ, Վասպուրականի թագավոր 35, 36, 84, 121, 122, 162, 191, 203, 204
Սեվիմ Ա., Թուրք պատմաբան 9
Սիբտ Իբն-ալ Ջաուզի, Դաուզի 108, 111, 126, 132, 137, 152, 155, 162, 258
Սիլվեստր Բ 173
Սինջար, սուլթան, Մուհամմադ Տափարի եղբայրը 221, 243, 246
Սկիլիցա, պատմիչ 49, 50—52, 63, 112, 114, 125, 147, 149, 156, 158, 184, 186, 187
Սմբատ Սպարապետ 10, 76, 83, 84, 89, 105, 118, 137, 184, 198, 232
Սմբատ Տիեզերակալ 109
Սմբատ, Ուռհայի դուքս, Բագարատ Վխկացու որդին 113, 192
Ստեփանոս, Աղվանից կաթողիկոս 194, 208, 215
Ստեփաննոս եպիսկոպոս 231
Ստեփանոս Լիխուդես 40
Ստեփանոս Տարոնեցի 178
Ստեփանոս Օրբելյան 10, 50, 101, 105, 118, 203, 229, 233
Սուլթան ալ-Ազամ Մելիքշահ տե՛ս Մելիքշահ
Սուլայման (Սուլեյման) 93, 96, 148, 159, 171, 172—175, 192, 193, 196, 197, 210, 215, 217, 219
Սումեր Ֆ. 9, 60, 61, 87—89
Սուքման Կութբի 214
Սուքման Իբն-Արտուկ 248
Սուքմանյան Շահարմեն ամիրաներ 220

Վախամիոս տե՛ս Փիլարտոս
Վահրամ Պահլավունի 61, 99, 100, 121, 195
Վահրամյան տոհմ 136
Վահսուդան Իբն-Մամլան, ամիրա 37—39
Վասակ Պահլավունի 36, 40, 181, 189, 235
Վասիլ Բ, Բյուզանդիայի կայսր 36
Վասիլ, հայ իշխան 73, 185, 192
Վասիլ Բուլղար 141
Վասիլակ, հայ իշխան 147, 148, 149, 156
Վարազ Բագուր-Դամբեգելի, էրիստավ 104
Վարդան Արևելցի (Բարձրբերդցի) 10, 36, 55, 56, 105, 106, 118, 163, 207, 235
Վարդան Վարդապետ տե՛ս Վարդան Արևելցի
Վարդանյան Վ. 8, 36
Վարուժան Վարաժնունի 182
Վոտանիատես, կայսր 181, 190, 191
Վրաց ժամանակագիր 89, 98, 176
Վրիենոս 137, 147

Տավատանոս տե՛ս Դավատանոս
Տարխանիատ 144, 145, 148, 149
Տեր Բարսեղ տե՛ս Բարսեղ կաթողիկոս
Տեր-Ղևոնդյան Ա. 8, 22
Տեր Թեոդորոս տե՛ս Թեոդորոս կաթողիկոս
Տեր Գրիգորիս 195
Տեր Պողոս 195
Տեր Ստեփանոս տե՛ս Ստեփանոս կաթողիկոս
Տեքիշ, Մելիքշահի եղբայրը 168
Տիոժեն (Տիոժէ) թագավոր տե՛ս Դիոգենես
Տուկիժ տե՛ս Կոստանդին Դուկաս
Տուղրիլ բեգ, սուլթան 12, 29, 30, 36, 37, 40—48, 52, 54—62, 65—67, 69—79, 83—85, 88, 90—94, 96, 118, 120, 130—132, 137, 140, 167, 174, 208, 209, 239, 240, 260, 262, 266, 269
Տուղրիլ Ա 222
Տուղրիլ Բ 248
Տուտակ, Թուրքմ. ցեղի առաջնորդ 171
Տուկակ, Սելջուկի հայրը 27, 28
Տուտուշ, Մելիքշահի եղբայրը 197, 209, 214, 219
Տուրնեբիզ Ֆ. 9

Ուզունչարշըլը Ի. 9, 270
Ուրսել (Ռուսել) 145, 148, 149, 170, 171, 183

Փահլևան, Ելտկուզ աթաբեգի եղբայրը 222
Փատլուն ամիրա 63, 119, 136, 137, 199, 207, 208, 235
Փիլարտոս (Ֆիլարտոս) Վարաժնունի 134, 166, 175, 182—189, 190—198, 206, 233, 234

Քահեն Քլ. 9, 96, 125
Քամալ ադ-Դին Իբն ալ-Ադիմ 126, 132
Քամիլ Աբու-լ-Ֆավարիզի 108

457—19

Քասունի Ն. 8, 182, 187
Քաֆեսօղլու Ի. 9, 87, 89, 96, 100
Քերկուշի խոջա 27
Քիրմանի Մելիք Կավուղի (Կարա Արսլան) 167
Քիրվաշ, Մոսուլի ամիրա 90
Քյոյմեն Մ. 9
Քյոպրյուլյու Ֆ. 9, 14
Քուփլումուշ տե՛ս Գթլմուշ
Քուրդ, Վասակ իշխանի եղբայրը 235

Օշին, իշխան 129, 181, 182, 188, 193
Օմայաններ 59
Օսման, Նիզամ ալ-Մուլքի որդին 227
Օսման Թուրան 9, 17, 25, 60, 67, 87, 89, 96, 159

Ֆաթիմյաններ 60, 132
Ֆաթիմյան խալիֆա 58
Ֆախր ալ Դաուլա 209—213
Ֆախր ալ-Մուլք Իբանշ (Մուսա) Յարղու, Ալփարսլանի մեծ հորեղբայրը 94
Ֆարուք Սումեր տե՛ս Սումեր Ֆ.
Ֆատհ ալ-Բոնդարի տե՛ս Ալ-Բոնդարի
Ֆիլարետոս Վախամիոս տե՛ս Փիլարետոս Վարաժնունի
Ֆիլարետոս տե՛ս Փիլարետոս Վարաժնունի
Ֆրանկոպոլ (Հերվե), նորմանդացի զորավար 85

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա՛ալլալ տե՛ս Ախալքալաք
Աբխազիա 111, 145, 199, 201
Աբբասյան խալիֆայություն 57, 60, 88, 131, 227
Ագարակ, գյուղ 232
Ագիա Մարիա 98
Ադեն 216
Ադանա 24
Ադրբեջան 12, 15
Ալ Արաս տե՛ս Արաքս գետ
Ալ Թ. Բ. Ս. տե՛ս Արաքս գետ
Ալախ տե՛ս Ախալքալաք
Ալեղուա, գաշտ 183
Ալպսթան, բերդ 185, 188
Ախլաթ տե՛ս Խլաթ
Ալամութ, բերդ 163
Ախալքալաք 14, 102—104, 106, 118
Ախուրյան գետ 106—108
Ախուրյանի ակ 106
Ակշեհիր 260
Աղաքլար տե՛ս Ախալքալաք
Աղաքքալ տե՛ս Ախալքալաք
Աղթամար 85, 164
Աղթամար, կղզի 121, 204
Աղձնիք 78
Աղորի գավառ 79
Աղստև գետ 199
Աղվանք 104, 106, 176, 194, 200, 205, 215, 219—221, 222, 268, 270
Ամասիա, քաղ. 120
Ամբերդ 14, 61, 98
Ամիդ, քաղ. 77, 78, 85, 140, 209, 214, 239
Ամյուկ, ամրոց 85, 121, 164, 204
Ամորի, քաղ. 134
Անապատ, բերդ 231, 232
Անդրկովկաս 10, 13, 14, 31, 41, 45, 46, 65, 66, 78, 95, 125, 135, 137, 168, 176, 198, 200, 203, 207, 214, 221, 226
Անատոլիա 88
Անատոլու (Փոքր Ասիա) 159
Անդրիոն 180
Անի, քաղ. 14, 40, 46, 47, 52, 61, 69, 70, 77, 79, 80, 86, 89, 96, 97, 99, 100, 105—109, 111—115, 117—119, 121, 124, 130, 134, 179, 181, 192, 194, 195, 202, 206, 220, 222, 224, 235
Անիի Բագրատունիների կենտրոնական թագավորություն 34, 41, 61, 71, 103
Անի-Իբերիա բանակաթեմ 42, 45
Անիի կատապանություն 41, 42
Անի-Շիրակի նահանգ 229
Անկարա 170, 260
Անձիտ, գավառ 72, 81, 82, 183
Անտիոք 84, 128, 129, 132, 133, 142, 159, 178, 180, 181, 188—190, 193, 196, 197, 202, 210, 215
Աշմուշատ (Շիմշատ) քաղ. 183, 184
Ապահունյաց գավառ 73
Աջարիա 177
Առան 38, 39, 45, 78, 95, 119, 136, 175, 176, 200, 208, 236, 245, 248, 256, 264
Առանի հովիտ 135, 201
Առաջավոր Ասիա 5, 214, 224, 226
Առաջին Հայք 81
Առյուծաթիլ 140
Ասորիք 30, 49, 58, 64, 90, 121, 126,

128, 131, 132, 138, 139, 147, 165, 169, 172, 173, 175, 178, 179, 187, 194, 197, 200, 202, 212, 215, 219, 221, 224, 226, 258
Արաբական ամիրայություն 64
Արաբական խալիֆայություն 24
Արաբիստան 70
Արաբական Իրաք 221
Արարատյան դաշտ 18
Արարատյան երկիր 253
Արարատյան նահանգ 40
Արածանի, գետ 184
Արարատյան լեռներ 176
Արաքս, գետ 40, 45, 46, 88, 97, 107, 108, 112, 120, 230, 236
Արդան առ Ռում 248
Արզն (Արզեն) 145, 214
Արզնի 64, 84
Արծն, քաղ. 41, 49, 54, 64, 73, 83, 130
Արծկե 73, 89
Արծրունյաց թագավորություն 179
Արդահան, բերդ 200
Արճեշ, բերդ 200
Արճեշ 40, 73, 74, 89, 121, 140—142, 213
Արմենիակոն բանակաթեմ 137
Արմինիա, վիլայեթ 261
Արշարունեաց յամուրս 48
Արչովիտ 50, 53
Արվանդանոս, գավառ 129
Արտահան, ամրոց 133
Արտանուջ 201
Արտուխյան սելջուկյան ամիրայություն 171, 214
Ատրպատական 30, 32, 34, 37—40, 45, 46, 48, 64—66, 71, 72, 76, 78, 84, 85, 90, 95—97, 128, 135, 136, 143, 163, 164, 169, 170, 175, 176, 199, 200, 202, 204, 205, 207, 219—222, 231, 245, 248, 256, 258, 264, 268, 270
Ատրպատականի ամիրայություն 35
Արցախ 18, 41, 164, 204, 229, 256, 260, 265
Արցախի իշխանություն 35, 204
Արփաչայ տե՛ս Ախուրյան գետ
Ափխազաց յամուրն 73
Արևելից կողմանց (Աղվանից) հայրապետական առաքելական աթոռ 195
Արևմտյան Թուրքիստան 27
Արևմտյան Ասիա 24
Արևմտյան Հայաստան 176, 260, 261
Արևմտյան Միջագետք 121
Աֆղանստան 267

Բարելովն 74
Բագրատունիների կենտրոնական թագավորություն 35, 41
Բագրատունյաց թագավորություն 71
Բագրևանդ, բերդ 18
Բալզամ, բերդ 163
Բալկաններ 115, 128
Բալկանյան թերակղզի 24, 56, 57, 174, 176, 177
Բաղաց (Կապանի) Սյունյաց թագավորություն 203
Բաղաց տուն 204
Բաղդադ 30, 45, 57, 65, 66, 75, 76, 131, 132, 150, 152, 153, 174, 175, 196, 208, 213, 214, 216, 218, 266
Բաղդադի խալիֆայություն 25, 58, 60, 76, 209, 214
Բաղեշ 145, 175, 208—210, 213, 214
Բասեն, գավառ 47, 228, 236
Բասենի դաշտ 50
Բասենի հովիտ 79
Բասենի շրջան 243
Բարձր Հայք 34, 79
Բելխ 95, 96
Բերկրի 38, 73, 74, 89, 213
Բերկրի, ամրոց 88
Բլուր, ավան 81, 89
Բյուզանդիա 33, 34, 36, 37, 41, 47, 48, 52, 56, 58, 60—62, 64, 66, 74—76, 79, 83, 86, 87, 95, 96, 112, 120—123, 126—128, 130—135, 141, 142, 150, 151, 158, 160, 161, 163—165, 168—175, 177, 179, 180, 182, 183, 187—189, 191, 192, 194, 198, 199, 210, 216, 228, 229, 241, 271
Բյուզանդական կայսրություն 22, 35, 41, 49, 54, 57, 61, 71, 75, 76, 79, 83, 86—88, 103, 114, 121, 124, 125, 127, 128, 130, 131, 142, 146, 163, 164, 169, 174, 179, 182, 188, 191, 193, 260
Բյուզանդիայի արևելյան դարբասներ 42
Բջնի 14, 36, 37, 40, 98
Բուիդների երկրներ 76
Բուլղարիա 142
Բուխարա 28, 37

Գագարերդ 199
Գամիրք 142
Գանձակ 63—65, 70, 71, 77, 101, 119, 135—137, 181, 183, 200, 204, 205, 207, 215, 219, 220, 248, 256, 264, 270, 271
Գանձակի Շադդադյան ամիրայություն 46, 61, 65, 66, 207, 219
Գանձակի Շադդադյանների երկիր 38
Գանլիճա (Գալիճա) 99, 100
Գաչենք (Գաչինա) 225
Գավարգին, ամրոց տե՛ս Քավարդ
Գեղարքունիք 236
Գիրդ-գուհ (Գիրդիգուկ), բերդ 93, 94
Գլակա վանք 82
Գոթերի երկիր 142
Գուգարք 41, 98, 203
Գուգարքի Կյուրիկյան հայկական թագավորություն 199

Դամասկոս 126, 175, 209
Դայլամցիների (Դելմիկներ) բանակ 36
Դանդանականի ճակատամարտ 29, 43, 95, 262
Դանուբ (Եվրոպա) 28
Դաշտային Կիլիկիա 197
Դելմիկների երկիր 89, 91
Դերբենդ 63, 135, 137
Դերբենդի Շիրվանշահերի ամիրայություն 46
Դիարբեքիր (Դիարբաքր) 39, 58, 71, 77, 78, 84, 129, 140, 214, 268
Դիարբեքիրի Մրվանյան ամիրայություն 90, 208, 210
Դ. Ս. Լ. Վարդա, գավառ 106
Դ. Ս. Լ. 107
Դվին, քաղ. 36, 40, 41, 46, 47, 62, 77, 89, 237
Դվինի պարիսպներ 46
Դվինի Շադդադյան ամիրայություն 61, 66, 71
Դուկ, գավառ (Բյուզանդիա) 29
Դուկիա, ամրոց 161

Եգիպտոս 77, 128, 132, 133, 142, 195, 216, 224, 226
Եգիպտոսի հայրապետական աթոռ 185
Եդեսիա 84, 85, 129, 132, 140, 141, 159, 171, 188, 192, 197, 198
Ելտկուզյան ամիրայություն 222
Եկեղյաց գավառ 72, 79
Եկեղիք տե՛ս Եկեղյաց գավառ
Եղանց տե՛ս Եղնուտ
Եղնուտ, բերդ 79, 80
Եմեն 216, 262
Երասխ, գետ տե՛ս Արաքս
Երզնկա 175, 225
Երզնկայի շրջան 244
Երզնկայի սարահարթ 79
Երիզա, ավան 79, 81, 89
Երուսաղեմ 173
Եվրոպա 11, 173
Եփրատ գետ 82, 132, 143, 144, 173, 185
Եփրատացւոց աշխարհ 187

Զաքարյան իշխանություն 272
Զաքարյանների տիրապետություն 226
Զմյուռնիայի ծովածոց 171
Զորվրի-Կոզեան, վանք 182
Զուհրա (Ալ Զահրա) տե՛ս Տոդատափ

Էրզրում 143, 159, 248
Էրմենիե տե՛ս Արմինիա

Թավրիզ 38, 70
Թեոդուպոլիս տե՛ս Կարին
Թիլ, ավան 79
Թլթովրավ, բերդ 140
Թլխում 84
Թլմուխ, գավառ 129, 140
Թոռնավան 39
Թրակիա 24
Թուս, նահանգ 95, 168
Թուրքեստան 23, 28, 29, 37, 45, 47, 77, 121, 127, 163, 176, 258

Իբերիա 42, 47, 67, 70, 177
Իբերիայի կատապանություն 41
Իկոնիա 14, 134, 162, 220, 245, 255, 260, 268
Իկոնիայի սուլթանության տիրույթներ 236
Իկոնիայի սելջուկյան սուլթանություն 171, 219, 221—223, 247, 259, 261
Իորի, գետ 225
Իսպահան 262, 265
Իրան 26, 27, 30, 31, 34, 35, 37, 43, 44—46, 65, 66, 94, 127—129, 136, 142—144, 152, 169, 175, 176, 210, 228, 251, 255, 258, 263
Իրանի ամիրայություն 35
Իրաք 14, 30, 31, 38—40, 65, 66, 69, 111, 128, 211, 212, 221, 222, 251, 258, 259
Իրաքի սելջուկյան սուլթանություն 30, 221, 222

Լալ, բերդաքաղաք 102
Լամբրոն, բերդ 182
Լարիսա (Լառիսա) 36, 120
Լեռնային Կիլիկիա 198
Լոռի (Լոռէ, Լօռէ) 97, 104, 106, 111
Լոռվա կյուրիկյան թագավորություն 164, 256
Լուբա 106

Խաղաբաց (Կասպից) ծով 45
Խաղտյաց գավառ 48, 70, 72, 80, 228
Խաչեն 62
Խաչենի իշխանության տիրույթներ 204, 235
Խավատանեք, բերդ 84, 120
Խարբերդ, քաղ. 184, 188, 211
Խեդենեկյան Արծրունիների իշխանություն 204, 205, 265
Խեդենեկյան Արծրունիների տիրույթներ 35, 235
Խլաթ 24, 134, 140, 142, 143, 145—147, 149, 159, 163, 175, 186, 208—210, 213, 214, 220, 225, 244, 245, 248, 255, 260, 261
Խոխանաբերդ 204
Խոյ 48
Խորասան 27, 36, 37, 43, 46, 48, 50, 54, 56, 69—72, 76, 89, 91, 93, 110, 111, 175, 196, 200, 212, 215, 220, 266
Խորասանի մեծ սուլթանություն 30
Խորեզմ 258
Խորձյան գավառ 72, 81
Խրամ գետ 118
Խրիստոպոլիս 173
Խուժաստան 142
Խուվայ (Խոյ), բնակավայր 145

Ծամնդավ 120, 121, 143
Ծիծեռնակաբերդ (Երևանի մոտ) 61

Կազբիական ծով 202
Կազվին 93
Կախեթ (Կախեթիա) 136, 137
Ս. Կաթողիկե եկեղեցի 109
Կալիկալա տե՛ս Թեոդուպոլիս
Կաղզվան 98
Կանկարնի տե՛ս Գուգարք
Կապադովկիա 76, 86, 128, 133, 134, 139, 155, 164—166, 169, 170, 172, 175, 177—179, 181, 182, 186, 187, 205, 206
Կապուտռու, բերդ 41, 50—53
Կապուտռուի ճակատամարտ 50, 52, 55, 59, 61, 62, 64
Կասպից ծով 23, 202

Կաստրոկոմիոն, ամրոց 52
Կարագաու, նախալեռնային շրջան 28
Կարին 24, 48, 49, 54, 72, 80, 85, 89, 143, 147, 159, 161, 175, 201, 219, 225, 228, 235, 236, 244, 248
Կարինի շրջան 243, 244
Կարմիր ծով 5
Կարմիր Փորա, լեռ 236
Կարնո կողմ 253
Կարս 66—69, 72, 79, 89, 92, 98, 106, 118, 120, 121, 123, 130, 134, 143, 175, 177, 191, 200, 201
Կարսի գավառ 14, 18, 72
Կարսի Բագրատունյաց թագավորություն 67, 120, 179
Կարսի շայ 106
Կենտրոնական Ասիա 23, 25
Կեսարիա 120, 123, 129, 170
Կիղիստրա, բերդ 181, 191
Կիլիկիա 76, 86, 120, 129, 139, 142, 164—166, 170, 175, 177, 178, 181, 182, 186—190, 193, 194, 196, 198, 205, 206, 226
Կիլիկյան Հայաստան 194
Կիլիկյան Հայկական պետություն 260
Կիլիկյան Հայկական թագավորություն 182
Կիլիկյան հայկական իշխանություն 186
Կիլիկյան Տավրոս 120
Կիլիկեա տե՛ս Կիլիկիա
Կղարջէթ տե՛ս Կղարջք
Կղարջք, բերդ 98, 200, 201
Կյուրիկյան թագավորություն տե՛ս Տաշիր-Զորագետի Կյուրիկյան հայկական թագավորություն
Կոյոնիա (Կոզոնիա) քաղ. 81, 158
Կոմանա 120
Կոնիա 220
Կոլկաս, լեռ 73, 262
Կոմսական գավառ 101, 204
Կ. Պոլիս 47, 48, 54, 55, 59, 60, 61, 63, 65, 67, 82—84, 87, 111, 122, 123, 133, 135, 138, 139, 144, 148, 160, 170, 172, 175, 190, 191, 193. 195, 210, 215
Կոստանդնուպոլիս տե՛ս Կ. Պոլիս
Կվելիսցիխե 98
Կուր գետ 135, 176, 225

Հաթերք 204
Հալեպ 126, 132, 133, 141, 142, 175, 180, 193, 197, 202, 209, 210, 212, 215
Հալիս, գետ 170
Համա բերդ 163
Համադան 37, 38, 45, 46, 137, 152, 163, 177
Հայաստան 5—7, 9, 10, 12, 14—16, 18, 20, 22, 25, 30—32, 34, 36, 37, 41, 42, 45, 48, 56, 57, 62, 63, 65, 66, 69, 71—73, 76, 79—81, 83—89, 91, 92, 94—96, 98, 101, 106, 108, 112, 115, 119, 124, 125, 128, 130, 133, 136, 137, 139—144, 147, 150, 152, 159, 160, 164, 165, 170, 175, 177—179, 185, 187, 188, 197, 199—205, 207, 208, 215, 219—224, 226—228, 230—232, 234, 235, 240, 241, 244, 245, 248, 256, 259, 260, 262, 265, 268, 270, 271, 272
Հայկական լեռնաշխարհ 41, 43, 85, 121, 129, 175, 256, 272
Հայաստանի ամիրայություններ 253
Հայոց աշխարհ 74, 76, 105
Հայոց Արևելից կողմ 104
Հայոց Միջագետք 84
Հայոց (Սոմխեթի) Արարատյան լեռներ 225
Հայք (Սոմխեթ) 225
Հաշտենից (Հաշտյանք) գավառ 48, 228
Հավճիլ ամրոց 79
Հարավային Հայաստան 37, 38
Հարավային Սիբիր 25
Հարավային Ռուսաստան 224, 226
Հարպ, նահանգ 214
Հարանմանսուր, քաղ. 188

Հարսնմասուր (Հիսնմանասուր, Հասնմանասուր, Ադըյաման) բերդ 188
Հարսնամսիր (Հիսն Մանասուր) գավառ 129
Հեթումյան թագավորություն 182
Հեթումյան իշխանություն 182
Հեռավոր կղզիներ 142
Հիերոպոլիս 132
Հին Գոգարան 98
Հյուսիսային Ասիա 26
Հյուսիսային Աֆրիկա 44, 216
Հյուսիսային Իրան 95
Հյուսիսային (Զաքարյան) Հայաստան 247, 262
Հնդկաստան 27, 49, 109
Հնդկական օվկիանոս 262
Հոնի, քաղ. 189, 193, 195, 206, 233, 234
Հոռոմ 112, 195
Հոռոմոց աշխարհ 178, 202
Հոռոմների սահմանները 32
Հոռոմական կայսրություն 172
Հոռոմկլա, բերդ 188
Հոռոմկլայի կաթողիկոսարան 232
Հրազդան գետ 40
Հրասեկայ բերդն 231
Հույների պետություն 177

Ջորագետ 136, 203

Ղազախի գավառ 199
Ղազնեյան պետություն 27, 37, 43
Ղանուխ 236
Ղվելիս-Ղուր 98

Ճաներո Խրթի անտառ 73, 80
Ճապղ-ջուր (Ճապաղջուր) 183
Ճենտ 28, 29
Ճորոխ գետ 201
Ճորոխի հովիտ 81

Մազանդարան 246
Մալաթիա 129, 159
Մայրեաց ջուրք 181
Մայաֆարդին 78, 140, 144, 145, 184, 209, 213
Մամեստիա, քաղ. 181
Մանանաղ, գավառ 48, 81
Մանազկերտ 14, 24, 34, 41, 54, 72—75, 88, 89, 122—127, 130, 131, 133, 140—142, 145—150, 155, 159, 160, 162—165, 167—170, 172, 175, 180, 187, 208, 209, 211, 213, 224, 248, 256
Մանազկերտի շրջան 248
Մանազկերտի ճակատամարտ 123—125, 130, 131, 138, 164, 175, 187
Մանծկերտ տե՛ս Մանազկերտ
Մավերաննահրի կարախանյան թուրքական պետություն 29
Մավերաննահր 26, 37
Մարանդ, քաղ. 95
Մարաշ 24, 178, 186, 187, 189, 193, 195, 197
Մարաշ, բերդ 192
Մարիամ Նիշին 97, 99, 100—102, 112
Մարին, քաղ. 69, 70
Մարմաշեն 99, 100
Մարիամաշեն տե՛ս Մարմաշեն
Մարմարայի ափերը 174, 193
Մարտիրոպոլիս տե՛ս Մայաֆարկին
Մելիտենե 24, 68, 81, 82, 129, 148, 159, 162, 188, 189, 198
Մլտենի տե՛ս Մելիտենե
Մեծ Զավ (Զաբ), գետ 47
Մեծ Հայք 228, 232, 247, 249
Մեմբիջ (Մամբիճ) 132—134, 141, 142, 159, 178
Մեսխեթի 98
Մերձավոր Արևելք 5, 6, 10, 11, 24, 25, 29—32, 44, 57, 66, 71, 76, 95, 127, 173, 177, 194, 206, 214, 240, 262, 272
Մերձավորարևելյան մահմեդական երկրներ 251
Մերվ, նահանգ 217
Մերվ, քաղ. 93, 221, 265
Միյաֆարկին տե՛ս Մայաֆարկին
Միջագետք 34, 37, 41, 64, 76, 88, 90, 121, 132, 169, 171, 187, 200, 207, 209—211, 221, 226
Միջագետքյան արշավանք 61
Միջերկրական ծով 202, 210, 215, 216, 262
Միջերկրականի ափեր 5
Միջին Ասիա 20, 21, 23, 24, 27, 29, 35, 172, 276
Միջին Արևելք 15, 20, 24, 29, 30, 32, 44, 57, 66
Մնձեպր տե՛ս Մեմբիջ
Մոկք 85, 205
Մրվանյան ամիրայություն 166, 209, 210, 214
Մրվանյանների տիրապետություն 236
Մուհարկին տե՛ս Մայաֆարկին
Մուշ 211, 213
Մուսա լեռան շրջան 202
Մուսուլ 39, 77, 90, 144, 209, 210—212, 220
Մուփարկին տե՛ս Մայաֆարկին
Մուֆարդին տե՛ս Մայաֆարկին

Նախիդուր 236
Նախիջևան 97, 99, 112
Նախճավան 36, 41, 95, 106
Ներքի բերդ 116
Նիկիա (Իզնիկ), քաղ. 172, 292
Նիկիայի Ռոմի սուլթանություն 215
Նիկոմեդիա 171
Նիշաբուր (Նիշապուր) 91, 94, 265, 266
Նյուական գավառ 95
Նորագյուղ տե՛ս Նորաշեն
Նորաշեն 107
Նոր գյուղ տե՛ս Նորաշեն
Նոր քաղաք տե՛ս Ախալքալաք
Նուրայի շրջան 28
Նուրա գավառ 106
Նփրկերտ 77, 78, 175, 208—210, 212—214, 219, 220, 268

Շադդադյան ամիրայություն 62, 200, 249
Շադդադյանների տիրապետություն 200
Շամշույդե (Շամշվիլդե), քաղ. 104, 112, 200, 236
Շավշեթ 177, 200
Շաքի 136
Շաքիի հովիտ 135
Շիրվան 135, 175, 200, 207, 231, 245
Շիրակ 20, 41, 97, 194
Շնձոր տե՛ս Պաղակացիի (Պալակացիոս) երկիր

Ռատան 213
Ռվկիանոս ծով 177, 202

Չալդիր գյոլ 106
Չինաստան 23, 26, 262
Չորրորդ Հայք 82, 84

Պաղակացիի (Պալակացիոսի) երկիր 236
Պաղեստին 121, 131, 132, 138, 139, 219, 224
Պաղին, գավառ 65, 84
Պաղինի հայ իշխանություն 64
Պարխար, լեռ 73
Պարսից աշխարհ 82, 196
Պարսից տուն 48
Պարսից նահանգ 82
Պարսկաստան 49, 64, 73, 76, 80, 89, 143, 196, 230
Պարտավ (Բարդավ) 136, 176, 225
Պարսկական Իրաք 43, 46, 54, 57, 90, 127, 221
Պիզան, քաղ. 173
Պեհեսնի, բերդ 188
Պեհեսնի, քաղ. 188
Պոնտոս 133

Ջազիրա 39, 209, 210, 212, 219, 220
Ջահան 189, 193, 196, 203, 234
Ջավախք 97, 102, 104, 106
Ջավախք, բերդ 200
Ջեյհուն, գետ 102

Ռախս տե՛ս Արաքս գետ
Ռապան, բերդ 185, 188

Ռակկա, քաղ. 212
Ռեյ, սելջուկյան մայրաքաղաք 37, 39, 45, 52, 56, 58, 78, 83, 93, 94, 95, 149, 151, 168, 215, 222, 265
Ռշտունիք 85, 205
Ռոմայա (Բյուզանդիա) 190
Ռոմանպոլիս 186
Ռուբինյան իշխանություն 185
Ռում 109, 112, 119, 143, 177
Ռումի երկիր 241
Ռումի (Բյուզանդական) կայսրություն 42, 46
Ռումի սելջուկյան սուլթանություն 171—173, 175
Ռուսաստ 136

Սալմաստ 48
Սալղուխյան ամիրայություն 201, 248
Սամարղանդ 24, 28, 218
Սամարղանդի երկիր 163
Սամոսատ, բերդ 188
Սամշոյալէ տե՛ս Սամշվիլդե
Սամշույլդե տե՛ս Սամշվիլդե
Սամշվիլդե 118
Սապիտշահր 102
Սասուն 82, 85, 183, 184, 195
Սասունի Թոռնիկյան իշխանություն 260, 265
Սարպ, լեռնաշղթա 45
Սաքի 95
Սեբաստիա 36, 84, 85, 89, 123, 137, 138, 142, 161, 162, 178, 179, 199, 225
Սելջուկյան պետություն 12, 18, 21, 23, 29, 30, 57, 91, 130, 131, 203, 227, 246, 247, 262—264
Սեպիտշահր տե՛ս Սապիտշահր
Սերկեիլ 36
Սղղնախի մարզ 28
Սիլ Վարդա 106
Սիմ լեռ 73
Սինոպ 210
Սիսական աշխարհ 102, 229
Սիր-Դարիա, գետ 28
Սկանդինավիա 70
Սյունիք 18, 41, 62, 102, 204, 229, 230
Սյունյաց աշխարհ 101
Սյունյաց թագավորություն 95, 101, 164, 204, 235, 249, 256, 260, 265
Սմբատաբերդ 48, 89
Սոմխեթ 176, 200, 203
Ս. Սոֆիայի տաճար 42
Սպանիա 173
Սպահան 39, 45, 70, 93, 152, 163, 168, 171, 198, 203, 209, 212, 213, 215, 220, 221
Ս. Գրիգորի հայրապետական աթոռ 194, 195
Ս. Գրիգորի եկեղեցի 230
Ս. Կարապետի վանք 82
Ս. Հարության տաճար (Երուսաղեմ) 58
Սպեր 48, 136, 228
Սվեդիա 202
Սուրբ Մարի տե՛ս Սուրմարի
Սուրմարի բերդ 61, 98, 99
Սուրմալու տե՛ս Սուրմարի
Սուլնգա, գավառ 179
Սևերակ 140
Սև ծով 5, 262
Սևորի, տեղավայր 202

Վան, քաղ. 52, 89, 121
Վանի ավազան 214
Վանի շրջան 88
Վանա լիճ 40, 85, 100, 204, 209, 236
Վանա լճի ավազան 213
Վանանդ, գավառ 41, 49, 67, 200
Վանանդի Բագրատունյաց թագավորություն 35, 66, 67
Վաղարշավան, դաստակերտ 47
Վասպուրական 18, 35—37, 39, 41, 45, 47, 48, 84, 86, 121, 134, 164, 181, 191, 205, 228, 235
Վասպուրական աշխարհ 121
Վասպուրականի դաշտ 63
Վասպուրականի Արծրունյաց թագավորություն 35, 179
Վարդաբլուր 106
Վարդաշեն 107
Վարագա Ս. Նշան վանք 193
Վենջ, բերդ 215
Վրաստան 30, 45, 49, 63, 70—72, 92, 95—99, 104—106, 108, 111, 118, 135—137, 145, 150, 164, 175, 177, 181, 200—203, 205, 220, 222, 224, 226, 259, 272
Վրաստանի թագավորություն 199

Տաթևի վանք 229, 230
Տայք 34, 41, 48, 72, 82, 85, 86, 98, 134, 179
Տայոց և Արշարունյաց յամուրս 48
Տավրոս 164, 169
Տավրոսյան լեռներ 159
Տավրոսի լեռնաշղթա 18
Տավրոսյան լեռնաշխարհ 198
Տանկաց տերություն 22
Տաշիր-Լոռի 203
Տաշիր-Զորագետ 18, 62, 64, 203
Տաշիր Զորագետի Կյուրիկյան հայկական թագավորություն 35, 199, 164, 235, 249, 260, 265
Տարոն 18, 34, 48, 72, 77, 79, 82, 89, 183, 228, 235
Տարոնի կողմ 253
Տարոնի Թոռնիկյանների իշխանություն 260, 265
Տարոնի արևմտյան և հյուսիսային շրջաններ 34
Տարոնի կատապանություն 41
Տարսոն 24, 178, 179, 181, 182
Տեարիս ցիհե 102
Տիգրիս գետ 48
Տրանսոքսանիա 54
Տրապիզոն 54, 88, 201, 210
Տոզատափ, վայր 150
Տրիալեթ (Թռեղք) 98
Տուրուբերան 34, 79
Տփղիս 14, 39, 65, 136, 137, 176, 199, 200, 225, 235

Ուղթիք քաղ. 201
Ուռհա 70, 129, 140, 141, 178, 185, 189, 192, 193, 196—198, 206, 234
Ուտիքի նահանգ 97, 203, 204
Ուրմիա լիճ 39, 145
Ուրմիա գետի ավազան 45

Փանասկերտ 98
Փարիզ 109
Փարցխիս 200
Փոքր Ասիա 17, 18, 21, 24, 25, 29—32, 86, 92, 94, 120, 121, 124, 125, 128, 129, 133—135, 139, 142, 143, 148, 159, 162, 163, 165—168, 170—172, 174—178, 192, 198, 201, 219, 241, 255, 258
Փոքր Ասիայի սելջուկյան պետություն 30
Փոքր Հայք 179, 247, 249
Փոյուգիա 174

Քավազի ամրոց 199
Քարթլի 98, 104, 136, 176, 177, 200, 201, 236
Քերման 240
Քեսուն, բերդ 185, 188
Քյոսեդաղի ճակատամարտ 223
Քոզին տե՛ս Քավարդ
Քութայիս 201

Օկոմի, ավան 79, 89
Օշեն, բերդ 129
Օրդու (Ուրդու), դաշտ 49
Օրսֆորդ 60

Ֆաթիմյան Եգիպտոս 58, 66, 75, 117, 121, 128, 129, 132, 139, 163, 209, 216
Ֆաթիմյան շիա խալիֆայություն 58, 59

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Գլուխ առաջին. *Հայաստանի և սելջուկյան սուլթանության XI—XII դդ. պատմության պարբերացումը* 23

Գլուխ երկրորդ. *Սելջուկյան Թուրքերի արշավանքները և Հայաստանի հարավային ու արևմտյան շրջանների ավերումը (1016—1063 թթ.)* 34

Գլուխ երրորդ. *Հայաստանի նվաճումը սելջուկյան Թուրքերի կողմից (1063—1072 թթ.)* 93

Գլուխ չորրորդ. *Հայաստանը սելջուկյան աշխարհակալության կազմում Մելիքշահի (1072—1092) և նրա հաջորդների ժամանակ (1092—1194 թթ.)* . . 166

Գլուխ հինգերորդ. *Հայաստանի արևմտյան և հարավային շրջանների սոցիալ-տնտեսական դրությունը սելջուկ-Թուրքերի տիրապետության ժամանակ* . . 224

Ցանկեր 224

Ցանկ օգտագործված սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների 282

Անձնանուններ 291

Տեղանուններ 291

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԵՎԱՌԻ ԲՈՒՆԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԸ XI—XII ԴԴ.

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր Փ. Հ. ՄԱԴԱՆՅԱՆ
Նկարիչ ՅՈՒ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ Մ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎՖ 08733 Պատվեր 457 Հրատ. 5025 Տպաքանակ 2000

Հանձնված է շարվածքի 22. 03. 1979 թ.։ Ստորագրված է տպագրության. 4. 12. 1979 թ.։ Տպագրական 18,75 մամուլ+1 ներդիր, պայման. 17,44 մամուլ, հրատ. 17,83 մամուլ։ Թուղթ № 1, 60×84 1/16։ Գինը 2 ռ. 50 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.

Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян 24-г.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան

Типография Издательства АН Арм. ССР, Ереван, Барекамутян, 24.